

ԱՐԵՎԱՐԴԻ

Վ. ՏԻՐԵ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ո. Մ Ս Ա Գ Ի Բ

№№II-12

ԱԼՅԵՐԵՐ - ԴԵԿԵՐԵՐ

1905

ՀՎՀ

ՀՅ Խ Տ Լ Թ Ա
Հայոց ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԽՈՎՅՈՒՅՆ ՀՅ Խ Տ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № II-12

Երես

| | |
|---|-----|
| 1. ԽԱՂ (պատկերներ գիւղից), վ., Փափազեանի | 5 |
| 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԴԱՅՄԱՆ ՅԱԶԵՐԸ, թ. Իշխանեանի | 25 |
| 3. ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ, գրամա Լիոն Շանթի | 42 |
| 4. ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴՔ, Շտեղնի, թարգմ. Լ. Բաբայեանի | 66 |
| 5. ԳԻԼԱՆԻ ՀԱՅԵՐԸ, Ս. Գրիգորեանի, | 73 |
| 6. ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱԿՈՒԵՐՆ ԱՆԳԻՒԱՅՈՒՄ, Գևորգ Ալթոնեանի | 84 |
| 7. ՆԱԽԹԱՐԴԻՒԽՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Տ.-ի | 103 |
| 8. ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐՔԵՐ, Ա. Vambery-ի | 105 |
| 9. ՕԲԵՐԼԵՆԵՐԸ, վէտ Ռընէ Բազլէնի | 115 |
| 10. ՓԻԼԻՍՈՓԱՅ-ՍՈՅԻՇՈՒՐՔ, Միք. Յովհաննիսեանի | 166 |
| 11. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ԵՒ ՖԵՇԵՐԱՅԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ, Բ. Իշխանեանի | 175 |
| 12. «ՀԱՅ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԸ» ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱ- ՔԱԿԱՆ ՊԱՏՃԱՄԵՆԵՐԸ, Ալ. Ռուբենի | 189 |
| 13. * * բանաստեղծութիւն Ալ. Խամակեանի | 207 |
| 14. ՄՏԲԻ ՅՈԳՆՈՒԹԻՒՆԸ ԶԱՓԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐ, Դոկտ. Կ. Փաշայեանի | 208 |
| 15. * * բանաստեղծ. Ալ. Խամակեանի | 219 |
| 16. ՔՆՆԱԴԱՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ. — | |
| Հ. Марръ, Аркаунъ, монгольское название хри- стиянъ, въ связи съ вопросомъ объ армянахъ —халкедонидахъ, Լէօի | 220 |
| 17. ՆՈՐ ԱՏԱՅՈՒԱԾ ԳՐԲԵՐ | 243 |
| 18. ՆԵՐԹԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Հոկտ. 17 մանիժեստր.—ինքնա- կալութեան եւ յեղափոխութեան պայքարի վրայ յետա- դարձ հայեացր.—Հասարակութեան տնտեսական կազ- մի գերը յեղափոխական չարժման մէջ:—Հոկտ. 17-ի մանիժեստից յետոյ:—Սահմանադիր ժողովի անհրաժեշ- տութիւնը:—Թուրքական արշաւանքը Թիֆլիսի վրայ: —Հին բեժիմ եւ հասարակական խղճի զառաստան: —Համակովկասեան ժողով:—Գալիքի գլխին աւետար- | |

Նոր շրջան V տարի

Հրատ. XVII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԵՍՏՐԻՑԿԱԿԱՆ ԵՒ ՔԸՆԸԳՅԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ № 11-12

ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

1905



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՌՄՐԵՍ“ Ընկ. Մադար. փող., 15,
1905

ԹԵՂԻՐԾԻ Կ ԹՐԴՆԱՐԴՐՈՒԹՅՈՒՆ
1906 թ.

ՄԱԿԱՀ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ա Ա Գ Բ Ի Ի

(Նոր շրջան Վլ տարի)

Բ Ա Ժ Ա Ն Ռ Դ Ա Գ Ի Ն Հ

| | | | |
|------------------------|-----------|-----------------|--------------------|
| Թռւաստան տարեկան | 10 ր. | Արտաստանի 12 ր. | (32 ֆ.) |
| և Պարունակած կէս տարին | 6 ր. | » | (18 ֆ.) |
| տան | 1 ամսաւոր | 1 ր. | » |
| | | | 1 ր. 20 կ. (3½ ֆ.) |

Խանությունը բառապատճեն կարելի է վճարել նաև մաս-մաս, ըստ կրգում 5 ր., մայիսի 1-ին 3 ր և յանվանի 1 ին 2 ր. - կամ ոլորում 5 ր. և յունի ամ 1-ին 5 րուրիչ հայոց զար, վարժուհիների և ուսուցիչների, դիւզական քահանաների, միջնա տառաշակերների և ուսանողների հոմար բաժանորդագիր է 8 բորբի Խուսաստանում: Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագիր (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՀՆԴՈՒՆԵՈՒՄ է

Թօթքիութ - իմերագրաստունուր (Ճավճախածեան փողոց, ա. Ն 12) Կույսութեան այլ տեղեւից պէտք է դիմել՝ Տիֆլիս, Յ բարակապահութեան բաժանութեան մասունքները:

Արտաստանի Տիլի. Réaction de la révue «MOURT».

«Մուր»ի գործակալութեար.

Ակտախան - Ք. ք. Մկրտչան մասնակիութեան:

Բազմա բժ. Ք. Մարգարեան (Ե. Մօքս. ձ. № 26) և Զ. Քոչարեան:

Երիշ-Երուր - պ. Դ. Տանիկիլիան:

Երեւան - «Ակադեմիա» գրախանութեան:

Կորու - պ. Համազատով Տ. Պատարեան:

Մանկութեան - պ. Ս. Թումեան:

Սոչի - պ. Արամ Ցակովեան (Սիծավեկերեայ շրջան):

Սունականի - մ. ք. Բ. Եկպիւլսոն (Անդրկառապեան հոկեյի):

Թիմիկիզ - «Գումանիներերդ» և «Եհնորութեան» գրավաճառ:

Վայիշիստիկուզ. - Յ. ք. Աստիկեան:

Թաւրիզ - Բ. պ. Յ. Տէր-Մանեսիսեան և Հ. Պանիրեան:

Եզիայու - զոկուր Ա. Փաշաշեան-Թուն (Ալեքսանդրիա):

Եզզիլի - պ. Գ. Մկրտչը Արդաշանեան:

Կու-Ջուլու - պ. Տիգրան Արդարեան:

Թէհան - պ. պ. Աղեքսան Թունեանց և Լ. Բարյան:

1906 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրաւեն մինչեւ այս առաջայ դեկտեմբերի 1-ը, վեանդով տարեկան ամբողջ բաժանորդներին (10 ր.) մասնաւոր կը սահմանի, իբրև պրեմիու պ. Արտահայք «Ա. Հ. Շ. Ճի-ձար» Նար գրուալ բաժանորդները այդ պրեմիոյի փախարէն, կարող են սահմանադրեր եւ դեկտեմբեր ամսաների «Մուր» ծրագրաւ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ № II-12

b_բ

- | | | |
|-----|---|-----|
| 1. | ԽԱՂ (պատկերներ գիւղից), Վ., Փափազեանի | 5 |
| 2. | ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԱԶԵՐԸ, Բ. Իշխանեանի | 25 |
| 3. | ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ, գրամա Լեոն Շանթի | 42 |
| 4. | ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ, Շանթի, Թարգմ. Լ. Բաբայեանի | 66 |
| 5. | ԳԻԼԱՆԻ ՀԱՅԵՐԸ, Ս. Դրիգորեանի, | 73 |
| 6. | ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՊԻՆՔՆ ԱՆԳԼԻԱՅՑՈՒՄ, Դէուզ Ալթունեանի | 84 |
| 7. | ՆԱԽԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՃԻՑ, Տ.-ի | 103 |
| 8. | ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐՔԵՐ, Ա. Vambery-ի | 105 |
| 9. | ՕԲԵՐԼԵՆԵՐԸ, վէպ Ռընէ Բազէնի | 115 |
| 10. | ՓԻԼԻՍՈՓԱՅ-ՍՈՑԻՈԼՈԳ, Մ'իք. Յովհաննիսեանի | 166 |
| 11. | ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐԸ, Բ. Իշխանեանի | 175 |
| 12. | «ՀԱՅ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ» ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱ- ՔԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՈՆԵՐԸ, Ալ. Ռոբէնի | 189 |
| 13. | * * բանաստեղծութիւն Ալ. Խամակեանի | 207 |
| 14. | ՄՏՔԻ ՅՈԳՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԱՓԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐ, Դոկտ. Կ. Փաշայեանի | 208 |
| 15. | * * բանաստեղծ. Ալ. Խամակեանի | 219 |
| 16. | ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ. — Հ. Մարքъ, Արկաунъ, монгольское название хри- стіанъ, въ связи съ вопросомъ объ армянахъ —халкедонидахъ, Ա.օֆ | 220 |
| 17. | ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐԲԵՐ | 243 |
| 18. | ՆԵՐՔԻՆ ՏԵՍԱՌԻԹԻՒՆ. —Հոկտ. 17 մանիթեստը: —Խորիա- կալութեան եւ յեղափոխութեան պայքարի վրայ յիտա- գարձ հայեացը: —Հաստրակրութեան տնտեսական կազ- մի դերը յեղափոխական շարժման մէջ: —Հոկտ. 17-ի մանիթեստից յիտոյ: —Սանմանադէր ժողովի անհրաժեշ- տութիւնը: —Թուրքական արշաւանքը Թիֆլիսի վրայ: —Հին թեժիմ եւ հասարակական խոճի զատաստան: —Համակովկասեան ժողով: —Գալիերի գլխին աւետա- | |

| | |
|---|---------|
| Ե | 246 |
| բան եւ զինուած խաղաղութիւն, Հետոն Սարգսեանի | |
| 19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. —Խուսական յեղափախութեան ազգացութիւնը Եւրոպայում:—Պատրօ-Ռևոլյուցիա, Խոսական: Անվիտ:—Շիդ-Նորվեգիական միութեան խզումը:—Եւրոպա եւ Թիւքիա: Լ. Մ.-ի | 264 |
| 20. PRO DOMO SUA, Լ. Մ.-ի | 267 |
| 21. ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ | 274 |
| 22. ՅԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ | |
| 23. ՅԱԻԵԼՈՒԱԾ. Ձէյմս Մորիէլք «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԳԼԻԱՅՑՈՒՄ», վէպ պարուկ. կեանքից, թարգմ. անդլ. Մ. Կարապետեան | 276 |
| | 143—158 |

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ ինդրում է յօդուածազրելից՝ գրել պարզ, մանաւանդ բուեր, յատուկ անուններն ու օսար բառեր, եւ թերի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ու դարձնել կէտարութեան, ուղղագրութեան եւ նոր պարբերութիւնները ուռուսի լինելու վրայ. Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև բնագիրը:

2. Զընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացնուում են: Զենագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախուը: Փոքը յօդուածներն ու ստանաւորները չեն վերադառնուում:

3. Դրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վերապահուում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրծատելու իրաւունքը:

5. «Մուրենի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը զանազան հարցումներով զիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակազրոշմ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոտէկտ, Հասցէ փոփոխումը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով, նոր հասցէի հետ պէտք է այտնել նաև հին հասցէն:

ЗИЭТИРУРЮНКҮҮСЕР

ПОСЛѢДНЯЯ НОВОСТЬ! Часы „ПОЛИФОНЪ“.



Вы доставите много удовольствия себѣ, семейству и гостямъ, если приобрѣтете самонграющіе музикальные столовые часы „Полифонъ“, играющіе красивыя вальсы, польки (для танцевъ), марши или народныи пѣсни „Персидскій маршъ“, „Преображенскій маршъ“, вальсъ „Ожиданіе“, „Невозвратное время“, „За Дунай“, вальсъ „Камаринскую“. „Боже Царя храни“, „Трепакъ“, „Возлѣ рѣчи“ и т. д. громко, долго звучныи и пріятныи тонами: кроме того, эти часы показываютъ очень вѣрное время. Ручательство за вѣрность хода часовъ и за испортящуюся музыку на 6 лѣть. Цѣна въ изящномъ фантастическомъ бронзовомъ циферблѣтѣ, вместо 12 р., только на короткое время 6 р. 25 к. и 7 р.

Заказы высылаются безъ задатка по полученіи заказа налож. платеж. Адресовать просимъ: Торгов. Домъ „Т-во Континентъ“. Варшава.

1—12

ПОСЛѢДНЯЯ НОВОСТЬ!

Туалетные часы съ зеркаломъ и музыкой. Вы доставите много удовольствия себѣ, семейству и гостямъ, приобрѣтая самонграющіе туалеты, часы съ хорошей музыкой „Симфонія“, играющіе очень громко и долго разныя красивыя и веселыя пѣсни (вальсы, марши, польки, оперы, народныи пѣсни, какъ-то: „Преображенскій маршъ“, вальсъ „Ожиданіе“, „Невозвратное время“, „За Дунай“, „Боже Царя Храни“, „Богъ спасень“, „Камаринскую“, „Трепакъ“, „Возлѣ рѣчи“ и т. д., со шифрами, зеркал. парижской выдѣлки въ изящии, полиров. заграниц. корпусе. Часы эти кроме того отличаются своимъ вѣрнымъ ходомъ и служить изящн. украш. для письмен. и туалетн. стола. Высылаются вырегулированные до минуты съ ручательств. за вѣрность хода и за испортящуюся музыку на 6 лѣть за нал. плат. безъ задатка. Цѣна вместо 20 руб. только 6 р. 50 к. и 7 р. 50 к. (1—12)

Адресовать: „Тор. дом. Т-во Континентъ“ Варшава М-ъ.



!!ПОСЛѢДНЯЯ НОВОСТЬ!!

Изъ настоящаго африканскаго золота

© НЕ ПОЗОЛОЧЕННЫЕ ©

Новоизобрѣтенные карман. мужскіе или ламескіе часы изъ настоящаго африканскаго золота, ничѣмъ не отличающіеся даже специалистами отъ настоящихъ золотыхъ часовъ, стоющіхъ 100 р.; глухіе съ тремя маасивн. крышками, заводъ безъ ключа, ходъ на каминъ, ручательство за прочн. металла и вѣрность хода до 6 лѣть. Часы

УНИРД

изъ настоящаго африканскаго золота награждены за свою доброкачественность и прочность многими медалями и знаками отличия. Цѣна мужск. или дамск. только на короткое время вмѣсто 28 руб. только 7 руб. 50 к.; 2 шт. 14 р. 50 к.; 3 шт. 21 р. Такие же открытые мужскіе изъ настоящ. африк. зол. не позолоченные съ пылью предохранит. стекломъ вмѣсто 16 р. только 4 р. 25 к., 2 шт. 8 р., 3 шт. 12 р. Высыпаемъ выѣреніе часы до минуты по полученіи зак. нал. пл. безъ задатка. Адресъ: "Въ центр. депо" африк. часовъ Т-во Континентъ Варшава М-ъ. купоны всѣхъ фармъ принимаемъ въ счетъ по 50 коп., на каждые часы 1 купонъ.

прилагается къ часамъ изящная цѣночка съ брелокомъ "Бинокль" съ ведами или компасъ того же металла и замшевый кошелекъ для предохр. часовъ отъ порчи.

—ПОЛЬЗУЙТЕСЬ РѢДКИМЪ СЛУЧАЕМЪ.—

заказъ 5 штукъ часовъ сразу прилагается бесплатно 1 изящный музикальный изящ. съ зеркаломъ и музыкой "Симфонія" играющій разныя пьесы лучшихъ композиторовъ.

!!!ДОЛОЙ БРИЛЛАНТЫ!!!

Массивное золотое кольцо 56 пробы посыпанаго новѣйшаго парижскаго фасона. Имеетъ изящн. франц. бриллант. "Bengal" ничуть не отличаемыи даже специалистами отъ настоящ. дорогихъ бриллантовъ, стекло. 200 р., гестуа (чатой) 150 рублей, тѣ изящн. изношеніемъ футлярѣ, цѣна только 5 р. 25 к., 2 шт. 10 р. Пара крупныхъ серегъ съ такими же бриллантами 5 р. 75 к., 2 пары 11 р. Высыпаю безъ задатка наложн. платеж.

Адр. Гл. скл. франц. брил. Т-во Континентъ Варшава, М-б
Р. С. Камни "Bengal" имѣютъ превосходную игру, т. е. безъ фольги. Громадное количество государственныхъ лиссемъ.

РѢДКІЙ СЛУЧАЙ! НОВОСТЬ! Кабинетные часы «МОЛНІЯ».

Всякому необходимо иметь у себя на дому по дешевой цѣнѣ, элегантные кабинетные столовые часы съ будильникомъ и съ самосвѣщающимся въ темнотѣ циферблѣтомъ, дающіе возможность ночью узнать, который часъ. Ручательство за прочность издающаго свѣта иѣрность хода на 5 лѣтъ. Цѣна въ изящн. коробкѣ 1 сорта, вмѣсто 7 р. 50 коп. только на короткое время 2 р. 50 к., 2 шт. 4 р. 50 к., 3 шт. 6 р. 25 к. Высыпаемъ выѣреніе часы до минуты, съ наложн. плат. безъ задатка.

Адресовать просимъ: Тор. Дм. „Т-во" Континентъ" Варшава Мъ. Р. С. При заказѣ 6-ти экзем. прилагаются 1 часы бесплатно.

ՅԱՅՅԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ

ԲԱՅՑՈՒԱԾ է ԲՈԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔՍՂԱՔԱԿԱՆ ԵԽ ԳՐԱԿԱՆ ՀՐԱԳՐԻ

(34-րդ տարի)

ԱՌԱՋԻԿԱՅ

1906

ԹՈՒԱԿԱՆԻՆ

«Մշակ» կը հրատարակուի նոյն պլողամանով և նոյն
ուղղութեամբ

Ամեն օր սացի տօներին յաջորդող օվելից:

Բաժանորդագինը «Մշակ», տարեկան գինը 10
ռուբլիք, տասնեւմեկ ամսուանը նոյնպէս 10 ռ., տասն
ամսուանը՝ 9 ռ., ինն և ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն
ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուա-
նը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3
ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. և մի ամսուանը 1 ռուբլի:

Արտասահմանեան բաժանորդագոթիւնը. Այ հ-
րիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան
6 դոլար. Եւ բուգայի բաժանորդները՝ 30 ֆրանկ.
Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրուել կարելի է խմբագրատանը (Բա-
զարիայա և Բարոնակայա փողոցների անկիւն):

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «Մշակին» զբ-
րուելու համար և տահասարակ նամակներ և ծրաներ
ուղարկելիս պէտք է զիմել հետեւալ հասցէով. ՏԱՓ-
ԼԻСՅ, Ռեդակցիա „ՄՇԱԿ“, իսկ արտասահմանից՝
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունում են բոլոր լե-
զուներով:

Ապարիկ գոժանորդագրութիւն չէ ընդունու:

Կովկասի Ռուսական Շրջանի հոգարակական Խորհրդի որոշմամբ, որ հատակուած է Կովկասի քաղաքացիական պ. կառավատչապետի պատօնականարի կողմից

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿԸ

(Երրորդ և չորրորդ տարիների համար)

Համառոտ հայերէն-ռուսերէն բառզրով
ԴԻՆ է 70 Կ.

(246 էլեու)

Համարուած է պիտանի սկզբնական լուրոցների համար:
Դիմել Թիֆլիս՝ «Գուտտենբերգ» և «Կենտրոնական», իսկ Բագում՝ «Сотрудник» գրավաճառանոցներին:

ԲԱՑՈՒԱԾ է 1906 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՅԱՌԱՋ“

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ՕՐԱԹԵՐԹԻ

Խմբագրութնան անդամներն են. Ահարոնեան Աւետիս, Դաւթեան Յոնան, Թոփչեան Եղիշէ, Խաժակ Գ., Նազարեան Լիպարիտ, բժ. Օհանջանեան Համ., Խոսովեան Յովհաննէս:

Մօտիկ աշխատակիցներն են. բժ. Աթաբէղեան Լեռն, Ա. Դո, Զարգարեան Ռուբէն, Զօրեան Ստեփան, Զաւարեան Սիմէօն, Թումանեան Յովհաննէս, Խսահակեան Աւետիք, Լէօ, Լիսիցիան Ստեփան, Մալումեան Խաչատրը, Յովհաննիսեան Միքայէլ, Յովհաննիսեան Տիգրան, բժ. Օհանեան Քրիստ. և ուրիշները:

Բ. Ֆ. Ն. Ե. Գ. Ի. Ն. Է.

Թիֆլիսում տարեկան 6 ր., ամսական 50 կոպ.: Թիֆլիսում՝ տարեկան 7 ր., ամսական 60 կոպ., Արտասահմանում՝ տարեկան 32 ֆր., ամսական 3 ֆր.:

Դիմել՝ Տիֆլիս, րедакցիա «Արած» Կամ Tiflis (Russie) Rédaction «Haradj»

Խմբագրատունը գտնուում է Թիֆլիսում, Սերպիկիվակայեան Փողոց № 9.

Խմբագրիր—Ա. Սահակեան

Հրատարակիչ—Մ. Նալբանդեան:

Խ Ա Ղ.¹⁾

(Պատկերներ զիսդից)

III

Բոկոտն ու կիսամերկ, աղոտոտ, այրուած, մնդիկի
պէս շարժուն և աշխոյժ՝ միմեանց ետևից, գրէթէ զլոր-
ուելով էր, որ 5—50 բովեց յետոյ, ամէն կողմից ժողով-
ուեցին մեր նստած տեղը:

Անպատճառ միւմի ճիպոտ ձեռքերին, շատերը վեղ
ծամելիս, մի քանիսն էլ մաստակ՝ փուռեցին խոտերի
վրայ: Տելօն նրանց մէջ տեղում կանգնած՝ սպասում
էր որ սարալանջերից գէպի մեզ վագողներն էլ հասնէին:
— Թէհա, դէհա... անում էր նա—աղա վագէք
է է...

Ու գալիս էին: Քիչ յետոյ, համրեցի մինչև քսան,
մանուկ՝ զանազան հաստակի—10-ից մինչև 15 տարեկան:

Ամէնքը նախ վարմոցած՝ ինձ էին նայում, յետոյ
իրար մօտենում փոփոալով: Անշուշտ իմ ներկայութիւնը
տարօրինակ էր իրանց. ինչ կար, ինչու էի եկել և ե՞ս
էի արդեօք ձայն տուողը:

Տելօն կցկառը ու բարձր, յայտնում էր եկողներին,
որ «պ. Երուանդը հէնց ընէնց, եկել ա տենայ թէ
մէնք հնց ենք տաւարը պահում». կամ—«աղա, գէ
ինչ կայ, եկել ա՝ եկել, իս մեզ չի՞ ուտելու». և
կամ— «գէ լաւ ա, զոնազ ա եկել. մէնք էլ մէկ օր

1) Տես «Մուլճ» № 10:
Նոյեմբեր, 1905.

նրա բաղը կերթանք, մեզ սեմիչկա, (¹) եա քեալամի կոթ կուտացնի... ընէնց չի, պ. Երուանդա...

Ու այսպէս, ամէնքին ժողովում էր շուրջը, բացատրում, որ պիտի խաղ կազմեն:

Քիչ յետոյ, երբ բաւական վիճել ու գոռզոռացել էին, խաղն սկսեցին:

Տելօն ու Քանազն եկան մօտս նստեցին, մանուկները ցան ու ցրիւ եկան, նստոտեցին, կանզնած մնացին, ու Տաղին, որ գղլրն էր, փայտը ձեռքին ման էր գալիս ամէնքի մէջ:

—Աղա էյ, քիւրդ Տաղի, ձայնեց մէկը—ինձ չըրսնես, թէ չէ, Աստուած ա վկայ, գեղամիջում կը բռնեմ ընէնց մէկ կը տամ, որ սաղ օրը վնգստաս...

—Փիէ... արեց Տաղին—էդ եանի խաղ էլաւ... Որին ասին՝ բռնելու եմ:

—Որ բռնես ու գղիը հալովդ լաւ ծեծ ուտես, ոնց քէֆիդ կը գայ, ծիծագեց մէկը:

—Գղիը ա, նկատեց մի ուրիշը—գլխին էլ կը բամփաչեն, ձեռքն էլ կը կոտրեն... Պիտի գիմանայ...

—Չէ, ախալէ՛ր, արեց Տաղին—թէ թափուելու էք ծեծէք, էն ա չըխաղամ:

—Աղա բանիդ կաց, բանիդ... կանչեց նրան Տելօն —մակամ սոտարշինան մեռել ա, որ գղըին ծեծեն...

Յետոյ աչք ածեց բոլորին, շտկեց իրան, նայեց ինձ և երբ գտաւ որ ամէն ինչ տեղին էր, ճշաց.

—Մի քիչ դրադ քաշուէք, այ աղա... Ով ուղում ագնուատաւոր ըլի՛ թող մէյդան գայ:

Արևը հետզհետէ բարձրանում էր բլրի ետևից, ստուերը քաշւում—կարճանում: Տեղներիցս սակայն չըշարժուեցինք: Հովանոց ունէի. բացի, թիկն տուի խոտերի վրայ, գլխիս կողմից արևի ճառագայթների դէմն առի և այնուհետև լուռ՝ միմեայն հանդիսատես մնացի մանուկների խաղին:

(¹) Արևածաղկի սերմ.

Երեք—չորս հոգի մինչ այդ, միմեանց մօտ եկած, ըստ երևոյթին պատրաստում էին գանգատի նիւթը. իսկ Տելօն և Քանազը պաշտօնական դիրք ստացել՝ նայում էին հպարտ, մտնում իրանց դերի մէջ. Նոյն իսկ, կատարեալ լինելու համար, մանուկը սկսեց իսկական ստարշնայի ձևերն ստանալ—կիոցել աչքերը, քիթը վեր քաշել, ձեռքի ճիղոտով, իբր մտրակ, ոտը ծեծել:

—Բնու, այ տղայ, գոչեց յանկարծ Տելօն, պահ մի տնղիցը դուրս գալով—Բա պիսէրը... ըտէնց էլ բան էք տեհել. մոռացել ենք պիսերը:

—Էս մէկ անգամն էլ թող պիսէր չըփ. նկատեց Քանազը:

—Ո՞նց... չէ, ստարշնան առանց պիսէրի, ոնց որ աւազակը՝ առանց թուանքի... Այ, Պետին թող ըլի պիսէրը...

—Հա, հա, Պետին թող ըլի... ձայնեցին ամէնքը ծիծաղելով և գարձան եկոր մանուկներից մէկին, որի վրայ մինչև այդ՝ ուշաղըութիւն չէի գարձրել:

Տամնամեայ, դուցէ քիչ աւելի տարիքով մի շուտիկ էր այդ, որ շատ յիշեցնում էր շարժուն միմիկա ունեցող լուրջ կոմիքի: Կարծես ահա բերնիցը մի որախօսութիւն պիտի դուրս թռնէր, ինքը—ասողը չըպիտի ծիծաղէր և լսողները պիտի թուանսային:

Հագածից մինչև կեցուածքը՝ ծիծաղաշարժ էր: Մի կարճ, կտրտուած արխալուղ, վրայից՝ խոշոր ծակերով երկար, մինչև գետին հասնող լայն չուխա (անշուշտ հօր դէն ձգածն էր), զլիին ահազին զզզզուած, հողոտ ու աղտոտ փափախ, որ նա ցցել էր ծոծրակի վրայ և յաշողուում էր պահել այնտեղ: Կօշիկ չունէր. մի ինչ որ կասկածելի դոյնով շորի կտոր, վարի կողմից ատամնածեցնուածիացած՝ վարտիքի տեղ էր ծառայում նրան:

Արտակետրոնը դէմքն էր. այնքան խորամանկ հայեցը կար աչքերի մէջ երբ նրան յայտնեցին թէ պիսէր էր դառնալու, որ մոռացայ մանուկ լինելը: Հոգին ամբողջ գծուած էր ակնարկի ու բերնի շուրջը:

Երբ ամէնքի ուշադրութիւնն իր կողմը դարձաւ,
նախ շրթունքները երկարացան, յետոյ դէմքը, և կանա-
ցի զիլ ձայնով կանչեց.

—Հիմա... քեաչալ Տելօն ստարշինա, գիտ Պետին էլ
պիսէր... էդ խօ հոգի չենք թողալ. սաղ գեղը կը վա-
ռենք...

—Ղորթ, տօ. ասաց մէկը—էս երկուսը որ իրար
եկան՝ մեզ կը դադեն...

Բայց «գիտ Պետին» ընդունել էր առաջարկը: Թե՛փ
տակ կոխած ցուալը հանեց ուսին դրաւ, գնաց դէպի
Տելօն ու սսաց:

—Ղարուլ, ես պիսէր, ի՞նչ ես տալու ամսական:

—Երկու սիլլա (⁽¹⁾), հարուր զամչի (⁽²⁾), տասը քա-
ցի... էլաւ:

—Էլաւ...

Ու նստեց, փայտը կողքին դրեց, մի լայն տերէ
ընտրեց խոտերից, քաղեց, երկար փայտի կտոր էլ դրէչ
չենեց և որպէս թէ գրում էր, կանչեց.

—Հազը՛ր, զօլօվա (⁽³⁾)... Ո՞վ ա դանդասաւորը:

Երեք մանուկներ, որոնք քիչ առաջ միմեանց հետ
խորհրդակցում էին—առաջ եկան, ժամանեցին, ծիծաղե-
ցին և վերջի վերջոյ նրանցից մէկն ասաց.

—Ո՞զ կենայ զօլօվա աղան, եկել ենք ինողիրք ա-
նենք...

Տելօն աւելի ծանրակշիռ դէմք ընդունեց, ուռեց,
փքուեց, նրանց նայեց խստութեամբ, աչքերը կկոցեց ու
սսաց.

—Հօր, ի՞նչ կայ... ուր ա խնդիրքներդ, տե՞նանք...

—Խնդիրք չենք դըել. տերտէրը հարթած էր, տի-
րացուն էլ այբը տեսնելիս՝ ոնց որ գիտ հաց կերած...

Գիտ Պետին, որ փայտի—գրչի ծայրն էր թքոտում
անընդհատ—նման խսկական պիսէրին—մէջ մտաւ, ձեռ-

(1) Ապտակ. (2) Մարակի հարուած. (3) Գլխաւոր. ստար-
շինային այդպէս էլ են կոչում յաճախ:

քը պարզեց դէպի նրանց ու խորամանկ ժպիտով ասաց.

— Դէսը առւէք խնդիրք գլուխու փողը՝ առանց խընդիրքի էլ եօրա տանենք... ըտենց զակօն կայ:

— Էտենց զա՞կօն (¹) կայ... քիթը վեր քաշեց Տեղոն—բայ հանէք մէկ-երկու մանէթ տուէք ու ասէք խնդիրքներդ:

Գանդատաւորները, որ սկզբից գիտէին թէ ստարշինայի մօտ առանց փողի զնալ չէր կարելի—մի բուռը տերևներ էին ժողովել ձեռքներում. երկու հատը հանեցին և պիտէրի սլարդած ափը դրին:

— Երկուալ քիչ ա. ասաց Պետին—վօլոստնի պիտէր եմ ես, ձեր հարբան տէրտէրը եա քոռ տիրացուն չեմ... երկուան էլ տուէք...

— Վա, չորս մանէթ. կանչեց գանդատաւորներից մէկը—էդ խօ ջիս թալան ա...

— Զէնդ... կանչեց նրա վրայ ստարշինան—զակօնի դէմ ջուռուաթ չա՞ննս (²) խօսալը... Զակօնը որ կայ, (քիթը վեր քաշեց) զակօն ա... (աչքը կկոցեց) ու էլ՝ հետ որ զակօնը զակօն ա, (քիթը վեր քաշեց) պիտի պահենք ու կատարենք... իմացաք, ա շան տղերք,.. կը դադեմ թէ չէք իմացել...

— Իմացանք, մնց չիմացանք, դօլօվա... Զակօնը որ կայ՝ զակօն ա...

— Զակօնն էլ՝ էլհետ զակօն ա...

— Հրամանն ես...

— Սրանց խնդիրքը գրիք, պիտէր:

— Էս սհաթիս... Որիցն ա ձեր գանդատը:

— Չորս հոգուց:

— Փիէ... արեց Քանազը—ի՞նչ խաբար ա, տօս...

— Դու ըստեղ հլա ձէն չունես, քեօխվա. ասաց նըրան Տեղօն—հլա գործը քեզ չի հասել:

— Ի՞նչն ա շատ. նեղացաւ պիտէրը—պտի էլ շատ

(¹) օլէնք. (²) Զամարձակուհա.

հոգի ըլէր՝ որ դալամս եղալէն զըէր... Ասէք, որից
էք գանգատաւոր:

— Շուն-ուտողենց Սաքօից... Գորտ-ծեծողենց խոզ
Կարապետից...

Բնդհանուր ծիծաղը՝ բարձրաձայն քրքիջի փո-
խուեց:

— Կաց, կաց... ընդհատեց պիսէրը, որ փայտը ա-
րագութեամբ, ծայրը միշտ թքոտելով շարժում էր ծըն-
կան զրած լայն տերեկի վրայ:

— Են մեկալոնքը չասե՞նք. հարցրեց գանգատաւորը:

— Ո՞նց չէ... Կարաս՝ համ մէկ-երկուսն էլ աւելի
ասա... Ամա կամաց ասա, որ զրեմ... խոզ Կարապետը...
Դէ հմի ասա. յետո՞յ...

Սկսում էր զուարձալի դառնալ: Այնքան ճիշտ էին
պատկերացնում իրականութիւնը, այնքան՝ նման շար-
ժուածքներ, ձայն ու միմիկա էին ընդունել փոքրիկ
դերասանները, որ քրքիջներին վերջ չըկար:

Գանգատաւորները ծոծրակնին էին քորում, գըլ-
խարիները մէկ թեփ տակ, մէկ զագաթի վրայ դնում,
մէկ վախեցած ձևացնում իրանց, երբեմն ապուշի գէմք
ընդունում և ապշութեան դիմակի տակ՝ կողմանակի աչք
թարթում, խորամանկ ժպիտներ ցոյց տալիս հանդիսա-
կաններին...

— Գրի՛, արեց մէկը— գանգատաւոր ենք Ամսմն-լը-
պստողանց քօռ Արշակիցը, Տրեխի-կաշի գոմէշանց Ա-
րամիցը, Արաղի-Բոչկենց Ստեփանիցը...

— Եղ խօ հինգն էլաւ. նկատեց հանդիսականներից
մէկը:

— Քու ի՞նչ բանն ա, բարկացաւ նրա վրայ ստար-
շինան—կուզի՝ թող տասը ըլի:

Իսկ պիսէրը մի խէթ հայեացքով շանթահարեց խօ-
սող մանուկին և ասաց դանգատաւորին.

— Ելի՛ կայ... Դէ հերիք ա, միտս չի մնալ:

— Եանի միտքումդ ուր ես պահում. խօսեց կծու-

հեգնութեամբ զանգատաւորներից մէկը—էս ու գրել ես
էլլի...

—Կըլի որ կարանդաշը (¹) կոտրուել ա՞ չի գրում.
ծաղրեց մի ուրիշը:

—Չեր հօրն ողորմի. ասաց պիսէրը—հրէս կարդամ՝
տես մնց ա գրում... Շուն—ուտողանց Սաքօն... Էս
վրայ մէկը... Մտարշինա, մէկ մատդ ծալի... ծալեցիր...
չը, մնց ա... կարանդաշ կոտրած ա... Արադ—կոնծո-
ղանց Ստեփանը... Էս վրայ երկուսը...

—Հա, հա, հա... քրքջացին ամէն կողմից—կարան-
դաշդ կոտրուած ա, Պետի... ըտէնց մարդ չը կայ...

—Բաս որ ասո՞ւմ ի. արեց գանգատաւորը ծաղ-
րալից և խոնարհ—կարանդաշը որ մի քիչ շատ թքո-
տէիր՝ ըտէնց չէր ըլի: Արադի—բոչկենց Ստեփանն ա.
համ էլ, էդ վրայ հինգն ա, երկուսը չի...

—Կայ, կաց, շփոթուելուց բարկացաւ պիսէրը—
մնց թէ... Թող մէկ տեսնեմ... Ամա հա, տօ... մթնել ա՝
աչքս չի տեսնում... վրայ երկուսը՝ Գորտ—ծեծողանց
խոզ կարապետն ա... Էլաւ...

—Էլաւ:

—Մտարշինա, բաս մէկ մատդ էլ ծալի... Հմի, ա-
ղիս ասեմ, վրայ երեքը՝ Աման-լպստողանց քոռ Արշա-
կը... Մատդ ծալում ես, գոլօվա: Վրայ չորսը՝ Տրեխի
—կաշի գոմեշանց Արամը. էս մեր ոչ—փուչ Արամն
ա... վրայ հինգն էլ Արադի—բոչկենց Տեփանը... Ո՞նց
ա, կարանդաշ կոտրած ա...

Ու վքուած՝ ծիծաղեց:

—Է՞տ ա, կարանդաշը լաւ ա գրել:

—Գանգատներդ քմնի մանէթի ա, հարցրեց Մտար-
շինան:

—Մանէթի բան չի, գոլօվա...

—Փիէ. արեց ստարշինան—էդ լինչ գանգատ ա,
որ փող չկայ մէջը... Մենք ըտենց գանգատ չենք

(¹)Մատիտ. ոռւսերէն բառ է.

ընդունում... ընէնց չի, պիսէր, առանց վողի՝ դակօնը չի բանի...

— Բաէնց ա, դիտեց պիսէրը — ամա կաց տեսնենք, կըլի որ մանէթի ճռնալը (¹) երևայ...

— Հա ասէք տեսնանք աչքը կկոցեց ստարշինան:

Գանգատաւորներից մէկը աւելի մօտ եկաւ, գլխարկը թեփ տակն աւաւ, պահ մի ծոծրակը քորեց, յիմարի պէս ժպտելով նայեց սրան-նրան, յետոյ խղճակի դէմք ընդունեց յանկարծ ու աղիողորմ ձայնով սկսեց.

— Երէկ իրիկու չեօլումը մեր տաւարն էինք արածացնում, մէկ էլ տեսնանք էդ շան-տղերքը հարբած՝ Քարկողից են գալիս... — «Քարիկնւն» — «Աստծու բարին»... «Ա՛ շան տղէրք, էս ուր էք տաւարը վեր թողել մեր հարոցները»¹)... «Փիէ, ինչ՞ պիտի սա ձեր հարոցը ըլի, սա Կուլտուրանց հարոցն ա»... — «Ա՛ շան տղերք, դուք չէք իմանում որ Կուլտուրող աղէն մեղ դոռուղչի²) ա զրել»... Ու տուր որ կը տաս. փէտները քաշեցին, մեղ մի լաւ դնքսեցին... իրանք էլ ծիծաղում էին... էլ կնիկ, էլ՝ հօր գեօռ... մի լաւ ջարդ ու խուշ արին ու ծիծաղելէն գնացին... Բա Ասուած վեր կառնի, որ էդ հարբան շները մեղ ծեծեն...

— Կաց, կաց, տօ... աչքը բարկութիւնից կկոցեց Ստարշինան — ուր էիք բաս ձեր տաւարը Կուլտուրող աղի հարոցները վեր թողել, տղա...:

— Դէ ի՞նչ անէինք, տաւարը քաղցած, խոտ չըկար... համ էլ ախը նրանց ի՞նչ բանն էր... սուտ էին ասում թէ զօրուղչի են... հարբել էին, լակել Քարկողումը. Մեղքոտ Գիգօլի հետ շան նման լակել...

Քարձրացաւ ընդհանուր քրքիջ: Մեղքոտ Գիգօլ ասելով՝ գանգատաւորը ստարշինային էր ակնարկում: Ամէնքը կուահեցին:

(1) Ծայրը. (1) Խոտանոց, գաշտ, ուր խոտ են աճեցնում և կամ յատուկ պահպանում են, ձմեռուայ խոտի պաշար հաւաքելու համար: (2) Դաշտերի պահապան.

—Ո՞ւմ, ում հետ... դէմքը կնճռեց ստարշինան:

—Մեղրոտ Գիգօլ շան տղու հետը...

—Աղա էդ ով ա, որ ես չեմ ճանաչում... ճշաց
ստարշինան—գու զիտես, պիսէր...

—Ո՞նց չէ, գօլօվա, էդ մի շուն ա, որ սկի օյաղ
չի ըլում. ողջ օրը հարբած, խոզի նման թաւալ-թաւալ...
ընէնց հարբում ա, որ կնիկն ա շորերը հանում ու մի
չիւլի տակ քցում՝ որ մրափի...

—Փիշ... արեց ստարշինան—էդ ի՞նչ խոզն ա,
տօ... Ամա գէ էդ թող մնայ հլա... Հա (գարձաւ նա
պէպի գանդատաւորները) բաս ասում ես էն շան-
տղերքը...

—Մեզ լաւ զխկեցին, ուշունց տուին...

—Էդ հէշ... ծեծել են՝ թող ծեծեն. հմի քանի
մանէթի ջառմա (1) էք ուզում որ կապենք:

—Չասի, ծիծաղեց պիսէրը—հրէդ այ, մանէթների
ճոնտը երևաց...

—Հա շատ... խոսեց գանգատաւորը—ընէնց զխկե-
ցին, որ հարուրն էլ քիչ ա...

—Ամեն մէշկիցը...

—Թող ըտենց ըլի, մեզնից ի՞նչ ա գնում որ...

—Գրի, պիսէր... ՚ինոգ հարուր մանէթ...

—Բա իրանց չէք բռնոտել տալու:

—Ո՞նց չէ... մի լաւ էլ կը դնքսենք... Ամա խօ
զիտէք զակօնը... Պտի դուք էլ 50 մանէթ տաք:

—Ո՞նց տօ... մենք ընչի պիտի տանք:

—Զակօնն ընէնց ա. 500 մանէթի ծախսը 50 մա-
նէթ ա... էդ փողին ո՞նց են ասում, պիսէր:

—Ո՞սկոս... արեց պիսէրը միշտ գրելով իբր թէ—
ո՞սկոս են ասում, գոլովա...

—Տօ չէ, չէ, էդ հայերէնն ա, բաս զակնը ո՞նց ա
ասում. ո՞նց պիսէր ես, որ միտդ չի:

—Բաւ... ձայնեց Պետին—ընչի միտս չի. օխոը

(1) Տուզանք:

հազար գակօնի պրքերը հրէն փորումս, բա Էդ էլ չիմանամ... զակօնը. էդ ոսկոռին ասում ա «արուն»...

— Էդ խօ հայերէն ա. նկատեց Քանազը—եանի թէ արուն. որ կտրեն՝ արուն ա գալիս...

— Այ թէ գիտես հա... ծիծաղեց պիսէրը— էն որ կտրում են, էն արուն ա, էս՝ արուն ա... ա՛րունը ուրիշ ա, արունը ուրիշ... Զեր խելքի բանը չի զակոնի խօսքերն իմանալը...

— Ի՞նչ որ ա... միջամտեց ստարշինան—50 մանէթ պտի տաք... տաս մանէթ էլ մեօնրի փող, մի-երկու մանէթ էլ փրավինու (2) ծախսը... Տուէք տենանք...

Գանգատաւորները սարսափահագների դէմքեր ընդունեցին և միմեանց նայեցին:

— Փիէ... ձայնեց մէկը—համ ծեծը ուտենք...

— Նրանք էլ ծեծ կուտեն. վրայ տուաւ Տելօն:

— Համ էլ փող տանք...

— Նրանք էլ կը տան:

— Մէզ կը տան:

— Ո՞նց չէ. ծիծաղեց պիսէրը— ջառման որ կայ՝ խազնինն(1) ա, ձեզ նրանից մի կոպէկ էլա չի հասնի: Բաս մեր 50 մանէթը...

— Էն էլ խազնին կերթայ... թէ գնաց...

— Բա ըսէնց բան էք տեհել, ա խալսը... ճշաց գանգատաւորներից մէկը—չենք ուզում, էլ գանգատաւոր չենք...

— Ո՞նց թէ չէք ուզում. գոռաց Տելօն—տօ զակօնին ձեռք էք առել. զակօնի ձեռքը որ ընկաք, էլ ազմատում ունիք. պիսէրը որ զրեց՝ պլծաւ... էլ հմի ուզէք շուզէք՝ դուք էլ էք զակօնի ճանկն ընկել, նրանք էլ... փողը պիտի տաք... խմացաք...

— Ճօ իմացանք, իմացանք... ամա դէ չենք ուզում էդ զակօնը...

— Զէնդ, հարամդադա. ո՞նց ես ջուռուաթ անում...

(2) Правление. վարչութիւն. (1) Պետական գանձարան:

հանէք շուտ 50 մանէթն ու ոադ ըլէք... հանաք-մաս-խարութէն ա... Պիսէր...

Սոսկալի էր այդ միջոցին «օրէնքի հսկողը». աչքերը ոլորում էր, քիթն աւելի շուտ-շուտ վեր քաշում, ձեռքի ճպառով ոտն ուժգնութեամբ ծեծում: — Հրամայիր, ստարշինա...

— Պըէդպիսա՞նի (²) զրի քեօխվին, որ առաջ էս շան տղերանցիցը բռնի 100 մանէթ առնի, յետոյ Էլ էն հարբաններին բռնոտի, ձեռքն ու ոտքը կապի ու մեր հրամանոց գիւանխանէն դրկի...

Ամէնքը լուռ էին, գանգատաւորները կծկւած՝ մի կողմն էին քաշուել, իսկ Թանազը ուրախ ժպիտ դէմքին՝ շարժուեց տեղիցն ու սրան—նրան նայեց: Հերթը իրան էր գալիս այժմ: Տազին իսկ առաջ եկաւ. բեմ դուրս գալու ժամանակն էր:

Պետին իր փայտի ծայրովը մի քանի բան խազիւր-զեց տերևի վրայ ու տուաւ Թանազին:

Սա դէմքը կնճռեց իսկոյն, զլխարկը ետևից առաջ բերաւ, ուշադրութեամբ նայեց տերևին, մի «հըմ» արձակեց, ոտքի ելաւ, չուխի ծայրերը ժողովեց ու խիստ դէմքով կանչեց.

— Ե՛յ, գգիր...

— Հրամայիր, քեօխվա.

Ճիշտ Գուգանի գզիրի նման՝ երկար փայտ ձեռքին, կծկուած, ամենատխմար դէմք ընդունելով և ժըպտուն՝ առաջ եկաւ:

— Էս սհաթիս, կանչեց նրա վրայ Թանազը—գեղամէջ կերթաս, մէկ—մէկ կը ձէն կըտաս էդ հարբաններին, որ էս նմուտիս (¹) մեր հրամանոց դէմք դուրս գան... գանգատաւորներ, աղա, 100 մանէթը մինչև էգուց կը բերէք՝ կը բերէք, չէք բերի՝ էլ տաւար չեմ թողալ գոմերումդ... Գնա, գգիր...

— Էինդ հոգուն էլ կանչեմ, քեօխվա,

(2) հրաման. 1) Բոպէ:

— Հինգին էլ:
 — Բա որ ինձ դնքսեցին:
 — Թող հլա մէկ դնքսեն... ընէնց ջառմա անեմ,
 որ սաղ տարին քաղցած զկուտան:
 — Բա իմ ջիբը ինչ կը մտնի:
 — Գնա, շան տղայ, կարաս՝ Ջիբը լցլու. թէ քոթակ
 էլ տան՝ գգիր ես, պիտի զակօնի հրամանը կատարես:
 — Բա որ չգան, քեօխվա...
 — Տօ ես էլ հէնց էն եմ ուզում որ չգան է է...
 Տաղին ծոծրակը քորեց քիչ ու մտաւ մանուկների
 մէջ: Իրարանցումն ընկաւ: Խաղը կենդանանում էր:

IV

Ասպարէզը դեռ գգիրինն էր: Նրա խղճիցն ու ճար-
 պիկութիւնից էր կախուած դործունէութեան ձեր: Պի-
 տի ասել, որ Տաղին պատուական, «ամենալաւ տեսակի»
 գգիր հանդիսացաւ. ոչինչ չխնայեց, ոչ ոքի չխնայեց:
 Համարձակ գնաց ամենավերջին մանուկներին, կան-
 գնեց նրանց առաջն ու գոչեց.

— Աղա, էյ, Աման-լպսաողանց քօռ Արշակ, քեօխվէն
 քեղ կանչում ա, վեր կաց... Դու էլ, Տրէխի-կաշի
 Արամ. քեղ էլ ա ուզում, Արաղի-բոչկէնց Տեփան...
 — Վայ, ձայն տուաւ առաջինը—հէնց մեղ տեսար,
 ա շան տղայ...

— Ուշունց մի՛ տալ զակօնի հրամանը կատարողին.
 ճչաց ներշնչաբար Տաղին—վեր կաց գնանք:
 — Զի՞ ըլի Տաղի. ասաց երկրորդը—չի՞ ըլի, որ գը-
 նաս ասես թէ գեղումը չեն, չզտար...
 — Ո՞նց կըլի, աղա, քեօխվէն կաշիս կը սլուկի:
 — Տօ զնա ասա քաղաք են գնացել, էլի...
 — Զի՞ ըլի, չէ, վեր կացէք... Դու էլ, Շուն-ուտո-
 ղանց Սաքօ... Դու էլ, գնրտ-ծեծող կարապետ:
 Հինգ մանուկների մի առ մի մատնանիշ արաւ և

նրանք, ըստ երևոյթին, ընդունեցին խաղը։ Ամենքը ծիծաղում էին։

—Ես չեմ ուզում, կնրի գնա. ասաց մէկը։

—Եանի էդ խաղ էլաւ. արեց Տաղին դերից դուրս դալով։

—Տօ ես չեմ Սաքոն, հրէն այ, նրա անունն անաքօ։

—Աղա, եանի ես քօն եմ. հէսց գու ես որ կաս շուն-ուտողանց Սաքօն... վեր կացէք ասում եմ է է, թէ չէ, էն Աստուածը, կերթամ կասեմ թէ չեն գուլիս...

—Փիէ, արեց մէկը—գալիս ենք, գալիս, հը՛... այ ես քու քիւրդ Տաղի ասողին հա,,..

—Աղա, եկէք առաջ սրան մի լաւ դնքսենք. առաջարկեց մէկը։

—Ի՞նձ, ետ քաշուեց զզիրը բաւական վախեցած — զակօնի ճրամանը կատարողին։

—Տօ՝ զակօնս որն ա, եանի չենք խմանում որ հոգիներս հանելու էք... ինչի՞ ա կանչում քեօխպէն։

—Ծեծել էք Սրապին, Մուկուչին, Գարօին...։

—Սնւտ են ասում, մենք սկի նրանց երեսը չենք տեհել։

—Էտ իմ բանը չի. արեց Տաղին—ստարշինան թուղթ ա գրել, որ քեօխպէն ձեր ձեռքն ու ոտը կապի՝ զրկի դիւտնիսանէն, Քարկող։

Եւ մինչ բացատրում էր, յանցաւոր համարւողներից մէկը ստի ելաւ, մի կողմը քաշեց զզիրին ու ժպտելով ասաց։

—Չի՞ ըլի, Տաղի, որ մի—մի բան աանք քեզ ու ուաղ ըլես զլխիցս... ը՛նը, մի մանէթն ին ձնից։

—Փիէ, ոնց կըփի. ասաց զզիրը խորամանկութեամբ — բա գնամ ինչ ասեմ քեօխպին... համ էլ, արժի մի մանէթի համար...։

—Տօ ընը, երկուսը տամ։

—Չէ՛, Կարապետ, ինձ փորձանքի մէջ մի՛ քցիլ։

— Տօ ասա հիւանդ ա, մեռնում ա. եա թէ չէ կարապետը հրէն չեօլումը... մի բան գտի էլի... երեք մանէթ կը տամ:

— Զէ՛, չէ՛, արեց զզիրը քիչ կակղացած, սակայն գլուխը երերցնելով—որ գեղումը չըլեիր, եա Սարչէն, Հասար գնայիր... երեք մանէթն ի՞նչ զատ ա, որ իզուր քեօխվի ուշունցներն ուտեմ...

— Աղա, ի՞նչ գելն ես... բա ուզածդ ի՞նչ ա, որ պոկ զաս եախիցս:

— Դէ ես ի՞նչ եմ ասում, կարապետ. վեր կաց գնանք ու ս'կի մի կապէկ էլ մի՛ տայ... Հինդ մանէթն էլ հլա քիչ ա էն ուշունցների համար, որ պիտի լսեմ... Մէկ էլ տեհար զամշին հէնց վրայ բերեց որ...

— Փու ես քու... տօ բաս հինդ մանէթ ա ուզածդ:

— Զէ, մեղայ Աստուծու, ես սկի կապէկ չեմ ուզում, որ զաս դնանք. հազըր հինդ մանէթը ջրումդ կը մնայ:

— Տօ զիտում եմ, զիտում, բիւրդի լակոտ... ըհը 5 մանէթը, եախէս բաց թող...

Գզիրը երեսը շուռ տուաւ ու ձեռքը պարզեց: Կարապետը նրա բուան մէջ իբր փող՝ մի տերև կոխեց: Տաղին ծուռ հայեացքով ստուգեց որ ափի մէջ եղածը հինգանոց էր, դրամնը կոփեց, ծոծրակը բորեց ու ասաց.

— Եանի կարապետ, գնամ քեօխվեն ի՞նչ ասեմ հմի:

— Տօ ի՞նչ կուզես՝ ասա... ես գիւղումը չեմ, գնացել եմ Հասար՝ բանելու, ամիսներով չեմ զալու... Գնացել եմ Լալի գեղը եղ ու պանրի...

— Լաւ ա, ըսհէնց կասեմ: Ամա տես, իմ արեխացուն դու պիտի տաս հա... Հրէն այ, դռանդ առաջ կախած մի ջուխտ կաշին իմն ու:

— Փու ես քու... ըհը՛, էն՛ էլ քեզ, առ...

— Այ՛ սաղ ըլես... Գնամ գնամ ասեմ զիւղումը չես:

Ասաց Տաղին, երեսը շուռ տուաւ գնալու, սակայն իսկոյն գարձաւ և ժպիտը գէմքին՝ աւելացրեց.

— Բա կարապետ, էն տարին գու խոստացար երկու

կոտ ցորեն... էն էլ չես տայ. կալը խօ պրծել ես:

—Տօ հըրք էի խոստացել, այ քիւրդ... Թալանելու
ես ինձ:

—Ինչի՞, մագամ ես զաշաղ եմ... Կուզես մի տայ.
ամա որ քեօխվէն ինձ զամշիեց ու էլհետ ետ դրկեց,
էն վախտը հնց անեմ...

—Վայ ես քու...ադա, բաս էլ ուր առար մանէթ-
ները, տրխացու կաշին:

—Կուզես ետ տամ, ախալէր...քեզ խօ լաւութիւն
չի ըլում անելը. երկու կոտ ցորնի համար հօրս էլ գեօ-
ռիցը կը հանես:

—Ա՛ հարամզադա, ցորենը չեօլիցն եմ գտել. բա
դու խիղճ չունես, որ էլի բան ես ուզում...

—Ինչի՞ ուզեմ, չեմ ուզում: Քեօխվէն ինձ դրկել
ա որ քեզ կանչեմ՝ անում եմ. չես ուզում գայ՝ գնամ
ասեմ թէ չի գալիս, համ էլ ինձ ուշունց ա տալիս:

—Տօ առ, արի, արի ցորենը տար. արի թալանի,
պրծիր, տունս սաղ դարտկի... ձեր քօքը կարուի, քոնն
էլ, քեօխվինն էլ, ստարշինն էլ...

—Փիէ, փիէ... էդ խօ ընէնց ուշունցներ տուիր,
որ թագա ծնած գառներիցդ մէկն էլ որ տաս՝ էլի գաւ
պարտք կը մնաս... Ամա՛, հանաքը դէնը, Կարօ, էն
օրը գառներդ տեսայ. լաւն են հա... քէֆս եկաւ. ի՞նչ
կըի որ մէկը բախշես աղջկանս, հետը խաղայ:

—Տօ կորի է է. կորի, քանի կողքերդ չեմ ջարդո-
ւել. քիչ ա մնում կնիկս էլ քաշ տոս տանես:

—Կնիկ ի՞նչ եմ անում, մէկը շատ եմ կարում
պահի... Ուզածս մի գառն ա, ի՞նչ մաթահ գագա, որ
ըտէնց կատաղում ես... Հրէս, Ս. Գէորգի օրը ա գա-
լիս, կը տանենք մատաղ կանենք,.. Ես էլ քեօխվին կա-
սեմ, ընենց կանեմ, որ աչքին էլ երեաս՝ մոռացած
ըլի... Դու էդ գառը տուր, մի քիչ էլ—շատ չեմ ուզում,
երկու բլուլ—խոտ էլ հարոցիցը, որ ուտացնեմ գառան,
չաղանայ ու լաւ մատաղացու ըլի... Հը՞ սրան ի՞նչ
կասես, Կարապետ... Աստուած դիտի, ընէնց անեմ, որ

քեօլսվէն հետդ նստի—կանգնի ու մոռանայ թէ քեզ
սուդ են կանչել, եա թէ դու հարբել ու մարդ ես ծե-
ծել:

Յանկարծ կարապետը խղղկասակ դէմքով դէմքը
ծըռմոկեց, զիսարկը ուժգնութեամբ գետնին խփեց, ու
վտանգի մէջ եղած մարդու նման՝ սկսեց գոռալ.

—Հասէք, ա խալիսը, Աստուած սիրողը համնի, գը-
ղիրն ինձ թալանեց, տունս գարգէեց...

—Հա՛, հա՛, հա՛... քրքջաց Տաղին—ամա՛ հանաք-
չի ես ըլել հա՛, կարօ... Տօ էլ հւը ես գոռզոռում, սաղ
գեղը զիսիդ հաւաքում: Եանի ի՞նչ ա ըլել, քեզ թալա-
նեցի: տարածս մէծ բան ա—5 մանէթ, մի ջուխտ
տրխացու, երկու կոտ ցորեն, մի գտոր, երկու ըլուլ¹⁾
խոտ... հը... հլա ուազի⁽²⁾ չես, որ սիւնից կախած էն
չուխէդ էլ չեմ ուզում... իմը քրքրուել ա... բա որ քեօլս-
վից, ստարշինից, պիսէրից, պրիստաւից ու նաչալնիկից
ազատուելու ես... էդ քի՞չ բան ա... ի՞նչ ա, եանի չու-
խիդ հետ մի փափախ էլ չես տայ, որ զիսիս ծած-
կեմ...

Ու այնքան բնական էր Տաղին այդ միջոցին, այն-
պէս լաւ իրան վիրաւորուած էր ձեացնում և դիմացի-
նին յանդիմանական շիշտովը ճնշում—որ ամէնքն ան-
խտիր՝ երկար ծիծաղեցին:

—Ագա, կանչեց մանուկներից մէկը—ըսէնց զորթ
գզիր ոկի տեհել չէի. մեր Սահակին կը ծալի ու ջիրը
կը դնի:

—Կասես ջլիս Քարկողի զզիրն ըլի տօ. նկատեց
մի ուրիշը—տեհել եմ. էդ նա ա, որ ըտէնց՝ համ եղ տ
քսում զիսին, համ էլ մազերը մէկ—մէկ պոկտում...

Պահ մի խաղը դատարեց, տեղի տալով Տաղիին ուղ-
ղուած ընդհանուր հիսացմունքին:

Սակայն, գեռ ամեն ինչ չէր վերջացել: Իրան է,

¹⁾ Կազմուած գուցէ «ըլուր» բառից. նշանակում է դէզ.

²⁾ համաձայն

Տազին միւս յանցաւոր համարուածներին թողեց առայժմ, բայց նա այդ բացատրեց, երբ հեռանում էր:

— Հա կաց էս մէկի համար քեօխսվին իմաց տամ, յետոյ կը գամ մնացածներին:

Ասաց ու քայլեց գէպի քեօխսվէն: Ճանապարհին նու տըեկիների կաշին (երեակայական անշուշտ) պահեց խոտերի մէջ, ցորենի տոպըրակը տարաւ իրանց տուն (այդբոլորը ձևացրեց նա), փողը թաշկինսկի ծայրին պինդ կապեց ու զիխարկի տուկը դրեց, յետոյ մտախոհ՝ մօտ դնաց քեօխսվին ու լուռ կանգնեց նրա առաջ:

Քանազը պաշտօնական կերպարանք ստացաւ անմիջապէս և հարցրեց.

— Հը՞, գզիր, բերի՞ր:

Տազին նախ յիմարի պէս ատամերը ցոյց տուաւ քիչ, յետոյ դժգոհ դէմք ստանալով՝ ասաց.

— Զըբերի, քեօխսվա... Առաջ Գորտ-ծեծողանց կարապետի տունը դնացի... Շորագեալից⁽¹⁾ 10 մեշոկ լաւ ցորեն էր բերել՝ դարսում էր, կնիկն էլ ոչխարի պանիր էր աղում... Տան առաջը սաղ բռնել էին գառներով...

— Աղա, քեզ բա՞ն եմ հարցնում. բարկացաւ քեօխսվէն—ընչի՞ չեկաւ:

— Բա ես հնց անեմ, քեօխսվա, դէմքը երկարացրեց գզիրը... ցորենը բուռս առի, ընչնց լաւ ցորեն ա որ... մարդը գործ ունի... հա թազա չուխա էլ ա առել քաղաքիցը...

Քանազը մէկէն փոխեց պաշտօնական խիստ կերպարանքը, շուրջը նայեց, ապա կուսցաւ դէպի Տազին ու աւելի ցած ձայնով հարցրեց.

— Աղա դորթ ես ասում... եանի տեսար, Շորագեալու ցորեն էր...

— Են Աստուածը... ընչի՞, քօն եմ... համ էլ տամալ մէշոկ, լիքը, տողալէն...

¹⁾ Շիրակ գաւառը
Նոյեմբեր, 1905.

—Փի՛է... հլա դնանք տենանք մէկ...

—Վա՛յ, չէ, քեօխվա՛, չգնաս. գաղաղած⁽¹⁾ ա:
Եւ կուանալով դէպի նա, խորամանկ ժպիտով աւելացրեց.

—Ինձ երկու մանէթ տուաւ... ուզում ա մի կերպ
պրծնի. դործի տէր ա խեղճը, ի՞նչ անի:

—Ադա էդ ի՞նչ ես ասում... էդ ո՞րդիան ա գտել
էղքան փողը... բաս գնա սարքի տենանք: Այ, 20 մա-
նէթից պակաս չըլի հա... հինգ կոտ էլ ցորեն... որ մի
կէս փութ էլ պանիր առնես՝ մի-երկու կտորը քեզ:

—Էդ շա՛տ ա, քեօխվա: Զի տալ. մէկ էլ տեսար
ասաւ թէ՝ «կերթամ զիւանխանա՛»... ու գնաց. յետոյ,
ձեռքդ ի՞նչ կ'ընկնի... Հլա ստարշինան էլ ա պոկելու:

—Տօ ի՞նձ ի՞նչ. ես իմը կառնեմ, ստարշինան ու-
զում ա, թող կաշին պլոկի:

—Բա պրիստամաւը, սուգե՞քը, պի՞սէրը...

Ադա, նրանց ցաւը մեղ են տուել... ի՞նչ ուզում
են թող անեն. քանի հլա չեն սկսել, թող լաւ պատառ-
ները հազըր մեղ հասնի... էտ ա, 20 մանէթ, 5 կոտ
ցորեն ու կէս փութ պանիր. կարաս՝ մի հատ էլ գառը
պոկ տու՝ տանենք մէշէն, քէֆ անենք:

—Դժար թէ ըլի, քեօխվա. ծոծրակը քորեց Տաղին
—արի 10 մանէթի ու 2 կոտի կապենք... հլա մէկալոնք
էլ կան. նրանցից էլ մէկ էդքան կառնենք՝ ու մի լու,
եղալի դործ կը դառնայ:

Քեօխվան ժպտում՝ քիչ մտածեց, յետոյ ասաց.

—Ադա, քիւրդ Տաղի, եանի զրուստ, հէնց երկու
մանէթ առիր...

—Աստուա՛ծ, երկինք...

—Ցորե՞ն, պանի՞ր...

—Մեղայ Աստծոյ... որ ուզեմ էլ—կը տայ...

Քանազը սոքի ելաւ:

¹⁾) Աստիլ կատաղած:

—Հլա գնանք մէկ ինքս տեսամ ի՞նչ կանեմ. ասաց
նա:

—Վայ, չէ, քեօխվա, դէմը փակեց Տաղին—որ գնա-
ցել ես՝ կը կատաղի. մէկ էլ էն տեհար՝ թարսուեց ու
դիւղ—զբա ստարշինան գնաց. էն վախտն էլ զադ չի
ընկնի ձեռքդ. դիփ ստարշինան կուտի:

—Ադա դորթ ես ասում... Բաս դու գնա, տեսանք
ոնց կը սարքես... ինչքան կարաս՝ պլոկի հա...

Եւ նվ գիտէ, յետոյ ինչ՝ պիտի լինէր, քեօխվէն,
ստարշինան և այդպէս՝ փոքրից մինչև մեծը ինչպէս
պիտի թալանէին, մերկացնէին գիւղացիներին—եթէ մի
միջնադէպ վրայ չզար և քարուքանդ անէր խաղը,
ոչնչացնէր ամեն ինչ։

Ցանկարծ լեռնալանջի միւս մասից մի խոպոտ, մի
այլանդակ աղաղակ ոռումբի նման եկաւ ընկնելու մա-
նուկների մէջ։

—Ա՛ շան տղերք, ա՛ բեհայեաներ', ա՛յ ես ձեր...

Դարձանք սարսափահար: Մի ինչ որ մարդ, ահա-
գին փայտը ճոճելով, կարտուղը պինդ կոխած զլխին,
չուխի ծայրերը դօտկի մէջ՝ կատաղաբար վազում էր
դէպի մեր կողմը և հայհոյրւմ, հայհոյրւմ...

Մանուկներն ահարեկ՝ ոստնեցին, վարկենապէս
ամէնքը լեղապատառ՝ նետուեցին ամէն ուղղութեամբ,
իսկ Տաղին սոսկումով ճշաց.

—Ադա, քեօխվան ա, տաւարնին հարոցներն են
մտել, վագէք...

Յիրաւի, երբ վեր նայեցի, ի՞նչ տեսնեմ... Տաւար-
ները, բլուրներից, կարծես խօսքը մէկ արած, խմբովին
իջել—մտել էին գիւղացոց խոտանոցներն ու ախորժա-
կով հնձում էին պարարտ խոտերը:

Քեօխվան, որ երկի գիւղից անցելիս տեսել էր այդ,
կատաղած, փրփրած, ցուպը սպառնալից երերեցնելով՝
վազում էր ջարդելու փոքրիկ նախրապաններին, որոնք

գունդ ու կլոր՝ սրանում—փախչում էին ամէն ուղղութեամբ:

Սրանը ետեից ջանաց հասնել ահարկու իշխանը,
փայտը զլխի վրայ պտտցնեյով քանից նետեց այս ու
այն փախչողի ետեից, հայհոյեց խոզային ճիշերով...
սակայն ո'չ ոքի հասնել չկարողացաւ:

Քիչ յետոյ մնացինք ես ու ազջիկները:

Սրանք էլ ոտքի էին ելել: Նայեցին ինձ, ծիծաղեցին և ճիպոսները վերցրած՝ դնացին դէպի սագերը:

Եւ երբ իջել խճուղուվրայ՝ դէպի ետ էի նայում — տեսայ դեռ ևս խուսափող ոտներ, կատաղութիւնից փայտը այս-այն կողմ նետող քեօխվին, որ փորձում էր գոնէ մէկին ծեծած լինել. բարձրանում էր բլուրներն ի վեր, իջնում ծործորները... Նրա առջեկց, զընդակիների նման արագ զլորւում-անհետանում էին մանուկները, իսկ սագերը սարսափահար, ճիշերով ու թերի թափահարումներով՝ սահում էին դէպի վտակը...

Սարալանջերն ամայացան. քեօխվի չոր, այլանդակ ստուերն էր միայն, որ երբեմն երեսում էր այս-այն կողմ, նման հօտի մէջ աւեր սփռող կատաղած գայլի...

Ա. Փափազեան

ՏԱՏԵՍՎԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱԶԵՐԸ¹⁾

IV

Ժողովրդական տնտեսութիւն

Հնդհանուր կուլոռուրական վերածնութիւն:—Քաղաքական-պետական կենտրոնացումը՝ արգիշտիք տնտեսական պահանջների և հասարակական ձրգառութերի:—Ժողովրդական անտեսութիւնը և նրա առանձնայատուկ կողմերը:—Իրեւէր շահանասութեան պրոցեսը երրարդ Փազում:—Արգիշտինաբերողի և սպասողի յարաբերութիւնը:—Առևտուրը, որպէս մասսայական երեսյթ:—Տեխնիքական յիշաշրջումները:—Անդրծովեան-դաղութային քաղաքականութիւնը:—Հաղորդակցութեան միջոցների կատարելագործումը:—Խնդուսարիական, առևտուրական և վաշխառուի կապիտալի փոխազդեցութիւնը:—Դաշխառուի կապիտալը միջին և նոր գարերում:—Երեսդիտար:—Բիւրոկրատների և ռազմիկների կենարժուական պետութիւնը նոր գարերում:—Պետութեան և կապիտալիստ զասակարգի փոխազդ կախումը:—Դասակարգային պետութիւնը:—Պետութեան միջամտութիւնը տնտեսական կեանքի մէջ և նրա սուանձնած տնտես: Փոնիցիաները:—Դասակարգային լայն գիֆերհնցիացիան նոր ու նորագոյն գարերում:—Կապիտալիստներ և պրոլետարներ:—Խոշոր կայուածաւէրեր և մանր գիւղացիութիւն:—Կոնսերվատիզմն ու վրերալիզմը:—Միջին զասակարգը՝ արհեստաւորներ, մանր զանառականներ և ընդհանուր ինտելիգիան:—Նոր սոցիալական օրդանիզմը:—Տնտեսական-հասարակական չորս տարրեր հոսանքները երրորդ Փազում՝ մերկանտիլ-աբսոլիւտիզմի, անտեսական լիբերալիզմի, սոցիալական և սոցիալիստական շարժումները:—Տնտեսական զարգացման երեր Փազերի ընդհանուր համեմատական կէտերը:

1.

Միջին դարերի քաղաքային շրջափակ տնտեսութիւնը արագ քայլերով ընդլայնում է իր եզրները նոր դարերի ընդհանուր կուլտուրական վերածնութեան մուտքով: Հիմք է դըրւում ինչպէս տնտեսական, այնպէս էլ տնտեսական Փակտորներով պայմանաւորուած քաղաքական, հասարակական կեանքի

1) Տես «Մուբճ», № 10.

մի նոր դարագլխի: Ցնցում, սթափւում են Արևմտեան Եւրոպայի առաջնակարգ հրկրները: Հետզհետէ անհետ չքանալու ճանապարհ են որոնում միջնադարեանը, սխոլաստիկը, մարդկային միտքը կաշկանդող բնագդական խորհրդածութիւնները. միջնադարեան տխուր ու մութ փլատակների վրայ կառուցուել ըսկըսեց մի նոր, թարմ, գեղատեսիլ աշխարհ: Աշխարհագրական բայցումները, տեխնիքական գիւտերը, գիտնական պողիտիւումնասիրութիւնների յառաջադիմութիւնը, կրթական-գլոբուցական հաստատութիւնների բարեկարգումը, կլասիկ աշխարհի փարթամ քաղաքակրթութեան խորագննին վերլուծութիւնը և այլն, մի ակտիւ յեղաշրջում են մտցնում ոչ միայն պետական, հասարակական կաղմակերպութեան մէջ, այլև մեծապէս ազգում են մարդ անհատի մտաւոր հորիզոնի և անձնական հակումների վրայ, փոխում են անհատի, սոցիալական խաւերի և գասակարգերի տնտեսական կեանքի ձևն ու յարաբերութիւնները: Ժամանակի յայտնի ճանապարհորդները՝ Ալբրեխտ Դիրքը և Լուկաս Կրանախ, խիստ գեղեցիկ ու գրաւիչ դրյաներով են ներկայացնում, թէ ինչպէս քաղաքակրթութիւնը նորափթիթ դարնան պէս ամենուրեք ծաղկում, բարգտաւածում էր:

Ցիր ու ցան, միմեանցից անջատուած միջնադարեան քաղաքները, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնաւմ էր իւրանից մի անտեսական-քաղաքական աւտոմում ամբողջութիւն, խաղտում են իրանց կղզիացւումը տնտեսական ծաւալուող պահանջների ազդեցութեան տակ և տեղի տալիս . մեծ տերըիտորիական ամբողջութեան: Արևմտեան Եւրոպայում երկրի միասիւնները անհաշտ կուր են մղում, յաղթում և իրանց ստորագրում են իրանց տիրական ոյժը սահմանափակուղ այլ և այլ կազմակերպութիւններին—կղերականութեան, ազնուականութեան, աղասա քաղաքներին ու շրջաններին: Դարու կենսական պահանջ էր համարւում նուածել ու խաղտել այդ առանձնակի խոչնլուններին և գլուխ բերել նոր դարերի ազգայրն-քաղաքական սերա, կենտրոնաձիգ միութիւնը, պետական աբսոլիւտիզմը: Հետզհետէ արմատանում է ընդհանուր պետական գաղափարը: Միջնադարեան ինքնամփոփ քաղաքը՝ իր շրջապատ գիւղերով, գաղտարում է այլևս գոյութիւն ունենալուց, որպէս մի մէկուսացած ամբողջութիւն: Նա դառնում է մի օրգանական անդամը այն պետական կենտրոնացման, որ միացնում, օղակում էր իր մէջ բազմաթիւ քաղաքներ և մասր-մունր տերըիտորիաներ:

Տնտեսական անհրաժեշտութեան ծնունդ էր այդ երևոյթը: Մի կողմից քաղաքային ինքնամփոփ անտեսութիւնը այլմա-

անդօր էր անթերի գոհացում տալու իր բնակիչների առաջընթաց կարիքներին։ Միւս կողմից զարգանում էր տեխնիկան, բարձրանում էր աշխատանքի արդիւնաւէտութեան (Produktivität) աստիճանը, բազմանում էր աշխատանքի բաժանումը ճիշգաւորում են արհեստները տնտեսական-սոցիալական խաւերը, լայն դիմենսիօններով առաջ ընթացող առևտուրը և դրամական բարեկարգուող սիստեմը մերձեցնում, միացնում են իրար ընդպարձակ տերիտորիաներ, միջնադարեան հասարակ ձեռնարհեստը և մանր արդիւնաբերութիւնը հետզիտէ տեղի են տալիս մանուֆակտուրային, ապա մեծ ինդուստրիական—ապրանքային արդիւնաբերութեան։ Ահա տնտեսական պահանջների այդ բարդ համագումարը բնական անհրաժեշտութեամբ տուաջ բերաւ բնդհանուր ազգաբնակութեան և համապատասխան դասակարգերի ու խաւերի մէջ տնտեսական կենսական շահերի համաձայնութիւն, սոցիալական ինտերեսների և ձգտումների համօրինակութիւն։ Իսկ այդ բոլոր համօրինակշահերի և ձգտումների կենդանի արտայայտութիւնը եղաւ այն ժամանակ, երբ պետական ոյժը խաղտելով առանձնացած մարմինների կղզիացնող կապանքները, հնարաւորցւթիւն տուաւ հասարակական լայն համայնագործութան և հաւաքական աշխատակցութան։ «Ֆեօդալական տնտեսութեան օրով—առում է Կարլ Կառուցկին—քաղաքային համայնքները (շրջապատ գիւղերով) գրեթէ տնտեսապէս անկախ էին միմնացից, որովհետեւ նրանք արդիւնաբերում էին համարեա ամեն բան, ինչի կարիք ունէին։ Դրանից հետեւում էր նաև նրանց քաղաքական ինքնուրոյնութիւնը։ Ընոհակառակը, ապրանքային արդիւնաբերութիւնը և ապրանքային առևտուրը ազգի զանազան համայնքներին կախման վիճակի մէջ զրին մի կամ մի քանի տընտեսական կենտրոնավայրերից և այդպիսով նպաստեցին տընտեսական կենտրոնացման բաղաքականը հետևելու։¹⁾

Տնտեսական և դրանով պայմանաւորուած բաղաքական պետական կենտրոնացումով ծաւալուեցին տնտեսական ֆակտորներն ու ֆունկցիաները ժողովրդի բազմազան խաւերում։ Տնտեսական այդ (երրորդ) ֆազը կոչվում է ժողովրդական տնտեսութիւն։ Այդ ֆազի մէջ արդէն անտեսող մարմինը կազմում է ինքը՝ ժողովրդութը, որպէս մի ուրոյն ամբողջութիւն, որի ծալքերում ցանցաձև տարածուած են հազար ու մի ֆունկցիաներ։ Առաջին ֆազի կամ տնային ֆակ տնտեսութեան մէջ տնտեսող մարմինը՝ տունը, բաւարարութիւն էր տալիս

¹⁾ Karl Kautsky. «Die Klassengegensätze von 1789», եր. 9

միայն տան անդամնրի կարիքներին: Երկրորդ ֆազի կամ քաղաքային աւտոնոմ տնտեսութեան մէջ քաղաքը իր շրջապատ գիւղերով բաւարարութիւն էին տալիս սահմանափակ թուռվ բնակիչների կարիքներին: մինչդեռ երրորդ ֆազի կամ ժողովրդական տնտեսութեան մէջ տնտեսող սուբիեկտը ներկայացնում է մի կոմպլիքս մարմին—ժողովորդը, որի բարդ օրգանիզմը ընդգրկում է իր մէջ ամբողջ ազգային-պետական տերիտորիան:

Ժողովրդական տնտեսութեան ամենախոշոր և աչքի զարնող տարբերութիւնը՝ տնտեսական զարգացման միւս ֆազերի հանդէպ, կազմում է այն երեսոյթը, որ այդ փազի մէջ արդիւնաբերութիւնը ստանում է ապրանքարժույթին արդիւնաբերութեան ընաւորութիւնն, այսինքն արտադրուող ապրանքները սկզբից և եթ որոշուած են փոխանակելու, վաճառելու, շուկայ արտահանելու համար: Մասսայաբար արտադրուող ապրանքները վաճառքի հն հանում ժողովրդական մասսայի բազմապատիկ կարիքներին բաւարարութիւն տալու համար: Ժողովրդական տնտեսութեան շրջանում երկարում ու բարդանում է շրջանառու այն պրոցեսը, որ ունեն տնտեսական բարիքները՝ արդիւնաբերողի ձեռքից մինչ չե սպառողի ձեռք հասնելը: Ապրանքը կտրում, անցնում է մի շաբաթ տնտեսութիւնների բովլից, նախ քան իր վախճանական սպառման կամ գործածութեան հանելը: Տնային փակ տնտեսութեան շրջանում արդիւնաբերողն ու սպառողը ամփոփուած էին մի սուբեկտի մէջ՝ ընտանեկան հարկի տակ: Քաղաքային տնտեսութեան մէջ թէկ աշխատանքի բաժանումով տարբեր խաւեր հն ներկայացնում արդիւնաբերողներն ու սպառողները, այնուամենայնիւ նրանց տնտեսական շփումն ու յարաբերութիւնն կատարում էր անմիջապէս, վաճառանոցում հանգնած էին նրանք իրար հանդէպ: Իսկ ժողովրդական տնտեսութեան մէջ իրար չեն ճանաչում և խիստ հեռանում են միմեանցից արդիւնաբերողներն ու սպառողները: Արդիւնաբերողը չէ, որ իր ապրանքը անոիշապէս վաճառում է սպառողի վրայ, և սպառողը չէ, որ գնում է այդ ապրանքը և փող տալիս արդիւնաբերողին: Մի այլ սոցիալական խաւ է՝ առեւտրական լասակարզը հասել հն ֆենօմենալ զարգացման ու ծաւալման: «Վաճառականները՝ ասում է էնվելսը՝ աշխատանքի բաժանման անհրաժեշտութեամբ առաջացած մի դասակարգ են, որոնք ոչ մի մասնակցութիւն չունեն իրերի արդիւնաբերութեան պրոցեսի հետ, ոչ

մի նոր արժէք չեն աւելացնում ապրանքի վրայ, այլ զբաղւում
են լոկ արդիւնքների փոխանակութեամբ և վաճառքով»¹⁾ Առ-
և տրական կենտրոնական քաղաքները քաղքակիրթ երկիրների,
ստացել են այսօր միջազգային բնաւորութիւն։ Ամենակենսա-
կան պիտօյըներից սկսած մինչև ամենաբարձր լուծուոի ար-
դիւնքները գարձել են առևտրի առարկայ։ Այսօր առևտուրը
գարձել է մի տնտեսական—մասսայական երևոյթ առաջին կարգի։

2.

Նոր գարերի շրջանում, սկսած 15-րդ դարի վերջերից—
մանաւանդ 18 և 19-րդ դարերում—տնտեսական երևոյթների
գարգացումը այնքան սրբնթաց է, տեխնիքական յեղաշրջում-
ները այնքան արագասահ ու բազմակողմանի, ժողովրդական
պահանջները այնքան բարդ ու յառաջացէմ, որ ազգային-տնտե-
սական քաղաքականութիւնը չէր կարող բաւականանալ միայն
պետական տերիտորիայով, նա պէտք է արտասահմանեան
շահատակութիւններ անէր։ Խսպանիայի, Ֆորտուգալիայի, Ան-
գլիայի, Ֆրանսիայի և Հոլանդիայի անզրծովեան—գաղութային
առևտրական նուաճութերը տալիս են մեզ ազգային-տնտեսական
քաղաքականութիւնն, ընդարձակ տոն ու ծաւալ տուին առևտրին
հեռաւոր երկրամասերում։ Գտնուեց ծովային ճանապարհը դէ-
պի Հնդկաստան՝ անբաւ հարստութիւնների այդ առասպելա-
կան երկիրը, եղաւ Ամերիկայի գիւտը՝ ոսկու և արծաթէ հան-
քերի անսպաս մայր ցամաքը։ Հարստութիւնների մի
սոսկալի տարափ էր կուտակուել Արևմտեան Եւրոպայում։
Հարստութիւններ, որ եւրոպական բաղդախնդիրները նոր գտած
երկրներում առևտով, խարենքայութեամբ և յափշտակու-
թեամբ կողոպաել էին։ Այդ հարստութիւններից առիւծի
բաժինն ընկաւ խոշոր առևտրականներին, որոնք հա-
րաւորութիւն ունէին սպառազինելու նաւերը և կարգելու
նրանց վրայ բազմաթիւ ամբակաղմ մարդիկ, նոյնքան յամառ
ու դիմացկուն։

Բուրժուական շահերի ներկայացուցիչ և ջերմ պաշտպան
վուլգար տնտեսագէտները մեծ առաքինութիւն են համարում ուս-
տատիս mutandis բացատրելու, որ կտպիտակի սկզբնաւորութիւնը

(¹ F. Engels, »Der Ursprung der Familie, des Privateigenthums und des Staates« եր. 173.

պէտք է որոնել խնայողութեան մէջ։ Սակայն Մարքսը տալիս է մեզ կապիտալի ծագման միանգամայն այլ աղբիւրներ՝¹⁾, ճիշտ համապատսխան այն պատմական-կուտուրական երևոյթներին, որոնց շնորհիւ կուտակուել և տնտեսական-հասարակական խոշոր ոյժ է ստացել կապիտալը։ Կապիտալիստական ազգերի ամենամեծ հարուստութիւնները՝ սկսած 15-րդ դարերի վերջերից, ծագում էին՝ զարդութային քաղաքականութիւնից, այսինքն օտար երկրների աւարառութիւնից, ծագում էին ծովային յափշտակութիւնից, մաքսանենգութիւնից, ստրուկների առևտորից, առևտորական պատերազմներից, զիւղական ազգաբնակութեան էքսպրուզիացիայից և այլն։ Ուրիշ խօսքով քաղաքական-առևտորական ոյժն ու աւարառու բռնութիւնն է եղել կապիտալի ծագման միակ գորեղ ֆակտորը և ոչ թէ «խնայողութիւնը»։ Այլպիսով առաջանում է ինդուստրիական կապիտալի սկզբնական ակումուլացիան։

Տնտեսական զարգացման երրորդ ֆազի մէջ կապիտալիստական արդիւնաբերութեան ու տնտեսութեան սիստեմը հասնում է իր կատարեալատիպ զարգացման։ Տեխնիքական գիտեները՝ սկսած յատկապէս 18-րդ դարի կէսերից, բնագիտութեան, մանուանդ ֆիզիկայի և քիմիայի զարգացումը և նրանց արդիւնաւէտ գործադրութիւնը, հակայական չափերով զարկ տեխնիքական ինդրուստրիային, գործարանական արդիւնաբերութեան։ Արագութեամբ աճում էն կապիտալի բոլոր շահաւէտ ֆունկցիաները—որպէս ձեւնարկութեան կապիտալ (Unternehmungskapital), առևտորական կապիտալ, վարկատու կապիտալ, բանկային հաստատութիւնների բոլոր տեսակները և այլն։

Ինդուստրիական կապիտալը իր ծագումով համարւում է ամենանորագոյնը՝ կապիտալի միւս երկու տեսակներից—առևտորական և վաշխառուի կապիտալ, որոնց հետ ծանօթացանք մենք, երբ խօսում էինք տնտեսական զարգացման երկրորդ ֆազի մասին։ Սակայն կրտսեր եղբայրը իր արագ զարգացումով և վիթխարի ծաւալով միւսներին նուաճել և ենթարկել է իր ծառայութեան։ Այսուամենայնիւ տնտեսական—արդիւնաբերական յարաբերութիւնների մէջ մէկը միւսին օժանդակող անհրաժեշտ պայման է համարւում։ Խոշոր ինդուստրիան, օրինակի համար, սկզբից և եթ մատնացոյց է արուած առևտորի վրայ, միւս կողմից, առևտուրը որոշ աստիճանից սկսած իր

¹⁾ K. Marx, «Kapital» I հատ., Վ հրատ., 24-րդ գլուխ «Die sogenannte ursprüngliche Akkumulation», էլ. 679.

առաջխաղութեան համար կարիք ունի կապիտալիստական արդիւնաբերութեան: Որքան վերջինս աւելի է տարածւում և տիրապետող դառնում, այնքան անհրաժեշտ է դառնում առևտրի առաջխաղաց ընթացքը ամբողջ տնտեսական կեանքի համար: Առևտրի դադարը նշանակում է արդիւնաբերութեան դադար, որովհետեւ մասսայական արդիւնաբերութիւնը անհրաժեշտօրէն պայմանաւորուած է մասսայական վաճառքով:

Որքան կարևոր է առևտրի դարգացումը կապիտալիստական ընդհանուր տնտեսութեան համար, նոյնքան կարևոր է դարձել նաև վաշխառութեան զարգացումը: Միջին դարերում վաշխառուն մի հացկատուկ էր, որ շահագործելով ուրիշների տառապալից վիճակը կամ թեթեսամուտովինը, ծծում, քամում էր նրանց արիւնը: Եթէ մի գիրզացի փող էր վերցնում, ապա այդ լոկ նրա համար, որպէսով վճարէ իր փողային տուրքերը և զանազան պրոցեսների (գատական) ծախքերը: Իսկ եթէ մի ազնուական փող էր փոխ վերցնում, ապա նա անում էր այդ ուրախ և զուարձ վատնելու համար: Այդ պատճառով տոկոսով պարտք վերցնելը անբարոյական էր համարւում և բոլորի կողմից գատապարտուում:

Բոլորովին այլ է այդ տեսակչուց կապիտալիստական տնտեսութեան շրջանը: Այժմ փողը մի միջոց է, որևէ կապիտալիստական արդիւնաբերութեան ձեռնարկելու, աշխատանքի ոյժեր գնելու և շահագործելու համար: Պարուք վերցրած փողը ծառայում է այժմ աւելի շատ աշխատանքի ոյժեր շահագործելու, հետևապէս և եկամուտը աւելի մեծացնելու համար, և իրաւ աւելի շատ, քան պարտքի տոկոսն է պարունակում: Կանխիկ դրամի գործապրութեան այդ յեղացը ջումավ, յեղաշըրջում է նաև վաշխառութեան սկզբնական բնաւորութիւնը: Նրա դերը՝ որպէս տառապալից վիճակի և թեթեսամտութեան շահագործութեան միջոց, աստիճանաբար յետ է նահանջում այն դերի հանդէպ, որ ընդունաւորում է կապիտալիստական արդիւնաբերութիւնը, այսինքն հնարաւորութիւն է տալիս, որ կապիտալիզմի դարգացումը դեռ աւելի արագ առաջ գնայ, քան ինդուստրիական կապիտալիստների փողային ոնդուկներում կուտակուած գումարները կարող են այդ հնարաւոր դարձնել: Այլևս դադարում է վաշխառուի դէմ եղած ատելութիւնը, նազառնում է անարատ և ստանում մի նոր, քաղցրահնչիւն անուն՝ կրեղիտ տուող (վաշխառու): Առաջ վաշխառու կապիտալիստները կուտակում էին փողի գումարները իրանց պահանջմաններում, որպէսզի այդ լի աւագաններից հազարուոր խոզովակներով հոսեցնեն դէպի ոչ կապիտալիստները: Իսկ այսօր

վաշխառու կապիտալիստների փողային մնդուկները դարձել են կրեդիտային հաստատութիւնները—ընդհանուր աւագան, ուր հազարաւոր խողովակներով ներս են հոսում ոչ կապիտալիստների փողերը, որպէսզի այնտեղից դուրս հոսեն դէպի կապիտալիստները:

3.

Նոր դարերում կազմակերպուած բիւրոկրատների և ուազմիկների կենտրոնական պետութիւնը համապատասխանում էր նոր ծլող ծաղկող կապիտալիստ դասակարգի պահանջներին ճիշտ այնքան, որքան առաջինը կարիք ունէր երկրորդի օժանդակութեան: Մօգերն պետութիւնը քաղում էր իր կենսական միջոցները ոչ թէ անձնական ծառայութիւնից կամ բնական բերքերից ու արդիւնքներից, այլ բացառապէս զրամական աղբիւրներից: Այդ պատճառով միապետները շահագրգոռուած էին սեփական ինտերեսների տեսակէտից պաշտպանելու ։ և նպաստելու նրանց—վաճառականներին, կապիտալիստներին,—որոնք փող էին ներմուծում երկրի ներսը: Մի երկրի հարստութիւնը կազմում էր այդ երկրի ներսը գանուած կանխիկ՝ փողի քանակի մէջ, իսկ որքան հարստա է մի երկրը, բարձր՝ ժողովրդի կենցաղը, այնքան աւելի կարելիութիւն ունի պետութիւնը իր գրամարկը հարկերով, տուրքերով հարստացնելու: Այդպէս էր թելագրում ժամանակակից մերկանտիլեան սիստեմը. մի գործնական ճկուն սիստեմ, որ գաւանում էին զրեթէ ըուլոր նշանաւոր պետական գործիչները՝ սկսած Կարլ V-ից մինչև Ֆրիդրիխ Մեծը. իսկ նրա ամենաստիպիքական արտայայտիչը եղաւ քրանսիական մինիստրը Կոլլերը: Կապիտալիստները փող էին տալիս միապետներին և պետական գոնձարանին, գարձնում էին նրանց իրանց պաշտպանների, զնում իրանցից կախման վիճակի մէջ և այդ միջոցով սահիպում էին պետութեան, որ նա հաղորդակցական ճանապարհների ավանովութեան և ընդարձակման միջոցով, անդրծովեան դաղութների նուանումներով, մըցող առևտրական պետութիւնների դէմ մըզած կոլիւներով, մենավաճառի արտօնութիւններ աւալով, և այլն, ծառայէ կապիտալիստ դասակարդի շահերին:

Միջնադարեան պետութիւնը շատ հեռու էր ընդհանուր տնտեսական հասարակական Փունկցիաների զեկավարութիւնից: Դպրոցական հաստատութիւնների, հիւանդների խնամատարութիւնը, հաղորդակցական միջոցների հոգատարութիւնը, մնտասպահութիւնն ու ջրաբաշխների զեկավարութիւնը և այլն, բա-

Ժին էին ընկնում առանձին համայնքների գործունեութեան Այդ հետզհէտէ փոխուեց, երբ տնտեսական ֆակտորների զարգացման ոյժով նոր և մանաւանդ նորագոյն ժամանակներում պետութիւնը իր ինքնապաշտպանութեան կարիքների տեսակէտից շահազգուած զզաց միջամտել տնտեսական կեանքի բարդ կառուցուածքի մէջ, ստանձնել իր վրայ ծանրակշիռ Փունկցիաներ և այդպիսով մտել տիրապետող դասակարգերի —կազմական լուսուների եւ խոշոր կալուածատէրերի—շարքը՝ Արեմտեան Եւրոպայի սահմանադրական կազմը եւ բուրժուական պարլաստալիզմը չքացրեց պետական կազմի վրայից Փէօդալական—արսօլիւտիստական վերջին հետքերը և դրոշմեց նրա վրայ բուրժուական—դասակարգային պետութիւն անունը: Այսինքն մի պետութիւն, որի զոյութնան կուռանը կազմում է տիրապետող դասակարգը՝ բուրժուազիան, մի պետութիւն, որի բաղարական credo-ն համարւում է բուրժուական—դասակարգային իոլէալը և որի յաջատեութիւնը՝ իր դասակարգային ամբակուու Փունկցիաներով, պայմանաւորուած է բուրժուազիայի տիրապետութեան յարատեութեամբ:

Ժամանակի ընթացքում պետական մարմինը զարձաւ մէ վերին աստիճանին բարդ ու բազմաճիւղ ապարատ, որի ծալքերում կենտրոնանում էին հասարակական—տնտեսական կարեւորագոյն Փունկցիաները: Նա ոչ միայն ստանձնեց իր վրայ միջնագարեան համայնքների հոգացողութեանը թողնուած վերոյիշեալ հաստատութիւնները, այլև կապիտալիստական տնտեսութեան սիստեմի զարգացման ազդեցութեամբ նրա համար աւելի ու աւելի են աճում այնպիսի Փունկցիաներ, որոնց միջոցով պետութիւնը խորապէս շօշափեց տնտեսական կեանքի արժատները: «Եթէ անհրաժեշտ էր—ճիշտ նկատում է կառուցկին—որ նին ու միջին դարերի պետական քաղաքադէմները առաջնապէս դիմումատներ և իրաւաբաններ լինէին ապա այժմ պէտք է կամ գոնէ հարկաւոր է, որ նրանք առաջնապէս բաղարատնետեաներ: Մինեն»:¹⁾ Տնտեսական զարգացումը հարկադրումէ պետութեան շարունակ իր ձեռքը կենտրոնացնելու մեծ քանակութեամբ արդինարերական ճիւղեր: Միջին դարերում պետական ոյժը իր կարողութեան, ամենամեծ մասը քաղում էր պետական կալուածատիրութիւնից: Դա յաճախ գեռ աւելի էր բազմանում 16, 17 և 18-րդ դարերում եկեղեցական և գիւղացիական կալուածներով: Միւս կողմէց, սակայն, իշխանի գրամական տագնապը ստիպել է

¹⁾ K. Kautsky, «Das Ersturter Programm» ել. 126.

արքունական կալուածը վաճառելու կապիտալիստի վրայի Բայց շատ երկրներում գրանցից գեռ բաւական քանակութեամբ մնացորդներ կամ այժմեան արքոնի կալուածների և լեռնահանքերի մէջ։ Միլիոնարիզմի զարգացումը աւելացրեց նրա վրայ զինանցներ և նաևազործարաններ, հազորդակցութեան զարգացումը՝ փոստատներ, երկաթուղիներ, գնուագրատներ, վերջապէս պետութեան ֆինանսական կարիքները այնքան են աճում, որ նրան հարկագրում են ձեռնարկելու բանկային հաստատութիւնների, ինդուստրիական ձեռնարկութիւնների և ամեն կարգի մենավաճառութեան։ Մի խօսքով ժողովրդական տնտեսութեան շրջանում պետութիւն ասած չի ներկայացնում այլևս միայն մի քաղաքական-ուստիկանական կազմու պատրաստ ոյժ, որ ըստ Մանչեստրեան դպրոցի պիտի ապովէր միայն կապիտալիստ զասակարգի տնտեսական-առետրական արշաւանքները՝ երկրի ներսն ու գուրսը, պիտի սանձահարէր արտաքին մրցակիցներին և ներքին խոռվայոյգ պրոլետարիատին։ ոչ, այժմեան պետութիւնը գրանով հանգերձ նաև ամենախոշոր կապիտալիստն է, որ ստանձնել է իր վրայ հսկայական արդիւնարերական ձեռնարկութիւններ։

4.

Տնտեսական զարգացման երրորդ Փազի մէջ ամենառաջագրաւ երեսյիներից մէկը կազմում է հասարակական կազմի լայն ղիֆերնեցիացիան. մի երեսյի, որ բացառապէս արդիւնք է համարւում աշխատանքի բաժանման զարգացման և տնտեսական ֆակտորների հասունութեան։

Միջին դարերում ձեռնարհնեստային մանր արդիւնարերութեան պրոցեսին մասնակցում էին մանր սեփականատէր վարպետներ փոքրաթիւ դործաւորներով (քարգահ) ու շակերտներով, իսկ նոր ու նորագոյն դարերում կապիտալիստական մեծ ու վիթխորի արդիւնաբերութիւնների պրոցեսին մասնակցում են մենավաճառ կապիտալիստ անհատներ և հարիւրաւոր ու հազարաւոր սեփականագուրկ բանուորներ։ Այդպիսով նոր ու նորագոյն դարերը, երկու խոշոր, ինտերեսներոր հակադրող բանակներ են արտաքերել, որոնք սկիզբ ամնելով մանուֆակտուրային արդիւնաբերութեան շրջանից, հասան մինչև օրս—տեխնիքական ինդուստրիայի կատարելատիպ զարգացման շրջանում—հասունութեան բարձր աստիճաննին։ Մէկը՝ բուրժուազիան, խոշոր է իր քաղաքական տիրապետութեամբ, տնտեսատկան ֆակտորներով և սոցիալական ուժեղ ղիբրով։ իսկ միւսը՝ պրո-

լետարիատը, խոշոր է իր ծաւալող քանակով, տևտեսական նշանակութեամբ և սոցիալ-քաղաքական ու պատմական զերագոյն նպատակով։ Այդ երկու հակամարտ տարրերի դասակարգային ինտերեսների արմատական հակառակութիւնը արտարկերել է անհաշտ, միմեանց բացասող ձգտումներ, տոն է տուել գասակարգային ահաւոր կոռուին։

Միւս կողմից, զուտ ինդուստրիական սահմանից՝ դործարանական կեանքից դուրս, գտնում ենք գիւղատնտեսութեան սահմանում երկու դասակարգեր—խոշոր կալուածատէրեր և մանր գիւղացիներ,—որոնց իրէան է ընդհանուր առմամբ ազգարական ծգուումներն ու քաղաքական կոնսերվատիզմը։ Սակայն տնտեսական դարգացումը և սոցիալական անժըստելի էվոլյուցիան այդ սահմանում ևս առաջ է բերել զգալի մետամորֆոզ։ Եւ այն չափով, որով տեխնիքական ինդուստրիան մուտք է գործում գիւղատնտեսութեան մէջ և մի կողմից խոշոր կալուածատիրոջ դարձնում նաև կապիտալիստ, իսկ միւս կողմից մանր գիւղացիական տարրին պրոլետարացնում, նոյն չափով այդ դասակարգերի շահերն ու ձգտումները մերձնում են գործարանական կապիտալիստ և պրոլետար գասակարգերի շահերին ու ձգտումներին։ այսինքն հետզետէ ընդհանրանում են ողջ հասարակական կազմի մէջ միայն երկու հասարակական-քաղաքական հակամարտ իրէաներ՝ ընդհանուր բուրժուական (որի դրօշակակիրն է՝ կապիտալիստը և խոշոր կալուածատէրը) և ընդհանուր պրոլետարական (որի դրօշակակիրն է՝ համայն պրոլետարիատը, քաղաքային ինդուստրիայի թէ գիւղատնտեսութեան մէջ)։ Այսօր ագրարական կոնսերվատիզմն ու կապիտալիստական լիբերալիզմը կանգնած են ստհմանադրական Եւրոպայում գոյութիւն ունեցող սիենոյն քաղաքական-հասարակական՝ մի խօսքով՝ բուրժուական հայեցակէտի վրայ։ Նրանց ունեցած չնչին տարրերութիւնները հետզետէ հարթում ու հաշտում են միմեանց հետ այնքան և այն արագութեամբ, որքան համայն պրոլետարիատի քաղաքական-հասարակական արմատական իրէալը աւելի ու աւելի աճում, հզօրանում է և կենսուակութիւն ստանում օրէցօր։

Սակայն աշխատանքի բաժանումը այն աստիճան է կատարելագործուել, որ դասակարգային գիւղերինցիացիայով առաջացել է և մի այլ ոչ պակաս խոշոր և հետզետէ ստուարացող դասակարգ։ Այսօր միջին դաս (Mittelstand) կոչւող արհեստաւորների, մանր վաճառականների կողքին բսել, աճել է մի երկրորդ միջին դասակարգ՝ աւաշնից տարրեր իր սոցիալա-

կան գիրքով ու զբաղմունքով. դա ընդհանուր ինտելիգենցիան է՝ մտաւոր աշխատատորները (Kopfarbeiter) «կրթուած պրոլետարեատը» («gebildetes Proletariat») — ինչպէս Կառլյան է անուանում — սկսած տեխնիքական — առևտրական կրթութիւն ստացած և կոչում ունեցող խաւերից մինչեւ մասնաւոր կոչումների (փաստաբան, բժիշկ և այլն), հասարակական հիմնարկութիւնների, կրթական — գիտնական հաստատութիւնների բոլոր մտաւոր գործիչները: Ներկայ կապիտալիստական տնտեսութեան սիստեմի մէջ կրթուած լինելը դարձել է մի առանձին գործ: Գիտելիքների չափը անվերջ ընդարձակուել է և աճում է օրէցօր: Եւ կապիտալիստական հասարակութիւնը, ինչպէս և կապիտալիստական պետութիւնը, աւելի կարիք ունեն զիտութեան ու առևտրի ներկայացուցիչներին՝ իրանց գործերը առաջ տանելու և ընութեան ոյժերը նուաճելու համար: Ոչ միայն զիւղացին, արհեստատորը կամ անգամ պրօլետարը, այլև վաճառականը, գործարանատէրը, բանկատէրը, բորսայի սպեկուլէանտը, սեծ կալուածատէրը ամեննեին ժամանակ չունեն իրանց նուիրելու արուեստի ու գիտութեան: Շահագործող գասակարգերը ձգում են այդ գործնէութիւնը մի առանձին գասակարգի վրայ, որին նրանք վճարում են զրա համար: Այսօր կը ըթութիւնը դարձել է մի ապրանք ճիշտ այնպէս, ինչպէս պրօլետարի գիտիքական ոյժը: Մի տեղ մտաւոր աշխատանքի շահագործութիւն միւս տեղ գիտիքական աշխատանքի շահագործութիւն: Տարբերութիւնը կայանում է միայն նրա մէջ, որ մտաւորապէս շահագործուղը աւելի լաւ վարձատրուելով, ունի նաև աւելի բարձր կինցաղ ու սօցիալական դիրք, քան գիտիքապէս շահագործուղը, թէս վերջնիս աշխատանքը աւելի ինտենսիվ ու արդիւնաւէտ է, քան առաջնինը:

Այսպէս ահա տեսնում ենք, որ տնտեսական բաղմանիւղ ֆունկցիաների և խոշոր ֆակտուների յառաջադիմութեամբ, աշխատանքի բաժանման զարգացումով, առաջացել է դասակարգային լայն գիւերինցիացիա, փոխուուն է դասակարգերի զարգացումն ու փոխաղեցութիւնը: Իսկ այդ երկույթով խոշոր ձևափոխման ենթարկուած սօցիալական օրգանիզմը ընդունել է սօցիօգիական մի առանձնայատուկ դրօշմ, բոլորովին տարբեր միջնագարեանից:

ները լրիւ չէին լինիլ, եթէ մենք մի քանի խօսքով չյիշաւակէինք այն շարժումները, որոնք բնականօրէն առաջացել են տնտեսութեան նոր ձեերի և յարաբերութիւնների ազդեցութեան տակ:

Եթէ ուշաղը ութեան առնենք ժողովրդական տնտեսութեան զարգացման ամբողջ ընթացքը, սկսած նոր դարերի սկզբնաւորութիւնից մինչև այժմ, կգտնենք տնտեսական-հասարակական հողի վրայ չորս տարրեր հոսանքներ—մերկանտիլեան, տնտեսական լիբերալիզմի, սօցիալական և սօցիալիստական հոսանքներ: Մեր նիւթի ծաւալի սահմանաներից շատ հեռու կանցնէինք, եթէ մանրամասն խօսէինք այդ հակադրական շարժումների և նրանց առաջնակարգ մտաւոր ներկայացուցիչների մասին: Ուստի նկատենք միայն հետեւալը:

Որքան մերկանտիլեան սիստեմը անհրաժեշտ էր համարում առեւտրական-մասնուֆակտուրային ձեռնարկութիւնների մէջ մէնավաճառավաթինը, արտօնութիւններ ու սենաշնորհութիւնները, որքան նաև առաջ էր կոչում ժամանակակից միահեծան պետութեան աջակցութիւնն ու միջամտութիւնը՝ տնտեսական ֆունկցիաների մէջ, մանաւանդ արտաքին առևտուրը ապահովելու համար, որ կանխիկ դրամ էր հոսեցնում երկրի նկրու, այնքան էլ դրա ճիշտ հակառակը վարուեց տնտեսական լիբերալիզմը:

Թիվիօկրատները և ապա 18-րդ դարի երկրորդ կէսից սկսած տնտեսագիտութեան կլասիք դպրոցի ներկայացուցիչները՝ յանձինս Ազատ Սմիտի, Դաւիթ Ռիկարդոյի, ծայրահեղ հակառակորդ էին որ և է մենավաճառի և առանցնաշնորհի, պետական որ և է միջամտութեան ու հովանաւորութեան: Պէտք է քանդիլոր սանձանարող կապանիքները, ազամտութիւն տալ մարդկային օգուն յատուկ թնորոշ մղումներին, որպէսզի ազամ մրցութեամբ ծլեն, ծաղկեն ու բարգաւաճեն բոլոր տնտեսական կենսունակ ոյժերը, զարգանան ու հասունանան տնտեսական ֆակտորներն ու ֆունկցիաները: Laisser faire laisser passer թող անուի, թող կատարուի-վարդապետում էր Մանչեստերեան դպրոցը: Տնտեսական այդ լիբերալիզմը գրկախառնուեց ժամանակակից բազաքառկան լիբերալիզմի հետ, որ անհաշտ կոիւ էր յայտարարում միապետական գահի, ֆեոդալիզմի և կղերականութեան դէմ, և որի ուժեղ արտայայտութիւնը տեղի ունեցաւ Ֆրանսիական մեծ յեղափոխութեան օրով:

Դարձեալ այլ բնուորութիւն ունի երրորդ կամ սօցիալական շարժումը, որ վերջին տասնամեակներում ընդգրկել է իր մէջ գրեթէ ակադեմիական բոլոր ոյժերին: Բուրժուական նոյնբեր, 1905.

մտածողների ձախակողմեան թեւ երևակայում է, որ առանց տիրապետող հասարակական կարգերի գոյութեան արժատները շօշափելու, հնարաւոր կլինի սօցիալ-տնտեսական մի շարք ըէֆօրմներով ժամանակի ընթացքում վերաստեղծելու դասակարգային յարաբերութիւնների հարմօնիա և իր այդ միջոցով լուծելու սօցիալական կօնֆլիկտը։ Սակայն այդ բոլոր ըէֆօրմները՝ տնտեսական թէ սօցիալական հողի վրայ, որոնց իրականացնող մարմինները պիտի լինեն բուրժուական կառավարութիւնն ու պարլամենտը, էապէս ուրիշ չեն, բայց եթէ տիրապետող սօցիալական չարիբը փոքր ինչ մեղմացնող պալիստիւ միջոցներ։ Բուրժուական մտածողները, դժուարացան մինչեւ օրս ընդունելու այն լայն տեսակէտը, որ իւրաքանչիւր խոշոր բացասական երեսոյթ անհրաժեշտօրէն պայմանաւորուած է խոշոր արմատական պատճառներով, հետեապէս վերջիններիս վերացումը միայն կպայմանաւորէ առաջնի չըքացումը։ Կարկատանք ըէֆօրմները ըստ ամենայնի մնջօր պիտի լինեն գասակարգային ներդաշնակութիւն վերաստեղծելու, արգիւնաբերութեան սիստեմի, տնտեսութեան ձևերի էութեան մէջ է թաղուած սօցիալական կօնֆլիկտի հիմնական արմատը, ով ուղում է ոչնչացնել այդ արմատը, նա պիտի առաջ վերացնէ նրա նախապայմանները՝ արտի արդիւնաբերութեան սիստեմը։ Իսկ այդպիսի ահեղ տեսարանի առաջ սոսկալ գիտէ բուրժուական իդէօլոգիան։

Միանգամայն այլ բան է վարդապետում կապիտալիստական տնտեսութեան ծոցում քնանձրաժեշտօրէն ծնունդ առած սոցիալիստական շարժումը։ Նրա դիտողութիւնները գուրս են գալիս այն ճշգրիտ ելակէտից, որ սոցիալական կոնֆլիկտի բազիսը (խարիսնը) կազմում է այն անհաշտ հակառակութիւնը, որ ունին այսօրուայ կոլեկտիւ ընաւորութիւն ստացած արդիւնաբերութիւնը և արդիւնքների մասնաւոր իւրացումը, ընդհանուր ընկերական արդիւնաբերութիւնը մասնաւոր սեփականութեան իրաւութեան ներբոյ։ Ուրեմն իւրաքանչիւր սօցիալական ըէֆօրմ ասպարգիւն է ազգեցութեամբ և տեսական գորութեամբ, եթէ նա ոչ միայն չէ շօշափում արդիւնաբերութեան միջոցների մանաւանդ սեփականութեան արմատները, այլև պալիստիւ, շատ անգամ խաբուսիկ միջոցներով նեցո՞կ է տալիս նրա երկարատև գոյութեան։ Ընդհակառակը, արդիւնաբերութեան միջոցների հասարակական սեփականացումը, որի իրականացման ձգտում է պրօլետարիատը, պիտի համարուի միակ միջոցը, վերացնելու սօցիալ-տնտեսական բոլոր գժնդակ

պայմանները, իսկ դրա հետ միասին նաև հետզհետէ սպառնացող սօցիալական կօնփլիկությունը:

6.

Այստեղ անկարող ենք մանրամասն կանգ առնել տնտեսական գարգացման երրորդ ֆազի վրայ, ուր ծնունդ առաջ բազմաթիւ խոշոր երևոյթներից իւրաքանչիւրը կարող է մի առանձին թեմայի նիւթ մատակարարել: Մենք բաւականացանք միայն նրա տիպիքական բնոյթը որոշելով և յատկանիշ կողմերը յիշատակելով ուշազրութեան առնելով այն հասարակական երևոյթները, որ տնտեսական նոր սիստեմը իր հետ ըերել է: Իրեւ եզրափակութիւն առաջ բերենք ստորև մի քանի համեմատական գծեր յիշատակած երեք Փագերի վերաբերեալ, ուրոնցով աւելի պարզ ու դիւրը մրոնելի կդառնան ընթերցողի համար գարգացման շրջանների բնորոշ կողմերը:

Առաջին ֆազի կամ տնային փակ տնտեսութեան մէջ աշխատակցութիւնը հիմնուած է էապէս աշխատողների (տան անդամների) արիւնակցութեան վրայ: Երկրորդ ֆազի կամ քաղաքային տնտեսութեան մէջ հիմնուած է դա շրջանային կապերի կամ հարեանութեան վրայ: Վերջապէս երրորդ ֆազի կամ ժողովրդական տնտեսութեան մէջ աշխատակցութիւնը հիմնուած է բոլանդակ ազգի մէջ ամփոփուած բազմաթիւ խաւերի վրայ, որոնք միմիանց հետ օրգանապէս շաղկապուած են իրանց տնտեսութեան շահերով և գործնէութեամբ:

2. Առաջին ֆազի մէջ իւրաքանչիւր իր կամ տնտեսական բարիք գործածում և սպառուած է այն տնտեսական սահմանում, ուր նա արտադրուած է: Երկրորդ ֆազի մէջ իրերը անցնուած են ամիջապէս, ացձնական յարաբերութեամբ՝ արդիւնաբերողի ձեռքից սպառողի ձեռքք: Իսկ երրորդ ֆազի մէջ, ընդհակառակը, արտադրած արգիւնքները ենթարկուած են բարդ շրջանառութեան պրօց սի, անցնուած են մի շարք տնտեսութիւնների բովի միջով: Արգիւնաբերողը չի ճանաչուած սպառողին և ոչ մի յարաբերութիւն չունի նրա հետ: Այդ շրջանումն է, որ այնքան արտագ աճում և բարդ կազմակերպութիւն է ստանուած առևտուրն ու առևտրական դասակարգը:

3. Տնային փակ տնտեսութեան մէջ աշխատակցը ծանրանում է ընտանիքի անդամների վրայ: Իսկ ուր օտարի աշխատանքի կարիք է լինուած, այնտեղ հանդէս է գալիս աշխատաւոր բազուկը յանձինս ստրուկի, ճորտի: Քաղաքային տընտեսութեան մէջ օտար աշխատաւորը ծառայի կամ գործաւորվ

յարաբերութիւն ունի արդիւնաբերողի հետ (արհեստի մէջ), իսկ ժողովրդական տնտեսութեան մէջ նա ունի պայմանագրական յարաբերութիւն (Vertragsverhältnis). այդտեղ բանւորը իրաւապէս ազատ մարդ է:

4. Առաջին ֆազի մէջ ինքը սպառողը միևնոյն ժամանակ բանւոր է, կամ հակառակ գէպըում բանւորը կազմում է արդիւնաբերող տան սեփականութիւնը (սորկութիւնը հին դարերում): Երկրորդ ֆազի մէջ սպառողը գնում է անմիջապէս բանւորի ծառայութիւնը (օրինակ վարձու գործ) կամ աշխատանքի արդիւնքը (ձեռնարհեստի մէջ): Իսկ երրորդ ֆազի մէջ սպառողը այլևս ոչ մի յարաբերութիւն չունի բանւորի հետ. նա գնում է ապրանքը կամ արդիւնաբերողից և կամ առևտրականից, իսկ դրանք վարձատրում են բանւորին:

5. Առաջին ֆազի մէջ աշխատանքի բաժանումը գեռ ընտանեկան բնաւորութիւն ունի, սաղմային վիճակի մէջ է գըտնուում, բացակայում է արհեստական կոչումը, անհատական ոյժերը միաժամանակ նույիրուած են մի քանի զբաղմունքների: Երկրորդ ֆազի մէջ հետզհետէ քաղաքներում մասնագիտանուում են արհեստային կոչումները: Սրբիւնաբերութեան ամբողջ պրօցեսը բաժանուում է երկու մասի, առաջ բերելով սոցիալական տարբեր խաւեր—հում նիւթեր, հայթհայթող հողագործ գիւղացի և արդիւնքներ պատրաստող արհեստաւոր քաղաքացի: Իսկ երրորդ ֆազի մէջ մինչև ամենանուրը ձևերը խիստ մասնագիտանում, ձիւղաւորուում են ինդուստրիական արհեստային կոչումները: Սրբիւնաբերութեան ամբողջ պրօցեսին ամիջապէս թէ միջնորդապէս մասնակցում են մի քանի սոցիալական խաւեր—բանւոր, կապիտալիստ և առևտրական գասակարգեր՝ կապիտալիստական ձեռնարկութիւնների մէջ՝ ինդուստրիական —առևտրաշահ քաղաքներում. միջին կարգի քաղաքացիներ արհեստաւոր, (մանր վաճառական)¹ ձեռնարհեստային մասն արդիւնաբերութեան մէջ, վերջապէս մանր գիւղացիութիւն և խոշոր կարուածատէրեր՝ գիւղատնտեսութեան մէջ:

6. Տնային բակ անտեսութեան մէջ վկող կամ բոլորովին գոյութիւն չունէր, կամ թէ չէ ծառայում եր իբրև գործածական իր կամ գանձելու միջոց: Քաղաքային տնտեսութեան մէջ նա արդէն ծառայում է իբրև էապէս փոխանակութեան միջոց: Իսկ ժողովրդական տնտեսութեան մէջ վկողը ծառայում է արդէն որպէս փոխանակութեան, շրջանառութեան և հայթհայթման միջոց. այդպէս փողը ստանում է նոր ու նորագոյն դարերի տնտեսական կեանքում, բաղմաթիւ փունկցիաներ՝ և դանում ամենախոշոր հասարակական ֆակտորը:

7. Առաջին ֆազի մէջ գրեթէ կապիտալ գոյութիւն չունէր, այլ միայն գործածական իրեր: Երկրորդ ֆազի մէջ արդէն աշխատանքի գործիքները պատկանում են արտադրող կապիտալի՝ (Produktionskapital) կարթեգորիային: Իսկական հայթհայթման կապիտալը (Erwerbskapital) զարգացման այդ շրջանում կազմում է միայն առևտրական, ապա վաշխառուի կապիտալը: Իսկ երրորդ ֆազի մէջ հայթհայթման կապիտալը դառնում է մի միջոց արդիւնքները աշխատանքի բուժանման մի էտապից բարձրացնելու միուսի մէջ, անցնելով ամբողջ շրջանառութեան պրօցեսի միջով: Յյստեղ ամեն բան դառնում է կապիտալ: Տնտեսական իւրաքանչիւր խորշ կրում է իր վրայ կապիտալիզմի դրօշմը: Տեխնիքական տերմինը ներկայ տնտեսութեան իրաւամբ անուանում է կապիտալիստական տընտեսութիւն:

Տնային, քաղաքային եւ ժողովրդական տնտեսութեան ֆազեր—սա գարերի պատմական-օրգանական զարդացման մի անընդմիջող շղթայ է ներկայացնում, ուր արտադրող՝ վաստակող ու սպառող ձեռքերի սակաւութիւնը և փունկցիաների պարզութիւնը՝ աստիճանական զարգացումով բազմանում, բարդանում և հազար ու մի ձիւղերի է բաժանուում, դառնում է մի վիթխարի ու կօմալեքս օրգանիզմ: Տնտեսական զարգացման թէօրիան զբաղւում է միայն այն երկների և ազգերի (արևմտեան Եւրոպան) տնտեսութեան սիստեմներով, որոնք մաշել են տնտեսական զարգացման ամբողջ ընթացքը և հասել նորագոյն սիստեմին: Եւ եթէ այդ թէօրիան պատմական անցեալ է համարում տնային ու քաղաքային տնտեսութիւնը, որպէս դարաւոր տիրապետող սիստեմներ, ապա նա չի մոռանում ամենկին, որ այժմ իսկ կան խոշոր երկրամասեր և բազմաթիւ ցեղեր, ուր տնտեսութեան այդ ձեր գեռ նահապետական է, և ուր զարգացման վեռ շատ տարիներ են հարկաւոր, որպէս դի արտի Եւրոպական կապիտալիստական սիստեմը տնտեսութեան տիրապետող ձեր դառնայ:

Բ. Իշխաննեան

ՈՒՐԻՃԻ ՀԱՄԱՐ

(Դրամա 3 արարով)

ԱՆ ԶԵՐԸ

Հայրը՝ Մինասեան. աշխուժ ծեր մը, կարմիր այտերով, ճերմակ
մաղերով։
Մարիամ՝ աղջիկը. միջին տարիքով, դիւրագրգիռ. մաղերը,
հագուստն ու շարժումը թափթփած։
Սիրան՝ քոյրը. միջահասակ, սև մազերով, սև ու պարզ հա-
գուստով, թարմ, բայց բեկուած։
Նուարդ՝ քոյրը. լուրջ ու խելօք աղջիկ մը 17—18 տարեկան։
Յակոբ՝ եղբայրը. աղնուականի հովեր, թէ հագուստի, թէ խօ-
սուածքի և թէ շարժումներուն մչջ։
Սահակ՝ Պօղոսեան. փոքրահասակ, գունատ, մեղմ դիմագծերով.
Նիստ ու կացըցըիւ։
Տիրուհի՝ տարիքոտ նիհար աղջիկ մը. կարծես միշտ հրաման
մը տալ կ'ուզէ. միշտ ալ ահագին շալ մը ուսերուն։
Օհաննէս՝ Ծալեան. թիկնեղ, խոշոր մարդ մը. բաց ու արևառ
դիմագծերով։
Արթին աղա՝ կոր չոր ծերուկ մը. բաշ կու գայ հազարով ու
աղօթելով։

ՏԵՂԸ

Հին սենեակ մը, հին կահեր. Մէջտեղը մեծ կլոր սեղան
մը, լայն լուսամիութով լամպ մը վըան. Սեղանին քովը
մեծ ու խոր կաշի բազկաթոռ մը. Աջ ու ձախ դուռ ու
պատուհան. Գլխաւոր մուտքը ճակտէն է, որ սրահը կը
տանի։

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Ա. ՏԵՍԱՐԱՆ

Դիշեր է: Սիրան նստած է լամպին տակ, մեծ բազկաթոռին մէջ ու կը բանիր
Դիմացը սեղանին միւս կողմը կեցած է Սահակ ու Հղաձգօրէն լրագիր մը
կը ծալծըլէ:

Սահակ. (Մտածումներուն մէջէն) Ճիշտ է. իրաւնուք ունիս:
Սիրան. Միւսները քեզմէ ինչնիվ են աւելի:

Սահ. (Ուղղուելով ու լրագիրը նետելով մէկի) Տես, Սիրան, երբ
այդպէս կը խօսիս, կարծես իմ վրաս ալ տեսակ մը վստահութիւն
կու գայ, կարծես ես ալ կը սկսիմ ուժերուս հաւտալու: Զէ,
Սիրան, ես ալ ուժ մըն եմ, ես ալ աշխատաւոր մը. թնդ ըլլա հա-
մեստ, թող ըլլա փոքր. ի՞նչ փոյթ: Սըրագրիչ մը. ի՞նչ է որ.
ով կու տայ անոր անունը խմբագրատան մէջ. բայց ամէն մէկ
յօդուածի մէջ, ամենքի ալ գրածին մէջ ինծմէ բան մը կայ,
կտոր մը: Ճիշտ է, ինչնւա պէտք ուրիշներուն կարծիքը, բա-
ւական է որ դուն կը գնահատես իմ աշխատանքս ալ, իմ հոգիս
ալ: Քու գնահատումն է իմ վարձս. միայն քնա:

Սիրան. (Չեղքի գործը թողած լուրջ ու ուշաղիր կը նայի տղուն):

Սահակ. ի՞նչ եղաւ քեզի. ինչնւ այդպէս տիսուր կը նա-
յիս ինծմի:

Սիրան. (Սթափելով) Տխուր. ոչ: Այնպէս. կարծես քիչ մը
գլուխս...

Սահակ. Հապա որ կ'ըսեմ: Դէ, թնդ, ալ մի բանիր:

Սիրան. Զէ. պէտք է վերջացընեմ. վաղը գալու են
տանին:

Սահակ. (Նեղսրտած) Է, ամբողջ տունը քու վրադ, բո-
լոր հոգն ու աշխատանքը ուսիդ, զիշերներն ալ այդ ասեղը:
Զէ, ատիկա արդէն բոլորովին աւելորդ է:

Սիրան. Որ չբանիմ ծայրը ծայրին չի գար:

(Ներսը աղմուկ, երկուքն ալ կը դառնան դէպի կից սենեակը տանող դուռը,
որ քիչ մը վերջը կը բացուի ու կը մտնէ Յակոբ գլխարկը զիկին, գաւա-
գանք թմին տակ, թուղթ մը գալարելով երկու ձեռքով.)

Յակոբ. (Չոր ու կոռւան) Աս քու գործդ չէ: Դուն քու
գործիդ խառնուկ': Քալէ՛, Սահակ:

Մարիամ. (Սեմի վրայէն չար) Իհարկէ, թողնեն քեղի, որ
ամբողջ օրը փոռիս մէջրիդ ու պանկիս:

Յակոբ. Ա՛, ինչ շատ աշխատող մըն ես, է:

Մարիամ. Է՛ ես ու դուն մէկ ենք. ես հիւանդ, ինկած
կնիկ:

Յակոբ. Հիւանդ, հիւանդ. գլուխնիս ուռեցաւ լսելէն:
Սիրան, (Յանդիմանական) Յակնք, մեծ քոյրդ է:

Յակոբ. Ո՞վ է անիկա զլխուս դատաւոր դրեր. ամեն
գործիս պիտի խառնուի, ամեն բանի մէջ քիթը կոխէ պիտի:
(Տարցած, Մարիամին) Եւ վերջապէս ինչացն ես դուն հոս: Դուն
ստացեր ես քու բաժինդ, կարգուեր պրճեր. գնա քու մար-
դուդ քովը. ինչն ես եկեր մեր վզին նստեր:

Սիրան (Յալրացած ոտքի ցատկելով) Յակնք, Յակնք...

Մարիամ. (Կատղած) Զայնդ քեղի քաշէ, լակոտ. դուն
դեռ միզ ես որ երեսիս...

* *

(Հայրն ու նուարդ կը մտնեն ճակտի դռնէն:)

Հայրը. Սա ի՞նչ բան է նորէն:

Մարիամ. Դուքս վոնտէ, հայր, դուքս վոնտէ ատ լիրը:
Դուն... դուն իմ երեսիս... իմ երեսիս... իմ... իմ... (Հունը
կը կտրի ու իրեն վատ կը զգայ):

(Սիրան ու նուարդ վրայ կը վագեն օգնելու ու ներս տանիլ կ'ուզին:)

Մարիամ. (Ուժերը հաւաքելով, յինուած քոյրերուն ու թոյլ)
Աստուած քեղի ալ իմ օրս ձգէ. դուն ալ ուրիշներուն կարօտ
ըլլաս:

Սիրան. Հանգստացի՛ր, հանգստացի՛ր:

(Կը տանին կից սենեակը):

* *

Հայրը. Հիմա դուն քու ըրածիդ կը հաւանի՞ս: Հաղիւ էր
աս երկու օրը քիչ մը աղէկցեր. հիմա նորէն լաց, դեղ, ջիղեր,
իրաբանցում:

Յակոբ. Իսրն է սկսողը, ես ի՞նչ ընեմ:

Հայրը. (Կարուկ) Քեզի ըսեր եմ, ես աղմուկ չեմ սիրեր:

Յակոբ. (Սահակին) Ե՞, ես կ'ուզեմ նստիմ զբաղուիմ մեր տղային հարցերով, խնդիրներով, մտրակեմ ու քննազատեմ մեր կեանքի ախտերը. իսկ անոնք ինձի վաճառականի մը գրասենեակը կոխել կ'ուզեն: (Հռետորական) Ո՛չ:

Հայրը. (Անտարբեր) Բայց պատրաստ ստակը կ'ուտես:

Յակոբ. (Ուսերը ցնցիով) Հ՞ը. զարմանալի էք բոլորդ ալ: Ահա, մօրս թողած աս մէկ տունը չէ. ամիսը քանի մը ոսկի կը բերէ. ինչպէս որ զուք անանկ ալ ես: Կարծես թէ իրենք են շիներ:

Հայրը. (Խոժոռ) Աղէկ, աղէկ, ես քեզի հետ գլուխ չունիմ: Միայն նորէն կը կրկնեմ. ես տան մէջ աղմուկ չեմ սիրեր: Հասկլցցա՞ր. հանգիստ կ'ուզեմ ես:

Յակոբ. Դուք իմ հանգիստ մի խոռվէք, ձեր հանգստին ձեռք տուող չկա: (Սահակին) Բալէ, կ'ուշանանք:

Սահակ. (Տիտոր, լուր ու մտածիր կը հետևի անոր:)

Հայրը. (Ետևնում թիզ մը նայելին ետքը, ձեռքը թափ կու տայ) Ե՛... (Պուրս կողմնակի դռնէն):

*
* *

Միւս սենեակէն կը մտնեն Սիրան ու Տիրուհի: Սիրան ուժասպառ ու ձանձրացած գէմքով:)

Տիրուհի. (Անտարբեր ըլլալու ջանքով) Աղէկ, աղէկ. սովորական պատմութիւն: Դեռ չվարժեցմբ:

Սիրան. Ա. (կը նետուի աթոռին) յոգնած եմ, յոգնած եմ:

Տիրուհի. Բան չկայ. ես յոգնած չեմ: (կը նստի սեղանի առաջ) ամբողջ օրը դպրոցն էի. հիմա ալ վերը, այ, այսչափ տեսրակ սանիմ սրբագրելու:

Սիրան. (Խնքն իր հետ, ձայնը քաշ տալով, ձանձրոյթով) Եփէ, սրբէ, մաքրէ, երէկ, այսօր, վաղը, և նստէ հոս քանէ, քանէ, քանէ. ինչո՞ւ. ինչո՞ւ. այս բոլորը: Նոյն սենեակը, նոյն պատերը, նոյն հիւանդը, նոյն կոիւր, նոյն հոգերը, նոյն մտքերը... Ա-, ալ յոգնած եմ, յոգնած... (Ցանկարծ) Ե՞: (Կենէ կը մօտենայ պատուհանին ու թիզ կը նայի դուրս) Տես, Տիրուհի, տես ի՞նչ բաղդէ ըլլա մարդ հնա, հեռան, հեռան, հնա սարերուն վրայ:

Տիրուհի. Իսկ այդ սարերէն նոր լուր չունի՞ս:

Սիրան. Ի՞նչ:

Տիրուհի. (Ճպտելով) Օհաննէսէդ:

Սիրան. (Վշտու) է՛, թնդ կատակը. հիմա սիրո չունիմ:
Տիրունի. Ինչու կատակ: Հիմա ինծի ըսել կ'ուզես, որ
քու զգացումներդ այնպէս, միայն...

Սիրան. (Նեղսիրտ, անյարմար) է՛, թնդ: (Տաքացած) Զգա-
ցումներ, զգացումներ. Բնչ զգացում. ոչ մի դղացում: (Կոտրըւած)
Եւ վերջապէս գունէ գուն գիտես, որ ես կապուած աղջիկ եմ:

Տիրունի. Հա, այդ մէկին արդէն խելքս երբէք չէ հասեր:
Շիտակ ըսէ, Սիրան, գուն լրջօրէն կը մտածես պսակուիս Սա-
հակի հետ:

Սիրան. (Տիսակ մը յուսահատ) Զգիտեմ, չգիտեմ, ոչինչ
չգիտեմ. թնդ:

Տիրունի. Բայց ես գիտեմ: Ինչո՞ւ ես խօսք տուեր. սի-
րուն բան չէ:

Սիրան. Ինչու: Հապա ի՞նչ ընէի, երբ ամբողջ տարի
մը շուրջ պէս ետևէս կը պտըտէր. երբ գիտէի որ իր միակ ու-
րախութիւնը ես եմ աշխարհիս երեսին. անտէր, մեն-մենակ.
ունի-չունի, մայր մը ունի, կէս խենթ, կէս խելօք: Ինչպէս
մերժէի, երբ զողալով, վախվըխելով դէմս ուղղակի հարց գը-
րաւ: Եւ վերջապէս այն ատենը իմ զգացումներս ալ կարծես
քիչ մը աւելի ուրիշ տեսակ էին: Զգիտեմ, ի՞նչ եղաւ ինձի
հետ:

Տիրունի. (Հեղնոտ) Իրաւ, չգիտե՞ս: (Ոտքի ելնելով, խորհըր-
դաւոր) Սիրան, հետեւ սրտիդ. գնա ուր բեղի կը կանչէ. ականջ
դիր բնութեանդ այդ ներքին ձայնին: Ես գիտեմ ինչ կը խօ-
սիմ. մի խաղար բաղդիդ հետ:

Սիրան. Բաղդ. ես արդէն բաղդ չունիմ որ:

Տիրունի. Բաղդըդ եկեր է քու գուռդ. ես ի՞նչ ընեմ, որ
գուն տեսնել չես ուզեր: Սիրան, լաէ ինձի. ներս առ, ներս առ:

Սիրան. Է՛, մարդ որ բաղդ ունենայ, անիկա առանց
իմ ուզելուս ալ, առանց իմ ներս առնելուս տվ, ալ, այսպէս
իմ նստած տեղս (զուռը մատնանիշ) կը բանայ ու ներս կու գայ...

(Կը բացուի գուռը, կը մտնէ Օհաննէս, ետեւն նուարդ: Երկու աղջիկները
ապշած ու վախցած վեր կը ցատկէն ու քարացած կը նային իրար:)

Բ. Տ Ե Ս Ա Ր Ա Ն

Օհաննէս.—(Երկար կօշիկներ, կարճ ու փակ ժարէթ, ցած կլոր
գլխարկ. ճամբորդի արտաքին) Չէ՞ք սպասեր: (Առաջ գալով շերմ) Բա-
րե ձեղի, օրինրդ Սիրան:

Տիրունի. Հա, Սիրան, հիմա ի՞նչ կ'ըսես:

Օ՞նան. Ի՞նչ է պատահեր որ:

Սիրան. (Սթափելով) Ոչինչ, ոչինչ: (Խօսքը փոխելով) Այդ երբ եկեր գիւղէն:

Օ՞նան. Այս, ճիշտ կայարանէն է, որ կու գամ: Թէկ խիստ ստիպողական ալ գործ ունիմ. բայց և այնպէս չկրցայ ձեր տան առջևնէն անցնիմ առանց հանդիպելու:

Նուարդ. Եւ շատ ալ աղէկ ըրիք:

Տիրունի. Է, ի՞նչպէս էք, տեսնենք. ի՞նչ նորութիւն:

Օ՞նան. Ի՞նչ նորութիւն կ'ուզէք ինձմէ, օրինրդ: Ես գիւղի ու սարի մարդ. հողը պահպանողական տարր է. հողի հետ գործ ունեցողը նորութիւն չունի:

Սիրան. (Կարօտով) Այս, երնէկ ձեզի. ով գիտէ ի՞նչ հրաշալի է հիմա հոն ձեր բնութիւնը:

Օ՞նան. Այս, այդ մէկը ճիշտ է: Ինչ որ կայ բոլորը ձեւ զի՞քաղքցիներուդ. միայն բնութիւնը մերն է, բնութիւնը մեզմէ չէք կրնար խլեր. մեծ, բաց, վսեմ բնութիւնը: Ամեն անգամ քաղաքէն վերադարձիս, երբ երկաթուղիէն կ'իջնեմ ու ձիս դէպի արարակը կը սկսի բարձրանալու. մեր սարահարթի կրծքէն, ա, չգիտէք, ի՞նչ լեցուն ու բուռն զգացում մըն է, որ կ'ոււեցնէ սիրսոս. թարմ, կենսալից ու հպարտութիւն տուող բան մը կայ սարերուն մէջ: Ձեր քաղաքներուն մէջ կարծես մարդ տեսակ մը կը պատիկնայ կը սեղմուի ու կը կապուի. կեանքն ալ կարծես տեսակ մը կապանքի մէջ է հոս, չունի իր ազատ ընթացքը. այ, իմ սարերուս վրայ, հոն ուրիշ բան է, հոն ես ազատ եմ. հոն մարդ եմ հո:

Տիրունի. (Երկմիտ) Բայց և այնպէս կան քաղքի մէջն ալ բաներ որ կը քաշեն ձեզի:

Օ՞նան. (Ժամուն) Այս, ի՞նչպէս որ կը տեսնէք: (Կուարդին) Բաժակ մը սառը ջուր կը գտնուի:

Նուարդ. Իհարկէ, իոկոյն. (Վագելով դուրս:)

* *

Սիրան. Իսկ ի՞նչպէս եղաւ այն նոր հողերուն պատմութիւնը:

Օ՞նան. Հիմա մասամբ ալ ատոր համար եմ եկած: Հիանալի գործ է, գիտէք, սքանչելի ծրագիր: Բայց պէտք է իսկոյն չորս-հինգ հազար ոսկի. գնա ու գտիր:

Սիրան. Բայց չէ որ մէկուն համար կ'ըսէինք. ան, որ յանձն էր առեր տայ, եթէ դործը գործ գլուխ բերէք:

Օհան. (Ժպտուն) Այս. բայց բանէն եղեւաց, որ ծերուկիս
հաշիւը քիչ մը բարդ տեսակի էր:

Սիրան. Բարդ. Բնչակէս. թէ: Ե՞տ կեցաւ ուրեմն:

Օհան. Զէ: Տալը, կ'ըսէ, բոլոր սրտովս, կ'ըսէ. կ'ուզեմ
ձեզի օգնեմ. բայց գիտէք, կ'ըսէ, պահեր էի ազջկանս օժիտին
համար: (Խնդալով) Կ'ըմբռնէք չք:

Սիրան. (Ժպտուն) Է՛, թնչ կայ. աւելի աղէկ: (Ծաղրով)
Միթէ աղջիկը այդպէս անպէտքն է:

Օհան. Ո՛չ: Խելօք, կրթուած:

Տիրունի. Գուցէ տգեղ:

Օհան. (Ժպտուն) Ըսդհակառակը:

Սիրան. (Տեսակ մը չարացած) Ուրեմն... ուրեմն...

Օհան. (Ծիծաղելով) Ուրեմն ինծի խորհնուրդ կու տաք:

Սիրան. Ես... ես թնչ խորհնուրդ տամ, թէ ոչ:

Օհան. Զէ, ըսէք. ուրեմն ինծի խորհնուրդ կու տաք:
(Ճիշտ անոր աքերուն նայելով) Համ. չէք պատասխաներ:

Սիրան—(Յանկարծ հատու ու ջղուտ) Այս, իհարկէ: Ա՛յ, խելօք, կրթուած, գեղեցիկ, ինչպէս որ կ'ըսէք. վրան ալ օժիտ, Կ'երթաք կը գնէք ձեր նոր հողերը, կ'իրագործէք ձեր ծրագիրները, որ այնքան թանկ է ձեր սրտին: (Քոլորովին ջղուտ) Իհարկէ, իհարկէ. կը զարմանամ, որ գեռ կը վարանիք:

Օհան. Իրամ. կը զարմանամք:

* *

Նուարդ. (Հրամցնելով ջուրը) Տեսէք, սառոյցի պէս:

Օհան. Ա՛յ, շնորհական եմ: (Բաժակը ետ տալով կ'ելնէ ոտքի. ու Սիրանին) Վաղը կէս օրին մօտ տիւնն էք:

Սիրան. Ես տունն եմ միշտ, ինչպէս որ գիտէք (ցաւած):

Նուարդ. Վայ, արդէն երթմալ կ'ուզէք:

Օհան. Այն, չարաճիճի բարեկամուհիս, թէն կը ցաւիմ: (Սիրանին) Գիտէք, ես զիւղը յաճախ կը յիշէի մեր այն ձմեռ գիշերներու երկար խօսակցութիւնները. այ, հոտ, վառարանին երկու կողմը, լամպի շոյող լոյսին տակ, այնպէս անկեղծ, ջերմու սրտանց. կը յիշէք: (Խնդալով) Կարօտիր եմ. վաղը կու գամ, ու կը նստինք, կը խօսինք նորէն անդամ մը. համաձանյն էք:

Սիրան. (Ձերմ) Խնդրեմ, խնդրեմ:

Օհան. (Չերմ մեկնելով) Ուրեմն առայժմ ցտեսութիւն:

(Կը բարեւէ ու բոլորն ալ կ'ուզզուին դէպի դուռը. Նուարդ ու Օհաննէս դուռս. Սիրան դռան մէջ, անորոշ խօսակցութիւն. սիայն Տիրումի կանգնած է իր տեղը անշարժ:)

* *

Սիրան. (Ծանր-ծանր ետ կու զայ, կը կանդին քիչմը սեղանին գըլովս մտախոն, վերջը կ'անցնի կը նստի իր սովորական բազկաթոռին մէջ, կը խառնէ կարը տեսակ մը ցրուած, կը վերցնէ բանուածքը, կը հարթարէ ու կը սկսի բանելու. բայց քիչ-քիչ կը ծգէ ծունդին, ձեռքերը անշարժ, ազքերը անթարթ կէտի մը յառած կը մնայ լուռ ու լարուած:)

Տիրունի. (Լուռ կը դիտէ. կամաց կը մօտենայ ետեւէն անոր բազկաթոռին ու երկու թեւով կը հենուի նոյն բազկաթոռի թիկունքին. ցած ու յատակ ձայնով:)

Աւրեմն վաղը:

Տիրունի. Չգէ ինծի հանգիստ:

Տիրունի. Հանգիստ:

Տիրան. (Խոր ու երազկոտ): Ա՛խ, եթէ գիտնայիր, ինչ-պէս պաշտել կ'ուզէի, ինչպէս սիրել կ'ուզէի ես անիկա:

Տիրունի. Հմատ:

Տիրան. Ես կ'ուզէի ամբողջ էութիւնս անոր տամ, ամբողջ հոգիս:

Տիրունի. Որ կ'ըսէի:

Տիրան. (Յանկարծ հատու եւ ուղղուելով) Ո՛չ, ոչ. թնդ: Մը-տածելն անգամ գէշ է, ալ ատոր մասին խօսելն անգամ գէշ է. թնդ: (Քիչ լուռ ու երազկոտ) Բայց... որչափ, որչափ աղէկի կ'ըլլար. կ'օգնէի ես անոր, կ'աշխատէինք միտախն, կ'ոգևորուէինք միտախն, իր սարերուն վրայ, իր բնութեան մէջ, իր աշխատանքին հետ, հռն, վերը, բացը, լայն, մինակ... Վայ, ի՞նչ դիւրին է երջանիկ դառնալը:

Տիրունի. (Տիտուր ու հեգնոտ) Այն. դիւրին:

Տիրան. (Խայթուած) Է՛, ձգէ, գուն ալ. ի՞նչ ես հոգիս մտեր: Պէտք է կտրել, պէտք է խեղզել, պէտք է մոռնալ, մոռնալ:

Տիրունի. Իսկ ի՞նչ դիւրին է երջանիկ դառնալը:

Տիրան. (Յանկարծ աթոռէն վեր ցատկելով սորի) Իսկ այս տիւնը, իսկ հիւանդ քնյը, իսկ հանդը, սրմէ թողնեմ, մեղք չէ նուարգը. հապա Սահմալը, ամենադժբաղդ մարզը կը դառնայ աշխարհիս երեսին:

Տիրունի. (Խնդն ալ ուղղուելով աթոռի մէջքին) Իսկ դժւն, իսկ դժւն:

Տիրան. (Բռունցքները սեղմած քայլ մը դէպի ան) Ի՞նչ կ'ու-

զես, ի՞նչ կ'ուզես դուն ինծմէ. հաճոյք կ'ըզգաս ինծի չարչըր~
կելէն: Հերթը չէ որքան ես ինքս իմ մէջս կը կոռուիմ, ես ին~
քըս ինծի հետ:

Տիրունի. (Զայրոյթի շարժումով մը) Զգիտեմ. գիտեմ միայն
որ քու ըրածդ ապուշութիւն է ու յանցանք:

Սիրան. Ի՞նչ:

Տիրունի. Դուն չորցնել, դուն զոհել կ'ուզես ինչ որ քու
մէջդ կինն է. ինչ որ դուն ես, քու խորհուրդդ, քու էութիւնդ:
Զգրւշ, գերջը ամբողջ կեանքիդ մէջ յանցանքդ քաւել չես կըր~
նար: Թուած բաղդը ալ ետ չի դառնար: Զգրւշ, կ'ըսեմ քեզի:
Նայէ, անկեանք տարիներու ամբողջ շարք մը քաշ կու տաս
քու ետեկդ, չլուսցող գիշերներ կը մաշես անկողնիդ մէջ. շուռ
ու մուռ գալով ու քեզի հարց տալով. «չ որ ես ալ կարող էի
ապլրիլ»: (Քիչ լուռ) Կարող էի: (Մրսկոտ կծկումով մը) Ա՛, այդ
«էին», որ մարդուս երակները կը սառցնէ. էի. (Գլխահակ ու
մոածկոտ) Կարող էի...

Սիրան. (Մօտ գալով կարելցոտ) Տիրունի, Տիրունի...

Տիրունի. (Սթափելով՝ յանկարծ) Հա. իսկ դուն, իսկ դուն
դեռ կարող ես: Գիտեմ, աս ի՞նչ բաղդ է: Հաւտա ինծի, ոչ
հայր, ոչ քոյր, ոչ աշխատանք, ոչ անձնուիրութիւն, ոչ այդ
քու բարութիւնդ, ոչ ապուշութիւնդ, ոչինչ, ոչինչ չի օգներ, ո~
չինչ չի կրնար լեցըներ կիոջ էութեան մէջ այն սոսկալի պա~
րապը, այն... ան (ձեռքով կը ծածիէ դէմքը, ու յանկարծ բանալով)
Սիրան, կեանքդ կը դառնա քօս, կիսամտ, ծնւու: Մի՛ ըներ, մեղք
ես, հոգիս, մի՛ ըներ: Մտիկ ըրէ խօսքիս. վաղը երբ Օհաննէսը
գայ՝ քու խօսքդ ուզելու. ելիք, վառէ տանդ բոլոր ճրագները,
հազիր ամենէն նուրբ ու ամենէն ազնիւ հագուստներդ, գնա~
իր դէմը ու ըսէ «ահա ես»: Վերջը... վերջը (ոգեւորութիւնը թու~
լանալով) ճրագները կը մարէք միասին: Երբ կեանքի շահը կը
վառի ճրագներու պէտք չի կայ: (Քիչ լուռ, կարծես կը մրսի) Դէ,
ես գնամ վեր... տետրակներս սրբագրելու:

(Բոլորովին շամին մէջ կծկուած կ'ենէ դուրս:)

* *

Սիրան. (Նախ կեցած է անշարժ, վերջը դանդաղ կը քաշէ օր~
րան-աթոռը բաց լուսամուտին դէմ. կը նստի ծայրին, ձեռքերը ծուլած,
հայեցըը դուրս ու թաղուած խոր իր մտածմունքին մէջ:)

Հայրը. (Կը մտնէ, վրան գիշերուան երկար վերարկու, գլխին
ճերմակ գտակ, հայելու առաջ ինչ որ կը վնտոէ, աչքի տակովը նայելով

աղջկան) Նորէն նստեր ես մեն-մենակ. ատ ի՞նչ յիմար սովորութիւն ես ըրեր. ի՞նչ կը նայիս հոն:

Սիրան. Ոչինչ, հայրիկ. սարերը:

Հայրը. Սարերը. կէս գիշերին սարերը: Մէջ մը ասորքիթին-բերնին նայեցէք. ի՞նչ կայ, ինչ ունիս:

Սիրան. Չգիտեմ, հայրիկ: (Խնդրելով) Սիրտսնեղ է, նեղ:

Հայրը. Դէ, իհարկէ, ամբողջ օրը որ տան մէջը փակուիս: Քեզի որ կ'ըսեմ, գնա քիչ մը դժւրս, պըտըտէ, բացուէ...

Սիրան. Այո, այո, դժւրսը, բացը, բացը: (Կը փռոփ առողջին ու կը սկսի օրուելու, կարծես երազի մէջ, ինքն իրեն նետ խօսելով, ծանր, ընդհատ ու ցրիւ) Դժւրսը, հեռուն, հեռուն, մարդ իջնէ վագոնէն ու սարահարթի կուրծքն իվեր... մեծ, վսեմ բնութեան գիրկը, թարմ ու կենսալից. ու ելնես, ելնես, մինչե... և ըլլա գիշեր, թող ըլլա գիշեր, ոչ լոյս, ոչ ճրագ: Զէ, հայրիկ, ճրագներու պէտք չի կայ երբ կեանքի ջահը կը վառի:

Հայրը. (Երկիրդով եւ հոգածու կը մօտենայ) Աղջիկ, դուն ջերմ ունիս: Տեսնեմ ձեռքդ:

Սիրան. Ոչինչ, ոչինչ: (Վուզէ յուզումն ու լացը զսպէ, չի կրնար. գեմքը կը ծածկէ ու կը հեծկոտայ:

Հայրը. Ի՞նչ է եղեր քեզի, աղջիկս. ի՞նչ ունիս: Ա'ս էր պակաս: Հանգստացիր, հանգստացիր: (Կը շոյէ գլուխը:)

ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Ա. ՏԵՍԱԲԱՆ

Յակոբ փռուած է օրրան աթոռին ու կ'օրուի: Սահակ կեցած է պատուհանին տակ: Սեղանի վրան մեծ ափսէի մը մէջ գիզուած են լուցուած պնտկներ ու բաժակներ. Սիրան կը սրբէ, կը չորցնէ ու կը զնէ հետզհետէ պահարանը: Հայրը կեցած է աղջկայ մօտ, ինքը բաճկոնով է, շապիկին թևերը վեր ժողուած ու ամեն մէկ ձեռքը քանի մը հատ գինիի պարապ շիշեր բռնած:

Հայրը. Դուն ինծի լոէ: Այսօր բոլոր պատրաստութիւններդ կը տեսնես, վաղը առտու կանուխ կ'ելնենք կ'երթանք. գիւղի անուշ օդ է, կը թարմանաս քիչ մը, բոյրս ալ կ'ուրախանայ, փեսաս ալ. այսպէս 10—15 օր մը կը մնանք ու կը գառնանք: Ինծի համար ալ օգտակար է:

Սիրան. (Անփոյթ) Է՛, հայրիկ, բան չունի՞ս:

Հայրը. (Տարցած) Ի՞նչպէս թէ. վաղը միւս օրը որ դուն

ալ ելնես ու հիւընդնամս. սա ինչի՞ ես նման. յայտնի է որ ամբողջ գիշերը քուն չես առեր. Ես Արամին հարցուցի. կ'ըսէ ջղային է, զրկեցէք գիւղը հանգստանայ ու օդ փոխէ:

Սիրան. (Անտարբեր ուսերը կը թօթուէ:)

Հայրը. Դուն ալ որ հիւընդնամ՝ ալ ինչի՞ կը նմանինը. չէ՞ որ ամեն բան քեզի կը նայի. կը գասնանք ծովը թափելու բան:

Յակոբ. Իսկ հնաս, տունը-տեղը ամբողջ երկու շաբաթ: (Ծաղրով) Ասոր մասին ալ մտածեր ես:

Հայրը. Հնաս. հապա դժուն ինչ ես. ահագին մարդ. սորվէ վերջապէս. վարձուորներուն հետ ինքդ կը կարգագրես, եթէ պէտք եղաւ. աան պէտքերը կը հոգաս. Նուաշդն ալ կ'օգնէ քեզի. Մարիամն ալ կերակուրին կը նայի: (Սիրանին) Դուն այսօր քու հագուստ-մակուսոդ պատրաստէ. մնացածը ես զիտեմ: (Իր շիշերուն հետ կ'ենէ զուրս:)

* *

Յակոբ. (Ոտքի ելնելով, ծեռքերը զրպանի կը մօտենայ քրոջը ու դէմը կը կանգնի) Այսպէս ուրեմն. վաղը կ'երթար գիւլդ. հիանալի՛, հիանալի՛... (Փիւ մը լուն) բայց ինծի նայէ, Սիրան, ատ քու ըրածդ աղուոր բան չէ:

Սիրան. (Աշխասանիը լնդիատելով) Ի՞՞նչ:

Յակոբ. Աղէկ. մենք իբար կը հասկընանք, չէ՞: Պիտի գնաս, գնա, միայն, խնդրեմ, ինծի տխմարի տեղ մի գնել:

Սիրան. Ի՞՞նչ կը խօսիս, Յակոբ:

Յակոբ. Ես արդէն բաւական ժամանակ է՝ նկատեր եմ որ քու մտքինդ ատիկա է: Միւսներու տուած գլխու ցաւն ալ քեզմէ է, անոնք դրդողն ալ դուն ես: Իգուր. իգուր. այգպէս զարմանք մի կեղծեր: Ես քեզի ալ, անոնք ալ, այ, այսպէս կարծես ամիս մէջը: Ես ձեր բոլորի մաքերն ալ պարզ կը կարգամ: (Հատիկ-հատիկ) Դուն քու մէջը որոշեր ես գործերդ կարգագրես, ծերուկն ու հիւանդը նետես իմ ու նուարդի վիզը և ինքդ...

Սիրան. Ամօթ է, ամօթ, տղա:

Յակոբ. Եւ ինքդ հանդիսա գնաս քու քէֆիդ. կընամս ուրանար:

Սիրան. (Վրդովուած քողոքիրով) Որ ես... որ ես... (Պահ մը կ'ընդհատէ, շիշտ կը նայի անոր ու յանկարծ փոխուած քոլորովին ու սրբից անդին նետելով) Աղէկ, հիմա ըսմծդ ինչ է: Այս, ես վըճ-

ոեր եմ թողնեմ ու գնամ քիչ մըն ալ իմ քէֆս նայելու, իմ հանգիստս, իմ աղատութիւնս վայլելու: Ի՞նչ, իրաւունք չունիմ. առ ի՞նչպէս է, որ միայն ես իրաւունք չունիմ. միայն ես. ի՞նչու:

Յակոբ. (Արձաւարհանքով) Ա՞հ, իրաւունք, իրաւունք. փախչիս պիտի փախիր. ալ առ խոշոր-խոշոր բառերը ինչացու ես: Գնա, գնա քու քէֆիդ, քու զուարճութեանդ: Միայն ես քեզի կ'ըսեմ, որ այդ քու ըրածդ կոպիտ եսականութիւն է: Դուն կը կաշկանդես ինծի, առջևս քար կը նետես, դուն խանգարել կ'ուզես ինծի ու իմ ծրագիրներս: (Յուսանատ, դրամիկ, Ա՛խ, վար կը քաշէք դուք ինծի, կը խլէք աղատութիւնս. վար, վար, դէպի ձեր տուն ու խանութի մանրիկ-մոււնրիկ գործերը, դէպի կեանքի այդ չնչին սև աշխատանքը: Է՛: (Չեզը թափ կու տայ ու դուբս):

* *

Սիրան. (Կանգնած է քարացած):

Սահակ. (Կը մօտենայ անոր ու փրդովուած) Սիրտդ մի՛ կոտրեր, Սիրան. ուշ մի՛ զներ. դա յիմար է բոլորովին. յիմար ու...

Սիրան. Ո՛չ, Ցիմարը ես եմ, ես: Ան ի՞նչ յանցանք ունի անիկա հիմա ալ կը պահանջէ միայն ան, ինչ մինչև հիմա տեսուեր է ու սորվեր: (Աշտոն) Վար կը քաշեմ. մանը, սև աշխատանքի, ես անոր համար վարի մարդ եմ, վարը, վարը:

Սահակ. Է՛, թհղ, բան չունիս:

Սիրան. Բայց ծանր է, ծանր: (Մտածելով) Է՛յ, այս քանի՛ տարի է մայրիկիս մհունելը: Ես եմ ատիկա գրկիս մէջ մեծցուցեր, զրկեր եմ ինծի ամեն բանէ. և ի՞նչ յոյսե՞ր, ի՞նչ երազներ, մէկ հատիկ եղբայրս էր: Է՛, որ Աստուած չի տայ՝ չի տարէ երեխի իմ ճակախս ալ ասիկա է զրուած, որ զրկուած մնամ ամեն միսիթարանքէ, ամեն բաղդէ:

Սահակ. Ո՛չ, Սիրան, մեղք է. մի՛ խօսիր այդպէս: Տես, ես ալ բաղդի մէկ շատ սիրեկանը չեմ ու շատ շատ եմ մտածեր այդ բոլորի վրայ: Ո՛չ. կեանքը այդպէս ամերողչովին չի զրկեր ոչ-ոքին: չէ, ամեն մարդուն բաղդի կտոր մը կայ. կայ, Սիրան: (Յափշտակութեամբ աղջկայ վէմքէն կախուած ու երկիխուած ովիւորութեամբ) Առանց այդ բաղդի կտորին խիստ ծանր, խիստ անիրաւ կը դառնար կեանքը: Ամեն մարդում բաղդի կտոր մը կայ:

Սիրան. (Երկզոտ) Բաղդի կտոր... այն... այն: (Յանկարծ) Եւ եթէ յիմար չես պինդ կը բոնես. ամուր կը փաթթուիս

բաղզի այդ կտորին, ու բաց չես թողներ ոչ մէկ պատճառով:
Կը մտածես միայն քեզի, քու կեանքդ ու քու սիրտդ:

Սահակ. (Միշտ ողեւորուած) Այն, Սիրան. քու կեանքդ,
քու սիրտդ:

Սիրան. Այ, այն ժամանակ չես ըլլար վարի մարդ. ու
ոչոք ալ չես մտածեր, ոչ ուրիշը, ոչ դիմացինդ:

Սահակ. Այն, ոչոք, ոչ ուրիշը, ոչ դիմացինդ:

Սիրան. (Կ'ուղղուի ծիկ, ու ապշած կը նայի պահ մը յամառ) Դժուն ես ատիկա ինծի ըսողը, դժուն: Սա երազ է, յիմար ե-
րազ: (Ձղային ջր ծիծաղով մը կը յենուի սեղանին ու ճակատը բռնելով) Ա՛, գլուխս, գլուխս:

Սահակ. Այն, ես եմ. իրաւ է, միջև հիմա ես քեզի պաշ-
տեր եմ քու այդ անձնազո՞ն, անձնուէր բնաւորութեանդ հա-
մար. բայց վերջապէս ամեն բան սահման մը ունի: Այ, այդ
ուրիշները, այդ քու դիմացիններդ ինչպէս կը փոխարինեն քեզի:
Ես չեմ կրնար այլես տեսներ, թէ գուն ինչպէս կը տանջուիս
այս տան մէջ, ալ հերիք է: Տնար, Սիրան, ձեռքդ ինծի ու ելիր
երթանք. կապրինք կերպ մը. գիտես, ապլուստս միծ բան մը
չէ. ի՞նչ փոյթ, կապրինք ինչպէս կրցանք: Դուն աշխատանքի
աղջիկ ես, ես ալ կ'աշխատիմ աւելի, գուն կ'ոգևորես ինծի:

Սիրան. (Բոլորովին դժգոյն ու կարծես ուժասպառ կամաց մը
կը սահի ցած ու կը նայի աթոռին):

Սահակ. (Վախցած ու շուրար առաջ գալով) Սիրան, Սիրան,
ի՞նչ եղաւ քեզի. թող, մեղա, Սիրան. թողնենք. ալ չեմ խօսիր,
ալ ոչ մէկ բառ. երբէք, երբէք. ի՞նչ ունիս. ի՞նչ կ'ուզես: Զուր
տամ, Սիրան, ջուր կ'ուզես: (Կէս մը առջեւը չոքելով՝ աղօթելու պէս) Սիրան...

Սիրան. (Յովնած) Ելիր, ելիր. շատ անխելք բան է
կեանք ըսուածը. անիկա կը խաղայ միայն մեզի հետ. կը խա-
ղայ ու կը ինդայ վրանիս:

Սահակ. Ներէ ինծի, Սիրան, եթէ քեզի վշտացուցի:

Սիրան. Խեղճ տղայ. ի՞նչ ներեմ քեզի, ի՞նչ ներում կը
խնդրես: Տուր ձեռքդ ինծի: Շատ բարի տղայ ես լուն, շատ
մաքուր տղայ, շատ... (Յանկարծ տղու ձեռքը բաց կը թողնէ ու վախ-
ցած կը ցատկէ ոտքի) Դժւուն էր. գոււը զարկի՞ն:

Սահակ. (Ոտքի ենելով ինքն ալ) Կարծեմ. ինչո՞ւ վախցար.
երեկ որեւէ հիւր մը: Ժամանակ է, ես ալ երթամ:

Սիրան. (Յանկարծ) Ո՛չ, ոչ, մնացիր. հնս, քովս, մի գը-
նար:

Սահակ. Բայց... բայց գիտես որ ուշացեր եմ արդէն. և
հանուիպելու եմ տպարան. անհրաժեշտ է:

Սիրան. Ո՞չ, ո՞չ, միենոյն է. մի գնար:
Սահակ. (Վարան) Աղջկ, քիչ մըն ալ մնամ. իսկ դուն
գնա լուացուէ. դէմքդ փոխուի գոնէ:
(Սիրան դուրս. Սահակ սպասողական:)

Բ. ՏԵՍԱՐԱՆ

Կը մտնեն հայրն ու Օհաննէս: Սահակ իսկոյն կը փոխուի, ոառն դէմք կը
ստանայ ու կը քաշուի քայլ մը եմ:

Հայրը. (Գետ սեմէն) Այս, այս, հրամեցէք: Վայ, Սիրանը
հոս չք: Կը ներէք, իհարկէ, հագուստս այսպէս քիչ մը շատ
տպել...

Օհան. Տգեղ, մյդ, տշխատանքին հագուստը. ընդհակառաւ-
կը. այնպէս կը վայլէ ձեր ճերմակ մօրուքին:

Հայրը. Նոր տակառ մը գինի եմ նուելքստացեր ու շիշե-
րը քաշելու վրայ եմ. բայց պատուական գինի, գիտէք, ի՞ր այ-
գիէն. բաժակ մը բերեմ, տեսէք:

Օհան. Շնորհակալ եմ. ճաշէն առաջ սովորութին չունիմ,
և ընդհանրապէս խմիչքի հետ շատ բարեկամ չեմ:

Հայրը. (Արհամարհանքով) Համ: Դուք գիտէք. ինքս չի հաս-
նիր: (Դէպի դուռը) Սիրան, Սիրան: Այս վայրկեանիս, պարոն
Օհաննէս, մէկ տեսնես ժւր են կորեր բոլորն ալ: (Դուրս)

* *

Օհան. (Գիշ ետ կը դառնայ դէպի առաջ զալով ու նոր կը տեսնէ
Սահակին) Վայ, պարոն, գուք այստեղ էիք. չնկատեցի: Ներեցէք,
խնդրեմ:

Սահ. (Սառն) Ոչինչ, ոչինչ:

Օհան. (Չերժ) Բարե՛ ձեզի: Ի՞նչպէս էք:

Սահ. Շնորհակալ եմ:

Օհան. (Իր փրան ու իր հագուստը նայելով) Ի՞նչու այդպէս
դարմանքով կը նայիք ինծի, այդպէս քննական:

Սահ. (Եփոթած) Քննական, ես, ամենեին:

Օհան. (Ժպտելով) Ուրեմն անդիտակից է: Ժուրնալիստի
վարժութիւն, երկի: Ի դէպ. անցեալները ձեր մի յօդուածը
կարգացի: Վերնագիշը... չգիտեմ. այն, երիտասարդներու գա-
ւառը չմնալու մասին. կը յիշէք:

Սահ. Այս, կարծեմ:

Օհան. (Միշտ ժպտուն) Ի՞նչպէս կարելի է այդ տեսակ

բաներ գրել: Վերջապէս ժամանակ է՝ քիչ մըն ալ երևոյթի ոլատճառները ուսումնասիրելու, հասկընալու. քիչ մը այնպէս գիտակցօրէն խնդրին մօտենալու. թէ չէ, այդպէս, օդին մէջ բացականչութիւններով. ու ձեր յաւիտենական «պէտք է այսպէս»-ն ու «պէտք է այնպէս»-ը. Ի՞նչպէս թէ «պէտք է»:

Սահ. (Թշնամաքար) Ուրեմն ձեր կարծիքով պէտք չէ:

Օհան. Յամենայն դէպս ճարտասանութեամբ ու հինցած քուազներով բան չենք շահի. ամենէն առաջ (Բառը հեղնու շեշտիլով) պէտք է հասկընալ: (Սիկար հրամայնելով) Խնդրեմ, չէ՞ք կամենար:

Սահ. Ո՛չ, շնորհակալ եմ:

Օհան. Զէք ծխեր:

Սահ. Ո՛չ, կը ծխեմ. բայց... ոչ այսուեղ:

Օհան. Եւ ինչո՞ւ:

Սահ. (Բառ հասկըցնելու շհշտով) Օրիորդը չի սիրեր ծխաւ մուխը:

Օհան. (Ծիծաղելով) Ախ, օրիորդին համար: Է՛, ոչինչ. (առաջարկելով) համտ մը, այնպէս կոնդրապանդով. մի վախնաք:

Սահ. Ո՛չ, շնորհակալ եմ:

Օհան. Իդուր: Եւ վերջապէս պէտք է վարժեցնել օրիորդն ալ: Ենթադրենք յանկարծ ամուսինը ծխող մը եղաւ. այն առե՞ն:

Սահ. Այն ատեն, երկի, ամուսինն ալ կ'աշխատի կնոջ ներկայութեանը չի ծխելու, կամ գուցէ ետ սորվելու:

Օհան. Ա՛, դա արդէն ոչ: (Ծիծաղելով) Ես աւելի կը նախադասեմ կնոջմէս բաժնուիմ, քան ծխախոտէս: (Կը վառէ):

Սահ. (Լուրջ) Կան մարդիկ որ այդ աչքով չեն նայիր կնոջ վրայ:

Օհան. Է՛, բարեկամ, թողէք: Հաւատացէք ինծի, եթէ ձեր կինը ձեզի սիրեց, ձեր ծուխն ալ կը սիրէ, ձեր մուխն ալ:

Սահ. Ուրիշ խօսքով՝ որովհետև ինծի սիրեց, պէտք է դառնայ հլու հպատակու:

Օհան. Պէտք է, թէ ոչ, ճշմարիտ, չգիտեմ. ես «պէտք»-ներու բարեկամ չեմ, ինչպէս ըսի. բայց այդ այդպէս է:

Սահ. (Հեղնու) Կը կարծէք:

Օհան. Բայց դուք իզուր կը վրդովիք. կնոջ գուցէ ամենէն աւելի սիրած բանը հպատակին է:

Սահ. (Մտղձոտ) Ո՛չ ամեն կնոջ: Ո՞վ գիտէ՝ դուք ի՞նչ կը հասկնաք կին ըսելով:

Օհան. Ի՞նչպէս թէ: (Խնդրալով) Կը հասկնամ, ինչ որ դուք կինը... կինը... (Կը մտնէ Սիրան):

* *

*Օհան. ԱՌ, կի՞ն, օրինակի համար: (Կատակով) Զկարծեմ,
որ հակառակ կարծիքի ըլլաք:*

Սահ. Ե՛, դատարկ խօսակցութիւն է. թողնենք:

*Օհան. Ինչո՞ւ. ընդհակառակը, մանաւանդ հիմա կնոջ մը
ներկայութեան:*

Սիրան. Խօսքը ինչի՞ մասին է:

*Սահ. (Տարցած) Դիտեմ, գիտեմ, որ շատ կան այդ տե-
սակի կանայք, որոնց ամենէն աւելի սիրած բանը հպատակիլն է,
ինչպէս որ կ'ըսէք, որոնք ոչ կամք ունին, ոչ գիտակցութիւն,
որոնք խաղալիք են միան էրիկ մարդու ձեռքը: (Կծու) Բայց...
Բայց կը սխալիք ամեն կի՞ն այդ ձեր կարծածը չէ, ամեն
կի՞ն չեք կրնար ձեր քէֆի ուզածին պէս դարձընէք:*

*Օհան. (Խիստ հանգարտ) Լու, դիցուք թէ. ինչո՞ւ այդպէս
կը տաքնաք:*

*Սահ. (Երեն սանձելով) Ես... ես տաքցած չեմ. Դա իժ
սովորութիւնս է, երբ վէճի բոնուիմ: Մանաւանդ... մանաւանդ
երբ ինդիրը իմ սրտիս մօտիկ... իմ սրտիս մօտիկ սկզբունք
ների մասին է: Ո՞չ, կի՞ն էրիկ-մարդու հլու-հպատակը չէ:
Կի՞նը, իսկական կի՞նը, կի՞նը, այնպէս ինչպէս ես կ'ըմբռնեմ,
էրիկ-մարդու ուժն է, անոր ներշնչումը, դեցուհին, առաջ-
նորդը: Ես այդպէս կ'ըմբռնեմ:*

*Օհան. Զգիտեմ այն ատեն էրիկ-մարդը ի՞նչ է ձեր կար-
ծիքով (անփոյթ):*

Սահ. Ի՞նչ:

*Օհան. (Գէսի կից սենեակի դուռը) ԱՌ, և մեր փոքրիկ
նկարչուհին:*

* *

*Սուրայրդ. (Ուրախ-ուրախ կը նետուի դէպի տղան. գիտարկով.
ձեռքին զրիրու կապոց) Բարեկ', բարեկ': Ես արդէն մտածեցի, որ
եկած պէտք է ըլլաք: Ճաշին կը մնաք մեզի, իհարկէ: Վայ, այն-
պէս անօթի եմ, այնպէս անօթի եմ:*

Սահ. (Սիրանին) Իսկ ես երթամ, Սիրան. շատ ուշացայ:

Սիրան. Նորի՞ն. չէ որ ըսի... (Կը կտրէ):

*Սահ. Իսկոյն կը վերադառնամ, Սիրան, իսկոյն. Պէտքի
գործ է, ան ալ ուրիշի գործը:*

Սիրան. (Տեսակ մը չարացած) Գնան:

Սահ. Զեմ ուշանար. գնամ, կարգադրեմ ու անմիջապէս կու գամ:

Սիրան. (Անտարբեր) Ինչպէս որ կ'ուղես:

Սահ. Ուրեմն առայժմ ց'ը: (0հաննէսին մեթեւ դուխ տալով). Պարհն:

Օհան. Երթաք բարով, պարհն Գօղասեան:

(Ոահակ դուրս:)

* *

Օհան. Օրինրդ, չըլլայ թէ վշտացաւ:

Սիրան. (Դժկամ) Ա՛խ, նշ. ան արդէն առաջուց կ'ըսէր որ պիտի գնայ:

Օհան. Խեղճ տղայ է: Զգիտեմ, մարդու մէջ քիչ մըն ալ «ես» ըլլալու է. այնպէս քիչ մը հպարտութիւն, ինքնավտահութիւն. վերջապէս բնական պահանջ մը ինքը վարող ըլլալու, ինքը վերը, ինքը աէրը:

Նուարդ. (Յափշտոկուած) Այն, այն, անպատճառ:

Սիրան. (Տեսակ մը ամաչած զուկով քաշ) Բնաւորութիւնները տարրեր են, պարհն Օհաննէս. ամեն մէկը իր տարրեր առաւելութիւններով:

Նուարդ. Դիտէք. Սահակը հիանալի տղայ է, շատ լաւ տղայ է: Միայն... միայն, ըիչ մը այնպէս... ինչպէս ըսեմ. կարծես հրեշտակ ըլլայ:

Օհան. (Խնդալով) Ի՞նչ: Ա՛խ, դուք սատանայ: Իսկ նկարչութիւննիս ի՞նչ հալի է:

Նուարդ. (Աշխուժ) Միշտ լաւ:

Օհան. Եւ իհարկէ միշտ նոյն ծրագիրները:

Նուարդ. Անշնչւշտ. ինչի՞ է նման իմ կեանքս առանց այդ ծրագիրների, առանց գեղարուեստի: Ես ինչու համար եմ առշելու, եթէ մէջս եղած այդ շնորհքէն բան մը ծնելու չէ:

Օհան. (Ուրախ) Այ՞ս:

Նուարդ. (Ոգեւորուելով) Սպասեցէք, սպասեցէք. այս տարի գալրոցն աւարտեմ, այդ թուարանութիւններէն-մըւաբանութիւններէն մէյ-մը գլուխս ազատեմ ու ամբողջովին նուերուիմ իմ սիրած դործիս: Կը տեսնէք քանի մը տարիէն, կը տեսնէք. արդէն քոյրս ալ խոստացեր է՝ ամեն կերպ օգնէ ինձի:

Օհան. (Ոիրանին) Այ՞ս:

Սիրան. (Կոտրուած) Այն: (Ճիգոտ) Ես ալ ժամանակ մը շատ սէր ունէի նկարելու, ես ալ երբեմն երազեր եմ, բայց իմ ճամբաս ուրիշ կերպ էր ձգուած: Պէտք է տան մասին հոգայի

գետ շատ թարմ տարիքէս, պէտք է... (Դատն ծիծաղիլով) Պէտք
է վարը մնայի, վարը, մանր, սև աշխատանքի:...

Նուարդ. (Յանդիմանելով) Սիրան, Սիրան:

Սիրան. (Կտրուկ, վճռական) Բայց ինչ որ ես ինձի համար
չեմ կրնար, ուրիշի համար կարող եմ: Աս ալ զեր մըն է վեր-
ջապէս: Ընելու եմ ձեռքէս եկածը, որ սա գոնէ ապատ ըլլայ
ինքը զինքը իր հակումներուն նուիրուելու, թող սա ապրի գո-
նէ իր ուզածին պէս ու իրեն համար:

Օհան. Ա՞ն ալ, բայց դուք ալ: Իգուր այդպէս դառնացած
կը խօսիք:

Նուարդ. (Ուրախացած, տղուն) Զէ, պարսն Օհաննէս, դուք
ըսէք, խնդրեմ: Երբեմն ահա ասանկ, այնպէս սիրտս կը կոտրէ
որ...

Օհան. Հապա, Նուարդ, դուն մեզի վայրկեան մը առան-
ձին թնդ:

Սիրան. (Վախցուծ) Ո՛չ, հչ, ինչու: Կեցիր, կեցիր:

Նուարդ. (Զարմանքով կը նայի մէյ մը քրոջը, մէյ մը տղու ե-
րեսին, ու թիչ վշտացած) Խնդրեմ, խնդրեմ, եթէ ես ձեզի կը խան-
դարեմ: (Դուրս):

* * *

Սիրան. (Անհանդիսա) Նուարդ, Նուարդ:

Օհան. Թողէք, թողէք երթայ: Ես վերջը սիրտը կ'առնեմ:

Սիրան. (Եփոթուած կ'երթայ կարի սեղանին մօտ, ջղուտ խառ-
նակ շարժումով մը ստիտակեղնները կը վերցնէ, կը դնէ, կարծես զրա-
զուած է:)

Օհան. (Կը մօտենայ անոր ու սեղանէն մկրատը վերցնելով՝ ժըպ-
տուն) Կարծեմ վերջապէս պէտք է այս հանգոյցը կտրենք:

Սիրան. (Անոր նայելէ խուսափելով) Ի՞նչ հանգոյց:

Օհան. (Միշտ ժպտուն) Հմ, որ տեղէն սկսինք... (Յանկարծ
վճռաբար մկրատը կը դնէ սեղանին) Գիտէք, որ ես կողմնակի ճամ-
բաները չեմ սիրեք: Եւ վերջապէս ինքներդ ալ շատ լաւ գի-
տէք արդէն...

Սիրան. (Յանկարծ ցնցուելով, տեսակ մը նրամայական) Թողէք,
թողէք, խնդրեմ:

Օհան. Ինչու: Ո՛չ: Ես մինչև հիմա ուզգակի խօսելու քա-
շուեցայ, զսպեցի ինձի, կարծես վախունէի որ կ'ը շտապեմ, գու-
ցէ և աւելուդ հպարտութիւն: բայց... բայց վերջապէս ալ չեմ
կրնար:

Սիրան. (Թուլցած) Կ'աղաչեմ ձեզի, պարհն Օհաննէս, կը խնդրեմ ձեզի, թողէք, լոեցէք:

Օհան. (Զարմանըրով) Ինչու սակայն: Եւ վերջապէս արդէն ուշ է ետ երթալու համար: Եթէ սխալած եմ, եթէ զգացումներս խաբեր են ինծի, եթէ դուք նոյնը չեք ըզգար դէպի ինծի, նաև, աւելի վատ, բայց լոել, ոչ, ալ չեմ կրնար:

Սիրան, (Կամաց կը սահի ու կը նստի. զլուխը հակի:)

Օհան. (Զերմ) Տեսէք, ես պարզ տղայ մըն եմ, ես ձեզի ամեն բան իր անունովը պիտի ըսեմ: Ես չգիտեմ ոտ ինչ բան է, որ ինծի այսպէս դէպի ձեզի կը քաշէ. ես չգիտեմ անգամ, թէ իսկապէս ձեր մէջ ի՞նչն է, որ այսպէս սրտիս զարկաւ. միայն բնազդներս կ'ըսեն ինծի՝ «գնա», կը դրդեն ինծի՝ «գնա, ան է»: Իսկ ես սաստիկ կը հաւտամ իմ բնազդներուս, իմ միակ իսկական զեկավարս անոնք են եղած կեանքիս մէջ, և երբէք ալ չեն խաբած: Ահա ես ձեր առջեն եմ. հիմա ամեն բան գիտէք: (Ծիծաղելով) Հիմա ալ խորհուրդ կու տաք երէկուան պէս, որ երթամ Յովսէփիեանի աղջկայ հետ:

Սիրան. Դուք ի՞նչպէս կը տանջէք ինծի: Միթէ չէք ըզգար, որ ձեր վարմունքը վատ է, վատ է...

Օհան. (Սառած) Վատ: Ներեցէք, ոչ: Եւ վերջապէս ձեր մէկ խօսքովը կրնար վերջ դներ:

Սիրան. Վերջ... Բայց չէք տեսներ միթէ, ի՞նչպէս խառնակ է գլուխս, ինչպէս ես ինքս իմ տէրս չեմ, ինչողէս... Վատ էք, վատ, վատ: Ի՞նչ ըսեմ ես ձեզի, ի՞նչ կ'ուզէք որ ըսեմ ձեզի. ես խօսելու անգամ կը վախնամ. այլս ամեն բան կարծես շուրջս հակառակ է դարձեր, այն մատածումները, այն պարտաւորութիւնները, որոնք ես երկար-երկար շատ բնական հու համարեր ու աղնիւ, այսօր ինծի ծնւռ կը թուին, յիմար, սըխալ: Կը հասկնաք, ես հիմա այլս չգիտեմ ի՞նչը բռնեմ, ի՞նչը թողնեմ:

Օհան. (Կոտրուած) Այսինքն ի՞նչպէս, պարզ չեմ ըմբռներ:

Սիրան. Թողէք ինծի այսօր, պարհն Օհաննէս, կ'աղաչեմ ձեզի: Կը տեսնէք, ես նորմալ գրութեան մէջ չեմ. յանկարծ... յանկարծ... և վերջը ամբողջ կեանքս կը զղջամ. ես այսօր կը վախնամ ինքս ինծմէ, ես այսօր կը նամ ըներ ամեն յիմարութիւն. դուք իմ գլուխս պայտա կու տաք, դուք կը քաշէք ինծի, դուք կը դրդէք ինծի. ատիկա աղէկ չէ, աղէկ չէ:

Օհան. (Վիրաւորուած) Ներեցէք, օրինրդ, կը տեսնեմ, որ սխալ գործեցի: Ես կը հետանամ: (Կուզէ զուրս)

Սիրան. (Յանկարծ առաջ նետուելով՝ թափով) Պարհն Օհաննէս, պարհն...

Օհան. (Կէս ճամբին կանգ առնելով) *Օրինրդ:*

Սիրան. (Կը մօտենայ անոր կը կանգնի գէմը ու քնքշանքով) *Վիրաւորուեցմաք:*

Օհան. *Ո՞չ, օրինրդ, իրաւունք չունիմ:*

Սիրան. (Պաղանանք-փաղաքշանք) *Մի վիրաւորուիք, կը խընդրեմ ձեզի:* Հասկցէք ինձի, Հասկցէք հոգեկան վիճակս: Կը խօսմինք մէկ ուրիշ անգամ, երբ գլուխս աւելի պարզ ըլլայ: (Չինքը միկնելով) *Մի բարկանաք:*

Օհան. (Կը բռնէ ձեռքը, ու կը նային իրաք ջերմ ու երկար. լուս. վերջը կատաց) *Ուրեմն... Ե՞րբ գամ:*

Սիրան. (Տղու գէմքն կափուած, տարուած) *Ե՞րբ որ կը կամենաք:*

Օհան. *Վաղը, մի՞ւս օր, կիրակի՞:*

Սիրան. *Ե՞րբ որ կը կամենաք: Ուրեմն ալ չէք բարկացած:*

Օհան. (Բարձրածան) *Բարկանամ, հիմա:* (Երկու ձեռքով անդամ մըն ալ պինդ թափ կու տայ անոր ձեռքը ու բայ թողնելով՝ ուրախ ու աշխուժ) *Ո՞չ, հիմա ես ուրախ եմ միայն, ուրախ, բոլոր սըրտովս:* Այսօր, թէ վաղը, երբ որ կ'ուզէք. բայց իմ պատասխանը ես առի արդէն: (Յափտակուած) *Ահա իմ պատասխանս, դնւը, ձեր դէմքը, ձեր նայուածքը, ահա իմ պատասխանս ձեր աչքերուն մէջ:* (Գուարթ ու կատակով) *Աղէկ, կը դիմանամ երկու օր ալ:* (Գուրսու:)

Գ. ՏԵՂԱՐՄԱՆ

Սիրան. (Անոր հետեւելով թիշ-թիշ ետ կ'երթայ մինչեւ մակոփ դուռը, ուր թինկ տուած կը մնայ գլուխը յմնած պատին: Վերջը յանկարծ փայրի ուրախութեամբ կը նետուի առաջ, կը բռնէ աթոռի թիկունքն ու նորէն կը թաղուի իր մտքերուն մէջ:)

Հայրը. (Կը մտնէ ձեռքը շիշ մը փինի ու բաժակ մը) *Այ, մէյ մը համը տեսէք:* (Չարմանքով կը նայի շորջու:) *Վայ, գնացողը մնէ էք:* *Ափսոս:* (Վար զնելով ձեռքինները:) *Տեսար, Սիրան, որ կ'ըսէի ճիշտ 65 շիշ է գուրս գալու:* Բան մը որ կ'ըսեմ, լսածս գիտես, 63 շիշ եղաւ, երկու շիշի չափ ալ ոթած ու խմած՝ ճիշտ քեզի 65: (Յալթական) *Տեսար հիմա աչքիս չափը:*

Սիրան. (Ցրիւ) *Հըմ:*

Հայրը. *Ինչպէս թէ «հըմ»: Բայց աղէկ յոգնեցայ համ: Կատամէկ, ամբողջ տակառ մը: Բայց հիմանալի գինի է, Սիրան, սքանչելի գինի:* (Շիշը լոյսին բռնելով) *Այ, հիմա քէփս տեղն է:*

Սիրան. (Սրտնեղ) Ե՛, երնէկ քեզի, որ քանի մը շեշ գինիով այդպէս ոգևորուիլ կընաս:

Հայրը. Վահ. դուք որ բերնի համ չունիք. դուն թ' նչ գիտես ինչ բան է գինին: Ո՞չ զուն, ոչ ալ անիկա, յիմարը, ձըզ գնաց: Ե՛, նոր ճահիւներդ, դուք արդէն ոչ մէկ բանէ համ առնելու շնորհքը չունիք, ոչնչ վայլել չէք կրնար, ոչ մի բանով հարրենալ չգիտէք: Ե՛, մենք ուրիշ տեսակի մարդիկ էինք մեր ճահիլ օրերուն:

Սիրան. (Մատածկոտ) Գուցէ իրաւունք ունիս, հայր:

Հայրը. (Ծաղրով) Գուցէ: Ի՞նչպէս թէ «գուցէ»:

Սիրան. (Յանկարծ ոգեւորուելով) Ճիշտ է, հայրիկ: Տնւր ինծի, տնւր ինծի քու գինիէդ. ես ալ կ'ուզեմ խմեմ քու գինիէդ, ես ալ կ'ուզեմ... (Քայլ մը առաջ զնալով):

Հայրը. (Զարմանքով) Բհը՛. Նո՞ր խելքի եկար: (Տեսակ մը զինիին շիշը պաշտպանելու շարժումով) Համբերէ, կամաց-կամաց: Գինին անմասն բան է, թ' նչ կարծեցիր. միայնի հարկէ այսպէս ընտիր ու անապակ գինին. գինիի ու բարեկամի միայն ընտիրը. մնացածը թիյն է:

Սիրան. (Յափշտակուած) Այն, ընտիրը, ընտիրը, միայն ընտիրը... (Անզուսպ ուրախութեամբ) Հոյրիկ, գինիի ու բարեկամի միայն ընտիրը:

Հայրը. (Ապշած կր նայի անոր:) Վահ. առանց խմելու գինովցար: (Կասկածոտ) Զըլլամ թէ արդէն խմեր ես:

Սիրան. (Լիսափրտ ծիծաղելով կը նիտուի բազկաթոռի մէջըին, պրեթէ պառկած, տարածած թեւերով) Այն, հայրիկ, խմեր եմ, խմեր եմ, խմեր եմ:

Հայրը. Ե՞րբ. այդ թ' նչպէս, որ ես չիմացայ: Գողունի՞: (Ծիծաղելով) Համ, համ, համ, հարբեր ես:

* *

Տիրունի. (Գլխարկով մակուի դոնէն) Վահ, հայրիկ, քէփդ տեղն է:

Հայրը. (Միշտ ծիծաղելով) Սիրանը... Սիրանը հարբեր է: Տիրունի. Զէ հա: (Աղջկան զառնալով) Սիրան...

Սիրան. Ընտիր, ընտիր գինի:

Հայրը. (Միշտ ծիծաղով կը վերցնէ շիշը) Գողցիր է գինիէս, գողցեր է: Ա՛յ, չէլ կրնար երկակայեր: (Գուրս:)

Տիրունի. (Գլխարկով, հովանոցը ձեռքին կեցած է աշշկան կողը, աչքերը անթարթ անոր դէմքին:)

Սիրան. (Կամաց մը կը բարձրանայ ու կը նատի. հանգիստ) **Իմ**
վիճակս ելաւ, **Տիրուհի:**

Տիրուհի. **Այս.** կը տեսնեմ:

Սիրան. Ուրախ չես:

Տիրուհի. (Մտածեատ) Ուրեմն գէպի սիրած սարերը...

(Հեղնու) **Խեղճ Սահակ:**

Սիրան. Ե՛, ինչու խեղճ. ես անոր ի՞նչ էի տալու. կ'անց-
նի քանի մը օր, կը վարժուի, վերջացաւ գնաց:

Տիրուհի. (Գլխով կ'ընէ) **Հըմ:** Հօրդ համար մեծ սիւրբիկ
է ըլլալու. այնպէս սորված է քու թեփտ տակ:

Սիրան. Իմ պարտք կատարեր եմ ես. հանգիստ է խիդ-
ճըս: Նուարդի համար ալ կ'աշխատեմ օգնեմ հեռուէն ալ. որ-
չափ որ կըցայ. թնդ շարունակէ, թնդ առաջ գնա...

Տիրուհի. Անշնւշտ, անշնւշտ: Միայն հիւանդի հաշուխն
սաստիկ պիտի չի գայ:

Սիրան. Ե՛, ի՞նչ ընեմ. քիչ մըն ալ թող միւսները մըտ-
մըտան: (Գրգոռուած) Վերջապէս... ես ալ մարդ եմ վերջապէս:
Ա՛յ, որ այսպէս ետ կը նայիմ անգամ մը իմ ապրած կեանքիս.
ինչի՞ է նման. անապատ. մանրամունը հոգսեր, ցաւեր, ու գորշ,
գորշ: Ո՛չ, ոչ ալ չեմ կընար, ալ չեմ ուզեր. ես ալ ունիմ իմ
պահանջներս, ես ալ կ'ուզեմ զգամ ու ապրիմ: Ես ալ կ'ուզեմ
ապրիս, Տիրուհի, կը հասկընաս, ես ալ կ'ուզեմ ապրիմ: Կ'ու-
զեմ ապրիմ ինծի համար, վերջապէս անգամ մըն ալ ինծի
համար:

Տիրուհի. (Ընկճուած) **Ապրէ,** ապրէ, պէտք է ապրիլ:

Սիրան. Բայց գֆն ինչու այդպէս. ուրախ չես:

Տիրուհի. Ե՛, թնդ ինծի: (Կատակի տալով) Նախանձ:

Սիրան. Անխելք:

Տիրուհի. (Դառն) Ուրեմն այս օրուընէ մեր ճամբաները
ալ կը բաժնուին իրարմէ:

Սիրան. Ինչպէս թէ, ինչու:

Տիրուհի. Մինչև հիմա կարծեր էի, մենք միշտ ենք դոյդ
գնալու: Ու պինդ համոզուած էի, որ այդ բոլորը զայրոյթի,
բողոքի ալիքներ են միայն որ կու գան ու կ'անցնին սրտիդ վը-
րայով, ինչպէս եկեր ու անցեր են իմ վրայէս: Ես քեզի ալ
ինծի նման կարծեցի. ինծի նման անընդունակ ապրիլու ինքո
քեզի համար, ինծի նման միայն աշխատաւոր ձեռք մը ուրիշ-
ներու կեանըը գիւրացնելու: Միալուեր եմ. քու մէջդ կինն է
նստած. ապուշը միայն ես եմ աշխարհիս երեսին:

Սիրան. (Վրայ իյնաշով՝ կարեկցու) **Տիրուհի,** **Տիրուհի...**

Տիրուհի. (Թիստ ու իրմէն հեռու պահելով) **Ա՛,** ոչ. իզնւր:

Դուն կը խղճաս ինծի: Դա վատ է, քեզի համար շատ է վատ: Խղճալը շատ աւելորդ ու շատ անյարմար քեռ է իրեն համար ապրիլ ցանկացողին: Ով իրեն համար ապրիլ կ'ուզէ, խղճալը պէտք է մէկդի դնէ: Գնա քու ճամբար ու ետ մինայիր երբէք, երբէք, ոչ ինծի, ոչ միւսներուն: Այդ ճամբով դնացողը հայելու չէ, յիշէ Ղովտի կնոջը...

* *

Սահակ. (Շնչառ ու գուտրթ կը նետուի ներս) Ահա և ես: Որ ըսի չեմ ուշնար:

Սիրան. (Ցուզուած ու չոր) Այդպէս վստահ ես, որ չես ուշացեր:

Սահակ. Ի՞նչպէս թէ:

Սիրան. Իսկ ինծի կը թուի, որ շատ ուշացար, շատ:

Սահակ. Ե՞ս, կրքով մի խօսիր. դեռ հաղիւ կէս ժամ անցաւ: Տես, այնպէս շտապեր եմ: Զգէ: Երսի բարկացեր ես, որ չսեցի քեզի, բայց վերջապէս երեխայ չես. պէտք է հասկընայիր որ պարտական էի երթալու:

Տիրուհի. (Հեղնոտ) Պարտական, պարտք: Ե՞ս, դուք ալ: յիշմար բառ. պարտքն ինչ բան է:

Սահակ. (Ժամուն) Միթէ:

Տիրուհի. (Սիրանին) Ի՞նչո՞ւ ես անհանգիստ. քաջ եղի՛ր, անփոյթ ու ետ մի նայիր. յիշէ Ղովտի կնոջը... (Դուրս:)

* *

Սահակ. (Զարմանքով ու ծիծաղով) Ի՞նչ կ'ըսէ այդ աղջիկը:

Սիրան. (Խէթ) Զգիտեմ:

Սահակ. Դեռ բարկացած ես: Արժէ, հոգիս: Աղէկ, թնդ, կը բարկանաս մէկ ուրիշ անգամ. հիմա այնպէս չզիտեմ ինչու սիրոս տեսակ մը լիքն է, ու հետդ խօսիլ կ'ուզէի. եկնար, նստէ:

Սիրան. (Մեղանի վրայ բանով մը զբաղուած. Թիկունքը տղուն) Սահակ:

Սահակ. Համ:

Սիրան. Քեզի բան մը ունիմ ըսելու:

Սահակ. Համպա:

Սիրան. (Կէս մը դէպի տղան գառնալով) Զգիտեմ ինչպէս արտայայտեմ միտքս, որ ինծի սխալ չհասկենաս: Դուն գիտես, որ քեզի սրտանց կը համակրեմ ես, բայց... բայց պէտք է որ անգամ մը պարզ խօսիմ:

Սահմակ. (Անհանդիստ) Ի՞նչ բան է դա:

Սիրան. Ոչինչ. չվշտանաս. միայն ինձի կը թուի, որ
մենք իզուր խօսք ենք տուած իրարու. մէջտեղը կարծես թիւ-
րիմացութիւն մը կայ, տեսակ մը...: Ես ու գուն անշուշտ շատ
լաւ. բարեկամներ ենք, շատ լաւ ընկերներ, անշուշտ. բայց...
բայց ամուսնական կապ՝ ոչ Զես նեղանալու, չէ, որ այսպէս
պարզ հետդ կը խօսիմ. ես պարտական եմ քեզի հետ պարզ ու
անկեղծ ըլլալու. այնպէս չէ: (Քիչ լուր:) Այնպէս չէ:

Սահմակ. (Յրուած) Ինչպէս:

Սիրան. Ինձի պիտի հասկընաս չէ: (Քիչ լուր:) Այնպէս նը-
կառէ, որ մեր մէջ ոչ այն հին խօսակցութիւնն է տեղի ունե-
ցեր, ոչ ալ այս: Այս:

Սահմակ. Ինչպէս որ կը կամենաս:

Սիրան. Եւ մեր յարաբերութեան մէջ իհարկէ ոչինչ չի
փոխուիր: Ոչինչ, բոլորովին ինչպէս առաջ:

Սահմակ. Ինչպէս որ կը կամենաս:

Սիրան. Անշուշտ, անշուշտ: Գիտեմ, բարեկամութեան հա-
մար բոլորովին ուրիշ տեսակի մարդիկ կը յարմարին իրար,
ամուսնութեան համար ուրիշ: Ես ու գուն միշտ հրաշալի բա-
րեկամներ ենք եղած իրարու. ու այդպէս ալ մնանք միշտ: Այն-
պէս չէ:

Սահմակ. Ինչպէս որ կը կամենաս:

Սիրան. Շատ, շատ շնորհակալ եմ քեզմէ: Ուսերէս կար-
ծես ահազին բեռ մը գլորեցիր: Շնորհակալ եմ քեզմէ շատ,
շատ, անշափի: (Դուրս:)

*
**

Սահմակ. (Քարացած կիցած է աչքիրը մ.կ կէտի. վիրջը կամաց
կը մօտենայ սեղանին ու դանդաղ շարժումով կը վիրցնէ զլսարկը:)

Նուարդ. (Կը մտնէ, կը նայի ջուրջը. լուրջ ու մտածկոտ կը
մօտենայ տղուն) **Սահմակ,** քոյրս ինչժու այսպէս տխուր է այս քա-
նի օրը. Ի՞նչ կը կարծես:

Սահմակ. (Յեկուած) Զգիտեմ:

Նուարդ. Իսկ ես զիւեմ. ես հիմա կը հասկընամ. մենք
ենք, մենք անոր ոտքերը կապողը. մենք բոլորս՝ եղբայրս,
քոյրս, ես: (Խորհրդաւոր) Ես հիմա զիտեմ:

Սահմակ. Այն... կապողը: (Առանց անոր նաելու) **Մնաս-բա-
րով,** Նուարդ:

Նուարդ. Կ'երթաս: Ո՞չ. ես չեմ ուզեր, որ մեզի համար

ան դժբաղդ ըլլա: Զէ, Սահմկ, պէտք չէ, որ քոյրս դժբաղդ ըլլա:

Սահմակ. Թող ըլլա... Թող ըլլա երջանիկ (Կը թղձկի ու զրապիլ ջանալով կ'ուզէ դուրս)

Նուարդ. (Յուզուած ու կինտրօնացած) Զէ, չէ...

Սահմակ. Թող ըլլա երջանիկ: (Տիտուր ու խորունկ) Մնասքարով, Նուարդ: (Ձերմ կը թօթուէ ձեռքը ու զուրս:)

Նուարդ. (Ապշած ու յուզուած կը նայի ետեւէն:)

ԼԵՒՈՆ ՇԱՆԺ

(Վերջը յաջորդ համարում)

ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ *)

(Բ. Շ ե ր ն ի)

Դ.

Թիւրքիական ցենզուրան.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զափաղանց կրթութիւնը: — Թիւրքիական լրագիրները: — Յենզուրական գէպքերի նմուշներ: — Ուղղած Աստուածաշունչը: — Սրբագրուած Ղուրանը: Գիտելով: — Քաղաքականութիւնը մամուլի մէջ:

Ինչպիսի կրթութիւն, ինչպիսի յառաջադիմութիւն: Այդպէս էի ես կարծում, երբ տեսնում էի շոգենսաւի վրայ նստած արիստոկրատ թիւրքերին, որոնք գնում էին գէպի վելլաները և Մարմարա ծովի ամարանոցները և ճանապարհի

*) Տես «Մուլճ» № 10.

երկարութիւնը չզգալու համար եւրոպական լրագրների ընթերցանութեամբ էին զբաղուած:

Զափազանց կրթութիւն, չափազանց յառաջադիմութիւն, կարծում էին ընդհակառակը թիւրքական լրտեսները և եւրոպական լրագրներ կարդացողներին ամբաստնում էին իրեւ երիտասարդ թիւրքերի:

Եւ զարմանալի չէ այն հանգամանքը, որ թիւրքիական կառավարութիւնը կատարելապէս գնահատում է այդ օրինակ ամբաստանութիւնները, որովհետև նրա պաշտպան ոստիկանութիւնը այնպիսի անհատների, իրեւ երիտասարդ թիւրքերի, կալանաւորեց, որոնք horribile dietu ոճրագործութիւն են արեւ նրանով, ու իրանց ֆէսերի վրայ օդանցքներ են ունեցել:

Օդանցքները երիտասարդ թիւրքերի նշաններն են, առում է ոստիկանութիւնը...

Եւ ինարկէ այդ օրուանից ի վեր գրեթէ ամեն մի թիւրք իր ֆէսի վրայ օդանցքներ չունի, կամ թէ չէ բացի Կ. Պոլսի վրաքննիչի ատեանից անցկացած թիւրքիական լրագրից ուրիշ լրագիր չէ կարգում հրապարակօրէն:

Եւ իսկապէս Կ. Պոլսի ոչ մի լրագիր չէ կարող իր ընթերցողի ժաքերը լարել կամ փոխել:

Եւ միթէ կարելի է մի բան աշխարհիս երեսին աւելի տափակ, չոր ու ցամաք և ձանձրալի երեւակայել, քան թէ այդ Կ. Պոլսի լրագրներն են ներկայացնում:

Թիւրքիական թերթերի ամենազուարալի մասը կազմում են նրանց պաշտօնական բաժինը և այն սկզնակները, որտեղ գլխաւորապէս երեսում են թիւրքական ցենզուրայի լարախացութեան բնորոշ նմուշները.

Թիւրքիայում գրաքննութիւնը զարմանալի կեանք է վարում: Թիւրքիական թերթերը զրկուած են նոյն իսկ ամենաչընչին ազատութիւնից ներքին կամ արտաքին քաղաքականութեան մասին անկախ կերպով իրանց կարծիքները արտայայտելու: Դրանք մեծ մասամբ գրաքննութիւնից ներշնչուած յօդուածներով են կերակրում իրանց ընթերցողներին:

Շատ անգամ էլ պատահում է, որ թիւրքիական ցենզուրան շատ բան թոյլ է տալիս տպագրելու թիւրքիական լեզուով լոյս տեսնող թերթերում, այն ինչ միևնոյն բանը արգելում է մայրաքաղաքում լոյս տեսնող միւս թերթերում երեւալու, որպէսզի գրանով արգելի միայն թիւրքերի համար որոշած տեղեկութիւնները աւելի լայն շրջաններում տարածուելու:

Թիւրքերի համար լուրերը տահասարկ ուրիշ գոյն ունեն, եւրոպացիների համար ուրիշ:

Մի բանի մէջ միայն բոլորը միևնոյն իրաւունքն ունեն, որ է լոռութիւնը: Միանգամայն անհաւատալի է թիւրքիական ցենզուրի նրբազգացութիւնը և դիսկրետ լինելը:

Ահա միայն մի բանի պերճախօս փաստեր:

Երբ Կարնօն ապանուել էր, լուրը կայծակի արագութեամբ բերանացի կերպով տարածուեց և չնայած նրան, որ իւրաքանչիւրը այդ մասին արդէն գիտէր և խօսում էր, Կ. Պոլսի թիւրթերին արգելուած մնաց այդ սարսափելի գէպքի առթիւ ամենաչնչին մանրամամութիւնը անգամ յիշատակելու:

«Ֆրանսիական հասարակապետութեան նախագահը հանկարծաման եղաւ» այսպէս հաղորդուեց փարիզեան լուրը: Յետոյ կարողացան, իհարկէ, նրա մահուան մասին մի բանի բան ևս պատմելու, բայց միայն այս ձեռվ:

«Կարնօն գէպքից յետոյ գիտակցութիւնը կորցրեց և կառըում պառկեց: Սրան յետեղով նախադասութիւնը «Նրա բերանից վաղում էր արին» գրաքննիչի փափուկ զգացմունքները շարժեցին:

Պրեֆեկտ Ռիվոի խօսքերը ուղղուած թատրոնական հիւրերին Լիօնոմ, թէ «մի բղաւէք Կարնօն զո՞ն եղաւ մի ատենտատի», ստիպուած էին այս ձեռվ հաղորդելու:

«Մի բղաւէք Կարնօն մահամերձ է...»

Այս բոլորի հետ, սակայն, եւրոպական թերթերը բացարձակ կերպով կախուած էին, կատարուած ոճրագործութեան վերաբերեալ իրանց մանրամասն տեղեկութիւններով, բոլոր հիւրանոցներում և սրճարաններում:

Մի իրեկոյ մի հեռագիր կարգացի ես հետեւալ բովանդակութեամբ:

«Պետական բոլոր բարձր աստիճանաւորները շտապեցին Հումբերտ թագաւորին իրանց համակրութիւնները արտայալեկու:

Մի քանի օրից յետոյ, սակայն, կարդացի ես եւրոպական թերթերում Ակիարիտոյի կատարած անյաջող ատենտատի մասին:

Մի ուրիշ անգամ հաղորդում էր Մակրիդից. «Խսպանիայի ամբողջ ազգաբնակութիւնը խորագիս յուղուած է մինչսար նախագահ Կանօվայի մահուան առթիւ: Բայց ես խսկոյն հասկացայ թէ այդ ինչ է նշանակում:

Ստամբուլօվի սպանման ժամանակ արգելուած էր նրա ոչ միայն մահուան, այլ և նոյն խսկ նրա ծանր և անյուսալի հիւանդութեան մասին որևէ բան խօսելու, որից յետոյ մահը բնականաբար պիտի տեղի ունենալու:

Մամուլային սոյն օրինակ կատակերկութիւններ տեղի ունեցան Յունաստանի Գէորգ թագաւորի կեանքի դէմ սպանաման փորձ անելու առիթով. նոյնը պատահեց և Աւստրո-Ռւսագարիայի Եղիսաբէթ կայսրուհու, Խաղաղայի Հումբերտ թագաւորի և Միացեալ նահանգների նախագահ Մակարինէի սպանառելու առիթով:

Հայկական խոռվութիւնների ժամանակ պատահած ցեսագուրական ծիծաղաշարժ նմուշների մասին խօսելը մեզ շատ հեռու կտանէք:

Թուուցիկ կերպով տւելորդ չէ այստեղ յիշել, որ թիւրքիական թերթերում արգելուած էր Գլատոստոնի պատկերը հրատարակելու, որովհետեւ պետական այդ անձնաւորութիւնը թոյլ էր տուել իրան Սուլթանի և Թիւրքական բացասական ոչքիմի դէմ խօսելու: Բայց գրանից նաև արգելուեց, թիւրքիական լրագրներում որևէ բան յիշելու այն շոգենաւի կաթուայի պայթելու մասին, որ թիւրքական կառավարութիւնը շինել էր տուել Գերմանիայի Քիլ քաղաքում. չէ որ թիւրք ընթերցողները կարող էին այդ կաթուայի պայթելը ուրիշ հնթագրութիւններով պարզաբանել:

Հայկական կոտորածներից յնտոյ թիւրքիական ցենզուրան ոկտեմբեր իր բարբարոս արշաւանքները հայերէն լեզուով լոյս տեսած գրքերի և պարբերական հրատարակութիւնների վերաբերմամբ. նա եռանգույն կերպով խուզարկում և մրոտում էր հայերէն լեզուով այն բոլոր հրատարակութիւնները, որոնց մէջ, աչք զարնող շատ նախաղասութիւններ կային:

Նոյն իսկ Աստուածաշունչը ազատ չմնաց վերոյիշեալ արշաւանքներից: Թիւրքական գրաքննիչի աչքում նրա մի քանի նախաղասութիւնները անվաստահելի և կասկածելի դարձան:

Հրէսաստանը նման է հնչում Հայաստան բաւեին, բայց որովհետեւ թիւրքիայի համար Հայաստան բառը դոյութիւն չունի, քերուած է բոլոր քարտէզների վրայից, դրա համար էլ արգելեցին յաւիտեանն Հայաստան բառի գործածութիւնը, որովհետեւ նա կարող է յիշեցնել նախկին Հայաստանը:

Ուրեմն այսուհետեւ այնպիսի Աստուածաշունչներ, որոնց մէջ չի կարելի գանել Հրէսաստան բառը:

Միւս տեղը վերաբերում է Քրիստոսի համար առաջին անգամ մեռնող սուրբ Սահմանոսին: Թիւրքական գրաքննիչը վկարողացաւ ներել այդ սուրբին, նա չէ, որ բարկոծուելով մեռաւ որը կարող է 1896 թ. Օղոստոսեան դէպօները յիշեցնել երբ այնչափ հայեր նոյն ձևով սպանուեցան, ուստի և այդ կտորը ջնջուեց:

Նոյեմբեր, 1905.

Մի ցենդուրա, որ կարողանում է Դուրամսից «Խալիֆայի պարտականութիւնների մասին» գլուխը ջնջել, ի հարկէ կարող է և Աստուածաշունչը սրբագրել:

Թիւրքական լրագրները իրանց խորամանկութեամբ ստիպուած են երբեմն իրանց միտքը տպագրական սխալների ջնորհիւ արտայայտել: Երբ Սուլթանի առաջին քարոզուղար Սուրէա փաշան յանկարծակի մեռել էր և լուր էր տարածուել, որ նա թունաւորուել է, Կ. Պոլսի գերմաններէն լեզուով հրատարակուող մի թերթում տպուած էր հետևեալը... Սուրէա փաշան յանկարծաման եղաւ մի թիւրքական (türkisch) հիւանդութեան ջնորհիւ, փոխանակ ասելու խարդախ (tückisch) հիւանդութիւնից...».

Երբ յայտնի ծովային մինիստր Հասան փաշան մի թանգարին պատուոյ սուր ստացաւ, Փրանսսիական մի թերթ դիտամբ հետևեալը տպեց. «sabre de grande voleur» (փոխանակ վալու)...

Այդպիսի տպագրական սխալները» պատճառ դարձան վերջապէս ցենդուրական մի հրովարտակի հրատարակութեան, որի համաձայն խմբագիրները տպագրական սխալների համար անգամ պատասխանատու են դառնում:

Դրան հակառակ, ցենդուրան ոչ միայն թոյլ է տալիս, այլ և ցանկանում է, մանաւանդ քաղաքական յուզմունքների ժամանակ, որ ընթերցողների ուշադրութիւնը դրաւուի հետևեալ լուրերով:

«Սարսափելի պտղաբերութիւն». Կոնիայում տեղի ունեցաւ կանացի պտղաբերութեան մի արտասովոր գէպք: Մի կին այդ քաղաքում ծնել է մինչև այսօք 24 երեխայ: Նա ամուսնացել է 12 տարեկան հասակում և այժմ չնայելով որ նա 49 տարեկան է սակայն 25 տարեկանի տպաւորութիւն է թողնում: Այդ 24 երեխաններից կենդանի են մնացել միայն 9 հոգի, այն ինչ մնացածները մեռել են իրանց փոքր հասակում, մեծ մասամբ ծնուելուց անմիջապէս յետոյ».

«Մի գլուխութեալ»: Երբ Սըլվազում սկսուեցին հայկական առաջին շարժումները, Կ. Պոլսի թերթերից մէկը իր այնտեղի թղթակցից ստացաւ հետևեալը. «Առանձին մի բան չկայ հաղորդելու. նորերս մաքսատան պաշտօնեանները ձերբակալեցին ծխախոտի մի քանի մաքսաննենքների. իրեն մի ծիծաղաշարժ պատմութիւն աւելորդ չեմ համարում նաև ձեզ յայտնել, որ քաղաքում մի կով է գժուել, որի սլատճառով տեղիս ամբողջ աղղաբնակութիւնը յուզուած դրութեան մէջ է գտնւում»: Շատ պարզ է, որ ընթերցողը պէտք է կարողանայ այդ խօսքերը տողերի արանքներով կարդալ:

Յունական պատերազմից սկսած Թիւրքիայի պարբերական մամուլը աչքի ընկնող փոփոխութեան ենթարկուեց, որովհետո միայն այդ ժամանակ թիւրքիական թերթերը առաջին անգամ արտօնութիւն ստացան օգտուելու քաղաքական յայտարարութիւններից կամ կօմբինացիաներից։ Այդ ժամանակ մասնաւանդ՝ մի՛ օրաթերթ՝ պատկերազարդ ամենօրեայ «Մալիւմաթ»ը, որ Ելդրզի օրգանն է համարում, արտաքին քաղաքականութեան իր նույրած գեղեցիկ և ազատ յօդուածներով, գրաւեց ընթերցողների ուշադրութիւնը։ Այլանդ անգլիացիներին էլ անում էին նոյն յանդիմանութիւնները՝ Հընդկաստանի մահմեդականների վերաբերմամբ, նրանց կատարած անգթութիւնների համար, ինչ որ անգլիացիները Թիւրքիային էին ուղղում հայերի նկատմամբ և պահանջում էր, որ «յանուն քաղաքակիրթութեան խօսող պետութիւնները» յանուն քաղաքակրթութեան Հնդկաստանի ճնշուած մահմեդականներին առատեն։

Պետութիւնը թոյլ էր տալիս Կ. Պոլսի թերթերի միջոցով մասնաւորապէս, թիւրքերի համար առասարակ, այնպիսի լուրեր տարածել, որոնք գուրսը միայն ծիծաղ կարող են շարժել։

Այսպէս օրինակի համար «Սաբահ»-ը հաղորդում է. «Ադրիաները խնդրեցին Ձեւադ փաշային կրետական գործը իր ձեռքը վերցնել և շտափոյթ լուծում տալ»։

Սական սրան հակառակ, ժողովուրդը արդէն սովորած էր քաղաքականութեան մասին խօսելու և դատողութիւններ տալու. շատերը արդէն սկսել էին եւրոպական լրագրներ կարդալ իրանց ծանօթութիւնները ընդարձակելու համար, շատերն էլ մեծ հետաքրքրութեամբ յետեւում էին ներքին քաղաքականութեան։

Բայց յանկարծ թնդաց ցենզուրայի «յետը», ինքվիզիցիայի որոտարարը. և ամեն ինչ ընկլամումէ հին փանատիկոսութեան մէջ անով ու սարսափով։

Նոյն իսկ գուրսը ապահովութեան մէջ ապրող երիտասարդ թիւրքերը սրերը պատեանների մէջ դնելով և թափառութիւնցից բոլոր իդէալները, վերադարձան Փագիշահի ոսկու ամանների շուրջը բոլորելու։

Ի վերջու յիշատակեմ և հետեւալ դէպքը, որ կարող է ապացուցանել թէ ցենզուրան որչափ լրջութեամբ է տանում իր գործը։

Մի դիշեր Պերայի դլամարը փողոցում զբօնուում էին երկու գերմանացի՝ պարունակութիւնների իրանց տիկինների հետ միասին,

երբ մի շատ ճաշակով հագնուած թիւրք վրայ է գալիս և սկսում վերոյիշեալ չորս հոգուն մտրակահարել։ Սակայն մօտեկայ ողբանանից մի քանի մարդիկ վրայ համնելով, հասցնում են սրիկային իր արժանի վարձատրութիւնը մի փառաւոր քոթակով։ Ոստիկանութիւնը այս դէպքի ժամանակ ներկայ չէր։ «Levant Herald» լրագիրը գէպքը հաղորդելով աւելացնում է։

«Զի կարելի ասել թէ մեր ոստիկանութիւնը լաւ կազմակերպուած չէ։ Ամեն յիսուն քայլի ամենայն ճշտութեամբ առգենտներ են նշանակուած, որոնք ցերեկները միշտ իրանց ծառայութեան մէջ են, սակայն գիշերները երբեմն վատ եղանակներին ու հանգիստ ժամանակներին սրճարանների մէջ խաղաղ անկիւն են որոնում, որից և ինչպէս ներկայ պատմութիւնը ցոյց է տալիս ոստիկանութիւնը յաճախ տուժում է։

Չնայած զգուշութեամբ զործածուած այս բառերին «Levant Herald» ցենզուրայից իսկոյն մի խիստ յանդիմանութիւն ուստցաւ։ Յանդիմանութեան պատճենը բերում եւ այստեղ թիւրքիական մամուլի թիւրօյի ծիծաղելի վիճակը ապադային որպէս յիշողութիւն թողնելու։

Դ Ռ Հ Ռ

Ներքին գործոց մինխսորութիւն։ Օտարազգի մամուլի վարչութիւն։ 28 յուլիսի 1896

«Levant Herald» ոչ մի ուշադրութիւն չի գարձնում ցենզուրական կանոնագրութեան վրայ, ուստի և յայտարարում է նրան, որ նա կենթարկուի այն պատիմներին, որոնք նշանակուած են ցենզուրական կանոնագրութեան նկատմամբ զանցառութիւն անողների համար։

Պետական խորհրդական և վերատեսուչ օտարազգի մամուլի։

Նշան.

Սպառնացող պատիմները կայանում են նախ դրամական օժանդակութիւնից զրկելու։ (Բոլոր թիւրքերը թիւրքիայում տէրութիւնից զրամական օժանդակութիւն են ստանում) և դադարեցման մէջ, որ լինում է օրով, շաբաթով, ամսով և կամ ընդ միշտ վերջինս ամենածանր պատիմն է արդէն, որին ենթարկուեց և ի միջի այլոց հայոց «Հայրենիք» լրագիրը։ Այդ առթիւ թիւրքիական ցենզուրայի խորհրդաւոր պատճառարանութիւնը հետեւալն էր։ «Ի նկատի ունենալով խմբագրութեան ընթացքը»...

Գեր. թարգ. Լիտն Բարայեան

ԳԻԼԱՆԻ ՀԱՅԵՐԸ

Գիլան նահանգը Պարսկաստանի ամենահարուստ նահանգներից մէկն է: Հին ժամանակներից այսուղ եղէլ է հայ գաղութ, բեկորները զանազան փոփոխութիւններով հասել են մինչև օրս: Թէս այդ հին բնակիչներից այժմ շատ քչերն են մնացել, բայց ներկայում շատ տեղերից հաւաքւում են այստեղ հայեր, խառնուում այդ մնացորդներին և կազմում Գիլանի հայ գաղութը: Արժէ մի փոքրիկ ծանօթութիւն այս նահանգի և նրա բնիկների մասին և ապա անցնել հայերին: Դրանով աւելի կպարզուի, թէ ինչու հայկական կենտրոններից կտրուած, կզգիւացած այդ երկրից հայերը չեն կտրում և իրանց բախտը փորձել են բոլոր ժամանակներում:

Գիլան կամ Գելան նահանգը ընկնում է Կասպից ծովի հարաւարեմտեան ափին: Ունի 11,000 քառ. կիլոմետր տարածութիւն, Ռուսաստանից բաժանում է Աստարա գետով և տարածուում գէպի արեւելք մինչև Տեմրշէ. 220—300 կմ. լայնութիւն ունի ելլուրս լեռնաշղթայից մինչև էնզելիի ծոցը: Գիլանը ներկայացնում է ճահճային մի հարթութիւն, ծածկուած խիտ անտառներով, որոնց մէջ ծածկուած են դիւզերը. բազմաթիւ մանր և կարճ գետեր թափեւում են կասպից ծովը, դրանցից իւր մեծութեամբ և առաստ ձկներով նշանաւոր է Սէֆիա-րուտը: Լեռնային ստորոտներում բուսականութիւնը փարթամ է, հարուստ է այգիներով և պաղատու ծառերով, իսկ դաշտային մնացած մեծ տարածութիւնը բնուած է ամբողջապէս բընձի արտերով և թթենիներով: Կլիման խոնաւ, փոփոխական և վատառողջ է: Սեպտեմբերից մինչև ապրիլ անձրեային շըջան է համարուում. անձրեներ գալիս են շաբաթներով անընդհատ, ծածկում են ջրերով տարածութեան մեծ մասը: Դեկտեմբերի վերջերին և յունուարին գալիսէ անձրեախառն ձիւն, որը շուտով վերցում է: Ֆլորան և ֆաունան (բոյսերը և կենդանիները) առիական են, անտառներում յաճախ պատահում են մեծամեծ կաղնիներ: անտառներում և շամբուտներում խմբե-

ըովլ թափառում են վագրեր, ընձառիկւծներ, լեռնային ոչխարն ներ և վայրի խողեր, թէ վայրի թէ ընտանի խաղող ամետեղ լիքն են, բայց ընդհանրապէս պառողները շատ վատ տեսսակի են պատկանում: Հայցահատիկներից ցանում են ցորեն, գարի (սահմանափակ քանակութիւնը) և բրինձ, որը մեծ արտահանութիւն ունի: Շերամապահութիւնն շատ զարգացած է և գրեթէ բոլոր բնակիչները պարապում են գրանով: Այժմ մեծ քանակութեամբ գործարաններ են հիմնել Գիլանի կենտրոններում՝ յոյները, եւրոպացիները, հայերը և պարսիկները: Տարեկան 5,800,000 բուբլու մետաքսէ արտահանելում այս նահանգից: Մեծ քանակութեամբ մշակւում է այստեղ ընտիր ծխախոտ և բամբակի: Ընդհանրապէս շերամի, բամբակի, բրնձի, ծխախոտի արտահանութիւնից տասնեակ միլիոն գրամ է թափուում այս նահանգը՝ գրանով է բացատրում, որ այս նահանգի բուլոր բնակիչները համեմատած Պարսկաստանի միւս բնակիչների հետ բարեկեցիկ են և հարուստ:

Եթէ հոդ տարուի այս երկրի բարեկարգութեան վրայ, մեծամեծ օգուտներ և արդիւնքներ կարելի է ստանալ. մինչև այժմ բոլորը գրեթէ նահապետական ձեռվ է կատարուում:

Գիլանի բնակիչները հաշում են 150—260,000, որոնք իշրանտական ցեղի հին բնակիչների, քուրդերի ու թիւրքերի խառնուրդից են առաջացած. խօսում են պարսկերէնի մի բարբառով, որը «Գիլաքի» է կոչւում:

Ժողովրդի գլխաւոր սնունդն է բրինձը և կանաչներն, բնաւորութեամբ շատ խաղաղն, աշխատաէր և ոչ մոլեսուալ:

Գիլանը մինչև XVII-րդ դարը փոփոխակի պատկանել է տաճիկներին և պարսիկներին. XVIII-րդ դարի սկզբներում կարճ ժամանակով անցաւ ուսմների ձեռքը, գրանից յետու 1732 թուին (Նադիր շահի օրով) կերչնականապէս անցաւ պարսիկների ձեռքը: Գիլանի վրայով է անցնում հարաւ արեելան Եւրոպայի ճանապարհը դէպի Կենտրոնական Ասիա և Հնդկաստան: Կասպից ծովի հարստացին ափով ձգւում է Բուլիարայի, Հերաթի, Կաշգարի և Հնդկաստանի ամենակարճ ճանապարհը և ժամանակով մեծ ապագայ է խօստանում այս երկրին:

Մինչև 1870-ական թուականները ուուները այնքան մեծ յարաբերութեան մէջ չէին պարսիկների հետ, միայն այդ թուականից սկսուեց ուստական ապրանքների ներմուծումը էնզելիի վրայով Պարսկաստան և այժմ գրեթէ հիւսիս-արևմտեան Պարսկաստանի շուկաները բռնել է¹⁾:

1) Թուերը և մի քանի տեղեկութիւնները քաղել եմ Մելքոնովի գրքից:

Տնտեսական բարեկարգութան չէ համապատասխանում ժողովրդի մտաւորը, որը շատ յետ է: Ամբողջ նահանգում չկայ մի կանոնաւոր դպրոց, իւրաքանչիւր մօլլա գիւղում թէ քաշ-զաքում հաւաքում է իւր գլխին մի քանի մանսուկների և սովորեցնում «ղորանը»: Կերջին տարիներս Ռաշտում բացուեցին երկու դպրոցներ եւրոպական տիպի, այսինքն աշակերտները նստում են նատարանների վրայ, դասաւանդում է ուսաերէն և ֆրանսերն լեզուներ, թուաբանութիւն, աշխարագրութիւն: Դրանցից մէկը, «Մուզաֆէրիէն» պետական դպրոց է, բայց նիւթակսնի պակասութեան պատճառով ուսուցիչները ամիսներով չեն ստանում իրանց ոռոգիւները, որոնք հաւաքում են հաւրուստներից իրեւ նուէրներ: Ուսուցիչները զարձեալ նոյն մօլլաներն են, միայն գիրեքտորը ինչոր պարսկական դնդապեալ է: Այդ դպրոցը համապատասխանում է մեր երկրասեան կամ երեք զասարաննեան գլացներին: Միւս դպրոցը աւելի ցած է և ընդհատումներով է շարունակւում: Ամբողջ նահանգի լուաւորութիւնը այս երկու հիմնարկութիւններից պիտի տարածուի: Այս է ահա Գիրլանի բնիկ ժողովուրպի տնտեսական և մտաւոր վիճակը: Այստեղ կան փոքր քանակութեամբ հրէաներ ու ցիգաններ: Պարսիկներից յետոյ երկրորդ տեղը իրանց թուով ու խաղացած դերով բռնում են հայերը:

Հայերը հաւաքուած են երկու կենտրոններում, Ռաշտում և էնդէլիում: Էնդէլիի հայերն շատ քիչ են, ընդամենը հազիւմի 30—35 տուն լինեն: Սրանք ունեն իրենց դպրոցը (մի դասեան), ուր սովորում են 20 աշակերտ-աշակերտուհիներ, զըրագարան ընթերցարան, փոքրիկ թատրոնական սրահ և բեմ, ուր սիրողները ներկայացնումնեն և երեկոյթներ են տալիս յօպւու տեղական հասարակական հիմնարկութիւնների:

Հայերի մեծ մասը հաւաքուած են Ռաշտ քաղաքում, որը Գիլանի կիսարոնն է, ուր ամփոփուած են նահանգի կառավարութեան բոլոր հիմնարկութիւնները: Քաղաքը ընկած է մի հարթ տարածութեան վրայ, որը գեղեցիկ կերպով մշակուած է: Ունի 40—50 հազար բնակիչ, հայերը և օտարազգիները ազգաբնակչութեան ամենաչնչին մասն են կազմում, թէև սրանց թիւը տարեց տարի աւելանում է: Գիլան նահանգի հարաստութիւնը, Ռաշտի, առետրական տեսակետից, յարմար դիրքը, գէպի իրան է ձգում թէ հայերին և թէ եւրոպացներին:

Ռաշտը Պարսկաստանի հին և վաճառաշահ քաղաքներից մէկն է շատ հին ժամանակներից: XVIII դարի սկզբներից դեռ յիշւում էր այս քաղաքը իրրե մի առետրական կենարոն: Լինելով կասպից ծովի ափին (10—12 վերստ հեռու ծովից,)

որա վրայով էր գլխաւորապէս կատարւում Պարսկաստանի, Ռուսաստանի և վերջինիս վրայով Եւրոպայի վաճառականութիւնը: Պետրոս Մեծի արշաւանքների ժամանակ Թիլան նահանգի հետ այս քաղաքն ևս տնյնում է ոռուաց ձեռքը և զանոնում ոռուաց և պարսից զիպլօմատիայի կենարոնը: Այստեղ էին պատրաստում և ստորագրում յիշեալ պետութիւնների մէջ զանազան գանագրեր, Պետրոս մեծի յաջորդների ժամանակ նորից Ռաշտան անցնում է Պարսից ձեռքը Նադիր շահի օրով 1732 թւին: Դեռ այս ժամանակ նոյն իսկ յիշւում է, որ Ռաշտում գտնուում էին բաւականին հայեր, որոնք հաստատուել էին այստեղ առևտրական և ուրիշ նպատակներով: Այդ ժամանակներից մինչև այժմ հայ գաղութը գոյութիւն ունեցել է Ռաշտում, երբեմն մհծացել է դա, երբեմն փոքրացել՝ նայելով Պարսկաստանի ոչժիմին և տիրող գրութեանը: Այժմ նկատելի է, որ հայերը արագ կերպով շատանում են այստեղ: Եկուորներն թէ Պարսկաստանի և թէ Ռուսաստանի զանազան տեղերից են, որոնց թիւը կլինի 90—100 տուն, և որոնք պարապում են վաճառականութեամբ, արհեստներով և ողելից խմիչքներ ծախելով, (վերջիններով պարապում են բուն տեղացի միքանի ընտանիքներ և Սպահանից ու Համագլանից եկածները):

Չնայելով Ռաշտի հսութեանը, իր գիրքին ու կատարած գերին, մինչև այժմ էլ սա մի անշուք, պարսկական տիպի քաղաքէ զեռ մնացել: Նոյն սովորական նեղ ու կեղասու փողոցները, անշուք տները, մեծ մասը մի յարկանի, այն տարբերութեամբ միայն, որ տները չեն շրջապատուած այստեղ մի տեսակ հարեւմական անթափանցելի պատերով, որպէս յատուկ է պարսկական քաղաքներին: Լուսամուտները, պատշգամբները նայում են փողոցների վրայ և դա այստեղ չէ գայթակղեցնում «ղուրանի» հետեւղներին: Ընդհանրապէս այսկողմերի մահմեղական տարրը աւելի հանդարտաբարոյ և խաղաղ է, չունի այն խիստ մոլեռանդութիւնը և գիշատիչ յատկութիւնները, որոնք յատուկ են Ատրպատականի և Կովկասի մահմեղական բնակիչներին:

Պարսկաստանի մէջ ժողովրդական շարժութեները ամենից առաջ սկսուել են Ատրպատականում: Այս նահանգի հայ տարրը աւելի բախտաւոր է եղել, քան Պարսկաստանի միւս մասերի հայը: Այստեղի հայը աւելի շուտ է քնից արթնացել, դպրոցների և հասարակական գործերի մասին մտածել: Լինելով Պարսկահայոց ամենահայաշատ նահանգը, սահմանակից լինելով Ռուսահայոց և Տաճկահայոց, բնական է որ այս տեղի հայը աւելի պիտի ազգուէր իւր հարևան արիհնակիցներից, որոնց

մտաւոր և հասարակական կեանքը անհամեմատ աւելի առաջ էր գնացել: Եւ պարսկահայերի մտաւոր վերածնութիւնը, եթէ կարելի է այդ տակ, գլխաւորապէս եղել է ոռուահայոց ազգեցնեան տակ և այս ազգեցութիւնից աւելի պիտի օգտուէր սահմանակից ամենամոտիկ նահանգը—Ատրպատականը:

Այս նահանգում իրանց գործունէութիւնը սկսեցին այն սուսահայ գործիչները, որոնց նպատակն էր նպաստել Պարսկահայոց կրթական գործին: Շուտով որանց միացան և այն անհամեներն ու խմբերը, որոնք եկել էին այդ տեղ պատրաստել հող և ճանապարհ ժողովրդի ապագայ բարօրութիւնների համար...

Այդ շարժումները բաւական ուշ թափանցեցին Պարսկաստանի միւս մասերում: Թէհրանի և Ն. Ջուղայի նման կենտրոններում հայերը բաւական յետ մնացին Ատրպատականից. հուր մնաց միւս երկրորդական մասերը, ինչպիսի են Համադան, Գիլան և այլն: Վերջիններից շատերը գեռ մինչև օրս ել խղճալի դրութիւն են ներկայացնում իրանց մտաւոր վիճակի կողմից:

Ռաշտ քաղաքի հայերը, ինչպէս և Գիլանի միւս տեղերի հայերը, շնորհիւ երկրի գիրքին և իրանց անտեսապէս աւելի բարտոք գրութեանը, պէտք էր սպասել, որ աւելի արդիւնք ցոյց տուած պիտի լինէին, գրանց մտաւորը, հասարակական գործերը տաելի նախանձելի վիճակի մէջ պիտի լինէին, բայց ցաւելով պիտի ասել, որ Ռաշտի հայը չէ կարողացել օգտուել ոչ իւր դիրքից և ոչ անտեսական լաւ գրութիւնից:

Մինչև շատ մօտ ժամանակներս Ռաշտի հայ ժողովրդի կեանքը եղել է միօրինակ, քնած վիճակում, որպիսին է այժմ Ներս շրջապատող ժողովրդի կեանքը: Այդ խաղաղ նինջի շրջանում երբեմն-երբեմն ընկել են այս տեղ թոյլ կայծերի նման զմնազան գաղափարներ, առաջացրել են անհամերի մէջ տրամադրութիւն՝ կազմակերպել այս ինչ կամ այն ինչ հասարակական հիմնարկութիւնը, կամ եղածը բարեփոխել, բայց շուտով հանդել են, կայծերը ոչնչացել, տրամադրութիւնները և կեանիքը իւր սովորական կերպարանքն է բնդունել:

Թուենք Ռաշտում եղած հայերի հասարակական հիմնարկութիւնները՝ վազուց է, որ այս քաղաքի հայերը կազմել են «Թուտելիսասիրաց» անունով մի ընկ, որի նպատակն է նպաստել ներկայացումների միջոցով ժողովրդի կրթութեանը և շնորհիւ ընկերութեան վարիչների անպատրաստութեան և անհոգութեան հչ միայն չեն իրականացրել ընկ. նպատակը, այլ և գարձրել են այս հիմնարկութիւնը մի մեռած մարմին, որը առունով միայն գոյութիւն ունի:

Մենք ծանօթացանք ընկերութեան թատերասրահի, բեմի հետ. որչափ ողորմելի է դրանց պատկերը, նոյնչափ ողորմելի և խղճալի են մնացած անհրաժեշտ պատրաստութիւնները — հագուստները, գրիմի պարագայքը և այլն: Եթէ որևէ ներկայացում ցանկանան տալ, չունեն կանոնաւոր պիչսաներ և մէջ տեղ են բերում անդրջրհեղեղեան պիչսաներ, ընտրում մէկը և ներկայացնում: Հետևանքը լինում է այն, որ այդպիսի ներկայացումներով կերակրելով հասարակութիւնը, ընկերութիւնը պատճառ է գառնում ժողովրդի մէջ թատրոնի գաղափարի սխալ հասկացողութիւն կազմելուն, որը նայում է գեղարուեստին, այդ կրթական հիմնարկութեանը, որպէս մի ցիրկի, օյինըազութեան վրայ: Սրա վրայ աւելացրէք և այն, որ յաճախ կանացի գերեր կատարում են տղամարդիկ: Տեղական տարրը բեմ բարձրացող կնոջ վրայ «ծուռ» աչքով է նայում, իբրև ոչ «բարոյական գործի» և զլանում է կանացի ոյժեր տալը:

Թէ քանի տարի է որ «թատերասիրաց» ընկ. գոյութիւն ունի, ևս չկարողացայ իմանալ, որովհետեւ չկան մէջտեղ ոչ տեղեկագրեր և ոչ էլ որևէ գօկումնուններ: Նոյնպէս ձիշա կերպով չկարելի գաղափար կազմել նրա անձաց գործունէութեան և գրամական հաշիւների մասին: Սա միայն յայտնի է, որ ընկերութիւնը ունի մի քանի հարիւր թուման փող (գումարը այժմ յայտնի չէ), տրուած տոկոսով. թէ երբ է այդ փողը յանձնուել հոգաբարձութեան, ի՞նչ հաշիւներով, ի՞նչ սրոյմաններով յայտնի չէ: Ընկերութիւնը իւր ձեռքին չունի գոկումնուններ, հաշուէտութիւնը չէ եղել և յայտնի չէ թէ այդ փողը յանձնուել է հասել: Միայն այսքան է յայտնի, որ այդ փողը հոգաբարձութեան է յանձնուած իբրև ֆօնդ (միւս գումարների հետ), տղայոց գպրոցի շէնքի համար, այն պայմանով, որ ընկերութիւնը իրաւունք ունենայ օգտուելու ձրիապէս գպրոցի թատերասրահից: Բայց քանի որ այժմ ոչ գպրոցն է շինուած և ընկ. վարչութիւնն էլ կաղմալուծուած է և ամեն ինչ երեսի վրայ ձգած առանց հետաքրքրութեան, հետեւապէս, ամեն ինչ կմնայ անորոշութեան մէջ, մինչի.... այս մինչեւլով ով որքան կուզէ թող այնչափ ընդունէ:

Մի քանի տասնեակ տարի է, որ գոյութիւն ունի այստեղի հայոց հասարակական զբաղարան-ընթերցարաննը, որը հիմնուած է զարկ տալու և նպաստելու ժողովրդի ինքնակրթական գործին: Թէ ժողովուրդը ո՞րքան է օգտուել այդ հիմնարկութիւնից և որչափով է «ինքնակրթուել»—այդ երևում է նրա վերաբերմունքից դէպի հիմնարկութիւնը և այն անհայտանձելի

վիճակից, որի մէջ այսօր գտնուում է նա: Մինչև 1899 թիւը գրադարան-ընթերցարանը կառավարուել է առանց որևէ կանոնադրութեան, ընկած է եղել զանազան վարչութիւնների ձեռքը, որոնցից անցել է պատահական, ոչ ընտրովի անհամաների ձեռք, որոնք առանց որևէ խոճի խայթի, ուղղակի բարբարոսական կերպով են վարուել մի հասարակական սեփականութեան հիտ և նրան կատարեալ քայլայման ենթարկել: Զէ եղել կանոնաւոր հաշուէտութիւն անյատացրել են գրադարանից ամենալաւ գրքերը, նոյնիսկ աթոռները: Բաժանուրդները չեն վերադարձրել տարած գրքերը և 98ր: Քննիչ յանձնաժողովը ստիպուած է եղել մի յայտարարութիւնով գիմել հասարակութեանը և խընդուել, որ վերադարձնեն գրադարանի գրքերը և յայտնեն յանձնաժողովին, թէ ով, մրտեղ տեսել է գրադարանին պատկանող գիրը (որովհետև նշանակուած չէ՝ եղած գիրը տանողների անունները): Կողոպտուաց կատարեալ անհելու համար, գրադարանի ցուցակից «ղեկավարները» պատուամ են 16 թերթ, որ յայտնի չենի անցած դարձածը:

Այս գրութեան մէջ քաշ է գալիս գրադ-ընթերցարանը մինչև 98 թուական, երբ նրա գրապահնը անձնասպան է լինում և գրադարանն էլ փակւում է մի քանի ամսով: Գրադարանի բալանիքները և եղած գրամմերը ընկնում են ոռւսաց հիւպատոսարան, գրքերը մնում են գրաւ տեղական վաճառակտներից մէկի մօտ, իւր քարվանսարայի վարձի գիմաց մինչև վճարելը: Այս բոլորից յետոյ նոր է հասարակութեան կողմից մի յանձնաժողով նշանակուած գրադարանի քայլայուած դործերը կարդի դնելու:

1904 թուի վարչութիւնը աւելի գործունեայ է գտնուել իւր նախորդներից. չսայելով այն քայլայուած գրութեան, որի մէջ գրադարանն էր գտնուում, վարչութիւնը ոչ մի աշխատանք չը-ինայեց նրան քիչ թէ շատ կանոնաւորելու: և այդ յաջողուեց նրան մասամբ:

Այս վարչութեան ներկայացրած տեղեկագրից երեսում է¹⁾ որ տարուայ ընթացքում գրադարանը մուտք է ունեցել 1381դր. 70կ. (մօտ 200 բուրլի) և ծախը՝ 1283դր. 60կ. (185 բուրլ.): Ծնթերցարանը ամեն օր ունեցել է յաճախորդներ 5-10 հոգի, գրադարանից օգտուել են 90 հոգի:

| | | | | | |
|-----------|-------|------------|------------|------|------|
| Հայերէն | գրքեր | կարգացուել | է ընդամենը | 1473 | կտոր |
| Ռուսերէն | » | » | » | 58 | » |
| Ֆրանսերէն | » | » | » | 15 | » |

¹⁾ Այս առաջին վարչութիւնն է, որ ժողովրդին կանոնաւով կերպով աշիւ է տալիս:

| | | |
|------------------------------|-----|---|
| Գրադարանն ունի հայերէն գրքեր | 686 | » |
| Ամսագրներ և լրագրներ | 182 | » |
| Ռուսերէն գրքեր և ամսագրեր | 285 | » |
| Ֆրանսերէն » | 117 | » |
| Դերմաներէն » | 31 | » |
| Անգլիերէն » | 18 | » |

Հնդկամենը 1318 կտոր.

Գրադարան-ընթերցարանը զետեղուած է մի խոնաւ նկուղի մէջ, որտեղ երբէք լոյս չէ թափանցում, եթէ կարիք լինի ցերեկները օգտուելու ընթերցարանից, պիտի անպատճառ լամպաները վառել: Բացի այդ, մթութեան այնպիսի սոսկալի խոնաւութիւն ունի այդ նկուղը: որից վիթում են արագ կերպով գրքերը, որոնք տեղաւորուած են պատերի դարակներում:

Բնական է, որ այսպիսի ընթերցարանից օգտուել չի լինի և նոյնիսկ վտանգաւոր էլ է նստել գոնէ մի ժամ, մանաւանդ ձմեռ ժամանակ: Գրադարանը ունի 414 թուման (750 ըռլբլի) փող հոգարաքութեան մօտ, որը թողնուած է իբրև փօնդ՝ տղայոց շէնքից մի սենեակ յատկացուի գրադարանի համար: Տ—6 տարի է անցել այդ օրից և գեռ ոչ դպրոցն է շինուել, ոչ էլ գրադարանը օգտուել: Այժմ, երբ դպրոցի շինելուն ձեռնարկել է պր. Ա. Յորդանանեանը, կարծիմ ժամանակ է և այս խնդիրը կարգադրել և գրադարանը ազատել այդպիսի նկուղներից, ապա թէ ոչ ներկայ պայմաններում նա չէ ծառայում իւր նպատակներին:

Այժմ գրադարանը ստանում է Կովկասի և արտասհմանեան հայ թերթերը, իսկ սուսականներից ստանում է միայն «Պս. Եկկ.» և «Պատառակ»:

Պարսկահայ կանանց մէջ տամնեակ տարուց ի վեր է մի շատ համակրելի գործունէութիւն է սկսուած, որը արժանի է ամենայն քաջալերութեան և աջակցութեան: Դա այս բարեկործական հիմնարկութիւններն են, որոնք հետզհետէ կազմւում են Պարսկաստանի զանազան քաղաքներում այս երկրի հայուհիների ջանքերով: Թէ որչափ կարօս են այդ բարեկործական ընկերութիւններն ու հիմնարկութիւնները ժողովրդի թէ կրթական և թէ այլ կարիքների համար, թէ որչափ ժամանակակից պահանջ է և կարիք կանանց գործունէութիւնը հասարակական ասպարիզում նպաստելու կրթական գործին՝ դա կզգայ ամեն մէկը, ով մի անգամ կիործի հետաքրքրուել պարսկահայոց կրթական գործով, կիործի ծանօթանալ կանանց դործունէու-

թեանը այդ ասպարիզում։ Այսօր, համարեա Պարսկաստանի ամեն մի քաղաքում, ուր հայի համայնք գոյութիւն ունի, որը ունի իւր զպրոցը, իսկոյն նրա կողքին էլ կազմուած է կանաց որեւէ ընկերութիւն՝ նպաստելու այդ զպրոցին, յատկապէս իգական սեսի կըթութեանը։ Այդպէս է ամեն տեղ, Թաւրիդ, Թէհրան, Ռաշտ, Ջուղա, Սալմաստ, ամեն տեղ, ուր ժողովուրդը ըիշ թէ շատ զգացել է կըթութեան անհրաժեշտութիւն։

Բարեգործական այս հաստատութիւններում պարսկահայուն պակաս դեր չէ կատարել կըթական ասպարիզում։ Ի՞նչ կլինէր այն զպրոցների գրութիւնը, որոնք նիւթական կողմից սաստիկ անապահով զրութեան մէջ են գտնւում, եթէ զբանց օգնութեան չհասնէր կինը իւր այդ հիմնարկութիւնովը։ Ես կրկնում եմ, կինը Պարսկաստանում, այս ասպարիզում տղամարդուց շատ աւելի եռանդ և արգիւնաբեր գործունէութիւն է ցոյց տուել։ Միայն մի պակասութիւն կայ, որ նոքա իրանց ձգտուան և եռանդի համեմատ չունեն մտաւոր պատրաստութիւն և ինքնուրոյն կերպով չեն կարողանում զեկավարուել, որի պատճառով յաճախ զանազան անձերի են ենթարկուում, որոնք շատ դէպքերում իշարն են գործ դնում իրանց խորհուրդները։

Կանաց մի բարեգործական ընկերութիւն էլ ահա այստեղ, Ռաշտումն է հիմնուած 1899 թւականից։ Զէ կարելի չըշխոստվանուել, որ այստեղի կանաց ընկերութիւնը շատ մեծ ծառայութիւններ է արել զպրոցներին։ 99 թւականից նա իւր հովանաւորութեան տակն է առել օրիորդաց զպրոցը, վճարել է նրա ամբողջ ծախսելը մինչև 190³/4 ուս. տարեցջանը։ Սրա պահած դպրոցը շնորհիւ նիւթականի՝ ապահովութեան աւելի բարեկարգ գրութեան մէջ է եղել քանի տղայոց զպրոցը, որ հասարակութեան խնամքին է թողնուած եղել։ Այս ընկերութիւնը գործել է իւր գրամագլխի համաձայն սահմանափակ շրջանում — այն է նպաստել տեղական օրիորդաց Մարիամեան դպրոցին, ինչպէս զրում է նա իւր կանոնադրութեան § 1-ում։

Թէպէտ ընկերութեան նպաստակը եղել է աւելի ընդարձակ գործունէութիւն, այնէ՝ բացի օրիորդաց զպրոց կառավարելուց և ունենալ մի մանկապարտէզ, կարուծելի արհեստանոց, ժողովրդական աղէտների ժամանակ՝ «նպաստել չարիքի մեղմանալուն», օգնել թշուառ ընտանիքներին նիւթապէս և բարոյապէս, օգնել այլ աեղերի հայ զպրոցներին, առաջադէմ աշակերտաշակերտահիներին միջոցներ տալ շարունակելու իրենց ուսումը, բայց այս բոլորից, ընկ. դեռ միայն օրիորդաց զպրոցին է օգնել։ Հանգամանքներին ծանօթ մարդը շատ գոհ է

լինում ընկ. և այս գործունէութեամբ, եթէ դա կանոնաւոր և տևական կատարուի: Ընկերութիւնը իւրաքանչիւր տարի ծախսել է գպրոցի վրայ 600—700 թուման (ներկայ կուրսով մօտ 2000-2150 ըուրլի), իհարկէ գպրոցի վիճակախաղի, թոշակների և մի քանի խանութների վարձը և արդիւնքն ինքն է ստացել:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Ռաշոփ հայերի համար, այս ընկ. գոյութիւնը և գործունէութիւնը չափազանց կարեռ է: Այժմ տեսնենք թէ ինչպէս է զեկավարուել և կառավարուել ընկերութիւնը և ինչ գրութեան սէջէ գտնւում նա այժմ:

Ընկերութեան վարիչ մարմինն է վարչութիւնը, որը ընտրւում է ընդհանուր ժողովի կողմից երեք տարի ժամանակով: Թէ այժմ մըշափ զրամագլուխ ունի ընկերութիւնը և ինչ պայմաններում է գտնւում յայտնի չէ, որովհետեւ ընկերութիւնը չէ տուել ոչ հաշիւ և ոչ տեղեկագիր, որից հնար լինի քաղել տեղեկութիւններ: Որքան կարողացայ ևս տեղեկանաբ ընկ. միմիայն առաջին տարին է հաշիւ տուել, որով նա այդ թվի վերջում (99 թ.) ունեցել է 14962 դռ. 72½ կոպ. մուտք: Նոյնպէս այդ տեղից երևումէ, որ այդ մուտքը (որը և գրամագլուխն է կազմել) եղել է ալ. Աղաւէլ Յովսէփիեանի և տիկ. Հեղինէ Տէր-Օհանեանի ջանգերով, որոնք Բագու են հանգանակել ալլ գումարի մեծ մասը:

Թէ յետոյ ի՞նչ է եղել, աւելացել, պակասել է—յայտնի չէ և մինչև այսօր էլ գեռ ընկերութիւնը հաշիւ չէ տուել: Այսքան յայտնի է, որ ներկայումս շատ աննախանձելի զրութեան մէջ է գտնւում, նաև համարեա բոլոր գործերը կանգ են առել: Տարուց աւել է, որ նա ոչ մի մուտք չէ ունեցել, բացի անդամավճարներից, որոնք չեն գանձուած ամբողջութեամբ անցեալ տարի, և չէ գանձուել բոլորովին այս տարի:

Նոյնպէս, թէ և ցաւալի է յիշել, ընկերութիւնը գաղարեցրել է իւր նպաստը տալ գպրոցին այս տարի և հոգաբարձութեան ու ընկ. բանակցութիւնները ոչ մի արդիւնք չտուին: Եթէ ընկ. նախակին ձեռվ չօգնէ օրիորդաց գպրոցին, նա իւր նպատակին թէ ծառայած չի լինի ըստ իւր կանոնադրութեան և թէ շատ վատ գրութեան մէջ զըրբած կլինի գպրոցները, քանի որ հասարակութիւնը անկարող կըլինի հոգալ և լրացնել երկու գպրոցների բիւղջէն:

Համոզուած եմ, որ ընկերութիւնը կարող էր աւելի մեծ գործեր կատարել, իրականացնել իւր ծրագիրը, եթէ նա գործէր եռանգով և կանոնաւոր կերպով: Ժամանակ է որ ընկ. սկսի իւր ընդհատուած գործունէութիւնը և ձգուի իրագործել

իւր նպատակները, լաւ է ուշ քան երբէք։ Եթէ այսպէս շառըունակի մի տարուց յետոյ բոլորովին կը քայքայուի այդ օգտակար հիմնարկութիւնը, որը այնքան անհրաժեշտ է հասարակութեան համար։

Ռաշտում դպրոց գոյութիւն ունեցել է մօտաւորապէս 70—ական թւականներից։ Սկզբներում խալիֆայական տիպի է եղել և ապա հետզհետէ փոխուել է նոր ձեի։ Օրիորդաց դպրոց բացուն է 80—ական թուերին։ Թէ օրիորդաց և թէ տղայոց դպրոցները մինչև վերջին ժամանակներս զետեղուած են եղել խոնաւ, մութ խցիկներում, որոնք դտնուում են եկեղեցու բակում և յանձնուում են եղել մի ուսուցչի ու վաժուհու հակոզութեան։ Այդ դպրոցները մտաւոր ոնունդ չտալուց բացի, աւելի վնասել են աշակերտ-աշակերտուհիների աւողջութեանը։ Այդպիսի գոմերում, որոնց խոնաւ պատերից ջուրը կաթկաթում է, տեղաւորելով փոկրիկներին, բնական է, որ պիտի դժոխք թուար դպրոց ասած բանը նրանց, այն էլ այն ժամանակուայ պայմաններում։ Ամպամած օրերը լամպի լոյսով են պարապել երեխանները։

Այս սպանիչ դրութիւնից աշակերտուհիներին աղատել է պ. Աղաւէլ Յովսէփեանը, տեղացի մի վաճառական, որ իւր հաշուով շինել է օրիորդաց Մարիամեան դպրոցը և նրանց փոխադրել այնտեղ։

Տղաները մնում են դարձեալ մինչև օրս էլ դեռ իրանց նախկին խարխուլ դպրոցում, որը աւելի շուտ գոմի է նման քան դպրոցի։

Քանի տարի է փողեր են հանդպանակլում տղաների համար դպրոցական շենք կառուցանելու, բայց մինչև այժմ ոչ ձեռնարկուած է այդ գործին և ոչ հաւաքուած գումարների հաշիւն է արուած, հոգաբարձութեան անհոգութեան շնորհիւ Տղաների համար էլ անցեալ տարուանից պ. Ա. Յորդանանեանն է ձեռնարկել մի դպրոց շինելու, որը այս տարի նոր պատրաստ կը լինի նի, որով և աղատուած կը լինեն աշակերտներն էլ իրանց սպանիչ պարմաններից։

1898 թուականից օրիորդաց դպրոցի կառավարութիւնը անցնում է կանանց բարեգործ ընկ. ձեռքը և դնուում քիչ թէ շատ բարուոք պայմանների մէջ։ Տղայոց դպրոցը մնում է հոգաբարձութեան ձեռքի տակ, որը իր անստարբերութամբ հասցնում է նրան քայքաման։ 1903 թուի սկզբում այդտեղ կային 11 աշակերտ յանձնուած մի ուսուցչի խնամքին։

1903/4 ուսումնական տարուց նոր տղայոց և օրիորդաց դպրոցները միացնուում են և յանձնուում մի ուսուցչական խմբի կա-

ուավարութեան, որով հիմք է տրւում փոքր ի շատէ կանոնաւոր ընթացքի, մշակւում է նոր ծրագիր և այլն:

Այժմ տղայոց և օրիորդաց դպրոցներն ունեն 6 տարուայ դասընթաց (գ. հիմն. դաս.). յաճախում են մոտ 70 աշկերտաւաշակերտուհիներ, որոնց դասաւանդում են 5 ուսուցիչներ և ուսուցչուհիներ: Ապագայում կաւելանայ աշակերտաւաշակերտուհիների թիւը և կրարձրանայ դպրոցների դասընթացը:

Մ. Գրիգորեան

ՀՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՀՈՒԽՎՅՆ ԱՆԳԼԻԱՅՑՈՒՄ

I

Այս յօդուածիս նպատակն է ծանօթացնել հայ ընթերցողներին ընտրողական այն կարգերի և սովորութիւնների հետ, որոնք գոյութիւն ունին Անգլիայում. միևնույն ժամանակ ընտրողական իրաւունքի համառօտ պատմութիւնն է արւում այստեղ:

Պատգամաւորական կամ երեսփոխանուկան պետառթեան մէջ իրաւունքի ամենաազլիսաւոր կողմը քաղաքական ընտրողական իրաւունքն է, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ, «որեէ ազգի գերագոյն կամքին մասնակցելու իրաւունք»: Այժմ բոլոր քաղաքակիրթ ազգերի մէջ տարածուած ու ընդունուած է այդ իրաւունքը: Պետութեան մէջ այդ իրաւունքը վայելող անձինք կոչւում են քաղաքական ընտրողներ, որոնց համագումարից կազմում է իրաւարանական ազգը¹⁾:

Մասնաւորելով խօսքերս Անգլիայի նկատմամբ պէտք է ասել, որ այստեղ քաղաքական ընտրողներն համայքներն են, իսկ իրաւարանական ազգը՝ համայնքների ժողովը:

Համայնքների ժողովը ընտրովի պատգամաւորներից է բաղկացած, ուստի նախ տեսնենք, թէ ովքեր կարող են ընտրող ձայն ունենալ և ինչ են ընդհանրապէս ընտրութեան դլիսաւոր:

¹⁾ Основные начала государственного права. Эсменъ. I, 174.

պայմանները: Ընտրողական իրաւունքն սկզբում շատ սահմանափակ էր Անգլիայում: Բայց չնորդիւ 1832, 1867, 1884 և 1885 թուականների պարլամենտական օրէնքների, ընտրողական իրաւունքն հետզետէ աւելի ու աւելի լայն է տարածւում Անգլիայի մէջ: Այդ թուականների բարենորոգութները լաւ հասկանալու համար մի փոքր յիտագարձ հայեցք ձգենք պարլամենտական իրաւունքի պատճութիւնն իրայ:

Միջին դարում, երբ գեռ երկրի մէջ զարգացած չէր խոշոր արդիւարերութիւնը, երբ գեռ չկային մեծ սեփականատէրեր, և երբ անգլիական քաղաքները ազբատ ու չքաւոր էին, ազգաբնակութիւնը տնտեսապէս աշքի չէր ընկնում իւր գասակարգերով: Ուստի և ընտրողական: Ենթակա ընտրելու իրաւունքը բաշխուած էր համեմատաբար աւելի շատերի մէջ: Հենրիխ VI-ի (1321—1471) ժամանակ արդէն ընդունուած կարգ էր, որ իւրաքանչիւր մարդ, ով իւր ունեցուածքից տարեկան եկամուտ էր ստանում 40 շիլինդ (շիլինգը մօտ 50 կոպ.) համարւում էր ընտրող: Այդ օրէնքի շնորհիւ ընտրողական իրաւունքը բաւականին լայն տարածում ունէր, որովհետեւ անգլիական կոմսութիւնների մէջ մասն սեփականատէրերը շատ էին, որոնք կարող էին առաջ բերած պայմանին բաւականութիւն տալ: Բայց յետոյ, 16, 17 և յատկապէս 18 դարում իրերի զրութիւնը փոխուում է, այդ ժամանակ մասն սեփականատէրերը գնալով զրկում են իրանց ունեցուածքից, տնտեսապէս գերի են դասնում մի խումբ մարդկանց ձեռքում, որոնք հետզետէ իրանց իշխանութեան ներքոյ են կենտրոնացնում ահապին կալուածներ: Մանր սեփականատէրերը զըրկուելով կալուածքից, բանուր ու մշակ են դասնում ու հէնց գրանով զրկուում նաև իրանց ընտրողական իրաւունքից, որն և այժմ անցնում է մի խումբ խոշոր կալուածտէրերի ձեռքը:

Միւս կողմից անգլիական քաղաքներն էլ ահապին փոփոխութեան են հաթարկւում: Թաղաքային ինքնավարութիւնը հետզետէ անցնում է տնտեսապէս ազգեցիկ մարդկանց՝ ազատ մարդկանց (Փրիմէն) ձեռքը, որոնք և լինում են քաղաքի իւրական ընտրողները, և որովհետեւ այդպիսի ազգեցիկ ու խոշոր սեփականատէր մարդիկ իւրաքանչիւր քաղաքում համեմատաբար աւելի քիչ կըլինէին, զրա համար էլ քաղաքներում և ընտրողական իրաւունքը կենտրոնանում է քչերի, մի քանիսի ձեռքը: Մի քանի քաղաքներում նոյն իսկ ընտրողների թիւը իջնում էր մինչև երերի: Բացի այդ, թագաւորները սովորութիւններ են անում ներկայացուցիչներ կամչել իրանց ուզած քաղաքներից, այնպէս որ նոքտ շատ անգամ փոքրիկ աւանեուեմբեր, 1905.

ներից ու շէնիրից կանչում էին, իսկ քաղաքներից՝ ոչ: Բայց 17-րդ դարում գործող օրէնք է դառնում այն կարգադրութիւնը, որ «Թագաւորն այլ ևս իրաւունք չունի հրովարտակներ տալու նոր քաղաքներին. այն քաղաքները, որ իրանց ստացած հրովարտակի միջոցով օգտում էին ընտրողական իրաւունքից, կօգտուին և այնուհետև»:¹⁾

Այդպիսով ընտրողական իրաւունքը, որ պետական կարգությոն գործն էր, դառնում է մամնաւոր իրաւունքը: Օրէնքը սահմանափակում է ընտրողների թիւը և թոյլ չի տալիս այնուհետև ընտրողական իրաւունքը տարածել նոր շրջանների վրայ:

17-րդ դարի այդ օրէնքը շարունակում է գործել, բայց կեանքի պայմաններն արագօրէն կերպարանափոխութեան ևն հնթարկում: Յանկարծակի առաջ են գալիս և շատ շուտով զարգանում արդիւնագործութեան մեծ կենտրոններ—Մանչեստըր, Լիվրուլ, Լիվս, Շեֆփիլդ, գրանք դառնում են համաշխարհային առևտուրի կենտրոններ. այդ նորաբոյս քաղաքների ըլնակչութիւնը շուտով աճում է և տասնեակ ու հարիւր հազարների համար: Սակայն և այնպէս գրանք զրկուած են մնում ընտրողական իրաւունքից (համաձայն 17-րդ դարի օրէնքի), այն ինչ տասնեակ աւաններ ու շէներ, որոնց միջի աղդաբնակութիւնը վաղուց նոսրացել, մեծ քաղաքներն էր քաշուելու շարունակում ևն օգտուել ընտրողական իրաւունքից, որովհետև առաջուց տրուած է եղել գրանց թագաւորակուն հրովարտակով: Այդ աւաններից մի քանիսը նոյն իսկ իրականապէս դադարում են գոյութիւն ունենալուց, որովհետև նրանց միջի մի քանի ընակիչները գնում ենում ենունում են և միայն ընտրութեան օրն են գալիս: Վերջ իվերջոյ այդ աւանները դառնում են «ապրանք» և ի վաճառ են հանուում ու գնուում են այս կամ այն խոշոր կալուածատիրոջ կողմից, որը՝ որպէս զի իւր թեկնածուին անցկացնէ, աշխատում է որքան կարելի է շատ ձայն ունենալ, իսկ այդ կախուած էր կալուածքի շատութիւնից:

Ռուս պրոֆեսոր Գրադովսկին մի քանի թուեր է առաջ բերում ցոյց տալու համար, թէ ինչ անկանոնութիւններ կային 18-դարում անպիտկան համայնքների ժողովում, որն իրօք չէր կարող կոչուել «համայնքների ժողով»:

1790 թուին Անգլիայում կային 30 աւան 376 ընտրողներով, որոնք իրաւունք ունէին ուղարկելու 50 պատգամաւոր.

¹⁾ Государственное право-А. Градовский I. 378. հազուագիւտ և խիստ կարեսը զիրք է. հարուստ է մանաւանդ տեղեկութիւններով:

(ուրեմն իւրաքանչիւր աւանից երկու հաւ..). մինչդեռ լոնդոն—Սիտին (հին քաղաքը) որ ունէր 495,550 բնակիչ, կարող էր չորս պատգամաւոր միայն ուղարկել. Ուեստմինիստրը 240 հազար բնակչով, 2 պատգամաւոր էր ուղարկում, կողնուէլու կոմութիւնը աւանների հետ միասին ունենալով 165,000 բը-նակիչ, 44 պատգամաւորի իրաւոնք ունէր. հետեւազէս նրա բնակիչների թիւը երկու անգամ քիչ էր և օգոստոսի բնակիչնե-րից, բայց նա լոնդոնից 10 անգամ աւելի պիտի ուղարկէր պատկամաւոր: 19-րդ դարի սկզբում անգլիական պարլամենտի 658 պատգամաւորները հետեւեալ կերպով էին բաշխուած:

Անգլիական 289 լորդերն նշանակում էին 218 պատ-գամաւոր:

Շոտլանդական 21 լորդերը նշանակում էին 31 պատ-գամաւոր:

Իոլանդական 36 լորդերը նշանակում էին 51 պատգամաւոր: Խոշոր կալուածատէրերը նշանակում էին 171 պատ-գամաւոր:

Մինիստրութիւնն իւր տրամադրութեան տակ ունէր 16 պատգամաւոր:

Իսկ ժողովրդի միւս մասերից ընտրովի դալիս էին 171 պատգամաւոր: ¹⁾

Անա այսպիսի պատկեր է տալիս մեզ պարլամենտական կառավարութիւն ունեցող Անգլիայի մօտաւոր անցեալը: Այդ պատկերից պարզ է, որ պատգամաւորութիւնն ուղղակի վա-ճառքի առարկայ էր և ընտրողական իրաւոնքը ծախու էր հանում: Երկրի ահագին մեծամասնութիւնը անհաղորդ էր մնում պետական—օրէնսդրական կարեռը գործերին: և իշխա-նութեան ամբողջ թափը ընկնում էր մի խումը կալուածատէ-րիրին ու ազնուականներին իրեւ բաժին:

Սակայն իրերի դրութիւնն այդպէս չէր կարող երկար տևել. ժողովուրդը, քաղաքացին ու շինականը չէին կարող եր-կար տանել այդ անօրինութիւնը: Բարենորոգումի, ոեփորմի պահանջը զնալով հասունանում է. մի քանի անգամ հանդէս է դալիս. բայց ապարդիւն, վերջապէս ամերող ուժով արտայա-ւում է 1832 թուականին:

Պարլամենտական ընտրողական իրաւոնքի համար այդ թուականը դարագլուխներից մէկն է: 1832 թուականի ոեփորմը թէկ ոչ կատարեալ, բայց յետագայ կատարելութեան համար բազմաթիւ ճանապարհներ էր պահում իւր մէջ: Այդ թուակա-

1.) Градовский. Государственное право. I 37.

նի «նոր օրէնքը», պարլամենտում պատգամաւորների ընդհանուր թիւը չէր փոխում. առաջուայ նման նրանք 658 հոգի էին, փոխում էր միայն նրանց բաշխումը: Նախ ան բոլոր աւանները, որոնք 2000-ից քիչ բնակիչ ունեին, զրկում էին ընտրողական ձայնի իրաւունքից, այդպիսով ոչնչանում էին ծն«փտած» աւաններ (այդպէս էին կոչում ան աւանները, որոնց սկզբում թագաւորի կողմից ընտրողական իրաւունք էր տրուած և որոնց բնակիչները ժամանակի ընթացքում գնալով հետացել, դատարկ էին թողել աւանը, բայց աւանը այնուամենայինիւ շարունակում էր օգտուել ընտրողական իրաւունքից), որոնք ուղարկում էին 111 պատգամաւոր: Յետոյ, 4000 մորդուց պակաս բնակիչ ունեցող 30 աւան երկ-երկու պատգամաւոր ուղարկելու փոխարէն (այդպէս էր առաջ) մէկի իրաւունք էին ստանում: Եւ վերջապէս մի քանի տեղեր կոմսութեան մէջ միացւում են և զառնում մի ընտրողական շրջան: Այդպիսով ուրեմն ահագին քանակութեամբ տեղ էր բացւում նոր պատգամաւորների համար, ահա այդ տեղերն է որ տրում է նոր բարոյս մեծ քաղաքներին, որոնք մինչեւ այդ, պատգամաւոր չունեին:

1832 թուի սեֆորմը վերջինը չէր իւր տեսակի մէջ, նա կարիք ունէր փոփխուելու և լրացուելու: Կային խմբեր և կուսակցութիւններ, որոնք անբաւական էին այդ օրէնքից: Նախ տորիների կուակցութիւնը դժգոհ էր, որովհետև ոչնչացրուած «փտած» աւանների մեծ մասը տորիների աւաններ էին, մինչդեռ միքանի վիկ աւաններ՝ նոյն պայմանների մէջ, գեռ շարունակում էին գոյութիւն ունենալ: Միւս կողմից չառտիստները պահանջում էին ընդհանուր ընտրողական իրաւունք, առարկելով, որ այդ սեֆորմը բոլոր քաղաքացիներին հաւասար չափով իրաւունք չի տալիս մասնակցելու պետական ընդհանուր գործերին:

Դժգոհութիւնն այդ հողի վրայ հետզհետէ զարգանալով առաջ է բերում 1867 թուի սեֆորմը, որի նպատակը գարձեալ ընտրողական իրաւունքին մամսակցողների թիւն աւելացնելն էր:

Ամերիկ բանւոր դասակարգը, որ գնալով բազմանում էր և XIX դարի առաջին կիսում արդէն զգալի ուժ էր Անգլիայում, անտես էր առնւում 1832 թուի սեֆորմով: Այն ինչ բանւորները իրանց համար քաղաքական կազմակերպութիւններ, ծրագրներ ունեին և պահանջում էին անպատճառ ձայնի իրաւունք ունենալ ընտրութիւնների ժամանակ: 1867 թուի սեֆորմը չունենալով Անգլիայում ընդունուած կալուածական

ցենզը ոչնչացնելու իրաւունք և միւս կողմից ցանկանալով բաւաշանութիւն տալ բանուոր գասակարդի պահանջներին, քչացնում է կալուածական ցենզը. նա որոշում է. «Ընտրութեան իրաւունք ունի ամենալավ ժարդ, որ իւր սեփականութիւնից կամ կապալի միջոցով ստանում է տարեկան 5 ֆ. ստերլինգ եկամուտ (մօս 50 միթ): Իսկ ինչ վերաբերում է քարտաքայիններին, 1867-ի օրէնքը ըստրով է ճանաչում ամեն մի քարտաքայու, ով որ ունի իւր սեփական տունը կամ ով վարձով նստած տանիս է 100 մանէթից ոչ պակաս վարձ:

Անգլիայում մի հին սովորութիւն կար, ով որ չէր կարող աղքատների օգտին սահմանուած տուրքը տալ, իրաւունք չունէր ընտրողական գործողութիւններին մասնակցել. իսկ աղքատների գանձանակից նպաստ սահցողը՝ ուրեմն աղքատը ինքնըստինքեան զուրկ էր այդ իրաւունքից:

67 Ժուի օրէնքը մի նոր տարր էլ էր մացնում ընտրողների մէջ բոլորնոքա, որոնք աւարտել են համալսարանը, բոլոր եկեղեցիների հոգևորականութիւնը, փաստաբաններն ու իրաւարանները, ժողովրդական ուսուցիչները, բանկում 50 ֆ. ստերլինգ ունեցողները-գրանք բոլորը, առանց որևէ այլցենզի, ընտրելու իրաւունք էին ստանում: Իսկ եթէ դրանք բացի այդ պայմաններից, աղքում էին նուև իրանց սեփական տնիքում, այն ժամանակ նոքա երկու ձայնի իրաւունք էին ստանում: Մի քանի «փոտած» աւաններ, որոնք 1832-ի օրէնքով չէին զրկուել ձայնի իրաւունքից, այժմ վերջնականապէս զրկում են: Մի քանի քաղաքների ու կոմսութիւնների պատգամաւորների թիւն աւելանում է: Լոնդոնի համալսարանին ես ձայն է տրում. (Եեմբրիջն ու. Օքսֆորդն ունէին):

Այլպիսով ընտրողական իրաւունքի պահանջներն հետպհետէ քչանում են և մեղմանում, և այդ իսկ պատճառով ընտրողների թիւը շատանում է: 1832-ի օրէնքը ընտրողների թիւն աւելացրեց մօս $\frac{1}{2}$ միլիոնով, իսկ 1867-ի սեփորմը՝ մէկ միլիոնով:¹⁾

Վերջապէս այդ ուղղութեամբ վերջին ուժորմը հրատարակուել է 1884 թուին, երբ կումութիւնների վրայ ես տարածուեցան այն օրէնքները, որոնք քաղաքների համար գոյութիւն ունէին: 1884-ի ուժորմը ընտրելու իրաւունք էր տալիս բոլոր տանտէրերին և վաղձով նստողներին առանց բացառութեան: Ամբողջ երկիրը ընտրողական շրջանների բաժանուեց

¹⁾ Государственный строй и политическая партия в зап. Европе и Сев. Ам. Соед. Штатахъ I Статья Сатурина. 175.

և նոր պատգամաւորներ աւելացան. 18 նոր տեղ Անդլիան ստացաւ, 12 Շոտլանդիան, իսկ Իռլանդիան և Ուէլսը ։ոչինչ¹⁾

Այժմ Անգլիայում պարլամենտական ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունի ամեն մի բրիտանացի քաղաքացի, բացի կանանցից: Թէ ինչու կանայք մինչեւ այժմ չեն մասնակցում ընտրութիւններին—դա մի խնդիր է, որի հետ կապուած են մի շարք կուսակցական, տնտեսական հարցեր և որին դիմելը մեր փոքրիկ յօդուածի ծրագրից զուրս է. այդ խնդրի մի կողմը միայն հարեւանցի կերպով շշափում է այստեղ:

Ընարողական իրաւունքի պահանջների մասին ամփոփելով խօսքերս—ստենք, որ Անգլիայում ընտրողութեան համար հետեւալ գլխաւոր պայմանները կան. ընարողը 21 տարեկանից փոքր չպիտի լինի և պետական կամ քաղաքացիական յանցաւոր չպիտի եղած լինի. ընտրութիւնից առաջ տանուազն մի տարի շարունակ նա պիտի բնակուած լինի այնպիսի բնակարանում, որի վրայ հարկ կայ գրուած աղքատների օգտին:

Ընարելու ձայն չունին, նախ կանայք, ապա օտարերկրացիք, որոնք անգլիացի չեն դրուած. յանցաւուները, հոգեկան հիւանդները, ապուշները. նորա որոնք նպաստներ են ընդունել աղքատաց գանձարաւնից ընտրութիւնն նախընթաց տարուայ միջոցին:

Ինչ վերաբերում է ընտրելի լինելուն, ամեն ընտրող կարող է և ընտրուող լինել. բաւական է միայն լինել 21 տարեկանից ոչ պակաս. ընտրողական, ինչպէս և ընտրելիութեան իրաւունք չունին ազնուականները, այսինքն անգլիական, լորդերը և նոցա աւագ որդիները, ծայրագոյն դատաւորները, կոմսները և վարչական հաստատութիւնների անդամները, ընտրողութիւնները կառավարող և ղեկավարող յանձնաժողովների անդամները, անգլիական և կաթոլիկ կղերականութեան անդամները, գաւաճանները, դատապարտուածները, զաւառների պետական պաշտօննեանները, պետութիւնից թոշակ ստացողները:

Բացի այս ընդհանուր պայմաններից, կան և մի քանի մասնաւոր, զուտ տեղական սահմանափակութիւնները, միայն Անգլիայի, կամ նրա մի մասին միայն վերաբերեալ¹⁾:

1) g. Demonibynes, les constitutions européennes 1883 1 tome, section II
107—113

II

Զնայած որ ընտրողական իրաւունքն Անգլիայում համարեա ընդհանուր է, իւրաքանչիւր ընտրող կարող է և ընտրելի լինել բայց և այնպէս նկատուած փաստն այն է, որ կոմունիտիւններից ու քաղաքներից այնպիսի մարդիկ են գալիս պարլամենտ, որոնք ահապին կալուածքների տէր են: Դա նրանով է բացատրուած, որ Անգլիայում ընտրելին պատգամաւոր լինելու համար ահապին ծախսեր պիտի անէ: Որովհետ զի հասկանալի լինի գա, բերենք մի քանի փաստեր ու օրինակներ Անգլիայի ներկայ ընտրողական կեանքից:

Ընտրութեան գործը, մասնաւանդ պարլամենտական ընտրողական շրջանն Անգլիայում, շատ մեծ հետաքրքրութիւն է զարթեցնուած: «Երբ պարլամենտը արձակւում է թագաւորի կողմից, նոյն օրը արքայական գիւմանապետի միջոցով լորդերի պալատուած իսկոյն խմբագրուում է մինոր հրաման բոլոր քաղաքագլուխներին և շերիքներին—նոր ընալութիւններ ձեռնարկելու համար: Եւ այդ բոլոր հրամանները՝ թւով 670 հատ, միևնոյն օրն են պոստ ձեւուած: Հրամանը հետեւեալ ձեն ունի, «Էդուարդ, ողորմութեամբ Աստուծոյ, արքայ միացեալ թագաւորութեանց Մեծին Բրիտանիոյ և Իռլանդիոյ, պաշտպան հաւատոյ, (այս ինչ) քաղաքի պետին ողջոյն: Որովհետեւ մեր խորհրդի առաջարկութեամբ մենք որսեցինքնը պարլամենտ հրաւիրել Ուիստմինստիրուած (այս ինչ) ամսի (այս ինչ) օրը, մենք հրամայուած ենք ձեզ, որ հոգ տանիք ինչպէս հարկն է, ընտրութիւնների տեղի և ժամանակի մասին, օրէնքի համաձայն ընտրութիւններ անէք (այսքան) անզայի (կամ անզամների), որոնք իրաւունք ունեն ձեր քաղաքից գալ պարլամենտ, և որ գուք անյապազ յայտնէք նոցա անունները, երբ կընտրուին, միևնոյն է—նրանք ներկայ կըլինին թէ չէ», տարեթիւ, ամսաթիւ և թագաւորութեան թուականը, նաև տեղը»:¹⁾

Երբ արքայական գիւմանից մի օրուած ամբողջ երկրի մէջ տարածուած են այդ հրամանները, թագաւորական պաշտօնիաւնիրը հրամանի բոլութակութեան համաձայն իսկոյն սկսուած են ձեռնարկել ընտրողական գործը, և ամբողջ երկրի կեանքը կարծես փոխուած է, աւելի աշխաւածանուած է, աւելի խառնուած, նետաքրքրութեան և ոգևորութեան աստիճանն աւելի բարձրա-

1) Порритье- Современная Англия права и обязанности ее гражданъ 1897. 161—

նում: Ամբողջ երկիրը մտնում է տեսդային դրութեան մէջ. ազգաբնակութեան բոլոր ջղերը ի դործ են մղւում և այդ հռանդի, այլքորբոքուած գործունէութեան մէջ աչքի են լնկնում, իհարկէ, թեկնածուները: Ամեն մի կուսակցութիւն, ամեն մի խմբակ աշխատում է իւր թեկնածուն ընտրած տեսնել. և այդ նպատակին համնելու համար չէ խնայում ոչ մի օրինական միջոց. բոլոր հնարներն առաջ են գալիս այս կամ այն թեկնածուն պաշտպանելու: Քաղաքների և զիւղերի պատերը զարդարւում են մեծ, հսկայական յայտագրերավ, աչք ծակող, գոյնպայն դեղին կանաչ ներկած ահագին թղթերով, որոնցից իւրաքանչիւր տեսակը ունի իւր յատուկ թեկնածուն, նրան է պատշտպանում, նրան է գովում և հակառակորդին աշխատում է վատարանել, նրա անուանը արատ բերել, իհարկ է այնպիսի եղանակներավ, որ թոյլ է տալիս օրէնքը: Այդ դեղին ու կանաչ թղթերը ամեն բայցափոխում պատահում են քեզ, սոքա քեզ հալածում են, իրանց ահագինութեամբ սափառում են քեզ մի փոքր կանգ առնել, նայել կարգալ և ապա անցնել: Իսկ նոցա մէջ գծուած ծաղրանկարները, ակնարկները, երգիծանը —ամենալաւ միջոցն են յօգուտ այս կամ այն թիկնածուի արուուղ պրոռագանդայի:

Այս նիւթի մասին գեղեցիկ ու պատկերաւոր կերպով գրել է Սատուրինը, որ ներկայ է եղել 1900 թւի պարլամենտական ընդհանուր ընտրողական պայքարին, և որից մինք օգտում ենք սոյն նկարագրին անելիս¹⁾

Ահա այդպիսի ծաղրանկարներից մէկը՝ կառավարութեան հակառակորդի ձեռքով նկարուած է. Զեմբերլէնը կանացի գիշերային խալատով ու չամչիկով, մոնոկլն աչքին բաց է անուս գատարկ պահարանը. նրա կոչքին կանգնած է հալ ու մաշեղած, ուժասպառ շունը, քաղցած ու ազահ նայում է դէպի պահարանը: Շան մէջքին ահագին տառերով գրուած է. «Old Age Pension» (կենսաթոշակ զառամեալ բանուորների համար): Դա հասկանալի է ամեն մի անզլիացու, դա մի էջ է նրա մօտիկ անցեալի պատմութիւնից: 1895 թուի ընդհանուր ընտրութիւնների ժամանակ Զեմբերլէնն ու իւր կուսակիցները խոստացան ընտրողներին պարլամենտ մտցնել և անցկացնել դառամեաններին կենսաթոշակ մտցնելու հարցը. Զեմբերլէնն ուղղակի ասաց այն ժամանակ, որ այդ խնդրի օրինագիծը պատրաստ է նրա մօտ և շատ հեշտ է անցկացնել, այնքան հեշտ,

¹⁾ Государственный строй и политическая партия в Зап. Евр. и Съв. Америк. Соед. №т. 1 123—230.

ինչպէս «մի բաժակլ թէյ խմելը»։ Զեմբերլէնի խօսքերն ու խոստումներն արին իրանց ազգեցութիւնը։ Նա իւր կուսակցութեան հետ զարձեալ կառավարութեան զլուխ մնաց և հինդ տարի վարեց իւր գործը։ Պարլամենտը վերջացրեց իւր շրջանը, իսկ ազգայնութիւն այդ օրէնքը չկայ ու չկայ։ «Պահարանը դատարկէ» ցույց է տալիս Զեմբերլէնը ծերացած ու քաղցած շանը—բոլոր փողերը ծախսուած են պատերազմի համար։ (Զեմբերլէնը հր. Աֆրիկական պատերազմի հեղինակն ու ջերմ պաշտպանն էր):

Մի քանի քայլ առաջ ես գնում, մի ուրիշը, աւելի միծ, աւելի աչք ծակող, ուղղակի կարծես ուղում է աչքիդ մէջ մտնել, ճնշիչ տպաւորութիւն է գործում իր տարօրինակ ու վաս գոյներով, և այդպէս անվէրջ, անծայր, ամրող քաղաքը, գիւղը, ճանապարհներն հասարակական տեղերը։

Հակառակ կողմը՝ կառավարութեան կուսակցութիւնն էլ ունի իւր յայտապերի ամբողջ բանակը, որ նոյնպէս աչք ծակող է, որ նոյնպէս անթիւ ու անհաշիւ է։

Ահա մէկը—հետեւալ խօսքերը ճակաին գրած։ «Ամեն մի ձայն, որ տրում է յօգուտ լիրերանների; բուրի մի կրակած է դէպի մեր բանակը»։ Ահա մի ուրիշը, վրան նկարուած անգլիացի մի զինուոր, թէն ու ձեռքը վիրաւոր։ «Մէնք ուստապանցինք կայսրութիւնը հարաւային։ Աֆրիկայում, թող մեր արիւնը իզուր թափուած չլինի. ձայն տուէք ունիոնիստների օգուին, կայսրութեան պալատների օգուին»։ Կառավարութեան կուսակցութեան մի երրորդ յայտապիր ներկայայնում է դարձեալ Զեմբերլէնին։ Նա իւր աշակերտների քաղաքականութիւնից գասեր է տալիս և թուում է այն բալոր բարիքները, որ Անգլիան ձեռք է ընթառ Զեմբերլէնի մինիստրութեան ժամանակ։ Սուրանը քաղաքակալից աշխարհին է վերադարձուել, կայսրութիւնը ամրապնդուել է. հր. Աֆրիկան խաղաղուել, նուազել է, արտասահմանում դէպի Անգլիան տածուծ յարգանքն ուժեղացել է. հաշմացած բանուորներին վարձատրելու օրէնքն անց է կացել և դրանց նման մի շարք բաներ։ Հազար ու մի տեսակ սուտ ու ճշմարիտ իրար հետ խառնած հանգէս են զալիս հասարակութեանն համոզելու յօգուտ այս կամ այն թեկնածուին։ Բայց դա դեռ բոլորը չեն. թեկնածուն որպէս զի ըիշ թէ շատ յոյս ունենայ ընտրուելու, նա դեռ շատ զիսացաւանք պիտի անէ։

Անգլիայում յարմարութեան համար երկիրը բաժանուած է ընտրողական շրջանների, որոնցից իւրաքանչիւրը մի պատգամաւոր պիտի տայ։ Իւրաքանչիւր այդպիսի շրջանի մէջ սովորաբար երկու թիկնածուներ են հանգէս գալիս—իրար հա-

կառակ քաղաքական երկու կուսակցութիւնների ներկայացուցիչների: Դրանից է առաջ եկել և զարգացել անզլիական երկուսակցական կառավարութեան ձեր: Թեկնածուն եթէ ուզում է ընտրուել, պիտ անզատճառ անձամբ ծանօթանայ իւր ընտրողների հետ. խօսի նոցա հետ, բացատրէ իւր հայեացքը այս կամ այն խնդրի նկատմամբ, երեկոյթներ և ցերեկոյթներ սարքէ, վարձի յարմար գահին ներ խօսելու ժողովրդի հետ: Նա պիտի արագ շարժուի, որ չուշանայ. Նա պիտի խօսքով համոզէ, գործով ցոյց տայ իւր համոզմունքը. Նա պիտի խօսքով այս ու այն կողմը գնայ շարունակ, մէկ այս ընտրողի մօտ, մէկ միւսի մօտ, նա պիտի առաւաօն այս թաղում հասարակական մէծ միտինդ սարքի, ճաշին մի ուրիշ ժողովում խօսի. երեկոյեան նոյն թաղի հետաւոր անկիւններից մէկում: Նա շատ անզամ ժամանակ չի ունենում նոյն խիլ հաց ուտելու: Թեկնածուն ամեն հնար պիտի գործ դնէ ընտրողին թերեկու իւր կողմը. Նա պիտի օգտուի օրինական բոլոր հնարներով (շատ անզամ նոյն խիլ ճարպիկ կերպով օրէնքից շեղում է): Նա մտնում է բոլոր աները, խօսում, ծիծաղում է տնէցոց հետ, համբուրումէ տան փոքրերին, հաց ու փորձ է անում տանտիրունու ապրուստի մասին, խորհուրդներ է տալիս, հանցական խօսքիր է ասում նրան, վերջապէս ամեն կերպ աշխատում է մտերիմ ձևանալ այգ մարդու հետ և գնալիս իհարկէ խնդրում է չզլամալ իւր ձայնը տալ յօպուտ նրան: Կաշառքը ինչ ձեռով էլ որ մինի, թէկ խիստ արգելուած է անզլիական օրէնքներով, բայց դարձեալ որոշ գեր խաղում է ընտրողական պայքարի ժամանակ:

Հարուստ թեկնածուի ձեռքում պարզէ, թէ փողն ինչեր կարող է անել. ահա զբանով պիտի բացատրել այն մանրամասն ու խիստ օրէնքները, որ Անզլիայում գոյութիւն ունին պարլամենտական ընտրութիւնների ժամանակ կաշառքի համար: Օրէնքը ամենայն հոգտարութեամբ բացատրում է թէ ով է համարում կաշառակեր և ով կաշառատու: «Կաշառող համարում է ամէն մարդ, ով միջնորդապէս կամ անմիջական կերպով, անձամբ կամ մի ուրիշի միջոցով նուիրում է, փոխ է տալիս, առաջարկում է, խօստանում է կամ խօսուանում է գտնել որևէ զումար, կամ թանկագին իրեր կամ որևէ պաշտօն, տեղ կամ ոլարապմունք որևէ մի ընտրողի կամ մի այնպիսի անձնաւորութեան համար, որի մասին վերջինս խնդրում է, կամ որևէ մէկին, ով կարող է որևէ մի ընտրողի համոզել ձայն չտուլ այս ինչ մարդուն, նոյնպէս և նրան, ով նոյն կերպ աշխատում է համոզել որևէ մէկին պարլամենտ մացնել

այս կամ այն մարդուն, կամ շահից այս կամ այն ընտրողի ձայնը»: Ինչ վերաբերում է կաշառուղին, օրէնքը որոշում է, որ իւրաքանչիւր ընարող, որ «միջնորդապէս կամ անմիջական կերպով ստանում է ընտրութիւններից առաջ կամ յետոյ որևէ մի բան մէկին ձայն տալու կամ չտալու համար — մեղաւոր է կաշառակերութեան մէջ: Մեղաւոր է նոյն բանի մէջ և ամէն ոք, ով ընտրութիւններից յետոյ միջնորդապէս կամ անմիջական կերպով անձամք կամ ուրիշի միջոցով որևէ փող է ստանում կամ թանկագին իրեր որևէ մէկի յանձնարարութեամբ, որը ձայնէ տուել կամ չէ տուել և կամ խորհուրդ է տուել մէկին ձայն աալ կամ չտար: Նոյնպէս և մանրամասնարար որոշուած է օրէնքի մէջ թէ որն է, «հիւրասիրութիւնը, ապօրինի աղղեցութիւնը»: Օրէնքը գրանց համար խիստ մեծ պատիժ ունի:» Կաշառատութեան, հիւրասիրութեան և ապօրինի աղղեցութեան մէջ բանուած մարդիկ պատժւում են տուգանքով կամ բանտարկութեամբ Շ ամիս ժամանակով՝ զատավճիռն յայտարարելուց յետոյ, զուրս են հանւում ընտրողների ցուցակից և իրաւունք չեն ունենում միացեալ թագաւորութեան մէջ որևէ մի տեղում ընտրութեան մասնակցել թէ պարլամենտական ընտրութեան ժամանակ և թէ այլ տեղական ինքնավարական ասպարիդում: Այդպիսի անձինք չեն կարող հասարակական կամ գատարանական պաշտօն ստանձնել, նորաիրաւունք չունին ընտրելի լինել և ոչ էլ ներկայ լինել համայնքների ժողովին:»¹⁾

Եթէ իկնատի առնենք անգլիական օրէնքի համեմատական մեղմութիւնը, այն ժամանակ մեզ համար պարզ կըլինի, թէ օրէնքն այնտեղ ինչքան խիստ է պարլամենտական ընտրութիւնների նկատմամբ: Թէկնածուի ամեն քայլին հետեւող կայ, նրա հակառակորդը հսկում է նրան: Բայց նոյնպէս թէկնածուն պիտի գործէ, պիտի գիշեր ցերեկ աշխատի անընդհատ, որ յոյս ունենայ ընտրուելու: Թէկնածուն չպիտի բաւականանայ մի անգամ մտնելով, նա երկրորդ, երրորդ անգամ պիտի գայ, նա պիտի ընտրողների մէջ միշտ վաս պահէ այն համոզումը, թէ այդ թէկնածուին պիտի ձայն տալ: Եւ իր իւնկատի ունենանք, թէ ինչպիսի մեծ շրջաններ կան անգլիական ընտրողական շրջանների մէջ, այնպիսի շրջաններ, որոնց աղղարնակութիւնը համառում է իրկու հարիւր հաղար մարդու, այն ժամանակ պարզ կըլինի, թէ որքան դժուար ու հակացական է թէկնածուի գործը համազական-քարոզչական ասպարիզում:

¹⁾ Поррит. Современная Англия. 168.

Եւ ահա այստեղ տղամարդկանց օգնութեան են գալլս կանայք, որոնք թէն քաղաքական պարլամենտական ընտրութիւններին մասնակցելու ձայն չունին, բայց շատ մեծ չափեռով նպաստում են այս կամ այն թեկնածուի ընտրուելուն:

Խօսքն այստեղ դարձեալ հարուստ, կրթուած հասկացող ու պարապ ժամանակ ունեցող կանանց մասին է: Այդպիսիները թեկնածուների աջ բազուկն են: Նոքա տնէ տուն են ընկնում, վաղում, վաղվզում են թաղերը, տաք ու սրտառուչ խօսքերով համոզում են, գրքոյներ ու թուոցիներ են ցրւում ժողովրդի մէջ որոշ ուղղութեամբ, տատանւող ընտրողներին սրտառապնդում են, ում որ տանը չեն գտնում, գնում փողոցումն են որոնում: Դրանով չբաւականանալով, նոքա բացօդեայ միտինդներ են սարցում ցերեկները, իսկ երեկոները փակ ժողովներ են գումարում. և նոցա անպատճոյճ պարզ ու անկեղծ խօսքերը տղում են լորդերի վրայ, նոքա—այդ կին գործողները, լի են համոզմունքով, անկեղծութեամբ ու պարզութեամբ և այդ յատկութիւնը էլեկորական հոսանքի պէս անցնում է լորդերի մէջ, վարակում է նոցա, համոզում է նոցա: Այդ ճառերն յևաց տպաւում են հաղարաւոր օրինակներով և ձրիաբար ցրւում ժողովրդի մէջ: Կանանց այդպիսի ընդունակութիւնները վաղուց անգլիական պետական խոշոր գործիչների ուշագրութիւնը գրաւել են: Կազմուել են քաղաքական ընաւորութիւն ունեցող բազմաթիւ ընկերութիւններ, որոնց նպատակն է եղել քարոզել և հասունացնել այն խնդիրը, թէ կանայք պիտի իրաւունք ունենան պարլամենտական ընտրութիւններին մասնակցելու: Բայց թէ ինչու այդ օրինավիճը միշտ մերժում է պարլամենտում, դա նրանով պիտի բացատրել, որ ազատամիտ կուսակցութիւնը վախենում է այդ հարցի գրականորեն լուծուելովը պահպանողականները պարլամենտում զօրեղանան: Այդ բանն հասկանալի գարձնելու համար ասենք, որ հարուստ կանայք մեծ մասամբ պահպանողական կուսակցութեան են պատկանում: և երբ նրանց ձայնի իրաւունք տրուի, դրանով կուժեկանայ պահպանողականութիւնը. ահա զրա համար լիբերալ կուսակցութիւնը հակառակ է այդպիսի մի լիբերալ օրէնքի լոյս աշխարհ գալուն: Այդ օրինավիճն, ինչպէս ասուեց, մի քանի անգամ մտաւ անգլիական պարլամենտ և միշտ էլ մերժուեց: Անգլիայում կինն այդպիսով մինչև այժմ զրկուածէ պետական ընտրութիւններից: Դրա փոխարէն գաւառական, տեղական ինքնավարութեան մէջ կինը շատ մեծ տեղ ունի և նշանաւոր գեր էլ խաղում է: 1689 թուի պարլամենտական օրէնքով վերջնականապէս հաստատում են նրա այդ իրաւունքները և անգլիական

կինն այդ օրից գործունեութեան շատ լայն ասպարէզ է գըտառում:

Գալով դարձեալ պարլամենտական ընտրութիւններին, սիտի ասենք, որ քանի մօտենում է ընտրութիւնների վերջին օրը, այնքան աւելի տաքանում է պայքարը երկու թեկնածուների մէջ:

Արդէն հասել է ընտրողական գործի չորրորդ արարուածը՝ քուէարկութիւնը և փողոցները լցում են բառի բան նշանակութեամբ: Անգլիական սահմանադրութեան համաձայն ըռէարկութիւնը լինում է առաւօտեան 8 ժամից մինչև երեկոյեան ժամի 8-ը: Ընտրողական շրջաններից շատերն այնքան ընդարձակ են, որ քուէարկութիւնը հեշտացնելու համար մի քանի թագերի են բաժանւում և իրաքանչիւր թաղում առանձին քուէարկութիւն է նշանակում, բայց այնպէս, որ այդ բոլոր մասերում քուէարկութիւնը միենողն օրը և միաժամանակ լինի:

Քուէարկութիւնն Անգլիայում լի օրերն է նշանակուում և դրա համար էլ ընտրողներից շատերը դժուարութեամբ են համուում քուէարկութեան, որովհետև շատ անդամ նոցո՞ր բանելու տեղը տասնեակ վերստերով հեռու է լինում քուէարկման կենդրուից և աշխատաւորը դադրած, յոգնած, հաղիւ է կարողանուում տուն հասնել: Եյզպիսի դէմքերում ևս թեկնածոցն ցոյց պիտի տայ իւր ճարպիկութիւնը, աչքարացութիւնը: Նա իւր գործականների միջոցով պիտի հսկէ, թէ որ ընտրելին որտեղ է գտնուում, թէ արդեօք բոլոր ընտրելիները ժամանակին կը կարող են համնել, ով չէ կարող համնել քուէարկութեան, նրան պիտի գնալ ստիպել, յորդորել, համոզել: Այդ գործականները պիտի աշխատեն և նայեն, թէ տրդեօք ընտրողների ցուցակի մէջ նշանակուած են բոլոր այն մարդիկը, որոնք իրօք իրաւունք ունին ընտրուելու և ընտրելու:

Այդ բոլոր նախապատրաստութիւններից յետոյ վերջապէս վրայ է համուում և բուն քուէարկութեան օրը, ընտրողների, թեկնածուի և ամերոջ շրջանի հետարքքրութիւնը, ողեւորութիւնը, կրակն ու աշխոյժը, իւր զագաթնակետին է հառնուում: Արդէն ուշ է հիմա ժողովներ սարքել, արդէն ուշ է էլեքտրականացած ճառերով ազգեցութիւն գործ գնել: Անա առեն կողմից զայտ հաւաքուում են ընտրողները, գործարաններից խումբ գուրս են զալիս բանուուրներն ու դիմում գէպի քուէարկութեան վայրը: Փողոցներն ամբողջապէս՝ բերնէ բերան լի են ամեն կարգի մարդկանցով, ամեն կարգի կառքեր, ցիլինդրաւոր պարոններով, աւտոմոբիլներ ու ֆայէտոններ պատուաւոր տիկիններով, ածխավաճառների հսկայական

ֆուրգոններ, հեծանիւններ, ու զեղեցկատեսիլ նժոյդներ հպարտ հեծանիւններով—ըուլորը, բոլորը գիմում են դէպի քուէարկութեան կենարոննը։ Այդ բազմահազար ամբոխի խառնիխուռն աղաղակների միջից լսելի է որոշ կերպով գովկատներ կամ կծու խօսքեր այս կամ այն թեկնածուի հասցէին։ Ամբոխը դնալով ստուարանում է և անցուգարձն անհնարին դարձնում համարեաւ թեկնածուների կառքերն արագօրէն սլանում են այս ու այն ուշացած ընտրողի յետելից և բերում մտցնում են քուէարկութեան դահիճը։ Իսկ երբ այդ խառնուածքի մէջ յանկարծ երեան է զալիս ժողովրդի սիրելին՝ ցանկալի թեկնածուներից մէկը, ամբոխը իւր տեսակի պատիւներ ու ցոյցեր է անում։

Ահա յանկարծակի լոեց այդ աղմկով ու յարածուփ ծովլը և այդ խորհրդաւոր ու բազմիմաստ լուսթեաննը հետելից հանդիսաւոր, սրատովին, երկար ու ձիգ «կեցցէ»ն։ Ի՞նչ պատահեց։ Զո՞ն թերնսըն է՝ բանուորների թեկնածուն։ Նա՝ այդ ուժեղ և առողջ ծերունին, որ մի քանի անգամ ընտրուել է ու իւր գործը սրբութեամբ առաջ տարել, որ երբէք չէ մոտացել ժողովրդի շահերը և այդ շահերի համար ոչինչ չէ ինսայել իւր անձնական ունեցուածքից, նա այժմ էլ ժողովրդական սրտաթուչ ու անկեղծ ցոյցերի տառարկաց է, այժմ էլ ժողովուրդը նրան է իւր արժանաւոր թեկնածուն համարում։ Ահա նա, տւարանել է արդէն իւր ընտրուներին վերջին անգամ նայելը, հարկաւոր կարգադրութիւններն արել պրծել է և այժմ գնում է քուէարկութեան ներկայ լինելու։ Մօտեցաւ ժողովրդին, հեծանիւով է, իջաւ ցած և տմբոխի հոծ շերտերը վարկեանապէս սեղմեցին նրան, իրանց մէջ առան. մեծ ու փոքր նրան շոյում են, փայփայում, մէկը նրան ձեռքն է բանում, միւսը՝ մէջը, երրորդ նրա մազերն է շոյում և միւսները լի հաւատապավ, լի անկեղծ սիրով ժպտում են։ Եւ թերնսը, ժողովրդի այդ սիրելին—նոյնպէս ժպտում է։ «Թէ ինչ էր զգում այդ ըովէին ինքը թերնալ, ևս այդ չգիտեմ, ըայց այդ աեսարանից աւելի սրտաշարժ բան ես տեսած չեմ իմ կեանքումը»—ըայցականչում է օտարական Սատուրինը։

Ժամի 8-նէ։ Քուէարկութիւնը վերջացաւ և քուէարկութեան գահիճն անմիջապէս փակուեց։ Քուէտուփերը բազաքացիական յատուել պաշտօնեաների հսկողութեամբ և թեկնածուների կողմից նշանակուած գործակալների ներկայութեամբ բաց են արւում և հաշւում ձայները։ Այստեղ եւս թեկնածուն արթուն հսկող պիտի լինի. նա պիտի նայէ թէ արդեօք սխալ չի պատահել քուէարկութեան ժամանակ, թէ արդեօք ընտրող-

ները բոլորն ին քուէ տուել, ոչ ոք երկու կամ աւելի քուէ չի տուել, կամ որևէ կեղծութիւն չօ չի եղել, քուէների վրայ աւելորդ նշան չօ չի գրուած: Երբ ամեն բան կարգին է և ձայներն հաշուելուց յետոյ յաղթուած կամ սեացած թեկնածուի անունն յատարարում են, այլևս ոչ մի բողոք չի կարող լինել որևէ մի գժգոնի կողմից. զժգոնը առաջ պիտի բողոքէր, այժմ արդէն ուշ է:

Իսկ ժողովուրդն անհամբեր օրառվ, ուսով գլխով հետաքրքրութիւն գարձած սպասում է զուբսը, դաների մօտ, պատուհաններին կողած, սպասում է քուէտրկութեան հետևանքին: «Կէս գիշերին մէկը բաց է անում պատուհանը և զոսում. «Զոնն ընարուած է», զա նրա սիրելի մարդն է. այս անգամ էլ նա ընտրուեց, ժողովուրդն ուրախ է, հիացած է և ուզում է հէնց այժմ արտայայտել իւր շնորհակալութիւնը, իւր ցնծութիւնը և զոսում է. «Զոն զուբս արի, զէ շուտ:» Պատշզամբում երեսում է Զոնը և ինչ որ բան է մտմտում. բայց ով է նրան լսողը. նրան տեսնելուն պէս բազմահազար ժողովուրդը որուալնոստ կիցցէներով թնդացնում է օգը: Բերնմն ուզում է ցած իշնել, զնալ ժողովրդի մօտ: «Զէ մի զնաք, նորա ձեզ կըլսելզաթիւրեն»—զգուշացնում է նրան քաղաքացիական խորհրդի ջենտելմեններից մէկը: Եւ իրօք, քիչ չեն այն կէպքերը, երբ ժողովուրդը իւր սիրելի ընտրուածին այնքան է սեղմել չարշարել, որ վնասուել է խեղճ պատդամաւորը: «Բայց Բերնուը ամբոխից չի վախենում. նա էլ անդիմադբելի պահանջ է զգում մի բոպէով ամեն բան մոռանալ և միանալ ձուլուել այդ ամբոխի հետ խենթ ցնծութեան մէջ: Մի բոպէից յետոյ Բերնուը ամբոխի մէջ է: Բազմաթիւ ձեռքեր երկարացան, վերցրին նրան և այնուհետև նա լողում էր օգի մէջ բաղմութեան գլուխների վրայով-անցնելով ձեռքից ձեռք: Մի նաւաստի խլեց նրա գլխարկը և իւր նաւաստիական զլխարկը զրեց բերնուի գլխին: Մի քանի քաջ զինուորներ կպել էին նրան անթաժան կերպով և տանում էին փողոցէ փողոց, շրջապատուած տօնական ուրախ ամբոխով...»

III

Ահա այդպէս են կատարւում պարլամենտական ընտրութիւններն Անգլիալում: Եւ այդ նկարագրից շատ պարզ երեսում է, թէ ովքեր կարող են իրեւ պատզամաւոր պարլամենտ ընկերել: Դա ամեն մարդու բան չէ: Դիտութիւնն ու ուսումը հար-

կաւոր է, ինարկէ, հարկաւոր է քաղաքական դրական համոզմունք, աշխարհաճայիսցը, բայց ամենից առաջ վորդ է հարկաւոր Աղքատ մարդը տեղ չունի անգլիական պարլամենտում. և շատ հասկանելի պատճառով. ինչքան փող պիտի ծախսէ թեկնածուն, որ յոյս ունենայ ընտրուել, Զպիտի մոռանալ նաև այն, որ մինչդեռ ուրիշ երկիրներում ժողովրդի պատգամաւորները ուոճիկ են ստանում տերութիւնից, Անգլիայում համանգների պատգամաւորներն անվարձ են, իրանց հաշուին են ապրում Լոնդոնի պէս քաղաքում: Ուրիշն պատգամաւորը ընտրուելու համար հոկայական ծախքեր պիտի անէ, իսկ ընտրուելուց յիտոյ էլ պիտի կարողանայ մարդավայել ապրել: Դրա համար է, որ անգլիական պարլամենտում պատգամաւորները միլիոնատէրեր են լինում մեծ մտամբ:

Երբեմն պատահում է, որ այս ինչ շրջանի քաղաքական կուսակցութիւններից մէկը յարմարաւոր թեկնածու չի կարող առաջ բերել իւր միջից. գրանով թուլանում է այդ կուսակցութիւնը ոչ միայն նոյն շրջանում, այլև և անգլիական պարլամենտում, որովհետեւ մէկով պակաս ներկայացուցիչ կը լինի այնտեղ:

Դրա համար էլ հսար են գտել պարլամենտական գործիչները: Անգլիայում, ինչպէս յայտնի է, քաղաքական երկու մնձ կուսակցութիւններ կան վիզ և տորի, կամ ազատամիտ ու պահպանողական: Պետութեան մայրաքաղաքում, քաղաքական կեանքի ըռւն կինտրոնում, զրանցից իւրաքանչիւրն ունի իւր ըիւրոն, իւր գլխաւոր վարչութիւնը, որ իւր բաժանուուններն ունի անգլիական բոլոր քաղաքներում և գիւղերում: Կուսակցութիւններից իւրաքանչիւրը ցանցի պէս իւր մէջ է առել ամբողջ երկիրը և խոտիւ հետեւում է իւր շահերին: Վերցնենք օրինակ պահպանողական-կոնսերվատիւ կուսակցութիւնը: Նա իւր շահերը, իւր կուսակցութեան օգուտն ու անունը բարձր պահելու համար պիտի աշխատի, որ պարլամենտական ընդհանուր ընտրութիւնների ժամանակ համայնքներից պարլամենտ գան զլխաւորապէս պահպանողական պատգամաւորներ: Միւս կողմից ազատամիտ-լիբերալ կուսակցութիւնն էլ նոյնն է անում: Եւ երկուն էլ իրանց նպատակին հասնելու համար կենդանի յարաբերութեան մէջ են մտնում գաւառի հետ և ամեն կերպ՝ փողով ու մարդով աշխատում են իրանց թեկնածուներին նպաստել, յազմող դուրս բերել:

Եւ երբ պատահում է, որ ընտրողական շրջաններից որևէ մէկի այս ինչ կուսակցութեան մէջ յարմար թեկնածու չի ճարտում, նոյն կուսակցութեան մայրաքաղաքի կենտրոնական վար-

չութիւնը մի յարժար թեկնածու է ուղարկում և ամեն կերպ հոգ է տանում, որ նա ընտրուի: Շատ անգամ էլ, երբ յարժար թեկնածու կայ, բայց չքառով է, կուռակցութիւնն ինքն է հոգում նրա ծախքերը: Իսկ այդ ծախքերն ինչպէս ասուեց, աշադին են:

Մենակ թեկնածութիւն գնելը և պաշտպանելը տասնեակ, երբեմն և հարիւր հազարներ է նստում անգլիացու գրպանին: 1876 թւին, շրջաններից մէկում, երկու թեկնածու գուրս եկան— Հերքերդ Գլազոստոն Մեծն Գլազոստոնի որդին, և Համելտոն: Գլազոստոնը 65 000 ծախսեց և էլի չկարողացաւ յաղթութիւնը կրողել Համելտոնից, որ 130,000 ծախսեց և տարաւ յաղթանակը: Հին ժամանակները, երբ օրէնքներն այնքան էլ որոշ չէին և հսկողութիւնն էլ այնքան խիստ չէր, փողը ընտրութիւնների ժամանակ մեծ գործ էր տեսնում: Շատ թեկնածուներ այս կամ այն ազդեցիկ ընտրողի ձայնը շահելու համար ստիպուած էին նրան միանուագ ահաղին գումարներ տալ և գեռ տարեկան էլ ոռճիկնշանակել: Պատահեցին դէպքեր, երբ թեկնածուներն այդպիսի ազդեցիկ ընտրողներին առաջարկեցին միանուագ 7000 ոռւրի և տարեկան էլ 500 ոռճիկ և զեռ էլի չեն համաձայնուել ընտրողները, թերևս անշուշտ նրա համար, որ հակառակորդ թեկնածուն աւելի շատ է առաջարկել: 1796 թուին Մէյզստոնում ընտրողական պայքարի վերջին 7 ժամուայ ընթացքում միայն մի թեկնածու 30,000 միթ. ծախս արեց, էլի պարտութիւն կրեց: 1807թ. եռկում երկու երկու թեկնածուներ հանդէս եկան՝ լորդ Միլտոն և Վիլբերֆորս: Վիլբերֆորսը վերջին 15 օրուայ ընթացքում ծախսեց 640,000 միթ. իսկ նրա հակառակորդ լորդը, որ աջ ու ձախ փող էր շաղ տալիս, ընտրողական պայքարից յաղթող գուրս եկաւ, և այդ յաղթանակը նրա վրայ 2½ միլիոն նստեց:

Այսպիսով անգլիական ընտրողական սխտեմի մէջ, մի աչքի ընկնող առանձնայատկութիւնն է նկատում, այդ այն է, որ համայնքների ժողովը բաղկացած է, համարես բացառապէս հարուստներից, իսկ եթէ պատահում են և մի քանի աղքատ պատգամաւորներ, նրանք էլ շուտով ընկնում են այս կամ այն հարուստի ազգեցութեան տակ:

Բացի այդ սուանձնայատկութիւնից, անգլիական ընտրողական իրաւունքը ունի և մի ուրիշը: Դա կըկնալի կամ եռակի քուէարկութեան բացակայութիւնն է: ուրիշ խօսքով, Անգլիայում պարլամենտական ընտրութիւնների ժամանակ քուէարկութիւնը միայն միանգամ է կատարւում: Այստեղ ընտրունում էր 1905.

ած է համարում այն սնձնաւորութիւնը, ով որ քուէարկութեան ժամանակ ձայների հասարակ մեծամասնութիւն է ստանում: Մինչդեռ ուրիշ պետութիւնների մէջ ընտրուած է համարում միայն նա, ով որ ձայների բացարձակ մեծամասնութիւն է ստանում միայն նա, ով որ ձայների բացարձակ մեծամասնութիւն ոչ ոք չի ստանում, այն ժամանակ երկրորդ քուէարկութիւն է նշանակում, որի ընթացքում հանդէս են գալիս արդէն այն մարդիկը, որոնք առաջին քուէարկութան միջոցին շատ ձայն էին ստացել, և այս անգամ քուէարկութիւնը լինում է արդէն ոչ թէ ընդհանուր, այլ միայն թեկնածուների—քուէարկութան մի քանի թեկնածուներ: Անզլիայում այդպիսի բան չկայ: Ով որ առաջին անգամ շատ ձայն ստանայ, նա էլ կըհամարուի ընտրուած:

Այժմ աւելի պարզ կը լինի ընթերցողի համար, թէ Անգլիական պարլամենտական թեկնածուներն ինչու այդքան հոգ են տանում, որ բոլոր ընտրողները մասնակցեն և ձայն ունենան: Այստեղ երբեմն այնպէս է պատահում, որ ամբողջ գործը մի քանի ընտրողների ձայներից է կախուած լինում և թեկնածուն պիտի կարողանայ ճարպիկութեամբ ժամանակին օգտուել այդ ձայներից:

Անզլիական ընտրողական իրաւունքի առանձնայատկութիւններից մէկն էլ այն է, որ այստեղ ընդունուած է յոզնակի ձայնատութեան եղանակը: Ուրիշ երկիրներում իւրաքանչիւր մարդ մի ձայն ունի, իսկ Անզլիայում իւրաքանչիւր կալուածատէր, որ անշարժ կալուածք ունի, դրանով արդէն ձայնատէր է: Եթէ անզլիացին անշարժ կալուածներ ունի սի քանի ընտրողական շրջաններում, օրէնքով նա ձայնի իրաւունք է ստանում այդ շրջաններից իւրաքանչիւրի մէջ և յատկապէս մի մի ձայն: Բայց որքան հարուստ կալուածատէր անզլիացիներ կան, որոնց կալուածները ցրուած են բազմաթիւ շրջանների մէջ, նրանք բոլորն էլ իւրաւունք ունեն ձայն տալու այն բոլոր տեղերում, որտեղ նորա գործարանների ու ստացուածքի տէր են: Պատահում են անզլիացիներ, որոնք այդ եղանակով՝ 30, 40 մինչև իսկ 45, 50 ձայնի իրաւունք են ուենում:

Շատ պարզ է, որ միջին դասակարգը, ազատամիտ ու աւելի ժողովրդավար (демократъ) ձգտումներով տողորուած դասը, պիտի գէմ լինի այդ յոզնակի ձայնատութեան եղանակին: Եւ անզլիական արմատական-ժողովրդավար կուսակցու-

թեան համար վաղուց նշանաբան է դարձել „one man, one vote“ (մի մարդ—մի ձայն) դարձուածքը:
Եւ գուցէ այդ մտքով ոեֆորմը շատ էլ հեռու չէ:

ԳԷՈՐԳ ԱԼԹՈՒՆՆԱՆ

ՆԱԽԹԱՐԴԻՒԽՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՇԽԱԲՀԿԻՑԻՑ

Ծուսաստանի հին խայտառակ բեժիմի ստեղծած աղէտականից մէկն էլ Բագուի նաւթարդիւնաբերութեան կործանումն էր, որի խոր ազգեցութեան հիմքերը ժողովրդի կեանքի զանազան շերտերում դեռ երկար ժամանակ չեն անհետանալու... «Հեփթ. Ա.» № 16—17-ից իմանում ենք, որ օգոստոսեան թաթարական վայրագութիւնների պատճառով այրուել են 1996 բուրգեր (Վըշ-կա), այսինքն բոլոր բուրգերի 58,50%: Այդ բուրգերից օրեական քաշւում էր 920,994 պուղ նաւթ: Այրուած բուրգերի արժէքն է 12 միլլ. բուրլի: Այրուած աշխատանոցների, բնակարանների, նաւթամբարների և այլ կայքերի արժէքն է 13 միլլիօն: Այդտեղ չեն հաշուած դադարած աշխատանքների պատճառով վարպետների, կապալառուների և բանուորների կրած սոսկալի վնասները: Ներկայ նաւթարդիւնաբերութիւնը վերականգնելու համար պահանջւում է 40 միլլիօն, մարդկային զոհերը չհաշուած: Այդպիսի վնասներ հասցնող թուրք աւագակային վոհմակները և նրանց նպաստող պոլիցիան և բիւրոկրատիան ոչ մի պատիժ չկրեցին: Բալախանիի, Սարունչիի, Ռամանիի, Զարբատի թուրք «երկրագործները» կը մնան իրանց տեղերում, հանդիսատ վայելելով իրանց յափշտակածը և շարունակող կամոկեան սրի պէս կախուած վնսելով գլխակոր հայ հաւթարդիւնաբերողների և բանուորների գլխին: Զարմանալի չէ որ Բագուի արդիւնաբերական ապագայի մասին վարդագոյն հեռանկար գժուար է ստեղծել: Առանց այն էլ նաւթարդիւնաբերութիւնը Ռուսաստանում դանդաղ էր զարգանում, այլ երկրների հետ համեմատած, մի քան, որ երկում է հետևեալ աղիւսակից: Նաւթ ստացւում էր.

| | 1902 | 1903 | 1904 |
|--------------|------------------|--------------|--------------|
| Ամերիկա | 10,980 հազ. տոնն | 12,557 հ. տ. | 15,000 հ. տ. |
| Ռուսաստան | 10,950 » » | 10,320 » » | 10,600 » » |
| Չոնգեան կղզ. | 732 » » | 830 » » | 1000 » » |
| Դալիցիա | 576 » » | 713 » » | 827 » » |
| Ռումանիա | 310 » » | 384 » » | 496 » » |
| Հնդկաստան | 209 » » | 325 » » | 404 » » |
| Այլ երկրներ | 270 » » | 250 » » | 250 » » |

Դժուար չէ երևակայութեամբ շարունակել այդ թուերը և
1905 թուականի համար...

Թէ ինչ կերպ ազգեց մեր երկրի խառնակ գրութիւնը նաւթի արտահանութեան վրայ, այդ երեսում է հետեւել թուերից: 1904 թ. Անգլիա ներմուծուած կերոսինից 52% Ռուսաստանից 45% , իսկ 45% Ամերիկայից, իսկ 1905 թ. Ռուսաստանից 30% , Ամերիկայից արդէն 65% : Այդպէս կը լինի, երկի, և միւս երկրներում: Ի դէպ մեր հարեան թիւրքիսն ստանում էր Ռուսաստանից $2,650,000$ արկլ կերոսին զլամառարար երեք ֆիրմաներից: Բոտշիլդի, Մանթաշևանի և Սիդերիփիս-Արվանիտիդիսի այսինքն հրէտական, հայկական և յունական ֆիրմաներից: Տեսնենք յայտնի տուածլ այդ երեք ազգութիւնների ճարպիկութեան մասին ինչպէս կարգարանայ իրականութեան մէջ...

Իր ժամանակին մենք մեր ընթերցողներին ծանօթացրել էինք Անգրկասպեան երկրում, Ֆերգանում, սկսած նաւթարդիւնաբերութեան հետ: Յիշեալ թերթից իմանում ենք, որ այն օրից երբ Միջին-Ասիական երկաթուղու ֆերգանական ճիւղն է կառուցուել, նաւթային ձեռնարկութիւնները ֆերգանում գրալի կերպով կենցանացել են: Այդանու ամենամեծ նաւթարդիւնաբերուական ձեռնարկութիւննէ «Ֆերգանական նաւթարդիւնաբերական ընկերութիւնը», որի գլուխ է կանգնած ինժեներ Կովալեվսկին: Ընկերութիւնը ունի 114 դեսեատին հոդ: 1904 թուի սեպտեմբեր ամսում սկսեց խիել առաջին շատրուանը: Նաւթարդորերը գտնուում են Միջին-Ասիական երկաթուղու Վանովսկայա կայարանից 20 վերստ հեռու, Զիմիօն դիւղի մօտ: Եւ այժմ այդ կայարանից մինչև նաւթարդանքերը խողովակներ են շինուած, այնպէս որ օրը 38,000 պուդ նաւթ է հասցնուում կայարանը, ուր շինուած են նաւթաւազմներ և զանազան յարմարութիւններ՝ վագոնները նաւթ լցնելու համար:

Այդ ընկերութիւնը 1905 թ. մայիսի 1-ին սպայման է կապել Օրենբուրգ—Տաշկենտեան երկաթուղու հետ մի միլիոն նաւթ 25 կոպ.-ով Վանովսկայառում յանձնելու: «Ֆերգանական

նաւթ. ընկ.» աջողութիւնը առաջ բերաւ «Ծիշտան» անունով մի լնկերութիւն, որի անուանական 100 բուրլիանոց պայերը այժմ կոկանդի շուկայում 400 բուրլով են վաճառում, ի հարկէ անհիմն աժիօտաժի զնորհիւ, որից այնքան միամիտներ տուժեցին մի ժամանակ «բախտաւոր» Բագուռում:

Տ.

ԻՐԱՆԵԱՆ ԹՈՒՐՔԵՐ

կ ա մ'

Ա Զ Հ Ռ Բ Է Յ Ա Ն Ե Ռ Ռ¹⁾

1. Որտեղից են եկած Անդրկովկասի թուրքերը

Իրանեան թուրքեր ասելով հասկանում ենք մենք բառի լայն իմաստով թուրք ժողովրդի այն հատուածը, որ ապրում է այժմ հին Իրանի հողի վրայ. այդտեղ է հաշուած և Անդրկովկասը մինչև Դերբենդ:

Եթէ ոչ անկարելի, գոնէ շատ գժուար է որոշելը, թէ ե՞րբ է սկսել այս օտար տարրը Իրանուած ազգեցաւթիւն ձեռք բերել: Հիւսիսային Իրանը, այսինքն Խորասանը, Կասպից Ծովի հարաւային ափերը և Սնդրկովկասը պէտք է որ դեռ անյիշելի ժամանակներից հնագույն հատ-հատ թուրք ցեղերի ու հրոսակների յարձակմանը, որոնք իբրև կոփւ ու աւար սիրող թափառականներ ընկնուած էին մերկ տափառաններից գրացի քաղաքակիրթ երկների վրայ՝ այնտեղի իրանական նստակեաց ժողովուրդների աշխատանքի արդիւնքովը իրանց ողորմելի ապրուստը քիչ մեղմելու:

Պարթևների դեռ չպարզուած ազգագրական կապերից այստեղ եզրակացութիւններ հանել չենք ուզում, բայց և այնպէս

1) Das Türkenvolk

չենք կարող չենթադրել, թէ հարևան թուրք ժողովուրդների մի քանի հատուածները, գլխաւորապէս Հիւրկանեան տափառակից ու ստորին Ուզայի ցածոյթներից, զեռ հնագոյն դարերում մուտք են գործել իրան ու կանգ են առել մի առժամանակ գէթ նրա սահմանի մասերում:

Այս ենթադրութեան ի նպաստ են խօսում ամենից առաջ հին իրանական առասպելներում խտացած սարսափը հիւսիսից խուժող բարբարուների դէմ. այլև ընդհանրապէս իրանի հերոսական շըջանի ամբողջ առասպելափունջը, ուր հերոսական ու դին, իրանիցու հօգեկան ու մարմնական ուժերը փորձի են հանուում իրանց ժառանգական թշնամի թուրանցիների դէմ և ստանում անմահութեան դափնին: Սրան ապացոյց է նոյնպէս թուրքերէնի արած ազգեցութիւնը Պարսից լեզուի վրայ: Կան նաև պատմական ցուցումներ, իհարկէ աղօտ կայծեր միայն, ուրոնք սակայն օգնում են մեզ այդ խաւարը քիչմիշ փարատելու:

Մենք չենք ուզում այստեղ ըննութեան ենթարկենք, թէ արդեօք իսկապէս արժանի է նոր բանասէրների ցոյց տուած վստահութեանը այն տեղեկութիւնը, որ հայ պատմազիր Կաղամնկատուացին տալիս է Քրիստոսից 450 տարի առաջ Ազգուանքի վրայ տեղի ունեցած Խաղարների արշաւանքի մասին. ոչ էլ քննել ենք ուզում, թէ արդեօք կարելի՞ է նոյնացնել Ուզայի Խոզարների հետ Մովսէս Խորենացու յիշած Խոզիրները, որոնք Քրիստոսից յետոյ 193—213 թուրին աւեր ու քանդ են սփռել Դերեկնդի վրայ: Բայց անվիճելի փաստ է արդէն, և պէտք է ազգազրական ու աշխարհազրական պայմանների արդիւնք նկատուի այն արշաւանքը, որ Սկիւթ հաւաքական անուան տակ յայտնի եղող ու Կովկասեան լեռներից հիւսիս ապրող թափառականները կատարել են դէպի Կովկաս ու այնտեղից էլ իրան անշուշոյ Քրիստոսի ծննդից առաջ: Այսպէս մենք իմանում ենք Պրիստուսից, որ Հունների թագաւոր Ատարիլան մտագիր էր մի արշաւանք ձեռնարկելու դէպի Պարսկաստան: Սրանից վստահօրէն կարելի է եղրակացնել, որ թուրքերը արդէն նախապէս ծանօթ էին Կովկասի ու հիւսիս-արևմտեան իրանի քաղաքակրթութեան կենտրոններին:

Անդրկովկասում ու Աղրբէյանում թուրք տարրերի ունեցած ազգեցութեան աւելի որոշ պատկերը տալիս է մեզ պատմութիւնը Իսլամի երևալուց յետոյ: Այսպէս Դերեկնդնամէից տեղեկանում ենք, որ ամբողջ ութերորդ դարու ընթացքում թուրք ժողովուրդ Խաղարները գրեթէ շարունակ կռուի մէջ էին խալիֆների զանազան բանակների հետ, և որ 717 թուրին 20.000-ի չափ Խաղարներ հասել են մինչև Աղբըրէյանի խոր-

քերը։ Այս պատահել է Հաշիմ-բէն-Արդիւլմելիք խալիֆի իշխանութեան միջոցին։ մինչդեռ յայտնի է, որ Հարուն-էլ-Ռաշիդի խալիֆութեան ժամանակ Խաղարները նորից են յարձակուել Շիրուան ու 10,000 հոգի գերի են տարել իրանց հետ։

Կովկասեան շղթայից հիւսիս ապրող Ուրալ-Ալթայցիների և սահմանակից իրանական ժողովուրդների մէջ տեղի ունեցող այդ յաճախակի, ու կենդանի շփումը աչքի առաջ ունենալով՝ տնշուշտ թոյլատրելի է ենթադրելը, որ հատ-հատ թուրք ցեղեր թափառում էին արդէն աւելի վաղ ժամանակներից Շիրվանի, Մուղանի ու Ղարաբաղի հարթակներում, մի խօսքով Կուրի, ու Արաքսի երկայնքին փոռւած տափարակում։ Հետեարար քրիստոնէական առաջին դարերում կային արդէն թուրք տարրեր Արևելեան կովկասում, մասամբ զնաւ, մասամբ էլ խանութած տեղացի արիական արեւան։ և սրանք են որ ծագում են տուել ու էապէս նպաստել են այսօրուայ Կովկասը բնորոշող ազգագրական խանճաշվութութեանը։

Գուցէ այդ թուրք տարրերից են առաջ եկել Կումիւքները. մինչ ուրիշները, ինչպէս օրինակ, երբեմնի Շիրվանի խանութեան թուրք բնակիւները կարելի է որ առաջացած լինեն իրանցիների կամ հարևան Կովկասեան ժողովուրդների հետ նրանց ունեցած խառնուրդից։ Սակայն այսօրուայ Անդրկովկասի թուրք ընակչութեան ստուար մասը անկասկած հարաից է եկել դէսվի հիւսիս։ այսինքն նրանք ներկայացնում են Ազգրքէյջանից ու Կասպից ծովի հարաւային ափերից ելած այն թուրք հրոսակների ընկորները, որոնց դէսվի Կովկաս են նետել քաղաքական դէսվերը Սելջուկների երեւալուց սկսած մինչեւ Ծոսաստանի ամբողջական տիրապետութիւնը, ուրեմն մինչեւ 18-րդ դարու վերջերը։

Մրամ իրեկ ապացոյց կարելի է բերել և Անդրկովկասի թուրքերի լեզուն, որ իր էական կողմերով սերտ կապուած է Ազգրքէյջանում խօսուող բարբառին, իսկ Կումիւքերէնից ջոկւում է թէ բերականական թէ բառարանական առանձնայտութիւններով, ինչպան որ կարելի է նորակացնել Կլապլոթի լերած բառերի ժողովածուից։ Լեզուի այդ նոյնութիւնը չի կարելի միմիայն իրանական-միւսիլման դարաւոր ազգեցութեանը վերագրել, զբա գլխաւոր պատճառը ազգագրական ընդհանուր ծագումն է։ Եթէ այդպէս չինէր, պէտք էր որ այդ կուլտուրական ազգեցութիւնը կումիւքների վրայ էլ նկատէինք, որը սակայն չի երևում. զեռ ընդհակառակը, սրանց լեզուն շատ կէտերում հակում ունի դէսվի նորայ-թաթարների բարբառը, որոնք ապրում են կուրանի միջին հովտում։

Մի երկրորդ ապացոյց էլ կարող ենք հանել մի քանից եղերի ու տոհմերի անուան նոյնութիւնից, որոնք մի կողմից ապրում են Անդրկովկասում Խուս տիրապետութեան տակ, միւս կողմից էլ իրանում Պարսից Շահին իրրե հարկատու: Այսպէս օրինակ, Շահսեւէններ կան Բաքուի շուրջը, ինչպէս և Թեհրանի, Ֆարսի ու Շամոէհի գաւառներում. մենք Կաջարների ենք հանդիպում Եեմախի շրջանի Կաջար գիւղում, ինչպէս և Մազանդարանում, որ իսկապէս նրանց զիստոր կենտրոնն է. Լէկ ցեղը ապրում է Կուրի հովտի Դէօք-չայի շրջանակում, ինչպէս և Պարսկաստանի շատ մասերում. վերջապէս Կենիկերլունները, որոնք կենում են Դէօք-չայի ու Կուրանի շրջաններում, ինչպէս և Թեհրանի գաւառում. ևայլն:

Իրբ մի երրորդ ապացոյց էլ կարող ենք մէջ բերել անպրկովկասեան թուրքերի Փիղիկական յատկանիշները, որոնց գիմագծերի և ընդհանուր կազմի վրայ իրանական արեան կնիքը շատ աւելի որոշ է քան կումիքների վրայ. մինչդեռ կովկասեան մեծ շվեյշի հիւսիսային էջբերին ապրող թուրքերի մէջ շատ աւելի յաճախ են երևում Ուրալ-Ալթաեան իսկական տիպի հեաքերը:

Ուրեմն, Զէյգլիցի նման, մենք էլ այն կարծիքի ենք, որ Անդրկովկասի արդի թուրք աղքաքնակութիւնը եկած է հարաւից Սելջուկների, Մոնղոլների, Կարս-քոյունլունների, Աքրոյունների, Սեփիդների ու Կաջարների արշաների ժամանակ: Ստուար մհծամանութեամբ թուրքմեններ են գրանք իրենց ծաղումով, միայն ոչ բացառաբար այն թուրքմեններից, որոնց մենք հանդիպում ենք այսօր կասպիականի արևելեան ափերին, այլ այդ ժողովուրդի այն հատուածները, որոնք Սելջուկների, Զինգիդների ու Սեփիդների ժամանակ Աղըրբէյջանից եկել են մտել Կուրի ու Արսօնի հովտները ու մուացել այդուղի:

2. Թուրքերի իրան գալլ

Վճռելը դժուար է, թէ Ի՞րբ և Ի՞նչպէս են դուրս մղել թուրքերը Աղըրբէյջանից հին իրանական տարրերին: Շպիզը կարծում է, թէ այդ գաղթը աւելի նոր ժամանակներումն է տեղի ունեցել, քանի որ դեռ միջին դարերում Աղըրբէյջանում խօսելիս են եղել, ըստ Եակուտի, մի առանձին իրանական բարբառ, աղջրի կոչուած:

Ամեն տարակյալից դուրս է, որ մի քանի թուրք թափառական հրոսակներ երևացել են Զ-րդ գարում արևմտեան Ասիայում, երբ Բաղդադի խալիքները սովորութիւն դարձրին

թուրք թիկնապահներ պահելը, որը յետագայում աճելով ու մեծանալով վերածուեց թուրք բանակի: Բայց թուրքական մեծ մասսաների կալը պէտք է որ Սելջուկների շարժումովը սկսուած լինի:

Մինչդեռ Մահմուդ Սերբւկեկինը Խորասան էր բերում Սելջուկ տոհմին մօտ 100 000 թուրք, նոյն միջոցին Քչօք-ալզ շխանից ծագուան առած մի ուրիշ թուրք ցեղ, անասունով ու ինչըով հարուատ, դալիս է Հայաստան ու նստում զլիաւորապէս Ախլատի (Խլատ) շուրջը: 1219-ին, այսինքն իրենց դալուց 170 տարի յետոյ, այդ ցեղի մի մասը Մոնղոլներից ճընշուած գնում է աւելի արևմուտք, ինչպէս պատմում է Նեշրի, մինչ միւս մասը մնում է Հայաստանի սահմաններում, այսինքն այսօրուայ Ազրբէջանում: Սրանց միանում են յետոյ Մոնղոլների հետ ներս թափուող ուրիշ թուրք ցեղեր, և այսպիսով կազմում են խկապէս ասած թուրք տարրի այն կորիզը, որի շուրջը խմբում են հետզինետէ նստակեաց կեանքի մի քիչ աւելի հակում ունեցող պատերազմիկ թափառական ցեղերը, և քիչ-քիչ գրաւում Մոնղոլների քշած ու վարած իրանական տարրերի տեղը:

Ինքնին հասկանալի է, որ հիւսիս-արևմտեան իրանի թուրքացումը աւելի թափ առաւ, երբ Մոնղոլները իրենց առ թուրք գրին Թաւրիզում, որովհետեւ, ինչպէս երեսում է Իլխանիների պատմութիւնից, պալատական լեզուն թուրքերէն էր դեռ մինչև Ղազանի գահ բարձրանալը. մեզ հասած պատուի ու աշխարհագրական անուններ կան, որ այդ ժամանակն են ծագուածն առել: Այսպէս օրինակ, յիշեմ արդի Շիրուանում գըտնուող Խալիսէ կոչուած որսի տեղը, որի անունը Ղազան փոխում է ու գնում Քուշ-կօյուն, որովհետեւ այնուեղ վարագ էր որսացել, վարագին թուրքերէն քուշ-քօյուն են ասում:

13-րդ դարու վերջերին հիւսիս-արևմտեան իրանում թուրք տարրը ըստ երեսյթին գերիշխող էր արդէն: Թէև Թիմուրի արշաւանքները այդ տարրի ստուարացմանը մինոր դրդում չեն տուած, բայց Ակ-կօյունլու և Կարա-կօյունլու կոչուող թուրքմեն ցեղերի մէջ եղած անվերջ կորիւները շատ են նպաստած, որ թուրքմենների մի վերջին ստուար զանգուած իրանի հիւսիսային եզերի հարթութիւններից գէպի Ազրբէյջան ու Անդրկովկաս փոխադրուի:

Մասնակի մանր հոսանքներ դեռ 18-րդ դարումն էլ են տեղի ունեցել. բայց մենք սխալուած չենք լինի, եթէ ընդունենք, որ դեռ Ռւզուն-Հասանի ժամանակ, հետեւարար 15-րդ

դարու կէսին, Իրանի թուրք տարրը այնպէս էր դասաւորուած, ինչպէս մենք այսօր տեսնում ենք:

3. Նրանց բնակութեան գլխաւոր կենտրոնները

Նախ կը խօսենք անդրկովկասեան թուրքերի մասին, վերջն էլ իրանի:

Կովկասեան մեծ շղթայի հարաւային էջքերից սկսած մինչև Արաքս գետը, այսինքն մինչև Իրանի խոկական սահմանը, թուրքերը ամենից շատ գոտում են Բաքուի նահանգում, որի մէջն է մտնում նաև Շիրուանի երբեմնի խանութիւնը: Այդ նահանգում, լստ Զէյդլիցի, նրանց թիւն է 304, 049 հոգի, ուրեմն ամբողջ բնակչութեան 57, /45 տոկոսը: Այդտեղ նրանք տարածուած են Կուր ու Արաքսի հովիտով մինչև Կիլաշ-չայը—Լենքորանի շրջանում: Յետոյ նրանք ապրում են Կուբայի շրջանակում, Սամուր ու Աթա-չայի մէջը փուռող հարթութեան վրա: Այլ և Երևանի նահանգում Արաքսի գերին հոսանքով մինչև Սիւրմալի: Բայց ամենից խիտը Շամախիի, Շուշիի ու Նուրիստ մէջ ընկած հարթ տարածութիւնն է, ինչպէս որ ասացինք: Դա էլ բացատրում է նրանով, որ այդտեղ հին Շիրուանի խանութիւնը անդրկովկասեան թուրք կեանքի գլխաւոր հնոցն էր ներկայացնում գեռ Մոնղոլների ժամանակից սկսած, բայց մանաւանդ Աք ու Կարա-կօյունլուների մէջ եղած կռիւների միջոցին, այնպէս որ ամենից աւելի էր ենթակայ տափաստան-ներից իջնող նոր եկուորների հոսանքին: Բացի դրանից, Անգր-կովկասի թուրք տարրը ամենից առաջ այստեղ է բուն զրել, որը և պատմականօրէն կարելի է ապացուցանել, եթէ աչքի առաջ ունենանք Խանիկովի հետազոտութիւնները միւսիլման կովկասի հնութիւնների մասին: Նրա ուսումնասիրութեամբ Շիրուանի չորս կողմն են զանուում միւսիլման կուլտուրայի հնագոյն յիշատակարանները, քան թէ, օրինակ, Երևանի շուրջը: որից և կարելի է եղբակացութիւն հանել զանազան հիւսիլման թուրք մասերի երևան գալու մասին:

Իսկ ինչ վերաբերում է իսկական Իրանի՝ թուրքերը ապրում են հետեւեալ վայրերում:

1) Ազգային Արաքսից սկսած դէպի հարաւ Քիւրդ գիստանի սահմանով և Ռւրմիայի վրայով մինչև Կերմանշահ: Թուրքերի ամենախիտ մասն է սա, իրբե շարունակութիւն անդրկովկասեան թուրք տարրի, որից միայն քաղաքականապէս է բաժանուած, սա կազմում է Իրանի թուրքերի գլխաւոր նիստը:

2) Շամսէհ, այսինքն Ազրբէյջանի ու Թեհրանի մէջ
ընկած տարածութիւնը, մասնաւորապէս Զինջանի շուրջը:

3) Թէհրանի Նահանգում, զլխաւորապէս Դլմաւէնդի
հովհաններում, այլ և մայրաքաղաքի անմիջական շրջակայքը:

4) Կերման, Ֆարսի սահմանակից մասերում:

5) Իրար, Համագանի մէջն ու շուրջը:

6) Փարս, ուր Նրանք նայելով տարուայ եղանակին մերթ
մինչև Խսպահանի սահմաններն են բարձրանում, մերթ իջնում
են մինչև ծովի եզերքը:

7) Խորասան, ամենից շատ բնակւում են Նիշապուրի,
Քուչանի, Զուվէինի ու Քելատի-Նադիրի շրջակայքը:

Գալով իրանական թուրքերի գանգային կազմութեանը,
կամ աւելի ճիշտ ասած ցեղային բաժանումին, շատ են խա-
խուռ մեր ձեռքը եղած փաստերը, և դժուար է եղբակացութիւն
հանելը, թէ ի՞նչ կապ ունին զրանք Միջին Ասիայի ազգակից
թուրքերի հետ: Այսպէս՝ եթէ իրանան թուրք ցեղերի անուն-
ները համեմատելու լինինք նրանց ամենից աւելի մօտիկ ազգա-
կից թուրքմենների հետ, դուրս է գալիս, որ այդ անուններ-
ից մի քանիսը իրօք պատմական արժեք ունին, եթէ պատա-
հում են արգէն Մոնղոլների ժամանակ: Օրինակի համար
Ֆարսում ապրող Կաշկայի ցեղը, որի մասին յայտնի է թէ
զետ Իլիանէնների տիրապետութեան ժամանակ են եկած Պարս-
կաստանի հարաւը:

Անուններ էլ կան, որոնք պարզ ցոյց են տալիս թէ
իրանց ծագում տուող մայր ցեղը գեռ գոյութիւն ունի թուր-
քմանների մէջ՝ օրինակ.

Իրաննեան թուրքեր

Թուրքմաններ

| | | | |
|----------|------------------|----------|----------------------|
| Խօջաւալի | Ղարաբաղում | Խօջաւալի | Սարիքների մօտ |
| Բէզղիլլի | Ղարաբաղում | Բէզղիլլի | Թէկկէնների մօտ |
| Կենզէր | Անդրկովկասում | Կէնզէր | Թէկկէնների մօտ |
| Կարա | Քիրմանում | Կարա | Անդխօթի՛ շուրջը |
| Բանաթ | Նիշապուրի շուրջը | Բանաթ | Սալօրների մօտ և այլն |

Սրանից որոշակի երեսում է, որ յիշուած իրաննեան թուրք
ցեղերը իրենց անուանակից թուրքմանների հետ ազգական են
կամ նոյնիսկ ուղիղ գծով նրանցից են առաջ եկած:

Իրաննեան ցեղերի մի երրորդ խումը էլ կայ, որոնց անու-
նը թէկ թուրքման ծագում ունի, բայց այդ անունը կրող
ազգակից ժողովուրդը այլ ևս չկայ այսօր Միջին Ասիայի տա-

փաստաններում։ Այսպէս, օրինակ, Առշարները Ռւբմիայի, Քիլատի-Նադիրի'ի շրջակայքում, որոնք արդէն բոլորովին շիտ են դարձած, այսինքն վերածուել են պարսիկի։ Կազմակերը, որ առաջ Աստրաբատի սահմանակից տափարակներում էին կենում, իսկ այժմ ցրիւ ապրում են Իրանում։

Վերջապէս ցեղական անուններ էլ կան, որ ստացել են թուրքերը անապատներից իջնելուց ու Պարսից թագաւորի ծառայութեանը մտնելուց յետոյ, դրա համար էլ աւելի նոր են. այսպէս, օրինակ, Շահսեինները, որ Շահը սիրող է Նշանակում, ուրիշ խօսքով կուսակից Պարսից թագաւորին։

4. Իրանի գլխաւոր թուրք ցեղերը

Մասամբ մեր անձնական փորձի, մասամբ էլ Շէլլի (J. Sheil) տուած տեղեկութիւնների հիման վրայ տալիս ենք թուրք ցեղական անունների հետեւալ ցանկը։

Կաջար, Աֆշար, Շահսեւէն, Բէզզիլլի, Կարա-փափախ, Կաշկայի, Ալահ-վերդի, Զանքէգլու, Ռւզունլու, Աքուլ-հասան-լու, Կենգերլու, Զերըուզ, Կելէկուհ, Շեկակի, Կուրդէգլու, Բեհարլու, Ինանլու, Կիլիչ և Զելաիր։

Նախորդ գարերում, մանաւանդ Սեֆիզների ժամանակ, ըստ երեսութիւն, կլանային կապերը գեռ չէին կորուսել իրանց նշանակութիւնը, և ինչպէս երեսում է պատմական դէպքերի ընթացքից, ուրոյն ցեղերը ապրում էին միասին խիտ զանգուածներով ու որոշ տեղերում։ Այսօր նչ առաջինը կարելի է անդել, նչ էլ երկրորդը։ Նախ և առաջ միայն ուժիղ ու նշանաւոր ցեղերն են, որ մի մասնաւոր նշանակութիւն են տալիս իրանց ցեղական ծագումին, մինչդեռ փոքրիկ հատուածները, ինչպէս ինքը եմ ստուգել, իրանց ծագման վերաբերմամբ բոլորովին մութի մէջ են։

Կոիւների, կուսակցական խառնակութիւնների ու արկածախնդրութեան չնորհիւ երբեմնի ուժեղ ցեղերը մանրուել են ու ցրուել Պարոպամիսուսի ընդարձակ տարածութեան վրայ մինչև Քիւրտիստանի լեռները, և Կովկասի գլխաւոր շղթայից սկսած մինչև Պարսից ծոցը. այսպէս որ մենք այսօր նոյն ցեղին պատկանող մասերի ենք հանգիստում Կովկասում, Համադաշնում, Քիւրմանում ու Խորասանում։

Բացաւութիւն են կազմում միայն հետեւալ մեծ ցեղերը, որոնք աւելի նւազ պատակտուած, տեղափակ պահել են զեռիրանց հին նստավայրերը։

ա. Կաջարները. այսինքն Պարսկաստանի արդի իշխող տունը։ Սրանը իրանց ծագումը առնուս են Սերտակ Նօեանից,

որը իրրե Աթարէզ Պարսկաստանում մեծ դիլքի էր հասել և որի որդին՝ Կաջարը ամբողջ ցեղին տուել է իր ասունը (Կաջար աւելի ճիշտը Կաչար նշանակում է փախստական): Աքուսահիք ժամանակները, սրանք ուրիշ թուրք ցեղերի հետ միասին ապրում էին Սիրիայի սահմաններում, իսկ երբ Թիմուր 1400 թուին Դամասկոս էր արշաւում, սախալց նրանց որ ետ դառնան իրանց հին հայրենիքը, այսինքն Թուրքեատան: Բայց նրանք ճամրին կանգ առին ու մնացին Ազըրբէյջանում, Գենջէյում ու Իրաքում: Երբ Թիմուրեանների տիրապետութիւնը ընկաւ, իշխանութիւնը 1466-ին անցաւ Ազըրքօյունլուների ցեղապետ Հասան-բէզի ձեռը, որ Կաջարների հետ աղդական էր. այդպիսով և Կաջարները հասան իշխանութեան իրանց տեղում: Եւ մինչև Շահ-Աբրաս մեծի ժամանակը այդաեղ էլ մնացին, երբ այս միապետը, մասսամբ Անդրկովկասում նրանց ունեցած խիստ մեծ ազգեցութեանը նախանձելով, մասամբ էլ աւագանաբարոյ թուրքմանների դէմ նրանց իրրե պատուար ծառայեցնել ուզելով՝ բռնի ուզարկեց նրանց Գէօրգէն լճի ափերը՝ Աստրաղից հիւսիս ու Քուչանի շրջակայքը: Այսպիսով Աբրաս ապահովեց իրեն սրանց ուժից, միւս կողմից էլ թուրքօյանների ու Էօզբէզների դէմ մի պատնէշ քաշեց: Պարսկաստանի արդի արքայատունը իր ծագումը առնում է Աստրաբաղից վեր ապրող այդ Կաջարներից:

Բ. Շահսեւլները. այսինքն Շահը սիրողներ, շահի կուսակիցներ: Մի անուն, որ առաջին Սեֆիդի՝ Շահ Խամայիլի ժամանակից է զալիս ու ծագում է այն պառակտումից, որ այդ միջոցին տիրում էր այդ կողմերի թուրքերի մէջ. շին գաւանանքին ու Ազըրքօյունլուների կուսակից թուրքերը Շահսեւլն մակպիւն առին իրանց վրայ: Դրա համար էլ բոլորովին ճիշտ է Խանիկովի պնդումը, թէ սխալ է այդ ցեղը իրրե մի առանձին աղքագրական միութիւն նկատելը, քանի որ Շահսեւլները Ազըրբէյջանի ու Անդրկովկասի զանազան ցեղերից են առաջ եկել, ու գրանց ցեղային շրջանակի մէջ մտնելը համեմատարար նոր ժամանակի բան է:

Շահսեւլների մեծ մասը ամառը ապրում է էրդիրիլի մօտ, Սաւալանի էջքերին, իսկ ձմեռը 3490 վրանով (մօտ 17,450 հոգի) Մուզանի գաշտում: Բացի զբանից, մի բաւական նշանաւոր հատուած էլ կայ իրանում, որ ապրում է Թամի, Թեհրանի, Խալուինի ու Զինջանի մէջտեղում, Շէյլի ասելով մօտ 9000 վրան: Այս վերջիններս ըստ երկոյթին իրանի ամենից աւելի անհանդիսա թուրք տարբն են ներկայացնում ու մեծ մասով

թափառական կեանք են վարում, կամ կէս, կամ բոլորովին։
Գ. Կաշըաիներն ու Ալլահվերդիները, որոնք ապրում են
հարաւային Պարսկաստանում, այսինքն Թարսի նահանգում,
չնչին բացառութեամբ թափառական են։ Այս ցեղի հիմնական
տոհմը Փարս է, գաղթել է Աթարէզի Ժամանակները։ Քաշըաի
հին-թուրք բառ է ու նշանակում է «ճակտին սպիտակ բիծ
ունեցող ձի», որը իբրև գլանային անուն մինչև օրս էլ հան-
գիպում ենք թուրքօմանների մէջ։ Վերջերս անգլիացի ճանա-
պարհորդ Օլիվիէ Ս. Զօնը այցելել է այդ ցեղի ճմեռուան բնա-
կավայրը Թարաշընդ գիւղից ոչ հեռու 3000 ոտնաչափ բարձր
մի գաշտակի վրա։ Շատ եմ ցաւում, որ Ս. Զօնի ազգագրա-
կան նկատողութիւնները ձեռքս չեն հասած։

Գ. Կարա-քօյունլու, որոնք կենում են Խօյի շրջակայքում,
հաւանօրէն սերունդ են այն համբաւաւոր թուրքօման ցեղի,
որի գէմ հզօր Թիմուրը իր ամբողջ կեանքում արեան վայրի
վրէժինդրութեամբ վառուած, ոչնչացնելու կոիւ էր մղում. մի
ցեղ, որից սակայն մնացել է դեռ մի բաւական մեծ թիւ։
Այս մարդիկը, թէև ոչ իրանց լեզուի ու տիպի, բայց իրանց
վարք ու բարքի մէջ, զարմանալու աստիճան, ամենից շատ են
պահել իրանց երբեմնի թուրքօման լինելու հետքերը։

H. Vambery

(Վերջը յաջորդ համարում)

Օ Բ Ե Ր Լ Ե Ն Ե Ր Ը*)

Վ ե զ

Թընէ Ռազէնի

—Հնկունեցի՞ր:

—Այսինքն թէ, ի՞նչ ասել կուզէ, որ ես կապուած եմ նրա հետ: Անցեալ աշնանից, մանաւանդ չորս ամսից իվեր, ես պ. դը ֆարնովի՝ սրտագին ուշադրութեան առարկան եմ դառել...

—Նա էր արդեօք այն ձիաւորը, որին պատահեցի ճանապարհի վրայ, այստեղ, իս վերադարձի երեկոյեան:

—Այն:

—Նա էր, վերջիրս, մի ուրիշ սպայի հետ մեր գործարան այցելողը:

Այն, բայց ես տեսել եմ նրան գլխաւորաբար Ստրազըուրդի բարձր շրջաններում, երբ իմ հայրը ինձ տանում էր ընթրիքների և պարահանդէմների... Դու դիտես որ մայրիկը իր խարխուլ առողջութեան պատճառով, բայց մանաւանդ իր անհաշտ ատելութեամբ, գէտի այն բոլորը, ինչ զերմանական անուն է կրում, ընդհանրապէս հրաժարում էր ինձ ընկերակցին... Իսկ պ. դը ֆարնով ընդհակառակը շատ մօտ էր ցոյց տալըս իրան, նա հեռու չէր փախչում ալզասուհսց...

Ես նրան հանդիպում էի շարունակ... Նա ինձ հետ ազատորէն խօսելու բազմաթիւ առիթներ ունէր..., վերջապէս, երբ նա եկաւ այստեղ, յատկապէս նրա համար էր, որ իմ հօրից իննդրէ, թէ արդեօք ես կընդունէի նրա ձեռքը, եթէ երբէք նա ինձ առաջարկութիւն անէր ամուսնանալ: Եւ հէնց նոյն առաւտեան, ճաշից յետոյ, ես պատասխանել տուի, որ այն...

—Ուրեմն հայրս հաճութիւն տաղիս է:

*) Տես «Մուլք» № 10

—Այս:

—Միւսները:

—Ոչինչ չգիտեմ: Եւ յայտնութիւնը, ինչպէս կարող ես երևակայել, սարսափելի պիտի լինի: Մայրիկը: Պատը: Ուլրիկ մօրեղբայրը: Ես յոյս էի գրել քո օգնութեան վրայ, ժան, և մտածում էի, որ գու ինձ կաջակցես յաղթելու համար արգելքներին, կ'աշխատես ինձ հետ բուժելու իմ բանալիք վերքերը... Պէտք է որ նախ պ. գը ֆարնուլին ծանօթացնենք մայրիկին, որ նրան չի ճանաչում... Ալշէյմում այդ անկարելի է գեռ ևս... Մենք մտածում էինք ծանօթացումը կատարել Ստրաղբուրգում, մի երրորդ անձի տանը... Բայց եթէ ես ինձ դէմ պէտք է ունենամ մի թշնամի աւելի, ել ի՞նչ կարիք կայ խօսելու իմ ծրագիրների մասին...

Նրանք կանգ առան: Ժան մի բոպէ ընկղմուեց մտածութեան մէջ դիտելով իր առաջ տարածուող գարու և ցորենի գաշտը: Յետոյ մտածմունքն ու հայեացքը կենտրոնացնելով լիւսինի վրայ, որ զլուիր բարձր բռնած, պաղատաղին, խոռվուած, կրտսկոտ, սպասում էր նրա խօսքերին:

—Դու չես կարող իրևակայել թէ որքան տանջւում եմ ես: Դու խորտակեցիր իմ ամբողջ ուրախութիւնը:

—Իմ խեղճ բարեկամ, ես բոլորովին անտեղեակ էի քո սիրոյ մասին:

—Իոկ ես քաջութիւն չեմ զգում իմ մէջ խորտակելու քոնը...

Լիւսին վաթաթուեց ժանի վզով:

—Ո՞րքան վեհանձն ես, իմ ժան, ո՞րքան բարի ես: Ժան նրան հեռացրեց և ասաց թաղծութեամբ.

—Ո՞չ այնքան վեհանձն, այնքան բարի, որքան կարծում ես, լիւսին, որովհետեւ դա կապացուցանէր իմ տկարութիւնը: Ո՞չ ես քո վարմունքը չեմ՝ հաւանում: Ո՞չ ես չեմ հաւատում, որ զու կարող ես երջանիկ լինել...

—Բայց զոնէ դռւ ինձ աղատ կը թողնես, չէ: Դու ինձ չես հակառակուի, չէ: Դու ինձ կը պաշտպանես մայրիկի առաջ:

—Այն, քանի որ զու արդէն ֆարնուլին տուել ես քո համաձայնութիւնը, քանի որ հայրս տուել է նոյնպէս իր հաւանութիւնը, և քանի որ մայրիկի ընդուժութիւնը կարող էր աւելի մեծ դժբախտութիւնների ծնունդ տալ...

—Իրաւունք ունես, ժան, աւելի մեծ կժբախտութիւնների, որովհետեւ հայրս ինձ ասաց...

—Այն, գուշակում եմ, նա ասաց որ պիտի ջախջախէր

ամեն ընդդիմութիւն, որ նոյնիսկ ուելի շուտ պիտի նուխընտրէր մօրիցս բաժանուել, քան տեղի տալ նրա կամքի առաջ... Դա շատ հաւանական է... Նա այդ կանի: Ես, հետեւաբար, նրա դէմ ոչ մի կուեւ չպիտի մղեմ... Միայն թէ ես ոչ մի յանձնառութիւն չեմ վերցնում ինձ վրայ հանդէպ որ ֆարնովի:

— Ի՞նչ ես ուզում ասել, հարցրեց Լիւսիէն թափով:

— Ես կամենում եմ, պատասխանեց Ժան մի այնպիսի հեղինակաւոր շեշտով, ուր Լիւսիէն զգաց իր եղրօր անյաղթելի վճիռը, ես կամենում եմ որ նա բացարձակապէս իմանայ ինչ որ խորհում եմ: Ես կը գտնեմ միջոց բացարուելու նրա հետ: Եթէ նո նորից յամառի քնող հետ ամուսնանալու իր որոշումի մէջ, նա դռնէ չի խարուի այն ահագին տարբերութեան մասին, որ գոյութիւն ունի նրա և իմ զղացումների և գաղափարների միջի:

— Այդ բանում, ես բոլորովին համաձայն եմ քեզ հետ, ասաց Լուսիէն, յանկարծ կատարելապէս վստահացած և միենայն ժամանակ ժպտաց, որովհետեւ համուսած էր, որ պ: զը ֆարնովը պիմագրէր Ժանի խորհուրդներին և այնուամենայնիւ չպիտի հրաժարուէր ամուսնութիւնից:

Դէմքը գարձրեց դէպի Ալշէյմ: Յաղթանակի մի ճիչ բարձրանում էր դէպի շրթունքները: Բայց զատեց նրան: Մի քանի ըստէ մնաց լուռ, արագ արագ չնշելով, զղագրզուած, և որոնելով թէ աչքերով և թէ մտածումով թէ ինչ կարող էր ասել արդեօք, որպէսզի չմատներ իր յորդող երջանկութիւնը:

Յետոյ թափ տուեց գլուխը

— Խեղճ գուն, բացականչեց: Այժմ երբ պէտք է նրանից բաժանուեմ, նա դառնում է ինձ համար թանգարին: Ես համոզուած եմ, որ ալագայում, երբ գարնիզոնի կեանքը ինձ կը հեռացնէ Ալզասից, Ալշէյմի պատկերը շարունակ անբաժան կը լինի իմ մտքից, նրան միշտ կը տեսնեմ երեակայութեամբ այնպէս ինչպէս այժմ տեսնում եմ այստեղից:

Դիւզը բարձրանում էր իր վարդագոյն կտուրներով այդ գեստանների միջից: Իր ծառերով նա կազմում էր մի կըզի ապրիլեան ցորենների և առւոյտների մէջ: Փոքրիկ թռչուններ՝ լոյսից ոսկեզօծուած, թազկոտում էին Ալշէյմի վրայ: Օբերլէների տունը, այդ հեռաւորութիւնից, միւսների հետ խառնուած, միացած էր երեսում: Շրջապատող իրերի մէջ մի այնպիսի քաղցրութիւն կար, որ կարելի էր կարծել թէ կեանքն իսկ քաղցր է:

Լիւսիէն անձնատուր եղաւ այդ գեղեցիկ տպաւորութեան, որ զգում էր այժմ սիրային մտածումի հետեանքով: Նա նորից լսեց իր սեփական խօսքերը. «Ալշէյմի պատկերը շարունակ Նոյեմբեր, 1905.

անբաժան կը լինի իմ մտքից, ևս նրան կը տեսնեմ երեակայութեամբ այնպէս, ինչպէս այժմ ես տեսնում այստեղից:» Յետոյ Բաստիանների ծառերի կատարի ծփուն գիծը, որ բարձրանում էր որպէս մի փոքրիկ, կապտագոյն ամպ, վերջին պարտէզներից գէնը, յիշեցրեց նրան ժամի վիշտը: Նա այդ բոպէին միայն նշմարեց, որ չէր պատասխանել. յուզուեց ոչ այն աստիճան, որ հրաժարուի իր սեփական երջանկութիւնից, ժանին երջանկացնելու համար, այլ այն ցաւից, որ պատճառում էր նրան իրանց սէրերի լնդհարումը: Նա կը ցանկանար մեղմացնել իր զարթած վիշտը, օրօրել նրան բառերով, քննցնել նրան, չզգալ այլև նրա ներկայութիւնը:

—Իմ ժան, իմ նղբայր ժան, ասաց, ես կը հատուցանեմ այն բոլորի փոխարէն, որ կանես ինձ համար, օգնել քեզ իմ ուժերի չափով: Ո՞վ գիտէ, թէ միասին աշխատելով՝ չպիտի լուծենը հարցը...

—Ո՛չ, այդ հարցի լուծումը իմ և քո ոյժերից բարձր է:

—Օդիլը քեզ սիրում է: Այն, քեզ սիրում է, չէ: Ուրեմն դուք անյալթելի կը լինէք...

ժան յոգնութեան մի շարժում գործեց:

—Աւելորդ է, իիւսիէն, վերադառնանք...

—Աղաչում եմ քեզ... Գոնէ պատմիր ինձ թէ ի՞նչպէս սիրեցիր նրան... Ես արժանի եմ հասկանալու այդ... Մենք որոշել էինք չբաւականանալ միայն անուններ յայտնելով միմիանց: Բացի ինձանից ով ունիս, որի առաջ կարողանաս բաց անել քո հոգին:

Իիւսիէն խոնարհուում էր իր եղբօր առաջ: Նա մինչև անգամ նուաստացում էր գգում իրանց իր թաքուն երջանկութեամբ... Նա նորից հարց տուեց: Մեծ խանդաղատանքով վերաբերուեց, ճիշտ բառեր գտաւ նկարագրելու համար Օդիլի երեսի վեղեցկութիւնը, և ժան խօսեց: Նա խօսեց, մէկից իր յոյսը հաղորդելու պէտքից դրդուած, յոյս՝ որ կուռմ էր գեռեւ ևս չմեռնելու համար: Նա պատմեց Զատկուայ նախատօնակի գէպքերի մասին Սէսոդ-Օդիլում, պատմեց, թէ ի՞նչպէս հանդիպել էր երիտասարդ աղջկան, Աւագ Հինգարթի, կեռասենիների ծառուղու մէջ: Այնուհետև, մէկը միւսից յիշողութիւնը թարմացնելով, թուականները ճշտելով, բառեր յիշեցնելով խորասուզուեցին անցեալի մէջ, մինչև այն օրերը, երբ պզգականների միջև գժտութիւնները նոր էին ձայն տուել, երբ զրանք անծանօթ էին դեռևս որդիներից, աննշմարելի, երբ արձակուրդների ժամանակ, իիւսիէն, Օդիլ, ժան, կարող էին կարծել որ իրանց երկու ընտանիքները սէրտօրէն միացած՝ կը շարունա-

կէին ապրել Ալշէյմ գիւղում իբրև յարգուած, սիրուած տէրեր՝ կիւսիէն ուշը չէր դարձնում նոյն բանի մասին, թէ վերակոչելով երջանիկ անցեալի յուշերը, նա խոռվում էր իր եղբօր միտքը: Նա այդ յուշերի ոգումից մի բոպէ հաճոյք զգաց, այն յուսով որ կարող է ներկան ընկղմել անցեալի մէջ, բայց անմիջապէս երկուսի հակասութիւնը աչքի էր խփել և ըմբոստացումը վերածնուել էր իր մէջ աւելի խորը, փոթորկելով իր հոգու բոլոր գորութիւնները իր հօր, բրոջ դէմ, այն կեղծ կարեկցութեան դէմ, որի ետև թաքնում էր Լուսիէնի զոհաբերութեան անկարողութիւնը: Երիտասարդը շուտով դադարեց պատասխաննելուց իր քրոջ խօսքերին: Ալշէյմը մեծանում էր, և կազմում էր այժմ մի երկար և տեղ տեղ կոտրատուած ուրուագիծ: Խաղալ գիշերուայ մէջ, Օբերլէների տունը՝ տակաւին նիհար ծառերի կատարների վերև բարձրացնում էր իր պահապան տանիքը: Երբ պարզի վանդակապատ դուռը՝ որ ամեն օր փակլում էր զործաւորների մեկնումից յետոյ, բացուեց երկու զբօնողների առաջ, ժան մի կողմ կանգնեց, հեգնական շեշտով փսխաց նրա ականջին:

—Համեցէք, բարոն ֆոն Ֆարնով, մտէք նախկին բողոքարկու պատրամաւոր Ֆիլիպ Օբերլէի տունը:

Նա պատրամաւում էր պատասխաննելու: Բայց, ծառուղու աւագի վրայ լսուեց զօրեկ ոտնաձայն: մի մարդ շուռ էր գալիս հսկայ կազմամախիների մի կոյտի առաջից: մի թռթուուն, հրամայողական ձայն, որը երգում էր երջանիկ, անվիշտ շեշտով ասաց:

—Ահա նրանք, այդ փոքրիկ սիրելիները: Ի՞նչ զբօսանք կատարեցիք զաւակներս: Գործարանի ջրվէժից տեսայ ձեւ դաշտում ինչպէս երկու սիրահարներ, միմիանց վրայ կուցած ման էիք գալիս:

Պ. Փողէք Օբերլէ ըննեց երկուսի դէմքերը, և տեսաւ որ գոնէ Լիւսիէնի երեսը ժպտուն էր:

—Միմիանց զալտնիքներ էիր հաղորդում, այնպէս չէ, շարունակեց նա: Գուցէ և մեծ զալտնիքներ:

Լիւսիէն իր եղբօր ցաւկոտ վշտից նեղացտծ իսկոյն պատասխանեց.

Այն, ես խօսեցի ժանի հետ: Նա հասկացաւ իմ դրութիւնը: Նա չսլիտի ընդդիմանայ ինձ:

Հայրը շտապագին սեղմեց իր որդու ձեռքը:

—Ես այդ ազնուութիւնը գիտէի որ կունենայ նա: Շարունակել են, ժան: Ես չեմ կարող մոռանալ քո վարժունքը:

Իր ազատ մնացած ձախ ձեռքով բանեց Լիւսիէնի ձեռքը,

և իբրև երջանիկ հայր, իր երկու զաւակներից շրջապատռած, մանուածապատ մեծ ծառուղով, որով գնում էին կտոքերը, անցաւ պարկից:

Մի էին՝ սրահի ապակիների եակից նրանց գալը տեսաւ, և շատ խղճուկ ուրախութիւն միայն զգաց այդ ընտանիկան տեսարանից: Նա մտածում էր որ հօր և զաւակների միութիւնը կատարուել էր վերջապէս իր դէմ:

—Գիտես, իմ սիրելի ժամ, ասում էր հայրը՝ գլուխը վեր վերցնելով և դղեակի ճակատը զնելով, զիտես որ ես ուզում եմ ինայել զիւրագգաց արժանապատռութիւնները. պատրաստիլ հարցերի լուծումը և բռնի ընդունել տալ միայն այն դէպում, երբ այլապէս անկարելի է: Մենք հրաւիրուած ենք Բրաւսիզի կողմից...

—Ահ, վերջապէս հրաւիրել է:

—Այս, ընթրեքի, մի բաւական բազմամարդ երեկոյթի: Իսձ թւում է պ. գը ֆարնովին քո մօր ներկայացնելու համար: Այդ ծանօթացումից յետոյ միայն կը խօսեմ քո մօր հնա: Եւ զրա տոպաւորութիւնների վրայ ոչ մի ճնշում գործ չդնելու համար ես ամեն ինչ քեզ պիտի յանձնեմ, քեզ պիտի յանձնեմ կուսիւ էնի ապագան... Այդ սիրելի փոքրիկի, որի երջանկացնելը իմ երազն է կազմում... Ոչ մի խօսք պատին, այնպէս չէ: Ամենից յետոյ կիմանայ նա բոլորը, և ասել, որ գործը արդէն ուղղակի չի վերաբերում նրան:

Վերնապաւթի առաջ տարածուող դատարկի, մեծ տարածութիւնը, երկար ժամանակից իվեր չէր տեսել մի այդքան սերտորէն միացած խմբի՝ իր հարթ հաւասար աւազի վրայ կոխոտելը: Սրահում, մի բիչ յետ քաշուած՝ ջանալով վստահութեան փոքր նշոյլ պահել իր հոգում և չյաջողելով՝ տիկին Օբերլէ գաղարել էր աշխատելուց: Գորգը ընկել էր գետնի վրայ: Ժամ խորհում էր:

«Ես պէտք է օգնիմ ուրիմն այդ տեսակցութեան, պէտք է դէպի այն մզեմ մայրիկին որ ոչինչ չի կասկածում այդ մասին: Ի՞նչ դեր եմ խաղալու, որպէսզի խուսափինք աւելի մեծ գժրախտութիւններից ... Բարեբախտաբար, մի օր, երբ նա ամին ինչ իմանայ, ինչ պէտք է ների:»

• • • • •
Երեկոյեան, շատ ուշ, իր որդում համբուրելով՝ տիկին Օբերլէ հարցնում էր.

—Հայրդ պնդում է, որ Բրաւսիզների հրաւերը ընդունում եմ: Դու էլ պիտի գնանս, սիրելի զաւակս:

—Այս, մալլինկ:

—Այդ դէպէռում, ես էլ համաձայն եմ գնալու:

X

Բրաւսիզ խորհրդականի տան ընթրիքը

Ժամի 7-ին, ներքին խորհրդական պ. Բրաւսիզի բարոր հիւրերը հաւաքուել էին կապոյտ սրահում,—թաւշեայ ծածկոցներով և ոսկեզօծ փայտերով, —որ պաշտօնեան վոխադրել էր իր հաւ ընակութիւն հաստատած ալեայլքաղաքներում: Պ. ներքին խորհրդական Բրաւսիզ մի սաքսոն էր, հիանալի գաստիարակութեամբ, փայտիայիչ ձևերով և շարժումներով: Նա սովորութիւն ունէր հակուելու միշտ այն կողմը, որից նրան դիպչում էին: Բայց կազմուածքը պինդ էր: Իր փոփոխամիտ ընաւորութեան հակառակ, անփոփոխ, լճացած էր իր մըտքերով: Բարձրահասակ էր, շէկ, համարեա կոյր, երկար մազերով, կարճ, կարմիր և սպիտակ մօրութով: Ակնոցներ չունէր, որովհետեւ նրա աչքերը ոչ կարճատես էին և ոչ հեռատես, այլ լոյսը սպառուած, կայծերը մարած էին և կրում էին տժոյն ագատի գոյն: Շատախօս էր: Նրա մասնագիտութիւնը կայանում էր հաշտեցնելու ամենահակասական կարծիքները: Նրա նկարագիրը ամբողջապէս երևան էր գալիս իր պաշտօնավարութեան ժամանակ, դէպի ստորագաները պահպանած իր յարաբերութիւնների մէջ: Պ. Բրաւսիզ կայսերական ովու տէր էր: Նա երբէք իրաւոնք չէր տալիս մասնաւոր անհամուներին: Պաշտօնական շրջաններում պնդում էին որ գիտաւորութիւն կար պ. Բրաւսիզին ազնուական գարձնելու: Եւ ինքը յաճախ կրկնում էր այդ ամեն անդ: Կինը յիսուն տարեկան էր, պատկառելի հասակով: Երեւում էր որ նա երիասարդութեան ժամանակ շատ գեղեցիկ է եղել, նախ քան Ստրավուրդում ընակութիւն հաստատելը, նա ընդունել էր իր տանը զերմանական ութը քաղաքի պաշտօնեաներին: Նրա տուած ճաշերի ժամանակ նրա ամբողջ ուշազրութիւնը կինորոնացած էր լինում սպասաւորների ծառայութեան վրայ և իր հիւրերի հարցերին պատասխանում էր միշտ անմիտ Փրազներով:

Հրաւիրեալները կազմում էին ցեղերի և պարապմունքների այնպիսի մի խառնուրդ, որը գժուար կարելի էր գտնել գերմանական այլ քաղաքներում: Ո՞քքան օտար տարրեր կան ներկայումն Ստրավուրդ քաղաքում: Հիւրերի թիւը տասնեչորս էր: Ճաշասրահը հազիւ տասնեւեց հոգու համար լինէր:

Պարոն ներքին խորհրդականը իր մօտ, իր շուրջը ունէր

և նրանց վրայ իշխում էր իր անհամ ու տխուր գլխով—պաշտապանեալներ, յանձնաբարուածներ կամ բարեկամներ, որոնք եկել էին կայսրութեան այլնայլ կողմերից. երկու պրիվադօցնա, պրուսացի, Ստրազրուրդի համալսարանից, յետոյ ալզասեցի երկու երիտասարդ արուեստագէտներ, երկու նկարիչներ, որոնք մի տարուց իվեր աշխատում էին մի եկեղեցու որմանկարների վրայ. զրանք, չորսն էլ, անշուք հիւրերն էին. սրանց վրայ աւելանում էին երկու երիտասարդ Օքերլէները. քոյր և եղբայրը, և մինչև անգամ մայրը, որը՝ պաշտօնական շրջաններում, նկատում էր իբրև սահմանափակ մտքի տէր անձ: Նշանաւոր հիւրերն էին պրոֆեսոր Կնէպալէ, Մեկլենբուրգցի, զարգացած և ուշադիր միտք, խնամեալ հմտութեամբ, հեղինակ մի պատուական աշխատութեան, «Ընկերվարութիւնը՝ Պղատոնի գործերում» տիտղոսով, ամուսին՝ մի սիրուն խարտեաշ, կլոր և վարդագոյն կնոջ, որ աւելի ևս խարտեաշ, աւելի ևս վարդագոյն էր երևում իր ամուսնու ասորական, ու և խճուճ մօրուքի կողքին. գեղեցկագիտութեան, էսթէտիկայի պլոֆեսոր բարօն Ֆինկէն, բաղէնցի, որ ածելում էր իր երեսն ու ծնօտը՝ աւելի լաւ կարևոսալ ցոյց տալու համար ուսանողութեան ժամանակ վարած մենամարտների սպիները. նուրբ ու ջլուտ մարմին, կորովի գլուխ, վեր դարձրած բիթ, կրակոս, կրբոտ, շատ ֆրանսատեաց միտք, և որը, ներկայ հիւրերի մէջ, առենից աւելի մօտ էր սակայն ֆրանսիական տիպին, եթէ չհաշուենք ժամանակ Օքերլէն: Տիկին Ֆինկէն գրյութիւն չունէր բնաւ: Բայց կար գեղանի տիկին Ռոզէնբլատը, որը իր գեղեցկութեան և իր սրամտութեան պատճառով ամենից աւելի նախանձ էր յարուցանում, ամենից աւելի յարգանք էր ներշնչում, ամենից աւելի վնտրումէր Ստրազրուրդի գերմանական աշխարհում, և նոյնիսկ զինուորական շրջանակներում: Նա պրուսացի էր, Հոնենոսի ափերից, ինչպէս իր ամուսինը՝ երկաթի մեծ վաճառական Կարլ Ռոզէնբլատ, արշիմիլիոնէր, արիւնային, բայց և այնպէս մէթօդիկ, լուռ անձնաւորութիւն, որը, ինչպէս պատճում էին, ծայրայիշ և սառը յանդգնութիւն էր ցոյց տալիս գործերի մէջ:

Այդ՝ հրաւէրը նման էր այն բոլոր հրաւէրներին, որ տաւլիս էր Բրատսիկ խորհրդականը, նրա հիւրերը ամենակն նոյնատեսակ մարդիկ չէին: Բարձր պաշտօնատարը անուանում էր այդ՝ «հաշտեցնել երկրի զանազան տարրերը». Նա ասում էր, որ իր տունը ներկայացնում է մի չեզոք հող և մի ազատ բեմ, ուր կարող էր արտայայտուել ամեն կարծիք: Բայց շատ ալզասեցիներ կասկածանքով էին վերաբերուուք

դէպի այդ ընտրողականութիւնն և այդ ազատութիւնը:
Ոմանք պնդում էին, որ պ. Բրաւսիդ խաղում էր պար-
զապէս մի գեր, և որ նրա տան մէջ արտասանուած
ամեն բան անծանօթ չէր մնում երբէք ամենաբարձր
շրջանակներին:

Տիկին Օբերլէ և իր զաւակները՝ պ. ներքին խորհրդա-
կանի ամենաուշ համառող հիւրերը եղան: Գերմանացի հրաւիրեալ-
ները սիրալիրութեամբ ընդունեցին Լուսիէնին, որ նրանց մէջ
դտաւ արդէն բաւական հին բարեկամներ: Մօր վերաբերմամբ քա-
ղաքավարի եղան, գիտէին որ նա պաշտօնական շրջանակներին
այցելում էր միայն հարկադրուած: Վիլհէլմ Ֆօն Ֆարնով
որին ծանօթացրեց տիկին Բրաւսիդ, որը միայն տեղեալ էր
սպայի մտադրութեան, գլխի հանդիսաւոր խոնարհումով բարե-
ւեց մօր և աղջկան և յետոյ շտկուեց, հասակն ուղիղ ցցեց, և
իսկոյն խառնուեց խմբուած մարդկանց, որ կանգնել էին հայե-
լու մօտ:

Մի ծառայ լուր բերեց որ ճաշը պատրաստ է: Սև հագուս-
տների մի շարժում տեղի ունեցաւ դէպի առաջ, և հրաւիրեալ-
ները մտան մի ընդարձակ սենեակ, զարդարուած՝ Օբերլէների
տան նման, յայտնի նախասիրութեամբ: Բայց միւնոյն ճաշակը
չեր երևում այստեղ: Ամբողջ դէկօրացեան յիշեցնում էր գո-
թական արուեստը:

Ժան, որ ընտրողների այդ թափորում վերջին եկող-
ներից մէկն էր, իր թեր տուել էր սիրուն տիկին Կնէպպէէին,
որը շարունակ գիտում էր տիկին Ռոչէնրլատի հիանալի կեր-
պով պատրաստուած կօրսաժը: Պրոփեսոր Կնէպպէէի փոքրիկ
կնոջն այնպէս թուաց, թէ ժան Օբերլէ նոյնպէս հետաքրքր-
ում էր նոյն առարկայով, իսկոյն ասաց.

—Այդպիսի դէկօրտէ հագուստն անվայել է, այնովէս չէ:

—Իսկ ես գտնում եմ որ հիանալի է կարուած: Ինձ թւում
է որ տիկին Ռոչէնրլատը իր հագուստները պատրաստել է
տալիս Պարիզում:

—Այս, ճիշտ գուշակեցիք, պատասխանեց փոքրիկ բուր-
ժուազը: Երբ մարդ այդքան խոշոր հարստութեան տէր է, յա-
ճախ տէր է լինում և անհեթեթ քմահաճոյըների և քիչ հայրե-
նասերաւթեան:

Ճաշի սկիզբը բաւական լուռ անցաւ: Բայց հետզհետէ
բարձրացաւ մասնաւոր խօսակցութիւնների ազմուկը: Նոր էին
սկսում խմել: պ. Ռոզենրլատ իր գաւաթի մինչև բերանը լեց-
նել էր տալիս Հունոսի գինիով: Ակնոցաւոր երկու պրիվա-դո-
ցենաները թողել էին Հունոսի գինին և ընկել էին Վոլքայմի

զինու վրայ, ինչպէս մի գժուար ընթեռնելի ձեռագրի վրայ և նոյնքան լրջութեամբ։ Զայները բարձրացան, հնչեցին ուժեղ։ Ծառաների ոտնաձայնը չէր լսում այլիս տախտակամածի վրայ։ Ընդհանուր խնդիրների վերաբերեալ հարցերը սկսեցին երեան գալ, ինչպէս փրփուրը գաւաթի մէջ։ Պրօֆեսօր կնէպպէց, որ թու ձայն ունէր, բայց արտասանում էր շատ յստակ կերպով, իշխեց խօսակցութիւնների ժխորի վրայ պատասխանելու համար տիկին Բրաւսիգին, որ նստել էր իր կողքին։

—Ո՞չ, ես չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է ուժեղի կողմը բռնել, այն պարզ պատճառով որ ուժեղ է։ Ես միշտ մի միքերալ եմ եղել։

—Դուք ակնարկում էք գուցէ Տրանսվալը, ասաց, հնչուն ծիծաղով՝ խորհրդականը, որ նստել էր նրա դիմաց և շատ բաւական էր որ ուղիղ գուշակեց։

—Այո, հէնց Տրանսվալը, պարոն ներքին խորհրդական։ Այնքան էլ լսու քաղաքականութիւն չէ թողնել որ ջախջախուի տկարը։

—Այդ ձեզ զարմացնում է։

—Ո՞չ, չի զարմացնում։ Բայց ես ասում եմ, որ չարժէ այդպիսի քաղաքականութեամբ պարծենալ։

—Միթէ միւս ազգերը այլ կերպ վարուեցին, հարցըց բարօն Փօն Ֆինկէն։

Վեր բարձրալցեց իր լիրք քիթը։ Ո՞չ ոք չշարունակեց վիճաբանութիւնը, որպէս թէ ասած բերուած պատճառարանութիւնը անհերքելի լինէր։ Եւ նորից սկսուեց թաւալուել ընդհանուր խօսակցութեան ալիքը, միախառնելով և ընկլմելով մասնաւոր խօսակցութիւնները։

Տիկին Ռոգէնբլադի երաժշտական ձայնը խըզեց այդ ժխորը։ Նա ասում էր փոքրիկ տիկին Կնէպպէին որ նստել էր սեղանի միակողմը։

—Այս, տիկին, հաւատացնում եմ քեզ, որ մտածուած է այդ մասին։

—Ամեն ինչ կարելի է, տիկին, բայց, այնուամենայնիւ ես երբէք չէի ենթադրում, որ գերմանական մի քաղաքի խորհուրդը կարողանար նոյնիսկ վիճաբանութեան դնել մի այդպիսի գաղափար։

—Այնքան էլ անմիտ չէ։ Այդպէս չ՞, պարոն պըռփեսոր, դուք որ ուսուցանում էք գեղեցկագիտութիւնը։

Պրօֆեսօր Փօն Ֆինկէն, տիկին Ռոգէնբլադի աջ կողմը նստած՝ դարձաւ գէպի նա, նայեց նրա մինչև աչքերի խորքը, որոնք մի լճի նման անվրդով մնացին, և ասաց։

— Ի՞նչի՞ մասին է, տիկին:

— Ես առում եմ տիկին Կնեպպէի, որ քաղաքային խորհը բուժ հարց է յարուցուած Պարիդ ուղարկելու Գօրլէնի գորգերը, որ կաղմում են քաղաքի սեպհականութիւնը: Նրանք նորոգութեան կարիք ունին:

— Ուղիղ է, տիկին, բայց մերժուեց:

— Ի՞նչու չուղարկել Բերլին, հարցրեց տիկին Կնեպպէի վարդագոյն, սիրուն բերանը: Միթք Բերլինում անձաշակ են աշխատում:

Բրաւսիկ խորհրդականը միջամտելու և հաշտեցնելու վայրկեանը եկած համարեց:

— Գօրլէնի գորգեր պատրաստելու համար, անկասկած ես իրաւոնք կը տայի տիկին Ռոզենբլատին, Պարիդն այս դէպքում անհրաժեշտ է: Բայց նորոգութիւններ կատարելու համար ինձ թւում է թէ կարելի է ուղարկել Բերլին:

— Մի Գօրլէնի գորգերը Պարիդ ուղարկել, բացականչեց տիկին Կնեպպէ, վստահ էր որ նրանք յետ կը դառնային:

— Օ՞հ, գոչեց լրջութեամբ, սեղանի ծայրից, երիտասարդ նկարիչներից մէկը... Օ՞հ, տիկին:

— Ի՞՞սչպէս թէ, ճն: Դուք արդասցի էք, պարզն, ասաց վու քուկ բուրժուազը, ասդնսուած բացականչութիւնից, որպէս մի ասեղի ծայրից: Բայց մենք, զերմանացիններս, իրաւունք ունենք կասկածանքով վերաբերուելու...

Նա չափից անց էր կացել: Ո՞չ որ գիտողութիւն չսրեց: Եռանդուն խոսակցութիւնը մարեց, և ամեն մարդ սկսեց վաղաքական գովեստներ ուղղել այն ձինեղէնի հասցէին, որ հրամցնում էին: Նոյն ինքն տիկին Կնեպպէ վերադարձաւ այնպիսի թէմանների, որ իրան տւելի ընտանի էին, որովհետեւ նա շատ քիչ անդամ մասնակցում էր վիճաբանութիւնների, աղամարդկանց ներկայութեամբ: Նա դարձաւ գէսլի հարեւանը Ֆօն Ֆարնով, որպէսով ոչ գեղանի տիկին Ռոզենբլատին և ոչ էլ նրա կօրսաժը տեսնէ...

Տիկին Բրաւսիկ հապիւ մի քանի ամնշան բառեր փոխանառ կել էր պ. Ռոզենբլատի հետ, որը նստել էր նրա աջ կողմում և անյաղաքար ուտում էր, ինչպէս և պրոֆեսոր Կնեպպէի հետ, որ նստել էր ձախ կողմում և շարունակ խօսում էր տիկին Ռոզենբլատի, բարօն Ֆօն Ֆինդէնի հետ և երեսն էլ ժան Օբերլէի հետ: Դարձեալ մի վիճաբանութիւն ծագեց, որի պատճառը այս անդամ տիկին Բրաւսիկը եղաւ և առանց ուղելու: Խօսակցութիւնը իսկոյն տաքացաւ և անօրինակ ոգեորութեան հասաւ: Խորհրդականի կինը խօսում էր պ. Ռոզենբլատի հետ, հայեացքով

սպառնալով հանդերձ մի ծառայի, որ անզգուշութեամբ ընդհարութեալ էր իր գլխաւոր հիւրի՛ տիկին Ռոչնբլատի աժոռով յենարանին. նա խօսում էր մի ամուսնութեան մասին, որ տեղի էր ունեցել մի ալղասուհու և թնդանօթաձիգ զօրքի հրամանաւատար հանօվրցի մի գերմանացու միջն։ Երկաթի վաճառականնը՝ առանց կասկածելու որ իր կողքին նստել էր մարդկ՝ մի այնպիսի երիտասարդ աղջկայ, որի հետ ցանկանում էր ամուսնանալ և մի այլ գերմանացի սպայ, տաքացած պատասխանեց.

—Երեխաները լաւ գերմանացիներ կը լինեն, այդ կարգի ամուսնութիւնները հազուադէպ են, կարելի է ասել նոյնիսկ չափազանց հազուադէպ, որովհետև հզօրապէս պիտի նպաստէին այդ յամառ երկրի գերմանացման։

Բարոն Ֆօն Ֆինկէն սեղանի վրայ դրեց շամպանեի բաժակը, որը մի ումազով դատարկել էր, և ասաց.

—Բոլոր միջոցները լաւ են, որովհետև նպաստակը շատ ազնիւ է։

—Անկասկած, ասաց պ. Ռոզենբլատ։

Ժան Օբերէ, ներկայ եղող երեք ալզասցիներից ամենայայտնի, ամենայարմար անձն էր պատասխաներու համար, ինչպէս և, ըստ երեսյթին, ամենայ աւելի արգելքներ ունեցող անձը իր կարծիքը յայտնելու, այն երկպառակութիւնների պատճառով որ այդ միևնույն հարցը գցել էր իր շուրջը։ Նա նկատեց, որ, խօսելիս՝ բարօն դը Ֆինկէնը նայել էր նրան, որ պ. Ռոզենբլատը հայեացքը սկսեն էր իր վրայ, որ պրոֆեսոր կնապալէ, գաղտադողի մի ակնարկ էր գցել իր ձախ հարևանի վրայ, որ պ. Ռոզենբլատը ժպտում էր մի այնպիսի կերպարանքով, որ կարծես ուզենար ասել. «Այս փոքրիկը կարո՞ղ է արգեօք իր աղգը պաշտպանելու։ Զգում է խթանը։ Տեսմէնք։»

Երիտասարդը՝ ընտրելով իր հակառակորդին և դարձած գէպի պ. ը. Ֆինկէնը, պատասխանեց.

Ես մտածում եմ, ընդհակառակը, որ Ալզասի գերմանացումը մի վատ և ձախորդ գործողութիւն է։

Նոյն ըսպէին ժանի դէմքը արիացաւ՝ նրա աչքերի կանաչը թռթուց, ինչպէս անտառների կանաչը, երբ քամին մտրակում է ծառելը։

Գեղեցկագիտութեան պրոֆեսորը ստացաւ մի զինուորականի կերպարանքը։

—Ինչո՞ւ վատ, ինդրէմ։ Արդեօք դուք նրա նուածումը մի ցաւալի գործ էր համարում. նուածման, որի հետևանքն է գերմանացումը. Եթէ համարում էր, ինչո՞ւ էր թաքցնում, ասացէք։

Բոլոր հրաւիրեալների խոր լսութեան մէջ, ժան Օբերլէի
պատասխանը թնդաց.

—Այս:

—Դուք համարձակում էք, պարո՞ւ:

—Թոյլ տուէք, բացականչեց պ. ներքին խոհրդական
Բրաւիգ, ձեռքը երկարելով, որպէս օրհնելու համար: Մէնք՝
ըոլոր այսուղ հաւաքուածներս, պատուական գերմանացիներ
ենք, իմ սիրելի բարօն, դուք իրաւունք չունիք կասկածի են-
թարկելու, իմ երիտասարդ բարեկամի հայրենասիրութիւնը,
որ խօսում է պատմական տեսակէտից...

Տիկին Օբերլէ և Լուսիէն նշանացի ասում էին ժանին
«լոիր, լոիր:»

*Բայց բարօն դը Ֆինդէն ոչինչ չտեսաւ, ոչինչ չլսեց:
Դաժան կիրքը, որ փայլում էր սրա դէմքի վրայ, պոռթկաց:
Կիսով չափ բարձրացաւ տեղից, կուացաւ, զլուխը դէպի առաջ
ձգած.

—Ի՞նչ ասել կուզէ, հիանալի է, Ֆրանսիան: Նա մէկ
սիրտ, մէկ հոգի է: Նա հղօր է: Նա բարոյական է:

Փոքրիկ տիկին կնէպպլէ շարունակեց.

—Մանաւանդ բարոյական:

Բարձր, ցած, հեգնական, զայրացած ձայներ խառն ի
խուն բացականչեցին.

—Զուբճասէրներ են Ֆրանսիացիները:

—Մէկ մտիկ տուէք նրանց գարշելի վէպերին և պիէսա-
ներին:

—Այլասերուած, ընկած է Ֆրանսիան:

—Բանը պըծած ազգ է:

—Ի՞նչ կարող է անել յիսունեմինդ միլիօն գերմանացու
դէմ:

Ժան թոյլ տուեց որ բդաւեն: Նա նայում էր մերթ Ֆին-
դէնին, որ ձեռքով, զլխով կատաղի շարժումներ էր դործում,
մերթ Ֆարնովին, որ յօնքերը կիտած և զլուխը բարձր բռնած
լսում էր:

—Ինձ թւում է, որ դուք չափազանց նախատեցիք Ֆրան-
սիան, պատասխանեց Ժան վերջապէս: Կարող է պատահել, որ
նրա կատավարիչները անքննաղատելի չինեն, կարող է պատա-
հել որ նա տկարացած լինի ներքին երկարառակութիւններով.
Բայց քանի որ դուք յարձակում էք նրա վրայ, ես երջանիկ
եմ զգում ինձ ասելու, որ ես նրան նկատում եմ դեռ ևս իրեն
մի շատ մեծ ազգ: Դուք ինքներդ, այլ կարծիքի չէք:

Իսկական բդաւոցներ բարձրացան.

— Օ՞հ, օ՞հ, ասելիք չկայ:

— Ապացոյց՝ այն, դուք մը լեզնօրէն յարձակւում էք նրա վրայ: Ուղիղ է դուք նրան յաղթեցիք, բայց չէք դադարում երբէք նրան նախանձելուց:

— Դուք վաճառականական ստատիստիկաները կարդում էք, երիտասարդ պարոն, հարցրեց պ. Խողէնքլատի անյողողող ձայնը:

— Իրանց վաճառականական նաւելով վեցերորդ տեղն են բռնում, ճշաց պըիկա-դօցէնտներից մէկը:

— Բաղդատեցէք մեր և նրանց բանակները, ասաց միւսը Պրոֆեսոր Կնէպպէ՝ ակնոցները քթի վրայ լաւ հաստատելուց յետոյ, ճառեց,

— Ի՞նչ որ դուք ասում էք, իմ սիրելի Օքերլէ, ճիշտ է միայն անցեալի համար: Ես կարող եմ աւելացնել, որ եթէ ֆրանսիան սեփականացքած լինէինք, նոյնիսկ այսօր նա կարող էր շուտով մեծ երկիր դառնալ. մենք կը կարողանայինք երեւան հանել նրա արժանիքները...

— Խնդրում եմ, յարեց լրութեամբ Ֆինգէն, մի՛ վիճէք մի՛ կարծիքի մասին, որին անկարելի է պաշտպանել:

— Ես նոյնպէս խնդրում եմ ձեզ, ասաց Ժան. մի՛ վիճէք յենուելով այնպիս փաստերի վրայ, որոնք ոչինչ չեն ապացուցանում, և ոչինչ կապ չունեն իսկական խնդրի հետ: Մի զարգացած մարդու համար ներելի չէ բնաւ գտնել մի երկիր, պարզապէս նրա առևտով, բանակով կամ նաւատորմով:

— Ի՞նչով դատել ուրիշն, պարո՞ն:

— Նրա հոգիով, պարո՞ն: Ֆրանսիան ունի իր սեփական հոգին, որ ես ճանաչում եմ պատմութիւնից, և չեմ իմանում որդիական լի՞նչ բնազդի շնորհիւ, որ ես զգում եմ իմ մէջ: Եւ ես հաստատապէս համոզուած եմ, որ կան շատ բարձրագոյն առաքինութիւններ կամ աղնիւ յատկութիւններ, վեհանձնութիւնը, անշահախնդրութիւնը, արդարասիրութիւնը, ճաշակը, փափկութիւնը, և հերոսութեան մի որոշ ձգում, որ գտնում ենք, և ամենից աւելի առատօրէն, այդ ազգի անցեալի ինչպէս և ներկայի մէջ: Ես կարող էի բազմաթիւ ապացոյցներ առաջ բերել: Եթէ ձեր ասածի չափ տկար լինէր անգամ, նա իր մէջ թաքնում է այնպիսի գանձեր, որ աշխարհի փառքն են կազմում, և որոնց պէտք էր տիրանալ նախ քան որ նա արժանի լինի մեռնելու, և որոնց հետ բաղդատմամբ, ոչինչ աշխարհում կարեւորութիւն չունի: Զեր գերմանացումը, պարո՞ն, ջնջումը կամ պակասեցումն է ֆրանսիական այն առաքինութիւնների

կամ յատկութիւնների, որ գտնուում են ալղասական Շոգու մէջ։ Ահա ինչո՞ւ համար, ես պնդում եմ, որ նա վաստ է...

—Է՞ն, դուք էլ, զոչեց Թինգին։ Ալղասը լնականօրէն պատկանում էր Գերմանիային, և նու վերադարձաւ նրան։ մենք տիրանում ենք մեր նախկին ստացուածքին։ Ո՞վ մեզանից տարբեր եղանակով պիտի վարուեր

—Ֆրանսիան, պատասխանեց Օթերլէ։ և զրա համար է ահա, որ սիրում ենք նրան։ Նու կարող էր զրաւել երկիրը, բայց չէր բռնաբարի նրա հոգին։ Մենք նրան պատկանում է՝ ինք այն իրաւունքով՝ որ տալիս է մեզ ոչըլտ

Բարոնը ուսերը ցնցեց։

—Վերադարձէք ուրիմն ֆրանսիա։

Ժան մաղ մնաց աղաղակէր։ «Այս»։ Ծառաննը խօսակցութեան ունկնդրելու համար մոռանում էին կերակուրները հրամցնել։ Ժան շարունակեց։

—Ուրիմն, ձեր գերմանացման փորձը՝ վերցրած ինքն իրա մէջ ես գտնում եմ վաստ, որովհետեւ նա մի պարզ բանաբարում է խղճմտանքների։ բայց ես գտնում եմ որ նու մի ձախորդ գործ է նաև գերմանական հայեցակէտից։

—Հիանալի՛, սուր ճշած տիկին Կնէպսլէ։

—Զեր շահերը պահանջում էին նոյնիսկ, որ դուք պահանէիք մեր մտքի ինքնուրոյնութիւնն ու անկախութիւնը։ Դա կը լինէր մի օգտակար օրինակ Գերմանիայում։

—Ծնորհանկալ ենք, տոաց մի ձայն։

—Հետղետէ աւելի օգտակար օրինակ, պնդեց երիտասարդը։ Ես իմ գոստիարակութիւնը ստացայ Գերմանիայում և վստահ եմ իմ առածի մասին։ Ինչ որ ամենից աւելի ինձ զարմացրել, վիրաւորել է գերմանացիները անկախ, ուրոյն, անձնական կարծիք չունին, որ նրանք հետզհետէ աւելի մոռացութեան են տալիս ազատութեան գաղափարը, որ նրանք հետզհետէ տեղի են տալիս կայ...

—Զգուշացէք, երիտասարդ պարհն, ընդհատեց ուժգնօրէն խորհրդական Բարաւիգ։

Ի՞ասեմ Պրուսիայի իշխանութեան առաջ, պարհն խորհրդական, որ լափում է խղճմտանքները և որը միայն երեք տիպի մարդկանց թոյլ է տալիս, որ ապրեն, մարդկանց՝ որոնց կաղապարել է ինքը մանկութիւնից սկսած—հարկատուներ, պաշտօնեաներ և զինուորներ։

Սեղանի ծայրը նստած պրիվա-դոցենտներից մէկը բարձրացաւ իր աթոռի վրայ.

—Հոռմէական կայսրութիւնը նոյնն էր անում, բայց այդ
չէր արգելում որ լինի հոռմէական կայսրութիւն:

Նրա կողքից մի յուզուած ձայն գոչեց.

—Բրաւօ:

Բոլոր հիւրերը նայեցին: Դա վիշէլմ ֆոն Ֆարնտիլ էր,
որ արտասանել էր միայն այդ բառը ամբողջ վիճաբանութեան ըն-
թացքում: Բանակուուի ուժգնութիւնը զայրացրել էր նրան ինչ-
պէս մի անձնական գրգուում: Նա գրգուում էր ուրիշներին: Պ.
Ռողեմբլատ սեղմում էր իր բուռնցքները: Պրոֆեսոր Կնեպլէ
կատաղի խօսքեր էր մըմուում, մաքրելով իր ակնոցի ապակի
ները: Նրա կինը ներվային փոքրիկ ծիծաղներ էր արձակում:

Այդ բողէին, գեղանի տիկին Ռողենբլատ, վերից վար,
մատներով շօշափելով նուրբ մարդաբանայ մանեակը, ժպտաց,
և սիրալիր նայելով ալզասկցուն.

—Պ. Օբերլէն գոնէ իր կարծիքները յայտնելու քաջու-
թիւնն ունի, ասաց: Սրանից աւելի անկեղծօրէն, համարձակո-
րէն, չի կարելի խօսել ձեզ դէմ:

Ժանի հոգին շատ էր վասուած հաճոյակատարութեամբ պաշ-
տասխանելու համար: Նա յաջորդաբար նայեց շեշտակի մին-
դէնի, Ռողենբլատի, Կնէպլէի, Լիւսիէնի կողքին վրդովմուն-
քեց տանջուուզ պլրիվա-դոցենտի երեսին, յետոյ թեթևօրէն խո-
նարհութիւն արեց տիկին Ռողենբլատին:

—Կանանց շնորհիւ միայն գերմանական ազգը պիտի կա-
րողանայ տիրանալ նրբութեան, նրբամառութեան այն աստիճա-
նին, որ պակասում է նրան, տիկին: Նա ունի կատարեալ կա-
նայնը...

Շնորհակալ հնը ձեր սրտացաւութեան համար, պա-
տասխանեցին տղամարդու հրեր ձայներ:

Տիկին կնէպլէ տիկին Ռողէնբլատին ուղղուած կոմպ-
լիմենտից կատաղած՝ աղաղակեց.

—Ի՞նչ սիստեմ ունիք, ուրեմն, պարհն, թօթափելու հա-
մար Գերմանիայի լուծը:

—Ո՛չ մի սիստեմ:

—Ուրեմն ի՞նչ էր ուզում:

—Ո՛չինչ, տիկին: Ես տանջւում եմ:

Ալզասկցի արուեստագէտներից մէկը՝ գեղին, սրածայր,
փոքր մօրուքով այն նկարիչը, որ նմանուում էր Զիօտոսի մի
աշակերտի, խօսակցութեան մէջ մտաւ, և սեղանի բոլոր հիւրե-
րը կատացան գէպի նրա կողմը:

—Ես պ. Օբերլէն նման չեմ, որը ոչինչ չէ ուզում: Նա
երկար բացակայութիւնից յետոյ, նոր է վերապարձել Ալզա:

Եթէ մի քիչ ապրած լինէր նրանց մէջ, այլ ձեռվ պիտի եզրակացնէր: Մենք՝ նոր սերունդի ալզասցիներս, երեք հարիւր հազար գերմանացիների հետ շփման մէջ ապրելով նկատեցինք որ Փրանսիական կուլտուրան բոլորովին զանազանութեամբ է միւսից: Մենք նախամեծար ենք համարում մերը, և այդ ներելի է, չը: Փոխարէն այն լոյալ վերաբերմունքի, որ ցոյց տունը դէպի Գերմանիան, այն տուրքի, որ վճարում ենք, զինուորական այն ծառայութեան, որ կատարում ենք, կարծում ենք, որ իրաւունք ունենք ալզասեցի մնալու: Ահա ինչ որ դուք չէք ուզում քնաւ հասկանալ: Մենք պահանջում ենք, որ մեզ համար բացառիկ օրէնքներ չլինեն, որ մեզ չկնթարկեն այն համարեա զինուորական գրութեան, որի մէջ ապրում ենք, երեսուն տարուց ի վեր. մենք պահանջում ենք, որ մեզ հետ չը վարուեն, մեզ չկառավարեն, այնպէս՝ ինչպէս վարում և կառավարում են «կայսրութեան որևէ գաղթականութիւնը», օրինակ, Կայսրունը, Տոգուանդը, Նոր-Կուինէան, Բիզմարկեան արշիպելագոսը կամ Պրովեդանսի կզզիները, այլ կառավարեն և վարուեն, ինչպէս գերմանական կայսրութեան եւրոպական մի գաւառի հետ: Մենք գոհ կարող ենք լինենք միայն այստեղ մեր միայն այն օրը, երբ կը լինենք այստեղ մեր սեփական երկրում, ալզասեցիներ՝ Ալզասում, ինչպէս բաւարացիները բաւարացիներ են Բաւարիայում, մինչդեռ մենք դեռ ևս պարտուածներ ենք համարում, խաղալիք՝ մի տիրոջ քմահաճոյքին: Ահա իմ խնդիրը:

Նա խօսում էր պարզ ու յստակ կերպով, բացայացտ անդորրութեամբ և նրա ոսկեգոյն սուր մօրուքը ցցւում էր դէպի առաջ, ինչպէս մի նետի սուր ծայրը: Նրա հաշուած, ձեռուած բառերը՝ ըրգուման վերջին աստիճանին հասցըին մոքերը, և կարելի էր սպասել որ կը քոտ պատասխաններ տրուէին միմիանց, երբ տիկին Բրաւսիդ վերկացաւ:

Նրա հիւրերը հետևեցին նրա օրինակին, և վերադարձան կատոյտ գահինը:

—Քո վարժունքը անմիտ է: Ի՞նչ էր մտածում ասաց կիսակէն կիսաձայն, ժանի մօտով անցնելիս:

—Գուցէ անխոհեմութիւն էր ինչ որ քիչ առաջ ասացիր, աւելացրեց մի բոլէ յետոյ, տիկին Օբերլէ, բայց դու լաւ պաշտպանեցիր Ալզասը, և ես հաւանում եմ քո վարժունքը:

Պ. ներքին խորհրդականը արդէն դլուխ էր տալիս ամեն կողմ և մըմնջում էր Ֆինդէնի, զը-Թարնովի, պ. Ռողենբլատի, պրոֆեսոր Կնէպլալէի, երկու պրիվա-դոցենտների, ժանի և ալ-զամեցի երկու արուեստագէտների ականջին միևնույն սովորա-

կան բանաձեռ. «Մեծ հաճոյք պիտի ոլատնառէիք հետևելով ինձ ծխարան։»

Ծիկու յատկացուած էր երկրորդ սրահը, որ բաժանուած էր առաջինից անագ չունեցող մի մի հայելիով։

Պ. Բրաւսիզի հրաւիրեալները խորյուն բոլորն էլ նոյն սրահում հաւաքուեցին։ Սիգար և գարեջուր բերին։ Ծիփ քուլաներ բարձրոցան և խառնուեցին առաստաղում։ Պ. Ռողենը բատ խօսակցութեան մի կենարոն կազմեց։ Պ. պրոֆեսոր Փոն Ֆինդէն մի այլ կենարոն։ Բարձր ձայնով պայքարում էին և դժուարութեամբ բացատրում պարզ գուգափարներ։

Միայն երկու հոգի խօսակցում էին առանց աղմուկի և մի շատ լուրջ հարցի մասին։ Դրանք ժան Օրերէն և Թարսով էին։ Հազիւ վառուել էր իմ սիրուը, երբ վերջինը դիպաւ ժանի թեին և առաց։

—Ես կը ցանկանայի քեզ հետ մի տեսակցութիւն ունենալ և առանձին։

Եւ աւելի ազատ լինելու հասար, երկու երիտասարդները նստել էին վիթխարի վառարանի մօտ, այն դուն հանդէպ, որ տանում էր դէպի միւս սրահը, մինչդեռ միւս ծխողները, խըմբուած պ. Ռոչենբատի և պ. դը Ֆինդէնի շուրջը, կանգնել էին պատուհանների առաջ։

—Այս երեկոյ դուք խիստ խօսեցիք, սիրելիս, ասաց ֆարնով, այն գոռոզ քաղաքավարութեամբ, որին վարժ էր, քանի՞ քանի՞ անգամ ես փորձեցի ձեզ պատասխանել, բայց նախամեծար համարեցի սպասել։ Պէտք է ասել, որ ձեր խօսքը ուղղուած էին մասամբ էլ ինձ։

—Մեծ մասամբ ձեզ։ Ես կամեցայ ձեզ ասել շատ պարզ կերպով թէ ով էի ես, ինչ էի մտածում և ձեզ ցոյց տալ վկայների առաջ, որպէսդի հաստատուի, որ եթէ դուք յամառում էք ձեր մտավորութիւնների մէջ, ես գոնէ չեմ արել ձեզ ոչ մի դիզում, ոչ մի աւանս, որ ես ոչնչով խաւն չեմ այն ամուսնութեան մէջ, որ մտածում էք իրազործել։ Ես կարիք չեմ զգում հակառակուելու իմ հօր կամքին, բայց ես չեմ ուզում որ շփթին իմ գաղափարները, նրա գաղափարների հետ։

—Ես այնպէս էլ հասկացայ... Դուք, իհարկէ իմացաք, որ ես ձեր քրոջ տեսել եմ բարձր շրջաններում և սիրում եմ նրան։

—Այն։

—Միայն մյու է ձեր ամբողջ պատասխանը։

Արեան մի ալիք բարձրացաւ դէպի գերմանացու այտերը։

— Խօսեցէք, շնոր, շաբունակեց նա: Իմ ընտանիքը իսկաւ կան աղնուական ցեղից է, ընդունմամ էք.

— Այս:

— Ընդունմամ էք որ մի կնոջ համար պատիւ է զնահատուել, վնարուել մի գերմանացի սպացի կողմից:

— Դուցէ, լոյց—յամնային գէպոյ հչ մի ալզասուհու համար: Որքան որ էլ զուք ամսկաբող ընէկիք համանալու այդ պատճումը, մենք ըոլորտին տարբեր հնաք ուրիշներից, մենք՝ Ալզասի ընակիչներս: Ես ձեզ շատ եմ յարգում, ֆարնով: Տայց ձեր ամուսնութիւնը իմ քրոջ հետ, անզիօրէն ողիսի հարսածէ երեք հոգու մեր տան մէջ: Նախ ինձ:

— Էնչիւ, խնդրեմ:

Նըանը սախառուած էին խօսել ցածր ձայնով, և խոյս տալ շաբժումներից նրա համար, որ սրանի միւս ծայրում պլ. Բրաւսիդի հիւրերը զիտում էին երկու իրիասասարդներին և աշխատում էին մնկնել նրանց երկուակի գէպի միմիանոյ ունեցած վեբարերմունքը: Նըանց ամբողջ յոզումը, ամբողջ զայրոյթը ցոլանում էր նրանց աշքերի մէջ և խուլ, զսպուած շշանչի մէջ այն բառերի, որոնք պէտք է լատէին միայն մի հոգուց:

— Ասանց անսագի հայելու միջից կիւսիէն կարողանում էր տեսնել ֆարնովին, և, վերկնալով և անցնելով սրանից, կամ իբր թէ հիացմունքով դիտելով ծաղկեկողովը, որ արուած էր հայելու շրջանակի տառջ, նա զննում էր սպացի և իր եղբօր գէմքերը:

— Դուք սրափ տէր մարդ եք, ֆարնով: Մտածեցէք մեր ընտանիքի դրութեան մասին Ալշէյում, երբ դժուութեան այս պատճանն էլ տւելանոյ միւսների վրայ:

— Ես կը հեռանամ, ասաց սպան, ևս կարող եմ թոյլուով թիւն ստանալ որ ինձ տեղափոխման այլ տեղ, Մտրազրուրդից հեռու:

— Յիշտակները, այնուամենայնիւ, կը մնան մեր տան մէջ: Բայց այդ չէ գես բոլորը: Եւ, այժմեանից հեթ, կայ մայրս, որ չպիսի ընդունէ...

Զեռքի մի շաբժումով ֆարնով ցոյց տուեց որ չէր կարող ընդունել այդ առարկութիւնը:

— Կայ և իմ պապը, այն անձը, որ Ալզասը ընարել էր իբրև պատգամաւոր բողոքելու համար, և որը չի կարող այսօր ուրանալ իր ամբողջ անցեալը:

— Ես ոչինչ պարա չեմ որ. Ֆելիպ Օքերլէի, ընդհատեց ֆարնով:

Զայնը դարձաւ աւելի հրամայողական.

—Ես ձեզ նախապէս ասում եմ, որ հս երբէք յետ չեմ կանգնի իմ կայացրած որև է որոշումից: Երբ պ. գը կասըվից, Սորագրութիւնակապիսը և այն միակ մօտիկ արգականը որ հս ուսնում այժմ, երբ պ. գը կասըվիցը վերադառնայ իր արձակուրդից, որ պէտք է ստանայ մի քանի օրից, պիտի գնայ Ալշէյմ, ձեզ մօտ: օրիորդ կիւսիէն Օբերէլին պիտի խնդրէ: ամուսնութեան իր եղբօրորդու համար, և նրա դիմումը յաջողութեամբ պիտի պատկան որովհետեւ օրիորդ Լիւսիէն Օբերէլին ուրախութեամբ ընդունում է իմ տառաջարկը, որովհետեւ նրա հայրը արգէն տուել է իր համաձայնութիւնը, և որովհետեւ հս կամենում եմ որ այդպէս լինի, հս, Վիլհէլմ Ֆոն Ֆարնուվ:

—Մնում է որոշել այն՝ թէ ո՞ր աստիճան լաւ բան էք անում...

—Ի՞նչ որ անում եմ, անում եմ իմ սեփական կամքով, այդ արգէն ինձ բաւական է:

—Ո՞րքան հպարտութիւն կայ ձեր սիլոյ մէջ, ֆարնով:

—Իմ ամեն գործերում էլ կայ, Օբերէլէ:

—Կարծում էք որ հս չեմ իմունում: Իմ քրոջ հաւանեցիք, որովհետեւ սիրուն է:

—Այս:

—Ետքի:

—Այս:

—Որովհետեւ, մանաւանդ, ալզասուհի է: Զնը հպարտութիւնը նրա մէջ տեսաւ մի յաղթանակ, որը պէտք էլ տանիել անզատնաւ: Դուք շատ լաւ զիտէք որ Ալզասի կանայք ոսվորութիւն ունեն մերժելու գերանացիների ձեռքը: Դրանք ձեր սիրային փառասիրութիւններին դժուարամատչելի թագուհիներ են, սկսած գիւղացի աղջիկներից, որ, հաւակոյթների ժամանակ մերժում են պարել գերանացիների հետ, մինչդեռ մեր քոյրերը, որոնց չի կարելի յաճախ հանդիպել ձեր սրահներում կամ ձեր թէկը ժամանակ պիտի պարզէնաք այն բոլոր զօրապնդերում, ուր պիտի ձառայէք: Գուցէ և այդ ամուսնութեան շնորհիւ բարենիշ ստանաք ձեր պետերի կողմից:

—Գուցէ, տապ ֆարնով հեղնութեամբ:

—Արէք ուրեմն ինչպէս կամենում էք: Խորտակեցէք մեղանից երեքին:

Զայրանում էին, իւրաքանչիւրը աշխատում էր սակայն իրեն զսպել

Սպան վեր կացաւ, զցեց իր սիգարը, և առաց գոռոզութիւնը.

—Մենք քաղաքակիրթ բարբարոսներ ենք, այնպէս չեմ. լաւ, ընդունում հմ. բայց գոնէ մենք ձեղ չափ յաւակնութիւններ չունենք արդար լինելու, ձեզ չափ նախապաշարուած չենք արդարութեան մոքով: Եւ ահա դրա համար էլ մենք պիտի նուածենք աշխարհը, սիրելին: Աս այժմ, Օբերլէ, ևս պիտի երթամ նստեմ ձեր մօտ, արկին Օբերլէի մօտ և խօսեմ նրա հետ իրեւ թշնամի, որքան կարելի է սիրալիր կերպով: Ինձ կընկերանաք:

Ժան նշանացի՝ բացառական պատասխան տոււաւ:

Օբերլէին թողնելով ֆարնով հեռացաւ ծխարանից: Լիւսիէն, անհանդասութեամբ սպասում էր նրան սրահում: Նա տեսաւ, որ ֆարնով գնաց գէպի արկին Օբերլէ, բռնի ծիծառով՝ վեցըց մի աթոռ և մօսեցրեց այն թիկնաթուին, ուր նստել էր նրբանասոսկ ալգասուհին, սուկի զգեստներով:

Մինոյն ժամանակ պ. խորհրդական նրաւսիդ կանչեց.

—Օբերլէ: Դուք ծխեցիք ձեր սիգարը առանց նոյնիսկ մի բաժակ գարեջուր խմելու: Բայց դա մի ոճիր է: Շնեւ, եկէք: Պ. պրոֆեսոր Կնէպպէլ մեղ բացատրում է հէնց այս բողէիս այն միջոցները որ ձեռք է առնում կառավարութիւնը կուռելու համար Գերմանիայի արմելիուն գաւառների ուստացման գէմ

Գիշերը շատ ուշ, մի կառք՝ տանում էր գէպի Ալզէյ հրեք ուղևորների, որ վերցրել էր Մօլցէյմի կայարանից: Հանապարհը գեռ ևս երկար էր: Լիւսիէն շտառվ քնեց կառքի խորքում: Նրա մայրը, որ մինչև այս՝ լսութիւն էր պահպանել, կունալով գէպի որդին, նրան հարցրեց, մատնացոյց անկելով գեղանի արարածին՝ որ ընկերուել էր քնի և խաղաղութեան մէջ:

—Դու գիտէ՞ր:

—Այն:

—Ես գուշակեցի..., Այս խսկոյն գուշակեցի: Տեսայ որ սա նրան դիտում էր... Օչ, իմ ժամն, ես որ յոյս ունէի թէ կարող կը լինենք խոյս տալ այդ վարչութիւնից... Նա, որի երկիւզից յանձնառու եղայ այնքան, այնքան քանիքի... Միայն դու, գու ես մնում ինձ, ժամ... Բայց վստահ եմ որ քեզանից յուսախար չեմ լինի:

Եւ նրան համբուրեց շատ սլինդ կերպով:

XI

Յ ե տ ա ծ գ ու ա ծ

Որովհետև իրողութիւնները չեն կատարւում կէտառկէտ մեր կանխազուշակութիւնների համաձայն, պ. դը կասցվեցի այցելութիւնը տեղի չունեցաւ Ալշեյմ Թարնովի յայտնած ժամանակին: Յունիսի վերջին, բարձր պաշտոննեան, երբ հանքային ջրերում կատարած այցելութիւնից վերադառնալով՝ պատրաստում էր դնաւ Ալշեյմ և Լիւսիէնսի ձեռքը խնդրել Թարնովի համար, մի հեռազիր ստացաւ որպէսդի յետաձգէ դիմումը: Պ. Ֆիլիպ Օրերէլի դրութիւնը յանկարծ ծանրացել էր:

Ծերունին, որին ստիպել էին յայտնել վերջապէս տան մէջ անցկացող դէպքերի մասին, իմացել էր ճշմարտութիւնը: Մի առաջօտ որդին բարձրացել էր անկարի սենեակը: Կողմանակի խօսքերով և շատ գգուշաւոր, յարգալից բացատրութիւններով հասկացրել էր, որ Լուսիէնը անտարբեր չէր զերմանացի մեծ ընտանիքներից մէկին պատկանող հեծելազօրքի մի սպայի աւանսներից: Սաել էր, որ փոխազարձ համակութիւնը ծնունդ էր առել ինքնարերաբար, որ ինքը՝ Փողէփ Օրերէ հակառակ իր ցանկութեան, ցաւելով հանդերձ տեղի ունեցող անախորժ եղելութեան մասին, իրան համար իրաւունք չէր համարում բռնագատել իր զաւակների ազատութիւնը, և յոյս ունիք, որ իր հայրը, յանուն ընտանիքան խողաղութեամ, կը համակերպուէր իրողութեան առաջ: «Հայր, ասել էր խօսքը վերջացնելով՝ զիսէք որ ձեր ընդդիմութիւնը բացի այն որ ոչ մի օգուտ չպիտի տար, կարող էր և խոշոր թիւրիմացութիւններ ստեղծել: Ահա յարմար ասիթք, ոսյց տալու Լիւսիէնին ձեր հայրական սիրոյ մեծ ապացոյցը, արէք ինչպէս մենք են արել, մի արհամարհէք այդ ասիթք» Ծերունին նշանացի հարցրել էր. «Իսկ Մօնիկը: Արդեօք նա էլ տուեց իր համաձայնութիւնը:» պ. Փօղէզ Օրերէ առանց ստելու կարողացել էր հասարակական պատասխան տալ, որովհետև խեղճ կինը՝ բաժանման սպասնալիքի տակ, մի անգամ էլ տեղի էր տուել: Այն ժամանակ, անկարը՝ վերջ էր դրել իր որդու այդ երկար մնախօսութեան, զրելով երկու բառ, որոնք կազմում էին իր ամբողջ պատասխանը. «Ես ոչ:»

Նոյն զիշերն իսկ տեսնլը բռնիւ էր ծերունուն, շաբունակուել էր յաջորդ օրը, և շուտով՝ իր յարատեսթեամբ

հիւանդին պատճառած տկարացումով՝ անհանգստացնում էր Օբերլեներին:

Այդ օրուանից սկսած, զիշեր ցերեկ, պ. Ֆիլիպ Օբերլենի առողջութեան հարցն էր զբաղեցնում ամբողջ տունը: Հարցնում էին տիկին Մօնիկին, կամ Փանին, որոնցից բացի ոչ ոքին չէր ընդունում: «Ինչպէս է առողջութիւնը: Ուժերը չեն կազուրւում: Արդեօք իր մաքի ամբողջ պայծառութիւնը պահե՞լ է:» Ամեն մարդ հետաքրքրւում էր այն բոլորով, ինչ զեղեր էր ունենուու «Ուկրեում», այն սենեակում, որտեղից ծերունի մարտնչողը կիոով չափ անհետացած ողջիրի աշխարհից, կառավարում էր դեռևս իր երկպատակուոծ ընտանիքը և պահում էր նրան իր իշխանութեան առակ:

Ժան անհամբել սպասում էր տագնապի վախճանին: Նրան անհանգստացնում էր ոչ միայն իր պապի հիւանդութիւնը, այլ և իր սեփական բախտը:

Լիւլիէնի հետ ունեցած բացատրութիւնից, մանաւանդ խորհրդական Բրաւսիդի անում անզի ունեցած երեկոյթից յետոյ, եղբօր և քրոջ միջի մտերմական ամեն յարաբերութիւն գագարել էր: Լիւլիէն որքան կարող էր իրան ցոյց էր տալիս սիրալիր և հաճոյակատար, բայց Փան նրա ավանոնիրին չէր պատասխանում այլն: Հէնց որ գործարանում աշխատանքը թոյլ էր տալիս, փախչում էր ատանից: Գնում էր դաշտ գիտելու հնձուորնիրին, կամ խօսելու իրանց հարեան՝ այժմ բարեկամ գարձած Ռամշապախէրնիրի հետ, երբ մութն ընկնելուն վերագանում էին զաշտից: շատ անգամ նա յուտ էր ունենում, որ կարող է գուցէ նշարել պ. Քսալիէ Բաստեանի աղջկան, ձանապարհով անցնելիս: Բայց շատ յաճախ. բարձրանում էր Հէյտէնբրուխ: Ժան՝ իր մօրեղբօր, Ուլլիխի առաջ բացել էր իր սիրու և մինչեւ անգամ նրան յանձնել մի միսսիա: Ժան ասել էր նրան. «Այլևս յոյս չունեմ որ Օգիւլը տան ինձ: Քը զն ամուսնութիւնը պիտի խանդարէ իմը: Բայց, յամենայն դէպս, ևս պարտաւոր եմ ձեռքը իմդրել նրան՝ որին ասել եմ թէ սիրում եմ: Դիտեմ պիտի մերժեն, պիտի ջախջախնեն սիրտս, բայց գմնէ թող պատասխանեն, որովհետի հաստատ իմանամ այն, որի մասին երկիւով եմ կլում: Երբ պ. Բաստեանը իմանայ, որ Լուսիէնը նշանուել է պ. զը ֆարնովի հետ կամ պիտի նշանուի—և այդ անպատճառ տեղի պիտի ունենայ, երբ պապը առողջանայ—գուք կերթաք պ. Բաստեանի մօտ, կը խօսէք նրա հետ իմ կողմից. նա ձեղ կը պատասխանէ գիտակցարաք: Դուք ինձ կասէք թէ առյաւէտ նա մերժմաւ է իր աղջկան ամուսնացնել զը ֆարնովի աներձագի հետ, թէ պահան-

ջում է սպասել որոշ ժամանակ, փողձելու համար ինձ. ևս, ոչինչ, կը սպասեմ որքան որ էլ երկար լինի նշանակած ժամանակամիջոցը, կամ թէ ոչ նա արխութիւնն ունի—թէպէտե եւ չեմ հաւատում—արհամարհելու քրոջս ամուսնութեան պատճառած գայթակղութիւնը:»

Պ. Ուլրիխ խօսք էր տուել:

Օդոստոսի կէսին, աենդը՝ որ սպասում էր ալ. Ֆիլիպ Օբերլէին, անհետացաւ: Հակառակ բժշկի գուշակութեան, նա շուտով կազդուրուեց: Հիւանդի զօրեղ կաղմուածը յաղթել էր տագնապր: Եւ ալ. Ժողէֆ Օբերլէ վերջ գրեց իր հօր չնորհած զինադուլին: Եւ Պ. Ֆիլիպ Օբերլէ, որին մահը չէր ուղեցել տանել, նորից սիտի ընկնէր անդամալուծի իր տխուը կացութեան մէջ և ինչպէս ուրիշների, նոյնպէս նրա հետ սիտի վարուէին ամինայ կիրապով:

Ծերունու և իր որդու մէջ ոչ մի նոր տեսաբան տեղի չունեցաւ: Ամեն ինչ անցաւ առանց աղմուկի: Օդոստոսի 22-ին, ընթրիքից յետոյ սրահում, երբ Վիկառը սուրբ նոր էր հրամցրել, ալ. Ժողէֆ Օբերլէ ասաց տիկին Օբերլէին.

—Հայրս այժմ առողջացել է: Այլևս ոչ մի պատճառ չկայ ալ. Դը Կասըլիցի այցելութիւնը յետաձգելու: Ուրեմն իմացած եղէր, Մօնիկ, որ նա տեղի կունենայ այս մի քանի օրերում: Բանի որ մենակ գուռ էք դնում հօրս մօտ, բարեհամեցէք յայտնել նրան: Անհրաժեշտ է, որ ամեն ինչ անցնի այտեղ կանոնաւորապէս: Այսպէս չէ: Համաձայն չէր ինձ հետ:

—Չէք տղում մի քիչ էլ յետաձգել այդ այցելութիւնը:

—Ո՞չ:

—Յյդ գէպքում կը յայտնեմ:

Ժան նոյն երեկոյեան հեթ գրեց ալ. Ուլրիխին, որովհետեւ չէր կարող նրա մօտ գնալ.

«Մօրեղբայր, այցելութեան հարցը վճռուած է: Հայրս ոչ ոքից չի թաքցնում այդ, ոչ իսկ ծառաներից: Նա ուղում է, բացայայտ կիրպով, որ բրոջս ամուսնութեան լուրը տարածուի: Ուրեմն, երբ, այս օրերումս, հանդիպէք մի որևէ ալզանեցու, որը մեր դէմ վշտացած կամ դայրացած լինի, ինսդրում եմ, գնացէք տեսէք արդեօք իմ փայփայած երազը կարծիք է առղել գեսես: Ասացէք ալ. Բաստեանին, որ ալ. Ֆիլիպ Օբերլէի թուն է որ ուղում է Օղիլին:»

XII

Հ մուշի հուն ծըլ

Սէստ-Օդիլի ստորոտում, այդիներից մի քիչ ներքեւ, պետական և ուրիշ կալուտածառէներ կամ ագարակապաններ հաստատել էին հմուլի¹⁾ գաշտեր։ Արդ, եկել էր ժամանակը, երբ հմուլի ծաղիկը արտադրում է հստակէտ փոշու ամենաբարձր քանակը։

Հմուլարոյ ծնները, հետևաբար, այդ եղանակում թափւում էին հմուլի գաշտերը։ Միջնորդները անց էին կենում գիւղերով։ Լսում էին զնողների և վաճառողների վիճարանութիւնները, որ պատում էին վիատէնրերգի, Բաղէնի դըսութիւնն, Բոհէ-միայի և Ալզանի հմուլների բաղդատական արժանի մասին։

Միւնիխից մի հրէայ, օգոստոսի 24-ի կիրակի օրը եկել էր ող. Բաստեանի մօտ և ասել էր.

—Վիւբաէնրերգը առաս հունձք է խոստանում, Բաղէնը նոյնպէս, Բաւարիայում, հմուլի հարիւր կիլօն տալիս են հարիւր վաթսուն ֆրանկով, բայց գրանք առաջին կարգի ապրանք են։ Այստեղ, ելաշտը շատ է վնասել ձեր հունձքին։ Բայց, այնուամենայնիւ, ձեզ կարող եմ տալ հարիւր քսան ֆրանկ, պայմանով որ անմիջապէս հնձէք։ Հունձքը հասել է։

Պ. Բաստեան ընդունել էր, և հրաւիրել էր հնձուր մշակներին օգոստոսի 28-ի համար։ Այդ օրն է, որ կոմո Փօն Կառըվիցը պէտք է այցելէր Պ. Ժօղէփ Օբերէին։

Առաջանակից արգէն տաքացած օդի միջով հնձուր կանայք գնում էին զէսի հմուլի դաշտերը։ Ալզէմի բոլոր բատկինները գիտէն արգէն օրուայ դէպքը, պե. Բաստեանի գաշտերը հնձում են։ Պ. Բաստեան ինքը՝ արշաւոյսից առաջ վեր էր կացել, գնացել էր գաշտ, և քննում էր իւրաքանչիւր տուն-կը, հաշում իր ապլանը։ Հեռաւմ կանդնել էր մի ձի, որ լծուած էր երկու նեղ սայլակների, սրոնք սլիտի վորխաղրէին հունձքը։ Սայլակների մօտ կանդնել էին ագարակապան Ռամ-շպախէրը, նրա երկու որդիները՝ Օդիւստէն և Ֆրանսուա և ագարակի ծառաներից մէկը։ Կանայք, ուղղաձիգ ճանապարհից, որ յանգում էր նրանց մօտ, անկանոն լսմբակներով բարձրանում էին։ Խըտքանչիւրը հագել էր

1) Մի տեսակ տունկ որ գործ է ածում գալիշը պատրատութեան մէջ։

աշխատանքի շրջազգեստ և կօրսած, թեթև կերպառից, գունաթափ և հնամաշ, բայցի իտայից՝ նպարավաճառի աղջկանից, որ կրում էր մի համարեւ բոլորովին նոր շրջազգեստ, կապոյտ, սպիտակ պուտերով, ինչպէս և ժիւլիկտատից, լուսարարի թուխ աղջկանից, որը աչքի էր ընկնում Ալջէմում իր վայելուչ արդուզարդով և որը այժմ հաղել էր մի գոնոց՝ սպիտակ և գարբադոյն քառակուսիներով: Մեծ մասը առանց գլխարկի էին, և իբրև հովանի իրանց գէմքին՝ կար միայն իրանց խարանաշ մաղերի փունջը: Դնում էին հանդարտ ու գանդաղ քայլերով: Մանկահասակ էին ու թարմ: Ծիծաղում էին: Ագարակի երիտասարդները՝ դաշտ զալիս, հնձուուները մանգաղով այս ու այն կողմ կանգնած՝ զարձնում էին իրանց գլուխը գէպի հնձուորունիները, հայեացը ով հետեւմ էին նրանց, լուացարարունիներ, կար մասողներ, աշակերտներ, որոնք առ հասարակ չէին երեսում գաշտերում և որ գնում էին այժմ գէպի պ, Բաստեանի հմուլաստանը, որպէս մի խնջոքի: Օքը պարզ էր: Մի քանի ծնրուկներ, պաղահաւաքներ՝ տեսնելով երիտասարդ այդ գուարթ խումբը ուղղում ուղղում էին և դիտում:

Հնձուորունիները մտան պ, Բաստեանի հմուլաստանը: Պ, Բաստեան Նրանց իւրաքանչիւրին քաժանից աշխատանքը և տաց որ ոլէտք էր սկսել այն մասից որ կից է ճանապարհին: Նրանք աշխատում էին գրքջալով: Ազարակի ծառաներից մէկը բարձրածայն տապ:

—Ի՞նչ, ոչ ոք չի՞ ուզում ելուիլ:

Ու լուսարարի աղջիկը, որ կանոնաւոր գէմք և լաւ սահմարում մաղերի առակ շատ գեղեցիկ, խոր աչքեր ուներ, պատասխանելու առաջնորդ էր:

—Ես մի լաւ երգ գիտեմ:

Պատասխաննելիս, սա զիտում էր պ, Բաստեանին, որ նստած ծխում էր և գուրգուրոնքով նայում մէկ իր հմուլաստանին և մէկ իր Ալզասին, որը երգէք իր մտքից չէր հեռանում:

—Թէ լաւ երգ է, երգիր, ասաց Բաստեան: Բայց ասա ականհմ, արգելուած է:

—Մաստիր:

—Այդ գէպքում երեսգ գալրձրու անտառի կողմը. շտաքիչ սմնդած ոստիկանները ման են գալիս այդ կողմերով, որովհետ իմիշքներ չկան:

Խոնարհած, ինչպէս կանգուն աշխատաւորները լուս ծիծաղեցին, որովհետեւ ատելով ատում էին ոստիկաններին: Եւ գեղանի ժիւլիկտը սկսեց ելուկ, իհարկէ ալզասական բարբա-

ոռվ—մին այն երգերից, որ շարադրում են անօրնուն բանաստեղծներ՝ առանց յանդերի վրայ ուշը գարձնելու:

Զայնը, բաւական ընդարձակ, և մահուանդ մաքուր,
ասում էր.

«Ես կտրեցի Ալդասի հմուլը,
Նրանք աճել էին մեր աշխատած հողի վրայ,
Կանոչ հմուլը մերն է,
Մերն է նաև կարմիր հողը:»

—Բրագի, առաց լրջութեամբ պ. Բաստեանի ակարակապանը:

Պ. Բաստեան բերնից հեռացրեց ծխամուրչը, որպէսզի առի լաւ լոէ:

«Նրանք բուսել են հովտում,
Հովտից շատ մարդիկ են անց կացի
Շատ տեսակ մարդիկ և հոգմեր և փոխորիկներ,
Մենք ընտրել ենք մեր բարեկամներին:

Մենք կը խմնիք գարեջուրը՝ ուժ կենաց որ հաճելի է մեզ,
Մենք բասեր՝ չափաքանիք է ունենանք մեր շրթների վրայ,
Այլ բառեր՝ մեր սրտի խորբում,
Աւ ոչ ոք ոչինչ չի կարող ջնջել:

Երբ Ժիւլիէտ իր երգը վերջացրեց, երիտասարդ ու ծեր,
բոլոր աշխատաւորները մի բոպէ անշարժ մնացին: Սպասում
էին երգի շարունակութեան: Աղջկերանից շրթունքի վրայ
ժպիտ նկարուեց Ժիւլիէտի ձայնի և նորկալ կեանքի պատճառ-
ով, իսկ պ. Բաստեանի և Ռամզապատերի աչքերը փայլեցին
անցեալի յուշերով: Երկու աղջկերները լուրջ կիրապարանք էին
ստացել: Ժիւլիէտ երգը չշաբունակեց, որովհետեւ շարունակու-
թիւն չկար:

—Ինձ այնպէս է թւում, որ այդ երգը շարադրել է աղօ-
րեպանը, ասաց պ. Բաստեան: Դէ, բարեկամներս, շատպեցէր,
Ալէյմ մեկնող ասալին կառքը անցնում է: Պէտքէ որ բոլորը
քաղուած լինի և զբուած՝ չորացնելու տեղը, նախ քան մութի-
ընկնելլ:

Կանայք և տղամարդիկ, բացի երիտասարդ, բարձրահա-
սակ ֆրանսուայից, որը պէտքէ նոյենը լերին իր զինուորական ծա-
ռայութիւնը կատարէր, և սուանձնել էր սայլակը վարելու
գործը, նորից կուսցան հմուլի տունկերի վրայ: Բայց, նոյն բո-

պէին, անտառի շուրջը աճած մացառուտքի միջից բարձրացաւ
մի տղամարդու ձայն:

Ո՞վ էր անցնողը: Ո՞վ էր լսել երգը: Նրանք կարծեն ճառ-
նաչեցին այդ ձայնը, որ ուժեղ էր, անհաւասար. քիչ մաշուած,
երիտասարդութեան թափքներով. Եւ լուսեցին շշուկներ.

—Նա է: Նա չի վախենում...

Զայնը միևնոցն ըիրտ բարրասով շարունակում էր.

«Ալզասի աղջկերանց գլխի ու կապը,
կապել է իմ սիրտը ցաւի հետ,
կապել է իմ սիրտը ուրախութեան հետ,
Դա մի սիրոյ կապ է:

«Ալզասի աղջկերանց գլխի ու կապը,
Մի թռչուն է լայն թերով,
Նա կարող է սար ու ձոր կարել անցնել
Եւ դիտել բարձունքներից:

«Ալզասի աղջկերանց գլխի ու կապը,
Սուզի մի խաչ է որ տանում ենք,
Ի յիշատակ նոյն մարդկանց և կանանց,
Որոնց հոգին նման է մերին:

Զայնը ճանաչուեց: Երբ երգողը լոեց, քաղ անող աղջկերք
և մտրդիկ սկսեցին խօսել պ. Ուլրիխի մասին, որի Ալզասում
ընակութեան վրայ հաշտ աչքով էին նայում և որը աւելի ա-
զատ էր խօսում քան գերմանակատակ ալզասեցիները: Հծու-
լաստանում ծիծաղների և խօսակցութեան աղմուկ հետպհատէ
բարձրանում էր, որովհետև պ. Բաստեան հետանում էր:

Նա՝ ծանր ու հաստատարայլ բարձրանում էր մինչև ան-
տառի եղերը, որտեղից եկել էր ձայնը, և խօրասուզւում էր
կաղամախիների խիտ շարքերի մէջ: Մէկը տեսել էր նրա
գնալը և սպասում էր: Պ. Ուլրիխ Բիշլէր՝ նստած՝ մի մամուռ-
պատ ժայռի կատարին, զլխաբաց, արեգտիկ տակ երկար քայ-
լելուց յոզնած՝ յուսացել էր, որ երգելով՝ կարող է իր մօտ
բերել իր վաղեմի բարեկամին Թուալիկ Բաստեանին: Նա չէր
խաբուել:

—Այ, քեզ համար մի տեղ եմ պատրաստել այստեղ, հմու-
լաքաղ, կանչեց հեռուից, ցոյց տալով մի քարակոյտ, որը ըն-
կել էր լուսն ստորոտը, երկու ծառերի մէջտեղ և, որի վրայ
նստել էր ինքը:

Թէպէտե միմիսնց հետ «դու» ով էին խօսում, պ. Ռւլրիխն ու Ալչյամի գիւղապետը շատ յաճախ չէին տեսնուում իրար հետ: Նրանց միջն մտերմութիւնից աւելի կարծիքների, ձգտումների և յիշատակների հանգիտութիւն կար: Նրանք ընտիր բարեկամներ էին, և վաղեմի Ալզասը նրանց հաշւում էր իր հաւատարիմ դաւակների շորբում: Այդ բաւական էր արդէն, որ նշանը հասկացուէր և տեսակցութիւնը հաճոյքով տեղի ունենար: Պ. Ռւլրիխ մտածել էր, որ պ. Բաստիանը՝ իր աշխատառորներին գործի դնելուց յետոյ, ուրախ կըլինէր մի քիչ զուարձանալով: Նա երդել էր: Ժիւլիէտի երդին պատասխաննելով, և Պ. Բաստիանը եկել էր: Այժմ, Հէյտէնրիուսի ճգնաւորի գժգոյն և նուրբ դէմքը ցոլացնում էր, շնորհալի և սիրալիր ընդունելութեան զգացմունքի հետ, մի ինչ որ ժողովում մի ինչ որ անհանդատութիւն, որ գժուար էր լինում թաքցնել:

—Դու գեսևս երդում ես, ասաց պ. Բաստիան, պ. Ռւլրիխի ձեռքը սեղմելով. դու որսի ես գուրս գալիս, թափառում սար ու ձոր:

Եւ փչելուց յետոյ նստաւ քարի վրայ, ոտքերը կախ առած մացամաների մէջ և երեսը ուղղած դէպի մացառածածք, անտառախիտ կողերով լիուլ:

—Հսաւ ելույթին այլպէս է, այս: Ես մի թափառիկ եմ, մի անտառաշրջիկ: Իսկ գու, ընդհակառակը, ամենից քայլող մարդն ես: Ես ման եմ գալիս, գու մշակութեամբ զրադուած ես... Լսիր ինձ Բաստիէ, ես քեզ հետ ուղում եմ խօսել իմ սրտի շատ մօտիկ մի հարցի մասին:

Պ. Բաստիանի ծանր գէմքը սարսաց, շարժուեցին նրա խոշոր շրթունքները, և գտաելով նրա դէմքի վրայ առաջ ետ կած խոր փոփոխութիւնից, կարելի էր հաստատալէս տսել, որ նա շատ գիւրագած մարդ է: Եւ որովհետեւ, առ հասարակ, սովորութիւն չունի անձնատուր լինելու սրտաբաց խօսեցութեան, ոչ մի պատասխան չուուեց պ. Ռւլրիխ: Սպասում էր:

—Ես ուղում եմ յանձնաբարեկ մի զատ, որը համարեա իմ դատն է: Նա, որ ինձանից իմնդրեց քեզ հետ խօսել, իու ամենասիրելի աղջականն է... Բաստիէ ես քեզ հետ մանուածապատ խօսել չեմ սիրում, զուշակել ես, որ իմ քրոջս նըղին, Ժան, սիրում է քո աղջկան, Օդիլին:

—Այս:

—Ել ի՞նչ:

Նրանք որ դիտում էին դէպի հետուն, յանկարծ նոյեցին միմիսնց աչքերի մէջ և սարսափեցին. որովհետեւ մին մերժում

էր կարգացել, իսկ մեւսը ցաւ որ պատճառելու էր իր մերժումը:

—Ո՞չ, ասաց աղ. Բաստեան զիտմամբ բարձր, յաղթահարելու համար յուղումին, որ դողացնում էր ձայնը, ոչ, չեմ կարող:

—Ես գիտէի որ պիտի մերժես... Բայց եթէ միմիանց սփրհմամ են...

—Գուցէ... չեմ կարող:

—Երեխ դրա համար ունես մի շատ լուրջ պատճառ:

—Այս:

—Այսինքն...

Պ. Օրերէ, ծառերի միջից մատնացոյց արեց Օրերէների տան ճակատը:

—Այսօր, այդ տունը ոլէտք է այցելէ Ստլաղբուրգի նահանգապետը:

—Ես արտօնութիւն չունէի դրա մասին քեզ որևէ բան յայտնելու; ոլորտաւոր էի սպասել, մինչև որ իրողութիւնը հրապարակուէր:

—Արդէն հրապարակուած է: Ամրող Ալշէյմ գիւղը գիտէ այդ մասին Օրերէների ծառաներից: Հաստատալէս տուու ևն մինչև անգամ, որ աղ. դը Կասավեցը գնում է Լիւսիէնի ձեռքը ինոգրելու իր քրոջ սրբու տեղակալ ֆոն Ֆարնովի համար:

—Դիտեմ:

Եւ գու ուզում ես, որ...

—Այն:

—Որ աղջիկս տամ ժամ Օրերէնեն, որպէսզի նա առաջիկայ ընտրութիւնների ժամանակ կառավարական թեկնոծու եղող մի տնձի իրրե կեսրայր և Պրուսիայի մի սովոյի իրրե տալայը ունենայ:

Պ. Ռւլրիխ աղ. Բաստիանի զայրացած նայուածքի առաջ չխոնարհեցրեց իր տչքերը և պատասխանեց.

—Այն: Դրանք նրա համար մեծ տանջանքներ են. բայց ժամն ի՞նչով է մնալաւոր: Ո՞րտեղ պիտի գտնես մի փեսացու աւելի արժանի քեզ և քո աղջկայ համար:

—Ի՞նչ արեց նա հակառակուելու համար իր քրոջ ամուսնութեան: Նա բացակայ չէ: Նա իր լութեամբ վաւերացրեց այդ ամուսնութիւնը... Նա կամքի տէր չէ...

Պ. Ռւլրիխ նրան կանգնեցրեց ձեռքի մի շարժումով:

—Ո՞չ, նա տկարակամ չէ:

—Ո՞չ քեզ պէս, որ կարող եղար դոնէ փակ պահել ըստ տան դոները:

—Ես իմ տան տէրն եմ:

—Իսկ ես իրաւունք ունեմ ասելու. ոչ ինձ պէս; Այդ բոլոր նորելուկ երիտասարդները շատ զիջողութիւններ յանձն են առնում, բարեկամաւ: Ես բալաքականութեամբ չեմ դրագուում: Ես լուս եմ: Հերկուում եմ միայն իմ Ալզասի հողը: Գիւղացիները, անտարակոյս թէի ինձ սիրում են, բայց դարձեալ երկիւղով, կամկածնընկ են վերաբերում դէպի ինձ. նրանց կարծիքով ես սկսում եմ արգէն վտանգիչ (compromettant) դառնալ: Առանց ուղղութեան և դիրքի խարութեան՝ ըոլոր դերմանացիները ինձ առում են: Բայց, Աստուած գիտէ, որ այդ ամենը փոխանակ ինձ վրայ ազգելու, փոխանակ ինձ ստիպելու որ կարծիքներս փոխեմ, ընդհակառակը աւելի: Է ամբապնացում իմ համոզումները: Ես կը մեռնեմ իմ հին ոխերով լսում եմ, միշտ ատելով Գեղմտնիային...

Նրա աչքերը փայլատակում էին, ինչպէս մի զինուորի, որ վստահ իր հրացանաձողութեան վրայ, իր գիմացն ունի իր թշնամուն:

—Քո սերունդը ուրիշ էր, Քավիչ: Բայց այնուամենացնիւ չպէտք է անորոգար լինել: Այդ փոքրիկը, որին մերժում եռ տալ քո աղջիկը, թէպէտև մեղ չէ նմտնում, բայց, պէտք է խոստովանել, որ նա աղնիւ, արի սրտի տէր է:

—Օրինակի՞ն համար:

—Միթէ՞ նա չպնդեց, որ գերմանական աղմինիատրացիաւի մէջ չի ցանկանում բնու ծառայել:

—Որովհետև Ալզասը նրան աւելի դուր է դալիս, ինչպէս նաև իմ աղջիկը:

—Ո՞չ զրտ համար, այլ որովհետև նա կրում է ալզասական հոգի:

—Հուշատացնում եմ քեզ, որ ոչ մեղ նման:

—Նոր ձեռվի, այն: Նրանք հարկադրուած են ապրելու գերմանացիների մէջ, ստանում են գերմանական դաստիարակութիւն գերմանական գեմնազիանիցում, և ֆրանսիան սիրելու նրանց եղանակը աւելի սկսաւուոր է, նրանք կամքի և հոգու աւելի մեծ ուժ են ցոյց տալիս, բան մենք, մեր ժամանակներում: Մատածիր որ երեսուն տարի է անցել արգէն Ալզասի գրաւումից:

—Աւագ:

—Եւ նրանք ոչինչ չեն տեսել մեր ժամանակներից, նըրանց հայրենասիրութիւնը աւանդութեան, երեսկայութեան կամ արիւնակցութեան արդիւնք է միայն. մանաւանդ որ ուշացան օրինակները բազմաթիւ են նրանց շուրջը:

— ճիշտ է, ժամն էլ տեսաւ իր շուրջը այդ օրինակներից:
— Անձն ինչու համար գու պէտք է աւելի արդար լինեն
պէտի նա: Մտածիր, որ եթէ ազջիկդ նրա հետ ամուսնանայ,
այստեղ կը հիմունի ալզասական մի շատ հարուստ շատ ուժեղ
ընտանիք... Դը ժարմովը ամենակին չի կարող բնակուել ոչ Ար-
շեյմում, ոչ էլ երկար ժամանակ Ալզասում... շուտով նրա ա-
նունը միայն կը մնայ...

Պ. Բաստեան իր ծանր ձեռքը զրեց պ. Ռւլըիսի ուսի
վրայ, և մի այնպիսի շեշտով, որը անհնար է դարձնում խօ-
սակցութեան շաբունակութիւնը:

— Եսիր ինձ, բարեկամս, ես մի խօսք միայն պիտի ասեմ:
Սյէ ամուսնութիւնը չի կարող տեղի ունենալ, որովհետեւ ես
չեմ ուղարկ, որովհետեւ իմ սերնդի մեռած թէ կենդանի ան-
դամնիւը ինձ կը դատաղարտէին զբա համար... Եւ յետոյ, եթէ
մինչև անգամ ես զիջէի, իմ տանը կայ մէկը, մի կամք, մի ա-
ւելի գորեղ կամք քան իմը, որ բնաւ «այս» չոլիտի ամէ, բնաւ,
լսում ես...

Պ. Բաստեան իջաւ մատուցների մէջ և ուսերը բարձրաց-
նելով և զլուխը թափի տալով, ինչպէս մէկը, որ ոչինչ չի ու-
զում լսել զնաց զէպի իր մշակները: Երբ բաղուած հմուլի
շարքերի միջից անցաւ և իր աշխատաւորներից իւրաքանչիւ-
րին յանդիմանեց, էլ, ոչ ոք չծիծաղեց, այլ Ալզէյմի ապջկերբն
ու աղարակապանի որպիքը, և աղարակապանը ինքն խոկ, ա-
րեգակի ատկ խոնարհած, որը հետզհետէ կիզիչ էր դառնում,
Ե՞ւ շարունակեցին իրանց զուարթութեամբ սկսած աշխա-
տանըը:

Պ. Ռւլըիս արդէն գնում էր զէպի Սէնա-Օդիլի իր ճգ-
նարանը, վշտահար, խորհելով՝ թէ ինչ մեծ ազդեցութիւն պիտի
գործէ պ. Բաստեանի մերժումը ժամանի ճակատագրի վրայ, և եր-
կիւզ կրելով գոյժը տալու իր քրոջ որդուն: Առանց յուսալու,
առանց հաւատալու, որ կայ զեսես յաջողութեան ակնկալու-
թիւն, նա մտածում էր թէ ինչ միջոցով կարելի է արդեօք
Օդիլի հօրը համոզել, և ծրագիրները ըզզում էին իր մտքի
շուրջը, ինչպէս խայթոցաւոր մեծ ճանձերը կազնիների շուրջը,
որ հետեւում էին ուղնորին նրա զանուար վերելը ժամանակ:
Հեղեղները երգում էին: Այլայլ թոշունները ծլւըլում կապոյտ
օդի մէջ, թոչկուում զէպի այգիներն ու պաղատու ժառերը:
Բայց իզուր: Պ. Ռւլըիս տիսուր էր, մեռնելու աստիճան տիսուր:
Նա մտածում էր միայն իր քրոջ որդու մասին, որը ահա այդ
ձեռք էր վարձարբուում Ալզէյմ վերադառնալուն համար: Ճանա-

պարհի դարձուածքին, ծառերի արանքից դիտում էր Օբերլեների
տունը:

Այդ լուպէին այդ տունը մտնողը տարօրինակ կերպով լուս
պիտի գտնէր: Ամենքը տառապում էին այնտեղ, Պ. Ֆիլիպ Օբերլէ,
իր սովորութեան համեմատ, ճաշել էր իր սենեակում: Տիկին
Օբերլէ, իր ամուսնու բացարձակ հրամանի համաձայն, յանձն
էր առել իջնել իր սենեակից դիմուորելու համար պ, որ Կառ-
սը վեցին, երբ դար: «Բայց և այնպէս, ես պէտք է նախապէս
ձեզ յայտնեմ, ասել էր նա, որ չեմ կարող նրա առաջ հազար
կտոր լինել, ոիրալիք երեալու համար նրան: Ես ակամայ ներ-
կայ պիտի լինեմ նրա ընդունելութեան, որովհետև ինձ ստի-
պում էր: Ես ոչ մի խօսք չեմ փոխանակի նրա հետ:

— Հաւ, թող այլպէս լինի, պատասխանել էր ոլ, Օբերլէ.
Իիւսիէնը, ժանը, ես կը խօսենք նրա հետ: Մեր խօսելը բա-
ւական է:» Գործարանատէրը ճաշից անմիջապէս յետոյ դնացի
էր իր աշխատասենեակը, որը դանուում էր պարկի ծայրը:
Ժանը, որ ոգեորուած արածալրութիւն չէր ցայց տալիս, դուրս
էր եկել նոյնպէս, խօսանալով որ ժամի երեքից առաջ տանը
կը լինի: Հետևաբար կիւսիէնը մինակ էր զեղին որահում:
Շատ լաւ հազնուած՝ վարդեր էր զետեղում բիւրեղեայ բաժակ-
ների կամ յախճապակեայ թափանցիկ, զդիոյն ծաղկամանների
մէջ, որոնք հակուպատկեր էին կազմում կարծը ու յստակ ե-
րանգներով թաւշեալ կահկարասինների հետ: Իիւսիէն զուարթ
ու անգորը հօգի ունէր այն խաղացողի նման, որը տեսնում է
խաղի շահով վերջանալը: Վերջին օրերը, Ստրազրուրդում տե-
ղի ունեցող երկու երեկոյթների ընթացքում, նա ինըը անձամբ
ըանակցել էր այն պայմանների մասին, որով կարելի էր՝ կնքել
ամուսնութիւնը, և մնում էր միայն որ երկու կողմերը ստորա-
գրեն համաձայնութեան տակ: Ամուսնութիւն պայման էր պաշ-
տօնապէս գնել պ, Փողէֆ Օբերլէի թեկնածութիւնը Ալզասում,
հէնց որ տեղ բացուեց: Պ, որ Կասաըվեցի այցելութիւնը հա-
մահաւասար էր զաշնագրի տակ ստորագրելուն: Հակառակօրդ-
ները լսում էին, ինչպէս օրինակ տիկին Օբերլէ, կամ հեռու
կանգնած՝ խոռվում էին ինչպէս օրինակ պապը: Զահէլ աղ-
ջիկը վառարանի մօտից գնում էր ոսկեղօծ հայելակալի մօտ, և
ինքն իրան դիտում էր հայելու մէջ, փորձում էր թէ արդեօք
իր շրթունքները սիրուն ձեռով պիտի շարժուեն երը ասէր.
«Պարսն նահանգապետ:» Մի բան միայն նրան զայրացնում էր,
փչացնում իր յաղթութեան գոռող հաճուքը, ոմինը փախուստ
էին տուել նրանից:

Ծառաներն անգամ կարծիս խօսք մէկ էին արել բացակայ

լինել, երբ կարիք ունէին նրանց։ Զանգահարութիւնները ապարդիւն էին մնում։ Այնպէս որ պ. Փողէջ Օրերլէ ստիպուել էր, ճաշից յետոյ գնալ իր հօր սենեկապանին, զիրուկ, բարի ալզասեցուն գտնել, որպէսզի ծառայութիւնը կատարէ։

—Վիկտոր, հագնուեցէք ինչպէս հարկն է, որպէսզի ընդունէք այն անձին, որ պէտք է գայ ժամի երեքին։

Վիկտոր կարմրել էր և պատասխանեց վշտով։

—Այն, պարոն։

—Պէտք է ուշագրութիւն գտածնէք, թէ երբ է գտվիս կառը և պատրաստ կանոննեք վերնադաւթի ստորոտում։

—Այն, պարոն։

Այդ խոստումից ի վեր, որը անկասկած վիրաւորում էր վիկտորի խորին համոզվունը, այս վերջինը փախուստ էր տալիս, ծղկւում էր, և գտլիս էր միայն երեք կամ չորս անդամ կանչելուց յետոյ, բոլորովին շուարած, պատճառաբանելով որ չէ լսել։

Ստրազրուրդի նահանգապետը պէտք է այցելի։ Այդ խոնը, որ անգաղաքը կըկնում էր իիւսին, խոր մտածմունքի մէջ էր ընկղմել տիկին Օրերլէին, որը փակուել էր իր սենեկում և խորհրդածում էր։ Խսկ նա ծանրանում էր, փոթորկալից տմպի հման, Ալգասի նախկին բողոքարկու պատկամաւորի, Թիլիպ Օրերլէի ուղեղի վրայ, որը հրամայել էր իրան բոլորովին մենակ թողնել։ այդ խօսքը ներվային ցնցումներն էր պատճառում պ. Փողէջ Օրերլէի մասներին, որ սղցարանի զրասենեակում նստած՝ գործի նամակներ էին գրում, և երբեմն երբեմն ընդհատելով աշխատանքը մտիկ էր անում։ Նա հնչում էր ցաւազին կերպով, որպէս մահազանգը մի ազնիւ բանի, ժամանակում, որ աղաստանել էր Բաստեանի աղաստակապանների մօտ։ Նա կազմում էր թէման, լէյտմօնիլիր, որի շուրջը դառնում էր զանազան ձևերի տակ, հմուէ բաղորդների կենդանի, խայթող խօսակցութիւնը։

Որովհետեւ աղաստակի կանայք և աղջկերը, և առաւօտեան, հմուլաստանում աշխատող բանուորունիները կէսօրուոյ ճաշից յետոյ հաւաքուել էին Ռամշակերների տպարակի նեղ ու երկար բակում, աթուների կամ բարձր նստարանների վրայ նըստած, իւրաքանչիւրի կողքին, աջակողմում, մի կողով կամ մի զամբիւզ, և ձախակողմում մի տէզ հմուլ, նրանք ծաղիկները ջոկում էին ցօղուններից։ Կազմում էին երկու շարք, մէկը՝ գործի պատերի երկարութեան, միւրա՞ տան երկայնքին։ Եւ առաջ էր գալիս խարահաշ զլուխների և շարժուն իրանների մի ծառուղի, տերենների կոյտերի մէջտեղ, որ ձգւում էր մի կնոջ

մօտից միւսը և միացնում էր նրանց որպէս մի ծաղկեպսակ...

Աւելի ուժգին, քան առաւօտեան, հմուլաստանում, բարձրանում էին ծիծաղները, հարցերն ու դատովութիւնները, ուրո՞ք ծնունդ էին տալիս բազմաթիւ պատասխանների։ Այդ բոլոր ծիծաղների և կատակների առիթ էին տալիս աշխատանքը, մի հարևանի կամ հարևանունու անցքը՝ փոշուց և արեգակից սպիտակացած հրապարակից, և մանաւանդ օրուայ երկու դէպքերը, նահանգապետի այցելութիւնն ու Լիւսիէնի հաւանական ամուսնութիւնը։

Գեղանի ժիւլիէտը, լուսարարի աղջիկը, բաց էր արել խօսակցութիւնը, ասելով.

—Ես ձեզ տառւ եմ, որ վիկտորն է պատմել այդ՝ ոք մտազրի տղուն։ Նահանգապետը պէտք է որ գայ կէս ժամկց։ Ի՞նչ, կարծում էք որ տեղիցս կը շարժմէւմ, երբ նահանգապետն անց կենայ։

—Նա կը տեսնէր մի չափազանց սիրուն աղջկան, ասաց Օգիւստէն Ռամշապախէր, աշխատելիս։ Այդ դէպքում միայն տգեղները իրանց ցոյց պիտի տան։

Իւս, Օկտավի, Ուչն պատասխաննեցին ծիծաղելով։

—Ուրեմն ես էլ չեմ շարժուի տեղիցս։ Ո՞չ էլ ես։ Ո՞չ էլ ես։

Մի պառաւի ձայն—միակ պառաւը, որ օգնում էր ջահէլ աղջկերանց—մոլտաց։

—Գիտեմ որ Պօղոս, Պետրոսի չափ աղքատ եմ, բայց հաղար անգամ կը նախընտրէի որ նահանգապետը ուրիշների տունն այցելէր, քան ոտք զնէր իմ բնակարանը։

—Անկասկած։

Կին և տղամարդ, խօսում էին ազատօրէն։ Բառերը ոսատառում էին պատերի մէջտեղ և բարձրաձայն ծիծաղների ու քաշընկած, ճմլուած տերենների ազմուկի նեա գնում կորչում էին։ Կամնոցի տակ, կիսաստուերի մէջ, ծնօտը ձեւներին յեւնած նստել էր սակայն մէկը, որ վկայ էր այդ բոլորին. գաժան Օբերլէն էր։ Բայց Ալշէմի բնակիչները սկսել էին արդէն ճանանչել երիտասարդին, որովհետև հինգ ամսից ի վեր նա ապրում էր իրանց մէջ։ Գիտէին, որ նա կրում էր թունդ ալզասեցու ոգի։ Ներկայ դէպքում գուշակում էին, որ Ժանը ապաստանել էր Բաստեանների ագարակապանի մօտ, որովհետև դատապարտում էր հօրը մսափառութիւնը, որին զոհում էր պ. Ժողէք Օբերլէ այնըան բաներ ու այնքան անձերի։ Ժանը եկել էր իրու թէ մի քիչ հանգիստ տանելու և արեգակից պատսպարուելու համար բայց խսկապէս նա խոյս էր տուել Լիւսիէնի ներկայութիւնից, որի յաղթանակը նրա համար մի տանշումը բերեց, 1905.

ջանք էր: Եւ սակայն նա գետ ևս տեղեկութիւն չունել այն խօսակցութեան մասին, որ տեղի էր ունեցել առաւօտեան իր մօրեղբօր և պ. Բաստեանի միջն: Օդիլի մտածումը շարունակ ներկայանում էր իր դժբախտ հոգու առաջ, բայց նա շարունակ հեռացնում էր այդ մտածումը ինքն իրան չկորցնելու համար, որովհետեւ քիչ յետոյ պէտք պիտի ունենար իր ամբողջ ողջամտութեան և արիութեան: Երբեմն նա դիտում էր աշխատողներին և ջանք էր գործ դնում շահագրգուելու նրանց աշխատանքով և նրանց խօսակցութեամբ. յաճախ նա կարծում էր լսել կառքի աղմուկ և կիսով չափ վեր էր կենում, յիշելով՝ որ խօսք էր տուել տանը գտնուել, երբ պ. զը Կասաըվեցը դար:

Ժիւլիէտի ձայնը, անկասկած ովեորուած՝ շարունակեց.

—Ի՞նչ կարիք ունի Ալզէյմ՝ դալու Ստրադուրդի այդ նահանգապետը: Մենք առանց գերմանացիների աւելի երջանիկ էնք ապրում:

—Նրանք երդուել են իրանց ատելի գարձնել, աւելացրեց ազտրակապանի մեծ աղջիկը, որ աշխատող կանանց հմուլ էր բաժնում, երբ նրանք սպառում էին իրանց պաշարը: Այսպէս, ինչպէս երկում է, նրանք արգելում են, որքան կարող են, ֆրանսսերէն խօսել:

—Օրինակ ուղիւմ էք, այ իմ հօրեղբօր որդին Ֆրանսուա Ժոզէֆ Շտեյգէրը, տասց փողը մինչնը, գերձակի աղջիկը. Մի ոստիկան պնդում էր, որ իրու թէ նա բղաւել է մի պանդոկում. «Կեցցէ Փրանսիան:» Եթէ չեմ սխալւում, իմ հօրեղբօրը որդին այդ մի երկու խօսքից աւելի Փրանսսերէն չգիտէր: Բայց այդքանն էլ բաւական էր, և երկու ամիս բանտ նստեց:

—Քո հօրեղբօրը որդին նորից բղաւել է: Ապա ի՞նչ կասիս, եթէ պատմեմ, որ Ալբերտ Վէյլէրում արգելել են մի երաժշտական ընկերութեան Փրանսիական լեզուալի կտորներ նուագել:

—Իսկ անցեալ օր Ստրադուրդ եկող Փրանսսիացի աճպարարի գլխին պատահածի մտախն ինչո՞ս պիտի ասէք: Զէք լսել: Լրագրները գրեցին: Թողյլ են տուել որ սրահը վարձէ, փողը վճարէ, յայտարարութիւնները տակ և յետոյ յանկարծ տաել են. «Բարեկամու, կամ ոլէտք է քո խեղկատակութիւնները գերմանէրէն լեզուով ասես և կամ պէտք է ծլկուես:»

—Բայց դրանք գեռ ոչինչ. այն ի՞նչ որ պատահել է պ. Հասասին, որմնանկարչին, մարդու խելքովն ու մտքովն անպամ չէ կարող անցնել:

—Իսկապէս, ի՞նչ է պատահել:

Նա գիտէր որ բոլորովին արգելուած է խանութների ճա-

կատին ֆրանսերէն որևէ արձանագրութիւն նկարել: Պ. Համարը, որին ես շատ լաւ եմ ճանաչում, յանձն չէր առնի իր վրձինով մի բառ անդամ գրել ֆրանսերէն: Բայց նա կարծել էր, որ կարող է գոնէ վերանորոգնել մի նշանացոյց տախտակի արձանագրութիւնը, ուր վաղուց իվեր գրուած էր. «Շապկավաճառնոց» Կանչել են պ. Համարին և սպառնացել են ատենագրութիւն կազմել, որովհետև նա յանդկնել էր պահպանել իր ներկով մի արձանագրութիւն... Այս, այս հոկտեմբերին պատահեց այդ գէպը:

— Օ՞հ, օ՞հ, երևակայեցէք ո՞րքան գոհ ոլիտի լինէր պ. Համարը, եթէ անձրեք, քամին կամ կայծուկը փչացնէր նրա պանդոկի նշանատախտակը, որի վրայ զեռ ևս գրուած կայ. Սալիտակ Աղասևին:

Ագարակապանի կինը նոյն բուգէին երևաց տան շէմքի վրայ. ծերունի ժողէքինը ասաց նրան.

— Դժբախտ Ալզաս: Մեր երիտասարդութեան ժամանակ մրքան ուրախ էր նա: Այսակէս չէ, տիկին Ռամշալախէր:

— Այս. այժմ մի որևէ չոչին պատճառով մարդկանց արտաքսում են, դատի են ենթարկում, բանտ են զցում, ամեն կողմ ոտարկանութիւնը պատել է:

— Լաւ կանես ձայնդ քեզքաշես, գոչեց Ռամշալախէր, կըշտամբանքուլ:

Կրտսերը, Ֆրանսուան, պաշտպանեց մօրը, և պատասխանեց.

— Այսուեղ մատնիչ չկայ: Եւ յիտոյ, միթէ կտրելի է լուել: Նրանք չափիցն անց են կացել: Ահա զրա համար է, որ այնքան երիտասարդներ գաղթում են:

Իր մութ անկիւնից, ժան զիտում էր այդ բոլոր ջահէլ գլուխները, որոնք կրակուա աչքերով լսում էին, ոմանք՝ անշարժ և ուզզածիկ, ուրիշներ՝ խոնարհելով և բարձրանալով հմուլի տէղերի վրայ:

— Փոխանակ այդքան շատախօսելու, լաւ չի լինի որ աշխատէք, ասուց նորից տիրոջ ձայնը:

Հարիւր եօթանասուն ըմբոստ, զատապարտուած Սավէննի դատարանից, մի օրուայ ընթացքում, անցեալ յունուարին, բացականչեց Ժիւլիէտ, մի ծիծաղով, որ ցնցեց նրա մաղերը: Հարիւր եօթանասուն:

Ֆրանսուա, բարձրահասակ, ծոյլ ու տձեւ երիտասարդը, որ այդ բուգէին բալորովին մօտեցել էր ժան Օրերէին, չորացնելու տախտակի վրայ թափեց մի մեծ սակառ հմուլ և, յիտոյ ծոռւելով.

— Մահմանն անցնելու լաւագոյն ճանապարհն է Մհծ-Աղբիւրը, ասաց ցածր ձայնով: Իսկ ամենայարժար անցքը, պարոն Օքերլէ, Մհծ Աղբիւրի և Մինիէսի մէջտեղից... Ֆրանսիական սահմանը այդ տեղից շատ մօտ է, ճիշտ դիմացն է գտնում: բայց պէտք է զգուշանալ անտառապանից և մաքսային պաշտօնեաներից: Երբեմն նրանք կանդնեցնում են մարդկանց և հարցնում են, թէ ուր ին գնում:

Ժան սառսասաց: Ի՞նչ էր ուղում ասել ֆրանսուան: Ակսեյ խօսել.

— Ո՞ւմ էք տո... .

Բայց երիտասարդ գիւղացին շուռ էր տուել երեսը, և շարունակում էր աշխատանքը: Անկասկած նա խօսքն ուղղել էր իրան...

Ժան խոռվուել էր այդ խօսքերից:

Մի սուը ձայն աղաղակեց.

— Ահա կառքը մտաւ գիւղ: Նա կանցնի ոլ. Բաստեանի ծառուղու առաջից:

Բոլոր աշխատողները բարձրացրին իրանց զլուխը:

Փոքրիկ ֆրանձէլը կանգնել էր այդ սիւնի առաջ, որ բանում էր գարպասի բաց դուռը: Ամբողջ մարմնով կռացած ցանկապատի վրայ, խճուճ մաղերը հողմից տարութեր, նա գիտում էր գէպի աջ, որտեղից գալիս էր մի կառքի անիւների ձայնը: Բակում կանայք գաղարել էին աշխատելուց: Նրանք մրմուռ էին. «Նահանգգապալետը: Ահա նահանգգապալետը... Հիմա կանցնի:»

Ագարակապանը, որին՝ կանանց յանկարծական լոռւթիւնը, ինչպէս և փոքրիկի ձայնը սթափեցրել էր զբաղմունքից, գարձաւ գէպի բակը, ուր հմուլաքաղ կանայք անշարժ ականջ էին զնում մօտեցող ձիերի և անիւների աղմուկին: Նա հրամայեց.

— Փրանձէլ, գարպասի դուռը վիակի՞ր: Եւ աւելացրեց մուտալով.

— Զեմ ուղում որ տեսնէ իմ տան ներսը:

Փոքրիկը հրեց փեղիկերից մէկը, յետոյ հետաքրքրուած ճակատը առաջացնելով.

— Օ՞հ, տարօրինակ է: Գոնէ չի կարող ասել որ շատ մարդիկ նրան դիմաւորել են, նա շատելն է տեսել իր ճանապարհի վրայ... Ո՞չ ոք չէ շարժուել իր տեղից... Միայն գերամանուհիները դուրս են թափուել, և այդ բնական է... նրանք բոլորն էլ կանգնել են Աղազիլ հիւրանոցի մօտ...

—Պիտի փակե՞ս թէ ոչ, գոռաց ադարտկապանը դայրաւցած:

Այս անդամ ֆրանձէլ հնազանդուեց: Երկրորդ փեղկը աղամկով ընկաւ. միւսի վրայ: Բակում հաւաքուած քսան հոգիները լսեցին կառքի ալմուկը, որ թաւալում էր Ալշյմ զիւզի լուռ ու ամայի փողոցներով: Ապակիների հումկոց, մութ անկիւններից միայն դիտում էին. ոչ ոք չէր գուրս գալիս շէմքի վրայ, և պարտէզներում, ծաղկէթմբերը հերկողները այնքան խորասուզուած էին երկում իրանց աշխատանքի մէջ, որ ոչինչ ուշադրութիւն չէին դուրձնում անցնող կառքերի վրայ:

Երբ կառքը ագարակից յիսուն մետր հեռացաւ, ըոլորը մտքով թռան դէպի Օբերլէների ծառուղին, հեռուն, դիւզի միւս ծայրում, և վեր առնելով մի բուռ հմուլի ճիւղ, կանայք և աղջկերը հնտաքրքրուած իրանք իրանց հարց էին տալիս, թէ ի՞նչ պէտք է անէ պ, Օբերլէի որդին, և նրանք գաղտազողի նայեցին դէպի կամնոցը:

Նա այնտեղ չէր:

Գնացել էր, չլրժելու համար իր խոստումը, և վազած լինելով՝ հակառակ վազքին, համնում էր դժողոյն, բանջարանոցի գրան առաջ, հէնց այն րոպէին, ուր նահանգապետի ձիերը, տան միւս կողմից մանում էին պարկի վանդակաղաներից ներս:

Ամբողջ առնը իմացել էր արդէն նահանգապետի դալը: Լիւսիէն և տիկին Օբերլէ նստել էին վասարանի մօտ: Նրանք ոչ մի խօսք չէին փոխանակում միմիւսնց հետ: Գործարանատէրը, կէս ժամից աւելի է վերադարձել էր արդէն իր աշխատասենեակից և հագուստները փոխած, դիտում էր պատուհանի լայն բաց արած փեղկերից կառքի գալն ու օձապտոյտ դաւնալը պարկի մարգագետինների շուրջը:

Իր ծրագիրը ահա իրագործուում էր: Պաշտօնական անձը, որ մտել էր իր տան դմուներից ներս, բերում էր իրան, պ. Օբերլէն, գերմանական բարեհաճութեան ապացոյցը: Մի վայրկեան հպարտութեան մի ամպի մէջ, որով նա ստուաց, իր եւ ըեւակայութեան առաջ ցցոււած տեսաւ Խայխստագի պալատը...

—Մօնիկ ասաց յետ գառնալով, շնչասպառ, կարծես մի երկար վաղքից յետայ, արդեօք ձեր որդին վերադարձել է վերջապէս, թէ ոչ:

Նա առաջ, գեղին բազկաթուում, վառարանի մօտ նստած նըրամարմին տիկին Օբերլէն պատասխանեց, յուղումից ամբողջ գիմագծերը պրկուած.

—Նա ներկայ կը լինի, քանի որ խոստացել է:

—Փաստը, պարզ փաստը այն է, որ նա այստեղ չէ, իսկ կոմս դը Կասսըլեցի կառքը արգէն ներս մտաւ... իսկ վիկտորը. երևէ նա վերնապաւթի առաջ է, կոմսի գալը ծանուցանելու համար, ինչպէս ես նրան պատուիրել էի:

—Երեւի:

Պ. Ժողէֆ Օբերլէ, կատաղած՝ այն բռնի պատախաններից որ տալիս էր նրան իր կինը, այն խուլ ընդդիմութիւնից, որին նա հանդիպում էր իր իւրաքանչիւր քայլին, անցաւ սրահով, ուժոնութեամբ քաշեց հին զանդակի կապը, և բաց անելով սրահաթի դուռը տեսաւ, որ վիկտորը իր տեղում չէր:

Նա պարտաւորուեց ետ քաշուել, որովհետև սանդուխաններից վեր բարձրացող քայլերի աղմուկը խառնուում էր զանդիվերջին թրթումներից:

Պ. Ժողէփ Օբերլէ զնաց կանգնեց վառարանի մօտ, երեսը դարձրած դէպի գուռը, իր կնոջ կողքին: Բայլերը ճզմում էին աւազը՝ զրամիտեայ սանդուխի աստիճանների վրայ:

Զանդի ձայնից մէկը ևկել էր վերջապէս: Դուռը բացուեց. մի բոպէ յետոյ Օբերլէ նշմարեց Սալօմէ խոհարարուհուն, մնդրամոմի նման սպիտակ, ատամները սեղմած, որ անխօս բայ էր անում գուռը և պ. դը Կասսըլիցին, որ նրան քսուելով, մըտնում էր:

Այդ անձը՝ շատ բարձր հասակով, շատ լայն ուսերով սեղմուած էր մի բըդինգոտի մէջ: Դէմքը բաղկացած էր երկու տարրեր տարրերից. զուրս ընկած ճակաա, կլոր այտոսկրներ, կլոր քիթ, յետոյ, յօնքերը, որոնք միացած, կրած էին և որոնց մատերը բիզ բիզ կանգնած էին, նոյնպէս և բեխիրը, կարճ, սրածայր մօրուքը, որոնք դէպի առաջ, օդի մէջ ցցուած էին: Այդ սրութիւններով և կլորութիւններով կազմուած դէմքը ոգերուում էր երկու ծակող, անհանդարու աչքերով, որոնք պէտք է որ կապոյտ լինէին,—քանի որ մազը տեղին էր—բայց որ միշտ թաղուած էին մնում մութի մէջ, որովհետև ցից յօնքերը ստուեր էին զցում նրանց վրայ և որովհետև մարդը սովորութիւն ունէր ծալծել իր թերթերունքը: Մաղերը՝ քունքերի վրայ ցանցաւ, յանկարծ խտանում էին ենթապահողից (occiput) մինչև ականջների ներքիւ:

Պ. Ժողէփ Օբերլէ մի քանի քայլ առաջ եկաւ և առաց դերմաններէն լեղուով:

—Պարոն նահանգապետ, մեծ պատիւ է մեզ համար ձեր այցելութիւնը... իսկապէս նեղութիւն կըել...

Պաշտօնեան բռնեց և սեղմեց Օբերլէի երկարած ձեռքը: Բայց նրան չնայեց, և կանգ չառաւ: Սրահի թաւ գորգի վրայ նրա

քայլերը շարունակեցին հնչել: Նրա հայեացքը ուղղուած էր, դէպի վառարանի անկիւնը, սուզի զգաստներ հաղած նըբամարդմն կինը: Եւ իր հսկայ իրանը մի քանի անգամ կուացնելով, շոկելով բարեեց:

—Պարոն կոմս դը Կասորվից, ասաց պլ. Օրերէ, որովհետեւ նահանգապետը երբէք չէր ծանօթացել տանտիրուհու հետ:

Տիկին Օրերէ զվիսի թեթև շարժումով բարեեց և ոչ մի բառ չարտասանեց: Պ. զը Կասորվից ուղղուեց, մի վայրկեան սպասեց, յետոյ համակերպուելով իր գրութեան, աշխատեց ինքն իրան զուարթ ցոյց տալ, բարեեց Լիւսիէնին, որը շառադունել էր և ժպառում էր:

—Ի՞նձ թւումէ որ օրիորդի հետ ծանօթ ենք արդէն նորին գերազանցութիւն քաղաքաղլիսի անից, պատասխանեց: Ճիշտ է, Ստրագուրդը Ալշէյմից շատ մօտ չէ, բայց ես այս կարծիքի հմ, որ արժէ այսքան հրաշալի տեսարաններ վայելելու հսմար ձանապարհորդել, պարոն Օրերէ...

Գոհունակութեան մի ձիճաղ արձակեց և նստեց դեղին բաղմոցի վրայ, դէմքը վառարանի կողմը՝ զարձրած: Յետոյ, խօսքն ուղղելով կործարանատիզոնը, որը նստել էր իր կողքին, հարցրեց.

—Արդեօք ձեր պարոն որդին բացակայ է:

Պ. Օրերէ, անձկաղին, լսողութիւնը սրած մտիկ էր անում մի բոսէից իվեր: Վերջապէս նա կարողացաւ պատասխաննել.

—Ահա նա, պարոն նահանգապետ:

Արդարն նոյն բոսէին ներս էր մտնում երիտասարդը: Առաջին անձը, որին նա տեսաւ, մայրն էր: Դրա համար փոքրինչ վարանեց: Նրա կրակոտ, գիւրազդաց աչքերը, ներվային մի թթվում ունեցան, որպէս թէ վերաւորուած լինէին: Անմիջապէս նա շուտառուեց երեսը դէպի բաղմոցը, սեղմեց ձեւը, որ երկարում էր այցելուն, և, լուրջ, նուազ շփոթուած քան հայրը, և աւելի ստուարինութեամբ, ասաց ֆրանսերէն.

—Ես գուրս էի եկել մի փոքրիկ զբօսանք կատարելու համար, պարոն նահանգապետ: Ես վազնիվազ եկայ, որպէսզի ուշ չմնամ, որովհետեւ հօրս խոստացել էի ներկայ գտնուել ձեր այցելութեան ժամանակ:

—Զափազմնց սիրուիրութիւն ձեր կողմից, ասաց պաշտօնեան ծիծաղելով: Մենք ձեր հօր հնտ զերմաներէն էինք խօսում, բայց ես կարող եմ արտացայտուել մեր ուղրային լեզուից գուրս ուրիշ բարբառով:

Նա շարունակեց խօսքը Փրանսիրէն, իւրաքանչիւր բառի առաջին վանկերի վրայ շեշտ դնելով.

—Պարոն Օբերլէ, ևս հիացած եմ ձեր պարկով և նոյն իսկ Աղեյմի այս փոքրիկ երկրով։ Շատ շատ սիրուն է... ինձ թւում է որ զուք շրջապատուած էք մի բաւական հիւրամերժ, յամենայն գէպս, համարեա անտեսանելի ազգաբնակչութեամբ, որովհետեւ, քիչ տուած, զիւղի միջից անցնելով, հազիւ հազ մի հոգու նշամարեցի:

—Նրանք դաշտ են գնացել աշխատելու։

—Ո՞վ է զիւղապետը։

—Պ. Բաստեանը։

—Այս, յիշում եմ, ըստերևոյթին մի յետամնաց ընտանիք... Պաշտօնեան՝ պլուխը մի արագ, զինուորական շարժումով դարձնելով գէպի երկու կամանց և ժամանի կողմը, հարցաքննում էր հայեացքով նրանց գէմքը։ Երեք պատասխան միտժամակ լսուեցին։

—Յետամնաց, այս, ասաց Լիւսիէնը, յետադէմ զաղավարներ ունեն, բայց ազնիւ մարդիկ են։

—Հին սերունդի մարդիկ են պարզապէս, ասաց տիկին Օբերլէ։

—Մանաւանդ շատ արժամաւոր, ասաց Ժան։

—Այս, զիւհմ թէ ինչո՞ւ համոր...։

Նահանգապետը մի խուսափուղական շարժում գործեց։

—Ի՞նչ որ է... Բաւական է, որ ուղիղ ընթացքի հետին!...

Հայրը օգնութեան փուլաց, բանն անուշ կապելու համար։

—Մենք հետաքրքիր շատ բաներ չունենք, որպէսզի ձեզ ցոյց տանք, պարոն նահանգապետ, բայց գուցէ կը կամենայիր տեմնել իմ գործարանը։ Նա մարդկանցով լիքն է և կենդանի, հաւասարացնում եմ ձեզ։ Հարիւր բանուոր, թաւալրուող մեքենաներ, քսան մետր երկարութեամբ կազնիներ, որոնք, երեք բռպէում, տախտակի վերածուած գուրս են դալիս մեքենայի տակից։ Ուղո՞ւմ էք այցելել, տեսնել այդ բոլորը։

—Իսկապէս հետաքրքիր է։

Խօսակցութիւնը այսպէս ուրիշ նիւթի շուրջը դառնալով, նուալ ձնշող բնաւորութիւն ստացաւ։ Խօսեցին Օբերլէների գործարանի ծագման, Վոժերի անտառների հայթայթած փայտի, ծառ կտրելու ֆրանսիական և գերմանուկան եղանակների և մի շարք այս կարգի հարցերի մասին, և ամենքը մի մի խօսք ասացին խօսակցութեան մասնակից եղան։ Լիւսիէն ոգեսուեց։

տիկին Օբերլէ ստիպուած եղաւ իր ամուսնու հարցերին պատասխանել. Փառ նոյնպէս խօսեց: Պաշտօնեան գոհ էր երեսում իր այցելութիւնից:

Իիւսիէն՝ հօրը մի նշանի վրայ վեր կացաւ, որպէսպի զանգը տայ, սենեկապանին կանչէ և զովարար ըմպելիներ պահնջէ: Բայց մի քայլ անգամ անելու ժամանակ չունեցաւ:

Դուռը բացուեց, և վիկտոր, այն ծառան՝ որ քիչ առաջ իր պաշտօնի վրավիր չէր, երեաց, բոլորավին կարմրած, շփոթուած և աչքերը գետին խոնարհած: Նրա ձախ թերին յենուած գալիս էր պատղը՝ պլ Ֆիլիպ Օբերլէ, որքան կարելի է հաստկը ուղիղ բանած:

Խօսակցող հինգ հոգիները ոտքի վրայ էին: Ծառան կանգ առաւ դրան առաջ և հեռացաւ: Ծերունին մենակ ներս մտաւ իր գաւազանի վրայ յենուելով: Պ. Ֆիլիպ Օբերլէ հագել էր այն զեղեցիկ զգեստները, որ հագնուում էր առողջութեամս ժամանակ: Հագել էր սիւրափեկ, բըտինգօտ, որի կոճակները չէր կոճկել. լամբակից անցրել էր Պատուի Լէկէօնի կարմիր ժապաւէնը: Բուռն յուղումը կերպարանափոխ էր արել նրան: Կարծես քսան տարով երիտասարդացել էր: Նա առաջ էր գալիս փոքրիկ քայլերով, մարմինը մի քիչ առաջ խոնարհած, բայց գլուխը բարձր ու պինդ բռնած, նա զիտում էր միայն մէկին, գերմանացի պաշտօնեային, որ կանգնել էր բազմոցի մօտ: Նրա գժուարաշարժ ծնօտը գողգողում էր, պլիսում էր, տակա բառեր էր արտասանում, որոնք չէին լսում:

Պ. Ժողէֆ Օբերլէ սխալութից, թէ ուկեց այդ անակնկալ այցելութեան տարբեր կերպարանը տալ: Դարձաւ գէտի պլ Կասսըլեցը, որ զարմացած մնացել էր և ասաց.

—Պարհն նահանգապետ, հայրս ահա անակնկալ ուրախութինն է ընծայում մեզ իր սենեակից վար իջնելով. ես չեմ սպասում այդ անակնկալին:

Նախկին պատգամաւորի աշքերը, իրանց ծանր կոպերի տակ լայն բացուած, չէին հեռանում գերմանացուց, որ լաւ, անխոռվ էր պահում իրան և լուս մնում:

Երբ պլ. Ֆիլիպ Օբերլէ մօտեցաւ պլ. դը Կասսըլեցին, կանգ առաւ: Այն ժամանակ իր ձախ ձեռորվ, որը աղաս էր, սիւրափեկի գրասնից հանեց և կոմս գը Կասսըլեցին երկարեց քարետախտակը, որի վրայ երկու տող բան էր զրուած: Այս վերջինը խոնարհուեց և ծառացաւ կանգնեց.

—Պարհն:

Պ. Ժողէֆ Օբերլէ խլել էր արդէն բարետախտակի նուրբ շերտը և կարդում էր հետևեալ տարօրինակ բառերը:

«Սա իմ տունն է, պարսն:»

Ծերունի ալզանեցու աչքերը աւելացնում էին. «Կորէք այստեղից:» Եւ նրանք երբէք չէին խոնարհում: Երբէք չէին բաց թողնում թշնամու օձիքը:

—Այս արդէն չափազանց է: Ինչպէս, հայր իմ, դուք զալիս էք այստեղ իմ հիւրերին նախատելո՞ւ... ինասկէ գուք կը ներէք, պարսն, հայրս ծեր է, տաք-գլուխ, և հասակի շնորհիւ մի քիչ պատորուած...

—Եթէ գուք մի քիչ աւելի երիտասարդ լինէիք, պարսն, ասաց իր հերթին պլ. գը կասուզից, գործը քաղցրութեամբ չէր վերջանայ... Եւ լու կանէք յիշելով, որ դուք էլ իմ տանն էք, Գերմանիայում, գերմանական հողի վրայ և խելացիութիւն չէ, նոյնիսկ ձեր տարիքում, նախատել յշխանութիւնը...

—Հայր, ասաց տիկին Օրերլէ թռչելով դէպի ծերունին, նրան պահելու համար... աղաչում եմ... Զեր հիւանդութիւնը ծանրացնում էք... Սա չափազանց զօրեղ յուզումէ ձեզ համար...

Արդարեւ, տեղի էր ունենում, մի անդնական երկոյթ: Պ. Ֆիլիպ Օրերլէ իր բուռն զայրոյթի մէջ ոյժ էր առել և կանգնել էր բոլորովին ուղիղ: Նա հսկայական երկոյթ էր նոյն հասակը՝ ինչ որ պլ. զը կասալվիցը: Բոռնցըների երակները ուռչում էին. այտերը արիւնով կարմրում, աչքերը շանթ արձակում: Եւ սիւնոյն ժամանակ, այդ կիսամեռ մարմինը դողդողում էր և սպասում՝ իր գիւրաբեկ կեանքը՝ ակամայ շարժումներով: Նա մի նշան արեց տիկին Օրերլէին, որ հեռու կանգնի և իրան չըսնէ:

Լիւսիէն զժգունած, բարձրացրեց ուսերը, մօտեցաւ ոլ. գը կասուզիցին.

—Սա մեր ընտանեկան ողբերգութեան դեսպաններից մէկն է, պարսն: Ուշը մի դարձնէք և եկէք մեզ հետ գործարան: Թուղէք որ անցնեմ պատ:

Ծերունին անուշագիր թողեց Լիւսիէնին: Լիւսիէն, մարտահունէր երեսով անցաւ պ. Ֆիլիպ Օրերլէի և պաշտօնեայի մշտեղից, որը պատասխանից.

—Ինձ հասցրուած նախատինքի պատասխանատու չեմ բոնում ձեզ օրիորդ... Ես ըմբռնում եմ դրութիւնը, հասկանում ես:

Զայնը, սեղմուած կոկորդից դժուարութեամբ էր գուրս զալիս: Կատաղած՝ զլխի կէս մասովը՝ բացի պ. Ֆիլիպ Օրերլէից, ամենքից բարձր կանգնած, առևճքին տիրապետելով՝ պը կասուզից շուռ եկաւ կրունկների վրայ և առաջացաւ դէպի դուռը:

— Եկէք, խնդրում եմ, ասաց պ. Ժողէֆ Օբերլէ, ճանապարհը ցոյց տալով նահանգապետին: Լիւսիէնն արդէն գուրսէր եկել: Տիկին Օբերլէ՝ յուզմունքից նոյնքան հիւանդացած՝ որքան այդ ծերունին, որ մերժում էր իր օգնութիւնը, արտասունքից համարեա շնչառեղ եղած, վաղեց մինչև սրահակը և բարձրացաւ իր սենեակը, ուր հեծեծագին լաց եղաւ:

Սրահում մնաց միայն ժամանիքի ալեսոր պետի հետ, որը արտաքսել էր իր տնից օտարականին: Նա մօտեցաւ ծերունուն:

Պապ, այդ ի՞նչ արեցիք:

Նա ուզում էր ասել. «Դա մի սարսափելի նախատինք էր: Հայրս այդ բանը երբէք չի ներիլ: Ընտանիքը ամբողջապէս խորտակուած է:» Ժամ ուզում էր այս խօսքերն ասել: Բայց աչքերը բարձրացրեց դէպի այդ վաղեմի մարտիկը, որ մօտ էր ուժապառ լինելու և սակայն կարողանում էր դեսկս գիմադրել, յուզմունքին: Տեսու, որ այժմ ուսում նայում էր իրան շեշտակի, որ նրա զայրոյթը հասել էր իր ծայրագոյն աստիճանին, որ կուրծքը ելեէջ էր անում, որ դէմքը ծամածում էր և գալարուում: Եւ, յանկարծ, գեղին սրահում, մի արտասովոր ձայն, մի խեղդուած, բիրդ, հոգը ու ժանդուած ձայն աղաղակեց, ներվալին զարհութելի ցնցումով.

— Կորիք, կորիք, կորիք, կորիք:

Զայնը բարձրացաւ մինչև ամենասուր նոտերը: Յետոյ փշրուեց: Եւ, բերանը դեռ ևս բաց, ծերունին գոզզոջեց և ընկաւ գետին:

Զայնը թնդացել էր տան ամենախուլ անկիւններումն անդամ: Տիկին Օբերլէ ճանաչեց այդ ձայնը՝ որ ասյաւէտ լըսութեան էր դատապարտուել, և իր սենեակի բաց թողնուած դոնից կարողացաւ լսել խօսքերը: Պ. Ժողէֆ Օբերլէ նոյնալէս լսել էր կատաղութեան ու տառապանքի այդ ձայնը, պարտիզում, սղոցարանի մօտ: Մի բոսէ, յօնքերը կիտած՝ շուռ էր տուել դէմքը, դէպի տան կողմը, մինչդեռ գործարանի գերմանացի վերակացուներն ու բանուորները ողջունում էին իրանց կեցէներով պ. զը Կասսըլիցին:

Սրան շտապեցին նախ ախլին Օբերլէ, յետոյ Վիկտոր, յետոյ պառաւ Սալօմէն, որ միանգամայն դժգունած և ձեռքերը վեր բարձրացրած՝ ասում էր. «Միթէ սա պ. Ֆիլիպի ձայնը չէր.» յետոյ կառավարը և պարտիզանը, որոնք վարանում էին առաջ գալու, թէպէտն շատ էին հետաքրքրուած այդ տաժանելի տեսարանով: Նրանք ժամանին և նրա մօրը գտան ծնկաչոր՝ պ. Ֆիլիպ Օբերլէի մօտ, որը հազիւ կարողանում էր շնչել և զը-

անւում էր կատարեալ ընկճուած դրութեան մէջ: Քայքայիչ ճիպը, յուզմունքը, զայրոյթը սպառել էին անկարի ուժերը: Վերցրին նրան, նստեցրին մի բաղկաթոսի մէջ և իւրաքանչիւրը ամեն հնարք գործ դրեց կենդանացնելու հիւանդին: Մի քասորդ ժամ ամբողջ առաջին յարկեց սրահ, սրահից առաջին յարկը վազվեցին: Բերում էին քացախ, այլևս գեղեր, եթեր:

—Ես գիտէի որ պարոնը զարձեալ կաթուած պիտի ունենար, ասում էր վիկտոր, այս առաւօտեանից իվեր նա չէր կարողանում իրան դոպել: Ա՛հ, վերջապէս շարժում է մի քիչ իր աշքերը... Չեսները մի քիչ տաքացել են:

Պարկի խորքից թնդաց մի ողջոյն.

—Կեցցէ սլաքոն նահանսպապեալը:

Զայները՝ գաղճ հողմի հետ մտան սրահ, ուր մինչև այդ օրը՝ երբէք այդպիսի խօսքեր չէին հնչած: Պ. Ֆիլիպ Օբերլէ կարծես չլեց: Բայց և այնպէս, մի քանի ըովէ յետոյ նշան արեց որ իրան տանեն իր սենակը:

Շտապով մէկը բարձրացել էր սանդուխի աստիճաններից և գեռես ներս չմտած հարցըրեց:

—Ի՞նչ է պատահել նորից: Ինչու համտը էին այդ աղաղակները... Ա՛հ, հայր:

Նա իսկոյն ձայնի շեշտը փոխեց, և ասաց.

—Ես կարծեցի, որ գուք էր Մօնիկ, ներկային տագնապ էք ունեցել... Բայց այդ գէպըում ոչ տրամակեց այդ տարօրինակ պաղակը:

—Նա:

—Նա, հարցրեց պ. Օբերլէ, այդ անկարելի է:

Զամարձակուեց հարցումը կրկնել: Հայրը՝ ստքի կանգնած՝ ժամանի և սէնեկապանի օգնութեամբ, գողգողալով և գանդաղելով՝ դալիս էր սրահից գէպի գուրս:

—Ժամն, ասաց տիկին Օբերլէ, լաւ հսկիր պապիդ վրայ, մի հետանայնրա մօտից: Ես ահա գալիս եմ:

Ամուսինը պահել էր նրան ճանապարհին: Նա ուզում էր հեռացնել ժամին: Երբ մենակ մնաց պ. Օբերլէի հետ, —սանդուխի գլխին, լսում էին գեռես ոտնաձայներ, շրջապիսուի և հագուստի բզանցքի շրջիւններ, սպառուէրներ, «վեր բարձրացրէք, ուշաց դրութիւն սանդուխի զարձուածքի վրայ...»

—Ի՞նչ բղաւեց, հարցրեց գործարանատէրը:

—«Կորիր, կորիր» աղաղակեց: Ցանախ է ասում այդ խօսքերը, գուք գիտէք...

—Որ այդ խօսքերով է միայն նա արտայայտում իր առելութիւնը... Ուրիշ բան չասաց:

—Ո՞չ, շտապով ներքեւ իջայ և փոռւած զտայ նրան գետակի վրայ, նրա մօտ կանգնել էր ժամանը...

—Յարերախտարար, պ. զը Կասսըվեց հանդիսատես չեղաւ այդ արարուածին: Առաջինը բառական էր... իսկապէս ամբողջ տունը գաշնակցել է, այդ այցելութիւնը—այնքան պատուաբեր մեզ համար—զայթակութեան և նախատինքի մի առիթ դարձնելու, հայրս, Վիկորը, որ չամաչեց մեղսակից լինել այդ զառանցող ծերուանուն, ժանը, որ անպատկառութեամբ վերաբերուեց դէպի հիւրը, դուք...

—Ես կարծում էի որ դուք ինձանից արտնջալու ոչինչ պատճառ չպիտի սնննայիք:

—Դժգոհութեան առաջին պատճառը հէնց դուք էր: Դուք էք այս դիմադրութեան հոգին, որը ես պիտի խորտակեմ... Պիտի խորտակեմ, հաւատացած եղէք...

—Իմ խեղճ բարեկամ, ասաց ձեռքերը միացնելով, դուք դեռ ևս այդ հին երգը չէք մոռացել:

—Երբէք:

—Դուք անկարող էք ամեն բան խորտակել, աւազ:

—Այդ կը անսննաբ:

Տիկին Օրերլէ չպատասխանեց, և շտապով բարձրացաւ առաջին յարկը: Մի նոր մտահոգութիւն, աւելի ճնշող քան իր ամուսնու սպասնալիքներից վախը, նրան չարչարում էր. «Ի՞նչ էր միտքը կեռարիս, մտածում էր: Այդ ծերունին զառանցանքի մէջ չէ բնաւ... Նա չէ կորցրել իր յիշողութիւնը. նախատեսնում է, հոկում է տան վրայ, նա միշտ խելօր է մտածում... Երանի թէ ժանը ինձ նման հասկացած չլիներ...»

Սանդուխի գլխին պատահեց որդուն, որ պապի սենեակից էր դուբս գալիս:

—Ի՞նչ լուր:

—Վախենալու ոչինչ չկայ, կարծում եմ: Դրութիւնը աւելի լաւ է, ուզում է մենակ մնալ:

—Իսկ դժւ, հարցրեց մայրը, անձկազին, բռնելով որդու ձեռքից և տանելով նրան նրա սենեակը: Իսկ դժւ:

—Ի՞նչպէս թէ, իսկ ես:

Երբ ժան սենեակի դուռը փակեց, նա կանգնեց իր առաջ և պատռհամի լոյսի մէջ դէմքը բոլորովին սպիտակացած, աչքերը սենուած իր որդու աչքերին.

—Դու հասկացա՞ր, չ՞, պապի ասածը:

—Այս:

Տիկին Օրերլէ վորձեց ժպատաւ, և դա տանջուած հոգու այդ ձիգը աւելի ճմլող տպաւորութիւն գործեց:

—Այն, նա աղաղակեց, «Կորիր», այնպէս չէ: Դա մի խօսք է, որ ասել է յաճախ օտարականներին: Նա խօսքն ուղղում էր ու. դը Կասովլեցին... Զես հաւատում:

Ժան թափ էր տալիս գլուխլ:

—Եւ սակայն սիրելիս, ուրիշ ուժմ կարող էր ուղղել խօսքը...

Ներողութիւնն, նա ինձ էր ուղղում խօսքը:

—Դու գմբւել ես: Դուք միմիանց հիտ այնպէս բարեկամներ էք, քո պապն ու զու...

—Աւելի լաւ:

—Միթէ նա ուղղում էր քեզ վանդել սրանից:
Ո՞չ

—Ռւրիմն, էլ ի՞նչ:

—Նա հրամայում էր ինձ թողնել այս տունը:

—Ժանն:

Եւ սակայն, խեղճ մարդը հրճուել էր Ալշեյմ վերադառնալս տեսնելով:

Ժան դադարեց մօրը նայելուց, որովհետեւ արցունքները ցայտել էին արկիխն Օքերլէի աչքերից, որովհետեւ նա տւելի ևս մօտեցել էր իրան և բռնել էր իր ձեռքերը

—Ո՞չ, ի՞մ ժան, ոչ, նա չէր կարող այդպէս խորհել... Հաւատացնում եմ քեզ, որ զու սխալ հասկացար... Յամենայն դէպս զու չեմ թողնել ինձ... Ասա, որ չես թողնելու ինձ երեք...

Նա մի բոոլէ սպասեց պատասխանի. լայց լոգմէր:

—Ժան, իսէր Աստուծոյ, գթա ինձ, պատասխանիր... Խոստացիր ինձ, որ չես թողնելու մեղ... Օ՞հ, Աստուծծ իմ, ի՞նչ կը լինէր այժմ մեր տունը առանց իմ որդուն... Ես, որ քիզանից բացի ոչ ոքին չունեմ... Ի՞նչ, միթէ ևս բաւական զըժախտ չեմ... Ժան, ինձ նայիր...

Ժան էլ չկարողացաւ զիմանալ: Մայրը իր որդու աչքերը տեսաւ, որ լցուած էին խանգաղատանքով:

—Ես քեզ սիրում եմ իմ ամբողջ հոգով, ասաց Ժան:

—Գիտեմ: Բայց մի հեռանայ:

—Ես խղճում եմ քեզ և պատկառում քեզանից:

—Մի հեռանայ:

Եւ որովհետեւ ոչինչ չէր պատասխանում, տիկն Օքերլէ բաժանուեց նրանից:

—Դու չես ուղղում խոստանա՞լ: Դու, զու էլ գութ չունես: Դու նմանւում ես...

Նա պատրաստում էր տակը .«Հօրը»: Ժան մտածեց. «Ես

կարող եւ նրան մի քանի շաբաթ խաղաղութիւն պարգևել, ես
պարտաւոր եմ այդպէս անելոց: Եւ ասաց, ջանք դործ դնելով՝
իր հերթին ծիծաղելու:

—Ես ձեղ խոստանում եմ, մայրիկ, միայն հսկումը 1-
ին լինել Սէն-Նիկոլայի զօրանոցում: Ես ձեղ խոստանում եմ...
Դժու էք:

Մայրը նշան արեց որ ոչ: Բայց ժան, համբուրելով նրա
ճակատից, և աւելի ոչինչ չասելով՝ հեռացաւ շատապով...

Աշէյմ զիւզը այժմ խօսում էր Օբերլիների տանը տեղի
ունեցած տեսարանի մասին: Երեկոյեան խեղտող շոգի մէջ
տղամարդիկ վերադասնում էին գաշտերից քայլելով, երեխաներն
ու երիտասարդները՝ ձի հեծած, ձիերի պոչը, վոժերի ուսի
վրայից, մայր մանող արեգակի թափած բոցավառ լոյսի մէջ
երևում էին ոսկերանգ կամ արծաթագոյն, ու կամ շառագոյն:
Կանայք սպասում էին իրանց մարդերին գաների շէմքի վրայ,
և, երբ նրանք մօտենում էին, դնում էին նրանց ընդ առաջ,
մի բոպէ աւելի շուտ հաղորդելու համար խոշոր լուրը. «Գիտե՞ս
ի՞նչ սպատանեց գործարանում: Այնպիսի բան, որի մասին պի-
տի խօսեն և շատ երկար: Ասում են ոլ. Ֆիլիպի լեզուն բաց-
ուելէ զայրոյթից և գուրս է արել սղուսիացուն իր տանից:»
Գիւղացիներից շատերը ասում էին.

—Կանկ, յետոյ կը պատմես, յետոյ, երբ տուն վերադաս-
նանք և գուռը մեր հուկոց փակենք:

Ռմանք՝ մատահողութեամբ նկատելով հարեանների և հա-
րևանուհիների յուզմունքը, ասում էին.

—Մրա վերջը այն կը լինի, որ ոստիկանութիւնը կը կոխէ
մեր գիւղը:

Պ. Բաստեանի ազարակում, կանայք և ջահէլ աղջկերք
վերջացրել էին հմուլի բաղը և շաղակրատում էին դեռևս, ծի-
ծաղկու կամ մտատանջ նայած նրանց, տարիքին: Ազարակա-
պանը հրամայել էր, որ փակ պահեն գիւղի փողոցի վրայ բա-
ցուող զուռը: Նա, հակառակ իր զուարթ արատքինի՝ զկոյշ,
խոհեմ, շարունակում էր աշխատանքը: Եղներն ու ձիաները՝
բակի մօտից անցնելիս, շնչում էին օղը և մեկնում էին իրանց
վիզը գէպի առաջ:

—Եւ հմուլաքաղ անող կանայք հետզհետէ վեր կենալով
թափ տուին իրանց զոդնոցները, և յոգնած, ձգելով իրանց մա-
տաղ բազուկները, յօրանջելով զովացած օղի մէջ, մեկնեցին
դէպի իրանց աւելի կամ սպակաս հեռու աները, ընթրիքի սե-
զանի շուրջը հաւաքուելու համար:

Ընթրիքի ժամը հնչեց և՛ Օբերլէների մօտ: Ոչ մի ժամանակ ճաշը այդքան կարճատես և այդքան թաղծալից չէր եղել, Հապիւ մի երկու բառ փոխանակուեց: Լիւսիէն մոտածում էր այն արդելքի մասին, որ ցցում էր իր ամուսնական ծրագրի առաջ և այն բուռն ցասման մասին, որ զգացել էր պ. գը կասովլեց. Ժամն այն գժողքի մասին, որ դարձել էր ընտանեկան յարկը. պ. Օբերլէ իր համարեա կործանուած փառասիրական երազների մասին. տիկին Մօնիկ իր որդու հաւանական մեկնումի մասին: Ընթրիքն աւարտելու մօտ, այն բոլէին, երբ ծառան հետանում էր, պ. Օբերլէ սկսեց, կարծես շարունակելիս լինէր կիսատ թողնուած մի խօսակցութիւն:

—Միթելիս, ինչպէս գիտէր, ես սովորութիւն չունեմ, տեղի տարու բռնութեան տառաջ: Ուժը ինձ զայրացնում է, կատաղեցնում է միայն, ուրիշ ոչինչ: Հետևաբար ես վճռել ևմ երկու բան. նաև՝ շինել տալ մի երկրորդ տուն ատաղձարանի մօտ, ուր կարողանուած մենակ լինել, իս տանը. յետոյ շտապեցնել լիւսիէնի ամուսնութիւնը տեղակալ ֆօն Փարնովի հետ: Ո՞չ գուք, ոչ հայրս, և ոչ էլ աշխարհի վրայ որ և է մէկը կարող կըլինի խանդարել ինձ: Եւ ես, այն մասին գրել եմ արդէն նրան, ֆարնովին:

Պ. Օբերլէ՝ դէմքի միւնոյն գրգրիչ անհամարձական արտայայտութեամբ յաջորդաբար նաչեց իր որդուն և իր կնոջ: Եւ աւելացրեց:

—Պէտք է որ այդ ջանէները կարողանան միմիանց հետ տեսակցել ազատօրէն, որպէս նշանածներ...

—Օ՛հ, ասաց տիկին Օբերլէ, զիս...

—Որպէս նշանածներ, շարունակեց, քանի որ այդ է իմ կամքը և սկսած՝ այս երեկոյեանից: Իժ որոշումը մազաչափ անգամ չի փոխուի... Դժբախտաբար ես չեմ կարող այսպէս անել, որ նրանք միմիանց հետ տեսակցեն այսուելու Հայրս, դռւ—ցոյց տալով որդուն—կամ գուք—ցոյց տալով կնոջը—կարող էիր մի նոր սկանդալ ստեղծել:

—Միտելում էք, ասաց տիկին Օբերլէ: Ես սարուակելի կերպով տանջլում եմ այս ամուսնութիւնն պատճառով, բայց ես անկարող եմ ոչ մի սկանդալ ուարքելու և արգելք լինելու այն բանի գէմ, որ գուք վճռել էք:

—Ուրեմն, շարունակեց պ. Օբերլէ, ահա ձեղ առիթը ապացուցանելու ձեր ասածը: Ես մտադիր էի ոչինչ չինայել ձեղսից, և ինքս առաջնորդել լիւսիէնին Ստրավուրդ, մի երրորդ անձի մօտ, որը իր տանը պիտի հաւաքէր նշանածներին:

—Ես երբէք այդ պատռուին արժանի չեմ եղել:

— Հնդունո՞ւմ էք, կ'ընկերանաֆք ուրեմն ձեր աղջկան:
Մի բոպէ մտածեց, վիակեց աչքերը և ասաց.
— Անկասկած:

Զարմանքի մի արտայայտութիւն խաղաց ամուսու, Ժանի
և Լիւսիէնի դէմքի վրայ:

— Զափալզանց ուրախ եմ, որովհետև իմ տաճնելլ այնքան
էլ գուը չէր գալիս ինձ: Շատ աւելի բնական է, որ գուը տա-
նէք ձեր աղջկան: Բայց, ինչ էք մտածում, մըտեղ պիտի ընտ-
րէք ձեր ժամալրավայրը:

Տիկին Մօնիկ պատասխանեց.

— Օրերլէի իմ տունը:

Ապշութեան մի շարժում, միաժամանակ իրանց տեղից
վեր թոցրեց հօրն ու որդուն: Օրերլէի տոհնը, Բիհլը ինքներդ
տոհնը: Գոնէ որդին ըմբռնեց մօրն արած զոհողութիւնը, վեր
կացաւ ու համբուրեց նրան խանտաղատագին: Պ. Օրերլէ ասաց
անձամբ.

— Լաւ, Մօնիկ: Շատ լաւ: Ե՞րբ յարմար էք դատում:

— Երբ որ պ. զը ֆարնովին լուր տաք, Դուք ինքներդ
կորոշէք ժամը և օրը: Նորից զրեցէք նրան, երբ որ պատաս-
խան ստանաք ձեր նամակին:

Լիւսիէն, որքան որ էլ իր մօր համար քնքուշ զգացմունք-
ներ չէր տածում, այդ երեկոյեան մօտեցաւ նրան: Փոքրիկ
սրահում, ուր ժամեակ էր հիւսում, երկու ժամ անընդհատ
նստաւ տիկին Օրերլէի կողքին, ուշաղրութեամբ հետեւց կամ
աշխատեց հետեւի այդ կնճռուած, ակոսացած, բայց դեռ ևս
այնքան դիւրաշարժ ու այնքան արայայտիչ դէմքի վրայ մը-
տածմունքների եւնէջներն: Բայց յաճախ մարդ հոգիները կար-
դում է միայն կիսով չափ: Ո՛չ Լիւսիէնը, ոչ էլ ժամը անկա-
րող եղան գուշակելու այն պատճառը, որ մզել էր յոգնած տի-
կին Օրերլէն յանձն առնել այդպիսի զոհաբերութիւն:

(Կը շարունակուի)

ՓԻԼԻՍՈՓԱՅ. ՍՈՑԻՈԼՈԳ *

Ինչպէս են առաջացել դասակարգերը:—Սպիհնսերեան թէօրիան:—«Հոմոգէնի» անկայունութիւնը:—Նախնական վիճակ:—Մարդակեռութիւն և գերութիւն:—Սպիհնսեր և Մարքս:—Տնտեսական գործոնի գերակշռող գերը:—Դերութիւնը իբրև պրոգրեսիւ մի հաստատութիւն:—Պատ. յաջորդական ֆագիսներ:—Ստրկութիւնն և ճորտութիւն:—Ինչպէս է ծնունդ առել միահեծան բռնապետութիւնը:—«Աստուածային ծագման» թէօրիան:—Բռնապետութեան անխուսափելի անկումը:

Դասակարգային բաժանումը մարդկային հասարակութեան մէջ մի անգամ արդէն սկզբնաւորուելով՝ առաջ է գնում ճակատագրական անհրաժեշտութեամբ և միշտ նորանոր ճիւղաւորումներով: Սպիհնսերեան օրէնքը փորձումէ լուսաբանել այդ էւօլիցիան, — մէկը սոցիոլոգիական ամենածանրակշիռ պրոբլեմներից:

, Հասարակական աղբէզատի մէջ (agrégat, համախմբում), ինչպէս ամեն մի ուրիշ աղբէզատում, միատարր (հօմոգէն) դրութիւնը անկայուն է, և երբ արդէն գոյութիւն ունի մի որշեալ այլատարրութիւն (héterogénéité), վերջինը ձգտումէ առելի ևս մեծանալ, — ահա այդ ընդհանուր, տիրական օրէնքը:

Բացարձակապէս հօմատարր վիճակ երբէք չէ եղել մարդկային հասարակութեան մէջ, ինչպէս նա չէ եղել տիեզերական միկային զանգուածում, ինչպէս նա չէ եղել և կեանքի աղբիւր — պրոտոպալազմի մէջ: Որոշ չափով զանազանաւորում, դիֆերենցիացիա գոյութիւն ունի միշտ:

Հասարակական օրգանիզմը իր ամենասկզբնական վիճակում անգամ որոշ չափով այլատարր էր, հէնց այն պատճառով՝ որ երկու տարրեր սեռ, տղամարդ եւ կնամարդ կանդնած էին դէմ առ զէմ, իբենց տարբեր ուժերով ու ֆունկցիաներով, մէկը իբրև իշխող ու կառավարող, միւսը՝ իբրև ստորագրեալ: Ահա ձեզ արդէն երկու դասակարգ իսկզբանէ անտի:

*) ՏԵ՛Ր «ՄուբՃ», № 8.

Ժամանակի ընթացքում ծնունդ է տանում կանանց կողքին մի այլ ստրուկ տարր—գերիների դասակարգը։ Ի՞նչպէս է ծնունդ նա։

Պատասխանը պարզ է։

,,Փաստեր կան, ասումէ Սպիհնոնք, որոնք մտածել են տալիս, որ մարդկանց գերի դարձնելու սովորութիւնը անըշշմարելի աստիճաններով առաջ է դալիս մարդակերութիւնից... Երբ գերի բանուածները չափազանց շատ էին և անկարելի էր իսկոյն նրանց լափել, մի մասը պահել են աւելի ուշ սպառելու համար և պարզուել է որ այդ գերիներին աշխատեցնելով, աւելի արդիւնք կարելի է ստանալ, քան թէ մորթելով. այս ժամանակ ծագել է սովորութիւն՝ պահելու բռնուածներին որպէս գերի¹⁾։“

Գրէթէ բոլորվին նման բացատրութիւն է տալիս և Մարքսի տնտեսական մատերիալիզմի։ Սպիհնոնքը միայն զանց է առնում յիշել, որ գերութեան ծնունդը պատկանումէ այն նշանաւոր էազխային, երբ գենսական ու նահապետական կարգերի խորտակուելու հետ՝ հիմնականապէս յեղաշրջուում էին սեփականատիրական պայմանները, երբ արդիւնարերական գործիքների մշակման չնորհիւ կործանւում էր հին, համայնական սեփականութեան սիստեմը և ծնունդ էր առնում անհատական, մասնաւոր սեփականութիւնը, երբ անհատը կարող էր աւելի արտադրել քան սպառել, երբ այդպիսով „տէրերին“, զօրտվարներին հնարաւորութիւն էր ներկայանում շահագործելու իր նմաններին, աշխատեցնելու որպէս անլիզու գրասաների, քամելու նրանց վերջին ուժերը և նիւթական հարստութիւններ ամրարելու։

Դասակարգի ծագման ու զարգացման պրոցեսում անուշընալի է տնտեսական զործօնիի—արդիւնարերական միջոցների մշակման ու ծաւալման—մնջ, գերակշռող, վճռական գերը, և Սպիհնոնք չափազանց միակողմանի զատողութիւն է յայտնում, ասելով որ պատերազմական—զինուորական վիճակը ակախ պատճան է դասակարգային զանազմանաւորման, այսունքն դասակարգերի առաջանալուն։

Գերութեան շրջանը յատկանշում է առաջին մեծ դասակարգային բաժանումը մարդկային հասարակութեան մէջ։ Ըստանեկան հողից՝ սիստեմը անցնում էր քաղաքական—սօցիալական հողի վրայ և առաջ բերում երկու բոլորովին տարբեր դասակարգեր, որոնցից մէկը՝ իր աշխատանքով պահպատ

1) Principes de Sociologie.

նում էր ամբողջ համայնքի գոյութիւնը, միւսը՝ իշխող փոքրա-
մասնութիւնը՝ ստանձնում էր կառավարելու դերը:

Դերին զուրկ էր մարդկային բոլոր իրաւունքներից, նա
չունէր իրաւական անձնաւորութիւն. Իր ամբողջ ընտանիքով
նա գրւում էր տիրոջ քամաճ տրամադրութեան տակ, որը
կարող էր անպատճիժ կերպով մեոցնել կամ ծախել նրան, կուղ
ու երեխանսերին: Գերին նոյնպիսի մի սեփականութիւն էր
տիրոջ ձեռքում, ինչպէս մի կտոր հող, մի եզ, մի գործիք:

Այդ վիճակը դերեթէ համաշխարհային տարածումն ունէր:
Արևելքը գերութեան ծաղկման որրանն է իհարկէ: Գրեթէ
բոլոր երկրները—Եղիստոս, Ասորեստան, Հնդկաստան, Զի-
նաստան և այլն—տեսել են այդ ոչժիմը:

Պարզ է, թէ որքան աղետաբեր հետևանքներ կարող էր
ունենալ գերութեան ոչժիմը մարդկանց բարոյականի տեսա-
կետից: Եւ այն՝ ոչ միայն գերիների համար, որոնք կորցնում
էին խաղաղ մարդկային արժանապատռութեան զգացումը և
դատապարտուելով գրաստի յաւիտենական աշխատանքի՝ իսպառ
բթանում էին ուղեղով—այլ և իրանց՝ տէրերի համար: Բա-
ցարձակ ու բռնակալ հեղինակութեան մշտնջենաւոր գործա-
դրութիւնը ապականում էր բարքերը: Ամեն մի տէր, գերի-
ների ամեն մի խմբի հրամանատար մի սանձարձակ բռնա-
կալ էր իր շրջանում ու ընտանիքում, զարգանում էին հրէ-
շաւոր չափերով զգայնական ախորժավները, թունաւորում
էր ընտանեկան, հասարակական կենաքը... Այո, և այնուամե-
նայնիւ գերութիւնը հասարակական գիտութեան դատա-
ստանի առջև հանդիսանում է ոչ միայն իրքեւ անհրա-
ժեշտ, այլ և օգտակար ու սլրօղինեսիւ հաստատութիւն: Պրոգրէս
էր նա և տնտեսական բարոյական տեսակէտից: թէ
և դաժան, տմարդի, բռնակալ, ըայց նա գէթ այլ
ևս խմբովին չէր մորթում, լափում մարդկակներին, ինչ-
պէս անուում էր կանսիբալիզմի, մարդակերութեան շրջա-
նում. գերութեան ոեժիմը խնայում էր մարդուս ամենա-
թանգագին սեփականութիւնը,—ինայում էր կեանքը: Պրոգրէս
էր նա և տնտեսական զարգացման տեսակէտից, քանի որ
բազմամիլիօն գերիների անգուլ ֆիզիքական աշխատանքը
ահաղին թուիչքներ էր հաղորդվում արդիւնաբերութեան և առ-
ևտրին: Պրոգրէս էր և ընդհանուր կուլտուրական տեսակէտից:
գերիների շնորհիւ մի ամբողջ դասակարգ հնարաւորութիւն
ունէր նուիրուելու մտաւոր, քաղաքակրթական աշխատանքի,
զարգացնում էր արուեստը, գիտութիւնը, փիլիսոփայութիւնը.

առանց հնագարեան գերութեան՝ թերևս անհնարին լինէք
Արիստոտէլների ու Ֆիդիասների երևան գալը....

* *

Էվոլլիւցեան շարունակւում է, գերութեան սխոտէմին յա-
ջորդում է ճորտութեան սխոտէմը: Նա սկիզբ է առնում,
Սպենսերի կարծիքով, հողային ընդարձակ նուաճումներով:
Նուաճում էին ամբողջ համայնքներ և բանի միացւում յաղթո-
ղի համայնքին: Մարդիկ այլս չէին պոկւում իրենց ծննդա-
վայրից, ինչպէս գերութեան դաժան ժամանակներում, այէ
մուռմ էին իրենց նուաճուած, հայրենիքի մէջ, իրրե օրինաւոր
հապատակներ և որոշ տորոր էին վճարում՝ նուաճողներին:
Դարձեալ ստրկութիւն է, միայն այն գործի տարբերութեամբ՝
որ աշխատաւոր մեծամասնութիւնը արդէն վայելում է որոշ
իրաւունքներ, մարդկանց այլ ևս չէին կարող սպանել ուզած
ժամանակ, կամ անվերջ աշխատեցնել տարակով և զագանակով:

Նուաճողները—սովորաբար տարբեր ցեղից—կազմում էին
զինուորական մի կաստա և պահանջում էին հողի մշակողների
բերքերից մի որոշ մասը: Տրամադրելի սարուկների թիւը մարդ-
կանց ձեռքում կը տէրիում էր ոչ միայն ուժի և հարստու-
թեան, այլ և „ազնուականութեան“: Հստ այնմ հասարակու-
թիւնը բաժանուում էր՝ ազնուականների և պարզ սովորական
մահկանացուների:

Զինուորական բառը նախնի դարերում գրեթէ համանիշ
էր քաղաքական բարին: Հողատէրերը—յաղթողները, նուաճող-
ները—միաժամանակ զինուորներ էին, այն ինչ ամեն տեսակ
ստրուկները, ճորտերը արտաքսում էին զինուորական ծա-
ռայութիւնից (ժամանակը շատ տեղերում փոփոխեց, մեզմեց
այդ յարաբերութիւնները): Այդուհետ է հիմնական տարբերութիւնը
երկու մեծ գառակարգերի միջև, —մէկը զինուորական, իշ-
խող ու կառավարող, միսը աշխատաւոր:

Դասակարգային զանազանաւորման նպաստում էր որոշ,
արական ծննդակարգի սահմանումը: Անհաւասարութիւնը դա-
սակարգերի մէջ միշտ աւելի և տւելի աճում է, բանի որ նրա
շնորհիւ իսկ՝ իշխողը, բարձր գիբք ունեցողը միջոցներ է ձեռք
բերում պահպանելու իր ուժը և աճեցնելու իր յարձակողա-
կան ու պաշտպանողական ուժերը: Հասարակական գիրը
անհաւասարութիւնը առաջ է բերում ֆիզիքական տարբերու-
թիւններ: ապրելու տարբեր եղանակները արտադրում են
մտաւոր ու հոգեկան—զգացողական տարբերութիւններ, որոնք

հետզհետէ աւելի ևս ծանրացնում են կօնտրաստը գասակարգերի միջև:

Քաղաքական էւօլիցիան միշտ առաջ է գնում: Նուաճումների շնորհիւ, բազմաթիւ մանր համայնքներ ձուլում են, կազմում մեծ ու բարդ հասարակութիւններ: Մանր ու մունքնենուրական շէֆերը, սեփականատէր—ճորտատէրերը կարացկամց տեղի են տալիս մի լայնածաւալ, որոշ ու յստակ հասարակական խաւի, կառավարչական մի բարդ մեխանիզմի, որի գլուխ է կանգնած բացարձակ լիազօրութիւններով մի շէփ, թագաւոր:

Մեր տեսութեան նախորդ էջերում արդէն խօսեցինք կառավարութեան նախնի ձեւերի մասին, որ համայնքի տւագոյն ներկայացուցիչների ձայնը այնքան մեծ կշիռ ունէր, որ համուլիսատես ամբոխն անգամ յաճախ ազգում էր խնդիրների լուծման ընթացքի վրայ իր հաւանութեան կամ պարսաւանքի աղաղակներով, որ շէֆերը, ժողովուրդների հրամանատարները աւելի, այսպէս առած, իշխում էին, քան կառավարում:

Այդ դրութեան մէջ շատ հաճելի ռամկավարական, իդիլիկ կողմեր կան, բայց այնուամենայնիւ նա հին ու խաւար դարերի ծնունդ էր և պէտք է չքանար քաղաքակրթութեան ալիքների առջև: Քաղաքակրթութեան սկզբունքը շարժուել է ուլում լայն հօրիզոններում... Մանր համայնքները իրենց ուսմկավար, բայց նահանգետական, բիրտ կառավարութիւններով պիտի տեղի տային ճակատագրօրէն աւելի մեծ, թէկուզ և բռնաւոր, պետութիւններին, կառավարութիւններին:

Միահեծան բռնապետութեան սկզբունքը, ինքն ըստ ինքեան անհամակրելի է, բայց մենք գատում ենք այն՝ ոչ բացարձակ ահօնութիւ, այլ յարաբերականիի, relatit-ի տեսակէտից: Այդպէս գատելով՝ բռնակալ միապետութիւնը ընդունելի է,— իբրև ժամանակաւոր, ոչ մշտակայուն մի հաստատութիւն: Իբրև այդպիսին՝ նա միանգամայն դրական ու օգտակար մի կատէգորիա է պատմական էվլոլիցիայի պլոտէսում:

,,Իրողութիւնները ատիպում են մեզ խոստովանել ասում է Սպենսեր, որ մարդկանց ստորագրումը բռնակալ վեհապեսներին մեծապէս նպաստել է բազմակրթութեան առաջադիմութեանը: Թէ ինդուկտիվ և թէ դէկուկտիվ ճանապարհները, որքան կուգէք, ապացոյցներ կը բերեն դրամ!“

,,Բռնակալութեան անհրաժեշտութիւնը աւելի ևս լուկը գիտակցէք, երբ ի նկատի ունենաք, որ հասարակութիւն-

ների գոյութեան կռւում հաւասար պայմանների մէջ յաղթողը եղել են նրանք, որոնք ենթարկուած են եղել ամենից խիստ ստորագասութեան (Subordination) իրենց շէֆերին, թագաւոր ներին:

«Բանի որ նախնական դարերում զինուորական ստորագասութիւնը և հասալակական հպատակութիւնը ընթանուած էին զուգակցարար, պարզ է ուրեմն որ երկար ժամանակ նուածող հասարակութիւնները ենթարկուած են եղել բանակալ ոչժիմի: Պատմութեան տուած բացառութիւնները իրօք միայն հաստատուած են ալդ կանոնը: Սովորութիւնը՝ դիքտատոր նշանակել այն վայրկեաններում, երբ թշնամու կողմից վտանգ էր ապանուած հանրապետութեանը՝ մտածել է տալիս, որ հոռմայեցինները փորձով հասկացել էին, որ միահեծան իշխանութիւնը գերազանցութեան պայմաննէ պատերազմի մէջ»:

Այդպէս ուրեմն մարդկային հասարակութիւնների գոյութեան անողոր, յարատե արհաւրալի կուիւներն են, որ ժամանակի ընթացքում ձուլելով մանր համայնքները աւելի և աւելի խոշոր հասարակութիւնների մէջ և ճնունդ տալով միծ ազգութիւններին, առաջ են բերել հասարակական այն համեմատարար բարձր տիպը, որի յատկանիցն է արսօլիտիզմը, բացարձակ անձնական իշխանութիւնը:

Այդ վերջինը իր գարգացման ընթացքում անցել է զանազան մոմէնտներ: Դեռ սկզբներում շէֆերը, մարդկանց հրամանատարները հիմնուած էին իրենց ազգեցութիւնը իրենց անձնական արժանաւորութիւնների վրայ, —Գիղլիքական ուժի, արիութեան, փորձառութեան, կամ թէ իր մտաւոր կարողութիւնների վրայ: Դա այսպէս սասած՝ բնական գերազանցութիւնն էր, որ նախամարդու աչքում մարմնացնում էր հերոսը, ուազմիկը:

Բայց կար և մի ուրիշ «գերազանցութիւն»—արդէն զերբնական—որի արտայայտիչ հանգիստանուած էր կախարդը: Այդ երկու գերազանցութիւնները, յաճախ միանալով՝ միևնուն շէֆի անձնատորութեան մէջ, դարձնուած էին նրան կարող ու ազգեցիկ, սակայն լոկ դրանց վրայ հիմնուած իշխանութիւնն ու հեղինակութիւնը ժամանակաւոր էր, անցողական,—նա դադարուած էր շէֆի մահուան հետ:

Դէտք էր մի այլ գործոն՝ այդ հեղինակութիւնը, այսպէս ասած, յաւերժացնելու համար: Պէտք էր ժառանգականութեան սկզբունքը, առնական գծով: Վերջինս երկան է գալիս քաղաքակրթութեան սանդուխքի համեմատարար բարձր աստիճանների վրայ, հայրական իրաւունքի տիրապետութեամբ: Մի

իրաւունք՝ որ ժխտումն էր մատրիարխատի (մայրական իրաւունքի) վաղեմի գրութեան, երբ իրը արդիւնք ամուսնական խառնակեցութեան իրկարատես սիստէմի՝ մօր Փիզիոլոգիական կապն էր միայն հաստատում սերնդի վրայ, մօր հեղինակութիւնն էր ճանաչում, յարգում, մօր անունով էր մկրտում տոհմը և մօր գծով էր սահմանում ամբողջ ժառանգականութիւնը:

Պատրիարխատի, հայրական իշխանութեան ամրապնդումը սերս կապ է հաստատում գերզատանի մէջ, զարկ է տալիս հպատակութեան ուժիմին, զարգացնում է դիցիպիլինը, կարգապահութիւնը: Նոյն համայնքի և պետութեան մէջ: Բացարձակ վեհապետը կտակում է իշխանութիւնը իր յետնորդներին—առնական գծով—որոնք շարունակում են վարել պետական գործերը: Նոյն բացարձակ ու բռնաւոր ձևով: Կառավարութեան այդ միատեսակ ձևը ժառանգուելով սերնդէ սերունդ, կրկնողութեան շնորհիւ, միշտ աւելի և աւելի ամրապնդում է, ուժեղանում:

Մի ուրիշ Փակտոր ևս գալիս է ժամանակի ընթացքում աւելի հմայք և ոյժ հազորգելու բռնաւորի անձնաւորութեան: Դա նրա աստուածային ծագման հանգամանքն է, որի բացատրութիւնը փնտրելու է կրօնական վաղէմի հասկացողութիւնների և ժամանակապէս նախնիքների պաշտամունքի մէջ (Culte des ancêtres), որը Սպիտակեան հոչակաւոր թէօրիայի համեմատ, չուէկէտն է բոլոր կրօնական հաւատաւալիքների:

Բոլոր նախնի ժողովուրդները ունեցել են այդ սովորութիւնը—մեծարել, պաշաել հարազատ մեսեներին, որոնց գամբարանների շուրջը այլ և այլ ծէսեր են կատարել, զոհեր են մատուցել: Դա կրօնական էվոլիւցիայի սկզբնական շրջանն է, ուր մարդկային սիտքը իր խղճուկ, տարտամ ըմբռնումի մէջ՝ առարկայական գոյութիւն էր հաղորդում ամեն տեսակ ողիների ու հոգիների, որոնք օժտուած էին բարիք ու չարիք գործելու հսկայական կարողութիւններով: Ժամանակի ընթացքում այդ մեսեները ստացել են աստուածային չատրիբուտներ, նրանց մէջ ոմանք իրենց արտակարգ յատկութիւններով՝ առանձին, գերիշող դիրք են զրաւել, ոչ միայն գերգաստանում, այլ և հասարակական ընդունակ գանգուածի՝ տոհմի, ցեղի մէջ:

Երկիւզը մի հզօր ռազմիկի, մի հերոս հրամանատարի գերեզմանի առջև՝ մղելէ մարդկանց գէպի ապօթէօզ, ստիպել է նրանց աստուածացնել այդ հզօրին, յաճախ նրան սիրաշաւնելու, զինաթափ անելու նպատակով:

Երբ պատերազմների ու նուաճումների շնորհիւ ցիր ու

ցան մարդկային դանգուածները համախմբուելով ի մի են ձուլուել՝ հերոս-աստուծոյ պաշտամունքն էլ ընդհանրացել է և աւանդաբար անցել սերունդներին։ Այդտեղից՝ երկու հետեւանք։ Մէկ՝ որ հօր հրամանատարի յաջորդը, որը գահակալում է հօր մահից յետոյ՝ հոչակլում է իրքն յաջորդակից հօր աստուածային ընութեան մէկ էլ՝ որ նա իր գոհարերութիւններով հայր—աստուծոյ աջակցութիւնն է ստանում։

Եւ ահա անսահման լիազօրութիւններ։ Քաղաքական շէքը, իրքն Աստուծուց առաջացած կտոմ ուղղակի նախահնամութիւնից սահմանուած՝ դասնում է թէօրիայում և իրականութեան մէջ բացարձակ սեփականատէր իր բոլոր հպատակների և նրանց գրաւուած բոլոր հողերի։

Երբ, այդպիսով, երկրի հրամանատարը ստանձնում է միահեծան, անսահման իշխանութիւն, երբ հպատակները հլու հնազանդութեամբ խոսնարիւում են նրա գահի առջն, ենթարկւում են նրա կապրիգներին, ապաւիսում են նրա գթութեան, երբ «աստուածային ծագման «զօրութիւնմբ» այդ իշխանութիւնը համարում է սրբազն ու անբռնաբարելի և ամեն մի ձգում նրա դէմ բացարձակ որբապղծութիւն։ Երբ միահեծան պետը և՛ աստուած է և՛ հրամանատար, այն ժամանակ նա բնտկանարար միացնում է իր անձի մէջ իշխանութեան բոլոր ձեերը, այն ժամանակ նա դասնում է և՛ գերագոյն դատաւոր և՛ եկիղեցու պետ։ Թագաւորը կենտրոն է հանդիսանում հասարակական բովանդակ կազմի, նրա բովանդակ պաշտօնավարութեան։

Այդ է ինքնակալ բռնապետութիւնը կամ արտօլիւտիզմը, իր լիակատար գարդացման մէջ։

Թագաւորը իշխումէ տիրականօրէն, բայց կառավարում է ոչ միայն ինքը։ Ընդարձակ պետութեան կարիքները հոգալու համար՝ նա պէտք ունի օգնականների, նշանակովի մինխտրների։ Վերջիններս, գլուխ կանգնելով այլ և այլ դէպարտամենտների, վարում են գործերը շատ թէ քիչ ինքնագլուխ և իրօք սահմանափակում են միահեծանի կամքն ու լիազօրութիւնները։ Թագաւորը կազմը պետական ամբողջ մեխանիզմի հետ դառնալով միշտ աւելի և աւելի անուղղակի հստանում է մի մօտենտ, երբ նրա իշխանութիւնը դանում է անուանական—և որ էցու, ու գույքունութիւնները։

Եւ այդպիսով վեհապետը յայտնւում է կատարեալ անկարողութեան մէջ՝ իր հրամանները պայմաններին յարմարեց-

նելու և նրանց գործադրուելը կամ չգործադրուելը ստուգելու:
Այդ վիճակը պարզ է որ չէ կարող յարատել: Աբովիւ-
տիզմը՝ զիսուորական, պատերազմական տեսակէտից իր նշա-
նաւոր պատճական դերը կատարելուց, հասարակական գոր-
ծակցութեանը (Coopération) մեծ զարկ աալուց յնուոյ՝ ներքին
յարակայ ուժերի մղումով, ժամանակի ընթացքում տեղի է
տալիս նոր, սահմանադրական կարգերի առաջ եւ սիսհե-
ծանի քմահաճ կամքը փոխարինում է ժողովրդական գե-
րիշխանութեան մեծ սկզբունքով:

Միք. Յովհաննիսեան

ՔԱՂԱՔԱՆ ԿԵՆՏՐՈՆԱՅՑՄԱՆ ԵԽ ՑԵՇԵՐԱԿԱՑԻԱՅԻ ԽՆԴԻԲԸ

Ուստական կուռ աբսոլիւտիզմի հետզհետէ ջախջախուող
վլատակների վրայ շտապում են բազմապիսի տարրեր պար-
զել իրենց կուսակցական դրօշակները: Աւտոկրատիայի մի-
ապաղաղ մթնոլորտը, որ աշխատում էր ամբողջ աղդաբնակու-
թեան կաշկանդել քաղաքական ինդիֆերենտիզ մի (անտարե-
րութեան) նեղ շըջանակի մէջ, չքանում է այսօր զգալի արա-
գութեամբ և տեղի տալիս դասակարգերի և կուսակցութիւննե-
րի քաղաքական ազատ մրցութեան:

Իւրաքանչիւր կուսակցութիւն բնական անհրաժեշտու-
թեամբ ունի իր քաղաքական որոշ ծրագիրը, և իրաւ, ոչ մի-
այն սօցիալ-քաղաքական ծանրակշիռ լէֆորմների և տնտեսա-
կան բարենորդումների նկատմամբ, այլև առաջայ թուսաս-
տանի—որի սկիզբը ներկայից է սկսում—քաղաքական կազմի
վերաբերմամբ:

Այդ տեսակէտից միմիանց դիմավլող ու հակասող դաւա-
նանքները, որոնք այսօր քաղաքական հօրիզոնի վրայ հրատապ
ինդիրների բնաւորութիւն են ստացել, կազմում են քաղաքա-

կան կենտրոնացումը եւ ֆեղերացիան: Յատկապէս ձախակողմեան թերեն են—սոցիալ-դեմոկրատական և դեմոկրատ-յեղափոխական կուսակցութիւնները—որոնց համար քաղաքական այդ հակադրական credo-ները այժմէութեան նշանակութիւն են ստացել:

Մեր մամուլը ևս զբաղուեց այդ խնդրով: «Մշակի» մէջ ալ, Խաժակը «կենտրոնացում և ֆեղերացիա»¹⁾ վերնագրով մի երկար յօդուածի մէջ աշխատում է, իրեն ֆեղերացիստ, ցոյց տալ քաղաքական կենտրոնացման մասսակարութիւնը և ֆեղերատիւ կազմի օգտակարութիւնն ու անհրաժեշտութիւնը: Պ. Խաժակը, իբրև Հ. Յ. Դաշնակցութեան ուղղութեան կողմակից, պաշտպանում է նրան և նմանօրինակ կուսակցութիւնների քաղաքական դէմոկրատ ընդդէմ համարն Խուսաստանի սօսցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնների քաղաքական դեմքից:

Բանակոռուի դուրս գալ առիթ է տուել ալ. Խաժակին մեծամասնականների օրդանը՝ «Новая Жизнь», իր մի առաջնորդողով, ուշ նա պաշտպանում է քաղաքական կենտրոնացման գաղափարը և իր մինիմալ ծրագրի այն կէտերը, որոնք վերաբերում են մասը ազգութիւնների քաղաքական ճակատագրին՝ տպագայ Խուսաստանում:

Մենք ներկայ յօդուածում պիտի զբաղուենք գրեթէ բացառապէս ալ. Խաժակի յօդուածով: Այդ կարդինալ խնդիրները իրանց՝ մասամբ առաջգական և մութ բնաւորութեամբ (յատկապէս Խուսաստանի համար) մինչև օրս, խոստովանում ենք, փաստալից ուսումնասիրութեամբ չեն լուսարանուել և ոչ մի կուսակցութեան կողմից, թէն, կըկնում ենք, այժմէութեան նշանակութիւն ունի մէկը թէ միւսը: Բացի առաջնառու զործնական խնդիրներ լինելուց, զբանք խնդիրներ են նաև ուսումնասիրական արժէքի տեսակէտից, ակադեմիական բնաւորութեամբ:

Այսուեղ անկարող ենք մենք շատ հեռու գնաք, երբ մեր քննակատութեան օրինական պիտի սահմանափակենք ալ. Խաժակի յօդուածով, որին կը հետեւնք մենք քայլ առ քայլ:

II

Գրական պոլիմերան՝ երկու կամ աւելի սուրեկտոնների մէջ կարող է, կարծում ենք, երկու որոշ շրջանակի մէջ աեղի ու-

1) «Մշակ» № 227, 228, 230.

Նենալ: Նախ այն դէպօւմ, երբ երկու բանակսուողները կանդնած են միևնոյն սկզբունքային հողի վրայ, և միմիանց ջախալսելու համար դէնքեր են վերցնում միևնոյն դաւանանքի արսենալից: Երկրորդ այն դէպօւմ—երբ պոլիմիկայի բռնուածները դաւանում են տարբեր սկզբունքներ, աշխարհայեացք: Առաջին դէպօւմ բանակսուողներից մէկը պիտի ցոյց տայ միւսին որ նա սխալ է ըմբռնում երկուսին յայտնի աշխարհայեացքը, որ նա թիւրիմացութեան մէջ է և սխալ է դատում այս կամ այն քաղաքական խնդրի, հասարակական երեսոյթի ժամին: Իսկ երկրորդ դէպօւմ, ոչ միայնմի բանակսուող պիտի ջրէ միւսի տնձնական հայեցակէտն ու գիտողութիւնները, այլև այն սկզբունքները, մտքերի այն սխտեմը, որի անունից ճառում, գրում է հերքուողը:

Ինչպէս պ. Խաժակի յօդուածից պարզ երկում է, նա արշաւում է Ռուսասամի սոցիալ-դէմոկրատիայի դէմյանուն սոցիալիզմի, վկայ կոչելով վերջնիս առաջնակարգ կորիֆէյսներին, անպայման հեղինակութիւններին:

Եթէ մենք աշխատենք հերեկ պ. Խաժակի կարծիքները՝ աշխայից մինչև օմեղա, դարձեալ յանուն սոցիալիստական ունիլերսալ աշխարհայեացքի, նշանակում է՝ դոնէ այդ խնդրում մենք և պ. Խաժակ կանոնած կը լինենք միևնոյն սկզբունքային հողի վրայ և մեղ վերապահնում է—բարերախտարար թէ զըժքախտարար—ցոյց տալու, որ պ. Խաժակը շատ սխալ ճանապարհներով է զէնքեր վերցնում սոցիալիստական աշխարհայեացքի արսենալից և անհաշիւ մոլորութիւնների մէջ է ընկել, որ նրա զբեթէ ամբողջ փաստաբանութիւնը թիւրիմածութիւն է—quid pro quo:

Խնդրի մը ծայրիցն է բռնում պ. Խաժակը: Եթէ ճիշտ լինէր յօդուածագրի հէնց աւաջին յօդուածում («Սշակ» № 227) առաջազրած թիզը՝ որ «բիւրոկրատիա և կենտրոնացում, կենտրոնացում և բիւրոկրատիա—դրանց իրարից բաժանել համարեաւ անկարելի է: Երբ երկը բէժիմը կը լինի ցենտրալիզմ, երբ գոյութիւն կ'ունենան հրամայող, որոշող մի կենտրոն և երբ այդ որոշումները գործադրութիւն պէտք է դանեն ոչ թէ մի փոքրիկ վայրում,—մի դաւառում կամ մի նահանգում,—այլ մի ամբողջ կայսրութեան մէջ, այդ դէպօւմ անպատճառ (sic!) պէտք է գոյութիւն ունենայ մի բիւրոկրատիա: Ինքնակալական է քո երկիրը, թէ հանրապետական—դա այնքան էլ նշանակութիւն չունի բիւրոկրատիայի տեսակէտից: Բիւրոկրատիան իշխում է ինքնակալ Ռուսաստանում, հանրապետական Ֆրանսիայում»: Եթէ, ասում ենք, ճիշտ լինէր

այս թեզը, այն ժամանակ՝ վիճել բոլորովին աւելորդ կը լինէր և սոցիալ-դէմոկրատիան Ռուսաստանում կը համարուէր մի քաղաքական յիտաղէմ կուսակցութիւն, երբ նա իր «ցենտրալիստական» ձգտութիւնով ուղում է «մի նոր բիւրոկրատիա» (նոտրդերը յօդուածապիհնն է) առաջ բերել: Կարճ և աղջու եթէ ասում ենք քաղաքական կենտրոնացման, ցենտրալիզմ, պիտի դրա ֆունկցիաները վարող պաշտօնեաները լինեն անպատճառ բիւրոկրատներ. իսկ եթէ ձեր ականջին հնչում է բիւրոկրատիա խօսքը, դուք պարտաւոր էք հասկանալ, որ նա իշխում է քաղաքական կենտրոնացման մէջ՝ այն ևս «մի ամբողջ կայսրութեան մէջ»:

Սա մի վերին աստիճանի բոնազրօսիկ դատողութիւն է, սա, թող ներուի մեղ ասել՝ մի կատարեալ տերմինողիական բարբարիզմ է, ուրիշ ոչինչ:

Թող գոնէ պ. Խաժակը նեղութիւն կրէր իմանալու տերմինի թարգմանական նշանակութիւնը, մի կողմ թուղած գաղափարի լայն իմաստը և բերած օրինակները, որոնց մէջ նա սխալում է չարաչար:

Բիւրոկրատիա—դրա տակ օրինակ դերմանացին հասկանում է (նոյն կերպ և միւս աղգերը)—Beamtenzunft herrschaft Minister—und Beamtenvillkürherrschaft (պաշտօնեաների կղզիացած միութեան տիրապետութիւն, մինիստրների և պաշտօնեաների կամայականութեան տիրապետութիւն):

Իսկ պաշտօնեաների կամայական տիրապետութիւնը կամ բիւրոկրատիզմը կախուած է ոչ թէ մի որեէ երկրի պետական կազմի կենտրոնացումից—ինչպէս անմերելի սիսալներով պընդում է պ. Խաժակը—այլ մի որեէ երկրի պետութեան քաղաքական սիստեմից: Ուրեմն բիւրոկրատիզմը, կամայական պաշտօնակատարութիւնը տիրում է այն երկրներում, ուր քաղաքական սիստեմը արսողիւսիստական (օրինակ Ռուսաստան, Թիւրքիա, Չինաստան) և կէս արսողիւսիստական-սահմանադրական է (օր. Գերմանիան, Աւստրիա-Ավստրիան, Եապոնիան): Հնդկականակը, բիւրոկրատիզմից զուրկ են այն երկրները, ուր քաղաքական սիստեմը պարլամենտարիստական է, օրինակ բուրժուական-դեմոկրատական հանրապետութիւն Ֆրանսիան, դեմոկրատական միապետութիւն Անգլիան (բացառիկ քաղաքական սիստեմը երկրագնդիս վրայ), դեմոկրատական հասարակապետութիւն՝ Շվեյցարիան, Ամեր. Միացեալ Նահանգները, Աւստրալիան, թէև վերջիններս ոչ կատարեալ ձևերով:

Այստեղ մենք դասաւորեցինք յայտնի, տիպիք օրինակները քաղաքական սիստեմների: Եւ այս դասաւորութիւնից ալ-

ներև է որ մի երկրի կառավարութեան բիւրոկրատիական եւ պարլամենտարիստական ձեւի միակ կրիտերիումը պետութեան վարչական մեխանիզմի որակն է և ոչ թէ պետութեան կենտրոնացումը կամ ֆեդերացիան։ Ըստ այդ կրիտերիումի, ի՞նչպէս պ. յօդուածագիրը կը տեսնէ, բիւրոկրատիական է և կենտրոնացած Ռուսաստանը, և ֆեդերատիւ Դերմանիան։ Ըստ այդ կրիտերիումի, ընդհակառակը, անտի-բիւրոկրատիական-պարլամենտարիստական է և կենտրոնացած Անգլիան, Ֆրանսական (որին պ. Խաժակը ղարմանալի կերպով բիւրոկրատիական է անուանում), և ֆեդերատիւ Շվեյցարիան, Միացեալ-Նահանգները։

«Երբ մի կենտրոնի որոշումները դործագրութիւն են գըտնում ոչ թէ մի փոքրիկ վայրում,—սառում է պ. Խաժակը,—այլ մի ամենողջ կայսրութեան մէջ (նոտրգիրը մերն են), այդ գէպքում պէտք է անալատճառ գոյութիւն ունենայ մի բիւրոկրատիա։ Որքան մեխանիքական է այս գատողութիւնը։ Ըստ նրա լոգիկայի քաղաքական միջնավայրի խոշոր ծաւալն է, տնտելիութիւնն է, որ գրոշմուն է մի երկրի պաշտօնեաների ճակատին բիւրոկրատ «պատուանունը», և ոչ թէ քաղաքական սիստեմի, օրինակ միապետական, գրութիւնը։ որ ստեղծում է մի բիւրոկրատիական-կաստայական նիրարիփա և ծայրագոյն բարձրութիւնից լի ու լի Փունկցիաներ յանձնաբարում բոլորին։ Վերցնենք գերմանական մանր տէրութիւնները որոնց պ. Խաժակը գեղեցիկ էկզեմպլիքը է ծառայեցնում միայն ֆեդերացիայի գաղափարը պաշտպանելու համար, իսկ նրանց կաստայական-իւնկեր-բիւրոկրատիայի մասին խուսափումէ որևէ բան տաելու։ Պ. Խաժակը պէտք է իմանայ, որ գերմանական 20—30 միապետութիւնները (թագաւորութիւն, իշխանութիւն, մեծ ու փոքր դքսութիւն, ի բաց տոեալ Հանդայի երեք ազտքագները՝ Համբուրգ, Բրեմեն և Լիբերի) իննկեր-բիւրոկրատական քաղաքական սիստեմներ ունեն։ Նա լաւ գիտէ, որ փոքրիկ թագաւորութիւն Վիերտեմբերգը (իր 19,504կմ²-ով և 2 միլիոն ազգաբնակութեամբ), Մեծ դքսութիւն Մեկենքուրգ-Շվեյցնը (իր 13,304կմ²-ով և 600,000 բնակիչներով) Մեկենքուրգ-Ցտրիլիցը (իր 2929կմ²-ով և 100,000 բնակիչներով) և այլ բազմաթիւ մանր իշխանութիւններ ու դքսութիւններ «ամբողջ, կենտրոնացած կայսրութիւններ» չեն, այլ «փոքրիկ վայրեր» մեր կովկասիան նահանգների տարածութեամբ ու բնակիչների քանակով, բայց և այնպէս այդ բոլոր դաշնակից մանր միապետութիւնները «բունդ» բիւրոկրատիական սիստեմներ ունեն։

Սրանով, կարծում ենք, պարզուեց թիւրիմացութիւնը և հիմնովին հերքուեց պ. յօդուածագրի մեխանիքական թեզը, որ իբր իւրաքանչիւր պետական կենդրոնացում առանց այլնայլութեան պայմանաւորում է բիւրօկրատիայի գոյութիւնը և իւրաքանչիւր բիւրօկրատիզմ—նախադրում պետական կինտրոնացման:

|||

Պ. Խաժակը շատ է վախենում ցենտրալիզմի վաղափարից, իսկ նրա իրականացման առաջ՝ ուղղակի սոսկում: Նա այդ միակողմանիութեամբ այնքան է առաջ գնում և այնշափ չարիքներ վերագրում պետական կինտրոնացման, որ թոյլ է տալիս իրան ինքնակալ ցարի բէակցիային և «Ճայրահեղ տիտղոսը կրող մի կուսակցութեան—սոցիալ-դեմոկրատիային»—կշռի միևնույն նժարի մէջ դասելու: Այդպիսի վերաբերմունքի վերջին հիմքը, ultima ratio-ն, կայանում է այն սիմվլ ու մեխանիքական թեզի մէջ,—իբր ամեն մի կենտրոնացում շաղկապուած է բիւրօկրատիզմի հետ,—որի անհիմն ու բանալ պարունակութիւնը ցոյց տուինք մենք նախընթաց հատուածում:

«Բէակցիան և սոցիալ-դէմոկրատիան կողմնակից են պետական կենտրոնացման» ասում է նա, երգո, ըստ յօդուածագրի լոգիկայի, ինչպէս բէակցիան պաշտպանում է գոյութիւն ունեցող բիւրօկրատական սիստեմը, այնպէս էլ սոցիալ-դեմոկրատիան ձգտում է պետական կենտրոնացումով ստեղծել մի նոր բիւրօկրատիա:

Այս կարգի պնդումները կամ սիամութեան արդիւնք են և կամ ունական միտումով արած մի քայլ. երկուսից մէկը:

Եթէ պ. յօդուածագրին քաջ յայտնի է Խուսաստանի սոց. դեմ. կաղմակերպութիւնների մինչմատ ծրագիրը, մերձաւոր նըսպատակը՝ իր տնտեսական, սոցիալական եւ բարարական խիստ արժանական պահանջներով, ապա ազգային-ցեղական անրունաբարեկի լայնարձակ իրաւունքներով, ժամաւանդ միաձոյլ ազգաբնակութիւն և առանձնայացուկ պայմաններ ունեցող տերիտորիաների համար, որոնց նկատմամբ կուսակցութիւնը ընդունում է ոչ միայն տեղական լայն ինքնավարութիւն, այլև կարևոր դէպքերում ինքնաւորոշման դեմոկրատիան սկզբունքը, — եթէ այս բոլորը յայտնի է պ. Խաժակին, առում ենք, այն ժամանակ նա չպիտի ուրանաց, որ ոչ միայն խօսք չի կարող լինել կարծրացած, միակամ ու դինատիա-

կան կենտրոնացման մասին իր բիւրոկրատիայով, այլև պ. Խաժակը պէտք է անհրաժեշտօրէն ընդունէ, որ սոց.-գեմոկր. մինիմալ ծրագրի ճշգրիտ դործադրութեամբ կ'իրականանայ մի այնպիսի դեմոկրատական հասարակապետութիւն, որի նմանը դեռ գոյութիւն չունի Եւրոպայում ու. Ամերիկայում: Կարծում ենք, որ Փետերալիսա կուսակցութիւնները ևս ձգտում են քաղաքան այս կազմին, այնպէս, որ այդ տեսակէտից պէտք է մնաք իրար լաւ հասկանանք:

Սակայն սոց.-գեմ.կազմակերպութիւնների մերձաւոր իդէալ՝ դեմոկրատական հասարակապետութիւնը կը լինի ցենտրալիստական միայն այն չափով, որ նա կը գրկէ ծայրերին օրէնսդրական րարձը ինստանցիայից—պարլամենտից, այլապէս նա կը չնորհէ բոլոր այլազգի և այլազեղ ծայրերին իրանց բոլոր գործերի մէջ լայն ինքնավարութիւն, աւտոնոմ իրաւունքներ: Դեմոկրատական հասարակապետութիւնը (ցենտրալիստական հիմքերի վրայ,) ըստ իր բուն էութեան, մի այնպիսի քաղաքական սիստեմ է, որ սկզբից և եթ, հիմնագրութեան կանոններով, արմատավոր է անում ազգային հալածանքի, դինաստիական ճնշումների բոլոր կարելիութիւնները:

Թէ ինչպէս կը դասաւորուեն գեմոկրատական հասարակապետութեան մէջ դասակարգային յարարերութիւնները և ինչ ծաւալ կը ստանան նացիօնալիստական պայքարները,—մի երկոյթ, որ առեն դէպքում էլ՝ թէ կենտրոնացման և թէ ֆեղուացիայի մէջ պիտի տեղի ունենայ, քանի գոյութիւն ունեն բուրժուական հասարակական կարգեր, —դրանց մասին այստեղ երկար ծանրանալ չենք կարող. և իրաւ, ոչ այն պատճառով որ պ. Խաժակը իր յօդուածների մէջ չէ շօշափել խնդրի այդ կողմը, այլ որ տեղի և ժամանակի սղութիւնը հարկադրում է մեզ մի այլ յարմար առիթի վերապահել այդ շահագրգիռ հարցը:

Մենք այստեղ նայում ենք խնդրի վրայ սկզբունքային արժէքի տեսակէտից և մի կողմն ենք թողնում պ. յօդուածագրի՝ «Նորա ԺИՅНЬ»օրդանի հասցէին ուղղած անտեղի պարագաներները:

Քաղաքական ծրագրի այն մինիմումը, որի ճշգրիտ իրականացումով պետութեան բարձր սուվերենիտելը (գերիշխանութիւնը) կը ստանձնէ ինքը՝ հսկայ դեմոսը բովանդակ Ռուսաստանի. ժողովրդի այն բարձր վեհապետութիւնը, որ արիտի սկզբից և եթ ապահովէ բոլոր ազգերի տնտեսական և մտաւոր-կուլտուրական ազատ զարգացումը՝ հիմնական գրաւականով, օրինական որոշումներով—այնպիսի պայմաններ են

դրանք, որոնք երբէք չեն անհանգստացնում պրոլետարիատին և նրա դասակարգային կուսակցութեան՝ չարիք ու թերութիւններ որոնելու բաղաքական կենտրոնացման մէջ, ոյլ ընդհակառակը:

Սեպարատիզմի թէ ֆեդերալիզմի սկզբունքալին արժէքը բուրժուական է, լիբերալ ծզտում է—դա անհերքելի փաստ է: Միայն տիրապետող դասակարգն է, որ ծզտում է անկախ ու ազատ լինել իր աղքային շրջանակի մէջ, որպէսզի անկախ ու ազատ շահագործել կարողանաց աղքային-հաստրակական բորոք հանրարժէք ֆակտորները—տնտեսական, սոցիալական թէ քաղաքական սահմաններում: Միայն բուրժուազիան է, որ իր աղքային տերիտորիայում տնտեսական-արդիւնաբերական ճիւղերը և շուկաները կապիտալիստական անարգելու ինտենզիւ էրսպլօատացիայի ենթարկելու համար՝ կնքսական ինտերես ունի, որքան կարելի է արգելել կամ փանդարել հարեւան ազգի բուրժուազիայի աւելի խոշոր, ուժեղ կապիտալի և կատարելազգործուած տեխնիկայի մուտքը: Բուրժուազիան չունի դասակարգային սովորաբիտէտ (համերաշխութիւն) մերձաւոր սահմաններում թէ միջաղգայկն բնաւորաւթեամբ. դրա փոխարէն նա ունի շուկաների գրամման եւ կապիտալիստական շահագործեան մի անարիսիական մրցովթիմ, քաղաքական կոնֆլիկտներին և աղքային պայքարների տոն, տպող մի կատաղի արշաւանք, որ թաղուած է կապիտալիզմի էութեան մէջ:

Իսկ պրոլետարիատ չունի որևէ կենսական շահ ֆեդերացիայով թուլացնելու իր խտացած շաքերը: Մի ազգի պրոլետարիատ պէտք է միւսի հետ բաժանէ իր պատմական ճակատագիրը, իր կեանքի դասութիւնն ու ժպիտը: Նա չունի դասակարգային—թշնամական մրցովթեան որեւէ ինտերես ու ասիթ: Այդպէս ին թելադրում նրա դասակարգային ոչ միայն թէալ շահերը, այլև բարոյական համերաշխութիւնը—*in solidum caviren*—ըստորը մէկի համար և մէկը, բոլորի համար երաշխաւորելու իդէալական սկզբունքը:

Պ. Խաժակը: առաջին յօդուածի մէջ մեխանիքական թեղէ հրապարակ հանում—որի հետ մեր հաշիւը տեսանք,—իսկ երկրորդ յօդուածի մէջ մեխանիքական անալոգներ հանգէստերում են ենթադրում, որ գրանով հանգոյցը լուծւում է: Նա շարունակ—թէև բոլորովին ի զուրամատնացոյց է անում: Գերմանիայի պետական ֆեդերացիայի վրայ և միիթարեում, որ գըրանով ջախջախում է իր հակառակորդին, որովհետեւ հնաց ֆեդերատիւ Գերմանիայումն է, որ կազմակերպուած պրակտանոյեմք, 1905.

րիատը այնքան սերտ միացած է և հսկայական ոյժ ներկայացնող գերմանական սոցիալ-դեմոկրատիան գժողովն չէ պետութեան ֆեղերատիւ դրութիւնից:

Այս խնդրում եռ կամ պ. յօդուածագիրը միամիտ է, չգիտէ բանի էռութիւնը կամ թէ չէ նա լուսմ է, դիտմամբ չի շափում երեսոյթի պատճառը. դորձեալ ալտերանտիւ:

Կարենորը խօ այն չէ, որ այժմեան ֆեղերատիւ Գերմանիայում բանուորական կուսակցութիւնը հսկայական ոյժ ունի, այլ այն, թէ արդեօք, զեռ մրգան աւելի վիթխարի և ուժեղ կը լինէր նրա քաղաքական հմայքը, եթէ լինէր պետական կենտրոնացում, բայց քաղաքական սիստեմի գեմոկրատական սկզբունքներով և ոչ այժմեան ձեռվէ:

Գերմանիայի ներկայ պետական ֆեղերացիան—Bundesstaat—ինչպէս գիտենք, իւնկերական-բուրժուական կազմակրուժ է, որի ձեռակիրատողը եղաւ երկաթէ կանցլեր Բիսմարկը: Ինչ ձեռվ ու կապերով միանալու մէջ կամք ու ցանկութիւն չունէր ժամանակակից պրոլետարիատի քաղաքական ներկայացուցիչը —սոցիալ-դեմոկրատիան—որովհետև նա իր զարգացման սաղմային վիճակումն էր գտնուում և նոյնիսկ մի կոմպակտ կուսակցական մարմին չէր կազմում, այլ ցիրուցան ֆերայներ (խմբակցութիւններ), առաջացած Լասալի, Բերելի և Լիրիներատի ձեռներէցութեամբ: Եթէ Գերմանիան մաշէր Ռուսաստանի ներկայ բոպէները և գերմանոցիալ-դէմոկրատիան ունենար այն ժամանակ ներկայի ոյժը, կասկած չկայ, որ նրա քաղաքական ծրագրի մինիմումը կը լինէր՝ վերջ տալ բոլոր անդամանատուած միավետութիւնների գրանցմեան եւ վերաստեղծել մի միածոյլ Գերմանիա դեմոկրատական-հասարակավետական կազմով: Իսկ այժմեան գաշնակցական Գերմանիան՝ Պրուսիայի հեգեմոնիայով, չարիքներից փոքրագոյնն է համեմատած այն Գերմանիայի հետ, որի բոլոր անկիւններում կը տիրէր պղուսական իւնկերական աբսոլիւտիզմը, եթէ ցենտրալիստական լինէր ամրող պետութիւնը: Դոնէ այժմ եթէ Պրուսիայում տուժում է սոցիալ-դեմոկրատիական կուսակցութիւնը քաղաքական իրաւագրկութեան ներքոյ, նա համեմատաբար լաւ վիճակ ունի Բաւարիայում, Վիերտեննբուրգում, Բավենում և այլ տեղերում: Այժմ գերմանական սոցիալ-դեմոկրատիան մաշում է քաղաքական զարգացման վերջին էտապը, և նա կարիք չունի այլքս բուրժուական հասարակական կարգերը ցենտրալիզմի կամ ֆեղերալիզմի հիմքերի վրա գնելու. կապիտալիստական տնտեսութեան սիստեմը և դրանով պայմանաւորուած ընդհանուր բուրժուական կարգերը համելով իրանց զարգաց-

ման գագաթնակէտին՝ նախապայման կը դառնան սոցիալական յեղափոխութեան. մի կատաստրոֆային ակտ, որ հիմնագէս վերջ կը տայ՝ և միջնադարեան իւնկերական-միապետական և մասք բուրժուական-բիւրգերական, և մօգերն բուրժուական-կապիտալիստական կարգերի (իրանց սհապարատիստական թէ ֆեղերալիստական գունաւորումներով) գոյութեան և կը հիմնէ նրա փոխարէն մի էքսականի կողեկտիւ մարմին սոցիալիստական հիմքերի վրայ: Իսկ վիթխարի կոլեկտիվիզմը իր կենտրոնական ու ստորադաս ֆունկցիաներով, ոչ թէ հասարակ, այլ մի զերաստիճանի ցինտրալիզմ՝ է, որը, ըստ պ, Խաժակի գատողութեան, պէտք է անպակաս լինի բիւրօնկրամախյից, հէնց այն պատճառով, որ նա ցենտրալիստական է:

Անտեղի և անհիմն թեղերն ու անալոգները, ինչպէս տեսնում ենք, մեզ մազաշափ անգամ չեն օգնի՝ խնդիրը դոհացուցիչ կերպով պարզաբանելու և լուծելու համար:

IV

Սակայն մեր յօդուածագիրը չի բաւականանում դրանցով, նա ապաւինում է սոցիալիստական հեղինակութիւններին և աշխատում նրանց անունով ապացուցանելու իր ասածը: Եւ իր յօդուածի երրորդ մասում, պ. Խաժակը հանգէս է գալիս, ըստ երևոյթին, որպէս թունդ մարքսիստարան:

Թէ ինչ քաղաքական նախատեսումներ են ունեցել Մարքսն ու Էնգելսը, որոնք, հակառակ նրանց սպասածի, ժամանակին չեն կատարուել,—դրանց և դրանց պատճառների մասին խօսուելը չէ զերաբերում մեզ զբաղեցնող խնդրին, և սիստեմատիկ ու հետևողական լինելու համար չպէտք է պ. Խաժակը մի քանի խօսքով ասէր ու անցնէր դրանց վրայով:

Մենք հետեւնք այն խնդրին, թէ ի՞նչ դիրք են ունեցել մարքսիստական մեծութիւնները ազգային խնդրի և քաղաքական կազմի վերաբերմամբ:

Պ. Խաժակը շատ թոյլ է ըմբռնում դասակարգային տիրապետութեան և կոռու գաղափարը. նա շատ քիչ է ծանօթ—ինչպէս յօդուածից պարզ երևում է—Մարքս-Էնգելսի արածներին՝ անցեալ գարու 40-ական, 50-ական և 60-ական թուականներին: Անհերելին ու մեզագրելին խօ այդ չէ, այլ այն, որ նա մի առանձին էրուղիցիայով ժխտում է մէկը և հաստատում միւսը հակառակ իրողութեան ու փաստերին:

«Մարքսն ու Էնգելսը—ասում է հեղինակը—չափազանց գրադուած էին զուտ դասակարգային խնդրիներով—բուրժուա-

զիայի կծու քննադատութիւնով և պրոլետարիատի կեանքի բարելաւման հսկայական հարցով,—նրանք ժամանակ չունեին զբաղուելու նոր հարցերով», այսինքն «ազգային խնդրով»:
Եթէ պ. Խաժակը ըմբռնէր Մարքսիզմը, նա կիմսնար, որ ոչ Մարքս-էնգելսի և ոչ նրա յաջորդների համար գոյութիւն չունի ընազնուցական «ազգային խնդիր», կանգնած դասակարգերից վեր, հեռու նրանց բէալյարաբերութիւնների ու շահերի ընդհարման շրջանակից: Երբ ըստ մարքսիզմի՝ «մարդկային հասարակութեան պատմութիւնը ուրիշ ոչինչ չէ, բայց եթէ պատմութիւն դասակարգային կոփէների» և երբ այդ դասակարգային կոփէների փաստական ուսումնասիրութիւնն ու տեսական հիմնայորումը կազմում է Մարքս-էնգելսի գիտնական փայլուն ծառայութիւններից մէկը, նշանակումէ նոր հարց» չէ «ազգային խնդիրը» այլ մի անդամ ընդ միշտ հիմնաւորուած դասակարգային կոռու թէօրիայով բացատրելի հասարակական-քաղաքական երևոյթներ:

«Այն չափով—ասում են Մարքս-էնգելսը—որով կը վերանայ անհատի (ինչպէս և դասակարգի. Բ. ի.) շահագործութիւնը անհատի միջոցով, նոյն չափով կը վերանայ մի ազգի շահագործութիւնը միւսի միջոցով»¹⁾: Իսկ ոս, պ. Խաժակ, «Երկուսից երեք բառ չէ, նուիրուած ազգային խնդրին», այլ մի մնայուն կլասիք պատու, որով արտայայտում է այն պատմական ճշմարտութիւնը, թէ որքան կը շարունակուէ կապիտալիստական շահագործութիւնը (պրոլետարի շահագործութիւնը բուրժուայի միջոցով), այնքան էլ գոյութիւն կ'ունենայ ազգային ծնշումն ու հալածանքը—շահագործութիւնը—տիրապետող դինաստիայի տիրապետող դասակարգի միջոցով:

Եթէ այդ ուղղութեամբ հետևելու լինեաք Մարքս-էնգելսի (մանաւանդ առաջնի), ճրապարակախօսական գործունէութեան 40-ական և 50-ական թուականներին, կը տեսնեաք, որ այդ վասկուն յեղափոխականները ժամանակակից բոլոր ուժեղ շարժումների վերաբերմամբ արտայայտուել են, թէ ֆրանսիական, գերմանական, սամարիական յեղափոխութեան, թէ ունգարական ազգուամբութեան, թէ իտալական, յետոյ ֆրանս-պրուսական պատերազմի թէ Ռուսաստանի, լինական հայածանքների ու ճնշումների և թէ պ. Խաժակի սըրտին մօտ խնդրի՝ «Արեւելան հարցի» մասին:

«Թիւրքիան—գրում էր Կարլ Մարքսը թէ 1853 թ. «New-York Tribune» թէրթի, մէջ—կազմում է լեգիտիմիստ Եւրոպա-

1) K. Marx und Fr. Engels, «Das Kommunistische Manifest» եր. 22.

յի մի վիրաւոր կէտը: Լեզվիմիստ և միապետական կառավարութեան սիստեմի անընդունակութիւնը՝ սկսած ֆրանսիական առաջին յեղափոխութիւնից, արտայայտուել է մի նախադասութեան մէջ՝ ուղիղ և անխախտ պահել *status quo-*ն»: Այդ ընդհանուր հանձաճայնութեան մէջ—այն է թողնել իրերը այնպէս, ինչպէս նրանք որևէ պատահականութեամբ առաջացել են—կայանում է տիրապետող պետական ոյժերի անզօրութեան և աղքատութեան ապացոյցը, որ նրանք կատարեալակէս անընդունակ են զարկ տալու յառաջադիմութեան ու քաղաքակրթութեան»¹⁾:

Աւելի ասենք: 60-ական թուականներին, երբ Ռուսաստանը Պրուսիայի օգնութեամբ հնչում, խեղզում էր յեղափոխական Անհատանին, 1863 թ., ապրիլի 28-ին այդ առթիւ կայանում է Լոնդոնում անգլիական և ֆրանսիական բանուրների մի հսկայական միտինգ, որը հէնց պատճառներից մէկն է դառնում Մարքսի յայտնի «Ինտերնացիօնալի» («Internationale Arbeiterassoziation») հիմնադրութեան: Եւ առաջին բարեմազթութեան հասցէն, որ հիմնադրութիւնից յետոյ «Ինտերնացիօնալը» ուղղում է Ամերիկա, Միացնահանգների նախագահ Լինկոլնին, կազմում է համաշխարհուած գիտակից բանուրների համակրանքի արտայատութիւնը ստրուկների ազատութեան վերաբերմամբ: Վերջապէս «Ինտերնացիօնալն» էր այն կազմակերպութիւնը, որ պարսպաւում էր անգլիական տիրապետող դասակարգերի գէմ և ջերմպաշտանում ընկճուած իրլանդացիների դատը: Իսկ «Ինտերնացիօնալի» ոգին ու դեկադարը ինքը Մարքսն է եղել: «Ոչ իրանդական, ոչ լեհական շարժումները, և ոչ ստրուկների աշգատաբութիւնը չունին ոչինչ անմիջական նոտրգիրը մերն է» բան վարձու բանուրնեան դասակարգային ինտերեսների հետ»²⁾—ճիշտ նկատում է Կարլ Կառլցին: Այնուամենայնիւ, կ'աւելացնենք մենք, Մարքսի «Ինտերնացիօնալը» զբաղումը էր այդ կարգի «ազգային ինդիքներով», «նոր հարցերով»:

Եւ այդ բոլորից յետոյ ասել ու պնդել, պ. Խաժակ, թէ «Մարքսն ու ինգելսը բոլորովին չեն զբաղուել աղդային հարցով»: Դուք Մինսկուն, «Հովայ Ժիզին» օրգանին էք անսինդեկտութեան և անբարեխղճութեան մէջ մեղադրում: Այժմ դատաւոր եղէք ինքներդ ձեզ վրայ:

1) K. Marx, «Das Nationalitäten in der Türke vor dem Beginn des Krimkriegs» («Новая Звезда», XV, ապրիլ Ա հատ, եր. 69: Հայոց ազգային պատճենների համար առաջարկությունների մասին»).

2) K. Kautsky «Das Erfurter Programm» եր. 253: Հայոց ազգային պատճենների համար առաջարկությունների մասին»).

Պարոն յօդուածագիրը անցնում է այնուհետև ներկայ Առցիալիստական հեղինակութիւններին և աշխատում նրանց ասածներով պաշտպանել ֆեղերացիայի գաղափարը: Նա բացառապէս ծանրանում է կ. Կառուցկու՝ «Երփուրտի ծրագրի» հայերէն թարգմանութեան համար գրած յառաջաբանի, ապա «Verus»-ի (աւատրիսական սոցիալ-դեմոկրատ) նոյն ուղղութեամբ գրած աշխատութեան վրայ:

Ի զուր նեղութիւն է քաշել պ. Խաժակը:

Դեռ 90-ական թուականներին Կառուցկին ուժից պոլեսիկա էր մղում իր «Neue Zeit» օրգանի և «Vorwärts»-ի մէջ Ֆրանց Մելինգի, Տօղա Լուքսեմբուրգի և Պարվուսի (դարձեալ մարքսիստական յայտնի թէօրէտիկներ) գէմ լեհական հարցի առթիւ: Նա պնդում էր ոռուսական Լեհաստանի անկախութեան, լատարեալ անհատման անհրաժեշտութիւնը: Դրան հակառակում էին միւս մարքսիստները: Այժմ, սակայն, նոյն Կառուցկին ժխտում է իր այն ժամանակուայ պնդածը մեզ համար գրած յառաջաբանի մէջ և շեշտում, որ Լեհաստանը ևս պիտի մնայ Ռուսաստանի պետական կազմի մէջ. Կառուցկին հետեղովական և բէալիստ է իր գիտողութիւնների մէջ: Նա անհրաժեշտ էր համարում Լեհաստանի անջատումը միայն այն ժամանակ (90-ական թուականներին), երբ «հաւանականութիւն չկար, թէ ոռուսական արսովիւտիզմը արմատից կը ջախջախուի, երբ առզատ Ռուսաստանը երազ էր թւում, ուրեմն անհրաժեշտ էր անկախ Լեհաստանը, որպէսզի զբանով սահմանափակուէր Ռուսաստանը, պաշտպանուէր Արևմտեան Եւրոպան նրա նուաճուաներից»: Ճիշտ այնպէս, ինչպէս «Կոմիկասի անջատումը Ռուսաստանից, — աւելացնում է Կառուցկին — և Թիւրքիայի պահպանումը համարում էր արեւմ, Եւրոպայի դեմոկրատիայի համար մինչև 19-րդ դարի 70-ական թուականները որպէս մի կարևոր միջոց ցարիզմը թուականները որպէս մի կարևոր գետոկրատիային»: Այդպէս է մտածում Կառուցկին:

Եւ երբ նա այժմ Ռուսաստանի առագայ քաղաքական կազմի նկատմամբ նպատակայացարմար է գատում ֆեղերացիան, այդ ոչ այն պատճառով, որ նա համեմատում է ցենտրալիստական ձեի (այն, որ պաշտպանում է Ռ.-Դ. Բ.-Կ.) հետ և գերագասում առաջինը — այս պէտք էր շեշտէր պ. Խաժակը, — այլ որ նա ֆեղերալիզմը հակադրում է սեպարտիզմին և իրաւամբ ընտրում առաջինը. մի ընտրողութիւն, որ կ'անէր Ռուսաստանի ամեն մի սոցիալ-դեմոկրատ:

Կառուցկին ծանօթ չինելով Ռուսաստանի բոլոր յայտնի կուսակցութիւնների քաղաքական ծրագրների հետ, դժբախտա-

բար մի քանի չափազանցութիւններ է անում: Օրինակ Կառուցկին կարծում է, որ Ռուսաստանի սահմաններում ապրող զանազան ազգերի—ֆինների, լիտովցիների, փոքր ոռուների, Կովկասիան զանազան ժողովորդների մէջ—եռում է մի գորեղ մղում գէպի ինքնուրոյնութիւն, մի մղում, որ արտայացտել է սուսական տէրութիւնն հետ ունեցած պետական կապերի վերացման, Ռուսաստանից զօրով սնջատուելու և կատարեալ պետական ինքնուրոյնութիւն ձեռք բերելու ձգտումները:

Այսպիսի արտառոց երևոյթ, ինչպէս զիտենք, ամեննեին գոյութիւն չունի Ռուսաստանում: Բացի լեհական սոցիալիստական կուսակցութիւնից (P. P. S.), որի գրօշակի վրայ գրած «Los von Russland» (հեռանալ, ալոկուել Ռուսաստանից) նշանաբանը նոյն իսկ շատ թոյլ է շեշտում ներկայ յեղափոխութեան օրով—չկայ այլևս Ռուսաստանում մի ուրիշ կուսակցութիւն (եթէ մի կողմ թողնենք վրաց-ազնուականութեան հին-հին երազները), որ ունենար պետութիւնից իսպառ սնջատուելու յամառ դեմիզը:

Այս բոլորից յետոյ պարզ է, որ Կառուցկին միայն գործնական արժեքի տեսակիցից է առաջարկում ֆեդերատիւ ձեզ իրեւ փոքրագոյն չարիք սեպարատիզմի հետ համեմատած: Պ. Խաժակը չունի ամենաչնչին փաստն անզամ, ցոյց տալու, որ Կառուցկին իր պեղումները հակաղորում է մեր երկրի սոցիալ-գէմոկրատիական-հոսարակապետական ցենտրալիզմին:

Իսկ ինչ Վերուսի («Vetus») գրքին է վերաբերում, ուր նա Աւստրիայի ֆեդերացիան է պաշտպանում, դա ևս չի կարող մեզ համար նշանակալից օրինակ լինել: Եթէ իսկապէս քաղաքական ֆեդերացիան պատճառ կը գտանայ, ինչպէս աւստրիացի հեղինակն է ընդունում, վերջ տալու Աւստրիայի խրոնիքական կրիպտինս, ազգերի կատուղի պայքարներին, այն ժամանակ դա ամենախելօք տակտիկան կը լինի, որին կը գիմէ աւստրիական սոցիալ-գեոկրատիան: Սակայն պ. Խաժակը պէտք է լրջմաօրէն վերաբերուէ դէպի մեր երկրի սոց.-գէմ. կաղմակերպութիւնների քաղաքական իդէալը, որ իր իրականացումով երրէք կարելիութիւն չի տայ ազգերի հիմնական իրաւունքների խախտման, այսինքն առաջ չի բերի կիսարուութիւնիստ Աւստրիայի ներկայ բազաքական կրիպտիսը:

Սակայն բացի այդ մակերևոյթային դիառղութիւններից, պ. յօդուածագիրը պատճում է մեկ չեղած դէպքեր, «հնարում է փսաստեր» որ իբր «Բունդը» (հրէական սոցիալ-գէմոկրատական կազմակերպութիւնը), Լեհական սոցիալ-դիմոկրա-

տիւան, Հ. Յ. Գաշեակցալթեսն նման պահանջում են ֆեդերացիա:

Այս կարգի արաւորդ գատաղութիւն աւելի քան անսպաս նելի է: Եթէ կայ բովանդակ Թուսանտանում մի սոց.-գեմ. կազմակերպութիւն, որ աժենից շատ է խուսափում քաղաքական ֆեդերացիայից, որովհետև ուոլենց չի կարող նա ֆեդերացիայի խնդիր դնել հրապարակի վրայ՝ դա հրէական «Բունդ» է: Ի՞նչպէս կարող է մի կուսակցութիւն ֆեդերացիայի խնդիր պաշտպանել այնպիսի՝ քաղաքական միջնավայրում, ուր նա մի կտոր նող, տերիտորիա չունի: Պ. Խաժակը չփոթեցնում է երկու բան միմիանց հետ: «Բունդը» պահանջում է միայն և միմիայն կուսակցական-կազմակերպական ֆեդերացիա, ուրիշ ոչինչ, ճիշտ այնպէս, ինչպէս հայերիս մէջ Սովիալ-գենոկրատական բանուորական հայ կազմակերպութիւնն է պահանջում: Նոյնը վերաբերում է և լեհական սոցիալ-դեմոկրատիային: Նա ևս հետո է պետական-քաղաքական ֆեդերացիայի գաղափարից, դա ևս «Ծնարովի փաստ» է:

Աւելի համոզեցուցիչ չէր լինի արդեօք և գրողի բարեխողութիւնը չի պահանջում, որ պ. Խաժակը կոճկըն փառակով խօնէր ընթերցողի հետ և տոք ճշգրիտ աղբիւրներ իր իրուր պնդումների համար:

Այսպէս ուրեմն տեսնում ենք որ պ. Խաժակը չի կարողացէլ նոյնիսկ ամենահամեստ չափով ցոյց տալ ֆեդերալիզմի գերազանցող առաւելութիւնները և ցենտրալիզմի անողոքի թերութիւնները: Անհանարինակ շատ սխալ է ընտրել հայ իր բննադատական մեթոդը: Եթէ նա գրում ու դատում է սոցիալիզմի ոկզրունքների տեսակէտից, պէտք է վերլուծէր Թուսանտանի սոց.-գեմ. բանուորական կազմակերպութիւնների մերձաւոր քաղաքական գաւանանքը և աղջացուցէր նրա (ցենտրալիզմի) անհանարինարմարութիւնը թէ պրոլետարիատի դասակարգային շնիերի տեսակէտից և թէ ազգերի ընդհանուր կուսուրակուն զարգացման տեսակէտից, առաջ երկու հայեցակտերի հիման վրայ՝ պաշտպանէր ֆեդերալիզմը: Ոչ մէկը և ոչ միւսը չի տուել մեղ պ. Խաժակը. և նրա յիշած փաստական տեղեկութիւնները, ինչպէս տեսանք, մասամբ սխալ համացումն և մասամբ համրովի են:

Բ. Իշխաննան

կան քոյ մե մեծ պատճ առ և սկզբանց եւ լինուածաւը
մասի մասին մաքրելու պահանջ ունեն մաս և այս առաջ
ու վեհապետական գումարական իրարի պատճ առ և այս
առաջ առ ու վեհապետական գումարական իրարի պատճ
առ առ ու վեհապետական գումարական իրարի պատճ
առ առ ու վեհապետական գումարական իրարի պատճ
առ առ ու վեհապետական գումարական իրարի պատճ
«ՀԱՅ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ԶԱՐԴԵՐԻ» ՏՆՏԵՍԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ¹⁾.

Հայ-թիւրքական զարդերը, որոնք կազնեցրել են Ասդր
կովկասի նօրմալ կեամրի ընթացքը, իբրև ու ապաւաժ ցցուե-
լով ազատաբար շարժումների զիմաց, մի խոչոր հասարակա-
կան պրօքեմ է, որը բննելու համար բնականաբար անհրաժեշտ
է լինել օրեկտիւ:

Զարդեր ու կուտրածներ ամրող մուսխայում են, որտեղ
խուլիզանների ու զօրքի սանձարձակ կամայականութիւնն
յանձնուած այս կամ այն ժողովուրդը, ուսանողութիւնը, աշա-
կերտութիւնը, հասարակաց լաւագոյն մասի կարծիքը՝ զեկավա-
րող ինտելիգենցիան, ամեն տեղ, որտեղ կայ կոիւ տիրապետող
քաղաքական կարգերի սանձարձակ ու հիւծուած ինքնակա-
լութիւնն զէմ, որի գոյութիւնը պատմական անախրո-
նիզմ է այսօր:

Զախճախուած ինքնակալութիւնը տեսնելով որ զրուած է
իւր մահացուցակը, կատաղի բողոքը անցել է ժողովուրդի
բոլոր խաւերը, ուշակցիա առաջ բերելու համար սկսեց ջարդել
այն բոլոր տարրերը, որոնց մէջ նկատում է հակակառավար-
չական, յեղափոխական շարժում: Զարդել, կառավարութեան
կարծիքով կընշանակէ, սարսափեցնել ազգաբնակութեան
աւելի շափառոր տարրերը, նրանց սարիպել փրկութիւն որոնելու
ինքնակալութեան թեերի տակ և միաժամանակ կամայ թէ ա-
կամայ գուրս շպրտելու իրանց միջից ծայրայեղ տարրերը:
Զարդել, այդ կընշանակէ, միաժամանակ այդ փոթորիկների
մէջ գուրս հանել և խորտակել յեղափոխական ուժերը, գատա-

1) Հօշափուած հարցը, որին մենք նուեիրել ենք մի շաբք աեսութիւն-
ներ, շափազանց կարեոր է մեր ներկայ և ապագայ կեամրի մէջ, ուստի
լայն, բազմակողմանի լուսաբանութիւնը անհրաժեշտէ: Տպելով այս գրուած-
քը պէտք է ասենք որ մենք համաձայն չենք յօղուածի մի քանիւ կէտերի
հետ:

պարտելովն բանց չէզօքութեան, երբ նրանք ամեն մի քայլ սախ-
պուած պիաի լինեն անել բազմաթիւ անմեղների արեան գետե-
րով, այդ ջարդերով միաժամանակ իմաստուն ինքնակալութիւնը
երազում էր բաժանել ու ջլատել հակառակորդ ուժերը, հեշտու-
թեամբ տիրելու համար, աշխատում էր իւրաքանչիւր ազգու-
թեան մէջ դարձացնել նացիօնականի որդը, ներհակ տարրերի
թոյնը, ինտերնացիօնականի կուռ, ջախջախիչ ուժի գիմաց:

Այդ միջոցներով միապետական դիպլոմատները ցոյց տաւ-
ին միայն, թէ ինչպիսի անախրօնիզմ է միապետական սխառ-
մը ներկայ տնտեսական-հասարակական կարգերի ժամանակ,
թէ որքան անմիտ է փրկել աշխատելը դէպի սխզունզը գահա-
վիժուող ինքնակալութիւնը: Յեղափոխութեան հետզհետէ զօ-
րեղացող տատանումները և ինքնակալութեան ողորմելի զրու-
թիւնը ապացուցեցին, որ ջարդերը, ինքնակալութեան հիւանդու
ջղաձգութիւններն են, որ ինքնակալութիւնը և յեղափոխու-
թիւնը, տրամագծօրէն իրար ոչչացնող հակազդութիւններ
են, հետեւաբար երկուսից մէկին է պատկանում կեանքը:

Եթէ Ռուսիայում կառավարութեան նեցուկ գարձան խու-
լիկանները, ապա Կովկասում հայերին, իրեն յեղափոխական
տարրի, ջարդելու համար, կային այնպիսի հանգամանքներ ու
զրութիւններ, որոնք արգասիք էին Անդրկովկասի տնտեսական
կեանքի յարաքերութիւններին և որոնցից հեշտութեամբ և մեծ
հաճութեամբ օգտուեց մեռնող ուժիմը: Ի՞նչպէս:

II

Կովկասը անցնելով ոռուսական կառավարութեան ձևոքը,
ներկայացնում էր մի անկերպարան, կիսակուլտուրական երկիր,
որը սակայն մտնում էր առաջխաղացութեան աւելի նորմալ
պայմանների մէջ քան առաջ, և բովանդակում էր իւր մէջ ժո-
ղովուրդներ, տարրեր կուլտուրական ժակարդակով և տասնձ-
նայատուկ զասակարգային դիֆերենցիացիով, տիրապետող
խոշոր ժողովուրդները կազմում էին և են՝ Հայերը, Վրացիները
և Թիւրքերը: Առաջինը իրեն աւելի ճնշուած, քաղաքականապէս
հալածուած ժողովուրդ, զարգացրել էր իւր մէջ յարմար-
ուելու ընդունակութիւնը, զարգացրել էր իւր մէջ արհեստները
և վաճառականութիւնը՝ հանգամանքներ, որոնց վրայ յենուած
էր նրա մրցելու, գոյութեան կուռում պայքարելու ուժը, այդպիսի
մի ժողովուրդ, զուրս եկած թիւրք-թաթարական գերիշխանու-
թիւնից, չէր կարող ունենալ խոշոր կալուածատիրական կա-
տեգորիա: Հայկական արիստոկրատիան ներկայացնում էր, հո-

գեոր արիստօկրատիա՝ այսինքն կղերը, որի ոյժը մէծ է և դեռ ժողովրդի վրայ, չնորհիւ ազգային բաղաքական դիկտատուրայի բացակայութեան. բայց իրրե բաղաքական տնտեսական կաաեգորիա, նա մի պասսիւ ուժ է, մի բոլթ ու նահապետական շահագործող, օրգանապէս յետադէս ու բարացած: Առաջխաղաց տարրը հայ ժողովրդի մէջ վաճառականութիւնն էր, որը իրրե առաջխաղաց տնտեսական կատեգորիա օրգանապէս ընդունակ էր և ձգտում էր աւելի և աւելի առաջ ընթանալու: Զինելով հայերի մէջ ուժեղ կալուածատիրական խաւ, ժողովրդի մէջ տիրապետող էր հանդիսանում կղերը, որը իրրե յետամնաց տարր, յետ նահանջեց ասպարիզից, տեղի տալով զարգացազ վաճառականութեան, որը քիչ թէ շատ բարուոք պայմանների մէջ կարողացաւ զգալի ուժ ներկայացնել: 60-ական թթ. բնփորմները ազատ զարգացման գոներ էին բացում ուսւ բուրժուազիայի համար: Այդ առաջխաղացութիւնը, արդիւնաբերութեան արագ աճումը, չէր կարող իւր ընթացքի մէջ չըգցել նաև կովկասը: Բուրժուազիայի զարգացումը մուսիայում, խթան էր և կովկասեան բուրժուազիայի զարգացման: հաստրակական հսանքները, որոնք ծնունդ էին այդ շարժման՝ լիրերալիզմը, միաժամնակ խթան էր հաստրակական ուժերի առաջխաղացման նույնայի բոլոր կուլտուրական տարրերի մէջ: 60-ական, 70-ական թթ. լիրերալ շարժումները մուսահայերի մէջ կատարած էին հայ բուրժուազիայի առաջխաղացութեան հետ, որը հետևանք էր ուսւական կեանքի զարգացման նոր շրջանին, ելք բուրժուազիան ճորտատիրական կարգերի վերացմամբ, մի քայլ ևս յաղթանակեց: Բուրժուազիան ընդհանրապէս և հայ բուրժուազիան մասնաւորապէս իրրե տնտեսական եռուն մրցման ենթակայ մի կատեգորիա, պիտի ձգտեր ներմուծել Եւրոպական քաղաքակրթութիւնը, տեխնիկան իւր օգապատի մէջ: Նա պիտի բռնէր զիրքեր տնտեսական առապարող արշաւի ժամանակ, պիտի օգտուէր բոլոր հնարներից, ձեսք ձգելու և պահելու արդիւնաբերական ձեռնարկներ: հայ բուրժուազիայի բիսկից, բաղաքակրթական նորանոր միջոցներ իւրացնելու ընդունակութիւնից էր կախուած, նրա, կովկասի մէջ ազգեցիկ տնտեսական դիրքեր բանելը. և իրաւ, ոչ մի տարր կովկասում այնպէս ընդունակ և վարժ չէր բռնէլու այդ զիրքերը, ինչպէս հայ վաճառականը: Նա կարիք ունէր մասնագէտ տեխնիքների, քաղաքակրթական նորմուծուող ձևերի, և դրա հետեանքն էր ահապին թուով ինտելիգենտ պրոֆեսիայի մարդկանց բազմանալը. այդ ընդհանուր շարժումը ստեղծեց մեր մէջ 19-րդ դարու կուլտուրական կեանքը:

Խոշոր կապիտալի մուտքը կովկաս ստեղծեց եռուն
մըցութեան ասպարէզ, արդիւնաբերական ճիշգերէ զարգա-
ցումը առաջացրեց բուրժուազական համախմբութիւնների պայ-
քարը, որը արդայալում նաև մամուլի մէջ բազուն համաշ-
խարհային այդ շուկան, և կովկասի զարկերակը, գրաւեց խո-
շր կապիտալի ներկայացուցիչներին. ոչ միայն հայ տնտեսական ձեռ-
չարկներ անելու այլև նա էր, որ աւելի ընդունակ էր մըցե-
ւու այդ ասպարի գումար քան տեղական որեւէ այլ ժողովրդի
կաճառականութիւն. Ապշերոնի դաշտերը, որ բնակեցրած էր
թիւրքերով, հետզհետէ գրաւուեցին վիշտաների անտառով. Այդ-
տեղ սկսեց զարգանալ հայ բուրժուազիան. 90-ական թ. նա խոշոր
ուժ էր ներկայացնում արդէն իսկ այօր, երբ նոյն տեղում
մըցութեան մէջ է մտել եւրոպական և ոռուական կա-
պիտալը տեղական կապիտալի հետ, այնուամենայնի նաւ-
թային արդիւնագործութեան մօտ 300/օ-ը գտնուում է հայ
բուրժուազիայի ձեռքը, մօտ 50/օ-ը թիւրքի իսկ վրացա-
կան բուրժուազիայի ձեռքը գրեթէ չնշին Քաղաքի ընդ-
հանուր առեսուրը գլխաւորապէս գտնուում է հայ միջին
ու փոքր բուրժուազիայի ձեռքը. Այդ պատկերն ունի
կովկասի ամենախոշոր տնտեսական կենտրոնը:

Իսկ թիֆլուս, որը վրացի նացիոնալիստները չն մոռանում
որ կա Քարթալինայի նախկին մայրաքաղաքն է և նրա աւեր-
ուած պարխավները տեսնելով, գաղտնութեամբ արցոնք են կո-
թեցնում, յիշենակ նրա հին վասրը. Այդտեղ տնտեսական ձեռ-
չարկների մեծագուն մասը հայ բուրժուազիայի ձեռքում է:
Նրա ձեռքում է քաղաքի արդիւնագործութիւնը և առեսուրը,
ու կապիտալի միջոցով տիրացել է քաղաքի լաւագուն մասե-
րին. ծխախոտի արդիւնագործութիւնը, որը թիֆլուսի խոչը
տնտեսական ձերնարկներից է, գրեթէ հայ բուրժուազիայի
ձեռքում է ոգելից ըմպելիների արտահանութեան մէջ հայ
բուրժուազիան գորեղ և վատանգաւոր մըցակից է վրացականին:
Այդ վրութեան մէջ է կովկասի երկրորդ տնտեսական կտրը:
Այդպէս, և այլ տեղեր, Ղարաբաղի, Նուխուայ մետաքսա-
գործութիւնը և Սիւնիքի պղնձահանքերը, Երևանի կինեգոր-
ծութիւնը և առնասաբակ բամբակի, բրդի արտահանութիւնը
գլխաւորապէս գտնուում են հայ կապիտալիստների ձեռքում:

Այդ յաջողութիւնները որ ունէր հայ բուրժուազիան
անդուրեկան պիտիւններ էին, բեւրոկրատիական կառավա-
րութեան համար, նա տանել էր կարող երբ հարաւատ կովկա-
սում ոռուական կապիտալը աննշան գեր էր խաղում, տանել

չէր կարող, երբ համաշխարհային Ապշերոնում ոռուս բուրժուազիայի մրցումը ուժեղ չէր. այդտեղ հայ բուրժուազիան կատարում էր խոշոր գեր, մուտք էր գործում անզլիական կապիտալը իսկ ուսև կապիտալը անկարող չէր մեծ գեր կատարել. նա գեռ խուսափում էր վտանգաւոր բիսկիներից բաւական չեռու վայրի անծանօթ մի գործի մէջ՝ ինքնակարգան-բիւրուկրատիական կարգերի մէջ կապիտալի ազատութիւնը, վանդակի մէջ ընկած թուչնակի ազատութիւն է, որին ապիս են շարժուելու որոշ սահմաններ. աճա թէ ինչու հայ բուրժուազիայի յաջողութիւնները դիւրեկան չէին և սանձեռում էին յաճախ կառավարութեան կողմից, իսկ ոստական կապիտալի ներկայացուցիչները կատաղած ուժրակոծում էին հայ ազգը, անուանելով նրան վաճառական ժողովուրդ—չէին զլանում պախարակել այս կամ այն վարչապետին, եթէ զտնում էին որ նա թուրութեան կամ յիմարութեան չնորհիւ միջոցներ է տուել օտար կապիտալի զարգացման կովկասում. բաւական է յիշել Սուվորին հօր, իլովայնկու նետերը, ուզզած Գոլիցինին («Կրեմլ» «Խօ. Յ.»):

Հայ բուրժուազիան բնական է պիտի բռնէլ շոգաքոր-թութեան ու յարմարուելու քաղաքականութիւնը. բնական է, որ նրան դիւր չէին կալ կառավարութեան քանակութիւնը բայց պարզ էր և այն, որ նա անկարող էր որևէ բարոսա քայլ կամ բողոք անել, նա օրգանատէն իրը կոսմոպոլիտ մի տարր, անում էր այն, ինչ յարմար էր իւր շահերին. առիթներ էր որոնում զիւր կատու կառավարութեան, մասնակցում էր փողով կառավարութեան ձեռնարկներին, կուրօնքէն նետեռում էր նրա լունի ուսւացման քաղաքականութեան. նա արտաքուստ միապետական էր, թէն սրտանց կը կամենար մի փոքր աւելի լաւ պայմաններ. արհամարդում էր այն ինչ աղքային էր, որովհետև չկար դրանից ոչ մի շահ, թէն ձեռքից չէր կարող բաց թողնել աղքայնական քաղաքականութիւնը, երբ նա ձեռնատու է իւր շահերին. նա գիտ շոյել ժողովրդ գըստիկ բրազիները, երաշխիքները տալով իւր աղքասիրութեան մասին. իսկ որա իւր շահութեան աշխատում էին հայ բուրժուազիան աւելի և աւելի մօտեցնել աղքայնութեան աւասպներին. Հայ նորածին կապիտալի ոյժն էր, որ կարթեցը նրա իզեալոգների մէջ քաղաքական ուրույնութեան զաղաքարը, այն ժամանակ, երբ քեռ քնած էր թիւրքը, թմրած էր վրացին, հետմարար հայ բուրժուազական բուշուազների այդ քաղաքական ըրազիները՝ անուշաղը թիւրունելով մեր հարաւաների կողմից, միայն չէին վրիպում բիւրոկրատիայի աչքն-

րից, որի խողկատակները նեսպամտութեամբ հրէշներ էին ոտեղծում ամենապարզ իրողութիւններից. («Խօ. ար.» «Մօշ. Են» «Կավազ»):

Որքան և հայ բուրժուազիան բանէր շոյելու բազաքականութիւնը, այնուամենայնիւ կառավարութեան համար նա մի անյարմարութիւն էր պետութեան ծայրերից մինում. Ռուս գաղթականներով նա սկսեց բնակեցնել Կովկասը, թունաւորելով թէ գաղթողների արիւնը և թէ տեղական բնակիչներին, սկսեց փակել բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները հայերի մէջ այն ժամանակ, երբ հայութիւնը ամենալոյնեալ տարրերից էր համարւում. Այն բերպեսիաները, որ գործադրում էր լեհների, ֆինների, հրէաների վերաբերմամբ, սկսեց գործադրել և հայերի նկատմամբ. նա կամենում էր բանի ճնշել ծայրերը և ուժեղացնել կենարոնը և զրանով և աւելի ապահովել իւր գոյաթիւնը և միաժամանակ ուժեղացնել ոռուսական կապիտալ:

Կովկասում տաելի էր հայ բուրժուազիան, որ կառավարութեան տեսակէտից միենայն է թէ հայ տարրը, նայելով որ այն կուլտուրական հիմնարկութիւնների փուկելը միայն վնասում է ժողովրդի աշխատաւոր մասսաներին; Հետևաբար ատելութիւն բիւրոկրատիայի կողմից գէպի հայ բուրժուազիան և ժողովուրդը վաղուց գոյութիւն ունէր: Խուսական ու հայկական լիդալ մամուլը միամտաբար կարծում է, թէ Գօլիցինն էր միայն որ պատճառ էր այդ բոլորին. այդ տակ կընշանակէ հասկացողութիւն չունենալ ինքնակալական-բիւրոկրատիական ոչժիմի մասին, կընշանակէ լուչըմբոնել անտեսական քաղաքական կեանքի երևոյթները:

III

Ի՞նչ էր ներկայացնում Վրաց հասարակութիւնը, մտնելով Ռուսական ինքնակալութեան գիշտատուրայի տակ: Նա նոր իւր ֆէօդալական թագաւորութիւնը վերջացրած մի հասարակութիւն էր, այլտեղ կային ֆէօդալներ (ազնուականներ) և զիւղացիներ, երրորդ զասակարգը՝ բուրժուազիան ոչինչ չէր կայացնում իրենից. հայ վաճառականներն էին, որոնք իրենց մէջ զարգացնում էին երրորդ զասակարգի սաղմերը Վրաստանում:

Ֆէօդալիզմը իրեն ոչակցիօնէր մի տարր, օրգանապէս անընդունակ զարգացման և ոխերիմ հակառակորդ բուրժուազիայի առաջխաղացման, չէր կարող լինել պրոգրեսիւ երկոյթ. նա էր այն ֆակտորը, որի վրայ յենուած էր ամերող

թուսիայի կառավարչական ինքնակալական սիստեմը. և զար-
մանալի է, որ վրացական ֆէօդալները արժանացան ոռւսա-
կան կառավարութեան հովանաւորութեան, կազմակերպուելով
իբրև ազնուականների դաս, մէծ արտօնութիւններով: Գիւղա-
ցիութիւնը ներկայացնում էր ճորտատիրական կարգերի մէջ
շահագործուող, հարստահարուող մի մասսա: 60-ական թ. բե-
ֆորմները յանում ցարիզմի վրկութեան, նրա, մահուան
գրաւականով, ազատելով գիւղացիութիւնը այդ կարգերից,
նաև Կովկասում գոներ բացեց բուրժուազիայի զարգաց-
ման առջև ի վեաս կալուածատէրերի. իսկ բուրժուա-
զիան պիտի կազմակերպուեր հայ վաճառականներից, որը
արգէն բռնում էր իւր գիրքը: Հայ բուրժուազիայի զար-
գացումը—վրաց կալուածատէրերի քայլայումն էր նշանակում:
Այդ պրոցէսսի զարգացումն այնուեղ էր համանում, երբ մի օր,
կապիտալը, գանուելով հայ բուրժուազիայի ձեռքը, պիտի շա-
հագործէր ինչ կարող էր, և Վրաստանում պիտի տիրանար ար-
դիւնագործութեան և առևտորին, քշելով վրաց ազնուականնե-
րին առալարիզից, իբրև հետզիւտէ սնանկացող, մրցման չդիմա-
ցող կատեղորիա: Ատելութիւնը, որ սկսեց զարգանալ վրաց ազ-
նուականների մէջ դէպի հայ բուրժուազիան, բնական մի ե-
րեսյթ էր, մի երևոյթ, որ տարիների ընթացքում խուլ պայ-
քար էր զարգացնում երկու ազդեցի տիրող գասակարգերի մէջ,
որը այդ երկու կատեղօրինների իդէօլոգները մասամբ քաղա-
քագիտութեամբ և մատամբ միամսութամբ ազգային կոիւ են
անուանում, այն ինչ, այդ միայն և միայն զասակարգային կը-
ուի. է, օրգանապէս առոյդ բուրժուազիայի և մնանկացող ազ-
նուականութեան միջև: Իրերի պատմական գասաւորութեամբ
բուրժուազիան գլխաւորապէս հայերից է, իսկ կալուածատէ-
րերը՝ վրացիներից, մի հանգամանք, որ շահագործութիւնների
տեղիք է տալիս նացիօնալիզմի ասպետների կողմից: Վրաց
ազնուականութեան իդէօլոգների նախանձու նետերը ուղղած
հայ բուրժուազիային, ազգայնութեան վերնաշորի տակ, հանգի-
պում էր հայ բուրժուազիայի ինքնազո՞ն իդէօլոգների «եղ-
բայրութեան», «ազգերի համերաշխութեան» քարոզին: Սակայն,
կարող է եղբայրութիւն լինել այդ երկու կատեղօրիանների
մէջ?:

Ահա թէ ինչու, երբ հրկիզւում էին տներ ու դիւղեր, ոս-
նայարւում էր այն ամենը ինչ վեհ է մարդու համար, այն ամե-
նը ինչ երկար տարիների քաղաքակրթական էվոլյուցիայի ար-
գիւնը էր, այդ բոլորը շարժում էր վրաց քէակցիօներ տարրե-
քի՝ կալուածատիրական և մանր բուրժուական գասերի օրգան-

ների ցիսիկու գաղտագողի հրճուանը («Հվերիա», Շնորիս
Փուրցելի):

IV

Երրորդ տարրը Անգրկովկասում թիւրերն էին, որոնք իշխաց թուով աւելի գերազանց իսկ քաղաքակրթական մակարդակով ամենից աննախանձելի ժողովուրդն էր ներկայացնում։ Մահմեդական դեսպոտիզմից ազգուած և ինքնակալական համեմատաբար աւելի բարուոք զեսպոտիզմի տակ մտնող այդ ժողովուրդը գարձեալ իրենիցներկայացնում էր Փէօդալական կարգերի մէջ ապրով միւտարը։ Հին խաներն ու բէզերը մտնելով ուռական իշխանութեան տակ, ճիշտ է զրկուեցին իրենց հին արտօնութիւններից բայց մնացին նոյն շահագործող, կեղեքող կալուածատէրերը, որոնք սակայն իրենց էութեամբ անընդունակ էին ընթանալ ժամանակի պահանջների հետ։

Անկիրթու վայրենաբարոց, նրանք ոչ մի հասկացողութիւն չունէին հողի շահագործութեան կատարելագործուող միջոցների մասին, իրեւ ծոյլ ու զեխ, նրանք ընկած ուտում էին գիւղացիների վաստակները, բայց միաժամանակ մեծ զրամագըլութիւնների ծախսեր ունենալով, հողա հարկեր վճարելով, նրանք անկարող, էին իրենց նահապետական անտիսութիւնից այդ գումարները հանել, այդ բոլորի հետևանքն էին պարագերը, զրամ նրան տալիս էր հայ վաճառականը, անշուշտ բարձր 9/9 ներով, որի հետևանքն էլինում պարտապանի կալուածների իւրացնելը, այդպիսի փաստեր քիչ չեն Նախիճանում, Ղարաբաղում և Սիւնիքում, Թիւրք բեզերը անընդունակ, էին պահպանել իրենց զիւրքը այնպիսի պայմաններում, որտեղ զարգանում էր կտպիտալիզմը, որի սրնթաց արշաւի առաջ բնական մահով պիտի, բնշնչանային բոլոր բէակցիօնէր տարբերը և կեանքի պահանջներին անհնամապահանան ինստիտուտները։ Թիւրք կալուածատէրը զգնում է իւր զրութիւնը խախուտ, տեսնելով իրեն անկարող զիմագրաւել կապիտալի խաղերին, նկատելով իրին անընդունակ մրցելունո՞ր զարգացող բուրժուացիանեաւ հետ, որի ամեն մի առաջխաղաց քայլ անհում է ի վասի իրեն։ Յանձին հայ վաճառականութեան զարգանում էր Անդըրկովկամսի տեղական բուրժուազիյան, նաև հետզհետէ մակում էր ճնշել թիւրք բէզութիւնը և վրաց աղնուականութիւնը իւրիւ զընկող մետաղին հրամանատարք Դպնելակախման, մէջ ոիւր քմահաճոյքներից առաջանանակայի տիւրում առին այն հազերին,

որոնք պատկանում էին բէդերին, քաղաքներում բռնում է ամենալաւ մասնը, կարողանում է խաղալ կեանըում ազգեցիկ գեր իրրև իշխող, որի ձեռքին է ուժը: Սնանկացող թիւրք բէզը, որի յիշողութիւնների մէջ գեռ վառ է իւր հին փառքը; որը մի ժամանակ տիրում էր իրքն իշխան, այժմ զգում է իրին ողորմելի: Նա փոխանակ իւր հիւանութիւնը վերադրելու կապիտալիզմի զարգացող բնական բնաթացքին, կարծում է թէ հայ կապիտալիստն է մեղաւոր: Հայ կապիտալիստի պատկերը դառնում է նրա աչքում ամբողջ հայ ժողովուրդի պատկեր:

Միակ քաղաքը, որտեղ դոյութիւն ունի ինդուստրիական թիւրք խոշոր բուրժուազիա, զա Բագուն է, ոկզրում զուտ թիւրքաբնակ մի վայր, որտեղ, այսօր թիւրք բուրժուազիան չի կարող ամենից շատ չը նախանձել հայ բուրժուազիային, որը իւր ճնտ միասին է ապրում, որի յաջողութիւնները նա տեսնում է աւելի կօնկրետ օրինակներով, որը նաւթային աշխարհում կատարում է խոշոր գեր. նրա ձեռքն է առևտրի մեծ մասը. յանձին վերջինիս նա տեսնում է իւր անմիջական մըրցակցին, նա անընդունակ է մտածել, որ եթէ չըլինէլ հայ բուրժուազիան, նրա տեղը կըրանէլ ուրիշը, բայց յամենայն դէպսոչ ինքը, իւր անձեռներէցութեան, տգիտութեան, անշարժութեան շնորհիւ: Ճիշտ է նա կարող է մտածել, որ իւր զրութիւնը վտանգուած է տնտեսական ազատ մրցութեան ասպարիզում, նա նկատում է այդ մանաւանդ այժմ, երբ մի կողմից յեղափոխութիւնը, միւս կողմից եւրոպական և սուսական կապիտալը աւելի և նեղ դրութեան մէջ պիտի դնէին անկուլտուրական ձեռնարկողներին: Բնականաբար նրա գլխում ծրագրուում են նաև քաղաքական նպատակներ, իրեն ելակչտ:

Մեղադրել հայ բուրժուազիային նրա զարգացման համար, պիտի լինել վրացի կամ թիւրք նաշխօնալիստ, որոնք իրենց մուլտը ծծում են սնանկացող ֆէօդալիզմի և մանր բուրժուազիայի չորացած ստինըներից:

Քաղաքակիրթ երկրներում, որտեղ մղւում է անընդհատ պայքար ինդուստրիական և ազգարային բուրժուազիայի միջև, այսուեղ թիւրք ժողովրդի ինդուստրիական և ազգարային մաղնատների շահերը առայժմ ընթանումն ներդաշնակ. երկուոք ևս, որոնցից երկրորդը գեռ ֆէօդալիզմի նահապետական տընտեսութեան շրջանում է, իսկ առաջինը, չնորդիւ իւր զրութեան, կանգնած է մանր բուրժուական բէտականիքին տեսակէտի վրայ, համահոււասար կերպով ճնշում են հայ կապիտալիստներից: Նրանք միացած իրենց ընդհանուր թըշնանոյեմբեր, 1905.

մու գէմ, աշխատում են հասկացնել թիւրք խաւար մասսային, որ իրենց շահերը նրա շահերն են և իրենց թշնամին նրա թշնամին Խնդիրը, ըստ տիրող գասակարգի սովորական քաղաքագիտութեան, զնելով ազգային կամ կրօնական հողի վրայ, ինչպէս ձեռնուու է այդ, նրանք հայ բուրժուագիայի մէջ տեսնում են ոչ թէ մի դասակարգ, այլ ամրոջ ազգութիւնը. և պրոպոգանդը դասնումէ այս գէպըում հակահայկական. Որքան անիքնագիտակից է մի ժողովրդի աշխատաւոր մասսա, նոյնքան նա հեշտութեամբ ենթարկում է իշխող դասակարգի ազգեցութեան. մանաւանդ երբ նա տնտեսապէս ճնշուած է, հետևապէս ընդունակ ապստամբ բայլերի, և փոթորիկը պատրաստ է իր ըմ «ազգային սրբազն կոիւ», կուզէք իրեն «կրօնական պատերազմ»: Դասակարգային շահերից ծագած ատելութիւնը և նախանձը, չնորհիւ խաւար հասկացովութիւնների, կերպարանաւորուելով ազգային կոիւների, պիտի առաջացնէր այն, ինչ եղաւ: Դժուա ըսութիւն չկար թիւրք բէդի համար իրենից տնտեսապէս կախուած, աղքատ, ըստ մեծի մասին խաշնարած, վայրենարարոյ գիւղացիների և հասարակութեան տականքի մէջ լարուած դրութիւն զստել, զարթեցնելով նրանց ստոր բնազդները և մղելով թալանների ու կոտորածների: Մանաւանդ, տնտեսապէս հարստահարուած այդ գիւղացիութիւնը, բազարական յուղուած ըրպէներում, եթէ ոչ այսօր գէթ վազը, կարող է զէնքը մղել գէպի իւր հարստահարիչները. այդ զդում են թիւրք ֆէօդայնները: Դարձնել այդ մասսայի ուշադրութիւնը այլ կողմ և ծառայեցնել նրան իրեն գործիք, յոյելով նրան միամիտ ցընորքներով և որ գլխաւորն է թալանների յուսով, եղաւ թիւրք տիրող տարրի գործադրած քաղաքականութիւնը. որով և ջարգուելով հայ, որոշ չափով գիտակից և աւելի շուտ ընդունակ գիտակցելու, գիւղացիութիւնը, անկարող պիտի լինի բողոքելու և շարժուելու այդ նոյն ֆէօդալների գէմ:

Միւս կողմից, հայ ժողովուրդը ինքնապաշտպանութեան համար ստիպուած լինելով միանալ, յարմար առիթ է ներկայանում բուրժուազիայի համար, պնդելու, որ ամրող ազգութեան շահերը մի է, բանուոր ու կապիտալիստ եղբայրներ են, ապա և միաձոյլ ազգային կոիւ ընդհանուր թշնամու դէմ:

Սակայն ի՞նչ է ներկայացնում այդ գործիք ծառայող թիւրք մասսան:

Բիւրոկատիական-ինքնակալական ուժիմը մի հզօր խոչնդու լինելով կուլտուրական ուժերի առաջնազացման, նա աւելի ճնշող, աւելի բարբարոս էր թիւրք մասսայի նկատմամբ. նախ այն հանգամանքը, որ անքաղաքակիրթ,

անսահման խաւար ու ճնշուած մի մասսայի համար, ուրի լուսաւորութեան զեկը մահմեղական կղերի ձեռքն է, անհրաժեշտ էր աւելի հզօր խթան մղելու քաղաքակրթութեան, զարգացման ուղին, որ գոյութիւն չունէր, մի այլ կողմից, ուստի բիւրոկրատիան, քաղաքակրթութեան ոչ մի նշոյլ չմտցնելով իւր հպատակների մէջ, բեպրեսիւ միջոցներով խեղպում էր ամեն մի առաջխաղաց քայլ, որ երևան էր գալիս թիւրք մասսայի մէջ: Ամբողջ մի դար այդ ժողովուրդը մնաց այնքան խաւար և ետամնաց ինչպէս և մի դար առաջ, ամբողջ մի դար ոչ մի միջոց չեղաւ, որևէ կուլտուրական գործ առաջացնելու այդ խեղճ հարստահարուող և վայրենի ժողովուրդի մէջ. նա մնաց իւր գիշատիչ բնագիներով, իւր հին նախապաշարութներով ու փանաւակով, տնտեսապէս աղքատ, դարձեալ հնթակայ մոլաների պատգամներին և բէգերի հրամաններին. և այդ մասսան, որ գիտակից լինելով, պիտի մղէր մի ուժեղ կոիւ իւր հարստահարիչների՝ բէգերի ու խանների, տիրող ուժիմի հիմքերի դէմ, այդ մասսան շնորհիւ իւր անդիտակցութեան դարձաւ կոյր գործիք իւր թշնամիների ինտրիգների համար:

Այդպէս էր իրերի գրութիւնը. կար մի խուլ պայքար բուրժուազական համախմբութների մէջ. մի կողմից հայ բուրժուազիան, իսկ միւս կողմից թիւրք կալուածատէրը և համեմատաբար թոյլ անկարող ինգուստիական բուրժուազիան, որի մէջ զարթնել է քաղաքական գիտակցութիւնը: Այդ պայքարը ազատ, քաղաքացիական երկրներում կարող էր մղուել պարլամենտական հողի վրայ, ինքնակալական գիսպոտիզմի մէջ կը մնար համբ, իսկ արտայայտուած միջոցին բուռն ու ցասկոտ: Եւ ինքնակալութեան մահուան ճգնաժամին ու նրա ձեռնարկած ջարդերի ու կոտորածների քաղաքականութեան պատճառով այդ պայքարը պիտի արտայայտուէր Անդրկովկասում կատարեալ քաղաքացիական պատերազմով, շնորհիւ թիւրք բանուորութեան և աշխատաւոր մասսաների և յատկապէս գիւղացիութեան տնտեսական ներկայ սարուկտուրայի և կատարեալ անդիտակցութեան:

V

Կոիւը հայ առաջալիք բուրժուազիայի և թիւրք բէակցիօներ կալուածատէրերի և բուրժուազիայի միջն աւելի պիտի խստանար վերջին տարիներս, երբ քայքայւում էր բացարձակապէս ինքնակալական սիստեմը—միակ կարգերը—որի տակ կարող էին շնչել յետաղէմ տարրերը և հետզհետէ մօտե-

նուռ էին նոր կարգեր, բուրժուազական աւելի ազատ մրցութեան և անտեսական ուժերի զարգացման համար, եթի համուռմ է տագանապ թիւրք ըէղերի, խաների և նոյնիսկ մրցութեան չդիմացող թոյլինդուստրիական բուրժուազիայի համար. կոռուի խոտութիւնը ըէտկցիօնէր ֆէօդալականութեան և պրոգրեսիւ բուրժուազիայի միջև անխուսափելի էր, քաղաքական փոթորկու, յեղափոխական րոպէները ընդունակ են աճեն մի անտեսական-քաղաքական կատեգորիայի ոչ միայն եռանդը կը կնապատիւ իւր շահերը ձեռքից չտալու համար, այլև այնպիսի զարկ տալ նրա գիտակցութեան, որի համար խաղաղ ժամանակը երկար տեղութիւն է հարկաւոր: Բնական է, որ յետագէմ ֆէօդալականութիւնը և մրցումից վախեցող բուրժուազիան պիտի ինքնակալութեան հետ կոռուէին այն բոլորի դէմ, ինչ այդ կարգերի քայլայման է ծառայում: Եւ մեանող ինքնակալութիւնը փարուեց ըէտկցիօնէր տազրերին օգնութիւն յայցելով, վերջիններս փարուեցին առաջինին իրենց կորուսար ողբալով առաջնի խորտակմար: Հայ խոշոր ու մանր բուրժուազիան, պրոլետարիատը դէպի ապագայ ազատ կարգելը ձգտող տարրեր են, իւրաքանչիւրը իր գառակարգային ձգտումների ու նպատակների համեմատ, թիւրք ֆէօդալները, նողերականութիւնը և բուրժուազիան ներկայ կարգերի պահապահներն են, որոնք գործիք են ծառայեցրել անգիտակից թիւրք գիւղացիութիւնը և բանուբութիւնը: Հետեւարար հայ-թիւրքական ջարգերը նոր ու հին կարգերի, առաջադէմ ու յետամնաց անտեսական-քաղաքական կատեգորիաների կորին է, որը մարմնացել է այսօր այս ու այն աղքութեան մէջ, արտաքուստ կը ելով ազգային կորիների բնաւորութիւն:

Բայց այդ հանգամանքները ծնել են և այլ պարագաներ, որոնք աւելի են բարդացնում հայ-թիւրքական ջարգերի խընդիրը: Որքան աւելի է ուժեղանում յեղափոխական շարժումը, նոյնքան աւելի է զարգանում թիւրք մագնատների գիտակցութիւնը, քաղաքական ձգտումները: Եթէ ինքնակալական կարգերը նոյնիսկ չեն երաշխաւորում նրանց գոյութիւնը, ապա ինչ կարող է լինել վաղը, երբ վերջացած կը լինեն այդ կարգերը ևս. և նրանց մէջ սկսեց աւելի զարգանալ այն միտքը, որ այսօր աւելի քան երեկ և կը կնակի վաղը վասնգաւոր է Ռուսիայի քաղաքական կարգերը իրենց համար. և աւելի քան այժմ չկայ յարձար բոպէ ներշնչելու թիւրք ժողովուրգին, կազմակերպուելու և ձգտելու իրականացնել ազգային ամբողջութեան, քաղաքական մրութեան խոչալը: Դարձնել Անդրկովկասը թիւրքիայի նոհանքներ և այդպիսով կազմել մի աղբային պետու-

թիւն, որտեղ առահովուած կը լինի թիւրք բուրժուադիայի և ֆէօպալնելի շահերը, այդ է Անդրկովկասի թիւրք տիրող դասակարգի քաղաքական տեսչամները, որ արտայայտում է պահիսլամիզմի մէջ¹⁾: Այդօրինակ քաղաքական ձգտումներ ու շարժումներ նոր չեն պատութեան մէջ. բաւական է յիշել 16, 17, 18, 19-րդ դարերում աղքայնական շարժումները և աղքայնական պետութիւնների կազմակերպութիւնները շնորհիւ նորածին բուրժուազիայի, բաւական է յիշել նոյն դաղափարից ծագուծ պահպերմանիզմը, պահուալուիզմը և այլն:

Աղքային ամբողջութեան և անկախութեան ձգտումը շատ վառ է զանազան աղքերի որոշ խաւերի մէջ, հէնց թէկուզ Ռուսիայում լիների, հայերի վրացինների մէջ, նայած ինչ պարագաների մէջ, ինչ ժամանակ և ինչ եղանակով է երևան դաշիս արդ դաղափարը, ըստ այնո՞ւ էլ նա լինում է առաջադէմ կամ յետադէմ, ուտոպիական կամ ըէւլավական: Բաղաքական սեպարատիզմ, գրաւուած աղքային անկախութեան ցնորժով, յեղափոխական բուլէններում, համեմատաբար ազատ կարգերի նոխազուան, յետադէմ նացիօնալիսական ձգտում է, կեանքի կոչուած մրցման անընդունակ խաւերի կողմից, մանաւանդ երբ այդ պիտի կատարուի յանուն միութեան մի այնպիսի երկրի, ինչպիսին թիւրքիան է: Այդ է թիւրք տիրող դասակարգի քաղաքական շեծօն, չնայած թիւրք բուրժուազիայի այդ ձգտումը նրա գիտակցութեան արտայայատութիւնն է. մի մօմննա, երբ թիւրքական կապիտալը սթափուած որոնում է յենակէտ մրցութեանհամար, երբ աղքայնական կազմակերպութեան ու պետութեան ձգտումը զանուած է կենսական պահանջ նրա գոյութեան համար: Թիւրք կապիտալի կողքին կանգնած է նրա զօրեղ մրցակիցը՝ հայկական կապիտալը, աւելի ուժեղ, աւելի ճկուն մրցութեան մէջ և տիրական. մէկը միւսին ոչնչացնող այդ ուժերը, առաջադրում են մէկի սիւսին ներհակ քաղաքական ձգտումներ. մէկի յաջողութիւնը միւսի ոտնահարուելն է նշանակում. պահիսլամիզմի հանգէպ կանգնած է պահարժենիզմը, թէկ քաղաքական պայմանների շնորհիւ իւր իրականանալու միջոցների մէջ վարանու, անորոշ ու թոյլ. այն դաշտը, որ ծրագրել է տիրանալ պահիսլամիզմը, նոյն դաշտը աչքի առաջ ունի նաև պահարժենիզմը, առաջինը, որ ձգտում է Անդրկովկասը դարձնել թիւր-

¹⁾ Պահիսլամիզմը տարբեր տեղեր ունի տարբեր արտայայտութեան եղանակներ և զարգացման տարբեր աղբիւններ: Դա իւր մէջ ամփոփում է մահմեղական տիրող դասակարգի ձգտումը, որի գոյութիւնը շատ է նեղուած ու մաշւուած եւբազական արդի կուլտուրայից:

քական նահանգներ, երկրորդը ուրախ կըլինի եթէ թիւրքահայկական նահանգները դառնան ոռւսական նահանգներ և ամբողջ հայութիւնից այդպիսով կազմուի մի ֆեղերատիւ ազգային կառավարութիւն, եթէ ոչ անկախութիւն։ Այդ աւելի դրական կերպով այժմ կըկամենան պանարմենիստները, երբ Ռուսեան ընթանում է դէպի ազատ կարգերը։ և Եւրոպական դեմօկրատիան, որը անցանկալի էր համարում այդ, ինքնակալական դեմոկրատիզմի ուժեղանալու պատճառով, այսօր համակրանքով կըվերաբերուի, որը և կըլինի ամենակտրուկ միջոցը թիւրքահայ գատի լուծման համար։ Պանարմենիզմ և պանիսլամիզմ, առաջնադաշտ յետամենաց երկու տարրերի՝ բուժուազիայի մրցութիւնն է։ Պանարմենիզմը աւելի ուշինքագական արտայայտութիւն է գտել «Հ. Յ. Դաշնակցութեան» գործունէութեան մէջ¹⁾։ Հետեաբար պանիսլամիստական ծրագրի իրականութեան համար, անհրաժեշտ է ճնշել եթէ հսարաւոր է ոչնչացնել ամենամեծ արգելառիթը՝ պանարմենիզմը։ Պանիսլամիստի տեսակէտից, պարարամենիզմ գաղափարը ամփոփում է իւր մէջ ամբողջ հայ ժողովուրդը։ բնականաբար մի կոիւ մղուած հայ ժողովրդի դէմ, դառնում է պանիսլամիզմի համար կենսական անհրաժեշտութիւն։ Ապա և աւելի յարմար քաղաքական ըոպէ չի կարող լինել այլևս ագրեսիւ գործողութիւնների համար, որը ձգտում են շատ հետևողականորչն իրականացնել նաև թիւրքաց հայաստանում և Պարսկաստանում, որտեղ կայ հայութիւն իւր տնտեսական ազգեցիկ դիրքով և քաղաքական-ազգայնական արտայայտուած ձգտումներով։²⁾

Կառավարութեան գլուխ կորցնելը ներքին և արտաքին պատերազմներից, մի յարմար ըոպէ է պանիսլամիստների համար, իրականութեան մօտեցնելու իրենց ծրագրերը։ Նրանք պիտի շտապէին, որովհետեւ որքան այդ խառը դրութիւնը նպաստում է նրանց, նոյնքտն և այդ դրութիւնը իւր մէջ սնուցանում է նոր ոեժիմի պառուղները, ուժեղ և վտանգաւոր մահմե-

1) Պանարմենիզմը արտայայտուել է նաև, այժմ կազմալուծուած, «Հնչակեան կուսակցութեան» մէջ։

2) Այն հանգամանքը, որ սիւնիները չեն մասնակցում ջարդերին, պիտի բացատրեն նրանով, որ բէզերը և բուրժուազիան դիմաորապէս շիաներից են և վերջիններս են զիխաւորապէս, որ իսան ապրում են հայերի հետ, կազմելով Անդրկովկասի գիւղացիութեան մի ստուար մասը։ Զարդերու կոտորածներ կազմակերպող ֆէօդալների ազգեցութիւնը տարածում է միայն իրենց գիւղացիութեան շրջանում, թէև այդ կարող է առաջ գալ նաև սիւնիների մէջ։ Իոկ թէ ինչու նրանք ձգտում են սիւնի կրօնի մի պետութեան հովանին և ոչ շիա, այդ էլ այն պատճառով, որ այդ իդէայի աւանդաբարը՝ թիւրք բուժուազիան և նրա իդէօլոգները շատ հաս-

դական խանի ու բէգի համար: Եթէ անհնար թւար նրանց իրենց ծրագրի իրագործումը ներկայ բովէում, ապա աւելի լաւ է նրանց կարծիքով ուժեղանար հինը, քան նա քայլայուէր յեղափոխութեան հզօր զարկերից: Ահա թէ ինչու ստեղծուել է կրիտիքական դրութիւն պանխսլամիստների համար, երբ նրանք լողում են երկու կրակի մէջ, միակ կօնկրետ երևոյթը, որ անհրաժեշտ է ներկայումս իւր զօրեղ աստիճանին հասցնել, այդ հայերի կոտորածը ու տնտեսապէս սնանկացնելն է. դրանով մի կողմից շոյում են հին ռէժիմը, միւս կողմից հարթում են իւրենց ճանապարհը: Որքան և թիւրք միջին ու մանր բուրժուազիան այս դէպում համակրութիւն ունենան խոշոր բուրժուազիայի ձգտումներին, այնու ամենայնի նրանք չեն կարող համակրել կոտորածների տաքտիկան, որովհետև այդ դէպում վնասուում է նրանց անմիջական շահները:

Այսօր, երբ ինքնակալութիւնը յուսահատութեամբ թևերը փուել է խաւար տարրերի վրայ, նրանց օգնութեամբ արշաւանք մղելով գիտակից տարրերի գէմ, վաղուայ կառավարութեան մէջ, երբ թիւրք բուրժուազիան ցոյց տուեց ակներե կերպով իւր հակապետական՝ սեպարատիստական նպատակները, պիտի կատարուի մի հակառակ պրօցես, կառավարութիւնը հայերի աշակցութեամբ ճնշում թերես և կոտորած կարող է առաջ բերել թիւրք ժողովրդի մէջ: Բայց ինսդիր է, թէ արգեօք վաղուայ աւելի ազատ քաղաքական կարգերը, ընդունակ կըլինեն ստեղծել այն բարբարոսութիւնները, ինչ այսօր է կատարուում, հայ ժողովուրդը ընդունակ կըլինի այդօրինակ վայրենութիւնների, ինչ այժմ է կատարուում, կազմակերպուած, գիտակցօրէն գաստիարակուած չի լինի կոլկասեան և առանձնասպէս հայ և թիւրք պրօետարիատը, որը կըլինի պատուար ամեն մի ոչակցիօններ շարժման և ամեն մի բարբարոսութեան: Բայց միայն մի բան պարզ է, որ թիւրք բուրժուազիայի և կալուածատէրների այդօրինակ ձգտումները պիտի հանդիպեն կովկասի բո-

կանում են, որ նրանց անհրաժեշտ է մի ուժեղ պետութիւն և մեծ ժողովուրդ, որ կազմէր մեծ և ուժեղ ազգային շաղախ: Պանխսլամիզմը այն վարագոյն է, որի տակ վարագուրուած է թիւրք բուրժուազիայի քաղաքական ձգտումները, նա կարծում է այդ դիմակով՝ դրաւէ ամբողջ Ռուսիայի մահմեդական ժողովուրդը, զարկելով նրա ամենազողուիչ նեարդին: Այդ շարժման իդէական (նոյնիսկ գործնական) դեկավարները՝ թիւրք բուրժուազիայի իդէոլոգները՝ աշխատում են ապացուցեր, որ իրենք թիւրք-թաթարական ցեղից են, Օսմանեան թիւրքերի արիւնակիցներ. ոմանք նրանցից ժխտում են նոյնիսկ իրենց թաթարական անունը («Հէյաթ», «Կասպի»):

լոր յառաջագէմ տարրերի խիստ զիմաղբութեան, մանաւանդ, հայ ժողովրդի բոլոր դասակարգերի և թիւրք զիտակից պրօւնարիատի կողմից։ Յամենայն դէպս, թիւրք բուրժուազայի փողի և հողի մագնատների տնտեսական-քաղաքական շահերը ընթանում են տրամադօրէն հակառակ, հայ բուրժուազիայի, այլև ամբողջ հայ ժողովրդի շահերին, եթէ այսօր կոխու ազգային բնաւորութիւն ունի, այդ շնորհիւ նրան, որ թիւրք բուրժուազիան կարողացիւ է քշել իւր յետեից անգիտակից թիւրք ժողովուրդը, որի պրօլետարիատի և աշխատաւոր մասնէրի շահերը միանգամայն ներդաշնակ լինելով հայ ժողովրդի նոյն խաւերի շահերի հետ, արմատօրէն հակառակ են թիւրք խոշոր բուրժուազիայի և ֆէօդաների շահերին։

Իսկ այժմ, երբ հին ոէժիմը իւր ջախջախուած զլուխը ոլահելու համար կայաններ է որոնում, նա գուրկ է տաքսից ու հետատեսութիւնից։ Լրագրութեան առաջացրած ազմուկը, որ լսեցնում է բիւրոկրատիային, թէ կովկասը կարող է ձեռքից գնալ, սթափուիք, հանդիպում է բիւրոկրատիայի ականջների բժացած թմրկաթաղանթներին։

Շշմած բիւրոկրատիան չըփոխեց իւր քաղաքականութիւնը, և ի՞նչ կարիք ունէր փոխելու, ուո չէ վախենում պանխուամիսական շարժումից, և թերեւ չէ երևակացում թէ այդպիսի յանդուգն բայլ կարող է լինել ներկայումս, ժամանակակից միջազգային քաղաքուկան հանգամանքների մէջ, 1) և վերջապէս այդ մի քայլ է, որ Ռուսիայի ու Կովկասի ոչ մի քաղաքակիրթ տարրի կողմից աջակցութիւն չըփանելուց բացի, պիտի հանդիպէր խիստ զիմաղբութեան, երբ, կարծում է, ինքը, իւր հետ կըմիացնէ բոլոր նոյնիսկ գժգոհ տարրերին։ Բայց նրան առայժմ հարկաւոր է տպահովելու իւր գլուխը յեղափոխութեան արհաւիրքներից, նրան հարկաւոր են անկեղծ բիւրոկրատիական տարրեր՝ յենուելու նրանց վրայ, յեղափոխական Կովկասում աւելի՝ անկեղծ տարր միապետական տեսակէտից ըան թիւրք բէդերը ու խաները, եթէ բիւրոկրատիան չէ կարող չըփախենալ պանխուամիզմից, բայց, յեղափոխութեան գրոհների հանդէպ, շշմած բոտէին առելու դելuge։

Այսպէս որ, հայ-թիւրքական ջարդերը, աւելի ճիշտ ասած կոխը, կրում է իւր մէջ երեք զրութիւն, որը միևնոյն զրութեան զարգացման երեք շրջանն է ներկայացնում։ Նախ, հայ կապիտալի գերազանցութիւնը թիւրք կապիտալի թուրութեան

1) Այդպիսի շարժում առանց թիւրքիայի աջակցութեան և թերեւ ակտիւ մասնակցութեան չէ կարող լինել։

և մնանկացող կալուածատիրութեան գիմաց. երկրորդ, ինքնակալութեան տապալման շրջանը, երբ թիւրք մագնատները զգացին ինքնակալութեան հետ միանալու և կռուելու անհրաժեշտութիւնը ներկայ կարգերից դժգո՞ն տարրերի գէմ, այսինքն այս պարագաներում՝ հայ ժողովրդի. երրորդ, երբ նոյն յեղափոխութիւնը զարգացնելով թիւրք մագնատների քաղաքական գիտակցութիւնը, աւելի ևս սթափեցրեց նրանց մէջ քաղաքական ամրողնութեան, տղգայնութեան գաղափարը, մի հանդամանք, որի ժամանակ նրանց գէմ է կանգնում նոյն հայ աղգայնութեան՝ պահարմենիզմի զաղափարը, որը իւր հերթում շատ ընականօրէն զարգացրել է նոյն աղգային թշնամութիւնը, արհամարանքը գէպի թիւրքը և աջակցել է պանիսլամիզմին փոքրելու հայութիւնն ու թիւրքութիւնն բաժանող մնջրապետը. Ինքնակալութեան տապալումը և նրա քաղաքականութիւը պիտի հըրգեհէր այդ հոսքը, որի վառելանիւթերը երկար տարիների ընթացքում են հաւաքուել և որին նպաստում են այն հասարակական տնտեսութիւնն պարագաները, որի մասին մենք խօսեցինք:

Կովկասի միջազգային կազմակերպուած և դաստիարակուած պրօլետարիատը միայն կարող է կազմել այն շաղախը, որը կը լինի. խոչոր պատուարը ամեն տեսակի աղջայնական պայքարների, որ կըսպանայ վարակել ամրողջ աղջութիւնը: Թիւրք հարստահարուող գիւղացիութիւնն զիտակցութիւնը միայն կարող է գուրս հանել նրան կալուածատէրերի որողայթից, գարձնելով նրան գիտակից և կարող բանակ հէնց նոյն կալուածատէրերի գէմ. այդ բոլէին կը խաւարի պանիսլամիզմի գունատ արեւ: Խաղաղութիւն ու հաշտութիւն կարող է լէնել ոչ թէ երկու կողմի տէրտէրների ու մոլլաների, բուրժուաների և խաների մէջ, այլ բանուորութեան, աշխատաւոր գիւղացիութեան և առհասարակ հարստահարուող մասսաների միջև: Պիտի բաժանել անդունիներով թիւրք աշխատաւոր մասսային տիրող, շահագործող գասակարգից, անտաղոնիզմի թունալի սրուակներ խըմեցնելով նրան և մղելով գէպի իւր էքսպլոտատորները: Քաղաքական գասակարգային գիտակցութիւնը այն հողն է, որի վրայ միայն կարող են աճել աղաքայ բարօր օրերի պատուղները:

Բուրժուական պայքարը չէ զաղաքելու այսօր կամ վաղը, նա կը շարունակուի աւելի կատաղի, վաղուայ աղատ կարգերի մէջ, բայց այլև նա չի յանդզնիլ գառնալ արիւնաներկ պատերազմ, այլ կոիւ տնտեսական մրցութեան ասպարիզում: Այն օրը, երբ կը հաստատուեն Ռուսիայում աղատ ուամկավարական կարգեր, այդ օրը կը լինի պանիսլամական ձգտումների

մահուան օրը. որքան աւելի ենք լնթանում դէպի այդ կարգերը, նոյնքան աւելի կրիտիքական է դառնում թիւրք իշխողների գրութիւնը, նոյնքան աւելի պիտի գիտակցէ թիւրք աշխատաւոր մասսան և բանուորութիւնը. վերջիններիս զիտակցութիւնը պանխումիզմի հիմքերը փորող ուժն է. Թիւրք իշխողների աւելի կրիտիքական գրութիւնը ազատ մըրցութեան արշաւի մէջ, աւելի պիտի նրանց բորբոքէ պանխումական կամ պանթիւրքական իդէայի մէջ, բայց նոյն յարաբերութնամբ նա պիտի դառնայ աւելի և աւելի վատոյժ, հիւծուած և մահամերձ: Եթէ մի բոպէ ենթադրենք, որ ապագայում, Անդրկովկասում կըզարգանայ մի ուժեղ և մըցութեան ընդունակ թիւրք բուրժուազիա, ապա պանխումիզմը նրա համար այլիս չի կարող լինել գոյութեան ու փրկութեան ելակէտ, եթէ նոյնիսկ այդպէս եղաւ, ապա նա մնընդունակ պիտի հանդիսանայ արդէն գիտակցող թիւրք մասսան քաշել իւր յետեկից, իւր մերկանտիլ նպատակների համար: Ազատ օրերը, որոնք պրոլետարիատի տեղական կոունի մօտենում են, այդ ազատ օրերը պիտի ջախջախեն քարացած նախապաշտումները թիւրք մասսայի գլխում, պիտի նրան հասկացնեն իւր շահերի տարբերութիւնը: Այնքան, որքան գոյութիւն ունի ներկայ ոչժիմը, պիտի շարունակուի քաղաքացիական կոիւրերկու ժողովուրդների մէջ, որովհետև այդ կոիւներով ու դիակներով է նա մտածում ապահովիլ իւր գոյութիւնը: Նա, ով անկեղծօրէն ցանկանում է հարստահարուող ժողովուրդների եղբայրութիւնը, խաղաղութիւնը ու նորմալ կեանքը, նա պիտի կոուէ յանուն հայ և առանձնապէս թիւրք պրօլետարիատի և հարստահարուող գիւղացիութեան քաղաքական-դասակարգային գիտակցութեան, յանուն ներկայ քաղաքական կարգերի իսպատ կործանման, այն կարգերի, որ դրգող սկզբնապատճառն է բոլոր այս ոճրագործութիւնների և մնուցանող մայրը աճելուն՝ բոլոր խաւար տարբերի, ձգտումների ու գործողութիւնների:

ԱՀ. Ռուզէնի

* *

Եղբայրութեան կամ թէ սիրոյ
Խօսքը ես ձեզ չեմ քարոզում.—
Պատգամները չարի, բարւոյ
Զեր ոտների տակն եմ նետում.

Կեանքն է պայքար՝ գոռ ու գաժան,
Ճզմիր մարդուն և թոփիր վեր.
Իրաւոնքը ուժն է միայն.
Վայ յաղթուածին, հազար վայեր:
Տէր կամ ստրուկ պիտի լինիս—
Ճշմարտութիւն չը կայ ուրիշ:

Չես սպանիլ, քեզ կը սպանեն.
Դուն սպանիր, քեզ չսպանեն.
Լուծ կամ լծկան պիտի լինիս—
Ճշմարտութիւն չը կայ ուրիշ:

Անիծուխ, մարդ, որ յոյսդ է մարդ.
Բախտ կոռուով կռիր ինքդ.
Մուրճ կամ զնդան պիտի լինիս—
Ճշմարտութիւն չը կայ ուրիշ...

Աւ հսանակեան

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Մարքի յոգնութիւնը չափելու մէթոդներ.

Մարքի յոգնութիւնը չափելու և նրա աստիճանը որոշելու համար վեց տարբեր մէթոդներ կան, որոնց մասին հրկարօրէն խօսելը մեր ծրագրից դուքս ենք համարում, որովհետեւ այդ մէթոդները ուսուցիչների ձեռքով դալրոցներում փորձելու պէտքը չինք զղում. արդէն այդ միջոցները գործ են ածել շատ հեղինակաւոր անձեր, հուստատելով մտքի յոգնութեան պայմանները և նրանց աջողութել է որոշ հզրակացութիւնների յանդիլ, որոնք այսօր գիտական աշխարհի կողմից ընդունուած ճշմարտութիւններ են: Աւելի զոհնական լինելու համար, մենք պարտաւոր ենք այդ փորձերի արդիւնքը նկատի ունենալով և իբրև վճիռ մանկավարժութեան մէջ նրան հսկել:

1—Ուղղագրական մէթոդ.—Աշակերտների մարքի յոգնութիւնը չափելու համար գասերից առաջ և յետոյ նրանց ուղղագրական փորձեր են անել տալիս, այս փորձերում գործողութեան փութով կատարուելու և սխալների քանակութեան մէջ հզած տարբերութիւնը մտքի յոգնութեան աստիճանը ցոյց է տալիս:

Ուղղագրական փորձը կարելի է հեշտորէն կատարել միաժամանակ մի դաստիանի ամբողջ աշակերտների վրայ:

Աշակերտների ուղղագրութեան ըլուրը օրինակները հաւաքելուց յետոյ պէտք է հաշուել այս ըլուրը օրինակներում տեղի ունեցած ուղղագրական սխալները, այս կերպով միջին թիւը պէտք է ստանալ. և երբոր մի դասից յետոյ այս միջին թիւը փոփոխւում է, այն ժամանակ կարելի է ասել, որ նոյն դաստիանի աշակերտները առաւել կամ նոււազ յոգնել են, նայած այս փոփոխութեան առաւել կամ նոււազ լինելուն:

Այս մէթոդը ընդհանուր կերպով ամբողջ մի դաստիանի աշակերտների մտքի հաւաքրական յոգնութիւնը ցոյց է տալիս, սակայն կարելի է նոյնը անել նաև անհատների վրայ: Ուղղա-

գրութեան փորձերը երեխաների մտքի դարպացման աստիճաննին և տարիքին համեմատ և համապատասխան պէտք է լինեն. դժուար ուղղագրութիւնը բնականարար փոքր երեխաներին աւելի յոգնութիւն է պատճառելու քան թէ մեծերին. այս կէտք պէտք է նկատի ունենալ: Բայց այսուհանդերձ, չենք ուզում ասել թէ փորձերը դիւրին պէտք է լինեն, ընդհակառակը դժուար լինելու են, միայն թէ երեխաների տարիքին համեմատ դժուար:

Այս մէթոդը առաջին անգամ լինելով 1879 թուին Sikorsky գործ է ածել Խուսասսամնում. առաջին դասարանի աշաւկերտների տարիքը եղել է 9—10, իսկ վեցերորդ դասարանի աշաւկերտների տարիքը 15—17, և ուղղագրական փորձերի թիւը 500: Հեղինակը ուղղագրութեան այս փորձերը սրբագրելիս, աշաւկերտների տպիտութիւնից առաջացած սիմաները հաշուի չէ առել, միայն լեզուի և տառերի վրիսպանքները նկատի է ունեցել, որոնք ակամամայ և անխուսափել սխալներ են:

Ստորև նշանակում ենք աշաւկերտների կողմից առաւօտ՝ դասերից առաջ, և կէսօրից յետոյ՝ դասերից վերջը ժամը 3-ին տեղի ունեցած ուղղագրական սխալների թիւը:

Դասերից առաջ՝ Դասերից յետոյ՝ Տարբերութիւն

| | | | | |
|----|---------|-------|-------|--------|
| Ա. | դասարան | 123,5 | 156,7 | + 33,2 |
| Բ. | » | 121,5 | 145,3 | + 23,8 |
| Գ. | » | 72,4 | 102,8 | + 30,4 |
| Դ. | » | 66,5 | 94,2 | + 27,7 |
| Ե. | » | 61,4 | 81 | + 19,6 |
| Զ. | » | 45,7 | 80 | + 34,3 |

Այս ցուցակից երեսում է, որ 1) սխալների թիւը առաջին դասարանում աւելի շատ է քան վեցերորդ դասարանում, որովհետև ուղղագրութիւնը առաջին դասարանի աշաւկերտների համար աւելի դժուար է քան թէ վեցերորդ դասարանի աշաւկերտների համար: 2) Սխալների թիւը դասերից յետոյ մեծապէս աւելանում է, այս քանը մտաւոր աշխատութիւնից առաջացած մի երեսյթ է, որին դպրոցնում աշակերտներին ենթարկում են:

Հեղինակը չորս կարգի սխալներ նկատի է ունեցել, — ԶԱՅՆԱՂԱՄ, օրինակ, նոյնպէս փոխանակ նոյնպէս-ի, յարակ փոխանակ յարմար-ի, մարողական փոխանակ մարտղա-

կան-ի: ՏԱՂԱԿԱՄՆ, օրինակ, փայց փոխանակ բայց-ի, հոկե-կան փոխանակ հոգեկան-ի, տուր փոխանակ դուռ-ի: ՀՈԴԵ-ԲԱՆԱԿԱՄՆ, որոնց մէջ աշակերտները ամբողջ բառեր մոռա-նում են կամ նրանց տեղ ուրիշ բառեր են դնում, օրինակ, «նրան չէք գտնելու, պատասխանեցի» փոխանակ «նրան չէք գտնելու, ասացի»: ԱՆՈՐՈՇԵԼԻ ՍԼՎԱՆՑԵՐ, որոնց ինչ տե-սակ լինելը որոշել հնարաւոր չէ եղած, գրչով աւրուած լի-նելու պատճառով:

Նոյն մէթողը մի քիչ բարեփոխուած Գերմանիայուած փորձել է Hopfner և միևնոյն եզրակացութեան է հասել: Խոկ 1896 թւին Frédérich ուղղագրական աւելի խնամուած և մանրա-զնին փորձեր է կատարել մինչև 10 տարեկան 51 աշա-կերտներից բաղկացած մի դասարանում. իւրաքանչիւր ուղ-ղագրութիւն բաղկանում էր 12 նախադասութիւնից և իւրա-քանչիւր նախադասութիւն 25 տառից. մի ուղղագրութեան փորձի տևողութիւնը կէս ժամ է եղած:

Ուղղագրութեան փորձերը տեղի են ունեցել հետևեալ ժամերուած, նշանակուած սխալների թուով:

1—Առաւոտ ճամը 8-ին դասերից առաջ, 47 սխալ:

2—Առաւոտուայ դասից մի ժամ յետոյ, 70 սխալ:

3—Դասից 2 ժամ յետոյ, երկու դասերի միջև 8 ըոպէ տևող զրուանքով, 122 սխալ:

4—Դասից 2 ժամ յետոյ, բայց առանց զրուանքի, 158 սխալ:

5—Առաւոտուայ դասից 3 ժամ յետոյ, առաջին և երկ-րորդ, երկրորդ և երրորդ դասերի միջև 15 ական ըոպէ տևող զրուանքներով, 112 սխալ:

6—Առաւոտուայ դասից 3 ժամ յետոյ, միայն երկրորդ և երրորդ դասի միջև 15 ըոպէ տևող մի զրուանքով, 172 սխալ:

7—Առաւոտուայ դասից 3 ժամ յետոյ, առանց զրուանքի, 183 սխալ:

8—Կէսօրից յետոյ դասից առաջ ժամը 2-ին, 62 սխալ. առաւոտուայ դասերը ժամը 11-ին վերջանուած և այս փորձը կատարուած օրը աշակերտները կէսօրից յետոյ դասեր չեն ունեցել, այնպէս որ երեք ժամ (11-ից 2) զրունել են:

9—Կէսօրուայ դասից 2 ժամ յետոյ, երկու դասերի միջև 15 ըոպէ տևող մի զրուանքով, 110 սխալ:

10—Կէսօրից վերջը մի ժամ տևող մարմնամաքութիւնից յետոյ, 152 սխալ:

11—Կէսօրուայ դասից 2 ժամ յետոյ, առանց զրուանքի 190 սխալ:

Միանոյն օրուայ մէջ երբէք երկու փորձ չէ արել և այս բոլոր փորձերը կատարուել են վեց շաբաթուայ ընթացքում:

Այս փորձերից երեսմ է, որ 51 աշակերտներից բաղ- կացած ամբողջ դասարանում առաւտուայ դասից առաջ սխաների թիւը եղել է 47, իսկ դասից մի ժամ յետոյ 70: Մտաւոր աշխատութիւնը հրան երկարաւոև է եղած, այնքան էլ մեծ է եղած սխաների թիւը, օրինակի համար, դասից երկու ժամ յետոյ առաջին և երկրորդ դասերի միջև զրո- տանքով, սխաների թիւը եղել է 122, իսկ առանց զրուանքի 158. դասից երեք ժամ յետոյ, երկու զրուանքներով 112, մի զրուանքով 172, առանց ընդմիջումի դասից 3 ժամ յետոյ 183 սխալ: Ուրեմն, զրուանքները մտքի հանգստութեան վրայ մեծ ազդեցութիւն են ունենում, որը զգալի է լինում նոյնիսկ մի կատ երկու ժամից յետոյ: Իսկ կէսօրից յետոյ ժամը 2-ին սխաների թիւը եղած է 62, որովհետև աշակերտները 3 ժամ (11-ից 2) հանգստացել են, սակայն և այնպէս այն 3 ժամուայ հանգստաց բաւական չէ եղած միտքը բոլորովին հանգստա- ցնելու և նրա աշխուժութիւնը կատարելապէս վերադրձնե- լու, քանի որ առաւտուայ դասից առաջ եղած սխաների թիւը 47-ից չէ անցել: Մաքի յոզնածութեան տեսակէտից այս արդիւնքը շատ կարևոր է, արդարե ընդհանրապէս կարծում էին, որ յոզնութիւնը փարաւուու համար մի քանի ժամուայ հանգստութիւնը բաւական է և որը կարող է մուային գործու- նէութիւնը իր նախկին բնական վիճակին վերածելու:

Այս մէթոդի վրայ մի քիչ աւելի կանգ առինք, որով հետև միւս բոլոր մէթոդներից աւելի վստահելի և աւելի ճիշտ է. այս մասին յետոյ մի քանի խօսք կամենք:

2—Հաշուական մէթոդ.— Դպրոցում աշակերտների են- թարկուած մտաւոր յոզնութեան խնդրով սրազուող մի քանի հեղինակներ ուղղագրական մէթոդը անբաւական համարելով, ուղղագրական մէթոդին փոխարինել են հաշուական մէթոդը: Գլաւաւորաբար գոյմարումի և բաղմապատկութեան նման թուաբանական պարզ հաշիւներ են ընտրել: Իսկ վերջերս աշակերտներին արդէրրայի խնդիրներ ևս լուծել են տալիս:

Հաշուական մէթոդը առաջին անգամ 1891 թուին Burger- Stein ի կողմից գործ է ածուած: Փորձերը կատարուել են 4 դասարանի 162 աշակերտների վրայ, որոնց 68-ը, 11-ից 12 տարեկան աղջիկներ են եղած, իսկ 94 ը 12-ից 13 տարեկան տղայներ:

Նմանօրինակ փորձեր կատարել են նաև 1894 թուին Laser Գերմանիայում և 1895 թուին Holmes Ամերիկայում:

Լաղէր իր փորձերը կատարել է 9-ից 13 տարեկան 226 աշակերտների վրայ, ճիշտ Բուրգէրշտայնի նման, առաւօտուայ իւրաքանչիւր դասից յիտոյ, 10 րոպէ միջոցում: Առաւօտուայ ժամը 8-ից 1 հինգ դաս կար, հետևաբար հինգ տարբեր փորձեր է ստացել:

Հօլմո իր փորձերը կատարել է 6 դասարանների 150 աշակերտների վրայ, 70 տղայ և 80 աղջիկ, առաջինների տարիքը 9-ից 15, իսկ վերջիններինը 9-ից 18 եղած է:

Յրիզրիխ ուղղագրական մէթոդի նոյն պայմաններով փորձեր է կատարել նաև հաշուական մէթոդով, միայն թէ ուղղագրութեան մէջ տրուած 30 րոպէ ժամանակամիջոցի փոխարէն 20 րոպէ մի միջոց է տուած: Ստացած արդիւնքը ուղղագրական մէթոդով ստացուած արդիւնքի հետ շատ համանման է, այսինքն, սխալների թիւը այնքան աւելի է լինում, որքան մտաւոր աշխատութիւնը աւելի եղած է հաշուական փորձից առաջ: Մարմնաժարգութեան ազդեցութիւնը այստեղ էլ նոյնքան որոշ է, որքան որոշ էր ուղղագրական մէթոդի մէջ:

Richter նոյնամման փորձեր կատարել է ալգէբրայի խնդիրներով 1894 թուին Ինսայի Լիսէյում:

Այս բոլոր փորձերը ցոյց են տալիս, որ հաշուական մէթոդով էլ կարելի է որոշել մտքի յոգնութիւնը և նրա աստիճանը, նոյն մէթոդը դպրոցներում գործադրելով:

3—Թուաննշաններ յիշելու մէթոդ.—1895 թուին Բրէշլաու քաղաքին կառավարիչը «Առողջապահութեան ընկերութեան» մի նամակ ուղղելով, խնդրած է քնննել գերմանական ուսուցման զրութիւնը՝ թէ աշակերտներին յոգնութիւն չէ պատճառում այն, որը կայանում է առաւօտ ժամը 8-ից 1, հինգ դասեր միմիանց վրայ աւանդելու և իշօրից յետոյ աշակերտներին կատարելապէս աղատ թողնելու մէջ: Բնախօսութեան պրոֆէսոր Ebbinghaus ից, բժիշկներից և մանկավարժներից բաղկացած մի մասնախումբ աշակերտների յոգնութիւնը փորձնականապէս որոշելու համար, մինչև ցարդ գործադրուած մէթոդների վրայ վիճաբանեց և այս վիճաբանութիւններից յիտոյ երեսնկառուզի կողմից եղած առաջարկութիւնը ընդունուեց: Այս հեղինակը առաջարկում էր Բիւրգէրշատիցնի նման աշակերտներին միաժամանակ հաշուական խնդիրներ լուծել տալ, թուաննշաններ յիշելու վրայ փորձեր կատարել և վերջապէս անկատար խօսքերի պակասը լրացնել տալ:

Թուաննշաններ յիշելու մէթոդը կայանում է հետևեալում: Մի դասարանի աշակերտների առաջ 6-ից 10 թուաննշաններից

բաղկացած մի կարդ թիւեր արագօրէն արտօսանում են, իւրաքանչիւր թուի վրայ կէս երկվայրկեան կանդ առնելով. աշակերտները պարտաւոր են իսկոյն յիշողութեամբ գրել այդ շարը: Ամբողջովին մոռացուած կամ անձիշտ զրուած ամեն մի թուանշան մի սխալ են հաշուում, և մի շարքի մէջ գտնուած թուանշաններից մին մի տեղից մօտաւոր մի տեղ փոխադրութիւնը կէս սխալ, օրինակ, եթէ աշակերտը փոխանակ 259, 417 գրելու 254,917 գրած է, այսինքն 9 և 4 թուանշանները միմիանց հետ տեղափոխած է, կէս սխալ են հաշուում, իսկ եթէ 259,617 գրած լինի, մի ամբողջ սխալ:

4—Անկատար քառեր լրացնելու մէթոդ.—Այս մէթոդը էրբինգիառողի նախաճեռնութեամբ կազմուած ընսիչ մասնաւխմբի կողմից գործ է ածուած: Աշակերտներին մի տպագրուած ընագիր են ներկայացնում, որի մէջ մի քանի խօսքեր պակասում են կամ չեն աւարտած, գիծերը (—) պակասած վանկերի թիւը ցոյց են տալիս: Աշակերտը պարտաւոր է կարելի եղածին չափ շուտ այդ պակասը լրացնել, նախապէս պէտք է հաշուէ իւրաքանչիւր ընդհատման մէջ պակասած վանկերի թիւը և յետոյ լրացնէ, այնպէս որ խօսքի ընդհանուր միտքը փոփոխութիւն չկրէ: Հետեւեալ օրինակի նման պարբերութիւններ են ներկայացնում:

Առողջութիւնս—ամնից ի վեր—գար—է, շա—պաշտում եմ, ո՞ր—նոց Դնալս—իմանում: ինձ մի քժիշկ—է՞ք յանձնարարել:

2ը լրացրուած պակասները կէս սխալ են հաշուում, իսկ մի ամբողջ սխալ անձիշտ կերպով լրացրուածները, ինչպէս, վանկերի անձիշտ թիւը, մաքի սխալ արտայայտութիւնը, և այլն:

5—Շօշափենու զգայնութեան մէթոդ.—Երբ որ մի կարկինի միմիանց խիստ մօտեցրած երկու ծայրերը մորթի վրայ դպցնելու լինենք, այս հալումը լաւ կերպով զգում ենք, սակայն երկու կէտերի տեղ մի կէտ ենք զգում, այն ժամանակ հարկաւոր է կարկինի երկու ծայրերը միմիանցից բաւական չափով հեռացնել, որպէս չի կարելի լինի երկու կէտերն էլ առանձին առանձին որոշապէս զգալ: Կարկինի այս որոշ բացուածքը զգայնութեան սահմանն (seuil de sens) է կոչում: Այս սահմանը, այսինքն, կարկինի երկու կէտերը որոշ զգալու համար կարկինի բացուածքը, բնական վիճակի մէջ լինում է 2-ից 4 միլիմէտր մատների, ըթի և լեզուի ծայրերի և շրթունքների համար, 7-ից 15 միլիմէտր ճակատի, այտերի, ձեռքի և մատների

յետնակողմի վրայ, 40-ից 60 միլիմէտր թիի, բազուկի, մէջքի, ազդրի և սրունքի վրայ:

Այս սահմանը ճշտապէս որոշելու համար կարկինի երկու ծայրերը բոլորովին միմիանց մօտեցրած մորթի վրայ դպջնում են, յետոյ երկու ծայրերը աւելի բաց անելով են դպջնում և այսպէս աստիճանաբար շարունակում են, մինչեւ որ ենթական երկու կէտերն էլ որոշապէս զգայ, այն ժամանակ նշանակում են այս որոշ սահմանը և նոյն փորձը 3—4 անգամներ ևս վերսկսելով, սրանց միջին արբերութիւնն են ստանում թուարանութեան միջոցով:

Այս փորձը կատարելիս մի քանի նախաղղուշութիւններ ձեռք պէտք է առնել. ենթական չը պէտք է գիտնայ թէ Բնչ բացուածքով են դպջնում, չը պէտք է իմանայ թէ բացուածքը յաջորդաբար և աստիճանաբար աւելանում է: Հարկաւոր է երկու ծայրերը միանգամից և միաժամանակ դպջնել, մին միւսից աւելի չը պէտք է ճնշել, զանազան փորձերի մէջ միշտ միւսինոյն ուժով պէտք է դպջնել. մմիանց յաջորդող երկու փորձերի մէջ 20-30 երկվայրկեան մի ժամանակամիջոց պէտք է թողնել. մի թերթի վրայ նշանակել ենթակայի կողմից արուած բոլոր պատասխանները. ենթակային չը պէտք է նախապաշարել, ինչ որ այս փորձերում շատ հեշտ է, փորձը կատարողի կողմից պարզ մի ակնարկ, զարմացման մի արտայայտութիւն, յաճախ ենթակային նախապաշարելու բաւական են լինում:

Այս փորձերը կատարելիս, նկատուում է, որ մի կամ ելուկու կէտով տեղի ունեցած հողումը զգալու և որոշելու համար, ենթական պարտաւոր է սաստիկ կերպով լարել և կենտրոնացնել իր ուշագլութիւնը սաացուելիք շօշափելու զգայնութեան վրայ. եթէ մէկը չը կարողանայ բաւական զօրեղ կերպով իր ուշագլութիւնը կենարոնացնել, նոյնքան էլ հեշտութեամբ չը պիտի կարողանայ երկու կէտերը որոշել, ինչ որ սաստիկապէս կենարոնացրած ժամանակ որոշելու էր:

Մի գերմանացի գիտնական՝ Qriessbach 1895 թուին այս փորձը աշակերտների վրայ կատարելու միտքը յղացաւ, ստուգելու համար թէ դասերից յետոյ ուշագրութեան կետրոնացման ոյժը փոփոխութիւնն կրում է թէ ոչ, նկատի ունենալով, որ ուշագրութեան կետրոնացման ոյժի նուազումը արտայայտում է կարկինի բացուածքի աւելնալով:

Փորձերը կատարուել են իւրաքանչիւր անհատի վրայ առանձնապէս գասից առաջ, դասից յետոյ, մի քանի ժամ յանգատից յետոյ և վերջապէս կիրակի օր կէսօրին: Չեռք բերուած արդիւնքները շատ բացորոշ են: Հեղինակը իր փորձերի համար

ընարել է մարմնի հետեւալ մասերը՝ ճակատը, քթի ծայրը, ստորին շրթունքը, այտը, բթամատի և ցուցամատի կակուղ առաջամմասը:

Լիսէի 16 տարեկան մի աշակերտի վրայ կատարուած փորձի արդիւնքը հետեւալ ցուցակում նշանակուած է: Այս ցուցակի թուանշանները բացուածքի չափերը ցոյց են տալիս միլիմէտրով:

| | 7—8 Մաթեմատիք | | 8—9 Համ. | | 9—10 յուն. | | 10—11 Կրօն | | 11—12 Փիդ. | | Հան- դիստ | | կի- րա- կի |
|-------------------------|------------------|-----|-------------|------|---------------|-----|---------------|------|---------------|------|--------------|-----|------------------|
| Մաթեմատիք մա- սեր | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ | Ժամ |
| Ճակատի | 11 | 12 | 14 | 17 | 11 | 15 | | | | | 7,5 | 3,5 | |
| Քթի ծայր. | 3 | 3,5 | 5 | 5 | 4 | 5 | | | | | 2,5 | 1,5 | |
| Ներքերի զբո- վունք | 2 | 3 | 3,2 | 4 | 3 | 3,5 | | | | | 1,8 | 1 | |
| Այտ | 11 | 17 | 22 | 23 | 15 | 22 | | | | | 10 | 5 | |
| Բթամատի ծայր | 6 | 10 | 13,5 | 13,5 | 9 | 11 | | | | | 5 | 4 | |
| Ցուցամատի ծայր | 2,2 | 2,5 | 2,5 | 2,5 | 2 | 2,5 | Ժամը | Ժամը | Ժամը | Ժամը | 1,2 | 1 | |

Այս ցուցակից որոշակի տեսնուում է, որ նախորդ մտային աշխատութիւնը որքան աւելի ծանր եղած է, նոյնքան էլ աւելի մեծ եղած է բացուածքի չափը, այս աւելացումը փորձի հնդարկուած ոռթի բոլոր մասերի վրայ տեղի է ունեցած. բացուածքը նուազու զգայուն մասերի վրայ աւելի մեծ է, ինչպէս, ճակատի և այտի վրայ աւելի մեծ է քան թէ ցուցամատի և քթի ծայրի վրայ: Երկու ժամուայ հանգիստը բաւական է լինում զգայնութիւնը բնական վիճակի վերածելու. կիւրակի օրուայ բացուածքը աւելի քիչ է լինում, հետեւաբար ուշադրութեան կենարոնացումը աւելի ուժիղ է:

1896 թուին Vannot նոյն փորձերը միևնոյն պայմանների տակ 30 աշակերտների վրայ կատարելով միևնոյն եղքակացութեանց յանգել է:

Wagner ևս նոյնանման փորձերով հետեւալ արդիւնքն է քաղել: Մաթեմատիքի մի ժամուայ դասի պատճառած յոզ-

նութիւնը կամ կարիկնի բացուածքը իրեւ միութիւն 100 թուանշանով եթէ ներկայացնենք, այն ժամանակ կատիներէնի կամ Յունարէնի (մեր գրաբառը) համար կունենանք 97 և 91, Մարմնամարզութեան համար 90, Պատմութեան և Աշխարհագրութեան համար 85, կենդանի լեզուների համար 82, բնական պատմութեան համար 80, գծագրութեան համար 77:

6.—Երգօգրաֆիք մէթոդ.—Պրօֆ. Նօսո մի գործիք է հնարել, որի միջոցով հաւասար ժամանակամիջոցներում միջնամատը մի ծանրութիւն է բարձրացնում և թողնում. այս յաջորդական բարձրացումները մի գլանիկի վրայ արձանագրւում են, որի գծաւոր վէտվէտումներից կարելի է խմանալ հայթայթուած աշխատութեան չափը քիչօգրամի հաշուով:

Արդ գասից առաջ և գասից յետոյ այս մէթոդով մի աշակերտի քննելով կարելի է իմանալ թէ մտային աշխատութիւնը ո՞րքան ներգործել է միջնամատի մկանունքների վրայ, որի հայթայթած մեքենական աշխատութիւնը մտային աշխատութեան հետևանքով պակասում է, հետևաբար այս մեքենական ոյժի պակասումը մտային յոգնութեան աստիճանը ցոյց է տալիս:

* *

Զանաղան մէթոդներով դպրոցներում կատարուած վորձերը ցոյց են տալիս, որ մոքի յոգնութիւնը այնքան աւելի մեծ է լինում, որքան աւելի ուժեղ է լինում մտային աշխատութիւնը. այս մէթոդները արդիւնաւոր կերպով կարելի է գործ ածել այն պարագայներում, երբ որ առաջուց չէ իմացւում թէ երեխաները յոգնել են թէ ոչ:

Այս զանաղան մէթոդների մէջ մասնաւորապէս ուղղագրական մէթոդը միւսներից պէտք է նախագասել, այդ պատճառով նրա մասին աւելի երկար խօսեցինք, որովհետեւ, մի կողմից՝ աշակերտները արդէն ուղղագրութեան ընտելացած են լինում ուրեմն երկիւղ չկայ, որ միւս մէթոդների նման վարժութեան գժուարութեանց ենթարկուելու են, միւս կողմից՝ ուղղագրութեան մէջ տեղի սւնեցած սխալների թիւը հաշուել հեշտ է, սրա մէջ միւս մէթոդներից մի քանիսի նման երկդիմութիւն չէ պատահում. և վերջապէս՝ երեխաների կողմից եղած սխալների հոգերտնական վերլուծութիւնը կարելի է անել և այս վերլուծութիւնից յոգնութեան աղդեցութեան հոգերտնական ընութիւնը իմաստափերել, այսպէս օրինակի համար, շատ հաւանական է, որ մի ժամուայ մարմնամարզութիւնից յետոյ տե-

դի ունեցած սխալները, մի ժամուայ մաթիմաթիքական դասից յետոյ տեղի ունեցածներից տարբեր բնաւորութիւն կունենան:

Հաշուական մէթոդը ուղղագրական մէթոդի չափ լաւ չէ. մի կողմից՝ վարժութեան ազդեցութիւնը շատ խիստ է, այնպէս որ հաշուելիք թուանշանների թուի աւելանալով, սխալների թիւն էր նոյն համեմատութեամբ աւելանում է. միւս կողմից՝ երկիւղ կայ, որ աշակերտները զանազան փորձերի վրայ իրանց ուշադրութիւնը հաւասարապէս չեն դարձնում. քանի որ այս փորձերի նման այնքան երկար հաշիւներ անելու վարժ չեն, շատ բնական է, որ առաջին անգամ շատ եռանդով պիտի անեն, բայց երկրորդ անգամի համար այս եռանդով պիտի պակասի և յաջորդ անգամներին եռանդով ձանձրոյթի պիտի փոխուի. շատ հաւանական է, որ դասից յետոյ կատարուած փորձում տեղի ունեցած սխալների աւելացումը, մտքի յոգնածութիւնից աւելի ձանձրոյթի ազդեցութիւնից է. այս պարագան դժուարախուսափելի սխալումի պատճառ է և որը սակայն ուղղագրական մէթոդի մէջ այնքան զօրաւոր կերպով չէ արտայատում: Վերջապէս, հաշուի մէջ տեղի ունեցած սխալների բնութիւնը չէ կարելի վերլուծել, և այդ էլ ուղղագրական մէթոդի հետ բաղդատմամբ մի աննպաստ հանգամանը է:

Թուանշաններ յիշելու մէթոդը մինչև ցարդ աննպաստ արդիւնքներ է տուել, որովհետև վարժութեան ազդեցութիւնը ծածկում է մտային յոգնութիւնից առաջացած արգասիքները. ճիշտ է, որ այս մէթոդը մինչև ցարդ միայն մի անգամ գործ է ածուել և հեղինակները մէթոդի կիրարկման մէջ ծանր սխալներ են գործել: Գուցէ այս մէթոդը աւելի խնամքով վերստին ձեռք առնելով և փորձելով նախորդներից աւելի լաւագոյն արդիւնքներ կը քաղուի:

Անկատար ինօւրել լրացնելու մէթոդը գործնական շատ դժուարութիւններ է ներկայացնում. իսկապէս դժուար է բազմաթիւ համազօր բնագիրներ պատրաստել. նրանց մէջ միշտ կը պատահեն այնպիսիներ, որոնց լրացումը ուրիշներից աւելի դժուար պիտի լինեն. աւելի կայ, սխալների թիւը հաշուելու համար քմահաճ վաշկածներ պէտք է անել. այս եղանակով սխալների թիւը անճիշդ կերպով հաշուելու ըիսք է լինում. վերջապէս, հաւանական է, որ վարժութեան ազդեցութիւնը շատ մեծ է լինում: Ուրեմն, այս մէթոդը գործածելիս, կարեռ խոսորութիւնները հազիւ պէտք է առնել:

Ծօշափելու զգայնութեան մէթոդով ստացուած արդիւնքները շատ որոշ են, ուրեմն, մտքի յոգնութիւնը ստուգելու համար կարելի է այս մէթոդը միւսների հետ զուգընթացաբար

գործ ածել: Այս մէթողի գժուարութիւնը այն է, որ յոզնուաթեան աստիճանի և բացուածքների մեծութեան մէջ համեմատական մի չափ չկայ. օրինակի համար, եթէ մի ժամուայ դասից յետոյ 12 միւլիմետրի հաւասար լինի, նրանից չէ կարելի եզրակացնել, որ երկու ժամից յետոյ յոզնութիւնը մէկուկչս անգամ աւելի շատ է, քան թէ մի ժամուայ դասից յետոյ: Այս մէթողի մի ուրիշ գժուարութիւնն էլ հետևեալն է, եթէ բացուածքը աւելացաց է, կարելի է ասել, որ մի յոզնութիւն կայ, ոսկայն նրանից չէ կարելի է եզրակացնել, որ ամեն մտային յոզնութիւն առաջ է ըերում բացուածքի աւելացում, փոխադարձը ցոյց չէ տուել. շատ հեշտ կարող է պատահել, որ աշակերտը յոզնած լինի, սակայն այս յոզնութիւնը որոշակի չնկատուի բացուածքի չափին վրայ: Մի խօսքով, այս մէթողը մի քանի անճիշտ կէտեր է ընծայում, երբէք առանձին չը պէտք է գործ ածել:

Էրզօղրաֆի մէթողը միւս բոլոր մէթոդներից աւելի անվատանելի է:

Այս քննադատական ընդհանուր տեսութիւնից ինչպէս երևում է, բոլոր մէթոդներն էլ առանձին առանձին վերցրած իրանց թերութիւնները ունեն, սակայն այս բոլոր մէթոդների գործածութիւնից շատ որոշ և անվիճելի արդիւնքներ ձեռք են ըերուած, որոնց առաջ պէտք է խոնարհուեն մանկավարժները: Այդ մէթոդները առանձին առանձին վերցրած որքան էլ թերի լինեն, սակայն մի քանիքը միաժամանակ և զուգընթացարար գործ ածուելով որոշ արդիւնքներ են արտադրել, սրանց հիման վրայ պէտք է կառուցանել երեխաների կրթական գործը:

Զեռք ըերուած այդ արդիւնքները ապացուցանում են, որ 1—Երեխաները երեկոյեան դասերից յետոյ մտքով աւելի շատ և շուտ են յոզնում, քան թէ առաւօտուայ դասերից յետոր: 2—Երկու դասերի միջև հանգիստը և զրօսանքը մասամբ փարատում է մտքի յոզնութիւնը: 3—Ընդհակառակը մարմնամարզութիւնը աւելացնում է մտքի յոզնութիւնը: 4—Մտքի յոզնութիւնը առանձին զստից սկսած հետզհետէ աւելանում է: 5—Կէսօրուայ 2 ժամ տեսող հանգիստը բաւական չէ լինում աշակերտին միտքը բոլորովին իր ընական վիճակին վերածելու, թէն բաւական փարատում է մտքի յոզնութիւնը: 6—Կիրակնօրեայ հանգիստը բաւական է լինում աշկերտին միտքը բոլորորին ընական վիճակին վերածելու և յոզնութեան հետքերը ջնջելու: 7—Փոքը երեխաները մեծերից աւելի շուտ մտքի յոզնութիւն են կրում և թէ 10—12 տարեկան երեխաները 15—20 րոպէից աւելի ուշադրութիւննեն լարելու ընդունակ չեն: 8—

Մտքի յոդնութիւն պատճառող դժուար դասերը, օրինակ, մաթեմատիկա, պրարառ, և այլն, առաւտուայ ժամերին պէտք է աւանդել և միմիանց պէտք չէ յաջորդեն, այլ օրբնդմէջ:

Դոկտ. Ա. Փաշայեան

* *

Եւ արծիւ մի սև իջաւ սրարշաւ,
իջաւ երկնքից և կուրծքս փշրեց.
Եւ սիրտս կտցեց, և սիրտս տարաւ
Դէպի վեհ լեռներ, ժայռեր բարձրաբերձ:

Նետեց նա սիրտս վառ լազուրի մէջ՝
Խրոխս բարձրունքին հզօր լեռների.
Եւ շուրջս այն օրից լսում եմ անշէջ
Շառաչումները արծուի թերի...

Ար. Խոահակեան

ԳԵՆԵՐԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԸՏԵՎԸՆՈՍՈՒԹԻՒՆ

Н. Марр. Аркаунъ, монгольское название христианъ, въ связи съ вопросомъ объ армянахъ—халкедонидахъ. СИБ., 1905.

Ա.

Մինչև այժմ պրոֆէսոր Մատի գիտական անխոռնջ աշխատութիւնները մի շաբք էական նորութիւններ են մտցրել հայոց պատմութեան և հին գրականութեան քննական ուսումնասիրութիւնների մէջ։ Ժամանակ է, կարծեմ, ասել, որ յարգելի գիտնականը այս լրջանում արդէն խոշոր ծառայութիւններ է մատուցել։ Քննականութեան մէջ նա նոր տեսակէաններ հաստատեց, մի ամբողջ նոր ուղղութիւն ստեղծեց։

Ինչպէս յայտնի է, հայագիտութիւնը եւրոպայում, ապա և մեղանում, գործադրեց այն քննական մեթոդը, որ XIX դարի պատմական հետազօտութիւնների հիմքն է կազմում։ Դա հիմնուած է մի վերին աստիճանի ճիշտ ըմբռնումի վրայ։ Ազգերը միմիանց հնաւ գրացիութիւն են արել, միմիանց վերաբերմամբ հապատակի և տիրողի գերելում են գտնուել, միմիանց վրայ ազգել են, միմիանց համար միջնորդ են հանդիսացել կուլտուրական—մտաւոր գործունէութեան ասպարէզում։ Այդ պատճառով չէ կարելի վերցնել մի ազգի անցեալը իբրև մի կղզիացած, բոլորովին անջատ, ինքն իրանից միայն կախուած իրականութիւն։ Այդ անցեալի հարցերը պարզելու համար պէտք է դիմել հարեան ազգերի պատմութեան և գրականութեան, համեմատութիւններ անել, գտնել ազգիւրներ և այդպիսով ամրարած նիւթերով քննականի, որոշ եղակացութիւններ գուրս բերել։

Իր հին պատմական կեանքի ընթացքում Հայաստանը ենթարկուել է Պարսկաստանի, Ասորեստանի, Հռոմի ալլեցութիւններին։ Ամենից շատ օրեեղ է եղել մանաւանդ Պարսկաստանի աղղեցութիւնը։ Մենք ունենք շատ վկայութիւններ, որ այդպէս է եղել, բայց գիտութիւնը դեռ չէ պարզել այդ աղղեցութեան ամբողջ պատկերը։ Զրադաշտական Պարսկաստանը,

ինչպէս ենթադրւում է, գրաւոր լիշտակարաններ չի թողել. Բայց մենք կարող ենք ասել, որ մահմեղական Պարսկաստանի ազգեցութեան չափն էլ չէ որոշուած. այդ ժամասակների գրաւոր աղբիւրները անյայտ են միում և նրանց օգնութեամբ չէ կարելի, առայժմ գոնէ, սրբազնելու լրացնել հայոց պատմութիւնը: Հոռմէական, մակեդոնական շրջանների մասին էլ չի կարող համեմատութիւնների խօսք լինել, քանի որ այդ ժամանակների հայաստանը չէ ունեցել գրականութիւն, ուստի գիտութիւնը պիտի վերցնէ միայն այն տեղեկութիւնները, որ տալիս են արևմտեան գրաւոր աղբիւրները:

Քրիստոնէութիւնը հայ ազգին տալիս է և գրականութիւն: Դա համարեա գլխովին կրօնական մի գրականութիւն է: Հայոց պատմութեան այդ շրջանից էլ հայագիտութիւնը կարող է գործակել իր ուսումնական մեթոդը: Բայց քրիստոնեայ հայաստանի գրականութիւնը արդէն քրիստոնեայ ազգերի ազգեցութիւնը կարող էր կրել իր վրայ: Այդ ժամանակ այլևս չուո՞ւ Մակեդոնական պետութիւն չկայ: Կայ Բիւզանդիա, Հայաստանի սահմանակիցը և նրա մի մասի տէրը, ժամանակի քրիստոնէական գիտութեան՝ կենտրոնն ու ամենամեծ հեղինակութիւնը:

Այդ հեղինակութիւնն էլ զլիսաւորապէս ի նկատի ունէր հայագիտութիւնը: Հայ աղբիւրները համեմատուած էին յունական աղբիւրների հետ: Այդ համեմատութիւններից շատ հետաքըրքրական հանգամանքներ էին դուրս բերւում, բայց միակողմանիութիւնը այն բանի մէջ էր, որ չէր խախտում հայ աղբիւրների վրայ դարերով հաստատուած այն միաքը թէ քրիստոնէութիւնը Հայաստանուած սկզբից և եթ յունական ծագում ունէր, յունական միսիոնարութեան արդիւնք էր:

Վերջին ժամանակները ուշադրութիւն դարձրուեց և Փոքր Ասիայի այն շատ նշանաւոր, գործունեայ ազգի վրայ, որ յայտնի է սիրիացիներ անունով: Սիրիացիները¹⁾ շատ վազ հանդիսացան քրիստոնէութեան գործիչներ. նրանք եռանդուն միսիոնարական գործունէութիւն սկսեցին Ասիայում, ունեցան իրանց լեզուով գրականութիւն:

Մեր պատմութիւնը որքան էլ ճիզ է թափել ցոյց տալու թէ Հայաստանը յունական քրիստոնէութիւնը ընդունեց, դարձեալ չէ կարողացել ջնջել բազմաթիւ այնպիսի հետքեր, որոնք

1) Մեր հին մատենագրութեան մէջ կոչում են ասորիներ: Բայց մեզ թւում է թէ աւելի յարմար է գործածել սիրիացի անունը, մանաւանդ որ ասորի ասելով, կարելի է հասկանալ և հին ասորեստանցիները:

վկայում են թէ սիրիացիներն էլ մեծ գործ են կատարել Հայաստանում իբրև քրիստոնէութեան քարոզիչներ և ուսուցիչներ։ Սակայն այս հանգամանքի վրայ հայադիտութիւնը հարկ եղածի չափ մեծ ուշագրութիւն չէր դարձնում։ Պրոֆեսոր Մառ լըրացրեց այդ պակասը, ուշագրութեամբ ուսումնասիրելով սիրիական ազգեցութիւնը այն աղբիւրներով, որ տալիս էր սիրիական հին գրականութիւնը։

Մի կողմից այս ուսումնասիրութիւնը առաջ տանելով, պ. Մառ միւս կողմից հրապարակ բերեց մի նոր ուսումնասիրութեան ճիւղ էլ, որ մինչև այդ համարեա անյայտ էր։ Իս վրաց գրականութիւնն է։ Մանրակրկիտ համեմատութիւնների, վերլուծումների միջոցով։ Պ. Մառ լոյս հանեց հին աշխարհի մի շատ հետաքրքրական տեսարանը, այն է՝ սիրիական—հայկական—վրացական քրիստոնէութիւն։ Նշանակում է, որ սիրիացիների ձեռքով քրիստոնէութիւնը տարածուեց Հայաստանում, իսկ Հայաստանի միջոցով Վրաստանում։ Քրիստոնէութեան հետ մենք միշտ պիտի հասկանանք և գրականութիւնը։ Ուրեմն՝ սիրիացիները հայերի ուսուցիչներ, հայերը՝ վրացիների ուսուցիչներ։ Այս հաստատում է ո. Գրքի թարգմանութիւններով։ Հնագոյն հայկական թարգմանութիւնը եղել է ասորերէնից, իսկ վրացականը՝ հայերէնից։

Շատ թանկագին են այն տեղեկութիւնները, որոնք պրոֆեսոր Մառի աշխատութիւններով գալիս են հաստատելու հին հայ-վրացական յարաբերութիւնները։ Թէ որքան ոերա պիտի լինէին այդ յարաբերութիւնները, որքան բարեկամական, կարելի է եզրակացնել նրանից, որ երկու ազգերի եկեղեցին մի էր և անբաժան, իսկ հին աշխարհում, ինչպէս յայտնի է, եկեղեցին կլանում էր նոյնիսկ ազգային հասկացողութիւնը։ Պ. Մառ, բացի կրօնական միութիւնից, յայտնել է և մի շատ համարձակ հիպոտեզ, այն, որ հայերէն և վրացերէն լեզուները, գոնէ նախա-արիական շրջանում, մի արմատից են ծագել։ Բայց այս ենթագրութիւնը պ. Մառ դեռ հրապարակ չէ հանել մահրամասն մշակուած մի ուսումնասիրութեան մէջ։

Անկախ լեզուական եզրայրութեան հարցից, պ. Մառի բեղմնաւոր գաստակները լի են վերին աստիճանի հետաքրքրական փաստերով հայ-վրացական գրացիութեան կամ կարելի է ասել՝ կենակցութեան մասին, որ տեսել է երկար դարեր։ Խորասուզուելով այդ անսխալ յիշատակարանների շրջանի մէջ և մտաբերելով ներկան, անհասկանալի է թւում թէ ինչու այդ երկու ազգերը ներկայում իրար խեթ են նայում, իրարից հեռու են մնում։ Նախապաշարմունքները խցել են պատճութեան վճիռ

աղբիւրը, այն պատմութեան, որ հաստատում է երկու ազգերի մերձաւորութիւնը, աշխատակցութիւնը կուտուրայի և մտաւոր գործունէութեան ասպարէզում: Մի ժամանակ հայի սուրբը վրացու սուրբն էլ էր, վրաց եկեղեցում երգում էին շարականաներ ի պատիւ հայ սուրբերի. մի ժամանակ հայի գիրքը առաջնորդում էր վրացուն դէպի մտաւոր գանձերը: Խսկ այսօք...

Բաժմանումը հայերի և վրացիների մէջ տեղի ունեցաւ եկեղեցիների բաժանման հետ: Կրօնական անհաշտութիւնը դարձաւ և ազգային անհաշտութիւն: Վրացիները ասում են և այսօք էլ կրկնում են թէ հայերը բաժանուեցին վրաց եկեղեցուց և ոչ թէ հակառակը, ինչպէս պնդում են հայերը: Պ. Մառը ապացուցել է որ ճշմարտութիւնը աւելի հայերի կողմն է: Հայ-վրացական եկեղեցին մի էր, միևնույն աւանդութիւններով, միենոյն սկզբունքներով էր զեկավարում: Վրացիները յարեցին բաղկեդրնականութեան, այսինքն յունական օրթոդոքսութեան և սկսեցին դրա հովանու տակ ազգայնացնել իրանց եկեղեցին: Խսկ հայերը մնացին սիրիական քրիստոնէութեան կարգերի շրջանում և այդպէս ազգայնացրին իրանց եկեղեցին: Որ հայոց եկեղեցին է որ հին աւանդութիւնները պահպանել է, երեսում է պ. Մառի բերած մի քանի փաստերից: Վրաց եկեղեցին մինչև բաժանումը ընդունում էր մատաղը, առաջաւորաց պասը¹⁾: Խսկ բաժանուելուց յետոյ, հետևելով յոյներին, դատապարտում էր այդ բաները, մոռանալով որ իր հին պաշտամունքներն են:

Հետեւ յարգելի գիտնականի բոլոր հայ-վրացական ուսումնասիրութիւններին այստեղ մենք չենք կարող: Ներկայ յօդուածն էլ այդպիսի յատուկ նպատակ չունի: Մինք միայն կամեցանը ծանօթացնել ընթերցողին պ. Մառի գիտնական գործունէութեան առանձնայատկութիւնների հետ: Եւ կարծում ենք որ այսքանն էլ բաւական է այդ ծանօթութեան համար: Խսկնուրոյն, նոր, հարուստ լուսաբանութիւններով ճոխացնել գիտութիւնը, հետարբրական նիւթեր ամբարել հայոց պատմութեան և զրականութեան քննական ուսումնասիրութիւնների համար—ահա պ. Մառի շատ գնահատելի երախտիքը:

¹⁾ II. Марръ—«Отчетъ о работахъ на Синаѣ и въ Иерусалимѣ», 12—13:

Բ.

Պրոֆէսոր Մառի նոր աշխատութիւնը, որի վերնագիրը դրինք ներկայ յօդուածի ճակատին, գրուած է մի հատ բառի առիթով: Այդ բառն է «արքայուն»:

Մոնղոլական տիրապետութեան ժամանակ (XIII դարից) հայերի մէջ, ինչպէս երևում է, բաւական գործածական է դառնում այդ «արքայուն»-ը: Այսպէս, Ստեփանոս Օրբելեան պատմագիրը մանրամասն պատմում է որ իր հօրեղբայր Սմբատ իշխանը գնում է, ահազին տարածութիւններ կարելով, մոնղոլական խանի մայրաքաղաքը, Ղարաղորում: Այդ ժամանակ թագաւորում էր Մանկու խանը կամ ղանը: Նա այնքան սիրում է հայ իշխաննն, որ յանձնում է նրան իր մօրը և ասում է. «Զայս մի արքայունս մնեք պահեսցուք և ոչ տացուք այլ ումեք իշխել ի վերայ գորա»: Օրբելեանը բացատրում է և «արքայուն» (Ճիշտը՝ արքայուն) բառի նշանակութիւնը: Նա ասում է թէ մոնղոլները այդ անունն էին տալիս քրիստոնեաներին:

Նոյն մաքով «արքայունը» գործ է ածումն վարդան պատմագիրը: Պրոֆեսոր Մառ մի ուրիշ հանգամանք է որոնում մոնղոլական այդ անուան մէջ, ուստի նախ քան նրան իր ենթադրած նշանակութեամբ բացաարելը մի երկար և վերին աստիճանի հետաքրքրական տեսութիւն է անում քաղկեդոնիկ հայերի մասին:

Նախ և առաջ, երկու խօսքով ծանօթացնենք քաղկեդոնիկ և հակաքաղեկելոնիկ քրիստոնէութիւնը:

Յայտնի է որ հինգերորդ դարի կէսում, Կ. Պոլսի մօտ, Քաղկեդոն քաղաքում, գումարուեց եկեղեցական ժողով, որ մըշտակեց դաւանաբանական մի քանի սկզբունքներ: Քաղկեդոնի ժողովը ահազին վէճեր և անհամաձայնութիւններ յարուցեց արևելեան քրիստոնէութեան մէջ: Շատ տեղեր մերժեցին այդ ժողովի որոշումները. եկեղեցին, որ մինչև այդ մի մեծ միութիւն էր կազմում, պատակտուեց: Բաժանումներ առաջացան, թշնամութիւն բորբոքուեց քաղկեդոնականների և նրանց հակառակորդների մէջ: Այսուեղից ահաքաղկեդոնիկ և հակաքաղկեդոնիկ քրիստոնեաների: Նրանց մէջ թշնամութիւնը դարեր տևեց և այսօր էլ չէ դադարել. այսօր էլ, մեր աչքերի առջև, զործում է, աշխատելով ամուր պահել դարաւոր նախապաշտարմունքների և ատելութեան պարիսպները, որոնք անջատում էին քրիստոնեայ:

Հայոց եկեղեցին նոյնպէս մերժեց Քաղկեդոնի ժողովը և դարձաւ անհաշտ հակաքաղկեդոնիկ:

Դա մի ահազին երևոյթ է մեր պատմական կեանքի մէջ, մի երեսոյթ, որ Հայաստանի քաղաքական ճակատագրի տէրը դարձաւ և փոխեց պատմութեան ընթացքը: Հարցը մենք չպիտի քննենք դաւանական տեսակէտից. մենք չպիտի փորձենք իմանալ թէ ով էր խկապէս ուղղափառ բրիստոնեան—քաղկեդոնիկը թէ էր հակաքաղկեդոնիկը: Ուղղափառութեան, ճշմարիտ կրօնի հարցերը ոչինչ նշանակութիւն չունեն մեզ համար: Քաղեդոնում հաւաքուած եկեղեցական հայրերը քննում էին թէ Քրիստոս քանի՞ բնութիւն ունէր և գտան, որ երկու բնութիւն կար նրա մէջ: Միւս եկեղեցական հայրերը չընդունեցին այդ վճիւը. նրանք էլ այնպէս էին հասկանում թէ Քրիստոսի մէջ երկու անխառն բնութիւն չկային, այլ ընդհակառակըն, երկու բնութիւնները խառնուած էին իրար հետ: Ո՞վ կարող է ասել թէ անպայման ճիշտ է մի կողմը և ոչ թէ միւրը: Այդպիսի մտքեր չեն կարող լինել անհերքելի ճշմարտութիւններ: Ամեն մէկը բնդունում է հաւատալիքը այնպէս, ինչպէս ինքն է հասկանում:

Հայոց եկեղեցին առանձնացաւ, սկսեց պաշտել իր կրօնը այնպէս, ինչպէս ինքն էր հասկանում: Ոչինչ դատապարտելի, ոչինչ անբնական բան չկայ այդ երևոյթի մէջ: Բայց դժբախտութիւնը, ուղղակի մեծ աղէտն այն է, որ քրիստոնեայ աշխարհը այդպիսի հայեացը շունչը եկեղեցական ինքնուրոյնութեան մասին: Հայաստանը շրջապատուած էր քաղկեդոնիկ աղքերով և պիտի անդադար ընդհարուէր նրանց հետ իր ազգային եկեղեցին պաշտպանելու համար: Բաւական է մի թեթև հայեացը զցել մեր պատմութեան վրայ և մենք միանդամայն կապշենք աեսնելով թէ ինչ անվերջ, բառիս բուն նշանակութեամբ անվերջ պայքար է մղել մեր ազգը քաղկեդոնութեան դէմ, զոհ բերելով իր քաղաքական շահերը, հարիւր ու մի տառապանքների ենթարկուելով:

Մեր պատմագիրները աւանդում են թէ ինչ ջանքեր են զործ զրել բիւղանդական յոյները, ապա և զրացիները՝ իրանց քաղկեդոնական ուղղափառութիւնը մեր վզին փաթաթիլու համար: Յայտնի է որ մեր կաթողիկոսներից շատերը ընդունել են քաղկեդոնականութիւն, յայտնի է որ անխոնջ մրցութիւններ և վէճեր են տեղի ունեցել մեր հոգևորականների մէջ, ուրոնցից մի քանիսը ընդունել են քաղկեդոնիկ դաւանութիւն միւսները գիւմադրել են, սլաշտպանել են ազգային եկեղեցին:

Բայց եղել է արդեօք և բաղկեդոնիկ ժողովուրդ, բաղկեդոնիկ հայութիւն։ Եթէ նայենք մեր պատմագիրներին, —չէ եղել։ Անհատներ այս ու այն ժամանակ եղել են, բայց բազմութիւն չէ եղել։

Ահա այստեղից էլ պլոփէսոր Մառ սկսում է իր ըննութիւնը։

Նա դանում է քաղկեդոնիկ հայութիւն, այնքան բազմաթիւ, այնքան ուժեղ, որ մի շարք դարերի ընթացքում Հայաստանի հողի վրայ ուղղակի կոփւ է մղում քաղկեդոնիկների և հակաքաղկեդոնիկների մէջ գերիշխանութեան համար։ Դա կեանքի և մահուան խողիր էր։ Եղան ժամանակներ (Վլլ դար) երր հակաքաղկեդոնականութիւնը Հայաստանի մէջ ծանր հարուածներ էր կրում. թւում էր թէնա պիտի կորցնէ իր գերիշխանութիւնը, թւում էր թէ քաղկեդոնականութիւնը վերջնական յաղթանակ պիտի տանէ։ Բայց պատերազմի բախտը հետզհետէ թեքում է ազգային եկեղեցու կողմը, հետզհետէ նա յաղթում է, դուրս մղելով հակառակորդին իր գիրքերից։

Այդ պատերազմը, այդ յաղթանակը էժան չնստեցին հայութեան վրայ։ Քաղկեդոնիկ հայերը, պարտութիւն կրելով, սկսեցին հեռանալ իրանց ազգութիւնից, օտարանալ։ Երեք կը խաւոր խուճք է որոշում պ. Մառը. Հայաստանի այն մասը, որ ոսհմանակից էր քաղկեդոնիկ Վրաստանին, վրացացաւ. Յունական բաժնի հայութեան քաղկեդոնիկ մասը ձուլուեց յոյների հետ, իսկ Սիրիայի կողմերում սիրիացի քաղկեդոնիկները կլանեցին իրանց դաւանակից հայերին։ Թուանշաններ ու որոշ տեղեկութիւններ չկան, իհարկէ, որպէսզի իմանանք թէ որքան մեծ էին Հայաստանի կորուսները դաւանական խորութիւնների պատճառով։ Կարելի է խօսել ենթազրաբար։ Վրաց գրականութեան և հնագրութեան առած տեղեկութիւնները առաջնորդ բնելով, պ. Մառ ցոյց է տալիս վրացացած հայութեան երկիրները—Կախէթի մի մասը, Գուգարք նահանգի Կղարջք (վրաց Կլարջէթի) գաւառը և ամբողջ Տայք նահանգը (Ճորոխի հովտում)։ Խ դարի սկզբում Կղարջքը և Տայքը, հայկական հին հողեր, դարձեալ հայերի ձեռքումն էին¹⁾։ Արտանուճի Բագ-

1) Քուցէ աւելորդ չի լինի յիշեցնել այստեղ որ վրացի շովինիստները (իշ. Ճավճավաձէ, Ծերեթելի և ուրիները) մի քանի տարի առաջ ահադին վայնասոն էին ըարձրացրել թէ հայերը համարձակում են սաել որ Ճորոխի երկիրը, Կղարջքը հայկական սեփականութիւն են եղել։ Ինչ Կ'ասեն այդ թունդ, բայց տղէտ ազգամոլները այժմ, ոլ, Մառի այս զործը կարդալուց յետոյ...

բատունիները այդ ժամանակ արդէն քաղկեդոնիկ էին դարձել, ուրեմն այդ ամբողջ երկրներում հայութեան մէջ էլ նոյն դաւանութիւնը շատ պիսի տարածուած լինէր: Բայց այդ հայութիւնը վրացացաւ, երբ յաղթանակեց հակաքաղկեդոնականութիւնը:

Պ. Մառ այսուեղ մի ամբողջ նոր աշխարհ է բաց անում: Զափազանց հետաքրքրական է նրա հազորդած մի փաստը, որի վրայ չենք կարող կանգ չառնել, այնքան նա բնորոշ է ոչ միայն անցեալի, այլ և նոյնիսկ ներկայի նկատմամբ:

Խ գարի երկրորդ կեսում յոյները կարողացան ինտրիվաներով և խարէութեամբ Կ. Պոլիս տանել Գագիկ վերջին թագաւորին և յափառակել Անին: Մատթէոս Ռւահայեցին ասում է թէ յոյները Անիի կառավարութիւնը յանձնեցին իրանց երկու պաշտօնեաներին, մէկի անունն էր Բագարատ, միւսինը՝ Գրիգոր Բակուրամսի որդի: Վերջինիս մասին ասուած է թէ ազգով վրացի էր: Պատմիչը այդ երկուունին տնուանում է «անօրէն իշխան Հոռոմոց», «Աստուածուրաց»: Զմուանանը որ Ռւահայեցին հակաքաղկեդոնիկ գրող է:

Այժմ պրոֆեսոր Մառի աշխատութիւնից խմանում ենք, որ Բակուրամի որդի Գրիգորը վրացի չէր, այլ հայ, քաղկեդոնիկ հայ: Իր ժամանակին դա մի նշանաւոր մարդ էր, յայտնի էր Բիւզանդիայում իրեն պետական գործիչ և վարչական մարդ, որ իր մատուցած ծառայութիւների համար ստացաւ խշոր կալուածներ պետութեան լանգան մասերում, մանաւանդ Բոլգարիայում: Այդտեղ նա հիմնեց մի նշանաւոր վանք, որի կանոնադրութիւնը, Գրիգորի ստորագրութեամբ մնացել է մինչև այժմ և հրատարակուած է: Կանոնադրութիւնը գրուած է յունարէն լեզուով, բայց ունեցել է և վրացերէն ու հայերէն թարգմանութիւններ: Ինքը, Գրիգոր Բակուրիանը, կանոնադրութեան տակ ստորագրել է հայերէն և առանձին յունարէն մակագրութեամբ էլ վկայել է թէ իր ստորագրութիւնը հայերէն լեզուով է:

Ուրեմն հայ է: Բայց ինչու Ռւահայեցին վրացի է անուանում նրան: Ուրիշ կերպ չէր կարող, քանի որ ինքը Բակուրեանն էլ ասում է թէ ինքը վրացի է: «Ամեն մի հայ քաղկեդոնիկ, որ նոյնիսկ հայերէնը տւելի լաւ գիտէր քան վրացերէնը, նրա կարծիքով, վրացի է՝ հաւասար զուտարիւն վրացու», ասում է պ. Մառ:

Այսորուայ օրն էլ միենոյնը չենք տեսնում: Հայ-կաթողիկը իրան համարում է «Փրանկ», բողոքական հայը՝ «ներմեց» և այլն: Կրօնը իրեն ազգութեան նշան—այս դժբախտ մոլորու-

թիւնը մենք ժառանգել ենք, ինչպէս տեսնում էք, խոր հնութիւնից:

Տայք-Կղարջքը հայոց երկրի ամենալաւ մասերից էին և նրանցով հարստացաւ Նրաստանը: Վրացիանալոց յետոյ էլ երկիրը երկար ժամանակ պահում էր հայ վանքերի անունները — Շատքերդ, Իշխան, Միջնաձոր:

Թէ Բիւզանդիան ինչ պատառ է խլել հայութիւնից քաղկեդոնիկութեան միջոցով,—պ. Մաս որոշապէս ասել չէ կարողանում: Սակայն անկասկած է որ այդ պատառը աւելի խոշոր, աւելի նշանաւոր պիտի լինէր: Բիւզանդիայի արքունիքը իր շքեղ փայլերով դէպի իրան էր քաշում հայոց աշխարհի լաւագոյն ոյժերը, որոնք այնտեղ, ահազին կայսրութեան մէջ, իւրանց հոչակում էին զինուորական և վարչական տաղանդով: Մինչդեռ բուն երկիրը վնալով զատարկւում էր, թուլանում, հայերը բիւզանդական ժառայութեան մէջ մեծամեծ գործեր էին կատարում իրքև զինուորական ոյժ, իրքև զօրավարներ և նոյնիսկ կայսերական գահի վրայ էին նստում: — Պատմութիւնը բազմաթիւ փաստեր է տալիս: Պ. Մասի ասածին նայելով, մենք պէտք է ենթադրենք որ այդ գործիչները քաղկեդոնիկ հայեր էին: Եւ հաւանական է որ այդպէս էլ եղած լինի: Ուրիշ կերպ չէ կարելի բացատրել այն անտարբեր վերաբերմունքը, որ ունէին Բիւզանդիայի հայ կայսրները, զօրավարները դէպի իւրանց հայրենիքի դժբախտ դրութիւնը...

Եատ հետաքրքրական է այն լուսաբանութիւնը, որ տալիս է պրոֆեսոր Մաս «ծաթ» անուան տակ յայտնի հայերին: Դրանք յունադաւան հայեր էին, ինչպէս երեսում է պ. Մասի բերած մի յունական զբանը աղբիւրից, որի սլաւոնական թարգմանութիւնն է նս ունեցել ձեռքի և.ակ: Բանից երեսում է, որ ծագերը, իրքև հայեր, կասկածներ էին յարուցանում յունական օրթոգրափութեան աշխարհում: Եւ մի քանի յոյն եկեղեցականներ հարկադրուած եղան գրել և ալացուցանել թէ դրանք «հերետիկոս» հայերից չեն, այլ ուղղափառ են ըստ յունական գատողութեան:

Այժմ դիմենք սիրիական ազգեցութեան ենթարկուած քաղկեդոնիկ հայերին:

Այստեղ պրոֆեսոր Մաս չէ հետեւում հայ քաղկեդոնիկների դոյութեան բուն Սիրիայում, այլ ձեռք է առնում և շատ հետաքրքրական տեսութիւններով լուսաբանում է մեր պատմութեան մի ուրիշ նշանաւոր երեսոյթը—գաղթականութիւնը: Սովորաբար մենք ընտունում ենք որ հայերը հեռանում էին իւրանց հայրենիքից քաղաքական դժբախտութիւնների պատճառով.

գալիս էին նուաճողները, քարուքանդ էին անում երկիրը և ազգաւ բնակութիւնը փախչում էր աշխարհի զանազան կողմերը։ Այս հանգամանքի վրայ կարելի է աւելացնել և մի երկրորդը, այն՝ որ առեւտրական ոգին էր հային հանում իր երկրից։ Պրոֆեսոր Մառ ասում է որ զաղթականութիւնը աւելի ազգայնական զգացմունքը կորցնելու հատևանք պլիսի համարելու նա բերում է Ղազար Փարսպեցուց մի վկայութիւն, որի մէջ ասուած է. «Կամ կ'ապրենք, ծառայենով Ջրիստոսի ծշմարիտ հաւատին, որի մէջ ծնուել ենք... կամ, թողնելով երկիրը, կը գնանք օտար կողմեր, իւրաքանչիւրը իր կնոջ և երեխաների հետ, հաստատ հաւատալով Փրկչի այն խօսքերին թէ «երբ ձեզ հաւածեն այս քաղաքից, փախեք ուրիշ քաղաք»։

Իրաւ, շատ մի բնորոշ փաստ է սա, որ ցոյց է տալիս թէ կրօնը հին գարերում որքան ոչնչացնում էր ազգութեան, հայրենիքի զաղափարը։ Եւ որովհետև հալածուող կրօնն էր զլխաւորապէս, որ ազգայնութիւնը կորցնել էր տալիս, ուստի պ. Մառ կարծում է թէ Հայաստանից զաղթողները, գոնէ առաջին գաղթողները, քաղկեդոնիկ հայերը պիտի եղած լինեն։

Այնուհետև յարգելի զիանականը մանրակրիտ ուսումնասիրութիւններով պարզում է որ հայկական մի զաղթականութիւն հին ժամանակներից ուղղուած է եղել զէսի Միջին Ասիա։ Մանրամասնութիւնների մէջ չենք մտնում, թէ չէ հարկադրուած պիտի լինէնք ամբողջ երեմներ թարգմանել պ. Մառի աշխատութիւնից։ Կ'ասենք միայն, որ այդ միջին-ասիական զաղութիւն վերաբերուած ուսումնասիրութիւնները թանգազին նիւթեր են մեր պատմութեան էջերից մէկը լուսարանուելու համար։

Ընդունելով հայ-քաղկեդոնիկների գաղթը զէպի զանազան կողմեր, պ. Մառ ենթաղրում է որ Միջին Ասիա զաղթողները պիտի լինէն Սիրիայի հայ-քաղկեդոնիկները։ Ահա այդ գաղթականներից էլ վերցրած պիտի լինեն մոնղոլները «արքաուն» անունը։ Բանից գուրու է գալիս, որ «արքաուն» զրադեցրել է և եւրոպացի, նոյնալիս և ուստ զիանականներին, որոնք զանազան կեզ են բացատրում նրա ծագումը, ունեցած նշանակութիւնը։ Պ. Մառ շատ սրամիտ կերպով առարկում է այդ բացատրութիւնների դէմ և մի շարք եղբակացութիւնների հիման վրայ հիմնում է իր սեփական հիւպոթեզը. այն, որ «արքաուն»-ը յատկապէս քաղկեդոնիկ քրիստոնեանների անունն է։ Բառը մոնկուական չէ, փոխառած բառ է։ Նրան կարելի է բացատրել հայերէն «արքայ» բառի միջացով։ Սիրիայի քաղկեդոնիկները կոչւում էին մելքիտ, որ նշանակում է թագաւորական։ Նոյնիւրնը, 1905.

Այս «արքառւն» էլ նոյն մտքով պիտի զործ ածուած լինի հայ քաղկեդոնիկների վերաբերմամբ:

Հետևելով այդ ենթադրութեան, պէտք է ընդունել որ մոնղոլական տիրապետութեան ժամանակ Հայաստանում տարածուած այդ անունը—«արքառն» պատկանում էր այն հայ քաղկեդոնիկներին, որոնք ապրում էին երկրում: Եւ պ. Մաս այդպէս էլ անում է:

Դ.

Մենք պատմեցինք այս գիտնական աշխատութեան բովանդակութիւնը, ցոյց տուենք նրա արժանաւորութիւնները, տեսանք թէ որքան նորութիւններ է նա մտցնում մեր պատմութիւնը ուսումնասիրելու նիւթերի մէջ:

Այժմ պատմենք միը ստացած մի քանի տպաւորութիւնները:

Ինքը, յարգելի գիտնականը, մի քանի անգամ ասում է թէ իր ասածների մի մասը հնաթադրութիւն է, թէ ամեն ինչ այդ աշխատութեան մէջ չէ ապացուցուած, թէ մի քանի հարցերի վերաբերմամբ նա, այսպէս ասած, ուղղութիւն տուողի, միաբ տուողի գեր է կատարում:

Եւ իրաւ, կան տեղեր այդ աշխատութեան մէջ, որոնք համոզիչ են, կան և մի երկու փաստեր, որոնք, մեր կարծիքով, բոլորովին այն չեն հաստատում, ինչ կամենում է ապացուցանել պ. Մասը:

Մեզ բաւական թոյլ են թւում յարգելի զիտնականի մի քանի հնաթադրութիւնները քաղկեդոնիկ հայերի կատարած կուլտուրական դերի մասին: Սյուպէս, նա ասում է որ եթէ հայքաղկեդոնիկները չեն հայոց գրականութեան հիմքը զնողները, պէտք է ընդունել որ նրանք են եղել յունաց փիլիսոփայութիւնը և սորուաստիկան հայկական հոգի վրայ անկողները: Քաղկեդոնականութիւնը նա համարում է մի առաջադէմ (ոլրոպերիսիւ) կրօնական-կուլտուրական շարժում (եղ. 67), իսկ մենք այս խօսքերից պիտի ելլակացնենք թէ քաղկեդոնականութեան դարաւոր հակառակորդը—հայ եկեղեցականութիւնը յետագէու կամ անշարժ հայեացքների տէր էր:

Նախ և առաջ, այս բոլոր ենթադրութիւնները հասաւատելու կամ հաւանական գարձնելու համար պ. պրոֆեսորը չէ բերում ապացոյցներ, նոյնիսկ չէ յիշատակում թէ հայոց հին գրականութեան մէջ ինչ յիշատակարաններ պէտք է համարել քաղկեդոնական: Բայց երեսյթին, պ. Մաս չէ ընդունում, որ

հայը, հաւատարիմ մնալով հանդերձ իր ազգային եկեղեցուն, կարող էր աշակերտել յունական գիտութեան, ինչպէս օրինակ, այժմ հայ-լուսաւորչական հոգևորականը ուսում է ստանում բողոքական ասուածարանների մօտ, բողոքական երկրում: Ճիշտ է, նա գործ է ածում և «հելլենասէր» անունը հայ եկեղեցական գործիչների վերաբերմամբ, բայց դա մի անորոշ հասկացողական է ոչ—քաղկեդոնիկ, բայց յունական ուսում ստացած հայերին: Ընդհանուր տպաւորութիւնն այնպէս է, որ յունական կրթութիւն ստացած հայը անպատճառ քաղկեդոնիկ պիտի լինէր: Խսկ այս պէտք էր ապացուցանել: Պէտք էր ապացուցանել և այն, որ նախ քան Բաղկեդոնի ժողովը հայ եկեղեցականները չեն աշակերտել յունական գիտութեան, այսինքն որ հիմունքորդ գարի յունասիրական շարժումը տեղի չէ ունեցել իսկապէս և չէր կարող հելլենական մի գպրոց գտնալ հայկական հողի վրայ, մի դպրոց, որ ազգէր ապագայ դարերի հայ հոգևորականութեան վրայ:

Ապա պ. Մառ, մեծ հաւատ ընծայելով վրացական, այսինքն քաղկեդոնիկ մի աղբիւրի, հաստատում է թէ քաղկեդոնիկ հայերը սկզբում սաստիկ տոգորուած էին ազգային ողով, մինչդեռ նրանց հակառակորդները, այսինքն ազգային եկեղեցու ներկայացուցիչ հոգևորականները, զուրկ էին այդպիսի զգացմունքից: Յանկալի է, որ այդ հանգամանքը հաստատուած լինէր պատմական և գրական ապացոյցներով: Եւ այդ կարևոր է մանաւանդ այն պատճառով, որ ինքը, պ. Մառ, յետոյ քաղկեդոնիկ հայերին այնպէս է ներկայացնում, որ ազգային գիտակութեան մասին խօսք անփառ լինել չէ կարող: Գրիգոր Բակուրեանի պատմութիւնը, որ մենք վերհում բերինք, շատ լաւ ապացոյց է թէ քաղկեդոնիկների մէջ էլ որքան մեռած էր ազգային գիտակցութիւնը: Ընդունելով, լսու պ. Մառի, քաղկեդոնիկութիւնը նախ և առաջ իբրև պրոգրեսիվ կրօնական-կուլտուրական մի շարժում, երկրորդ՝ իբրև ազգային մատար կեանքի առաջնորդ և ազգութեան պաշտպան ընդդէմ հայ հոգևորականների անշարժութեան և հակառակային ուղղութեան, մենք չպիտի կարողանանք ըմբռւնել թէ ինչպէս արդ տարրը նախ՝ յաղթուեց պայքարի մէջ, երկրորդ՝ յաղթուելով, մկնեց արագ օտարամանալ, ձուլուել վրացիների, յոյների և սիրիացիների հետ: Դա մի տեսակ հանելուկ է:

Մեր տպաւորութիւնն այնպէս է, որ յարգելի գիտնականը փոքր ինչ չափազանցրել է քաղկեդոնականութեան նշա-

նակութիւնն ու կատարած դերը: Յենուելով հէնց այդ աշխատութեան յիշատակած կողմերի վրայ, մենք էլ իրաւունք ենք համարում ենթադրելու, որ եթէ քաղկեդոնականութիւնը պայքարի մէջ տանուլ տուեց իր գործը, պատճառը ամենից առաջ այն պիտի լինէր, որ նա շատ բազմութիւն չունէր իր կողմում և երկրորդ, որովհետեւ նրա գործադրած միջոցները, նրա ողին համակրութիւն չէին գտնում ազգի մէջ: Ինչ էլ ասելու լինենք, յունական քաղկեդոնականութիւնը վերջ իվերջոյ բիւզանդականութիւնն է, որ արդէն մի որոշ հասկացողութիւն է, իբրև անշարժութեան, քարացման համանիշ մի բան: Մեր կարծիքով, հայերի ոգուն ընդդէմ պիտի լինէր նաև և առաջ այն քաղաքական դերը, որ միշտ փաթաթուած էր յունական քաղկեդոնականութեան վզին: Նա իր հետ տանում էր բոնութիւն, հալածանք, Պ. Մաս յիշում է որ հայ ազբիւրները խօսում են բիւզանդական կայսրների գործ դրած ձնշումների, հարկադրանքների նոյնիսկ բրնութիւնների մասին, բայց ուշադրութիւն չէ դարձնում դրա վրայ:

Եւ մեզ թւում է, որ իզուր է այդպէս արել: Քաղաքական-հասարակական հանգամանքները այն միջավայրն են, ուր տեղի են ունենում այս կամ այն գաղափարների, հոսանքի պայքարները: Հայաստանը իր աշխարհազրական դիրքով այն նշանակութիւնը չունէր Բիւզանդիայի համար, ինչպէս Վրաստանը: Նա կը-ուռախնձոր էր Պարսկաստանի և Բիւզանդիայի մէջ: Հետևարար, հայերի վերաբերմաքը բիւզանդական արքունիքը ուրիշ նկատումներ պիտի ունենար, նկատումներ, որոնց իրազործումը յունական քաղկեդոնականութիւնը պիտի դրուխ բերէր: Ուզում ենք ասել որ ողատական հողը միակողմանի կերպով է լուսաբանուած այս կարևոր հարցի մէջ: Ինչնու, օրինակ, պ. Մաս այնքան նշանակութիւն է տալիս, որ մի քաղկեդոնիկ նըշշանաւոր գործիչ, Թէոփորոս Արիկուրա Հայաստան է զնացել քաղկեդոնական վիճարանութիւնների համար, բայց չէ յիշում որ Հերակլ կայսրը անձամբ գնաց Հայաստան, որ հարկադրէ հայերին ընդունել քաղկեդոնութիւն: Կամ ինչնու կամսդ շատնել հէնց Թէոփորոս Մշտունուգործունիութեան վրայ:

Սակայն, պիտի ասենք, որ պ. Մաս, ինչպէս ասում է իր աշխատութեան սկզբում, նպատակ չէ ունեցել քաղկեդոնական շարժման ամբողջ պատմութիւնը գրել և պարզաբանել. թէև այսպէս է, բայց այն յենակէաները, որոնց վրայ գիտնական պրոֆէսորը կանգնեցրել է իր տեսութիւնները, հիմնաւոր առարկութիւններ շատ են դերցնում:

Այժմ անցնենք մի երկու գլխաւոր յենակէտի, որոնք, ինչպէս ասացինք, բոլորովին սխալ են:

Պ. Մառ ասում է որ քաղկեդոնիկ հայերը միայն Հայաստանի ծայրերում չեին գտնւում: Նրանք ապրում եին և երկրի մէջ տեղերում, ունէին իրանց եկեղեցիները, նոյնիւակ թեմեր էին կազմում: Շատ կարելի է: Բայց պ. Մառ իբրև հաստատութիւն ըերում է այն, որ Անիի մէջ կար հայ քաղկեդոնիկի շինած մի եկեղեցի, հետեաբար և հայ-քաղկեդոնական էր այդ եկեղեցին: Ահա այստեղ պ. Մառի ապացոյցը բոլորովին համոզիչ չէ:

Անիի տւերակների մէջ այժմ էլ մնում է մի փոքրիկ եկեղեցի, հաւանականորէն տոհմային գամբարանի մի մատուռ, որ գատելով նրա վրայ եղած վրացերէն արձանագրութիւնից, աէտք է որ վրացիներին պատկանած լինի: Եթէ պ. Մառ այս եկեղեցին ցոյց տուած լինէր իբրև ապացոյց թէ քաղկեդոնիկներ կային Անիում, մենք ի՞նարէկ, ոչինչ չենք կարող ասել: Բայց քաղկեդոնիկ նա համարում է Լուսաւորիչ եկեղեցին, Նազղի-քիլիսէն, որ շինուած է քաղաքի ծայրում, Ախուրեանի ձորի վրայ: Ահա թէ ինչպէս:

Եկեղեցին շինուել է վրաց տիրապետութեան ժամանակ-ներում, 1215 թուականին: Շինողն է Տիգրան Հոնենցը, որ եկեղեցու հարաւային պատի վրայ մի երկար արձանագրութիւն ունի: Այդ արձանագրութեան մէջ պ. Մառ ուշագրութիւն է գար-ձել մի բառի վրայ—լսատեր: Խատ, ասում է նա, վրացերէն բառ է և նշանակում է պատկեր, ինչպէս յունարէն իկօն: Ահա այդ բառն էլ բաւական է համարում պ. Մառ, հաւաստիացնե-լու համար թէ Հոնենցը քաղկեդոնիկ էր և հայոց ազգային ե-կեղեցու անդամ լինել չէր կարող: Անշուշտ պ. Մառի համար մեծ նշանակութիւն է ունեցել այն, որ Հոնենցը հայերէն պատ-կեր բառը չէ գործ ածել, այլ քաղկեդոնիկ վրացիների խատը:

Տեսնենք թէ որքան ճիշտ է այդ: Բայց նախ բերենք ար-ձանագրութեան վիճելի կտորը: «Շինեցի—ասում Հոնենցը— զեկեղեցիս յանուն սրբոյն կուսաւորչին Թրիգորի և զարդարե-ցի բազում գարդիւք վրկական նշանաւք սուրբ խաչիւ ոսկիք և արծաթիք և պատկերագործ խատերով:»

Ամենից առաջ չի կարելի ասել թէ Հոնենցը խուսափել է հայկական պատկեր բառը գործ ածելուց: Այդ բառը, ինչպէս տեսնում էք, կայ և խատ բառը չէ գործ ածուած իբրև մի ինքնուրոյն հասկացողութիւն, այլ իբրև հայերէնի համանիշ: Եւ զարմանալի չէ որ մի հոմանիշ բառ գտնելու համար Հոնենցը դիմել է վրացերէնին: Վրացական ազգեցութեան ժամանակն

էր, ինքը Հոնենցը, Զաքարէ Սպասալարի մարդկանցից էր, իսկ Զաքարէն վրաց սպարապետ էր և յայտնի է թէ որքան մեծ յարգանքով էր վերաբերւում Թամար թագուհուն: Ոչինչ օտարութի հանգամանք չկայ, ուրեմն, որ Հոնենցը մի հատ վրացական բառ է գործ ածել իր արձանադրութեան մէջ: Եւ հիմնուել այդ մի հատիկ բառի վրայ անկարելի է:

Երկրորդ, նոյն արձանագրութիւնը ցոյց է տալիս որ Տիգրան Հոնենցը իր այդ եկեղեցին շինել է, որպէս զի նրա մէջ միշտ պատարագ մասուցվի իր տէրերի, այն է Զաքարէ սպասալարի Շահնշահ որդու և սրա որդիների արևշատութեան համար: Եթէ նա քաղկեդոնիկ հայ լինէր, չպիտի մոռանար և Զաքարէի եղբայր Խւանէին, որ իրապէս քաղկեդոնիկ էր, մինչդեռ Զաքարէն և նրա որդին հակաքաղկեդոնիկ էին: Խւանէի անունը չկայ, թէև Խւանէն, մանաւանդ Զաքարէի մահից յետոյ, Զաքարեան հոչակաւոր տոհմի աւագ ներկայացուցիչն էր, նոյնպէս շատ փառաւորուած:

Երրորդ, Տիգրան Հոնենցը, ինչպէս երևում է Ս. Լուսաւորչի արձանագրութիւնից, շատ հարուստ մարդ է եղել և առատաձեռն՝ եկեղեցիների վերաբերմամբ: Այդպիսի մարդը չէր բաւականանայ միայն Լուսաւորչի եկեղեցին շինելով: Եւ իրաւ, թէ Անիում և թէ շրջականերում մինք տեսնում ենք մի քանի արձանագրութիւններ, որոնց մէջ անշուշտ նոյն բարեգործ մարդըն է խօսում:

Մայր եկեղեցու վրայ 1213 թուին. «Ես Տիգրան ծառայ Քրիստոսի շինեցի հալալ ընչւր իմով զաստիճաններս»: Բացի այդ բարեգործութիւնից, նուիրել է եկեղեցուն իր կրպակը և եկեղեցական դրբեր, ոկիններ:

Դօշավանքում 1201 թուին. «Ի տէրութեան երկրիս Զաքարիաի ևս Տիգրան ծառայ Աստուծոյ և հաւատարիմ իմ պարոնին Զաքարիաի միաբանեցա սուրբ ուխտիս»: Նուիրել է իր ջրաղացը, որ գտնուում էր Անիի Գլխօրում:

Խծկոնքի եկեղեցիներից մէկի վրայ 1213 թուին. «Ես Տիգրան հաւաաարիմ ծառայ Մանդատորթա խուցէս ամիր սպասալար Շահնշահ Զաքարիայի տեսան իմոյ տեսի զպանութիւն սուրբ ուխտիս Խծկանից և թափուր յամենայն ընչից և վերատին նորոգեցի ամենայն պիտուաք և ապաւինեցա ի սուրբ Մայրս լուսոյ»: Նուիրել է ձիթահանք, այդի:

Որ այս երեշ արձանագրութիւնների մէջ յիշուած Տիգրանը միևնոյն անձն է, ցոյց են տալիս թուականները, որոնք շատ մօտիկ են Լուսաւորչի եկեղեցու շինութեան թուականին: Իսկ թէ այդ Տիգրան Հոնենցն է, այդ էլ, բացի թուականնե-

րից, ապացուցւում է երկու արձանագրութիւնների մէջ կրկնուած «հաւատարիմ իմ պարոնին Զաքարիայի», «հաւատարիմ ծառայ... Զաքարիայի տիկան իմոյ» խօսքերով։ Նոյն հաւատարմական գարձուածքները կան և կուսաւորչի եկեղեցու արձանագրութեան մէջ։

Հակաբաղկեդոնիկ եկեղեցիներին այսքան նուէրներ անող մէկը չէր կարող լինել քաղկեդոնիկ հայ։ Առել չէ կարելի թէ Զաքարէ սպասալարի իշխանութեան ժամանակ կրօնական այնպիսի համբերողութիւն կար, որ քաղկեդոնիկ հայը կարող էր նուէրներ անել հակաբաղկեդոնիկ եկեղեցուն, որ յունավրացական քաղկեդոնիկ օրթոդոքսութեան տեսակէտից հերձուածող եկեղեցի էր։ Եւ բացի զրանից՝ կոռու և Անիի եկեղեցական ժողովները ապացոյց են որ մանաւանդ այդ իսկ միջոցին մեծ էր անհաշտութիւնը այդ եկեղեցիների մէջ։

Կերջապէս, մենք ունենք չորրորդ, աւելի կարևոր ապացոյցը։ Մենք ունենք գարձեալ կուսաւորիչ եկեղեցու արձանագրութիւնը։ Պրոֆեսոր Մառ, այդքան մեծ նշանակութիւն տալով «խատ» բառին, ուշագրութիւն չէ դարձրել արձանագրութեան վերջի վրայ։ Այստեղ Տիգրան Հոնենցը անէծքներով հաստատում է իր կարդագրութիւնները։ և ի միջի այլոց ասում է. «Եւ երեք սուրբ ժողովոյն... նզովեալ եղիցի»։ Այդ երեք ժողովների յիշատակութիւնը ոչինչ կասկած չէ թողնում, որ Տիգրան Հոնենցը, ընդհակառակին, չէր ընդունում Քաղկեդոնի ժողովը, հակաբաղկեդոնիկ էր, այսինքն հայոց ազգային եկեղեցու անդամ։

Փանք այժմ «արքատն» բառին. Պ. Մառ բացատրելով այդ բառը իրրե քաղկեդոնիկ հայերի անուն, հիմնվում է գլխաւորապէս երկու արձանագրութիւն։ Խոկականը չէ բերում Մուրավեօվը։ այլ միայն նրա թարգմանութիւնը ուստի լեզուվ, որ այս է. «Я, Багратъ, сынъ Заропая Аркациуновъ, построилъ сии врата для входа въ обитель св. Григорія, въ лѣто... Ես Բագրատ, որդի Զարօպայի Արկացունեաց, շինեցի այս զուու Ս. Գրիգորի վարչի վանքը մտնելու համար... թուականին»։ Տարաբախտաբար, այդ արձանագրութիւնը այժմ չըկայ և մենք չը գիտենք թէ որքան լաւ է կարդացուել նա Մուրավեօվի ժամանակ։

Պ. Մառ վերցնում է, սրբագրում է «Արկացին» (Ար-

կացունեաց) բառը, հանելով «ց»-ն և դնելով նրա տեղը «յ»: Ստացւում է «Արկացիոն» (Արկայունեաց): Նա ասում է՝ հայերէն գլխագիր Յ-ն և Յ-ն այնքան իրար նման են, որ կարդացողը (Մուրավեօվ հայերէն չը գիտէր) խառնել է նրանց: Բայց ինչու յարգելի գիտնականը կարծում է թէ անպատճառ «Ց» տառն է եղել և ոչ Ծ, որ ոռուսերենում նոյնպէս Ս տառով է արտայատում, ինչպէս և իսկական Յ-ն (օրինակ, Արծրունի—Արցրուն): Զէ՞ որ արձանագրութեան մէջ կարող էր լինել «Արկածունի» և ոռու ճանապարհորդը գարձեալ ստիպուած պիտի լինէր զրել «Արկացի»: Յետոյ ի՞նչ երաշխաւորութիւն կայ թէ երրորդ տառը՝ անպատճառ հայոց ք տառն է արտայայտում: Զէ՞ որ ոռուսերը թէ «ը»-ի և թէ «կ»-ի համար այդ տառը—«Կ» միայն ունեն: Նայելով Մուրավեօվի ժամանակի արտասանութեան, և տառը կարող էր նոյն իսկ մեր «գ» տառը արտայայտել, որովհետև եթէ այն ժամանակ մի հայի առջև դնէինք «Արգածունի», նա պիտի կարդար «Արկածունի»: Բրոսսէն հասկացել է որ պէտք է զրել «Arcatzouni». իսկ Հ. Արիշանը, Բրոսսէի այս ընթերցուածի վրա հիմնուելով, կարծել է թէ պէտքէ լինի «Արգածունի», մի ենթադրութիւն, որ յամենայն դէպս նոյնքան հաւանականութիւն ունի, ինչպէս երևում է մեր առարկութիւնից, որքան պ. Մասի ընթերցուածքը:—

Արդ մի բոպէ ընդունենք թէ ձիշտը պ. Մասի ընթերցուածքն է և դռան վրա իսկապէս զրուած է եղել. «Ես, Բագդատ, որդի Զօրապայի Արքայունեաց»: Ի՞նչ զուրս կը գայ: Պ. Մաս ասում է թէ այստեղ էլ մեր «արքաուն» բառն է, որ ցոյց է տալիս թէ գուռը շինողը քաղկեդոնիկ հայ է: Եւ իրաւ, ի՞նչ գեղեցիկ զուզավիպութիւն. Տիգրան Հոսենցը շինում է քաղկեդոնիկ եկեղեցի և դէպի այդ եկեղեցին, այսպէս ասած, քաղեդոնիկ մուտք է բաց անում արդէն արքաուն Բագրատը, այսինքն մի ուրիշ քաղկեդոնիկ հայ: Բայց վիճելի բառի յոգնակի ձևը մեծ տարակուսանք է թողնում թէ պ. Մասը ձիշտ է վերականգնել ոռու ճանապարհորդի հաղորդած «Արկացիոն»-ը: Եւ իրաւ, ի՞նչ պիտի նշանակէր այսպիսի մի ձև—«Բագրատ, որդի Զօրապայի Արքայունեաց կամ Արքայունից»: Եթէ «արքայունը» այդ Զօրապայի կրօնը պիտի ցուցագրէր, նա պիտի գործ ածուէր եզակի թուով: Միտք կմայ «Բագրատ, հայ-քաղկեդոնիկների Զօրապայի որդի» գարձուածքի մէջ:

Միւս արձանագրութիւնը, որի վրայ հիմնուում է յարգելի գիտնականը, կարմիր վանքում է գտնուում, Անիի մօտ: Նա բերուած է Հ. Ալիշանի «Շիրակի» մէջ (եր. 170) և Զալալեանի «Ճանապարհորդութիւն» մէջ (լլ հատ., եր. 16): Զալալեանի

արձանագրութիւններին ոչ մի հաւատ ընծայել չէ կարելի, ուստի կը մնայ «Շիրակը»: Պ. Մառ ասում է թէ ինքը 1892-ին վերաստուգել է այդ արձանագրութիւնը, բայց, տարաբախտաբար, չէ բերում բնագիրը, այլ միայն զնում է նրա մի մասի ուսւերէն թարգմանութիւնը, որ փոքր ինչ տարբերում է «Շիրակի» մէջ եղածից:

Կարմիր-վանքը շինել են Ուրան Թարիժատինը և նրա եղբայր Պապը Վախրատինը: Տալով նուէրնէր, նրանք, ինչպէս սովորութիւն է, փոխարէնը ստանում են պատարագ: Ահա ինչ է ասուած. «Հայր Սարգիս և այլ եղբարքս փոխարէն հատուցին յամենայն շարաթն աւը Գ. խորանն մեր հաւըն Սարգսի. ևս եթէ և մեր չէ (այստեղ չ. Ալիշան դրել է հարցական նշան) պատարագն և Գ աւը Սարգիս արքառնին»:

Պրոֆէսոր Մառ ասում է որ վանքը հիմնողները հակաքաղկեդոնիկ հայեր էին, բայց նրանք ունեին մի քաղկեդոնիկ աղդական կամ բարեկամ, Սարգիս արքառն:

Այս Սարգսի համար էլ նրանք պատարագ են սահմանում և իրանց այդ կարգադրութիւնը արդարացնելու համար է որ աւելացրել են այն օտարոտի, անսովոր միջանկեալը—«ևս եթէ և մեր չէ պատարագն», որ պ. Մառ թարգմանում է «Բազե՞ ու համեն ո օհե՞» (միթէ՞ նա էլ մերը չէ): Ճիշտ է, գիտնական պրօֆէսորը այս բայցարութիւնը տալիս է զգուշաւոր վերապահումներով, լոկ իրուկ ենթադրութիւն, բայց ոչ մի կասկած չէ կարող լինել թէ ինքը անձամբ հակուած է այդպէս հասկանալու: Սակայն հաղիւ թէ շատերը համաձայն լինեն թէ «ևս եթէ և մեր չէ» նշանակում է «միթէ՞ նա էլ մերը չէ»: Մանաւանդ պ. Մառի թարգմանութեան մէջ այդ բառերից յետոյ գալիս է «թող կատարեն», մինչդեռ հայերէն մեր բնագրում «թող կատարեն»-ի տեղ «պատարագ» բառն է դրուած: Մեր կարծիքով, պէտք է հարատարակել հայերէն ամբողջ արձանագրութիւնը վերաստուգուած կամ լուսանկարած և այն ժամանակ միայն կարելի է քննել նրան, սթութիւնը բացարելու համար:

Եթէ, ասում է պ. Մառ, ճիշտ լինի որ կարմիր վանքի Սարգիս արքառնը սիրիական խմբին պատկանող քաղկեդոնիկ է, այն ժամանակ նրա տոհմի հարաւային ծագման հետ կատարելապէս ներդաշնակութիւն կը կազմէին նրա ազգակիցների մահմեդական անունները—Ուրան Թորիագին, Պապը Վախրադին: Սրա դէմ մենք կառարկենք որ առհասարակ չէ կարելի ենթադրութիւններ հիմնել անունների ծագման և բացարութեան վրայ. սա մի շատ խախուտ հիմք է: Անիի և շըր-

ջակաների արձանագրութիւնները լիքն են օտարոտի, ոչ-հայկական անուններով, որոնք, սակայն, իրաւունք չեն տալիս ասելու թէ նրանց տէրերը հայեր չեն։ Հայը սիրում է օտարյատուկ անուններ փոխ առնել. այսօր տուք կը տեսնէք վակիմիր անունով հայեր...

Եւ այսպէս, «արքաուն» անունը նշանակում է հայ-քաղկեդոնիկ։ Մեր կարծիքով—ոչ։ Պ. Մարի ուշաղրութիւնը հրաւիրում ենք հակաքաղկեդոնիկ Զօշավանքի արձանագրութիւններից հետեւալի վրայ («Շիրակ», իր. 26).

«Թվ ԶԲ (=1253) Կաման Աստուծոյ ևս Յովանէս արքաուն որդի Ապրկան և ամուսին իմ Մուլաքան միաբանեցար Հոռոմոսի Վանաց սուրբ Յովանիսի և տուաք Բ. տուն իմ գանձագին որ Ակուրնաց կոչի. և այլ տուի յամեն տարի որչափ կենդանի եմ ե. դահեկան ձիթագին և առաջի տարին տուի խ. կապիճ ցորեն սերմա. և առաջնորդ վանացս տէր Բարսեղ և էլ միաբանքս փոխարէն հատուցին ինձ յամէն ամի ժ. աւր պատարագ զտաւն խաչփայտին. Գ. աւր իմ հաւըն Ապրկան. Գ. մաւրն Մթերհէն, թ. Յովաննսի, Բ. Սմբատա. և յետ ելանելոյ յաշխարհէս ե. աւր ինձ էհանէսի և ե. ամուսնոյ իմոյ Մուլաքին. որ զյիշատակս մեր հաստատ պահեն աւրհնին Աստուծոյ և որ խափանեն կամ զտներն ծախին, մեր մէզացն պարտական է ամէն։»

Ի՞նչպէս վարուել այստեղ «արքաուն» բառի հետո։ Ես Յովհաննէս արքաուն»—թարգմանենք արդեօք «ես Յովհաննէս հայ-քաղկեդոնիկ սիրիական խմբից»։ Բայց եթէ XIII դարի մարդը ամեն տեղ պարտաւոր էր շեշտել իր կրօնական անունը, ինչո՞ւ չենք գտնում և այնպիսի արձանագրութիւններ, որոնց մէջ գոնէ մի հայ հարկաւոր համարած լինէր ասելու թէ ինքը Հայաստանեայց ուղղափառ եկեղեցու ղաւակ է։ Ուզում ենք ասել որ այս ժամանակներում, ինչպէս և այժմ, ոչ ոք դաւանական այս կամ անունը տիտղոս չէր դարձնում և իր անուան հետ անփոփոխ գործ ածում։

Յետոյ մոռանում ենք զիմաւորը, այն, որ երկու կողմերն էլ, հակաքաղկեդոնիկները և քաղկեդոնիկները, չափազանց ֆանատիկոս և անհաշտ էին իրար վերաբերմամբ։ Նրանք չէին կարող կրօնական գործերում մօտենալ։ Դնենք թէ մի Ռւքան Բարիմատին կարող էր ունենալ Սարգսս անունով մի քաղկեդոնիկ ազգական։ Այդ հնարաւոր է։ Բայց հնարաւոր է որ քաղկեդոնութեան դէմ պատերազմ մղող եկեղեցին յանձն առնէ պատարագ անել մի քաղկեդոնիկի համար։ Եւ փոխադարձարերը և իցէ կը համաձայնուէր մի քաղկեդոնիկ որ իր

հոգու համար աղօթէր մի «հերձուածող եկեղեցի»: Զէս որ բաղկեդնական օրթոդօքտութեան տեսակէտից դա կը լինէր ոչ թէ հոգու փրկութիւն, այլ յաւիտենական տանջանք: Եթէ քրիստոնեաց եկեղեցիները միմիանցից հոգու են պահվում, միմիանցից, ինչպէս ասում են, եօթը պատով անջատուած են, պատճառն այն է, որ մէկը չէ հոււատում թէ միւսի մէջ կարելի է փրկութիւն գտնել:

Կարմիր վանքի Սարգիս արքառունը գեռ կարելի է թիւրիմացութիւն, աղճատուած գրութեան արդիւնք համարել: Բայց ի՞նչ ասենք Ղօշավանքի Յովհաննէս արքառունի մասին: Այստեղ հօ այդ արքառունը իր «եօթը պորտն» է «հերետիկոս» եկեղեցու հովանու տակ դնում ինքն իր ձեռքով, իր յօժար կամքով: Կարելի բան է: Եթէ կարելի բան լինէր, էլ ինչնու հայ ազգը այնքան դժբախտութիւնների պիտի ենթարկուէր Քաղկեդոնի պատճառով: Ինչնու այնքան քաղկեդոնիկ հայեր պիտի փախչէին իրանց հայրենիքից, վրացի, յոյն, սիրիացի, դառնային:

Մի առարկութիւն էլ բերենք: XIII դարում, ըստ պրոֆէսոր Մառի, հայերի մէջ «արքառուն» անունը նշանակում էր հայ-քաղկեդոնիկ: Այդ գարում էր ապրում Ստեփանոս Օրբէլեանը, մի ջերմեռանդ, անհաշտ հակաքաղկեդոնիկ: Նա սաստիկ գովում է իր բարեպաշտ, համարեա սուրբ հօրեղբօրը, Սմբատ իշխանին: Եթէ «արքառունը» քաղկեդոնիկ նշանակէր, թոյլ կը տար նա որ իր այդ հօրեղբօրը որ և իցէ մէկը անուանէր «արքառուն», քաղկեդոնիկ: Բայց նա ամենայն հանգստութեամբ պատմում է թէ Մանգու խանը Սմբատին «արքառուն» էր անուանում, որովհետև գիտէ որ «արքառուն» պարզապէս քրիստոնեայ է նշանակում: Այսպէս է հասկանում և նոյն ժամանակների պատմիչ Վարդանը:

Սակայն Ղօշավանքի արձանագրութիւնը ցոյց է տալիս որ այս բացատրութիւնն էլ գոհացուցիչ չէ: Որքան անկարելի է «Յոհաննէս արքառուն» հասկանալ «Յոհաննէս հայ-քաղկեդոնիկ» իմաստով, այնքան էլ անհեթեթ պիտի լինէր, Օրբէլեանի և Վարդանի մելնութեան համաձայն, որ մէկը իր մասին տաէր: «Ես Յոհաննէս քրիստոնեայ»: Պէտք է «արքառուն» բառի մէջ մի ուրիշ իմաստ էլ որոնել: Եւ այդ իմաստը, մեր կարծիքով, կարելի է գտնել:

Պրոֆէսոր Մառի աշխատութիւնից երևում է (եր. 61) որ կան կարծողներ թէ Մոնղոլիայում և Չինաստանում «արքառուն» միայն վերջին ժամանակներում էր դառի «քրիստոնեայ» անուան համանիշ, իսկ սկզբներումնաև նշանակումէր իշխանութիւնունեցող մարդ, Ահա այս նշանակութեամբ «արքառունը» հաս-

կանալի կը լինէր Դօշավանքի արձանագրութեան մէջ, Կարելի է, կարծում ենք, Ենթադրել որ «արքաուն» կամ որ և է պաշտոն էր նշանակում կամ գուցէ ազնուական ծագում և իրաւունքներ արտայայտող մի բառ էր: Որ սա օդի մէջ կախուած մի Ենթադրութիւն չէ, ցոյց է տալիս Թովմա Արծրունու Պատմութեան կցած յիշատակարանը, որի վրայ մատնացոյց է անում պ. Մառը:

Այս յիշատակարանի մէջ մենք տեսնում ենք երկու «Արքաուններ»: Մէկը, «Խեղենիկ Արքայուն», Աղթամար կղզու տէրն է, միւսը, «պարօն Սեփեդին Արքայուն», ամուսնում է նրա աղջկայ հետ, դնում է ամբողջ կղզին իր աներոջից: Այս Սեփենինի երկու որդիները, Ստեփանոս և Զաքարիա, Աղթամարի կաթողիկոսներն են դառնում:

Պ. Մառ գրում է (եր. 65). «Այս անունները (այսինքն Խեղենիկ Արքայուն և Սեփեդին Արքայուն) սերտ կապուած են Աղթամարի կաթողիկոսների ճակատագրի հետ, կաթողիկոսների, որոնց առհասարակ շատ խառնակ պատմութիւնը XIV դարում բոլորովին մուժ է: Հաստատ յայտնի է միայն այն, որ Աղթամարի կաթողիկոսութիւնը մի ժամանակ գըտնում էր հայոց կաթողիկոսների և վարդապետների ծանր, «անլուծելի» բանագրանքների տակ, բայց ինչու համար: Արդեօք միայն մին պատճառով, որ Աղթամարի կաթողիկոսութիւնը չէր հպատակում ամենայն հայոց կաթողիկոսներին: Ես միայն հարց եմ դնում, բոլորովին չը կամենալով պատմութեան մուժ էջերը մեկնաբանել յօգուտ իմ թէօրիայի (այսինքն արքուն— հայ-քաղկեդոնիկ):

Թէև պ. պրոֆէսորը միայն հարց է դնում, բայց դժուար չէ գուշակել թէ ինչ է նա ուզում ասել, հիմնուելով երկու «արքաունների» վրայ, որովհետև իսկոյն շարունակում է. «Մեզ համար առ այժմ բաւական է արձանագրել, որ Վասպուբականում, հարաւային հայաստանում, «արքայուն» խօսքը յայտնի էր, թէև միայն իբրև ազգանուն, որ այս գէպօւմ գուցէ ժառանգուած էր քաղկեդոնիկ նախնիքներից»:

Բայց յարգելի գիտնականը, ինչպէս երկում է, այստեղ ուշագրութիւն չէ գարգրել մի նշանաւոր հանգամանքի վրայ— որ այդ երկու «արքայունները» հայ իշխաններ են: Խեղենիկ Արքայունի ամբողջ տոհմաբանութիւնը կայ Թովմա Արծրունու Պատմութեան մէջ (եր. 309—318): Այդ տոհմաբանութեան մէջ Խեղենիկ անունը կրկնում է երկու անդամ: Նախահայր Խեղենեկը Սենեքերիմ թագաւորի ազգակից էր, այսինքն Արծրունիների թագաւորութեան վերջանա-

լուց յետոյ Խեղենեկի տոհմն է Վասպուրականի տէրը դառնում, տալով մի շարք նշանաւոր իշխաններ, որոնցից մէկին, այս Խենեղեկ Արքայունի-ի պատ Աբգլմսէնին պատմութիւնը նոյն խոլ անուանում է «արքայ» (եր. 315), «Թագաւորագն», թէն նա յունաց կուրոպաղատան էր: Մնում է Սեփեղին Արքայունը: Յիշտակարանը նրա մասին ասում է. «Ազատ և յաղատ ծնողաց, ուղղափառ հաւատովքը»: Ուրեմն, դարձեալ հայ իշխաններից կամ աւելի կրտսեր ազնուականներից մէկը, գուցէ նոյն Արծրունի տոհմի մի ուրիշ շառաւեղ:

Ահա, մեր կարծիքով, ինչպէս պէտք է հասկանալ մօնզօւական «արքառուն»-ը:

Պ. Մառ, յիշտակելով որ Աղթամարի կաթողիկոսները բանաղրանքի տակ էին, կողմնակի կերպով ուզում է ակնարկել թէ պատճառը գուցէ և այն էր, որ զրանք հայ-քաղկեդունիկ կաթողիկոսներ էին, քանի որ ունեին «արքառուն» նախնիքներ: Բայց բանաղրանքի պատմութիւնը, մեր կարծիքով, բոլորովին հակառակն է ցոյց տալիս, այսինքն այն, որ Աղթամարի կաթողիկոսները չեին կարող քաղկեդոնիկ լինել:

Խենեղեկի մեծահռչակ իշխանական տոհմը, չը բաւականամաշով աշխարհական իշխանութեամբ, իւրացնում է և կրօնական իշխանութիւն, հաստատելով հոչակաւոր Աղթամարում կաթողիկոսութիւն, որ սկզբում ժառանգական էր, տոհմային: Արդըլմսէնի պէս մի փառաւորուած իշխողը կարող էր այդպիսի մի օրինակ վերցնել մի ուրիշ իշխանական, նոյն-պէս մեծահռչակ, տոհմից—Պահլաւունիներից: Յունամոլ Գրիգոր Մագիստրոսի որդին, Գրիգոր Վկայասէրը, կաթողիկոս է դառնում և սկսում է բարեկամական յարաբերութիւններ Բիւզանդիայի և Հռոմի հետ: Նրանով սկսում է այն կաթողիկոսների շարքը, որոնք ձգտում են եկեղեցական միութիւն ստեղծել յունական և կաթոլիկ եկեղեցիների հետ, այսինքն դառնալ քաղկեդոնիկ:

Ժամանակն էլ այնպէս էր, որ կարծէք ամեն մէկին պիտի գրաւէր կաթողիկոսական աստիճանը. միաժամանակ 4 թէ 6 կաթողիկոսներ կային գսնազան կողմերում: Եւ ահա Արդըլմսէնի որդի Դաւիթը կաթողիկոս է զառնում Աղթամարում: Գրիգոր Վկայասէրի յաջորդը, Գրիգոր երրորդ, ժողով է գումարում (1114 թւին), որ և բանաղրում է Աղթամարի կաթողիկոսին: Սա մի մրցակցութիւն անկատկած էր երկու իշխանական ցեղերի մէջ թէ ովք պիտի ձեռք ձգէ ասենայն հայոց կաթողիկոսական աթոռը: Յաղթում են Պահլաւունիները: Բառաղրանքի պատճառն ան է, որ Դաւիթը իր Աղթամարի ա-

թուռով պառակտում է կաթողիկոսի ընդհանրական իշխանութիւնը:

Եւ ուրիշ պատճառ չէր էլ կարող լինել: Քաղկեդօնիկութեան համար Աղթամարը անհծել—այդ չէր կարող անել Գրիգորիս երրորդը, որ շատ հակուած էր զէպի քաղկեդօնիկութիւն, որ բանակցութիւններ սկսեց Հռոմի հետ եկեղեցական միութեան համար:

Անէծքը, իհարկէ, աղդեցութիւն չարաւ և Աղթամարի աթոռը շարունակեց իր գոյութիւնը. Նրա կրած պարտութիւնը միայն այն էր, որ չը կարողացաւ ընդհանրական աթուդանալ. բայց այդ չը խանգարեց՝ որ նա մնայ մասնաւոր, գաւառական աթոռ: Սեփեդին Արքայունի որդիները, որոնք ծնուած էին Խեդենեկ Արքայունի աղջկանից, շարունակեցին կաթողիկոսութիւնը ժառանգաբար: Սեփեդինը, Խեդենեկեան տոհմի վեսայ գառնալով, խրացրեց նրա իրաւունքները. Նրա որդի Զաքարիան կաթողիկոս էր, իսկ միւս որդին, Ամիր Դուրգէնը, աշխարհական իշխանութիւնն ունէր իր ձեռքին:

Պ. Մաս առում է թէ Աղթամարի կաթողիկոսների պատմութիւնը XIX դարում «բոլորովին մութ է»: Բայց մենք այդ իսկ գարից ունենք մի վերին աստիճանի կարևոր վկայութիւն, որ այս վիճելի հարցը վճռում է մեր օգտին:

Թուգա Արծրունու Պատմութեան այն յիշատակարանը, որի մէջ խօսվում է Սեփեդին Արքայունի, Խեդենեկ Արքայունի և նրանց ժառանգ կաթողիկաների մասին, գրուած է 1826 թուին: Այդ թուականից 16 տարիյեւոյ, երբ գուցէ դեռ կենդանի էր և երկու Արքայունների ժառանգ Զաքարիա կաթողիկոսը, կիլիկիայից ամենայն հայոց Մխիթար կաթողիկոսը ուղարկեց Բենեդիկտոս XII պապին մի թուղթ, որի մէջ թէ իր և թէ Կիլիկիայի հայ հոգևորականութեան կողմից դաւանում էր քաղկեդօնականութիւն: Այդ երկարաբան թղթի վերջում խօսվում է Աղթամարի մասին.

«Անկեղծութեամբ կը խստավանին, որ Աղթամարայ և Աղուանից երկու ինքնագլուխ աթոռները, որոնք կաթողիկոսական անունն ալ իրենց սեահականած էին, զեռ իրենց հին մոլորական գարդապետութեանց մէջ յաժառ կը կենային, և ասով կը ցուցընէին թէ իրօք ապատամի՛ են կաթողիկոսական աթոռէն: «Այլ այժմ, կըսեն, այս խորի է ի մէջ մեր և նոցտ, զի մեր արկանեմք ջուր մատուցման պատարագի, և տօնւեմք զտօն ծննդեան ի 25 Դեկտեմբեր ամսեան... ընդունեմք զտուրբ սիսնողոսն Քաղկեդօնի... այլ նորա բատ հին սովորութեան ոչ արկանեին ջուր ի պատարագի, և կատարեն զտօն ծննդեան

և Յայտնութեան ի վեցելորդ աւուր Յունուարի... և գժողով Քաղկեդօնի մինչև ցայսօր ոչ ընդունեն»*):

Այսպէս ուրիմ, Աղթամարի կաթողիկոսութիւնը բուն աղղային եկեղեցու հաստատութեան համար էր հիմնուած իբրև հակադրութիւն Պահառաւնի կաթողիկոսների և առհասարակ Կիլիկեան շրջանի կաթողիկոսութեան գէմ, որոնք այնքան եռանգ թափեցին քաղկեդօնութիւն ընդունելու համար։ Այդ պատճառով էլ Աղթամարը ապատամք համարուեց և բանադրուեց։ Եւ շատ հասկանալի է, որ երբ կաթողիկոսութիւնը փոխազրուեց Եջմիածին, այսինքն ազատուեց քաղկեդօնական ձգութմներից, նրա առաջին գործը եղաւ ոչնչացնել Աղթամարի վրայ գրած բանազրանքը։—

Այսպէս ահա, հայկական յիշատակարուները, պատմութեան փաստերը չեն ընդունում այն բացատրութիւնը, որ տալիս է պրոֆէսոր Մատ «արքառուն» անուան։—

ՀՀ օ

ՆՈՐ ՄԱՅԱՅԻԱՅ ԳՐՔԵՐ

Издание И. Параанова „Донская речь“, въ Ростовѣ на Дону:

- 1) Бакурцевъ; Какъ выбирать народ. представителей? ц. 1 коп.
- 2) Горбуновъ, Гарантія личной свободы въ Англіи. ц. 15 к.
- 3) Щепкинъ, Земская и Городск. Россія о народн. предст. ц. 10 к.
- 4) Голубевъ, Роль земства въ общественномъ движениі, ц. 12 к.
- 5) Сторожевъ, Воспоминаніе о Т. К. Грановскомъ, ц. 4 к.
- 6) Котляревскій, Совѣщательное Представительство, ц 10 к.
- 7) Милюквъ, Верховники и Шляхетство; ц. 15 к.

*) Պալճեան — «Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայոց, Վիեննա, 1878, եր. 78։—

- 8) Прокоповичъ, Аграрный вопросъ и аграрное движение ц. 10 к
 9) Рожковъ, Исторія Крѣпостного права въ Россіи, ц. 10 к.
 10) Булгаковъ, Японія и японцы, ц. 20 к.
 11) Карбевъ, Французскіе политич. писатели XVIII вѣка,
 ц. 10 к.
 12) Феликсъ Гра, Марсельцы, пов. изъ врем. фр. рев., ц. 25 к.
 13) Дубровскій, Франція, іюль 1830— ц. 7 к.
 14) Баксъ, Великая французская революція, ц. 15 к.
 15) Зомбартъ, Робочій вопросъ въ промышленности, ц. 20 к
 16) Гедъ. Коллективизмъ ц. 4.
 17) Шиппель, Профессиональные союзы рабочихъ, ц. 10 к.
 18) Либкнентъ, Отъ обороны къ нападенію, ц. 10 к.
 19) Лассаль, Программа работниковъ, ц. 8 к.
 20) Лассаль, О сущности конституції, ц. 8 к.
 21) Каутскій, Развитіе формъ государства, ц. 7к.
 22) Каутскій, Соціальная реформа и на другой день послѣ
 соціальной реформы, ц. 25 к.
 23) Հրատարակութիւն Գ. Գալոսեանի. Կարըլշև Տնտեսագի-
 տական գրույներ, թարգմ. Կ. Զարյան, Թիֆլիս, 1905
 թ. գ. 40 կ.
 24) Die Stellung des Annenisch-Zigeunerischen im kreise der
 verwandten Mundarten, von Frz. Nile. Finck. 1950
 25) Alisa Tennyson յիշատկին (in Memoriam) Անգլ. թրգմ. Ա-
 րքանամ Մելիք-Զանեանց, Թիֆլիս 1905
 26) Ա. ա.-ք. Բագրատունի, «Չեռնարկ կրօնական դիտելիքնե-
 րի» Գ տարի Թիֆլիս 1905 ի, գ. 40 կ.
 27) Տօքթ. Կ. Փաշյան, Որոնեղ է Ազնւութիւնը, Ալեքսան-
 դրիա 1905 թ, գ. 2 զրշ կամ 50 սանթ.
 28) Գէորք Չուրար, Մահտեսի Սարգիս (Գիւղական կեանքից),
 Նոր Նախիջևան, 1905 թ, գ. 50 կ.
 29) Օրացոյց 1906 թ., սեփականութիւն Ս. Փրկչեան Հիւան-
 դանոցի Հայոց, Կ. Պոլիս.
 30) Նշտար, Ժանրու վէրքեր, Թիֆլիս 1905., Գ. 15 կ.
 31) Պրօֆ. Զօմբարդ. Իօնչու այժմ ամեն մարդ հետաքրքրւում
 է ըաղաքատնտեսական և ընկերավարական խնդիրնե-
 րով. գերմ. թարգ. Ս. Թառայեան. Թիֆլիս 1905 թ. գինը 10 կ.
 հրատ. Ստ. Լիս. և ընկ.
 32) Պրօֆ. Ալելիս Իրաւունքի ծագումն ու ովառմութիւնը
 գերմ. թարգ. Ս Թառայեան. Թիֆլիս 1905 թ. գինը 10 կ.
 հրատ. Ստ. Լիս. և ընկ.
 33) Յով. Գառուկէ. Պապիտալ և կապիտալիսմ. Գելմ թարգ.

- Ս. Թառայեան. Թիֆլիս. 1905 թ. գ. 12 կ., հրատ. Ստ. Լիս. և ընկ.
- 34) Էրկման-Շատրիան. Մի գիւղացու պատմութիւն. բնագր. թարգ. Վ. Փափազեան, Թիֆլիս. 1905 թ. գ. 1ր. 25 կ. հրատ. Ստ. Լիս. և ընկ.
- 35) Եսալեմ, Թող Փակտերով իօսեն (Հնչակեան կուս. մասին) Ժընեվ. 1904 թ. հրատ. Սոց.-Դեմ. բան Հայ. Կազմակերպ.
- 36) Պոլ Լաֆարդ Սօցիալիստական պարզ ճշմարտութիւններ. Թարգ. Ֆրանս. Ժընեվ. 1904. Հրատ. Սոց.-Դեմ. Բան. Հայ Կազմակերպ.
- 37) Արոէն վ. Ղլտճեան, «Կանոնք Ներսէսի Բ. կաթ. և Ներշապուհ» Մամիկոնեանից եպիսկոպոսի, Վաղարշապատ, 1905 թ.
- 38) Արս. վ. Ղլտճեան, «Կանոնք Պարտաւի Աղքային ժողովի, Վաղարշաբ., 1905 թ.:
- 39) Ե. Թոփչեան, պատի (50 կոպ.) և գրպանի (20 կոպ.) օրացոյցներ 1906.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՂԹԻՒՆ

Հոկտ. 17 մանիթեասք:—Ինձնակալար թեան և յեղափոխութեան պայմարի վրայ յետագարձ հայեացի:—Հասարակութեան նետեական կազմի դերը յեղափոխական շարժման մէջ:—Հոկտ. 17-ի մանիթեասքի յետոյ:—Սահմանադիր ժողովի անհրաժեշտութիւնը:—Թուրքական առաւանքի Թիգիսի վրայ:—Հին բեծիմ եւ հասարակական խոճի գատաւան:—Հանելիքակասեան ժողով:—Գոյցերի զինին աւետարան եւ զինուած խաղաղութիւն:

Հոկտնմըների 17-ի մանիֆեստը.

Աստուծոյ ողորմածութեամբ Մենք նիկոլաՅ երկրորդ, Կայոր և ինքնակալ համայն Ռուսիայի, Թագաւոր կենացանի, Մեծ իշխան Թիգիսի գլուխի և այլն և այլն և այլն:

Յայտարարում ենք մեր բոլոր հաւատարիմ հպատակներին. Մեր կայսրութեան մայրաքաղաքներում և այլ շատ տեղերում խառնակութիւններն ու յուղումները մեծ և ծանր վշտով են լրցնում Մեր սիրաց: Ռուսաստանի վեհապետի բարօրութիւնը անխզելի կապուած է ժողովրդի բարօրութիւն հետ, և ժողովրդի վիշտը—Նրա վիշտն է: Այժմ ծագած յուղումներից կարող է առաջ զալ ժողովրդական խոր անիշխանութիւն և սպառնալիք Մեր Պետութեան ամբողջութեան ու միութեան:

Թագաւորի ծառայութեան մեծ ուխուր հրամայում է Մեղ՝ Մեր բանականութեան և իշխանութեան բոլոր ոյժերով ձգտել տէրութեան համար այդքան վտանգաւոր խառնակութեան ամենաշուտափոյթ խափանման շրամայի լույլ պատշաճաւոր իշխանութիւններին միջոցներ ձեռք առնել անկարգութիւնների և բնութիւնների ուղղակի արտայայտութիւնները վերացընելու, ի պաշտպանութիւն խաղաղ մարդկանց, որոնք ձգտում են իւրաքանչիւրի վրայ ընկած պարտը հանդստորէն կատարելու, Մենք, պետական կեանքի խաղաղացման նպատակով Մեր նախորոշած ընդհանուր միջոցների յաջող իրագործման համար, անհրաժեշտ համարեցինք միացնել բարձր կառավարութեան գործունէութիւնը:

Կառավարութեան պարտականութեան վրայ ենք զնում Մենք և կատար ածել Մեր անկորանակի կամքը.

1) Շնորհել աղղաբնակութեան՝ բաղաքացիական աղատութեան անսասան հիմունքները՝ անձի իսկական անձեռնմխելիութեան, խորի, խօսրի, ժողովների և զաշնակցութիւնների աղատութեան սկզբունքների վրայ:

2) Զգաղարեցնելով Պետական Դումայի համար արդէն նշանակուած ընտրութիւնները, այժմ և եթի Դումայում մասնակցելու նպատակով՝ կոչել—ըստ կարելիութեան, որ համապատասխանում է մինչև Դումայի գումարումը միացած ժամանակի սղութեան—աղղաբնակութեան բոլոր զամակարգե-

լրը, որոնք այժմ բոլորովին զրկուած են ընտրողական իրաւունքներից, իսկ ընդհանուր ընտրողական իրաւունքի սկզբունքի յետովուայ զարգացումը թողնել նոր հիմուած օրէնսդրական կարգին:

3) Հաստատել իրեն անսասան կանոն, որ ոչ մի օրէնք չկարողանայ ոյժ ստանալ առանց Պետական Դումայի հաւանութեան և որ ժողովրդից ընտրուածների համար ապահոված լինի հնարաւորութիւն իրական մասնակցութեան Մեզնից գրուած իշխանութիւնների գործողութիւնների որինաչափութիւնը վերանակելու դորդում:

Հրատիրում ենք Ռուսիայի բոլոր հաւատարիմ զաւակներին յիշել իրանց պարաքը գէպի հայրենիքը, օգնել զաղարացնելու այս շսուած խառնաշփութիւնը և Մեզ հետ միասին լարել բոլոր ոյժերը՝ վերականգնելու համապատութիւնը և խաղաղութիւնը հայրենի երկրում:

Տուած է Պետերհոգում Հոկտեմբերի 17-ին 1905 թ. Ք. Ճ. Ճ. Ա. իսկ Մեր թագաւորութեան 11-րդ տարին:

ՆԻԿՈՂԱՅ:

Այդ մասիփեստի նշանակութիւնը լաւ ըմբռնելու համար մի յետադարձ հայեացք գցենք անցեալի վրայ:

Դարերի ընթացքում ոռւս ինքնակալութեան ձեռք առած բոլոր արգելվներն ու խստութիւնները, ինչպէս և ժողովուրդը թաթարաւրիւլամսնական լիժիմի միջոցով այլասեռելու հրէշաւոր ջանքերը, անկարող եղան խեղղելու ոռւս ժողովրդի առանձին շերտերի ազատական փորձերը: Եթէ Ստենկարագինի կամ Պուգաչովի առաջնորդութեամբ զիւղացիականակաղակային խառնակ, տարերային ապստամբութիւնները հզօրապէս ճնշուեցան, եթէ «դեկաբրիստների»՝ այդ զինուորական-ազնուական ինտելիցիանցիայի գաւադրութիւնը ջախջախուեց (1825 թ.), եթէ 1848 թուի եւրոպական յեղափոխութիւնից յետոյ Նիկոլայեան լիժիմը դրակոնեան խստութիւններով սպանեց ոռւս եւրոպայամիտ զրականութիւնը, անորօր գտնուելով միաժամանակ լսեցնելու և Գեղցէնի Կօլօկօլե-ի ձայնը արտասահմանից, —չպէտքէ մոռանալ որ վերջ իւլիուսի ինքը ճորտատիրական զինուորական ինքնակալութիւնն ևս պէտք է հանդիպէր իւրերի այնպիսի գրութեան, երբ այլևս ոչ մի կերպ չէր կարելի հակառակել ժողովրդի կեանքի մէջ, անտեսական և մտաւոր փոփոխութիւնների շնորհիւ, առաջ եկած ոյժերի գոռհի զիմաց. բաւական էր գրա համար որ հնի մնանկութիւնը մի որևէ կատաստրոֆով բացարձակապէս արտայայտուէր: Պատմութեան մի այդպիսի հատուցման մոմենտ էր 1856 թ. Սևաստոպոլեան պարտութիւնը...

Նիկոլայ Առաջինի յաջորդ Ալեքսանդր Երկրորդը՝ այլևս չէր կարող շարունակել հին ընթիւմը. նա ստիպուած էր տալու ոչ մի-

այն ճորտերի ազատութիւն, այլև քաղաքակերթ կեանքում անհրաժեշտ ճանաչուած մի շարք ռմեծ բեֆորմներ»: Թէև հասարակութեան դասակարգային փոփոխութիւնները աւելի լայն բեֆորմներ էին պահանջում, սակայն նրա կազմութեան մէջ առաջ եկած ոյժերը դու թոյլ էին ստիպողական դիրք բռնելու:

Այդ բոփորմների շնորհիւ Ռուսաստանում իր առաջնակարդ դիրքից ընկաւ ազնուականութիւնը, իսկ մինչև այդ թոյլ արդիւնագործական-առևտորական դասակարգը և գետոկրատ շերտերից դուրս եկած ինտելիգենցիան զարգանալու ահագին զարկ ստացան: Արագ-արագ առաջ գնաց հասարակական կազմի հսկայական փոփոխութիւնը, ազատուած գիւղացիական դասակարգի կողքին, ազատ աշխատանքի շնորհիւ, երեան եկաւ և բանուորական դասակարգը:

Զմոռանանք որ «մեծ բեֆօրմների» հետ ոռւս ինքնակալութիւնը նոր կեանքի մէջ կարողացաւ պահպանել ժանգոտած ու մեռած անցեալի ամենազարդելի կողմը, այնէ՝ պոլիցիական բիւրոկրատիական սիստեմով կառավարելու ձեզ: Հասարաւութիւնը չստացաւ սահմանադրական և ոչ մի երաշխաւարում: Այդպիսով, նոր գինին ածուեց հին, նեխուած տկի մէջ: Բնականարար, հին բեժիմի այդ մնացորդը փոտում առաջացրեց նոր բեֆօրմների մէջ: Կեանքը ապականող այդ հին բեժիմային մնացորդների դէմ առաջին մաքառողը միայն ինտելիգենցիան էր: Ժողովրդի մէջ նրա քարոզը գետ թոյլ արձագանք էր գտնում: «Զեմելուցիների», ճնարուղովուցիների» ջանքերը այնուամենայնիւ ահագին դեր կատարեցին Ռուսաստանի յեղափոխութիւնը նախապատրաստելու գործում: Ռուս մասսայից կաըրուած ինտելիգենցիան մի շարք «նիհիլիստական» փորձերով ստիպեց բիւրոկրատիայի խոնհմ ներկայացուցիչներին կանգ առնել լոռիս-Մելիքեան «սահմանադրութեան» վրայ: Մինչ ինքնակալլ տատանուումէր վերջնականապէս ընդունելու այդ սահմանադրութիւնը, վրայ հասաւ 1881 թ-ի մարտի 1 ը: Այնուհետև Ալեքսանդր Երրորդը, գահ բարձրանալով, մի կողմ նետեց զիջումների քաղաքականութիւնը և սկսեց «արմատախիլ անել երկրից կրամուկն»: Այդ բեժիմի աշողութիւնը ցոյց էր տալիս որ հասարակական ընդիմագիր էներշուական բաւականաչափ ուժեղ արտայայտութիւն չունի հասարակական կազմութեան սարուկառուրայի մէջ: Մանր-առնետրական դասակարգը, գիւղացիութիւնը և բանուորականութիւնը անպատճառ էին ու անգիտակից, ուստի և տնտես սահմանադրական ազատութիւններ պահանջելու գործում:

Նոր ինքնակալի նշանաբանն եղաւ. «Ռուսաստանը պրա-

օսլաւ, ազնուական ոռուսների համար»։ Հասկանալի է թէ այդ քաղաքականութիւնը ի՞նչպէս պէտք է վերաբերուէր դէպի ոչ-ազնուականը, ոչ-պրաւօւաւը և դէպի ոչ-ոռուսը։ Մի շարք նոր առանձնաշնորհումներով նա աշխատեց պահպանել ընկնող ազնուականութեան դիրքը։ Գիւղացին դարձեալյանձնուեց ազնուականների (զեմսկի նաշալնիկ) կատարեալ խնամակալութեան։ Բնական է որ «ժամանակաւորապէս-պարտաւորուած» գիւղացիների դրութիւնն էլ չպէտքէ փոփոխուէր Անդրկովկասում, և թուրքու վրացի ազնուականները պէտքէ աւելի սիրելի դառնային ինքնակալութեան գործիք բիւրոկրատիայի աչքում, քան ազնուական տարրերից համարեա զուրկ հայ ժողովուրդը որի կուլտուրական-ազգային առաջադիմութիւնը Կովկասում աչքի ընկնող երկոյթ էր։ Այդ ըեժիմը իր սեփական ոռւս ժողովրդի կրթութիւնն էլ էր սահմանափակում։ համալսարանի, միջնակարք ուսումնարանների մուտքը դժուարացնուում էր ոչ-ազնուական չքաւորների համար. դպրոցը, գիտութիւնը և գրականութիւնը, ինչպէս և հպատակների կեանքն ու պատիւը յանձնուած էին առաջադիմութիւն ճնշող բիւրոկրատիայի անսահաման քմահանցքին։ Բայց ազնուականութիւնից առանձին հովանաւորութիւնն էր ցոյց տրուումնաև «հայրենի արդիւնագործութեան և առևտրի» արուեստական գերաճման. մի բան, որ միւս պայմաների հետ միասին, արագացնուում էր մասսայի չքաւորումը և աւելի կատարեալ դարձնում թշուառութեան և փարթամութեան հակապատկերները։ Բոնոծ ընթացքի չնորհիւ օրէցօր բաղմանումէր բանուորականութիւնը, աղքատանում գիւղացիութիւնը ու մանը բուրժուազիան, սաստկանում ինտելիգենտ տարրերի գժգոհութիւնը տիրող բանութիւնից։

Ալեքսանդր III-ըգի մահից յետոյ շարունակուեց նրա քաղաքականութիւնը միայն աւելի անսիստեմ և տասանուող եղանակով։ Բայց հասարակութեան խաւերի ոյժերի մէջ արդէն մեծ փոփոխութիւններ էին կատարուել։ Այդ ի հարկէ չէր նկատում կարձատես բիւրոկրատիան, որ շարունակում էր իր երկաթէ բոռնցքներում սեղմել ժողովրդի հասունութիւնը։ Կոլոսս ինքնակալութիւնը կանգնած էր անխորտակելի համարուած զինուորական ոյժի պատուանդանի վրայ, և կիշներ ու ֆոմէլի հրէական ջարդերը կազմակերպող, ինչպէս և մինլանդեայի իրաւունքները ոչնչացնող Ֆոն

¹⁾ Արտաքին քաղաքականութեան մէջ այդ ուղղութիւնը արտայատուել էր, և միջի այլոց, Լոբանովի նշանուոր խօսքերով. «Մեզ հարկաւոր է Հայաստանը առանց հայերի»։

Պլեվէն հաւատացած էր թէ իրան կ'աջողուի կանգնեցնել իրեւրի բնական ընթացքը և գլուխ ըերել մինչեւ վերջ պղղիցիական-ժանդարմական դաժան կառավարումը ամենածայրայեղ հետեւողականութեամբ: Սակայն հասարակական ոյժերը արդէն այնքան մեծ էներգիա էին ամբարել որ բաւական էր մի խոշոր սխալ քայլ կառավարութեան կողմից՝ որ բնուկուի բացարձակ շարժումը: Այդ սխալը ոռու-ճապոնական պատերազմն էր, որ թուլացրեց ինքնակալութեան զինուորական և ֆինանսական ոյժերը:

Զայնից և իրաւունքներից զուրկ ժողովրդի արիւն քրտինքով վաստակած միլիօնները ոռու բիւրոկատները, միացած կամարիլիայի հետ, վաղուց է որ վատնում էին իրանց անձնաւկան շահերի համաձայն: Այդպիսի ոճրագործ «գեշեթաներից» մէկն էր և «Եալուի կոսցեսսիան» Կորէայում: Բեկորբազով և ընկ-հան աշողուեց պետական գանձարանից ոչ միայն տասնեակ միլիօններ վատնել իր շահադիտական ձեռնարկութիւնների վրայ, այլև քաղաքական ընդհարում տուած քերել ձապոնիայի և Խուսաստանի մէջ: Եւ փոքր ձապոնիան շատ շուտով ցոյց տուաւ սազմական ուժով գոռող ոռու ինքնակալութեան բոլոր փրուածութիւնն ու ապիկարութիւնը նոյնիսկ պատերազմական ասպարիզում: Ձապոնական հարուածներից սկսեց սասանուել ինքնակալութեան պատուանդանը և ազատ գլուխ բարձրացրեց ժողովրդի ճնշուած ասպատամբ-ովին: Այնուհետև Ֆոն-Պլեվէն իր բոլոր զուողութեամբ մի սին անուն, մի փեկցիա էր, որ չքացաւ յեղափոխականի նետած ոռւմբով (Հոկ. 15, 1904): Բիւրոկատիան հասկացաւ որ հասել են իր վերջին օրերը և դրութիւնը լուրջ է: Պէտքէր զիջումներ անելի Եւ այդ զիջումները անւում էին ամբողջ մի տարի՝ «իւրաքանչիւր ժամից յետոյ մի սեղանի գդալ» դեղատումայն իմաստութեամբ... Այդ ժամ զիջումներից առաջինն էր ներքին գործոց նոր մինիստր Սվեատապոլկ-Միքսկու նշանակումը, իր հոչակաւոր «լուսահութեան» կոչով՝ ուղած հասարակութեան:

Փչոց «գարնանային տրամադրութեան» թեթև զեփիւոը, որ խիստէս գալիք փոթորկի միայն կարապետն էր: Մամուլն ու հասարակութիւնը, աղատուած պլեկէեան մղձաւանջից, սկըսեց մի քիչ ազատ շունչ քաշել: Կենդանացաւ մեռած համարուած Ղաղարուը՝ ոռու ժողովուրդը, որ այլևս չուզեց մնալ այն գերեզմանում, ուր կոխել էր նրան ինքնակալութիւնը:

Անցեալ հոկտեմբեր ամսում էր, երբ զեմստավային և քաղաքային գործիչների, ինտելիգենտ զանազան շրջանների, գիտական ընկերութիւնների ժողովներ ու բանկետներ էին տեղի ունենում և քաղաքական հաւատամբներ ձեակերպւում: Բոլորից

լուսում էր նոյն երգը. «առանց խիստ օրինակարգի, անձի, խօսքի, համագումարների և միութիւններ կաղմելու աղատութեան, առանց հասարակութեան մասնակցութեան երկրի օրէնսդրութեան մէջ, առանց հասարակական կոնտրոլի աղմինխատրացիայի վրայ անկարող է Ռուսաստանը զարգանալ և բարօրութեան համել»:—Մի երգ, որ զանազան ձևերով արտայայտում էին ուսու ինտելիգենտ խաւերը, սկսած զեռ ֆրանսիական մեծ յեղափոխութեան օրից, բայց մի տեսչանը որ մնում էր առանց իրագործման ամբողջ դար, որովհետեւ հասարակական կազմութեան մէջ չկար ոյժ՝ կեանքի մէջ մտցնելու իրաւունքը: Այժմ հանգամանքները փոխուել էին. ինքնավատահ Կուրոպատկինը մի շաբք խայտառակ պարտութիւններից յետոյ տեսել էր և լաօեանի ճակատամարտը: Պորտ-Արտուրը ընկնելու վրայ էր: Չնայած այդ յուսահատ գրութեան, ուսու բիւրոկրատիան զեռ լաւատես էր իր ապագայ գերիշխանութեան նկատմամբ և չըր ուզում լին ոչինչ «պետական կազմը» և «անուասան հիմնական օրէնքները» փոփոխելու մասին: Դեկտեմբերի 12-ին հրատարակուած Ռւկագով պէտք է միայն մի քանի «բարելաւումներ» մտցնուէին պիտական կարգի մէջ: Մինչխարների կոմիտեը պէտք է մրգէր իր բիւրոկրատիական ապիկար ուղեղը՝ «բարելաւումների» ծրագրներ մշակելու գործում: Բայց հասարակութիւնը արդէն ոյժ էր զգում իր մէջ և հասկանում էր այդ ձգձգելու քաղաքականութիւնը... Ընկառ և Պորտ-Արտուրը (դեկտ. 20). յեղափոխական յուզումը ներքին կեանքում օրէցօր սաստկանում էր. ուսանողական, բանուորական խոռվութիւնները ալեկոծուած ազգաբնակութեան հոծ մասսաների վերի փրփուրներն էին միայն. և իրօք, չկար հասարակութեան մէջ մի նշանաւոր շերտ, որ ցանկար ապրել հին բեժիմի տակ:

Ճիշդ է, քահանայ Գապոնի առաջնորդութեամբ յունուարի 9-ին Ցարի մօտ գնացող բանուորների հսկայուկան ամբոխը ցրուեց Պետերուրքի փողոցներում զօրքի զնդակներով և սրեւրով, բայց այդ արինահեղ անցքը միայն փարատեց Ցարի հմայքը ոսուս գուեհիկ ժողովրդի աչքում, աւելի ոյժ տուաւ յեղափոխութեան ալիքներին: Այսունետեւ բանուորական գործադուլները ահազին ծաւալ ստացան Ռուսաստանի բոլոր արդիւնաբերական կենտրոններում. տնտեսական պահանջների հետ բանուորները արդէն շեշտում էին քաղաքական ազատութիւնների պահմուջների վրայ:

Այս բոլոր շարժումները բնականաբար արձագանք էին գտնում և կովկասում, ուր Պոլիցինի և Վելիչկոի գործունէութիւնից յետոյ ոսու բիւրոկրատիայի և ուսու ամբոխի մէջ բուն էր

դրել այն կարծիքը թէ այդտեղ «հարստահարիչ» հայն է բոլոր, հակասետական շարժումների պատճառը, հայն է ինքնակալ ըեժիմի համար ամենավտանգաւոր տարրը: Այդ մեղադրանքների մէջ ճիշտն այն էր միայն՝ որ հայ տարրը ոչ մի շահ չունէր պաշտպաննելու հին ըեժիմը, որ հնարաւոր էր գարձնում Դոնդուկով Գոլիցինի նման սատրապների վայրագօրէն անարդար կտուավարութիւն: Եւ ահա ինչու:

Հայ ժողովուրդը բաղկացած է գիւղացիութիւնից, բանուորականութիւնից, մանր-ըուրժուազիցից և ինտելիգենցիայից: Սակաւաթիւ խոշոր բուրժուաների և ազնուականութեան դերը մեծ չէր մեր կեանքում և դրանց համար ոչ մի արժէք չունէր ազգային-պրոգրեսիւ քաղաքականութիւնը: Չնչին էր մեզանում և ժողովրդից կախում ունեցող հոգեորականութեան դերը: Հազիւ մի տասնեակ բարձր կղերի և ժողովրդի խաւե ըի հետ իր շահերով կապուած քահանաների մէջ աւելի շուտ անտափնիզմ կարելի էր գտնել, քան դասակարգային ընդհանուր կապելու: Յամինայն դէպս, կղերի և խոշոր բուրժուազիցի դերը պասսիւ էր: Հայ դիւղացիութիւնն ու բանուորականութիւնն էլ մի տասնձին գարթնած գիտակցութիւն չէին ցոյց տալիս, մինչև որ գալոցների և կալուածների գըշտաւումը չցնցեց դրանց: Հայ իրականութեան մէջ դործն դեր էր կասարում իսկապէս միջին դասակարգը—մանր բուրժուազիան իր ինտելիգենտ և կիսաինտելիգենտ տարբերով. մեր կեանքին տոն տուողը այդ խաւնէր, իսկ հայ ժողովրդի այդ հասարակական կաղմութեան աւելի էին համապատասխանում ազգային-դեմոկրատիական կարգերը: Հետևաբար սուհմանադրական Ռուսաստանը հայութեան նպաստաւոր կարող էր լինել, իսկ բիւրոկրատիա կան-ազնուապետական ինքնակալութիւնը՝ հայի զարգացման խոչնդու:

Դրան աւելացրէք և այն որ թիւրքահայերի ողբալի գրութիւնը վերջին քառորդ դարում առաջ բերաւ յեղափոխական մի հոսանք, որի տարրերը, երբ ստիլուած եղան խառնուել նաև ռուսահայերի գործերում, բնականաբար մտցրին մաքառման մէջ իրանց տակտիկան: Այդպիսով հայ ժողովրդի գործն շելտերը դառնան դեմոկրատիական-յեղափոխական: Թէ ի՞նչ զգացմունքներ պէտք է տածէր ուսւ բիւրոկրատիան դէպի այդպիսի ժողովուրդ—պարզ է... իսկ մեր հարևանների:

Թուրք և վրացի ժողովուրդների մէջ տիրապետող, ազգեցիկ, գործոն տարրը ազնուականութիւնն էր, այն զանազանութեամբ սակայն որ վրաց ժողովրդի բանուորական և գիւղացիական տարրը արգէն գիտակցութեան էր հասել և իր ա-

ուանձին իդէալներն ունէր, իսկ թուրք տգէտ ժողովուրդը հլու հպատակ էր իր բէգերի և մոլլաների ձեռքում: Ուրեմն, վրաց ազնուականները և թիւրքութիւնը ամբողջապէս պէտք է կողմնակից լինէին հին բեժիմին: Այդպիսով ոռւս չինովնիկութիւնը, վրաց ազնուականութիւնը և թիւրքութիւնը բնական զինակիցներ էին և պէտք է կոռուկին մի դրօշտկի տակ: Դրանց թէս հոգով հարազատ էին հայ խոշոր բուրժուանները և բարձր հոգեորականութիւնը, սակայն հակառակ կողմի նախանձը և չինովնիկների թիւր հասկացողութիւնը մերնոյ զամաւրային սեպարատիստական ուղղութեան» մասին, անջատում էր առաջացրել: Ուստի երբ յեղափոխութեան ալիքները հասան նաև կովկասին՝ հակայեղափոխական շարժումը պէտք է իր զայրոյթը թափէր «ամենավտանգաւոր» և ատուած տարրի՝ այն է հայի վրայ:

Հին բեժիմը իր կողմնակիցներով իր զայրոյթը «հակապետական» տարրերի գէմ ներքին նահանգներում հանում էր «անհանգիստ» հրէաններից և ինտելիգենտներից: Կովկասում փրկութեան նոխազը պէտք է լինէր արտաքին զօրեղ պաշտպաններ չունեցող հայ տարրը, որի զլիին էքսպերիմենտներ ասես մոլչի անում... Եւ ահա հայաշնջման սպառնալիքներով կովկասից հեռացած Գոլիցինի միջնորդութեամբ Բագու է նշանակւում վրացի իշխան Նալկաշիձէն: Հէնց այդ քաղաքից պէտք էր սկսել առաջին գործողութիւնը, չէ որ հայերի տնտեսական ոյժը, ինտելիգենցիայի ստուար մասը և գործադուլներ սարքով բանուորականութիւնը այգտեղ էին աչքի ընկնում. միւս կողմից Բագուն է, ուր բուն է զրել թուրք «ինտելիգենցիան», որ չէր ծածկում իր համիսլամական տենտեսները (այդ չէր կարող չիւմանալ ոռւս բիւրոկրատիան, որի ցեսուրայից էին անցնում Բանի-ի յօդուածները): Բագուում էին հարուստ հաջիները և աւազակ զոչիները, որոնք հնարաւորութիւն ունէին ոյժ դուրս բերել հայերի գէմ կոռուելու համար: Ժամանակը, տեղը, թուրք հայկական յարաբերութիւնների լարուածութիւնը՝ Աղաեվլ-Թոփչիքաշեմսերի պրոպագանդի և հայ «կոմիտեներ» ներկայութեան պատճառով—այդ բոլորը չափազանց նպաստաւոր էին հայկան ջարդերի աջող սկզբնաւորութեան համար: Իսկ հայը համ էին բեժիմի գէմ պայցքար էր մղում համ, էլ միամտարար հաւատացած էր որ այդ բեժիմը թոյլ չի տալ իրան՝ հայից վըրէժ հանել թուրքի ձեռքով. նա կարծում էր որ ակներև ճշմարտութիւն պէտքէ լինի ոռւս բիւրոկրատիայի աչքում այն թէ արևելքում ոսի բարեկամն հայն է և թշնամին՝ թուրքը. միամիտ պոլիտիկա, որ բոլորովին անտես էր առնում կորանովի ժամանակից փոխուած քաղաքականութիւնը հայերի նկատմամբ:

Եւ այլպիսի տհաս աշխարահայեացքից կարողացան օգտուել հայութեան թշնամիները:

Հին բիժիմը Կովկասում էլ սկսեց ջարդեր, իսկ խուլիգանութեան պատրաստի տարր էր ճանաչուած բէգերի քահանցոյքից կախուած, աւազակութեան, սպանութեան, հրկիզութեան և թալանի վարժ թուրք ամրոխը: Այդպիսով բարբարոս թուրքը դառնում էր հին բեժիմի զինակից՝ յեղափոխական շարժման դէմ: Այդ ջարդերը համ թուրլացըին ուժեղ հայութիւնը տնտեսապէս, համ էլ զբաղեցըին հայերի գործն ոյժերը...

Սակայն «սև հարիւրեակների» տարածած ահաբեկումը բովանդակ Խուսաստանում չօգնեց գործին և ինքնակալութիւնը ստիպուած էր նոր զիջում անել. փետրուարի 18-ին հաստատուեց բովկինեան կոմիսսիան, որ պէտք իրու թէ գոհացում տար պրոգրեսսի տարրերի պահանջներին և ինչոր ներկայացուցչական ժողովի նախագիծ մշակէր: Միաժամանակ մինհատքների կոմիտետին իրաւունք արուեցաւ ընդունել հաստրակութեան կողմից ամեն տեսակ հարծիքներ՝ «պետական վերանորոգութիւնը կատարելագործելու մասին»: Այդ իրաւունքից օգտուեց հասարակութիւնը, ամեն տեղ կազմուեցան ժողովներ, մշակուեցան սպահանջներ և այլն:

Հասարակական բոլոր խաւերի, պետութեան բոլոր ազգերի ցանկութիւների մէջ շեշտում էր սահմանադրական ազատութիւնների մասին, որ նոյն էր թէ ինքնակալութեան վերացումը: Բիւրոկրատիան, միացած յետագէմ մամուլի, պրաւուսաւ հոգեռորականութեան ահագին մեծամասնութեան և խուլիդան տարրերի հետ, «հայրենքի թշնամիներ» անուանեց այն բոլորին, որոնք սահմանադրական երաշխաւորումներ էին պահանջնում: Կառավարութիւնը գետ յոյս ունէր կիսատպուատ զիջումներով հանգստացնել գէթ չափաւոր տարրերը, և ահա ապրելի 17-ին լոյս է տեսնում խղճի ազատութեան մասին ուկազը, մայիսի 1-ին վերացում են լինական ազգաբնակութեան նկատմամբ գործադրուող մի քանի սահմանափակումներ (հողեր գնելու, լեզուի, դալրողների մասին): Կովկասն էլ չեն մուանում. Գոլիցինի փոխարէն նշանակում է կամ Վորոնցով-Դաշկովը, որ բացարձակօրէն յայտնում է թէ ինըը նոր ուզզութեան պէտք է հետամի «իր համար թամնագին Կովկասում» զեկավարուելով ազգաբնակութեան ներկայացուցիչների կարծիքներով: Նա խոստանում էր (գետ Պետերբուրգից) վերաբննել և բարեյանող լուծում տալ եկեղեցական-դպոցական հարցերին: Եկալ Կովկաս, օգնական ընտրեց Կրըմ Գիբէին, որ Գոլիցինի բեժիմի մարդ էր և չափաղանց թրբասէր, իրան չըշապատեց թուրք և վրա-

ցի ազնուականութեամբ։ Պոլիցիան և աղմինիստրացիան մնաց հինը։ Թուրքը դարձեալ համարւում էր հին բեժիմի նեցուկ—պատժել, խիստ միջոցներ ծեռք տոնել թուրք աւազակների և մարդասպանների գէմ խելացի չը համարւում։ Բնականաբար շարունակուեցան թրքական վայրագութիւնները։

Վրայ հասան Մուկունի և Ցուշիմի պարտութիւնները, ոռուսաց բանակն և նաւատորմիւրը իսպառ ջախջախուած էին։ Այլս դժուար էր յոյս զնել ինքնակալութեան այդ քայլառուած փառազուրկ սիւների վրայ։ Խփել էր պատմութեան հատուցման ժամը, պէտքէ կորչէր կենքից ոճիրներով ծանրաբեռնուած հին բեժիմը։ Եւ օրհասական վերջին ճիգն թափեց արիւսից դեռ չկշուացած րիւրոկրատեան։ Տրեպովին տըրուեցան անսահման լիազօրութիւններ՝ ըստ իր հայեցողութեան զանազան համաժողովներ, նոյն իսկ կառարավարութիւնից հաստառուած ընկերութիւններ փակել, ձերբակալութիւններ անել եւալն, եւայլ։ Բայց արգէն ուշ էր դիկտատուրայի դիմելու, այժմ այդ բոլոր միջոցները այն աղդեցութիւնը պէտքէ անէին, ինչ փայտի հարուածները ծովի կատաղած ալիքները զպսպելու գործում։ Ապստամբական ողին արգէն տարածուել էր և զօրքի ու նաւաստիների մէջ։ Ահծովում «Պոտեմկին» զրահակիրը մի քանի նաւերով բարձրացել էր կարմիր գրօշակ և ոմբակոծում էր ինքնակալ Ռուսաստանի քաղաքները։ Դրութիւնը սպասնալից էր, չէր կարելի չզիջել։ Եւ յունիսի 6-ին Պետերբուրգում Ցարը ընդունեց գեմսավային և քաղաքային գործիչների ներկայացուցիչներին, լսեց իշխ։ Տրուրեցիցի նշանաւոր ճառը, խօսք առաւ «պետական աշխատանքի համար հրաւիրել ընտրուած մարդկանց»։ Մի ամիս անց, օգոստոսի 6-ին, հաստատուեց Պետական Դուման, առանց խօսքի, ժողովների և անձի ազատութեան, առանց օրէնսդրական ինիշխատիւի։ Լեաոը մուկ ծնեց. դա պարլամենտիզմի բիւրոկրատիական վիժմունք էր և, հետեւարար, չէր կարող գուհացնել սահմանադրական ազատութիւններ պահանջողներին։ Կոիւլ շարունակուեց. դարձեալ ցոյցեր, տերրորիստական գործողութիւններ, խոռվութիւնոր։ Վերջապէս Մուկուայում հոկտեմբերի 14-ից սկսուեց յեղափոխութեաննոր, աւելիուժել գէնքի գործադրութիւնը—քաղաքական ընդհանուր գործադրու, որ տարածուեց ամբողջ Ռուսաստանում։ Հաշտեցնել երկու կռուող մասերը՝ ինքնակալութիւնը և յեղափոխութիւնը՝ յանձն առաւ կռմս վիտաէն, որին աջողուել էր Պորտամուտում կնքել ոռուսապնական խաղաղութիւնը։ Եւ ահա այ գիտլումատի խորհրդ-

գով հրատարակուեց հոկտեմբերի 17-ի մանիքեստը, որով
սկսեցինք մեր այս տեսութիւնը:

Դա Ռուսական Մհծ Յեղափոխութեան առաջին մհծ յաղ-
թանակն էր, այնքան տարիների զոհաբերութիւններից և տիտա-
նական ջանքերից յետոյ: Ամբողջ Ռուսաստանը հսկայ ովկեա-
նուի նման ազատութեան այդ կարմիր օրերում ծփուժ էր ու-
րախ ուրախ և շաշում շառաչում յաղթական, վեհ երգերից,
ճառերից և կոչերից: Ժողովրդի ուրախութիւնը սուգ էր հին,
զառամեալ կարգերի պարագիտների համար, և նրանք նենք
դաւադրութեամբ վրայ տուին իրանց սև հարիւրեակներով կար-
միր զրօշակակիրների վրայ, գնդակի տարափ չխնայեցին ի-
րանց ատելութիւնն ու վրէժն անմեղներից լուծելու համար: Այն դօքերը, որոնք ապուշ կտրած նայուժ էին թուրք աւա-
զակների և մարդասպանների քստմնելի բարբարոսութիւնների
վրայ և չէին համարձակում գնդակահար անել հրկիզող, թալա-
նող, բռնաբարող, սրբապիծող մարդասպանների վոհմակները,
յայտնելով թէ «հրամայուած չէ»—այժմ գնդակներ էին տեղում
փողոցում տօնական տրամադրութիւնով խոնուած ժողո-
վրդի վրայ: Այդ է հին բեմիմի լոգիկան: աւազակը, մարդա-
սպանը, հրկիզողը վնասակար չեն, այլ վնասակար են բիւրո-
կրատիայի դէմ «կորչի» աղաղակողները: Եւ մանիքեստը սրբս-
կուեց անմեղ երեխաների և կանանց տրիւնով և ջարդուած
գլուխներից ցրիւ եկած ուղեղի կտրներով: Խնտիլիզինցիան,
հրէան, հայը արժանացան Տրեպովեան սև հարիւրեակների զա-
զանային բարբարոսութիւններին: Այդպիսի մարտիրոսութիւններով բացուեց նոր կեանքի արշալոյսը:

Վիտոնէի բռնած տարտամ, տատանուող դիրքը հէնց
սկզբից վչչացրեց նոր գործը: Նա հեռատեսութիւն չունեցաւ
։նոր կառավարութեան» գլուխ կանգնեցնել նոր ուղղութեան
մարդկանց, որոնց թիւը այնքան շատ է Ռուսաստանում: Նա
թոյլ տուեց որ «նոր կառավարութեան» հետ զուգընթացարար
գործեն Տրեպովեր և Պորեգոնոսցեմեր իրանց բազմաթիւ մութ
գործակալներով: Նա իսկոյն և եթ չհրատարակից բոլոր բաղա-
քական յանցաւորներին ներուժ: Նա գիւղացիութեան հողի պա-
հանջը անտես էր արեւ: Եւ Տրեպովի ծրագրով Ռուսաստանի
բոլոր անկիւններում «հայրենասէրների» սարքած ջարդերը ինչ-
պէս և Լեհաստանում իսկոյն և եթ յայտաբարուած զինուորա-
կան դրութիւնը՝ վարկազուրկ գարճրին վիտոնէի կառավարու-
թիւնը: Հաւատ չկար դէպի այն սահմանազրութիւնը, որ պէտք
է մշակէր այդպիսի կառավարութիւնից հրաւիրուած Պետական

Դուման իր նեղ դասակարգային ընտրողական իրաւունքներով։ Եւ յեղափոխութիւնը շարունակուեց Խուսաստանում, պահանջում էր Սահմանադիր ժողովի հրաւիրում՝ ընդհանուր, հաւասար, ուղիղ և գաղտնի ընտրողութեամբ. պահանջում էր բոլոր քաղաքական յանցաւորներին ներռում, հողի ազգայնացում, հին բեժիմի ներկայացուցիչների հեռացում պաշտօններից, ջարդերի հեղինակների խիստ պատիճ, Լեհաստանի համար ինքնավարութիւն։ Եւ քանի ուշ էր տրուում զիջումը ու թերի—այնքան ծայրայեղ էին դառնում պահանջները։ Բիւրոկրատիան չէր ուզում այդ հասկանալ։ Նոր զիջումներ հրատարակուեցան, ոչ բոլոր քաղաքական յանցաւորներին ազատելու մասին, գիւղացիների յետ գնման վճարների թեթևացման և հողարաժինների ընդարձակման մասին։ Տրեպով, Պոպեկոնոցեկ և Գլազով հեռացրուեցան իրանց պաշտօններից, այլ պաշտօններ ստանալով և մերձենալով պալատին... Մի քանի ժամանակից յետոյ վերացրուեց և արտակարդ կարգադրութիւնը Լեհաստանի մասին։ Բայց փոխարէնը նոր անտակտութիւններ, գիւղացիական շարժումներով բռնուած նահանգները նորիցուղարկում են արտակարգ լիազօրութիւններով գեներալ-ադիւտանտներ, որոնք իրանց խմբութիւններով տերրորիստական ընդդիմակութիւն են յարուցանում իրանց գէմ (գեներալ Սախարովին սպանում է մի կիս)։ Բոլոր ազատ քաղաքացիներին յատկացրուած «միութիւն կազմելու» իրաւունքից զրկուում են պոստ-հեռազրական պաշտօնները. առաջ է գալիս պոստ-հեռագրական գործադուլ ամրող Խուսաստանում իր զարհուրեկի հետևանքներով։ Բանտարկում են «Փիւղացիական միութեան» պարագլուխները։ Բաղմամիլիօն զօրքի և նաւատորմի հնացած կարգ-կանոնի մէջ ոչ մի փոփոխութիւն չի կատարւում, և զինուորներն ու նաւատորները յուզուում են, պահանջներ անում, տակտամբուում։ Կրօնշտատից սկսած մինչև Սեաստոպոլի, Ղաղղիկոսովկից մինչև Վաղշաւ զօրքը պատակուում է «կառավարական» և «հակակառավական» մասերի. տեղի են ունենում ճակատամարտեր թէ ցամաքի և թէ ծովի վրայ. հետևանքը. հազարաւոր սպանուածներ, գերի ընկածներ, մի քանի խորտակուած ուղմանաւեր, քարուքանդ արուած շինութիւններ։ Այդպիսով դասալքութեան ու անհշխանութեան պատկերը սարսուբեր մոայլութեան է հասնում, բայց և այնպէս անիծուած հին բեժիմի բուերն, բորենիներն և վագրները չեն ուզում ձեռք վերցնել զժրախտ երկրից։ Սընանկութեան և քայլայման դուսն է հասել ժողովուրդն էլ, ակետութիւնն էլ, բայց և այնպէս արմատական զիջումներ անելու փոխարէն գեռ սպանուում են զինուորական դիկտատուրա հաս-

տատել և արեան մէջ խեղպել այդքան երկունքների մէջ ծնուած մանուկ ազատութիւնը։ Պարագիտ բիւրոկրատիան չի կարողանում հասկանալ որ պետութեան նովատակը իրանց նըման ոճագործների պահպանութեան մէջ չէ, այլ նրա նպատակն է՝ բոլոր քաղաքացիների բարօրութեան և ազատութեան ապահովութիւնը։ Նրանք պէտք է իմանային որ մինչև չափահովութիւնը։ Նրանք պէտք է իմանային որ մինչև չափահովութիւնը։ Ազատութեան լայն սահմանադրական զարգացումը՝ անկարելի է սպասել արմատական հոսանքների կանոնաւոր և խաղաղ ընթացքը։ Մինչև Ռուսաստանում կատարուող բուրժուական-գեմոկրատիական յեղափոխութիւնը Սահմանադիր ժողովի միջոցով լայն հուն չքանայ իր առջև, նա չի ձեռք վերցնել կատաղած հեղեղինման իր՝ աւերիչ ընթացքից։ Բիւրոկրատիայի կառուցած ամբարդակներն ու թմրերը, ժամանակաւոր արգելքներ դնելով, միմիայն աւելի անզուսպ, աւելի կործանիչ են զարձնում յեղափոխուական հներգիան։ Ռքան շուտ հրաւիրուի Սահմանադիր ժողով՝ այնքան հեշտ կը լինի վերջացնել յեղափոխութիւնը և սկսել նոր կեանքի ստեղծագործական աշխատանքը։ Ռուսաստանը ցեղերի, կրօնների, կուլտուրների և աշխարհագրական ույացմանների չափականց բարդ պիսակեսունակ և խճճուած մի զանգուած է, ուստի բիւրոկրատիական հանձարից վեր է, առանց ազգաբնակութեան կամքն իմասնալու, առանց նրա կատարեալ ներկայացուցչութեան մշակել այնպիսի Սահմանադրութիւն, որ զերծ լինէր բիւրոկրատիական շարլոն Փորմուլներից, նեղ կուսակցական անհամբերութիւնից, անշարժութեան ընկեր դոգմատիզմից և իրականութեան հոտառութիւնից զուրկ զսկտրինեօրութիւնից։ Միթէ պարզ չէ հարցը։ Դասնանը մեր երկրին։

Տասը ամսուայ ընթացքում կառավարութիւնից խրախուսուած թուրքական խժժութիւնները Բագուի, Դանձակի և Երեւանի նահանգների քաղաքներում և գիւղերում հայ ազգաբնակութեան դէմ այնքան անպատիծ մացին որ վստահացան մուտք գործել նաև փոխարքայանիառ Թիֆիսը և չինգիզանեան վայրագութիւնների ներկայացումներ սարքել Մէյդանում, ոռու բիւրոկրատիայի, դինուորութեան և վրաց հայակեր շովինիստների աշքերի առջև։ Սակայն կովկասի մայրաքաղաքում հայ և միջազգային կազմակերպութիւնները մտադիր չէին թոյլ տալու որ Մէյդանը հռովմէական կրկէս զառնայ, իսկ բիւրոկրատիան, օֆիցերները և վրացի շովինիստները կրկէսի հանդիսատեսները, այդ կրկէսի կատաղած վագրների և բորենիների դերը պէտք է ստանձնէին թուրք մարդասպաններից կազմ-

ուած վոհմակները իրանց բէկերի առաջնորդութեամբ, լայց զլրանց առջև ցցուեցին ոտից գլուխ զինուած հայ կտրիճներ, այլ ոչ Հռոմի կրկէսների քրիստոնեաներ, որոնք, յոյնները դրած Նախախնամութեան վրայ, աղօթքներ էին մըմնջում այն ժամանակ, երբ գաղանները յօշոտում են նըրանց մարմինը և լիդում իրանց արիւնու գունչերը... Եւ հանդիսատեսները վերջապէս լրարմբեցին ամօթից, նրանց մեսած խիզճը շարժուեց և ստիպուած եղան իրանը ևս միջոցներ ձևոք առնել և յետ քշել իրանց որջերից գուրս եկած արիւնածարաւ. բէկերին իրանց ընչաքաղց նորարմների հետ դէպի Բորչալուի ծմակները: Ամօթ և նղովք այն քաղաքականութեան որ երես է տալիս խուլիքանական ամեն տեսակ արտայտութիւններին! Դրա վերջը այն է, ինչ որ տեսնում ենք...

Այժմ ամենայետին հայն էլ հասկացաւ, որ բանակալական բեժիմը ժողովրդի համար աւելի մեծ չարիք է, քան ամենաուժեղ երկրաշարժը և ամենատհանելի ժամատախտը, լինի այդ բռնակալութիւնը խաչալիր, թէ մահիկաւոր գրօշակի տակ: Թշուառ հայութիւնը Մեծն Պետրոսի ժամանակներից սկսած զոհում էր ամեն ինչ, միայն թէ գայ և հաստատուի իր ապրած երկրում «քրիստոնեաների պաշտպան հզօր Ծուսաստանը»: Եւ երբ իրականացաւ այդ իդձը՝ նրա ցնծութեան վերջ չկար: Այնունետեւ անսահման հաւատով որ իր կեանքը, գոյքը և պատիւը ապահովուած են «անօրէնների» ոտնձգութիւններից, հայը սերնդից սերունդ, մօտ մի գար չարչարում էր, արիւն քրտինք թափում իր բարօրութեան վրայ, շնչացնում քաղաքներ ու գիւղեր, կրթում, ծաղկեցնում առևտուրն ու արդիւնագործութիւնը, հաւատարմութեամբ ծառայում պետութիւնան, լքցնում նրա գանձարանը իր հալալ աշխատանքից հանած տուրքերով, իր զաւակների արիւնն էր զոհում ընդհանուր հայրենիքի համար, իր հլունագանդութիւն մէջ բողզում էր միայն վարչութեան ամենածայրայել անարդարութեան դէպքերում: Նրա հաւատը դէպի իշխանութիւնը այնքան կոյը էր որ նա նոյնիսկ մոռացաւ ինքնապաշտպանութեան անհրաժեշտութիւնը, որովհետեւ մի ըռուէ անգամ չէր կասկածում թէ իշխանութիւնը, զօրքը, ոստիկանութիւնը և արդարադատութիւնը գոյութիւն ունին բոլոր բնակիչների կեանքի, զոյքի և պատառի պաշտպանութեան համար. նրա մտքովն չէր անցնում մասսային սպանութիւնների, թալանի և այլ ոճրագործութիւնների հնարաւորութիւնն անգամ: Բայց անա փետրուար ամսից մինչև օրս Կովկասի բոլոր հայաբնակ քաղաքներում և գիւղերում, ոուս իշխանութեան բարեհաճ թոյլտութեամբ, օր ցերեկով, զօրքերի աչքերի առջև,

ուուս պոլիցիայի գիտութեամբ զինուած և կաղմակերպուած թուրք օրդաներ, իրանց արխինարբու բէգերի, խաների և սէյխների առաջնորդութեամբ, կոտորում են հայերին, թալանում նրանց ունեցածը, այրում նրանց տները, կտրտում այգիները, բշում հօտերն և նախիները, աւերում և յափշտակում գործարանները, բռնաբրում, գերի տանում կանանց, մորթոտում երեխաներին և ծերերին, բռնի կրօնափոխ անում, պղծում եղեղեցիները, մի խօսքով կատարում այն բոլոր զազանութիւնները, որոնցից մարդու գլխի մաղերն բիզ բիզ ցցւում են և արինը երակների մէջ սառչում է: Եւ ի՞նչ: Գտնուում են «ալմինիստրատորներ» որոնք արդարացնում են այդ բոլորը և դեռ մեղաւոր են համարում տուժող հայերին: Գտնուում են ֆաղէէվսեր և Տակայաշվիլիներ, որոնք իրանց մէջ ոյժ են գըտնում պատժելու հչ չարագործներին, այլ օրէնքի և իշխանութեան պաշտպանութիւնից զրկուած և օրհասական կուում իրան պաշտպանող հային: Հազարաւոր փաստերից ո՞րը առաջ լերէնք, մի՞թէ միայն Պոյլի կայարանում պատահած դէպքը, երբ զինուած թուրքեր, որսկան ջների նման, մտան ժամանած զնացըի վագոնները՝ հայ որոնելու երբ գտան մի անզէն խեղճ պատահի, խլեցին նրան իր լեղապատառ մօր զրկից, դուրս քաշեցին պլատֆորմ և ուուս ժանդարմների, ստրաժնիկների, զինուորների և օփիցերների և ապշած հասարակութեան առջև մորթեցին թշուառին, միմիայն այն պատճառով, որ նա հայ է. և ոչ մի ձեռք չքարձրաւ կանդնեցնելու այդ քստմնելի չարագործութիւնը! Ո՞չ մի ձեռք!.. «Հրամայուած չէ հրացան արձակել» —ահա արդարանալու ստերէօտիպնախաղասուգիւնը, որ ամեն անդ լսուում է զինուորներից և կազակներից, երբ ինպիրը հայի պաշտպանութեան է զալիս: Ո՞վ է տուել այդ ոճրախնամ հրամանը: Մի՞թէ արդարադատութիւնը պէտք է կոյր մնայ մինչև վերջ. մի՞թէ պատասխանատու չեն փոխարքան և իր գործակիցները և պոլիցիան այգախիսի բարբարոս ուղղութիւն ունեցող քաղաքականութեան համար: Մի ամբողջ ժողովուրդ դարձմել են Դրէյֆուս, որին հալածում են բիւրուլրատները. թիւրք խուժանը և վրացի շովինիստները, և այդ սաոր, խաւար դաւադըրութեան դէմ կուտ չէ գուրս գալիս մի Զոլա իր համհարզներով... Բոլոր սաոր և խաւար ուժերը միացած են հայութիւնը մեղադրելու մէջ. լսելով լսում են և չեն իմանում ճշմարտութիւնը, տեսնելով տեսնում են և չեն ճանաչում չարագործներին: «Վայ ձեզ կեղծաւորաց. զի նման էք գերեզմանաց բոնոց, որ արտաքոյ երկին գեղեցիկ և ի ներքոյ լի են ոսկերօք մեսելոց և ամենայն պղծութեամբ»...

Մեր անցեալ տեսութիւնը (№ 10) գրուած էր հոկտեմբերի 5-ին, երբ զեռ ևս կարմիր թանաքով զինուած ցենզուրան էր իշխում մամուլի վրայ: Դեռ այն ժամանակ, բոնկուած կրքերն հանդստացնելու նպատակով, պահանջում էինք նախ և առաջ՝ «աղատ և արդար կարգեր»: Յետոյ՝ պահանջում էինք «գումարել հայ-թուրք-վրացական ներկայացուցչութեան ժողով»: Այդ երկրորդ պահանջը երկու ամիս անց դնում են և տեղական թերթերը, այն զանազանութեամբ որ հայոց մի քանի լրագրներն ուղղում են բաւականանալ միայն հայ-թրքական համազումարով: Մենք պնդում ենք մեր պահանջի վրայ և նոյնիսկ ընդարձակում այն, մտցնելով ներկայացուցչութեան մէջ նաև ուղղ հասարականութիւնից ընտրուածներին: Մենք այդ համագումարին միայն խաղաղագրական ֆունկցիաներ չենք յատկացնում, այլ ցանկանում ենք որ նա դառնայ հասարակական խիղճն արտայայտող մի ժողովը գալիքական դատարան: Այն ոճիրները որ կատարուել են այս 10 ամիսների ընթացքում իրաւունք է տալիս սահելու որ հայ աղջո հազար անգամ աւելի անարդարութիւն կրեց Կովկասի ըեակցիօն ոյժերի կողմից քանի թէ Դրէջփուսը Ֆրանսիայում: Գլխաւոր յանցաւորը ագմինիստրացիան է, որից կախում ունեն մեր չինովիկ դատաւորները և քննիչները. այդ պայմաններում երբէք հայ ժողովուրդը արդարադատութիւնը չի դանիլ: Իսկ անպատիժ թողնել մի ամբողջ ժողովրդի զլիին կատարուած անլուր ոճրագործութիւնները նշանակում է զուրկ լինել արդարամութիւնանշոյլից անգամ: Եւ մի հասարակութիւն որ իր մէջ չի դանում հրամայական պահանջ դոչելու ոճրագործների երեսին՝ j'accuse-նա արժան չէ մարդկային անունը կրելու... Զանազան կուզմինսկիների և Սեղավանիրի մրուած թղթերը զրոյ նշանակութիւն չունին: Հասարակութիւնը ինքը պէտք է ընտրի քննիչներ և զատաւորներ, որովհետև Դալի-Ալիներին հովանաւորով և Արնոլդներին ուղացնից հետացնող մի ագմինիստրացիա երբէք չի նպաստիլ արդարութեան վերականգնման... Հաղարաւոր թշուառացած այրիների և որրերի արտասուաթոր աչքերը, հազարաւոր անմեղ զոհերի արիւնը արդարութիւն ևն պահանջում, և մինչև չգոհացնուի այդ պահանջը՝ Նեմիկիդան հանդիսատ չի թողնի մեր աւերուած, հկկիլուած արիւնաներկ երկիրը...

Թողնենք հեռու ապագան և վերցնենք մեր սերնդի ոյժերին համապատասխան դործերը: Հարցնում ենք, կարող է հայ ժողովուրդը հանդիսատ որտավ նուիրուել իր խաղաղ աշխատանքին, քանի գեռ պաշաճնափարում ևն ոճրագործութիւնների հետկտեմբերը, 1905.

զինակներն, զրդիչները և հովանաւորողները, քանի գեռ արդար հասուցում չեն ստացել չարագործները ժողովրդական դատարանից: Կարսղ է հայը շարունակել բարի հարեանութիւնը մի տարրի հետ, որի գաղանացին բնազդները ամեն բողէ պատրաստ են ըսնկուել այս կամ այն պրովոկատորի, բէզի կամ սէյֆիդի քարոզով Համերաշխութեան, եղբայրութեան կօչերը թող շարունակ կըրկնուեն, թող սոցիալիզմի աղիասացիան համանգով տարածուի և թուրք մասսայի մէջ, սակայն մեր սերունդը այժմ միայն այդ պլատոնական միջոցների վրայ անկարող է յոյս դնել, եթէ չի ուզում Շչեղրինի բարեւ-սկզբանութեան մէջ պէտք է այժմ այսպիսի պայմաններում է ապրում որ եթէ չի ուզում բնաջնջ լինել Կովկասում պէտքէ տասը ամսուայ գաւոն փորձերից դասեր վերցնի: Այդ գասերն ասում են նրան. 1) հին բեժիմը պէտք է տասնց մնացորդի վերանայ և տեղ տայ լայն սահմանադրական—ժողովրդավարակուն ու կառավարութեան. 2) հայ ժողովուրդը պէտք է ամենալայն չափերով իրազործի ինքնապաշտամութեան միջոցները, տեղափոխի թուրք տարրերով շըրջապատուած հատ-հատ հայ գիւղերը հայաբնակ շըրջանների մօտ, խոսն թուրք-հայկական բնակիչներ սևնեցող գիւղերում պէտք է կատարուեն տարրեր տարրերի փոխազդութիւններ, այնպէս որ միացել ազգաբնակութիւններ ստացուեն այդ կէտերում. քաղաքներում, ուր հայերը փոքրամասնութիւն են կազմում թուրքերի համեմատութեամբ (Բագու, Գանձակ, Նախճաւան և այլն) և քաղաքային ինքնավարութիւնները, չնորհիւ թուրք տարրի տղիտ և անկուլտուր բնազդներին, ընկնում են հասարակական կեանքի անպատճառ գործիչների ձեռքը, որոնք զանգաղեցը նում է քայքայում են միւս՝ աւելի կուլտուրական՝ տարրերի կիանքը, այդպիսի բազարներում թուրքերը պէտք ունենան առանձին թաղեր իրանց տառանձին ինքնավարութեամբ, եթէ չեն ցանկալոր յարկուին ոչ թուրք փոքրամասնութիւնն իրաւունքները: Բնդիանուը ձայնաւութեան արդար սկրլունքը զանազան բէզեր, հաջիներ, սէյփներ ու դոչիներ, օգտուելով թուրք մասսայի տղիտութիւնից, անշուշտ ի չար պէտք է գործ դնեն և դրա շնորհիւ Բագուի, Գանձակի, Շուշու, Նախճաւանի, Եղիսու և այլ թիւրք-հայ ազգաբնակութիւն ունեցող բազարները մատնուած պէտք է լինեն կատարեալ անշարժութեան: Մինչեւ որ սոցիալ-դեմոկրատիական պրոպագանդը իր գործը տեսնի թրափական խաւերում—անթիւ անհամար չարիքներ կը թափուեն հայերի գլխին և բրիսունեայ տարրերի հետ տուժողի վերում կը լինի հէսց ինքը անզիտակից թուրք ժողովուրդը, որին ու մարմնի և խաւերի մէջ

ողաճելը շահաւէտ է թուրք իշխող դասակարգերի տեսակէտներից: Երբ այդպիսի քաղաքներում հաստատուեն կուլտուրական փոքրամամութեան իրաւունքները ապահովող ժամանակաւոր միջոցներ—տուժողը կը լինի յետագէմ տարրը, որ և ստիպուած կը լինի հրաժարուել իր նեղ կրօնացեղական աւանդութիւններից: Այլապէս անարդար է հայի շլինքից կապել թուրքի յետամմացութիւնը և այդ ժամը բեռի տակ խեղզել հային: Ամեն կերպ օգնենք որ մեր հարեան թուրքը լուսաւորուի, քաղաքակրթուի, թողնի իր գաղանային ինստինկտները, սակայն մինչև մեր սերմերը հունձ բերեն՝ միջոցներ առնենք նրա տըգիտութեան և ֆանտաֆիզութեան տարերային արտայայտութիւնների դէմ: Մենք մեր գիւղերի շուրջ ականներ էլ կը փորենք, պատնէշներ էլ կը կանգնեցնենք, մետաղաթերից ցանցեր էլ կը շինենք, իւրաքանչիւր կուողի ձեռքն զէնք էլ կը տանք, բարիկադներ կը շինենք, քանի որ այդպէս չվարուելով քարուքանդ եղանք: բայց այդ մեր ինքնապաշտպանական միջոցները չեն արգելում բարի հարեանների յարաբերութիւններ պահպանելու, այդ միջոցները խաղաղ թուրքերի դէմ չեն, այլ աւազակային ասպատակութիւնների դէմ: Այդ աւազակներից պէտք է պաշտպանուել ինչպէս պաշտպանուել ենք արիւնարբու զաղաններից, առանց դժուկիխոտական ճառերի: Եւ հաւատացէք որ զաղանները այնքան խելք ունեն որ գիւեն իրանց կաշիները հեռու պահել անվեհպ զնդակներից... Պայլի զլիսին աւետարան կարգալը տնտեսատակ միջոց է: Երբ նոր կարգերը խոր արմատներ կը գցեն մեր իրականութեան մէջ և կ'իրագործուի գրախութը, ուր վագրն ու գառը բարի հարեանութիւն են պահպանում այն ժամանակ ինքն ըստինքնեան կը վերանան ինքնապաշտպանութեան վայրենի դործիքները: Իսկ մինչ այդ մեր քայլերը յարմարեցնենք մեր առաջ ընկած ճանապարհի յատկութիւններին, գեղեցիկ է աստղազարդ երկինքը, սակայն մննք ստիպուած ենք խորտուբորտ ճանապարհով քայլելու և մեր ստների տակ նայելու...

Հ. Ս.

1 դեկտ. 1905 թ.

ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Խաւական յեղափոխութիւնը կռուի նոր եղանակ՝ քաղաքական ընդհանուր գործադղուցին տուաւ ահագին քաղաքայիութիւն հասարակական-տնտեսական բարեփոխութիւնների ձըդտող կռուակցութիւնների տակտիկայի մէջ:

Աւարո-Ռէնգարիայի զանազան քաղաքներում վիթխարից յոյցեր կազմակերպուեցան սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարութեամբ, պահանջ էր գրուած՝ ընդհանուր, հաւասար և ուղղակի ընտրողական իրաւունքը: Մինխոտր նախագահ Գառոչը ստացաւ զառամեալ կայսրից արդէն համաձայնութիւն այդ բենքորմի նախագիծը կազմելու և բայխսրատին ներկայտցնելու: Ժամանակի նշան է և մի այլ երեսյթ, աւստրիական պարլամենտում (բայխսրատ) լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ 30 հազար ձայնների մեծամասնութեամբ պատգամաւոր ընտըրուեց աւստրիական սոցիալ-դեմոկրատիայի հոչակաւոր պարագլուխ գոկարոր Վիկտոր Աղվերը: Զանազան առանձնաշնորհումներ վայելելող ազնուական-բուրժուական դասակարգերից կազմուած աւստրիական պարլամենտի մէջ այդպիսով մուտք է գործում սոց.-դեմոկրատիայի տաղանդաւոր առաջնորդներից մէկը, և համարակալի է թէ գա որքան մեծ նշանակութիւն կ'ունենայ հէնց ընտրողական իրաւունքի նախագիծը ընսելու ժամանակ:

Իտալիայում ևս սկսուել է շարժում ընդհանուր ընտրուղական սկզբունքի նշանարանով, և այդ շարժման պարագլուխ է կանդնած երիտասարդ սոցիալիստ Արտուր Լաբրիօլան, նշանաւոր տնտեսագէտ Անտոնիո Լաբրիօլայի որդին:

Յեղափոխական ալիքը Ռուսաստանից հասաւ և խոշոր կազմիտալիզմի երկիր Անգլիան: Թայմզի ափերին հոկտեմբերի վերջերում հաւաքուած էին ահագին թուով աշխատազուրկ բա-

Նուռներ իրանց կանանցով և երեխաներով և «աշխատանք» էին պահանջում: Համաշխարհային կենտրոն վիթխարի լոնգոնի փողոցներում երգերով և գրօշակներով առաջ խաղաց այդ հրակայական ամբոխը, Հայդ-Պարկում միտինգ սարքեց, պատաժամաւրներ ուղարկեց Բալֆուրի սօտ և ներկայացրեց իր պահանջները: Վախեցած խոշոր կապիտալիստները և լորդերը իւկոյն ահագին դումար հաւաքեցին՝ ողորմութիւն առաջարկելով այդ մարդկանց, որոնք աշխատանք էին ուզում: «Եթէ մի բան չէք անելու մեր օգտին, մենք ստիպուած պէտք է լինենք, ասաց մի կին Բալֆուրին, իրար ուտել կամ այստեղ արիւնահեղութիւն անել»: — Ահա ինչ է ստեղծել աշխարհիս ամենահարուստ երկրում կապիտալիստական կարգ ու կանոնը: Բայց ոչ միայն Բալֆուրի մինիստրութիւնը, որ արդէն նոյեմբերի 23-ից գոյցութիւն չունի, այլև նրան փոխարինող կեմպրէլ-Բաններմանը իր լիրերալ ծրագրով չի կարող գոհացուցիչ լուծում տալ սոցիալական հարցերին, ինչպէս այդ ասել էինք գեռ 1903 թ.-ին (№ 3), բանուռական կուսակցութեան պարագլուխ կրուկսին պատգամառը ընտրուելու առիթով: Սոցիալական հարցի լուծումը, վերապահուած է աւելի թարմ կուսակցութեան, այն է սոցիալ-գեմոկրատիային, որի ներկայացուցիչները պարլամենտում զեռ ստկաւաթիւ են, սակայն պարլամենտից դուրս է նրա ոյժը:

Այդ կուսակցութեան գերը աւելի մեծ է ֆրանսիական պարլամենտում, և համրապետութեան կառավարութիւնը սկսել է մի շարք կարեռ պաշտօններ տալ սոցիալ-դեմոկրատ գործիչներին: Այդպէս, օրինակ, Մազադասկար կզզու վրայ խաղաղ օրինակարգ հաստատելու համար, նահանգապետ գեներալ Դալլինիի փոխարին, նշանակուել է սոցիալիստ Օգանիելին, որ աչքի ընկնող տաղանդ ցոյց տուեց Լիօնի քաղաքագլխի պաշտօնում: Ներքին գործերի մինիստրութեան մէջ էլ առողջապահութեան և բարեգործութեան ճիւղի կառավարչապետ նշանակուեց սոցիալիստ Միրմանը...

Մասնակի գործադուլ միշտ լինում են թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում: Սակայն վերջերս Ֆրանսիայում տեղի ունեցած գործադուլը զինանոցներում և դոկերում առանձին նշանակութիւն ստացաւ, որովհետեւ ֆրանսիական ընտրուկրատիան փորձեց «հայրենասիրական» պատրուակի տակ սահմանափակել պետական հաստատութիւնների մէջ գործադուլի իրաւունքը, սակայն զտաւ ընդդիմադրութիւն պարլամենտի սոցիալիստ և արմատական կուսակցութիւնների կողմից:

Շվեդ-Նորվեգիական տանգնապն էլ խաղաղ լուծում ստացաւ: Կուլտուրապէս բարձր այդ երկու հարևան երկրների ներկայացուցիչները և Օսկար թագուորք գտան որ ուժով չի կարելի միացնել այն, ինչ բնականարար ձգտում է անջատման: և 1815 թուականից միացած Շվեդիան ու Նորվեգիան այսուհետև դառնում են ինքնակախ պետութիւններ: Ոչ միայն միութեան, այլ և կառավարութեան ձեր հարցը Նորվեգիայում վճռուեց ժողովրդական ձայնատութեամբ (պլերիսցիտ): Զնայած որ սոցիալիստները ու հանրապետականները ամենաեռանդռն ագիտացիա էին ոկսել միապետականութեան դէմ, սակայն երբ ժողովուրբէլ ձայների ահազին մեծամասնութեամբ (260 հազ. 70 հազ. դէմ) միապետութեան կողմը գուրս եկաւ, խոսնարհուեցան այդ կամքի առաջ և միաձայն ընտրեցին Նորվեգիայի գահի համար Դանիայի պրինց Կարլոսին, որ ընդուներով իրան առաջարկած թագը՝ ցանկացաւ կոչուել Գալոն VII-րդ:

Անցեալ անգամ մենք ներկայացրինք թէ ինչ թշուառութեան մէջ է բուլղար ազգաբնակութիւնը Մակեդոնիայում, ուր նրան, իբրև յեղափոխական տարրի, հալածումէ ոչ միայն թիւրք կառավարութիւնը, այլև մրցակից ազգութիւնների նացիօնալիստական կուսակցութիւնները, ջարդեր սարքելով, կրակելով բուլղարական զիւղերը: Ալբանացիները, Եւրոպական Թիւրքիայի այդ քրդերը, բնաջինջ են արել, մաքրել ըուլղար տարրից իրանց շրջանի բոլոր զաւառները:

Արդ տեսանք թէ երկու տարրուց աւելի ի՞նչ արաւ եւրոպական միջամտութիւնը մակեդոնական հարցում: իսկ նրա գերը մօտ 30 տարի Թիւրքաց Հայտառանում գիտենք ու գիտենք:

Այժմ Եւրոպան էլ ֆինանսական ինչ որ կոնտրոլի տառարկութիւն է տնում և դժկամակող Սուլթանին ստիպելու համար բոլոր մեծ պետութիւնները, բացի Գերմանիայից, զրահակիրներ են ուղարկում Պոլիս: Նոյեմբերի 2-ից մինչև օրս Եւրոպական ուլուիմատումի հետ զանազան խաղեր է անում Ելգըզի ճիւղաղը և վերջ իվերջոյ ի հարկէ նա կը շակի իր բաները կապիտալիստական Եւրոպայի հետ, որին հարկաւոր են միայն փող և կոնցեսսիաներ: Հէնց այդ ֆինանսական կոնտրոլի առանձն էլ Banque Ottomane-ի շահերն են, որոնց սքօղուած պաշտպաննութեան աւելի, բան «ըեփորմների» հետ զործ ունի Եւրոպան...»: Այդ բանկի բաժնատէրերը Ֆրանսիայի, Անգլիայի և այլ պետութիւնների կապիտալիստներն են, և ինչպէս մի բանի տարի առաջ վաշխառու Լորանդո և

Թուրինիի համար զրահակիրներ ճարուեցան Դարդուեցան Դարդանելի ջրերն լողալու, այնպէս և այժմ: Եւրոպական կապիտալիստների շահերն են պաշտպանում եւրոպական բոլոր ներկայ կառավարութիւնները, և եթէ արևելքան ազգերը այնքան միամիտ են որ կարծում են թէ մարդասիրական որևէ զգացմունքով եւրոպան կը միջամտի նրանց արդար գատը պաշտպանելու համար—աւելի և շատ պէտք է տուժեն, քան տուժել են ցայսօր կռուելով աննպատակայարմար և անիրազործելի մի տակարեկայուվ... Միթէ այդ կապիտալիստներին ձեռնուու է արմատական միջոցներ ձեռք տոնել իր կթան կովի—Թիւրքիայի բեժիմի դէմ...

Հ. Ս.

Դեկտ. 2-ին:

PRO DOMINA SUA

Որքան մեզ աջողուել է նախկին ցենզուրական ձնշող պայմաններում արտայայտուել, մենք հասարակական-քաղաքական ինդիվիւններում զեկավարուել ենք արմատական-սըրոզքրեսափ ուղղութիւնով: Բաւական է աչքի անցնել կապիտալի, աշխատանքի, հողատիրութեան, քաղաքային տնաաիրութեան, քաղաքային ինքնավարութեան, ազգայնական հարցի, երրիտորիալ աւանումիայի, ընտրողական ալղբունքի, կրթական հարցի, դատաստանի, բժշկական օգնութեան, եկեղեցին պետութիւնից և գլորցը եկեկեցուց անջատելու մասին մեր պաշտպանած զաղափարները—համոզուելու համար մեր ուղղութեան նկատմամբ: Դեռ ցենզուրական պայմաններում, երբ «բանուոր» խօսքն անդամ հալածուած էր, մենք

միշտ պաշտպանելենք բանութերական ծրագրի ուսումնական բարբ մի քիչ թեթևացել են ցենզուրական ճնշումները մենք տուել ենք սոցիալական հարցի մասին մի շարք յօդուածներ («Դասակարգերը ժամ. եւ բող. հաս. մէջ», «Ծնտեսական գարգացման փաղերը», «Թրիդրիխ էնդելս», «Թ'իւրքիայի ֆինանսները»), որոնց ուղղութեան մասին երկու կարծիք լինել չի կարող:

Վերանորոգենք մեր յիշողութեան մէջ նախկին տարիներում մեր ասածներից, որպէս զի պարզ լինի թէ ինչ ուղղութեամբ կարող է առաջ ընթանալ մեր արմատական—պրովեսարի ուղղութիւնը այսուհետեւ:

Դեռ ևս 1099 թ. գեկտեմբերի վերջում մենք գրել էնք (Մշակ, 1900 թ., № 1):

«Դեռ երբէք հզօր բնութիւնը այնպիսի ահուելի պարտութիւններ չէր կրել մարդկային խիզախ մտքից, երբէք զիտութիւնը և տեխնիկան այն աստիճան չէին ծաղկել, քան մեր արտասովոր դարում, բայց այնուամենայնիւ մարդկութեան նոյն խակ ամենառաջագէմ մասը չը հասաւ ցանկալի երջանկութեան: Եւ դրա պատճառը այն չէ, որ մարդկային ցեղը աւելի է աճում, քան նրա ապրուստի միջոցները: Ոչ: Դեռ երբէ՛ մայրերկը երեսից և խորքերից մարդկային աշխատանքը չէր կարողացել այնպիսի քանակութեամբ հարստութիւններ համել, քան մեր դարում: Հպատակեցնելով բնութեան ուժերը և մարդ-բանուորին փոխարինելով մեռքնաներով՝ մարդը իր աշխատանքի արդիւնաւորութիւը բիւրապատկել է. այն՝ ինչ որ նախկին դարերում չէր կարող արդիւնաբերել մի տարվայ ընթացքում մի ամաբողջ երկիր, այժմ հեշտութեամբ պատրաստում է մի օրում մի գործարան:

Հաղորդակցութիւնները այժմ այն աստիճան արագացել են և դիւրացել, որ երկրագնդի ամենահեռավոր մասերը այժմ իրար հետ աւելի սերտ են կապուած, քան առաջ մի և նոյն աշխարհի քաղաքներն ու գիւղերը ի-

բար հետ։ Այդ պատճառով մի կոնգոն, մի Նիւ-Եօրկ, մի Պարիզ, մի Բերլին ոչ միայն իրանց երկրների, այլ և համաշխարհային կենտրոններ են, որոնց սպառող և արտադրող նիւթերը ահագին շարժման ու վիթխարի փոխանակութեան մէջ են զցում երկրագնդի բոլոր անկիւնները։ Կարծես այս բոլոր պայմաններում, երբ մարդ տւելի է արտադրում, քան կարող է սպառել, երբ դիւրութեամք մի տեղի տևելորպէ կարող է տեղափոխուել կարիքի վայրը, չը պէաք է լինէին չոր հացի կարօտ և հագուստից զուրկ մարդկանց բազմութիւններ։ Բայց իրականութիւնը այլ բան է ցոյց տալիս։ Հէնց նոյն այդ վիթխարի, հոյակտալ համաշխարհային կենտրոններում, ուր մարդկային հոծ մասսաներ տենդուտ եռանդով սպառում են իրանց մկանունքների և ջղերի բոլոր ուժերը՝ նիւթական հարստութիւնների անսպառ գէզեր տեղծելու համար, հէնց նոյն այդ կենտրոններում, ուր կուտակութիւն են սպառանքների լեռնանման գէղեր՝ մենք տեսնում ենք թշուառութեան ամենասահոելի սպառկերներ։ Հէնց այդ կենտրոններում երեսում է, թէ ինչ գարհուրելի հակասութիւն կայ կապիտալի և աշխատանքի մէջ։ Նիւթական ամբողջ հարստութիւնը կենտրոնանում է մի քանի տասնեակ անհատների ձեռքում, ինչպէս մի բևռում, իսկ հակառակ կողմում մնում է կանգնած այդ հարստութիւնները ստեղծող մասսան, ունենալով միայն այնքան, որ քաղցից չը մեռնի... Սակայն բանուորի համար այդ գրութիւնը ևս տեսղական չէ, որովհետև տեխնիկայի կատարելագործութիւնները օր օրի վրայ փոխարինում են մարդ-բանուորին—մեքենայով, այսինքն սլողակատէ բանուորով, որը ոչ յոզնել գիտէ, ոչ էլ ուտել։

Եւ ահա այդ հոյակտալ քաղաքներում, ուր ապրում են այնպիսի կապիտալիստներ, որոնք միլիոնատէրեր չեն, այլ միլիարդատէրեր, նոյն քաղաքներում, ուր երկինք են բարձրանում կապիտալիստների փառաւոր պարաները, լի աշխարհիս բոլոր շուայլութիւններով—նոյն

այդ քաղաքներում, միայն նրանց թշուառ ու կեղառոց թաղերում, բուն է զրել մարդկային ծայրագոյն չքաւութիւնը։ Լեռնացած մթերքների և տպրանիքների մի չնչին մասը բաւական էր սրբելու համար այն բիւրաւոր մարդկանց արտասունքները, որոնք ասպրում են այդ թաղերում, սակայն մթերքները և ասպրանքները՝ արտահանութեան համար են, կապիտալիստների անկուշա ախորժակներին գոհացում տալու համար են, պէտք է ուղարկուեն վաճառելու... Իսկ այդ աղքատ թաղերի համար դեռ ևս երկար ժամանակ նշանակութիւն են ունենալու բանատանեղծի հետեւալ տողերը։

Слышу я, слышу чей плачъ разливается:
Бѣдность голодная, грязью покрытая,
Бѣдность несмѣлая, бѣдность злобная,
Днемъ она гибнетъ и въ полночь, и за полночь
Гибнетъ она,-и никто не идетъ на помочь...

Ահա այդ հրէշաւոր հարստութեան և հրէշաւոր աղքատութեան քստմելի հակասութեան մէջ է առաջաւոր մարդկութեան թոյլ կողմբ, որի պատճառը աշխատանքի արդիւնքի անարդար բաշխումն է։ Եւ քանի դեռ արդար լուծում չը ստանայ հասարակական այդ մեծ խնդիրը՝ քաղաքակրթութեան հսկայական տուաջադիմութիւնը դոյութիւն կունենայ միայն փոքրամասնութեան համար, իսկ մեծամասնութեան համար նա կը լինի միայն չարիքի բազմապատկումն։

Ապա նոյն այս էջերում զարգացրել ենք մեր հայեացք նոյն հարցերի մասին զանապահ առիթներով։ Բերենք մի երկու ցիտազներ։

«Ոչ հին Փիւնիկիան ու Կարթագէնան, ոչ միշնադարեան Զենովան ու Վենեալիկը կարող էին երեակայել տաևարի և արդիւնազործութեան այն վիթխարի չափերն ու դրամի շրջառութեան այն արագութիւնը, որ դոյութիւն ունի ներկայումս։ Դեռ երբէք աշխատանքի բաժանումը չէր հասել այն կատարելութեան, ինչպէս

այժմ, երբ կապիտալը ճնշող է դառել ոչ միայն իր հսկայական մեծութեան, այլ և իր ստեղծած հիմնարկութիւնների նուրբ կազմակերթեամբ: Վերցրէք բանկերը, բորսաները, ակցիօններական ընկերութիւնները, վարկի կամ կրեդիտի ներկայ զործագրութիւնը և գուք կը տեսնէք, որ նապոլէ օնների և նրա զօրքերի գերը այժմ կատարում են բօրսային և բանկային նապոլէ օնները իրանցից կախում ունեցող ծառայողների լեգիօններով. այժմ զիտնականից սկսած մինչև բանուորը խոշոր կապիտալիստի հպատիկներն են... Միայն ներկայ տնտեսական կազմակերպութեան հետեւնք են բանկային և բորսային գիշատումները, որոնք կը վերանան միայն այն ժամանակ, երբ կը վերանան նրանց ստեղծող պայմանները կամ առետրա-արդիւնաբերական ներկայ կազմակերպութիւնը, որի հետեւնք են և պարբերաբ կրկնուող անտեսական կրիզիները»: (1901, №5. Ն. Տ., եր. 287):

«Ներկայումս մտանաւոր սեփականութեան բանակութիւնից է կախուած կետնքի բարիքների մեծագոյն մասը: Այդ հիմնական սկզբունքն է խակապէս մարդկանց տանջանքների և կատարած ոճինների բուն պատճառը: «Ամէն մէկը իր համար» սկզբունքը դուռ անտեսականն է, ուստի և գոյութեան կուռում աիրում է անխիղճ եսականութիւն: Բայց մարդը «հասարակական կենդանի է» իր բոլոր հակումներով: Հասարակութեան անսակէտը, բազմութեան աւելի նպաստաւոր լինելով, անշուշտ կամաց-կամաց պէտք է աւելի գարզանայ և «ամեն մէկը իր համար» սկզբունքը փոխուի աւելի մարդասէր սկզբունքի. «մէկը՝ բոլորի համար և բոլորը՝ մէկի համար»: Այդ նոր սկզբունքը օրէցօր ասարածում է, և հասարակական կեանքի ստեղծած բարիքները գառնում են սեփականութիւն մասսայի: Եթէ օդը, ջուրը, լոյսը՝ բնութեան պարզեած բարիքներ են, չպէտք է մոռանալ որ կոմֆորտը, կրթութիւնը, բժշկութիւնը, արդարադատութիւնը, գեղարուեստը ևայլն՝ հասարակական կեանքի

ստեղծած բարիքներ են, ուստի իրաւունք չունեն այդ բոլորը վայելել միմիայն առանձնաշնորհեալները։ Պարզ է որ այդ բարիքները չէին կարող առաջանալ, եթէ մարդիկ, գուրեկ հասարակական համակենցաղից, զատ զատ թափառէին անապատներում և անտառներում... Վերցրէք շինեցէք մի հոյակապ տուն անապատում։ Ինչ արժէք կ'ունենայ այդ տունը։ — Ոչ մի։ Բայց նոյն տունը մի մեծ քաղաքի կենտրոնում կը գառնար իր տիլողի համար անսպառ հարստութեան ազբիւր... Հասարակական կեսնքը, քաղաքի մեծանալը, մի խօսքով՝ անհատից անկախ պայմանները բարձրացըին տան, նրա գետնի արժէքը»։ (1901 թ., №6 Ներք. Տես., Երես 248—249)։ «Անապատում մին-մենակ թափառող մարդը չի կարող հարստութիւն գիպել. զբա համար հարկաւոր են՝ բազմաթիւ անհատների համախմբուած գոյութիւն, կեսնքի և դոյքի ապահովութիւն, հաղորդակցութիւններ, գիտութիւն և տեխնիկա։ Սյու բոլորը չէ որ հասարակութեան, նոյն իսկ գարերի ընթացքում համայն մարդկութեան լաւադայն ոյժերի ստեղծած հանգամանքներ են։ Հասարակական կարգերի ներկայ անկատարելութիւննէ պատճառ որ հասարակութեան և մարդկութեան ստեղծած այդ պայմաններից և մասայի աշխատանքից օգտառում են միտին անհատները» («1903, I, Ներք. Տես. Երես 195»)։

Սյօմ, երբ մամուլի ազատութիւնը իրողութիւն է դառել, իսկ սահմանադրական ազատութիւնը մօտիկ ապագայում իրագործուելու հարց, մեր արմատական-պրոգրեսսիւ ուղղութիւնը աէտք է առաջ ընթանայ աւելի ևս դէպի ձախ—գետմոկրատիայի կատարեալ յաղթանակին մեր թոյլ ոյժերով նպաստելու համար։

Պարզ է թէ որն է այն կուսակցութիւնը որ համակրելի է մեզ իր ուղղութեամբ։

Սյդպիսով, մեր ուղղութիւնը հիմնօրէն տարբերւում է սահմանադրական-ժողովրդական (կոնստիտուցիօն-դեմոկրատ) կուսակցութեան ծրագրից նրանով որ մենք ընդու-

նում ենք արդիւնաբերական գործիքների սոցիալիզացիան։ Մենք հաւատում ենք որ միայն սահմանադրական կեանքում, այն էլ աստիճանաբար կատարուած ըեփորմներով, կարող է հասունանալ սոցիալական յեղաշրջումը, որ պէտք է հետևանք լինի հասարակութեան տնտեսական կազմուածքի փոփոխութեան և մասսայի գիտակից ինքնորոշման։ Ամենօրեայ գիտողութիւնը և առաջադէմ երկրների անցեալի ուսումնասիրութիւնը ցոյց են տալիս որ հասարակական կեանքում դասակարգերի անտագոնիզմի հետ գեր են կատարում նաև դասակարգերի գործակցութիւնը, պայքարող հակառակ ոյժերի խաղաղ կոմպոմիսը։

Երկրորդ հիմնական տարբերութիւնը սահմ.-ժող. կուսակցութեան ծրագրից կայանում է նրանում որ մենք այժմ և եթ կարեոր ենք համարում տարածել ընտրողական սկզբունքը, Դակ կանանց նկատմամբ։ Մեզ թւումէ լաւ չմտածուած քայլ—տալ իրաւունք թուշքինը-ման բարբարոս, տգէտ, Փանատիկոս մի խոժանին և զրկել իրաւունքից կուլտուրական տարբերի կանանց։ Աբսուրդ չէ միթէ, օրինակի համար, զրկել իրաւունքից մի ուսւ վարժուհու և այդ էրաւունքը տալ Բագուի դոչիներին կամ Բորչալուի ըէղերին։ Մահմեդական կինը եթէ չուզենայ մասնակցել՝ զբանով առանձին կորուստ այժմ չի ունենալ ժողովրդիներկայացուցչութիւնը, բայց որ ուսւ, հայ, վրացի կանայք ձայն կ'ունենան և այդպիսով կը չէզոքացնեն թուրք խուժանի հօտային ենթարկումը իրանց բէզերի և մոլլաների հակահասարակական բնադրներին—դա ահազին մի սլլիւս է, որ զանց առնել նշանակում է «ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի» ձայնաւութիւնը դարձնել մեր յետադէմ հարեանների ձեռքում բէակցիայի մի զօրեղ գործիք։

Սահմանադիր ժողովի գումարման անհրաժեշտութեան մասին խօսելենք մեր այս ներք. տես. մէջ, մի կողմ թողնելով այդ հարցի մասին այսոեղ յիշատակու-

Թիւնը աւելացնենք որ մենք կողմնակից ենք ժող. ներկայացուցչական մի պալատեան սիստէմին:

Մեզ համար միակ հեղինակութիւն՝ գիտութիւնը կանդչի առնում և առաջ է ընթանում իր յաղթական գնացքի տակ խորտակելով ամեն տեսակի նախապաշար-մունքներ և քարացած հայեացքներ: Մեզ ոգեւորող միակ զգացմունքը արդարութիւնն է, որով համակուել են արգէն տռաջաւոր մարդկութեան մասսաները: Գիտութիւնը և արդարութիւնը ձեռք ձեռքի տուած ձգտում են վերանորոգել մարդկային կեանքը, իրագործելով նրա մէջ գեռ մեծ քաղաքացի Ռուսսօից յայտարած «հաւասարութիւն», եղբայրութիւն և ազատութիւն» ցարդ մեծ մասամբ վերացական մնացած ըսկըզբունքները: Մենք հաւատում ենք որ մարդկային հանճարն և կորովը դուրս կը բերեն գեռ դասակարգային լարիւրինթոսում գեղեցող մարդկութիւնը մի նոր աշխարհ, ուր գարերի ընթացքում ամբողջ մարդկութեան լաւագոյն ներկայացուցիչների տանջանքներով և ջանքերով ստեղծուած քաղաքակրթական բարիքները սեփականութիւն կը լինեն բոլորի և ոչ մի խումբ բախտաւորների համար:

Դեկտ. 10-ին

L. U.

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Մեր շփոթ օրերում պարբերական հրատարակութիւնների կանոնուոր լոյս տեսնելը կախուած չէ խմբագրութիւններից. հետևաբար, ինչպէս և կեանքի շատ ուրիշ գէպերում, «անկախ պատճառները» մնում են զօրութեան մէջ. Անցեալ համարի (№ 10) ցենզուրական վեր-

Ան թերթը ստացուած էր հոկտեմբերի 9-ին, համարը պատրաստ էր՝ ցրուելու համար՝ հոկտեմբերի 13-ին. յաշորդ օրը սկսուեց ընդհանուր քաղաքական գործադրութ. ընդհանուեց երկաթուղային հաղորդակցութիւնը և մենք անկարող եղանք դրաի բաժանորդներին ուղարկել այդ համարը մինչև հոկտեմբերի 25-ը: Ինչպէս յայտնի է այդ պատմական կարմիր օրերում լոյս չէին տեսնում և թերթերը: Տպարաններում սկսեցին աշխատել միայն հոկտեմբերի 25-ից: Այդ օրուանից սկսուեց շարուել ամսագրիս № 11, և մենք յոյս ունէինք գուլս բերել այդ համարը նոյեմբերի 20-ին. հէնց այդ սրատճառով այդ համարում զետեղուած են մի քանի գրուածքներ (օր. Շահթի, Վամբերիի), որոնց վերջը պէտք է զուրս զար № 12-ում: Սակայն Փանձակի և Թիֆլիսի արիւնահեղ զէպքերը, 18-ից սկսած մինչև զեկանեմբերի սկզբները, ամեն բան տակն ու վրայ արան, դադարեցին աշխատելուց և զբաշարները: Երբ գեկտեմբերին վերսկըսուեց աշխատանքը տպարանում մենք տեսանք որ անկարող ենք հասցնել № 12-ը մինչև յունուար ամիսը, մանաւանդ որ գեկտ-12 ից կրկին դադարեցին աշխատանքները տպարաններում, ընդ քաղ. գործադրութի պատճառով, ուստի սավարուած եղանք ստուարացնել և միասին հրատարակել երկու համարները: Ուղղէսզի 1906 թ. բաժանրդները զդրկուեն յիշած դրուածքների սկզբից—մենք զրանց ևս կ'ուղարկենք այս № 11—12-ը: Նրանք որոնք կը ցանկանան ունենալ «Հաջի-Բաբայի» այն մասը, որ տպուած է 1905 թ. բնթացրում, պէտք է փոխազրեն 40 կոպէկ ճանապարհածախափ համար:

Ի դէպ նկատենք, որ անցեալ համարում յաւելուածի («Հաջ. Բաբ.») վերջին երեսի (144) վերջին տողերը սխալմամբ տպուած են առանց սրբազրութեան. այս համարում նորից տպուած է յիշուած երեսը՝ ուղղուած, հետևաբար պէտք է անցեալ (№ 10) համափ յաւելուածում կտրել վերջին թերթիկը (երես 143—144):

Անցեալ անգամ մենք յայտնել էինք որ Թիֆլիսի

պահեստներում «Մուրճ»-ի սովորական թուղթը սպառուած լինելով համարը տպում ենք այլ տեսակ թղթի վրայ: Երկաթուղիների գործադրուների պատճառով թուղթը չստացուեց և նոյեմբեր ամսում: Սպասւում է այս օրերս:

«Մուրճ»-ի Նոր Շրջանի հինգամեակը վերջացաւ բաւական խոշոր դեֆիցիտ թողնելով մեզ վրայ: Տարեցտարի աճելով բաժանորդների թիւը այս տարի հասաւ 980-ի և ոչ մեր ցանկացած 1200-ի: Ենթադրում ենք որ ջարդերը և երկրի շփոթ գրութիւնը մասսամբ պատճառ եղան որ մաս-մաս վճարող բաժանորդներից շատ շատերը չուացրին իրանց բաժանորդագները: Առհասարակ մեր հասարակութիւնը գեռևս լաւ չի ըմբռնում ամսուգրի անհրաժեշտութիւնը. օրաթերթերը իրանց առօրեայ, թարմ, թոռցիկ լուրերով և տեղեկութիւններով միանգամայն գոհացում են տալիս նրա մասաւոր սակաւաղետ պահանջ ներին: Մեր հասարակութիւնը, կարծես, գեռ չի հասկանում լրագրի և ամսագրի իրար լրացնող գերերը: Մինչդեռ պարբերական հրատարակութիւնների մէջ օրաթերթը, կարելի է տաած, կատարում է թեթև հեծելազօրքի և հրացանակիր վաշտերի դերը, իսկ ամսագիրը՝ թնդանօթաձիգ բրիգադների... Բանութեան և խաւարի բերդերն վերցնելու համար ոլէտք է նախ հիմնաւոր ոմբակոծութեամբ նախապատրաստել և դիւրացնել շառւրմը... Ամսագիրը ուէտքէ տայ հիմնաւոր, բազմակողմանի և լուրջ մնունդ հասարակութեան մտքի և ճաշակի զարգացման համար. նա պիտի նալաստի ժողովրդի քաղաքական դաստիարակութեան. սակայն առանց նիւթական տպահովութեան անկարելի է ցանկալի կատարելութեամբ իրագործել այդ նպատակները...

19. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԱԹԻՒՆ.—Ծովական յեղափառութեան աղցութիւնը Եւրոպայում:—Աւտորո-Ռւնդաբիա, Խոտավա, Անդիս:—Շին-Նորվեգիական միաւթեան խզումը:—Եւրոպա և Թիւքքիա: I., Ս.-ի
20. PRO DOMO SUA, Լ. Ս.-ի
21. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ
22. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
23. ՅԱԿԵԼՈՒԱԾ. Ֆէյմն Մորիէլը «ՀԱԶԻ ԲԱԲԱՆ ԱՆԴ-ԼԻԱՅՈՒՄ», վէոլ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կալաալհոտեան 129—143

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յառուակ իննորում է յօդուածաղբերից՝ զրել պարզ, մանաւանդ բուեր, յատոկ անուններն ու օտար բառեր, եւ թերի միայն մի եւնի վայ, առանձնապես ու ո դպրանել կէտադրութեան, ուղղուցութեան և նոր պարբեութիւնները ուռաւակի լինելու վայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև քնազիրը:

2. Զընկունուած մնջ յօդուածները պահեում են խմբագրատանը 6 ամիս, իսկ յետոց ոչնչացնուում են: Զեռազիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախանը: Փաքը յօդուածներն ու ստանաւորները չեն վերապար Ճնուում:

3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան պահանց պայմանների ուղարկուած ձեռազիրները համարում են անվճարելի:

4. Խմբագրութիւնն իրան է վիրապահում ուղարկուած յօդուածները գործութիւնը: Խմբագրութեան պահանց պայմանների ուղարկուած ձեռազիրները համարում են անվճարելի:

5. «Մուրնի» համարը չառացուելու վէտքում պէտք է խմբագրութեանը տեղիկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութիւնը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրուշ կամ պոստային բլանկ:

7. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպէկ: Հասցէի գործութիւնը պէտք է ստացուի իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզ զի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով: Նոր հասցէի հետ պէտք է այտնել նաև հին հասցէն:

ՅԵՅՈՒՄ է ՅԵՒՆԱՅԵՖՐԱՓԹԻՒ

1906 թ.

ՄԱԻՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՏԱՏՎԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄԱԳՐԻ

(Եար չբջան Վլ տարի)

Բ Ձ Ժ Ա Ն Ա Բ Բ Դ Ա Գ Ի Ե Բ

| | | | |
|-----------------------------|----------|------------------|-------------------|
| Փուլուստել տարիկան | 10 ր. | Խոհանոսման 12 ր. | (32 դ.) |
| և պաշտոնական կենսական տարին | 6 » | » | (18 դ.) |
| տան | 1 ամենան | 1 » | 1 » 20 կ. (30 դ.) |

Խամօրության, ճամանակագիր կուրքի և վարքի առաջնորդ, ըստ
կերպով 5 ր., մայիսի 1-ին 3 ր., և յանվի 1 ին 2 ր. - կուրք սկզբու
5 ր. և բանի 1-ին 5 րուրի հայոց պար, առ ժամանակի և առաջինիցի,
զիւղական քահանաների, ոքեն, ուս, աշակերտների և առանազնինի համար
բաժանորդագիրն է 8 բարի Բուտականակ: Թիֆլիսի բաժանորդագիրը
կարող էն տարեկան չափանորդագիր (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանե-
լով աճական, բեչուս իրանց յարձակ:

ԵԱՅԻ ԱՅՐԴԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՄ Է

Քիմիկական խմբակ առանձ անդամական փողոց, ու. № 12) և պարզութան այլ ենթակա պետք է գիտել Պահանջման, և բակակա-
յարակա ամսեր:

Առաջանական մաս Տիկ Տիլս. Rédaction de la revue «ԿՈՍԴՐՈՒ Ա».

Համարակա գործակալելու ընթացքը.

Առաջանական մաս Տիկ Տիլս. Ապրիլա առաջանական մաս Տիկ Տիլս.
Բարի բարի պահանջման (Ա. Մ. աշ. և Ն. Ա. աշ. և Յ. Յ. պահանջման:
Երիշիսկի պահանջման մաս պահանջման:
Կառա պահանջման մաս պահանջման:
Մանիս պահանջման:
Արքի պահանջման մաս պահանջման (Ահծովի պահանջման շրջան):
Վահականի մաս պահանջման (Անդրկասազնեան երկիր):
Թիմիլի պահանջման (Ահելաբարնական պահանջման:
Վասիլի պահանջման մաս պահանջման:
Թառիլի պահանջման մաս պահանջման (Ալեքսանդրիա):
Ենիշի պահանջման մաս պահանջման:
Կու-Զուլու պահանջման մաս պահանջման:
Բենեկի պահանջման մաս պահանջման:

1905 թվականի այն լամանորդները, որոնք կը զբան պահանջման պահա-
կանության վերաբերի լ-ը, ին առօք տարեկան ամբողջ բաժանությունները (10 թ. և պահանջման կը առանձ, իյ ըս պահանջման, պ. Առանձնարի «Յ. Յ. Յ. յ-
ման» նու զբան բաժանութեար այդ պահանջման փախանք, կարող են ու նու
նույնական պահանջման մաս պահանջման մաս պահանջման:







